ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ԼՐԱԲԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ВЕСТНИК ОБЩЕСТВЕННЫХ НАУК

HERALD OF SOCIAL SCIENCES

3(669)
ՍԵՊՏԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ
СЕНТЯБРЬ-ДЕКАБРЬ
SEPTEMBER-DECEMBER

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն/Изд. «Гитутюн» НАН РА/"Gitutyun" Press NAS RA
ԵՐԵՎԱՆ/ЕРЕВАН/YEREVAN 2023

ՔԱՌԱՄՍՅԱ ՀԱՆԴԵՍ, ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1940 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻՑ
ЖУРНАЛ ВЫХОДИТ 3 РАЗА В ГОД, ИЗДАЕТСЯ С НОЯБРЯ 1940 ГОДА
JOURNAL IS PUBLISHED 3 TIMES IN A YEAR, SINCE NOVEMBER 1940

Գլխավոր խմբագիր՝ **ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ**
Խմբագրի տեղակալ՝ **ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ**
Պատասխանատու քարտուղար՝ **ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Խմբագրական խորհուրդ

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ, ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ (խմբագրական խորհրդի նախագահ), ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ, ԺԱՍՄԻՆ ԴՈՒՄ-ԹՐԱԳՈՒՏ (Ավստրիա), ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ, ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ, ՎԱՉԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ, ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ, ՀՐԱՉ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (Նիդերլանդներ), ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ, ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ, ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՊԱՏՐԻԿ ՏՈՆԱՊԵՏՅԱՆ (Ֆրանսիա), ՓԻԹԵՐ ՔԱՈՒԻ (ԱՄՆ)

Главный редактор – **ПАВЕЛ АВЕТИСЯН**
Заместитель редактора – **АРСЕН БОБОХЯН**
Ответственный секретарь – **ГАЯНЭ АРУТЮНЯН**

Редакционная коллегия

ПАВЕЛ АВЕТИСЯН (председатель редколлегии), АРСЕН БОБОХЯН, АРАРАТ АГАСЯН, ЖАСМИН ДУМ-ТРАГУТ (Австрия), ГАГИК КАЗИНЯН, ВИКТОР КАТВАЛЯН, ПИТЕР КАУИ (США), ГРАЧ МАРТИРОСЯН (Нидерланды), АШОТ МЕЛКОНЯН, ВАЧЕ ОВАКИМЯН, ГЕВОРК ПОГОСЯН, РУБЕН САФРАСТЯН, ПАТРИК ДОНАБЕДЯН (Франция), ЮРИЙ СУВАРЯН, АЛЬБЕРТ ХАРАТЯН

Editor-in-chief **PAVEL AVETISYAN**
Vice-editor **ARSEN BOBOKHYAN**
Responsible secretary **GAYANE HARUTYUNYAN**

Editorial Board

PAVEL AVETISYAN (chairman of the editorial board), ARARAT AGHASYAN, ARSEN BOBOKHYAN, ALBERT KHARATYAN, VIKTOR KATVALYAN, VACHE HOVAKIMYAN, GAGIK GHAZINYAN, HRACH MARTIROSYAN (Netherlands), ASHOT MELKONYAN, GEVORG POGHOSYAN, RUBEN SAFRASTYAN, YURI SUVARYAN, JASMINE DUM-TRAGUT (Austria), PATRICK DONABEDIAN (France), PETER COWE (USA)

©Լրաբեր հասարակական գիտությունների
©Вестник общественных наук
©Herald of Social Sciences

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ 80-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Ստեփան Ղարիբջանյան – ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի դերը Հայաստանում գիտության կազմակերպման մեջ (1925-1945 թթ.)..... 12

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ալեքսանդր Մանասյան – Ինչո՞ւ Լեռնային Ղարաբաղը (Արցախը), միջազգային իրավունքի համաձայն, չի պատկանում Ադրբեջանական Հանրապետությանը..... 21
Գարեգին Թոմանյան – Աստվածաշնչի և պատմիչների տեղեկությունները Հայկական լեռնաշխարհում կիմերների ու սկյութների գտնվելու մասին.... 42
Քնարիկ Ավագյան – Սիրիայի հայերի տեղաշարժը արտերկիր 2012-2018 թթ. (Լիբանան, Թուրքիա, Հորդանան, ԱՄՆ, Շվեդիա, Ավստրալիա)..... 61
Արգիշտի Վարդանյան – Վարդան Մամիկոնյանի գործունեությունը 415-442 թթ. 75
Մարիամ Հովսեփյան – Հայոց ազգային տունը, Հայկական հարցը և Կ. Պոլսի հայ պարբերականները..... 86
Արմեն Կարապետյան – Գրական, կրթական և մշակութային հարցերը «Հորիզոն» պարբերականի էջերում 1909-1910 թթ. 101
Ռոբերտ Ղևոնդյան, Թամարա Ղազարյան – Անվտանգության ապահովման մեխանիզմները աշխարհաքաղաքական փոխակերպումների համատեքստում..... 113
Տաթևիկ Սարոյան – Սուրճը XIX դ. վերջի և XX դ. սկզբի Հայաստանի քաղաքային առօրեականությունում..... 125
Մանե Կոնինյան – Լոզանի կոնֆերանսում «Ազգային օջախի» քննարկումների արձագանքները պոլսահայ մամուլում («Ժողովրդի ձայն», «Ճակատամարտ», «Վերջին լուր»)..... 136

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Մարգարիտա Խաչատրյան – Համաստեղի «Չալոն» պատմվածքը գրական զուգահեռներում..... 149
Սամվել Ռամազյան – Նորահայտ փաստաթուղթ «Քյոռօղլի» էպոսի հայկական տարբերակների քննության մասին..... 163
Մարինե Սարգսյան – «Կուլտուր-ազգային ավտոնոմիան» և Վահան Տերյանի «Հոգևոր Հայաստանը»..... 186
Լիլիթ Ծատուրյան – Շարահյուսական փոխակերպումները Վ. Պիկուլի «Ֆավորիտ» վեպի հայերեն թարգմանության մեջ..... 203

Ամալյա Բարսեղյան – Բանաստեղծական խոսքի կապակցման միջոցների դրսևորումները Հ. Էդոյանի պոեզիայում..... 215
Նելլի Պետրոսյան – Խրատների դերն ու նշանակությունը Գրիգոր Լուսավորչի մի շարք երկերում..... 224

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անահիտ Բեքարյան – Ժակ Հակոբյանի «Կռունկը կը կանչէ» թատերախաղի ներկայացումը կանադական բեմում..... 230
Արթուր Մելիքյան – Հայոց արքա Զենոն-Արտաշեսի ինվեստիտուրայի տեսարանով հուշադրամների պատկերագրական համակարգը..... 241
Սյուզաննա Գրիգորյան, Վարդիթեր Գամաղելյան – Երուսաղեմի Սուրբ Հարության տաճարի Տիրամոր Ուշագնացության մատուռի հայկական խճանկարը..... 261

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նժդեհ Երանյան, Նուշիկ Զարիկյան, Հասմիկ Սիմոնյան – Արցախի մարդակերպ կոթողների թվագրության և գործառույթների քննությունը Նոր Կարմիրավանի պեղումների լույսի ներքո..... 271
Տիգրան Ալեքսանյան, Հարություն Բադալյան, Արտակ Հախվերդյան – Ծիսական անոթներ Տավուշ ամրոցից..... 297
Սվետլանա Պողոսյան, Կարեն Փահլևանյան – Հայ ազգային տարազի բնութագիրը..... 308
Արման Նալբանդյան – Մեղրիի Սբ Հովհաննես (Անապաստանաց) վանքի 2016-2020 թթ. պեղումներով հայտնաբերված մետաղական առարկաները..... 331

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Համո Սուքիասյան – Փաստաթղթեր «Կարմիր մոծակ» երգիծաթերթի մասին (1926-1927 թթ.)..... 347

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Տորք Դալալյան, Լուսինե Ղռեջյան – Ռոզա Գրիգորյան. կյանքը և գիտական գործունեությունը (ծննդյան 90-ամյակի առթիվ)..... 361
Արսեն Հարությունյան – Միջազգային գիտաժողով՝ «Վիմագրական մշակույթ. ժայռապատկերներից մինչև մեր օրեր»..... 375
Ծովինար Արծրունի – «Հազար ու մի երգ» հայկական ժողովրդական երգերի մատենաշարի նոր հատորը..... 378

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գայանե Հարությունյան – Հոգու ժամերը. *Արարատ Աղասյան,* Բանաստեղծություններ: Ռուսական քնար (թարգմանություններ)..... 381
Գայանե Հարությունյան – *Անուշավան Զաքարյան*, Օսիպ Մանդելշտամ. բանաստեղծը և Հայաստանը..... 383

ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ

Դավիթ Գասպարյան – Անուշավան Զաքարյան (ծննդյան 70-ամյակի առթիվ)..... 386
Էդիկ Մինասյան – Ստեփան Ստեփանյանց (ծննդյան 60-ամյակի առթիվ) 396

СОДЕРЖАНИЕ

К 80-ЛЕТИЮ СО ДНЯ ОСНОВАНИЯ АКАДЕМИИ НАУК АРМЕНИИ

Степан Гарибджанян – Роль Академии наук СССР в организации науки в Армении (1925-1945)..... 12

ИСТОРИЯ И ПОЛИТОЛОГИЯ

Александр Манасян – Почему по международному праву Нагорный Карабах (Арцах) не принадлежит Азербайджанской Республике?..... 21
Гарегин Туманян – Сведения Библии и историографов о нахождении киммерийцев и скифов на Армянском нагорье..... 42
Кнарик Авакян – Миграция сирийских армян за рубеж в 2012-2018 гг. (Ливан, Турция, Иордания, США, Швеция, Австралия)..... 61
Аргишти Варданян – Деятельность Вардана Мамиконяна в 415-442 гг. ... 75
Мариам Овсепян – Армянский национальный дом, Армянский вопрос и армянская периодика Константинополя..... 86
Армен Карапетян – Вопросы литературы, образования и культуры на страницах журнала «Горизонт» в 1909-1910 гг. 101
Роберт Гевондян, Тамара Казарян – Механизмы обеспечения безопасности в контексте геополитических изменений..... 113
Татевик Сароян – Кофе в конце XIX в. – начале XX в. в армянской городской повседневности..... 125
Мане Конинян – Отголоски дискуссий по армянскому «Национальному очагу» на Лозаннской конференции в константинопольской армянской прессе («Жоговрди дзайн», «Чакатамарт», «Верчин лур»)..... 136

ФИЛОЛОГИЯ

Маргарита Хачатрян – Рассказ Амастега «Чало» в литературных параллелях..... 149
Самвел Рамазян – Нововыявленный документ по изучению армянских версий эпоса «Кероглы»..... 163
Марине Саргсян – «Духовная Армения» Ваана Теряна и «Культурно-национальная автономия»..... 186
Лилит Цатурян – Синтаксические трансформации в армянском переводе романа В. Пикуля «Фаворит»..... 203
Амалия Барсегян – Средства связи поэтической речи в поэзии Г. Эдояна..... 215
Нелли Петросян – Роль и значение поучений в ряде произведений Григория Просветителя..... 224

КУЛЬТУРА И ИСКУССТВОВЕДЕНИЕ

Анаит Бекарян – Спектакль Жака Акопяна по пьесе «Зов журавля» на канадской сцене..... 230
Артур Меликян – Иконографическая система мемориальных монет со сценой инвеституры армянского царя Зенона-Арташеса..... 241
Сюзанна Григорян, Вардитер Гамагелян – Армянская мозаика в часовне Божьей матери храма Святого воскресения в Иерусалиме..... 261

АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ

Нжде Еранян, Нушик Зарикян, Асмик Симонян – Исследование датировки и функций антропоморфных изваяний Арцаха в свете раскопок Нор Кармиравана..... 271
Тигран Алексанян, Арутюн Бадалян, Артак Ахвердян – Ритуальные сосуды из крепости Тавуш..... 297
Светлана Погосян, Карен Пахлеванян – Характеристика армянского национального костюма..... 308
Арман Налбандян – Металлические артефакты, выявленные во время раскопок в 2016-2020 гг. монастыря Св. Ованеса (Анапастанац) в Мегри..... 331

ПУБЛИКАЦИИ

Амо Сукиасян – Документы о сатирической газете «Красный комар» (1926-1927)..... 347

НАУЧНАЯ ХРОНИКА

Торк Далалян, Лусине Креджян – Роза Григорян: жизнь и научная деятельность (к 90-летию со дня рождения)..... 361
Арсен Арутюнян – Международная конференция «Эпиграфическая культура: от наскальных изображений до наших дней»..... 375
Цовинар Арцруни – «Тысяча и одна песня» – новый том цикла армянских народных песен..... 378

РЕЦЕНЗИИ

Гаянэ Арутюнян – Часы для души: *Арарат Агасян,* Стихотворения. Русская лира (переводы)..... 381
Гаянэ Арутюнян – *Анушаван Закарян*, Осип Мандельштам: поэт и Армения..... 383

НАШИ ЮБИЛЯРЫ

Давид Гаспарян – Анушаван Закарян (к 70-летию со дня рождения)..... 386
Эдик Минасян – Степан Степанянц (к 60-летию со дня рождения)..... 396

CONTENT

NAS RA 80TH ANNIVERSARY

Stepan Gharibjanyan – The Role of the Academy of Sciences of the USSR in Organization of Science in Armenia (1925-1945)..... 12

HISTORY AND POLITICAL SCIENCE

Alexander Manasyan – Why, According to International Law, Nagorno-Karabakh (Artsakh) does not Belong to the Republic of Azerbaijan?..... 21
Garegin Tumanyan – Reports of the Bible and Historiographers About the Presence of Cimmerians and Scythians in Armenian Highland..... 42
Knarik Avagyan – The Migration of Syrian Armenians Abroad in 2012-2018 (Lebanon, Turkey, Jordan, USA, Sweden, Australia)..... 61
Argishty Vardanyan – Activities of Vardan Mamikonyan in 415-442..... 75
Mariam Hovsepyan – The Armenian National House, the Armenian Question and the Armenian Periodicals of Constantinople..... 86
Armen Karapetyan – Literary, Educational, Cultural Issues on the Pages of the "Horizon" Journal in 1909-1910..... 101
Robert Ghevondyan, Tamara Kazaryan – Security Mechanisms in the Context of Geopolitical Changes 113
Tatevik Saroyan – Coffee at the end of the XIX and the Beginning of the XX Centuries in Armenian Urban Daily Life..... 125
Mane Koninyan – Reflection of Discussions Around the Armenian "National Home" at the Lausanne Conference in the Constantinople Armenian Press ("Zhogovrdi Dzayn", "Chakatamart", "Verchin Lur")..... 136

PHILOLOGY

Margarita Khachatryan – The Story "Chalo" in Literary Parallels..... 149
Samvel Ramazyan – Newly Discovered Document on the Study of the Armenian Versions of the Epic "Koroglu"..... 163
Marine Sargsyan – "Cultural-National Autonomy" and Vahan Teryan's "Spiritual Armenia"..... 186
Lilit Tsaturyan – Syntaxic Transformations in Armenian Translation of V. Pikul's Novel "The Favorite"..... 203
Amalya Barseghyan – Manifestations of Poetic Speech Connection Means in H. Edoyan's Poetry..... 215
Nelli Petrosyan – The Role and Significance of Teachings in Gregory the Illuminator's Works..... 224

CULTURE AND ART HISTORY

Anahit Bekaryan – Jacque Hakobyan's *When the Crane Calls* Performances on Canadian Stage..... 230
Artur Melikyan – The Iconographical System of Memorial Coins with Armenian King Zenon-Artaxias' Investiture Scene..... 241
Syuzanna Grigoryan, Varditer Gamaghelyan – Armenian Mosaic in the Chapel of the Mother of God in Jerusalem's Church of the Holy Sepulchre. 261

ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Nzhdeh Yeranyan, Noushig Zarikian, Hasmik Simonyan – Investigation of the Date and Functions of Artsakh's Anthropomorphic Stelae in the Light of the Nor Karmiravan Excavations..... 271
Tigran Aleksanyan, Harutyun Badalyan, Artak Hakhverdyan – Ritual Vessels from Tavush Fortress..... 297
Svetlana Poghosyan, Karen Pahlevanyan – Characteristics of the Armenian National Costume..... 308
Arman Nalbandyan – The Metal Objects Found at the Excavations of Saint Hovhannes Monastery of Meghri in 2016-2020..... 331

PUBLICATIONS

Hamo Sukiasyan - Documents towards the "Red Mosquito" Satirical Newspaper (1926-1927)..... 347

SCIENTIFIC CHRONICLE

Tork Dalalyan, Lusine Ghredjian - Roza Grigoryan: Life and Scientific Activity (On the Occasion of the 90th Anniversary)..... 361
Arsen Harutyunyan – International Conference: "Epigraphic Culture: From Rock Carvings to our Days"..... 375
Tsovinar Artsruni – "A Thousand and One Song": the New Volume of the Series on Armenian Folk Songs..... 378

LITERARY REVIEWS

Gayane Harutyunyan – Hours for soul: *Ararat Agasyan*, Poems. Russian Lira (translations)..... 381
Gayane Harutyunyan – *Anushavan Zakaryan*, Osip Mandelstam: The poet and Armenia..... 383

OUR JUBILEES

Davit Gasparyan – Anushavan Zakaryan (On the Occasion of the 70th Anniversary)..... 386
Edik Minasyan – Stepan Stepanyants (On the Occasion of the 60th Anniversary)..... 396

DOI: 10.53548/0320-8117-2023.3-12

ՀՀ ԳԱԱ 80-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

РОЛЬ АКАДЕМИИ НАУК СССР В ОРГАНИЗАЦИИ НАУКИ В АРМЕНИИ (1925-1945)

С начала 1920-х годов созданные в Советской Армении научно-исследовательские учреждения и высшие учебные заведения поддерживали тесные связи с ведущими научными центрами и отдельными учеными ряда союзных республик и, в первую очередь, Российской Федерации и отдельных зарубежных стран. В организации научной работы в Армянской ССР активное участие принимали крупные ученые с мировым именем – академики А.П. Карпинский, С.Ф. Ольденбург, Н.Я. Марр, И.Ю. Крачковский, А.Е. Ферсман, Ф.Ю. Левинсон-Лессинг, Н.И. Вавилов, В.Л. Комаров, В.П. Волгин, И.И. Мещанинов, К.И. Скрябин, Е.Н. Павловский, О.Ю. Шмидт и др.

Неоценимую лепту в организацию и развитие советской науки, формирование национальных научных кадров внесла Академия наук СССР, роль которой особенно возросла после принятия в дни празднования 200-летнего юбилея Академии наук 27 июля 1925 г. постановления ЦИК и СНК СССР «О признании Российской Академии наук высшим ученым учреждением Союза ССР»[1]. Отныне Академия наук стала высшим всесоюзным научным учреждением, состоящим при Совнаркоме СССР и получившим название Академия наук Союза Советских Социалистических Республик. Для участия в праздновании юбилея Академии наук в Ленинград была направлена делегация Ереванского госуниверситета и Института наук и искусств ССРА во главе с руководителями этих учреждений Акопом Иоаннисяном и Мануком Абегяном.

В ноябре 1925 г. в Президиум АН СССР обратился с письмом Институт наук и искусств Армении, в котором выражалось пожелание установить постоянную связь со Всесоюзной Академией наук. В ответном послании от 25 февраля 1926 г. за подписью и. о. непременного секретаря АН академика И.Ю. Крачковского горячо приветствовалось создание нового очага научной мысли и выражалось пожелание: «...молодому собрату успешной работы на поприще изучения Армении, где целый ряд сложных и

[1] Организация науки в первые годы Советской власти (1917-1925). Сб. документов, Л., 1968, с. 203.

больших вопросов ждет внимательного и любовного изучения. Академия наук СССР, которая и сама не мало уделяла внимания изучению Армении и армянского народа, всегда готова оказать Институту посильную научную поддержку...»[2]. В январе 1926 г. директор Научного института Армении и заведующий Эчмиадзинской библиотекой и музеем Сенекерим Тер-Акопян направил письмо к непременному секретарю АН СССР академику С.Ф. Ольденбургу с просьбой об обмене новыми изданиями[3]. 19 марта 1926 г. председатель Института наук и искусств ССРА М. Абегян и ученый секретарь О. Беделян направили письмо Кавказскому историко-археологическому институту АН СССР с выражением пожелания установить с ним тесную связь[4]. Созданный в 1917 г. Кавказский историко-археологический институт (КИАИ) АН СССР принял активное участие в археологическом и этнографическом исследовании Армении, в изучении ее богатой многовековой культуры. Сложившиеся в этих областях традиции были успешно продолжены в 1920-х годах. Будучи единственным на Кавказе научным учреждением общекраевого значения, КИАИ старался проводить свою научно-исследовательскую работу в полном контакте с местными научными организациями, работающими на территории отдельных республик и автономных областей как Закавказской федерации, так и Северного Кавказа. В середине 1920-х годов КИАИ организовал ряд экспедиций в пограничные районы Грузии и Армении. Комиссия по экспедициям АН СССР в заседании от 25 января 1927 г. постановила ассигновать КИАИ для организации в 1927 г. научных экспедиций в район древнего городища Армавир (760 рублей) и в район Лори-Ташира-440 рублей[5]. Осенью того же года при Комитете охраны древностей ССР Армении была создана специальная комиссия для раскопок Армавира в составе с Александром Таманяном (председатель), Сенекеримом Тер-Акопяном, Аствацатуром Хачатряном (ученый секретарь), Ашхарбеком Калантаром и заместителем директора КИАИ Смбатом Тер-Аветисяном. Раскопки должны были проводиться под общим руководством академика АН СССР Н.Я. Марра. Сотрудниками КИАИ до 1930 г. были осуществлены ряд научных поездок при содействии различных учреждений и организаций. Институт на собственные средства снарядил несколько экспедиций для исследования памятников духовной и материальной культуры Кавказа.

[2] Национальный архив Армении, ф. 122, оп. 1, д. 236, л. 78.
[3] Архив Матенадарана, канцелярии, папка 76, док. 67, л. 1.
[4] Центральный архив АН Грузинской ССР, ф. 4, оп. 1, д. 16, л. 16-17.
[5] Национальный архив Армении, ф. 122, оп. 1, д. 937, л. 18.

В 1926 г. в системе Академии наук СССР был организован Особый комитет по исследованию союзных и автономных республик (ОКИСАР), главная задача которого заключалась в проведении систематических исследований естественных производительных сил национальных республик Союза, а также в согласовании всех экспедиционных работ АН. В составе ОКИСАР была создана Комиссия по изучению Закавказской СФСР во главе с академиком Ф.Ю. Левинсоном-Лессингом. Она проделала определенную работу по изучению природных богатств края и, в частности, Армении, подготовила ряд рекомендаций относительно развития производительных сил республики.

Для изучения строительных материалов различных районов Армении с июля 1927г. в республике начались исследования экспедиции АН СССР во главе с геологом Б.В. Залесским. Среди этих материалов наряду, с туфом, отлично себя зарекомендовали гранит, базальт, пемза, обсидиан и др., по запасам которых Армения занимала одно из первых мест в СССР[6].

До начала 1930-х гг. почти все учреждения АН СССР, за исключением Кавказского историко-археологического института и ряда опытных и региональных станций, были сосредоточены в Москве и Ленинграде. Ученые АН все более убеждались в том, что настало время приступить к созданию разветвленной сети академических учреждений на местах. 10 августа 1931 г. ЦИК СССР утвердил предложение АН о создании сети комплексных баз на местах, где это было обусловлено потребностями народного хозяйства[7]. В первой половине 1930-х гг. были организованы Дальневосточный, Закавказский и Уральский филиалы, Казахстанская и Таджикская базы Академии наук.

Важным этапом на пути создания Закавказского филиала было преобразование Закавказского историко-археологического института (ЗИАИ), созданного в декабре 1930 г., в Институт кавказоведения (на основании постановления Президиума АН СССР от 12 сентября 1931 г.). Этот институт должен был считаться научно-исследовательской базой АН СССР на Кавказе[8]. 25 ноября 1932 г. было принято постановление Совнаркома ЗСФСР «О преобразовании Института кавказоведения АН СССР в Закавказский филиал Академии наук СССР»[9]. Постановлением на Закфилиал возлагалось «всестороннее и систематическое изучение естественных бо-

[6] Խորհրդային Հայաստան, 22.VII.1927:
[7] Организация советской науки в 1926-1932 гг., Л., 1974, с. 174.
[8] Архив АН СССР, ф. 2, оп. 1-1931, д. 31, л. 162.
[9] Организация советской науки в 1926-1932 гг., с. 183.

гатств ЗСФСР (история, материальная культура, этнография и пр.), с организацией вокруг задач этого изучения в своей системе сети соответствующих научно-исследовательских учреждений»[10]. В декабре 1932 г. Президиум АН СССР утвердил состав руководящих органов Закавказского филиала. Первым председателем филиала стал крупный ученый-кавказовед академик Н.Я. Марр. Первоначально Закфилиал действовал в составе двух отделений – Азербайджанского и Грузинского. 1 февраля 1935 г. в целях расширения научно-исследовательских работ в области естественных производительных сил ССРА Совнарком Армении принял постановление «Об учреждении в ССРА отделения Закавказского филиала Академии наук СССР»[11]. В структуру отделения входили Геологический, Химический, Биологический институты и Геофизический сектор с соответствующими подразделениями. Структура предусматривала в первую очередь развитие естественных и технических наук. Состоявшаяся с 25 мая по 1 июня сессия Общего собрания АН СССР постановила реорганизовать АрмОЗФАН в Армянский филиал Академии наук СССР (АрмФАН)[12]. Создание филиала АН СССР в Армении явилось большим событием в научной и культурной жизни армянского народа. Академик В.А. Амбарцумян впоследствии писал: «Местным научным кадрам необходимо было помочь в деле более широкой организации научной работы. Эта помощь была оказана Академией наук СССР путем организации Армянского филиала академии (АрмФАН)[13]».

Первым председателем АрмФАНа стал крупный ученый-геолог академик Франц Юльевич Левинсон-Лессинг. Научные учреждения филиала возглавляли видные ученые О.Т. Карапетян (Геологический институт), Ак.Г. Иоаннисян (Химический институт), С.М. Юзбашян (Биологический институт), Б.Я. Галстян (Сектор почвоведения), С.В. Тер-Аветисян (Сектор истории, археологии и этнографии), А.Л. Бенинг (Севанская гидробиологическая станция) и др. 14 июля 1935 г. в Доме культуры состоялось торжественное заседание АрмФАНа, посвященное открытию филиала и чествованию академика Ф.Ю. Левинсона-Лессинга в связи с 50-летием его научной и общественной деятельности[14].

---

[10] Центральный архив АН Грузинской ССР, ф. 1, оп. 1, д. 2, л. 1-4.

[11] Коммунист, 6.II.1935.

[12] Материалы к истории Академии наук СССР за советские годы (1917-1947), М.-Л., 1950, с. 143.

[13] Амбарцумян В.А. 1960, Наука в Армении за 40 лет, Ереван, с. 7.

[14] Коммунист, 14.VII.1935.

О росте численности кадров филиала говорят следующие данные. В 1935г. в его учреждениях работали 58 научных сотрудников, в 1936 г.-74, в 1939 г.-130, а к началу 1941 г.-208 (включая и аспирантов)[15]. В 1940 г. результаты исследований по 21-ой теме, выполненной учеными филиала, были внедрены в производство[16].

Росла издательская деятельность филиала. В 1939 г. было опубликовано 41 наименование книг и сборников трудов, не считая многочисленных статей. В 1940 г. увидели свет 58 названий книг и сборников трудов филиала[17].

С начала 1938 г. Председателем Президиума АрмФАНа являлся академик Иосиф Орбели, находившийся на этой должности до конца ноября 1943 г.

В ноябре 1940 г. Президиум АН СССР в специальном постановлении отметил «плодотворную деятельность Армянского филиала АН СССР, сумевшего за 5-летие своего существования добиться серьезных успехов по развитию научно-исследовательской работы, разработке актуальных проблем и внедрению результатов научно-исследовательских работ в практику народного хозяйства и культуры Армянской ССР, а также по выращиванию научных кадров»[18].

В 1930-е – начале 1940-х гг. по инициативе Президиума АН СССР широко практиковались поездки крупных учёных академии для оказания конкретной помощи и координации научных изысканий, определения основных направлений и тематики исследований, организации новых научных подразделений в республике. В частности, Армению посетили академики Н.И. Вавилов, В.П. Волгин, В.Л. Комаров и др. Они подробно ознакомились с деятельностью некоторых учреждений АрмФАНа и дали ряд ценных указаний молодому научному центру Армении. С 3 по 7 марта 1941 г. в Армении находился крупный учёный-геофизик, исследователь Арктики, Герой Советского Союза, вице-президент АН СССР академик О.Ю. Шмидт. Выступая на расширенном заседании президиума АрмФАНа, О. Шмидт отметил хорошую постановку и размах работы, что вызывало необходимость в ближайшие два года значительно увеличить число докторов и кандидатов наук в филиале и после этого организовать в Армении Академию наук. Оценивая деятельность филиала, О. Шмидт констатиро-

[15] Вестник АН СССР, 1939, N 10, с. 47, Известия Армянского филиала АН СССР, 1941, N 1, с. 7.
[16] Известия Армянского филиала АН СССР, 1941, N 1, с. 3.
[17] Азатян В.Д., Научный центр Армении, Известия восточных филиалов АН СССР, 1957, N 8, с. 42.
[18] Вестник Академии наук СССР, 1940, N 11-12, с. 144.

вал: «АрмФАН – крупное, сложившееся научное учреждение, все институты и сектора которого оставляют впечатление большой и успешной работы. Прекрасно разрешена в АрмФАНе проблема правильного сочетания старых и молодых научных кадров. Меня, старого научного работника, особенно поразила талантливая научная молодёжь, с огромным энтузиазмом разрешающая самые важные проблемы науки»[19]. В одном из своих интервью Шмидт отметил: «Я бесконечно счастлив, что имел возможность хоть частично ознакомиться с жизнью Армении, ее чудесной природой, блестящими памятниками древней культуры и с творчеством чрезвычайно талантливого армянского народа. Ученые Армении ведут большие и важные работы в области раскопок, древнего искусства и в целом в изучении и охране памятников материальной культуры. Поразительны эти памятники искусства, в их числе такие, как, например, храмы Рипсимэ и Звартноц, посещение которых запомнится на всю жизнь»[20].

За восемь лет своего существования свыше 200 результатов научных исследований, выполненных в АрмФАНе и имеющих практическое значение для промышленности, сельского хозяйства и культуры, были внедрены в народное хозяйство республики. Актуальность тем, разрабатывавшихся филиалом, привела к тому, что он превратился в подлинный центр научной мысли республики.

Перед Великой Отечественной войной 1941-1945 гг. была успешно решена сложнейшая задача создания государственной системы организации науки. Высшим научным центром страны являлась Академия наук СССР. К началу войны в Армянской ССР имелось 41 научно-исследовательское учреждение, многие из которых входили в систему Армянского филиала АН СССР, число их сотрудников составляло 1061 чел.[21].

29 октября 1943 г. Совет Народных Комиссаров СССР принял постановление «Об организации Академии наук Армянской ССР». Вскоре, 10 ноября 1943 г., Совнарком Армянской ССР принял постановление под номером 702: 1. «В целях объединения руководства научно-исследовательскими учреждениями республики в едином руководящем научном центре и в интересах дальнейшего, более целеустремлённого развития научной работы на базе Армянского филиала АН СССР организовать в столице Армении, городе Ереване, Академию наук Армянской ССР. 2. Первый состав действительных членов Академии наук Армянской ССР определить в

[19] Известия Армянского филиала АН СССР, 1941, N 2, с. 4.
[20] Коммунист, 7 и 8.III.1941.
[21] Культурное строительство Армянской ССР. Статистический сборник, Ереван, 1962, с. 81.

количестве 23 человек»[22]. Эта дата вошла в историю культуры и науки армянского народа как одна из самых ярких её страниц. Осуществились чаяния лучших сынов нашего народа-иметь научный центр, сделать всеобщим достоянием и дальше развивать богатейшее научное наследие народа. В состав академиков-учредителей вошли: литературовед Манук Абегян, механик Александр Акопян, физики Абрам Алиханов и Артем Алиханян, астрофизик Виктор Амбарцумян, языковед Грачия Ачарян, биохимик Грачия Бунятян, биолог Вартан Гулканян, гидротехник Иван Егиазаров, поэт Аветик Исаакян, химик Вече Исагулянц, языковед Григор Капанцян, физиологи Саак Карапетян и Хачатур Коштоянц, языковед Степан Малхасян, историк Акоп Манандян, медик Левон Оганесян, востоковед Иосиф Орбели, физиолог Леон Орбели, геолог Константин Паффенгольц, животновод Александр Тамамшев, литературовед Арсен Тертерян, биолог Микаел Туманян. 25 ноября 1943 г. Совнарком Армянской ССР утвердил устав и структуру Академии наук[23].

Первое Общее собрание действительных членов АН состоялось 29 ноября 1943 г., оно избрало руководство Академии – президента, вице-президентов и председателей отделений. Первым президентом АН был избран академик АН СССР Иосиф Орбели, сыгравший огромную роль в организации и развитии науки в Армении. Вице-президентами были избраны академики Виктор Амбарцумян и Вартан Гулканян. Почетным членом АН стал выдающийся ботаник, президент АН СССР академик Владимир Леонтьевич Комаров[24].

29 ноября 1943 г. в Государственном театре оперы и балета им. Ал. Спендиаряна состоялось торжественное заседание действительных членов АН совместно с представителями партийных, советских и профсоюзных организаций и научной общественности г. Еревана, посвященное открытию Академии наук Армянской ССР. На первом этапе АН республики имела 4 отделения: Общественных наук, Физико-математических и естественных наук, Биологических наук и Сельскохозяйственных наук. В их состав входили 24 научных учреждения, в которых работало около 330 научных сотрудников[25].

11 мая 1944 г. состоялось Общее собрание АН АрмССР с участием президента АН СССР В.Л. Комарова, на котором были подытожены дос-

[22] Национальный архив Армении, ф. 113, оп. 16, д. 747, л. 1-1об.; Коммунист, 12.XI.1943.
[23] Коммунист, 26.XI.1943.
[24] Национальный архив Армении, ф. 766, оп. 6, д. 160.
[25] Академия наук Армянской ССР за 25 лет, Ереван, 1968, с. 9.

тижения академической науки республики в первые месяцы деятельности центра научной мысли. В своём выступлении В.Л. Комаров отметил важность факта создания и существования Академии наук Армении, пожелал дальнейшего процветания и плодотворных успехов молодой Академии наук и Ереванскому госуниверситету[26].

По итогам 1944 г. четыре отделения АН Армении объединяли 28 научно-исследовательских учреждений, в которых работали 25 действительных членов и членов-корреспондентов, 55 докторов наук и профессоров, 131 кандидат наук, 147 старших и 149 младших научных сотрудников, 161 научно-технический работник – всего 668 человек[27]. Уже к концу 1945 г. в 38 научно-исследовательских учреждениях АН Армянской ССР насчитывалось 692 человека, в том числе 32 академика и члена-корреспондента, 43 доктора и 154 кандидата наук, 130 старших и 151 младших научных сотрудников, 84 аспиранта, из которых 6-без отрыва от производства. Вышли в свет «Известия общественных наук» (6 номеров) и «Известия естественных наук» (4 номера), а также 40 других научных работ[28].

Подготовка к выборам членов-корреспондентов АН АрмССР была начата в первых числах мая 1945 г., когда в результате публичного объявления об открытии вакансий научные учреждения, общественные организации и отдельные ученые Армении, а также других республик Союза стали выдвигать кандидатуры в члены-корреспонденты Академии наук Армянской ССР. Всего было выдвинуто до 50 кандидатур. В начале июля в отделениях АН началась работа по отбору наиболее достойных кандидатов. С 23 июля начались заседания отделений, на которых, помимо научных докладов, была проведена тайным голосованием баллотировка отобранных кандидатов. Избранные отделениями кандидаты были утверждены Общим собранием действительных членов АН на сессии Академии наук АрмССР, которая закончила свою работу 4 августа 1945 г. Впервые членами-корреспондентами в составе Академии были избраны: по Отделению общественных наук: А.К. Дживелегов (искусствоведение), Л.М. Меликсет-бек (история Армении), Б.Б. Пиотровский (археология); по Отделению биологических наук: Н.М. Сисакян (биохимия), А.Л. Тахтаджян (ботаника), В.А. Фанарджян (рентгенология), М.Х. Чайлахян (физиология растений); по Отделению сельскохозяйственных наук: Х.А. Ерицян (животноводство), А.К. Магакян (ботаника), Н.А. Майсурян (растениеводство); по

[26] Коммунист, 12.V.1943.
[27] Национальный архив Армении, ф. 766, оп. 6, д. 249, л. 1-1об.
[28] Национальный архив Армении, ф. 766, оп. 6, д. 295, л. 1.

Отделению физико-математических и технических наук: Л.А. Варданян (геология), С.П. Гамбарян (химия), А.Г. Иосифян (электротехника), А.Г. Назаров (строительная техника), А.Л. Шагинян (математика). Избраны также иностранные члены АН Армянской ССР: Арам Бояджян (электротехник, специалист в области теории электрического магнитного поля и теории электрических машин) из США и Ерванд Манвелян (микробиолог, специалист в области эпидемиологии, вирусологии и медицинской паразитологии) из Франции[29].

За полтора года своей научной и научно-организационной деятельности АН Армении наметила основные тенденции и направления исследовательских работ по нескольким отраслям естественно-технических и общественно-гуманитарных наук, имевших актуальное значение на завершающем этапе Великой Отечественной войны. В этот период были сформированы структурные подразделения академических учреждений, предприняты усилия по укреплению их материально-технической базы и подготовке молодых научных кадров, развёртыванию издательского дела, организации широкой научно-просветительской работы среди населения. Учёные Армении, как и весь армянский народ, внесли свой достойный вклад в разгром фашизма во имя великой Победы.

СТЕПАН ГАРИБДЖАНЯН
Кандидат исторических наук

[29] Национальный архив Армении, ф. 766, оп. 6, д. 295, л. 6-6 об.; Коммунист, 5.VIII.1945.

ԻՆՉՈ՞Ւ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ (ԱՐՑԱԽԸ), ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՁԱՅՆ, ՉԻ ՊԱՏԿԱՆՈՒՄ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ

Ալեքսանդր Մանասյան

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ
ՀՀ, Երևան, Աբովյան 52
Էլ. հասցե՝ manasyan-a22@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 05.10.2023, գրախոսվել է 01.11.2023, ընդունվել է տպագրության 11.12.2023
ORCID: 0009-0007-5971-6184
DOI: 10.53548/0320-8117-2023.3-21

Ներածություն

Ղարաբաղյան հիմնախնդիրը կեղծ կարծրատիպերի ծուղակում

Քաղաքական շրջանակներում լայնորեն տարածված է այն կարծիքը, թե Լեռնային Ղարաբաղը (ԼՂ)[1] միջազգային իրավունքով պատկանում է Ադրբեջանին: Առանց խնդրի հիմքերին դիմելու հենց իբր ինքնին ակնհայտ այդ գաղափարով է առաջնորդվել ԵԱՀԿ-ն իր հովանու տակ Արցախի՝ շուրջ երեսուն տարի ընթացող բանակցություններում՝ փնտրելով խնդրի այնպիսի լուծում, որ չխախտվի Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, և ինչ-որ կերպ ապահովվի նրա սահմաններում Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Բանակցությունների ընթացքում ԵԱՀԿ-ն, ՄԱԿ-ի Կանոնադրությանը և Հելսինկյան եզրափակիչ ակտի տառին ու ոգուն հակառակ, գերակա է դիտել պետությունների տարածքային ամբողջականությունը: Մենք չենք քննի այդ մոտեցման քաղաքական շարժառիթները: Մեր խնդիրն է ցույց տալ, որ իրավունքի տեսակետից Լեռնային Ղարաբաղը չի պատկանում Ադրբեջանին, և որ տարածքային ամբողջականության սկզբունքը չի վերաբերում նրան: Միջազգայնորեն հայտնի փաստաթղթերում արձանագրված՝ լույսի պես պարզ այդ ճշմարտությունը և նրա իրավական հետևանքները տեսանելի չեն հանուրին, քանի որ դրանք փակված են մնացել հիմնախնդրի իրավական փաթեթում, որն այդպես էլ ԵԱՀԿ-ն չի բացել: Այդ փաթեթի ուսումնասիրությանը ձեռք զարկող ցանկացած հետազոտող պետք է մեկնարկի *Ադրբեջանական Հանրապետություն* հասկացության բացորոշու-

[1] *Լեռնային Ղարաբաղ* և *Արցախ*, *Անդրկովկաս և Հարավային Կովկաս* աշխարհագրական տեղանունները պատմականորեն կայունացած հոմանիշներ են, և տեքստում մենք դրանք կօգտագործենք լեզվաոճական նկատառումներից ելնելով:

մից, քանի որ այդ «գլխարկի» տակ երեք տարբեր Ադրբեջան կա, և հաճախ պարզ չի լինում, թե Բաքուն որ մեկի անունից է խոսում: Դրանցից առաջինը՝ 1918-1920 թթ. Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը (ԱԴՀ) Անդրկովկասում ստեղծել է Օսմանյան կայսրությունը, որտեղ մինչ այդ չի եղել ո՛չ «Ադրբեջան» անունով պետություն, ո՛չ աշխարհագրական տեղանուն, ո՛չ էթնիկական համայնք: Թուրքական զորքերը 1918 թ. սեպտեմբերին մտել են Բաքու, տապալել տեղի օրինական իշխանությունները և հիմնել նոր թուրքական պետություն: ԼՂ-ն չի եղել ԱԴՀ-ի՝ ապօրինի այդ կազմավորման մաս: Այն 1920 թ. պատմությունը լքել է առանց ճանաչված կամ փաստացի հաստատված սահմանների: «Ադրբեջան» անունով երկրորդ կազմավորումը՝ 1920-1991 թթ. գոյատևած Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը (Ադր.ԽՍՀ), իրողություն է դարձել 1920 թ. ապրիլի 28-ին: Այս անգամ արդեն Խորհրդային Ռուսաստանի զորքերն են մտել Բաքու, տապալել թուրքական զորքերի ստեղծած ԱԴՀ-ն և հիմնել Ադր. ԽՍՀ-ն[2]: Ինչպես ԱԴՀ-ն, այնպես էլ Ադր.ԽՍՀ-ն չեն եղել օրինաբար, ասել թե՝ ինքնորոշման ակտով կայացած պետություններ: Վերջապես, «Ադրբեջան» անվամբ երրորդ կազմավորումը մերօրյա Ադրբեջանական Հանրապետությունն է (Ադր.Հ), որն իրողություն է դարձել ԽՍՀՄ-ի լուծարման ընթացքում: Վերջինս 1991 թ. օգոստոսի 30-ի «Պետական անկախության վերականգման մասին» հռչակագրով և հոկտեմբերի 18-ի «Ադրբեջանական Հանրապետության պետական անկախության մասին» սահմանադրական ակտով հրաժարվել է իր իսկ կողմից ապօրինի որակված Ադր.ԽՍՀ-ի իրավահաջորդությունից և իրեն հռչակել մեկ այլ ապօրինի «պետության»՝ ԱԴՀ-ի իրավահաջորդը: Այդ *ադրբեջաններից* ոչ մեկը իր նախորդի իրավահաջորդը չէ: Դա իրավական կարևոր փաստ է, որի անտեսումը Բաքվին թույլ է տալիս խճճել հարցերը: Մինչ օրս հայտնի չէ, թե որ մի Ադրբեջանի անունից է Բաքուն պնդում, թե ԼՂ-ն պատկանում է իրեն, երբ դրանցից ոչ մեկին Արցախը իրավաբանորեն չի պատկանել:

Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը՝ որպես Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության նախօրինակ

ԱԴՀ-ն, ինչպես նշվեց, 1918 թ. իրողություն է դարձել թուրքական ռազմական ներխուժման հետևանքով, երբ օսմանյան զորքերը, կայսրության սահմաններից դուրս հայկական բնակավայրեր բնաջնջելով, Բաքվում սպանդի ենթարկելով ավելի քան երեսուն հազար հայերի, տապալեցին տեղի օրինական իշխանությունը և այն տվեցին մայիսի 27-ին Թբիլիսիում հռչակ-

[2] Բնական է, որ Խորհրդային Ռուսաստանի բանակի կողմից հիմնված «Ադրբեջանը» իրեն չի հռչակել թուրքական բանակի հիմնած «Ադրբեջանի» իրավահաջորդը: Հասկանալի է նաև, որ առանց ժողովուրդների կամարտահայտության ու մեծ մասամբ դրանց կամքին հակառակ տարբեր պետությունների բանակների կողմից հիմնված այդ գոյացությունները չեն կարող օրինական դիտվել:

ված ԱԴՀ կառավարությանը: Նպատակը մեծ Թուրանի թուրքական ծրագրով այնպիսի նոր պետության հիմնումն էր, որը կայսրությունը կկապեր միջինասիական Թուրքեստանին: Խոչընդոտը պատմականորեն հայկական և հայաբնակ տարածքներն էին: Կայսրության ներսում ցեղասպանությամբ այն հաղթահարված էր համարվում, և 1918-ին թուրքական զորքերը Անդրկովկասում ծրագրի հաջորդ քայլն էին իրագործում: Դրա համար Բաքուն գրավելուց հետո նրանք շրջվեցին դեպի Արցախ՝ բռնությամբ նրան ԱԴՀ-ին ենթարկելու համար: 1976 թ. թուրքերը կրկնեցին ԱԴՀ-ի փորձը՝ իրենց սահմաններից դուրս հիմնելով Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը, որը ցայսօր միջազգային ճանաչում չունի:

Դեֆակտո անկախ Լեռնային Ղարաբաղը 1918-1920 թվականներին

Արդեն 1918 թ. հուլիսից Արցախում գործում էր օրինական իշխանություն: Դա ԼՂ լիազոր ներկայացուցիչների համագումարն էր (ԼՂ ԼՆՀ) և երկրամասի կառավարման համար նրա ձևավորած գործադիր մարմինը՝ ԼՂ ժողովրդական կառավարությունը (ԼՂ ազգային խորհուրդ)[3]: Լեգիտիմության նման պաշարով մի այլ ազգային մարմին տարածաշրջանում չի եղել[4]: Դեֆակտո անկախ Արցախը ասպարեզ իջավ երկրամասում դարեր շարունակ պահպանված հայկական անկախ կամ կիսանկախ պետականությունների ժառանգական գծի վրա՝ 1918-1920 թթ. որևէ այլ պետության չպատկանող տարածքներում: ԼՂ ԼՆՀ-ն մերժեց Բաքվին ենթարկվելու թուրքերի պահանջը և հոկտեմբերի 18-ին Արցախի ինքնապաշտպանական ուժերի կողմից թուրքական զորագնդի ջարդով հարցը հանեց օրակարգից: Շուտով Արցախին նման պահանջ ներկայացրեց 1918 թ. նոյեմբերին Մեծ Բրիտանիայի նավթային շահերին հետամուտ գեներալ Թոմսոնի գլխավորությամբ Բաքու մտած անգլիական ռազմական առաքելությունը: Նրա ճնշմամբ ԼՂ ԼՆՀ-ն 1919 թ. օգոստոսի 26-ին ԱԴՀ-ի հետ կնքեց *ժամանակավոր համաձայնագիր*[5] առ այն, որ մինչև Փարիզի խաղաղության վեհաժողովը, որտեղ պետք է լուծվեր ԱԴՀ-ԼՂ վեճը, Արցախը համաձայնագրում նշված սահմանափակումներով ընդունում է Թոմսոնի նշանակած գեներալ-նահանգապետ Սուլթանովի վարչական լիազորությունները: Պայմանագիրը ԼՂ-ում ԱԴՀ-ին սուվերեն իրավունքներ չէր տալիս:

---

[3] Արցախի՝ որպես վարչաքաղաքական դեֆակտո անկախ կազմավորման և նրա իշխանությունների ձևավորման գործընթացները փաստագրական ճշտգրտությամբ ու մանրամասներով ներկայացված են Եղիշե Իշխանյանի «Լեռնային Ղարաբաղ (1917-1920)» գրքում (Երևան, 1999):

[4] ԱԴՀ-ն, օրինակ, հռչակել են հիմնականում Անդրկովկասյան սեյմում «Մուսավաթ» կուսակցությունը ներկայացնող քաղաքական գործիչներ: Ի տարբերություն դրա, ԼՂ ԼՆՀ-ն, ըստ էության, եղել է ժամանակակից իմաստով ներկայացուցչական մարմին:

[5] Տե՛ս Нагорный Карабах в международном праве и мировой политике: документы и комментарии 2008, 164-166:

Ազգերի լիգան մերժեց Լիգա ընդունվելու ԱԴՀ-ի դիմումը և չճանաչեց նրան որպես պետություն

Թուրքական բանակի կողմից հիմնված ԱԴՀ-ի տարածքային հավակնությունները Ազգերի լիգայի կողմից օրինական չդիտվեցին: Լիգա ընդունվելու Բաքվի հայցը 1920 թ. դեկտեմբերի առաջին օրերին քննվել է Լիգայի 5-րդ կոմիտեում և մերժում ստացել: Ահա Կոմիտեի եզրակացությունը՝ «1. Դժվար է ճշգրիտ որոշել այն տարածքների չափերը, որոնցում այդ պետության կառավարությունը իրագործում է իր իշխանությունը, 2. Սահմանների առիթով հարևան պետությունների հետ ունեցած տարաձայնությունների պատճառով անհնար է որոշել Ադրբեջանի ներկա սահմանները»[6]: Հատուկ ընդգծվեց, որ ԱԴՀ-ն՝ որպես պետություն դեյուրե չի ճանաչվել Ազգերի լիգայի անդամ-պետություններից ոչ մեկի կողմից: Լիգայի գլխավոր քարտուղար Էրիկ Դրամմոնդը 1920 թ. նոյեմբերի 24-ի իր Հուշագրով բերեց 5-րդ կոմիտեի մերժումը լրացնող փաստարկներ: Նշելով հավակնվող տարածքներում հայցողի պատմական տիտղոսի բացակայության փաստը՝ նա շեշտեց, որ այդ տարածքը երբևիցե անկախ պետության կարգավիճակ չի ունեցել և եղել է խոշոր տերությունների (Մոնղոլիայի, Պարսկաստանի, Ռուսաստանի) մաս: Փաստարկի ծավալման ծիրում Դրամմոնդը ընդգծում է. «Նոր հանրապետության համար ընտրված *Ադրբեջան* անվանումը այնպիսին է, ինչպիսին և հարևան պարսկական երկրամասինն է»: Այնուհետև շեշտում է, թե արդյո՞ք 1918 թ. մայիսին այդ հանրապետության հռչակումը և 1920 թ. նրա դեֆակտո ճանաչումը... Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի կողմից բավարար է, որպեսզի Ադրբեջանը համարվի դեյուրե «լրիվ ինքնակառավարվող պետություն»[7]: Դրան հաջորդում է մյուս փաստարկը, թե Լիգա ընդունվելու խնդրագիրը ներկայացրած պատվիրակությունը արդյոք լիազորություններ ունի՞ նման դիմում ներկայացնելու համար, և նրա կառավարությունը ի վիճակի՞ է կատարելու պարտավորություններ և տալու Լիգայի անդամակցությունից բխող երաշխիքներ[8]: Լիգան ԱԴՀ-ի հայցադիմումը քննել է, երբ թուրքերի կողմից հիմնված այդ ԱԴՀ-ն փաստորեն արդեն լուծարված էր ռուսական XI Կարմիր բանակի կողմից: Սակայն նրա սկզբունքային առարկությունները կմնային անփոփոխ, եթե ԱԴՀ-ն վերացված չլիներ:

---

[6] League of Nations. Letter from the President of the Peace Delegation of the Republic of Azerbaijan. Assembly Document 20/48/206, p. 2. Նշելով հարևանների հետ ունեցած վեճերը՝ Լիգան նկատի ուներ ՀՀ-ի և Վրաստանի տարածքների նկատմամբ ԱԴՀ-ի հավակնությունները: ՀՀ-ի դեպքում դրանք վերաբերում էին ԼՂ-ին և Սյունիքին, որոնք ՀՀ-ն ներկայացրել է որպես իր տարածքներ: Լիգան այդ պահանջները վիճելի չի նկատել:

[7] League of Nations. Memorandum by the Secretary General on the Application for the Admission of the Republic of Azerbaidjan to the League of Nations. Assembly Document 20/48/108, 4.

[8] League of Nations. Memorandum by the Secretary General on the Application for the Admission of the Republic of Azerbaidjan to the League of Nations. Assembly Document 20/48/108, 4.

Ազգերի լիգային անդամակցելու ԱԴՀ-ի հայցը մերժելու փաստարկներից բխում է, որ առանց միջազգայնորեն ճանաչված կամ փաստորեն հաստատված սահմանների պատմությունը լքած ԱԴՀ-ի մեջ Լիգան չի տեսել օրինական կազմավորում: Այդ գոյացության արհեստականությունը պարզ երևում է նաև 1918 թ. մայիսի 27-ին դրա հիմնման մասին կազմված «Հռչակագրից»[9]: ԱԴՀ-ն չի հռչակվել որևէ ժողովրդի անունից: Անհասկանալի է «Հռչակագիրն» ընդունած մարմնի «ով լինելը»: Այն ընդունել է Ադրբեջանի մուսուլմանական ազգային խորհուրդը: Բայց «մուսուլմանական ազգային խորհուրդ» բառակապակցությունն անիմաստ է, քանի որ անիմաստ է «մուսուլմանական ազգ» հասկացությունը: Նման ազգ գոյություն չի ունեցել և հիմա էլ գոյություն չունի: Հռչակագիրը նույնպիսի անիմաստ պնդում է պարունակում այն մասին, թե մուսուլմանական ազգային խորհուրդն ընտրված է համաժողովրդական քվեարկությամբ, որպիսի բան լինել չէր կարող մինչ այդ չեղած մի երկրում: Նկատելով այդ անհեթեթությունները՝ հռչակագրի հետագա հրատարակություններում փոխել են այն ընդունած մարմնի անունը փաստաթղթի վերնագրում՝ այն անվանելով «ադրբեջանական ազգային խորհուրդ»[10]: Շրջանառության մեջ է դրվել նաև այդ մարմնի ավելի անհեթեթ անվանումը՝ «Անդրկովկասի մուսուլմանների ազգային խորհուրդ»[11]:

Ազգերի լիգան չի վիճարկել Հայաստանի Հանրապետության պահանջը Լեռնային Ղարաբաղը իր անկապտելի մաս ներկայացնելու վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) վերաբերյալ Լիգայի 5-րդ կոմիտեի բանաձևը այլ բնույթ ուներ: Լիգան հիմք է ընդունում 1920 թ. մայիսի 28-ին ՀՀ անկախության մասին Հայոց Ազգային Խորհրդի կողմից ընդունված և մայիսի 31-ին հրապարակված Հռչակագիրը, որում ասված էր՝ «Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով[12] և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ՝ Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և

[9] Азербайджанская Демократическая Республика (1918-1920). Внешняя политика (документы и материалы) 1998, 8-9.

[10] Азербайджанская Демократическая Республика (1918-1920). Внешняя политика (документы и материалы) 1998, 8-9.

[11] Ահա թե ինչպես են համացանցում ներկայացնում այդ հարցը իրենք՝ Բաքվի մասնագետները «Национальный совет Азербайджана,... известный также как Временный Национальный Совет мусульман Закавказья или Национальный Азербайджанский Совет - политический межпартийный орган, созданный на чрезвычайном заседании бывших членов - мусульман Закавказского сейма, состоявшемся 27 мая 1918 года». https://bitly.ws/X8zc

[12] Խոսքը 1918 թ. փետրվարին ստեղծված և մայիսին լուծարված Անդրկովկասի Ժողովրդավարական Դաշնային Հանրապետության մասին է, որի ղեկավար մարմինը՝ Անդրկովկասյան սեյմը, Ստամբուլի հրահրմամբ ներսից պայթեցրին թուրքամետ «Մուսավաթ» կուսակցության ներկայացուցիչները:

միակ իշխանություն»[13]: Իրավունքի տեսակետից Հռչակագրի անվիճելի լինելը կասկածներ չի հարուցել Լիգայում: Պարզ ասված է, թե ով և որտեղ է հռչակում ՀՀ-ն: Դա չէր կարող չնկատվել Լիգայի կողմից: Ավելին, Լիգայի 5-րդ կոմիտեն իր պարտքն է համարել նշել, որ 1920 թ. մայիսին Հայաստանի Հանրապետության տարածքը կազմել է 26 130 քառ. մղոն (70 551 քառ. կմ), և որ քննարկման ընթացքում գտնվող Վանի, Բիթլիսի, Էրզրումի վիլայեթների և Տրապիզոնի վիլայեթի մի մասի վրա ՀՀ տիտղոսի ճանաչման դեպքում այն պիտի կազմի 80 880 քառ. մղոն (214 000 քառ. կմ)[14]: Եթե ԱԴՀ-ի դեպքում վերջինիս ներկայացրած տարածքային հավակնությունների կապակցությամբ Լիգան արձանագրում է դրանց վիճելի բնույթը, ապա ՀՀ տարածքային պահանջների վերաբերյալ Լիգան նշում է այն տարածքները, որոնք 1918 թ. մայիսին կազմել են ՀՀ-ի մաս, և դա ընդունում որպես փաստ: Ավելին, Լիգայի 5-րդ կոմիտեն նշում է հայկական պատվիրակության այն տեսակետը, որ Սևրի պայմանագրի տակ հաղթող տերությունների շարքում ՀՀ-ի ստորագրությունը ՀՀ-ի ճանաչման ակտ պետք է դիտվի այն ստորագրող պետությունների կողմից: Կոմիտեն արձանագրում է նաև, որ ԱՄՆ-ը և Արգենտինան արդեն դեյուրե ճանաչել են ՀՀ-ն: ՀՀ-ն Ազգերի լիգա ներկայացրած իր սահմաններում Արցախը նշել է որպես իր անկապտելի մաս: Լիգան չի վիճարկել դա՝ տեղեկացված լինելով, որ Արցախն իր անկապտելի մաս ունենալու ՀՀ իրավունքը բխում է՝ (ա) այդ տարածքներում հայ ժողովրդի ունեցած պատմական տիտղոսից, (բ) ՀՀ հռչակագրից, որով ՀՀ տարածքները ներկայացված էին էթնիկական սահմաններում՝ անցնելով պատմական այդ պահին հայերի բնակության վայրերով, (գ) ԼՂ լիազոր ներկայացուցիչների իններորդ համագումարի բանաձևից, որով Լեռնային Ղարաբաղը հայտարարվել էր ՀՀ-ի անկապտելի մաս:

Լեռնային Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի ճանաչումը որպես Խորհրդային Հայաստանի մաս

1920 թ. Նոյեմբերի 29-ին, Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման հաջորդ օրը, ինտերնացիոնալ Ադր.ԽՍՀ-ն ողջունեց պատմական այդ ակտը և հայտնեց, որ ինքը Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը ճանաչում է Խորհրդային Հայաստանի անկապտելի մաս[15]: Դեկտեմբերի 1-ին Բաքվում իրադարձությանը նվիրված Բաքվի խորհրդի հանդիսավոր նիստում Ադր.ԽՍՀ-ի առաջնորդ Ն. Նարիմանովն ընթերցեց այդ Հռչակագիրը, բայց դեկտեմբերի 2-ին այն հրապարակվեց ԼՂ-ի մասով փոփոխված: Հռչակվում էր, որ Ադր.ԽՍՀ-ը ճանաչում է ԼՂ ժողովրդի լի-

[13] Տե՛ս Հայոց պատմություն 2010, 11:

[14] Տե՛ս https://archive.org/details/admissionofnewme209leag/page/n3/mode/2up

[15] Нагорный Карабах в международном праве и мировой политике: документы и комментарии» 2008, 601.

իրավ ինքնորոշման իրավունքը: Հռչակագրի բնօրինակը, որով Ադր.ԽՍՀ-ն ԼՂ-ն ճանաչել է ՀԽՍՀ-ի մաս, մինչ օրս հասանելի չէ մասնագետներին:

Խորհրդային Ադրբեջանը՝ որպես նոր տիպի ոչ ազգային (ինտերնացիոնալ) հանրապետություն: Ադրբեջանահայությունը՝ որպես Ադր. ԽՍՀ-ի պետականակիր ազգ:

Խորհրդային «զգեստներով» Ռուսաստանը Անդրկովկաս վերադարձավ բազմազգ Արևելյան Անդրկովկասում նոր տիպի ոչ ազգային (ինտերնացիոնալ) հանրապետություն հիմնելու ծրագրով: Երկրատարածքի տնտեսական, մշակութային ու քաղաքական պատմության մեջ իրենց դերակատարությամբ ու ազգաբնակչության քանակով առանձնանում էին հայերը, XIX դարում ակտիվ ներհոսքով այդտեղ թափանցած և նոր գործոն դարձած ռուսները և կովկասյան թաթարները[16], որոնք նույն շրջանում Ռուսական կայսրության կողմից տարբեր իսլամադավան խմբերից ձևավորած հանրություն էին: Պատահական չէ, որ ինտերնացիոնալ Ադր.ԽՍՀ-ի առաջին դեկրետները հրապարակվեցին արաբատառ թուրքերեն, հայերեն և ռուսերեն լեզուներով[17]: 1920-ական թվականներին տիտղոսակիր ազգ չունեցող Ադր.ԽՍՀ-ի ոչ ազգային բնույթը տարբեր դրսևորումներ ունեցավ: ԼՂԻՄ-ը պաշտոնական փաստաթղթերում նշվում էր որպես ազգային-պատմական կազմավորում[18]: Ինտերնացիոնալ հանրապետության ամեն քաղաքացի իր մայրենի լեզվով կարող էր դիմել իշխանություններին և իր դիմումի պատասխանը ստանալ մայրենի լեզվով: Դա վերաբերում էր բոլորին: Բայց հայերենը հատուկ կարգավիճակ ուներ: ԼՂ Ինքնավար Մարզի հետ հարաբերվելու պաշտոնական լեզուն «Պետական հիմնարկների ազգայնացման մասին» դեկրետով[19] հայերենն էր, և մարզը պաշտոնական փաստաթղթերում

[16] Մինչև Ռուսական կայսրության սահմաններում հայտնվելը երկրամասում *կովկասյան թաթարներ* էթնոնիմով համայնք չի եղել: Տարածաշրջանը մշակութային, տնտեսական, ազգագրական չափումներում Պարսկաստանից հեռացնելու (իրանազերծելու) համար Ռուսական կայսրությունը այն ձևավորել է տեղի թյուրքերից՝ նրանց օժտելով լայն արտոնություններով: Համայնքին տրամադրված արտոնություններից օգտվելու համար նրան «անդամագրվում էին» ոչ միայն բնիկ ոչ թուրք իսլամադավան բնակիչները: Նույն շարժառիթով այդ խմբում «գրանցվեցին» Իրանից XIX դ. երկրորդ կեսին երկրամաս թափանցած էթնիկապես տարախառն ավելի քան միլիոն մուսուլման նորաբնակներ: Կայսրությունը, երկրատարածքի արդյունաբերական վերելքով պայմանավորված, խրախուսում էր այդ ներհոսքը: Դրանք, այսպես կոչված, օտխոդնիկներն էին (отходники): Ժողովրդագրական այդ գրոհի հետևանքով դարավերջին Արևելյան Անդրկովկասում էթնիկական ինքնությունից զուրկ, ներսում բազմադեմ ու խառնամբոխ կովկասյան թաթարները XX դ. վերջերին Անդրկովկասում դարձան ամենամեծաթիվ համայնքը:

[17] Советская историческая энциклопедия 1961, 248, https://runivers.ru/bookreader/book10460/#page/128/mode/1up

[18] Տե՛ս К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР 1989, 273:

[19] Տե՛ս К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР 1989, 162-163:

ներկայացվում էր որպես պետական կազմավորում: Տարրականից բարձր դասարաններում մայրենի լեզվով սովորելու համար ազգային բոլոր փոքրամասնությունները պետք է հարկ վճարեին, որ հայտնի էր «լեզգի փուլու» անվամբ: Այդ հարկից ազատված էին միայն հայերն ու կովկասյան թաթարները, որոնք չէին դիտվում որպես ազգային փոքրամասնություն: Նախիջևանի Ինքնավար Հանրապետության դրոշի վրա ինքնավարության անվանումը թյուրքերեն ու հայերեն էր գրվում[20]: Հանրապետության քաղաքական առաջին դեմքերը՝ Ադրբեջանի կոմկուսի առաջին քարտուղարները, մինչև 1933 թվականը ռուսներ, հրեաներ ու հայեր էին:

Քաղաքական շրջադարձ Մոսկվայում արդեն ՀԽՍՀ-ի մաս ճանաչված Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի հարցում

Բոլշևիկյան Մոսկվան նախագծում էր ինտերնացիոնալ, տիտղոսակիր ազգ չունեցող Ադր.ԽՍՀ-ը դարձնել սոցիալիզմի առաջադիրքը Արևելքում: Գաղափարական այդ նախագիծը և Արևմուտքից Թուրքիան պոկելու պլանները կանխորոշեցին պատմականորեն հայկական և արդեն Խորհրդային Հայաստանի մաս ճանաչված Նախիջևանի ու Լեռնային Ղարաբաղի բռնի օտարումը հօգուտ Ադր.ԽՍՀ-ի: Արևմուտքից Թուրքիան պոկելու համար բոլշևիկները գործարքի մեջ մտան դեռևս իշխանության չեկած Աթաթուրքի հետ, որը ձևավորել էր զուգահեռ իշխանություն ի դեմս Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ): 1921 թ. մարտին 16-ին ԹԱՄԺ-ը և բոլշևիկյան իշխանությունները Մոսկվայում կնքեցին պայմանագիր, որով արդեն Խորհրդային Հայաստանի մաս ճանաչված Նախիջևանի երկրամասը պետք է հանձնվեր Խորհրդային Ադրբեջանի խնամակալությանը[21]: Պայմանագրի 15-րդ կետով Խորհրդային Ռուսաստանը հանձն էր առնում քայլեր ձեռնարկել, որպեսզի Անդրկովկասի խորհրդային հանրապետություններն ընդունեին ռուս-թուրքական պայմանագրով ընդունված որոշումները: Դա նշանակում էր, որ իր տարածքի թալանի համաձայնությունը տալու համար բռնություն պետք է գործադրվեր Խորհրդային Հայաստանի վրա (Վրաստանի և Ադր.ԽՍՀ նկատմամբ, բնական է, ճնշումներ չպիտի գործադրվեին, քանի որ առաջինը ստանում էր Բաթումը, իսկ երկրորդը՝ Նախիջևանը): Մոսկովյան գործարքը ամրագրվեց 1921 թ. հոկտեմբերի 13-ին Կարսում, որտեղ Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների մասնակցությամբ կնքված պայմանագրով[22] Նախիջևանը հանձնվեց Ադր.ԽՍՀ-ի հովանավորությանը: Տրվեց հովանավորությանը, այլ ոչ ինքնիշխանությանը: 1923 թ., երբ ԽՍՀՄ-ն արդեն ձևավորվել էր, Մոսկվան խախտեց պայմանագրերը՝ Բաքվին արտոնելով իրեն հովանավորության տրված տարածքին տալ ինքնավար հան-

[20] http://www.vexillographia.ru/azerbaij/nahic.htm
[21] Документы внешней политики СССР 1959, 597-604.
[22] Документы внешней политики СССР 1960, 597-604.

րապետության կարգավիճակ իր կազմում: ԽՍՀՄ-ի համար ներքին այդ ակտերը չեն անդրադարձել Կարսի պայմանագրի վրա: Այն ցայսօր անփոփոխ է՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Սակայն փոխվել է Նախիջևանը, որտեղից հայությունը «փափուկ» ճնշմամբ դուրս է մղվել: Խորհրդային տարիներին այստեղ «անարյուն» ցեղասպանություն է իրագործվել:

Լեռնային Ղարաբաղի բռնակցումը Խորհրդային Ադրբեջանին

ԼՂ-ի բռնակցմանը պետք է տրվեր «օրինական տեսք», ինչպես դա արվել է Նախիջևանի դեպքում: Դա ավելի դժվար էր անել, քանի որ նրան՝ որպես տարածաշրջանի էթնոքաղաքական սուբյեկտ, ճանաչել էին թե՛ տարածաշրջան խուժած թուրքերը, թե՛ Անտանտը ներկայացնող Անգլիական ռազմական միսիան, թե՛ ՀՀ-ն, որի անկապտելի մաս էր իրեն հռչակել ԼՂ ԼՆՀ-ն, թե՛ ԱԴՀ-ն, որ ԼՂ-ի հետ մտել էր պայմանագրային հարաբերությունների մեջ: Բացի այդ, Ազգերի լիգան չի վիճարկել ՀՀ տիտղոսը՝ նրա տարածքային պահանջներում, որոնցում Արցախը ներառված էր: Վերջապես, հայտնի էր, որ 1920 թ. դեկտեմբերի 1-ին Բաքուն Լեռնային Ղարաբաղը (ինչպես նաև Զանգեզուրն ու Նախիջևանը) ճանաչել էր Խորհրդային Հայաստանի մաս, իսկ հաջորդ օրը՝ նրա ժողովրդի լիիրավ ինքնորոշման իրավունքը: Այս հիմքերով Ռուսաստանի Կոմունիստական (բոլշևիկյան) Կուսակցության Կովկասյան բյուրոն (ՌԿ(բ)Կ Կովբյուրո) արդեն 1921 թ. հունիսի 3-ին ՀԽՍՀ-ին հանձնարարել էր հանդես գալ Հայտարարությամբ Լեռնային Ղարաբաղը ՀԽՍՀ մաս հռչակելու մասին, ինչը և Երևանը արել է հունիսի 12-ին: Սակայն բոլշևիկյան Մոսկվայում Թուրքիային սիրաշահելու քաղաքական խաղերը այլ ուղղությամբ էին տանում զարգացումները: Մոսկվան արդեն ուներ ԼՂ-ն Ադր.ԽՍՀ-ին տալու որոշում: Այդ ապօրինության պատասխանատվությունը իր վրա չվերցնելու համար նա հանձնարարեց Կովբյուրոյին նորից անդրադառնալ ղարաբաղյան խնդրին: Թբիլիսի գործուղվեց Ստալինը՝ հարցը տեղում լուծելու համար: Մնալով իր դիրքորոշմանը՝ Կովբյուրոն հուլիսի 4-ի նիստում քննարկումներից հետո ընդունեց բանաձև՝ «Ղարաբաղի լեռնային մասը» (իմա՝ Լեռնային Ղարաբաղը – Ա.Մ.) մտցնել Խորհրդային Հայաստանի կազմի մեջ»: Բաքուն պահանջեց հարցը տեղափոխել Ռուսաստանի Կոմկուսի կենտկոմ, որը խուսափում էր իր հետ կապել այդ ապօրինությունը: Երևի հուլիսի 4-5-ի գիշերը Ստալինին չի հաջողվել համոզել Կովբյուրոյին այլ որոշում ընդունելու, բայց կարողացել է համոզել նոր նիստ հրավիրել: Հուլիսի 5-ին, ինչպես երևում է նիստի արձանագրությունից, Ստալինը ընթերցել է ՌԿ(բ)Կ կենտկոմի դիրքորոշումը ներկայացնող որոշման նախագիծը (ուրիշ մեկը նման լիազորություն չուներ) և նիստը փակել: Այն չի դրվել քննարկման կամ քվեարկության:

Եվ այսպես, արդեն Խորհրդային Հայաստանի մաս ճանաչված Լեռնային Ղարաբաղը 1921 թ. հուլիսի 5-ին **երրորդ երկրի կուսակցական մարմնի**

չընդունած «որոշմամբ» հայտնվել է Ադր. ԽՍՀ-ի սահմաններում: Դա եղել է ԼՂ-ի բռնազավթում, որի հետ Արցախի ժողովուրդը չի հաշտվել ողջ խորհրդային տարիներին և բազմիցս հանրագրերով դիմել է Մոսկվային՝ արդարությունը վերականգնելու պահանջով: Էստոպել (լռելյայն համաձայնություն) այդ հարցում չի եղել:

Ի՞նչ էր նախատեսվում Լեռնային Ղարաբաղի համար 1921 թ. հուլիսի 5-ի՝ Կովբյուրոյում չընդունված, բայց գործադրված որոշմամբ

Փաստաթղթում պատմական կամ իրավական բնույթի որևէ հիմնավորում չկա: Դրանում ասվում է՝ «Ելնելով մուսուլմանների ու հայերի միջև ազգային խաղաղության անհրաժեշտությունից՝ Ներքին ու Վերին Ղարաբաղի[23] միջև մշտական տնտեսական կապից, Ադրբեջանի հետ նրա ունեցած կապից, Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանական ԽՍՀ-ի սահմաններում՝ նրան տալով լայն մարզային ինքնավարություն»[24]: «Որոշման» մեջ «Լեռնային Ղարաբաղը թողնել» ձևակերպումը ուղղակի կեղծիք է, քանի որ Լեռնային Ղարաբաղը ոչ միայն երբևիցե չէր եղել Ադր.ԽՍՀ-ի կազմում, այլև արդեն իսկ նույն Կովբյուրոյի հանձնարարությամբ հռչակված էր Խորհրդային Հայաստանի մաս: ԼՂ-ի բռնազավթման մասին այդ փաստաթղթով Խորհրդային Հայաստանից օտարվում էր ոչ թե ԼՂ-ի մի մասը՝ այլ ամբողջը, քանի որ ողջ Լեռնային Ղարաբաղն էր հռչակված Խորհրդային Հայաստանի մաս: Դա երևում է նաև «որոշման» առաջին իսկ նախադասությունից, որում նշվում է, որ Լեռնային Ղարաբաղին (այլ ոչ թե նրա մի մասին) պետք է տրվի լայն մարզային ինքնավարություն: Երկու տարի արցախցիներից չստանալով իրենց պատմական հայրենիքի բռնակցման համաձայնությունն ու խախտելով ապօրինի և իրականում չընդունված վճիռը՝ Բաքուն 1923 թ. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ) դեկրետավորեց Լեռնային Ղարաբաղի մի մասում՝ հետևյալ ձևակերպմամբ. «Լեռնային Ղարաբաղի հայկական մասից կազմավորել ինքնավար մարզ...»[25]: Խորհրդային Հայաստանից բռնազավթվեց ողջ Լեռնային Ղարաբաղը, իսկ մարզը հիմնվեց նրա մեկ քառորդի վրա՝ այն ՀԽՍՀ-ից կտրված առանձնատարածք դարձնելու համար: Արցախի ինքնապաշտպանական բանակը 1991-1994 թթ. Բաքվի սանձազերծած պատերազմում ազատագրել է մարզի սահմաններից դուրս թողնված այդ տարածքների մի մասը: ԼՂՀ-ի 2006 թ.

---

[23] *Լեռնային Ղարաբաղ* ու *Վերին Ղարաբաղ*, ինչպես նաև *Ներքին Ղարաբաղ* ու *Դաշտային Ղարաբաղ* աշխարհագրական տեղանունները այդ տարիներին որպես հոմանիշներ էին օգտագործվում:

[24] Нагорный Карабах в международном праве и мировой политике: документы и комментарии 2008, 639.

[25] Нагорный Карабах в международном праве и мировой политике: документы и комментарии 2008, 651-652.

Սահմանադրությամբ այդ տարածքները, որոնցում նա պետականորեն իրականացրել է հանրային իշխանություն, ամրագրվել են որպես Արցախի Հանրապետության իրավազորության ներքո գտնվող տարածքներ: ԼՂՀ-ն դուրս չի եկել Լեռնային Ղարաբաղից, ինչը պարզ երևում է նաև տարածաշրջանի ֆիզիկական քարտեզից: ԵԱՀԿ-ն «չի նկատել» դա: Աշխարհագրական Լեռնային Ղարաբաղը նույնացնելով ԼՂԻՄ-ի հետ՝ ԵԱՀԿ-ն շրջանառության մեջ դրեց Բաքվի մատուցած այն կեղծ դրույթը, թե ԼՂՀ-ն «Լեռնային Ղարաբաղի շուրջ» օկուպացրել է Ադրբեջանի յոթ շրջանները: Իրականում դրանք հենց Լեռնային Ղարաբաղի այն տարածքներն էին, որոնք նույնիսկ Կովբյուրոյի հուլիսի 5-ի չընդունված, բայց գործադրված որոշմամբ ԼՂԻՄ-ի մաս պիտի կազմեին:

«Ինտերնացիոնալ Ադրբեջան» ծրագրի փակումը և Ադր.ԽՍՀ-ի իսլամադավան ժողովուրդներից *ադրբեջանցի* ազգ կառուցելու ստալինյան նախագծի առաջադրումը

Ստալինը լավ գիտեր ազգային իրադրությունը Անդրկովկասում: Գիտեր, որ ցարիզմի կողմից առաջ տարվող իրանազերծման քաղաքականության և էթնիկապես տարախառն զանգվածից «կովկասյան թաթարներ» անվամբ կեղծ էթնոխմբի ստեղծումը Ռուսական կայսրության համար աննպաստ արդյունք է տվել: Արտոնություններով օժտված այդ զանգվածը թուրքական հակումներ է ձեռք բերել (այդ թվում և տարածաշրջանում վխտող թուրքական գործակալների ջանքերով), կայսրության համար դառնալով ոչ պակաս վտանգավոր գործոն: Ըստ երևույթին, 1920-ականներին «Ինտերնացիոնալ Ադրբեջան» ծրագրում այդ միտումները չեզոքացնելու միջոց տեսել է նաև Ստալինը: Սակայն 30-ական թթ. սկզբներին այդ խնդիրը լուծելու նոր գաղափար է առաջադրվում: Իմաստն այն էր, որ, ոչ ազգային Ադր.ԽՍՀ-ի իսլամադավան ժողովուրդներին «խառնելով», կարելի է ստեղծել նոր ազգ, որը կունենա սեփական ազգային գիտակցություն, նոր ինքնություն և թուրքական կամ պարսկական հակումներ չի ունենա: Ենթադրվում էր, որ այդպես անվտանգային ավելի հուսալի իրադրություն կձևավորվի երկրի հարավային սահմաններում: Նոր նախագիծը սովորաբար կապվում է Ստալինի անվան հետ: Բայց ով էլ լիներ դրա հեղինակը, այն կարող էր իրագործել միայն Ստալինը, և այն պիտի կապվեր միայն նրա անվան հետ: Խնդիրը դեռ հավելյալ ուսումնասիրության կարիք ունի, և ամենից հավանականն այն է, որ այդ գաղափարը նրան հուշել են 1933-ին Ադրբեջանի կոմկուսի առաջնորդ դարձած Միր Ջաֆար Բաղիրովը և նրա հետ միշտ սերտ կապերի մեջ գտնվող Լավրենտի Բերիան: Բացի վերը նշված փաստարկից, նրանք որպես տհաճ բացառություն պետք է նշեին այն, որ Ադր.ԽՍՀ-ը միութենական հանրապետությունների շարքում միակն է, որ չունի պետականակիր ազգ, ինչը վատ է ազդում հանրային տրամադրութ-

յունների վրա: Բաղիրովի դատական գործի արխիվը գուցե և կարող է հաստատել այս վարկածը: Բայց այն դեռ բաց չէ: Չի բացառվում, որ նա ուղղակի խաբել է Ստալինին: Նոր ազգի միջուկը արդեն թուրքական հակումներով, 1905-ին ու 1918-ին հայկական կոտորածների փորձ ձեռք բերած և ամենամեծ համայնքը դարձած կովկասյան թաթարները պիտի լինեին: Սրանք նորաբնակներ էին Անդրկովկասում և ազգ դառնալու համար երկրատարածքի պատմության ու մշակույթի հետ կապեր չունեին: Ազգ դառնալու համար նախագիծը նրանց արտոնում էր սեփականացնել բնիկ ժողովուրդների, այդ թվում և հայերի պատմությունն ու մշակույթը: Գրեթե մի ամբողջ դար է, ինչ տեղի թուրքական ու թուրքացած տարրը, որ մինչ այդ քողարկվում էր *կովկասյան թաթարներ* էթնոնիմի տակ, թալանում է Անդրկովկասի ժողովուրդների պատմությունն ու մշակույթը՝ այս անգամ *ադրբեջանցի* կեղծ էթնոնիմի քողի տակ: Անձնագրով «ադրբեջանցին» էթնիկ պարսիկ, լեզգի, թալիշ, ավար, թաթ, քուրդ կամ թուրք է: *Ադրբեջանցի* էթնիկական հանրույթ, իբրև այդպիսին, գոյություն չունի, և հայտնի չէ, թե որքան է բուն թուրքի բաժինը այդ (թող թույլ տրվի ասել) պսևդոհանրության մեջ: Ադր.ԽՍՀ-ի իսլամադավան բոլոր ժողովուրդներին «*ադրբեջանցի*» գլխարկի տակ դնելը փոխեց հանրապետության ազգագրական պատկերը: Հանրապետության պետականությանն առնչվող երկու համայնք մնացին՝ անհայտ ինքնությամբ ադրբեջանցիները և հայերը, որոնք 20-ականներին դիտվել են որպես ինտերնացիոնալ (ոչ ազգային) Ադր.ԽՍՀ-ի հիմնադիր ժողովուրդներից մեկը և ի դեմս ԼՂԻՄ-ի ներկայացված էին Ադր.ԽՍՀ-ի ու ԽՍՀՄ-ի ազգային-պետական կառույցներում:

ԼՂԻՄ-ը՝ որպես ԽՍՀՄ ազգային-պետական կառույցի սուբյեկտ

ԽՍՀՄ ազգային-պետական համակարգում ԼՂԻՄ-ի կարգավիճակը ի վերջո որոշվել է ավտոնոմիզացիայի մասին ստալինյան նախագծով: Գաղափարը, որով առաջնորդվել է Ստալինը Լենինի հետ ԽՍՀՄ ազգային-պետական համակարգի շուրջ բանավեճում, հանգում էր նրան, որ երկրի ազգային վարչաքաղաքական միավորներին պետք է տրվեն ոչ թե սուվերեն պետությունների, այլ ինքնավարությունների կարգավիճակ: Նա լիարժեք ազգային հանրապետությունների լենինյան նախագծում տեսնում էր ԽՍՀՄ-ի՝ որպես դաշնային պետության տրոհման վտանգը (ի վերջո, նա ճիշտ դուրս եկավ): Ստալինը ստիպված էր այդ բանավեճում զիջել Լենինին, որ կուսակցության մեջ անհամեմատ ավելի մեծ հեղինակություն ուներ: Սակայն վերջինիս մահից հետո նա իր գաղափարը առաջ էր տանում այլ ձևերով՝ միութենական հանրապետություններից հօգուտ կենտրոնական իշխանության (Կենտրոնի) օտարելով պետականության կարևորագույն ատրիբուտները: Ավելին, նա սահմանադրորեն ԽՍՀՄ իրավաքաղաքական համակարգի միջուկ դարձրեց Խորհրդային Միության Կոմունիստական Կուսակցությունը

(ԽՄԿԿ), որի գործունեության հիմքում դրված էր դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքը: Դա նշանակում էր, որ երկրի համար կարևոր բոլոր վճիռներն ընդունվում էին ԽՄԿԿ կենտկոմում, որոնք պարտադիր էին կուսակցական ստորադաս կազմակերպությունների համար: Այդ վճիռները մեքենայաբար ընդունվում էին նաև խորհրդային մարմինների կողմից, որոնցում վճռական մեծամասնություն կազմող կոմունիստները պարտավոր էին առաջ տանել կուսակցության կենտկոմի որոշումները: Միութենական հանրապետություններից պետական ինքնիշխանության ատրիբուտների օտարմամբ նրանց իրավական կարգավիճակը իջեցրեց՝ այն գրեթե հավասարեցնելով ինքնավարություններին: Դա կարելի է ցույց տալ Ադր.ԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի օրինակներով: Վերջինս չուներ ինքնիշխան պետականության այնպիսի ատրիբուտներ, ինչպիսիք են սեփական տարադրամը, բանակը, քաղաքացիությունը, միջազգային կազմակերպություններում ներկայացվածությունը, սեփական սահմանապահ ուժերը: Բայց այդպիսիք չուներ նաև Ադր.ԽՍՀ-ը: ԽՍՀՄ-ն ուներ մեկ միասնական պետական սահման, իսկ ներքին սահմանները սոսկ վարչական սահմաններ էին: Թե՛ Ադր.ԽՍՀ-ի, թե՛ ԼՂԻՄ-ի սահմանները կարող էին փոխվել միայն նրանց համաձայնությամբ: Ինչ վերաբերում է ԽՍՀՄ գերագույն օրենսդիր մարմնում ներկայացվածությանը, երկուսն էլ համապատասխան քվոտաներով ներկայացված էին այնտեղ: Գործնականում Մոսկվայից էին նշանակվում թե մեկի, թե մյուսի գլխավոր դատախազները: Պետականության նշված բոլոր (և ըստ էության՝ որոշիչ) հատկանիշներով ինքնավար մարզը և միութենական հանրապետությունը գրեթե նույն կարգավիճակում էին: Պատահական չէ, որ 1990 թ. ապրիլի 3-ի «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման մասին» ԽՍՀՄ օրենքով[26] ԽՍՀՄ-ից դուրս (ԽՍՀՄ-ի լուծարման կամ ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու պարագայում) ինքնավար կազմավորումներին իրավունք էր տրվում հռչակելու անկախ պետականություն: ԽԱՀՄ-ից դուրս իրենց կարգավիճակը ինքնուրույն որոշելու իրավունք էր տրված նաև հավաք ապրող ազգություններին: 1990 թ. ապրիլի 3-ի օրենքը լրացուցիչ հիմնավորում ստացավ նույն տարվա ապրիլի 26-ի՝ «ԽՍՀ Միության և դաշնային սուբյեկտների լիազորությունների սահմանազատման մասին» ԽՍՀՄ օրենքով[27], որն արձանագրեց, որ ինքնավար կազմավորումները միութենական հանրապետությունների սահմաններում գտնվում են ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքի հիման վրա:

[26] Закон Союза Советских Социалистических Республик «О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР» 1990, 44-16.

[27] Закон СССР от 26 апреля 1990 г. N 1457 - I «О разграничении полномочий между Союзом СССР и субъектами федерации» 1990, 44-12.

Արցախի (ԼՂ) Հանրապետությունը 1991 թ. կայացել է մերօրյա Ադրբեջանական Հանրապետությանը չպատկանող տարածքներում

ԽՍՀՄ-ի լուծարումը ընթացքի մեջ մտավ 1991 թ. սեպտեմբերի 6-ին մերձբալթյան հանրապետություններից, որոնց անկախությունը հատուկ որոշմամբ ճանաչեց ԽՍՀՄ պետական խորհուրդը[28]: Նախօրեին նրանք հռչակագրերով վերականգնել էին իրենց ունեցած և 1940 թ. ԽՍՀՄ-ի ներխուժմամբ կորցրած պետականությունները: Բաքվում որոշեցին նույն ուղիով գնալ և օգոստոսի 30-ին հրապարակեցին «Պետական անկախության վերականգման մասին» հռչակագիր: Հոկտեմբերի 18-ին այն ծավալուն ձևով ներկայացվեց «Ադրբեջանական Հանրապետության պետական անկախության մասին» սահմանադրական ակտում[29]: Բայց այն, ինչ իրավաբանորեն իմաստ ուներ մերձբալթյան հանրապետությունների համար, անիմաստ էր Ադրբեջանական Հանրապետության դեպքում: Բաքուն խորհրդային կարգերի հաստատումը Արևելյան Անդրկովկասում որակեց որպես Ադրբեջանի բռնազավթում և որոշեց վերականգնել թուրքական բանակի կողմից հիմնված ԱԴՀ-ի պետականությունը: Դա փաստորեն առանց հաստատված կամ ճանաչված սահմանների պատմությունը լքած այն «պետությունն» էր, որին Ազգերի լիգայի անդամ-պետություններից ոչ մեկը դեյուրե չէր ճանաչել, որի առաջ Լիգան փակել էր իր դռները նրա կողմից հավակնություն ունեցող տարածքներում պատմական տիտղոս և փաստացի վերահսկողություն չունենալու հիմնավորումով: Վերականգնվեց մի պետականություն, որի կազմում Լեռնային Ղարաբաղը չէր եղել:

Բաքվի այդ ակտին 1991 թ. սեպտեմբերի 2-ին հաջորդեց Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության հռչակումը[30] և ապա՝ դեկտեմբերի 10-ին ԼՂՀ անկախության մասին հանրաքվեն[31]: ԼՂՀ-ն հռչակվեց ԼՂԻՄ-ի և Կենտրոնական Արցախի Շահումյանի շրջանի բոլոր մակարդակների Խորհուրդների պատգամավորների միացյալ նիստում[32]: Հռչակագրում բերվեց իրավական բնույթի երեք հիմնավորում՝ (1) Բաքվի վերադարձը 1918-1920 թթ. իրավաքաղաքական իրողություններին և Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության վերականգնումը, (2) նախըն-

[28] https://timenote.info/ru/events/SSSR-priznajot-nezavisimost-pribaltijskih-respublik-Estonii-Latvii-i-Litvi

[29] Конституционный акт Азербайджанский республики от 18 октября 1991 года N 222-XII О восстановлении государственной независимости Азербайджанской Республики https://base.spinform.ru/show_doc.fwx?rgn=2889

[30] Нагорный Карабах в международном праве и мировой политике: документы и комментарии 2008, 702-703.

[31] Нагорный Карабах в международном праве и мировой политике: документы и комментарии 2008, 712-713.

[32] Շահումյանի շրջանը և հարակից Գետաշենի ենթաշրջանը հայաբնակ այն տարածքներն էին, որ նույնիսկ Կովբյուրոյի չընդունած, բայց իրագործված որոշմամբ պետք է ընդգրկվեին հայկական ինքնավարության (ԼՂԻՄ-ի) կազմում: Դրանցում Բաքուն դեռ չէր հասցրել իրագործել ցեղասպանություն:

թաց տասնամյակներում Բաքվի իշխանությունների վարած ցեղասպանական քաղաքականությունը և (3) ԽՍՀՄ-ի դեռևս գործող օրենքները (1990 թ. ապրիլի 3-ին և 26-ին ընդունված՝ վերը հիշատակված օրենքները), որոնք միութենական հանրապետություններին արգելում էին ԽՍՀՄ-ից դուրս գալու դեպքում հարկադրանքով «իրենց հետ տանել» ինքնավար կազմավորումներն ու հավաք ապրող ազգություններին: Առաջիններին, ինչպես արդեն նշվել է, արտոնվում էր ինքնուրույն որոշել իրենց պետահիրավական կարգավիճակին վերաբերող հարցերը՝ ընդհուպ մինչև անկախ պետականության հիմնումը: Հենվելով ինքնորոշման իր ճանաչված իրավունքի վրա՝ Արցախը 1991 թ. դեկտեմբերի 10-ին միջազգային դիտորդների ներկայությամբ այն իրացրեց համաժողովրդական հանրաքվեով: Դրան մասնակցեց ընտրական իրավունք ունեցող ազգաբնակչության 82,2 տոկոսը: Հօգուտ անկախության քվեարկեց ընտրողների 99.89 տոկոսը:

Կայունացած ավանդույթով ԼՂՀ-ի անկախացման լեգալությունը սովորաբար հիմնավորվում է ԽՍՀՄ օրենքներով և այն պնդմամբ, թե ԼՂ-ն ԽՍՀՄ օրենքների համաձայն է դուրս եկել Ադր.ԽՍՀ-ի կազմից: Բաքուն դա կասկածի տակ է առնում՝ պնդելով, թե ինքը 1991 թ. իր անկախացման գործընթացում ԽՍՀՄ օրենքներով չի առաջնորդվել, այլ հրաժարվելով Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդությունից՝ ուղղակի վերականգնել է 1918-1920 թթ. ԱԴՀ պետականությունը[33]: Բայց Բաքվի այդ «խորամանկ» հնարքը Արցախին տրամադրեց անկախացման ավելի հզոր իրավական հիմք: Եվ դա այն է, որ Արցախը մաս չի կազմել թուրքերի կողմից ստեղծված ԱԴՀ-ի և 1991 թ. անկախություն է հռչակել նորահռչակ Ադրբեջանական Հանրապետությանը չպատկանող տարածքներում:

Ինչու՞ Բաքուն հրաժարվեց Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդությունից

Եվ այսպես, Խորհրդային Ռուսաստանի կողմից Անդրկովկասի օկուպացված տարածքներում հիմնած Խորհրդային Ադրբեջանը 1991 թ. Բաքուն որակել է ապօրինի կազմավորում: Դա փաստի ճիշտ գնահատական էր: Սակայն միայն դա չէր Ադր.ԽՍՀ-ից հրաժարվելու և ԱԴՀ «պետականությունը» վերականգնելու քաղաքական շարժառիթը: 1991 թ. մերձբալթյան հանրապետությունների օրինակով նա փորձել է ներկայանալ որպես ԼՂ-ն ու Նախիջևանը իրեն հանձնած Խորհրդային Ռուսաստանի զոհ և ասպարեզ իջնելու իր հիմքերին պատմական բնույթ տալու համար դրանք տանել

[33] Պետական անկախության վերականգման մասին Սահմանադրական ակտում Բաքուն, իր սովորության համաձայն, նենգափոխել է հասկացությունները: Որպեսզի Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության հետ իրավահաջորդության կապը համոզիչ լինի, նա անվանափոխել է այն՝ *Ադրբեջանական Հանրապետություն* անվանելով՝ անտեսելով այն իրողությունը, որ այդ անունով պետություն դարասկզբին չի եղել:

դարասկիզբ: Ադր.ԽՍՀ-ի իավահաջորդությունից հրաժարվելու ակտով, Բաքուն խուսափում էր խորհրդային տարիներին հայերի՝ այդտեղ իրագործված ցեղասպանության և Ադր.ԽՍՀ-ի հարյուր հազարավոր հայ փախստականներին փախհատուցում տալու պատասխանատվությունից: Բայց կար նաև մեկ այլ շարժառիթ: Հրաժարվելով խորհրդային ժառանգությունից՝ Բաքուն նպատակ ուներ չեղարկել Ադր.ԽՍՀ-ի կողմից ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչումը և արժեզրկել ԽՍՀՄ օրենքները, որոնք Արցախին արտոնում էին ԽՍՀՄ-ից դուրս հռչակելու անկախություն: Ի վերջո, նա հույս ուներ, որ նոր աշխարհակարգի ձևավորման թոհուբոհում ԽՍՀՄ-ի շուտափույթ լուծարումով շահագրգռված Արևմուտքը (և առաջին հերթին՝ Եվրոպան) ժամանակ չի ծախսի դրանցում խորամուխ լինելու համար: Հաշվարկը ճիշտ դուրս եկավ:

Ինչպես է ԵԱՀԽ/ԵԱՀԿ-ն օրինական տեսք տվել Բաքվի ապօրինություններին՝ իրավական փաստերի անտեսմամբ և միջազգային իրավունքի նենգափոխմամբ

Եվրոպական խորհրդի որոշմամբ (Մաաստրիխ, 1991 թ. դեկտեմբերի 9-11) 1991 թ. դեկտեմբերի 16-ին Բրյուսելում ընդունվել են այն չափանիշները, որոնք սահմանում են Եվրոպական համայնքի 12 երկրների ընդհանուր մոտեցումը Խորհրդային Միության նկատմամբ և Արևելյան Եվրոպայում նորանկախ պետությունների ճանաչման հարցում: Փաստաթղթում, որ հայտնի է «Բրյուսելյան մինիմում» վերտառությամբ, նշվում է, որ Եվրոպան նորանկախ պետություններից պաշտոնական ճանաչման համար պահանջում է, որ նրանք՝ (1) կհետևեն ՄԱԿ-ի կանոնադրության, Հելսինկյան եզրափակիչ ակտի, Փարիզյան հռչակագրի դրույթներին հատկապես ժողովրդավարության, իրավունքի գերակայության և մարդու իրավունքների հարցերում, (2) երաշխիքներ կտան էթնիկական ու ազգային խմբերին և փոքրամասնություններին ԵԱՀԿ շրջանակում ընդունած պարտավորություններին համապատասխան, (3) կընդունեն բոլոր սահմանների անձեռնմխելիությունը, որոնք չեն կարող այլ կերպ փոփոխվել, քան խաղաղ միջոցներով և ընդհանուր համաձայնությամբ[34], (4) կընդունեն զինաթափման, միջուկային զենքի չտարածմանն ու անվտանգությանը և տարածաշրջանային կայունությանը վերաբերող բոլոր պարտավորությունները, (5) կպարտավորվեն պետությունների իրավահաջորդության և տարածաշրջանային վեճերին վերաբերող բոլոր հարցերը համաձայնությամբ լուծել՝ այդ թվում նախատեսելով անհրաժեշտության դեպքում իրավարար դատարանին դիմելը:

Եվրոպային բարձրակարգ իրավաբաններ ու միջազգայնագետներ պետք չէին, որպեսզի արձանագրեին (ինչպես դա 1920 թ. արել են Ազգերի

[34] Հայտարարությունից ընդհանրապես պարզ չէ, թե ինչ «բոլոր սահմանների» մասին է խոսքը:

լիգայի փորձագետները), որ Ադր.Հ-ն չի բավարարում և չի կարող բավարարել այդ չափանիշներից ոչ մեկին: Դրանք հակացուցված էին ագրեսիվ նացիոնալիզմով վարակված, Արևելյան Անդրկովկասում ու Նախիջևանում արյունալի ու անարյուն ցեղասպանության հարուստ փորձ կուտակած և այդ մշակույթից հրաժարվելու մտադրություն չունեցող այդ երկրի քաղաքական մշակույթին: Չափանիշներից մեկը վերաբերում էր պետությունների իրավահաջորդությանը, և նախկին միութենական հանրապետությունների ճանաչման հարցով զբաղված Եվրոպան «չնկատեց», որ «նախկին Խորհրդային Ադրբեջան» այլևս գոյություն չունի, որ դրա տեղը *Ադրբեջանական Հանրապետություն* անվամբ 1918-1920 թթ. ԱԴՀ-ն է: Չնկատեց, որ Բաքուն հրաժարվել է մեկ ապօրինի պետության իրավահաջորդությունից և դարձել մեկ այլ ապօրինի պետության իրավահաջորդը: Նա չպարզեց, թե որ մի Ադրբեջանն է ներկայացել Ալմա-Աթա և եվրոպական արժեքներին հետևելու երաշխիքներ տվել: Նա հայտարարեց, թե կոնֆլիկտի կարգավորման հիմքում դնում է ժողովուրդների ազատ ինքնորոշման, պետությունների տարածքային ամբողջականության և ուժի կամ ուժի սպառնալիքի արգելման սկզբունքները, սակայն դրանցից ոչ մեկը չկապեց խնդրի փաստական հենքի հետ: Նա «չնկատեց», որ գործ ունի Ադրբեջան անունով «պետությունների» մի շարքի հետ, որոնցում ոչ մի անգամ ինքնորոշման ակտ և անկախության հանրաքվե չի եղել: Ամենայն հավանականությամբ, հենց Եվրոպան է Ալմա-Աթայից հետո խորհուրդ տվել Բաքվին ձևական մի հանրաքվե անցկացնել, որպեսզի «ճանաչման կարգը պահպանվի»: **Բաքուն այդ պոստ-ֆակտում հանրաքվեն կազմակերպել է 1991 թ. դեկտեմբերի** 29-ին: Դա եղել է անկախության առաջնային հանրաքվե, որով առաջին անգամ պետք է որոշվեին Ադր.Հ-ի սահմանները, և նրանցում Արցախը չէր կարող լինել, քանի որ նա չի մասնակցել Բաքվի կազմակերպած այդ պոստ-ֆակտում հանրաքվեին և նրանից առաջ համաժողովրդական հանրաքվեով անկախացել էր իրեն և միայն իրեն պատկանող տարածքներում: Եվրոպան դա էլ «չի նկատել» և ԵԱՀԽ ու ՄԱԿ մտնելու համար անցագիր և ցեղասպանական քաղաքականությունը շարունակելու արտոնագիր է տվել Ադր. Հ-ին, որն իրեն չվերաբերող տարածքային ամբողջականության սկզբունքն օգտագործում է քաղաքական իր հանցագործ ոտեգիծը «իրավունքով» քողարկելու համար:

Հ.Գ. Մեզ կարող են հանդիմանել, թե տարվելով իրավունքով՝ մոռացել ենք խնդրի քաղաքական տեսանկյունները, երբ, ինչպես ասում են, իրավունքի գինը ցածր է այն թղթի գնից, որի վրա այն գրվում է: Գուցե և ճիշտ է ասված: Բայց ճիշտ է և այն, որ առանց ԻՐԱՎՈՒՆՔԻ մենք կհայտնվենք վայրենության քարանձավում, որտեղ Բաքուն արդեն իսկ գտնվում է և փորձում է մարդկությանը տանել այնտեղ:

Եզրակացություններ

Չկա իրավական որևէ հիմք պնդելու, թե Լեռնային Ղարաբաղը (Արցախը) XX դարում Անդրկովկասում «ադրբեջանական» կոչված երեք պետություններից որևէ մեկի մաս էր/է: Թուրքերի կողմից հիմնած ԱԴՀ-ն, ստանալով Ազգերի լիգային անդամակցելու մերժումը, պատմությունը լքել է առանց հաստատված կամ ճանաչված սահմանների՝ առանց Արցախի: Արցախը չի եղել նաև Խորհրդային Ռուսաստանի XI Կարմիր բանակի կողմից հիմնված Ադր.ԽՍՀ-ի սուվերեն տարածք, քանի որ՝ (1) Ադր.ԽՍՀ-ն ինքնիշխան պետություն չի եղել, (2) նրա սահմաններում Արցախը հայտնվել է Խորհրդային Ռուսաստանի կոմկուսի Կովկասյան բյուրոյի՝ 1921 թ. հուլիսի 5-ի չընդունված, բայց գործադրված «որոշմամբ», երբ նա արդեն հռչակված էր Խորհրդային Հայաստանի մաս, (3) Ադր.ԽՍՀ-ի ապօրինի կազմավորում լինելը Բաքուն ընդունել է 1991 թ. Ադր.Հ-ի անկախության մասին սահմանադրական ակտով, որից բխում է նաև Արցախը ոչ օրինական այդ կազմավորման սահմանները մտցնելու՝ Կովբյուրոյի «որոշման» ապօրինությունը: Միջազգային իրավունքի տեսակետից Արցախը չի պատկանում նաև 1991 թ. ԽՍՀՄ-ի լուծարման ընթացքում հայտնված մերօրյա Ադրբեջանական Հանրապետությանը, որը վերականգնել է թուրքերի կողմից հիմնված, 1918-1920 թթ. գոյատևած ԱԴՀ-ն, որին Արցախը չի պատկանել: 1991 թ. դեկտեմբերի 10-ին հանրաքվեով Արցախը անկախություն է ձեռք բերել մերօրյա Ադր.Հ-ին չպատկանող տարածքներում: 1991-ին Եվրոպան դա անտեսել և միջազգային իրավունքն արհամարհելով որոշել է ԱԴՀ-ն ճանաչել Արցախով հանդերձ, երբ հայտնի էր, որ XX դարում «Ադրբեջան» անվան տակ հայտնված ոչ մի «պետություն», ներառյալ Ադր.Հ-ն, ասպարեզում չի հայտնվել ինքնորոշման ակտով (անկախության հանրաքվեով):

Գրականություն

Իշխանյան Ե. 1999, Լեռնային Ղարաբաղ (1917-1920), Երևան, «Հայաստան», 375 էջ:

Հայոց պատմություն 2010, հ. 4, գիրք առաջին, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 797 էջ:

Азербайджанская Демократическая Республика. Внешняя политика (Документы и материалы) 1998, Баку, «Азербайджан», 632 с.

Документы внешней политики СССР. Москва 1959, т. III, Москва, «Госполитиздат», 743 с.

Документы внешней политики СССР. Москва 1960, т. IV, «Госполитиздат», 840 с.

К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР 1989, Баку, «Азербайджанское государственное издательство», 334 с.

Нагорный Карабах в международном праве и мировой политике: документы и комментарии 2008, т. 1, Москва, «Кругъ», 943 с.

Свод законов СССР. Москва 1990, т. 1, «ГПИБ», 871 с.

Советская историческая энциклопедия 1961, т. 1, Москва, «Советская энциклопедия», 1024 с.

League of Nations. Letter from the President of the Peace Delegation of the Republic of Azerbaijan. Assembly Document 20/48/206.2 (ներբեռնման օրը՝ 20.09.2023).

League of Nations. Memorandum by the Secretary General on the Application for the Admission of the Republic of Azerbaidjan to the League of Nations. Assembly Document 20/48/108 (ներբեռնման օրը՝ 19.09.223).

ԻՆՉՈ՞Ւ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ (ԱՐՑԱԽ), ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՁԱՅՆ, ՉԻ ՊԱՏԿԱՆՈՒՄ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ

Ալեքսանդր Մանասյան

Ամփոփում

XX դարում Անդրկովկասում «Ադրբեջան» անունով Արցախի/Լեռնային Ղարաբաղի նկատմամբ (ԼՂ) հավակնող երեք ապօրինի կազմավորում է հայտնվել: Առաջինը թուրքերի կողմից հիմնած Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունն էր (1918-1920 թթ.), որին Ազգերի լիգան 1920 թ. չի ճանաչել որպես պետություն, և որը պատմությունը լքել է առանց փաստորեն հաստատված կամ ճանաչված սահմանների, առանց Արցախի: Նույն՝ 1918-1920 թթ. Արցախը եղել է դեֆակտո անկախ կազմավորում և ունեցել է լեգիտիմ իշխանություններ ի դեմս Լեռնային Ղարաբաղի լիազոր ներկայացուցիչների համագումարի (ԼՂ ԼՆՀ) և Ժողովրդական կառավարության: 1920 թ. ապրիլի 28-ին ԼՂ ԼՆՀ-ն Լեռնային Ղարաբաղը հայտարարել է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) անկապտելի մաս: «Ադրբեջան» անվամբ երկրորդ ապօրինի կազմավորումը Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը (Ադր.ԽՍՀ) հիմնել է Խորհրդային Ռուսաստանի XI Կարմիր բանակը 1920 թ. ապրիլի 28-ին՝ որպես նոր տիպի ոչ ազգային, ինտերնացիոնալ, տիտղոսակիր ազգ չունեցող հանրապետություն: Վերջինիս սահմաններում արդեն Խորհրդային Հայաստանի մաս հռչակված ԼՂ-ն մտցվել է Ռուսաստանի Կոմունիստական (բոլշևիկյան) Կուսակցության Կովկասյան բյուրոյի (Կովբյուրո) չընդունված, բայց գործադրված որոշմամբ: Բռնակցմանը իրավական տեսք տալու համար Խորհրդային Հայաստանից օտարված ԼՂ-ի մի մասը ոչ ազգային այդ հանրապետության սահմաններում ունեցել է ինքնավար մարզի, իսկ ԽՍՀՄ կազմավորումից հետո՝ բոլոր ինքնավարությունների պես նաև ԽՍՀՄ ազգային-պետական համակարգի սուբյեկտի կարգավիճակ: ԽՍՀՄ-ի օրոք Արցախը զանգվածային հանրագրերով պարբերաբար պահանջել է ուղղել 1921 թ. իր նկատմամբ թույլ տրված անարդարությունը: 1988 թ. դա ընդունել է համաժողովրդական շարժման բնույթ: «Ադրբեջան» անունով երրորդ ապօրինի կազմավորումը՝ Ադրբեջանական Հանրապետությունն ասպարեզ է իջել ԽՍՀՄ-ի լուծարման ընթացքում: 1991 թ. հոկտեմբերի 18-ի՝ Պետական անկախության մասին սահմանադրական ակտով Բաքուն Ադրբեջանի խորհրդայնացումը որակել է որպես նրա բռնազավթում Խորհրդային Ռուսաստանի կողմից: Փաստաթղթում ամրագրվել է նաև այդ որակումից բխող հետևությունը առ այն, որ Ադր.Հ-ն հրաժարվում է Ադր.ԽՍՀ-ի՝ որպես ապօրինի կազմավորման իրավահաջորդությունից և իրեն հռչակում 1918-1920 թթ. ԱԴՀ իրավահաջորդ: Սակայն դա չապահովեց Ադր.Հ-ի կայացման օրինականությունը, քանի որ, հրաժարվելով ապօրինի Ադր.ԽՍՀ-ից, նա իրեն հռչակեց իրավահաջորդը մեկ այլ ապօրինի պետականության, որին Ազգերի լիգան չէր ճանաչել որպես պետություն, և որի կազմում Լեռ-

նային Ղարաբաղը չի եղել: 1991 թ. դեկտեմբերի 10-ին կայացել է Արցախի Հանրապետության անկախության հանրաքվեն մերօրյա Ադր.Հ-ին չպատկանող այն տարածքներում, որտեղ Բաքուն չէր հասցրել ավարտել էթնիկական զտումները: Եվրոպան «չնկատեց» միջազգային իրավունքի տեսակետից անբասիր ձևով անկախություն հռչակած ԼՂ Հանրապետությունը: 1991-ի դեկտեմբերին, երբ ԽՍՀՄ-ի լուծարման գործընթացը մոտեցել էր վերջնագծին, Եվրոպական համայնքը որոշեց ճանաչել անհայտ կարգավիճակով ու սահմաններով Ադրբեջանական Հանրապետությունը, որտեղ մինչ այդ չէր եղել ինքնորոշման մասին որևէ ակտ և անկախության մասին որևէ հանրաքվե: Իր հովանու տակ Ադր.Հ – ԼՂՀ կոնֆլիկտի կարգավորման երեսուն տարի տևած բանակցություններում, հակառակ իրավական անհերքելի փաստերին, Եվրոպան «չտեսավ», որ ԼՂ Հանրապետությունը կայացել է Ադր.Հ.-ին չպատկանող տարածքներում, իր կառույցներում ու ՄԱԿ ընդունվելու անցագիր տալով ցեղասպան Ադրբեջանին: 2020-2023 թթ. Արցախի Հանրապետության դեմ սանձազերծած ագրեսիայի հետևանքով Արցախն այսօր Ադր.Հ-ի կողմից զավթված տարածք է:

Բանալի բառեր՝ Լեռնային Ղարաբաղ, Լեռնային Ղարաբաղի լիազոր ներկայացուցիչների համագումար, Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետություն, Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետություն, Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն, Ադրբեջանի հայերի ցեղասպանություն, Ադրբեջանական Հանրապետություն:

ПОЧЕМУ ПО МЕЖДУНАРОДНОМУ ПРАВУ НАГОРНЫЙ КАРАБАХ (АРЦАХ) НЕ ПРИНАДЛЕЖИТ АЗЕРБАЙДЖАНСКОЙ РЕСПУБЛИКЕ?

Александр Манасян

Резюме

В XX веке в Закавказье появились претендовавшие на Нагорный Карабах (НК) три псевдореспублики с названием *Азербайджан*. Азрбайджанская Демократическая Республика (АДР) 1918-1920 гг. была учреждена турками. Не признанная Лигой наций, она «покинула» историю без установленных или признанных границ. В те же годы Арцах был де-факто независимым образованием, с легитимными властями в лице Съезда Полномочных Представителей Нагорного Карабаха (СППНК). 28-го апреля 1920 г. СППНК провозгласил НК составной частью Республики Армения. Вторая псевдореспублика – Азербайджанская Советская Социалистическая Республика (Аз.ССР) – была основана 28 апреля 1920 г. XI Красной армией Советской России как не национальная, не имевшая титульной нации республика. НК был включен в территорию АзССР на основании непринятого «решения» Кавказского бюро Российской Коммунистической партии (большевиков). Это был акт аннексии. Третье незаконное образование – Азербайджанская Республика (Аз.Р.) – появилось в 1991 г. в ходе распада СССР. Она квалифицировала Аз.ССР как незаконное образование и повозгласила себя преемницей такой же незаконной, не имевшей суверенитета в Арцахе АДР. Ре-

ферендум от 10 декабря НКР состоялся на территориях, не принадлежащих Аз.Р. В ходе распада СССР ОБСЕ признала Азербайджанскую республику без акта самоопределения и референдума о независимости. Таким образом Европа предоставила Азербайджану пропуск в ООН. Ныне Арцах является территорией, захваченной Азербайджаном.

Ключевые слова – Нагорный Карабах, Съезд Полномочных представителей Нагорного Карабаха, Республика Арцах (Нагорно-Карабахская Республика), Азербайджанская Демократическая Республика, Азербайджанская Советская Социалистическая Республика, геноцид армян Азербайджана, Азербайджанская Республика.

WHY, ACCORDING TO INTERNATIONAL LAW, NAGORNO-KARABAKH (ARTSAKH) DOES NOT BELONG TO THE REPUBLIC OF AZERBAIJAN?

Alexander Manasyan

Abstract

In the 20th century, three false republics with the name Azerbaijan appeared in Transcaucasia, laying claim to Nagorno-Karabakh (NK). Azerbaijan Democratic Republic (ADR) 1918-1920 was founded by the Turks. Not recognized by the League of Nations, it left history without established or recognized borders. In those same years, Artsakh was a de facto independent entity, with legitimate authorities represented by the Congress of Plenipotentiary Representatives of Nagorno-Karabakh (SPPNK). On April 28, 1920, the SPPNK proclaimed NK an integral part of the Republic of Armenia. The second false republic – the Azerbaijan Soviet Socialist Republic (Az. SSR) – was founded on April 28, 1920 by the XI Red Army of Sovereign Russia as a non-national republic that did not have a titular nation. NK was included within the AzSSR by an ungrounded "decision" of the Caucasian Bureau of the Russian Communist Party (Bolsheviks). This was an act of annexation. The third illegal entity – the Republic of Azerbaijan (AZ.R) – appeared in 1991 during the collapse of the USSR. It qualified the Azerbaijani SSR as an illegal entity and proclaimed itself the successor to the equally illegal ADR, which had no sovereignty in Artsakh. The referendum of December 10 of the NKR took place in territories not belonging to Az.R. During the collapse of the USSR, the OSCE recognized Az.R., where before there had not been a single act of self-determination or a referendum on independence. A state that, under the cover of the unrelated principle of territorial integrity, continued the policy of the Armenian genocide received a pass to join the UN. Artsakh is now a territory captured by Az.R.

Key words – Nagorno-Karabakh, Congress of Plenipotentiary Representatives of Nagorno-Karabakh, Republic of Artsakh (Nagorno-Karabakh Republic), Azerbaijan Democratic Republic, Azerbaijan Soviet Socialist Republic, Genocide of the Armenians of Azerbaijan, Republic of Azerbaijan.

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԵՎ ՊԱՏՄԻՉՆԵՐԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ ԿԻՄԵՐՆԵՐԻ ՈՒ ՍԿՅՈՒԹՆԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գարեգին Թումանյան

Պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ gstumanyan@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 14.11.2021, գրախոսվել է 15.11.2021, ընդունվել է տպագրության 11.12.2023
ORCID: 0000–0002–6696–0093
DOI: 10.53548/0320-8117-2023.3-42

Ներածություն

Հայոց բնաշխարհում կիմերների և սկյութների զորաջոկատների առկայությունը փաստագրվել է Աստվածաշնչում, հունա-հռոմեական ու հայ պատմիչների աշխատություններում, նաև ասորեստանյան և ուրարտական սեպագիր արձանագրություններում: Իհարկե, սեպագիր աղբյուրների տեղեկություններն առավել նախընտրելի են, քանի որ դրանց հեղինակները պատմական իրադարձությունների ժամանակակիցներն են: Սակայն, հնագիտական պեղումների արդյունքների և սեպագիր սկզբնաղբյուրների տվյալների հիման վրա Հայկական լեռնաշխարհում և հարևան տարածաշրջաններում կիմերների ու սկյութների ներկայության վերաբերյալ մեր պատկերացումները կարող են զգալիորեն ընդարձակվել և ամբողջանալ, եթե հարցի առնչությամբ քննության առնվեն նաև Աստվածաշնչի ու պատմիչների հաղորդումները:

Աստվածաշնչի տեղեկությունները

Կիմերների և սկյութների մասին վկայություններ կան Աստվածաշնչում: Ըստ ժողովուրդների աղյուսակի կամ էպոնիմների ցանկի, Ասքանազն ու Թոգարմա-Թորգոմը Նոյի թոռան և Հաբեթի որդու՝ Գոմերի որդիներն են[1]: Եզեկիելի մարգարեության համաձայն, Աստված խոստանում է Իսրայելի ժողովրդի դեմ ուղարկել «Գոմերը և նորա բոլոր գունդերը»[2], այսինքն՝ կիմերներին[3]: Հին կտակարանում հանդիպում է սկյութների վերաբերյալ մեկ այլ

[1] Աստվածաշունչ 1922, 9-10 (Ծննդոց, Ժ):

[2] Աստվածաշունչ 1922, 940 (Եզեկիել, ԼԸ): Հայերեն թարգմանության «գունդ» եզրը լավագույն ձևով է բնորոշում հեծյալ ջոկատներից կազմված կիմերական (և սկյութական) շարժուն զորամիավորումների կառուցվածքը: Նույն տեղում խոսվում է նաև սկյութական *գոգ* ցեղախմբի և նրա էպոնիմ *Գոգի* մասին:

[3] Ղափանցյան 1940, 218, Дьяконов 1956, 246, Пиотровский 1959, 237, Ադոնց 1972, 311:

հնագույն հիշատակություն: Երեմիա մարգարեին է վերագրվում Բաբելոնի դեմ ուղղված հետևյալ կոչը. «...հրաւիրեցէք նորա դեմ Արարատի, Միննիի և Ասքանասի թագավորությունները...»[4], որտեղ «Ասքանազի թագավորություն» անվան տակ հասկացվում են սկյութները[5]: Աստվածաշնչյան ավանդության համաձայն, այս խոսքերը գրառվել են մ.թ.ա. VI դարի սկզբին: Հետաքրքիր է, որ Երեմիայի մարգարեությունում հիշատակված «Ասքանազի թագավորություն»-ը Խորենացու Հայոց պատմությունում փոխարինված է «Ասքանազեան գունդ» արտահայտությամբ[6], որն առավել բնորոշ է սկյութական տերունական կառուցվածքին[7]:

Աստվածաշնչում անդրադարձ է արվում նաև Ասորեստանի արքա Սինաքերիբի վախճանի հետ կապված հանգամանքներին, որին սպանելուց հետո Ադրամելեքը և Սարասարը փախչում են Արարատի երկիրը[8]: Ըստ «Հայոց պատմության», Սանասարին մեր երկրի սահմաններում է բնակեցնում մեր քաջ նախնի Սկայորդին[9]: Ն. Ադոնցն ուշադրություն է դարձրել Աստվածաշնչի մի «ցուցումի» վրա՝ հունարեն տեքստի Σχύθοι-ը հայերենում թարգմանված է Χάλδοι[10]: Սույն փաստը համադրելով Քսենոփոնի և Ստրաբոնի վկայությունների հետ՝ Ս. Երեմյանը հավանական է համարում, որ *սկյութենները* ձուլված լինեն Խաղտիքի բնակիչներին[11]:

Հունարեն հնագույն աղբյուրների տեղեկությունները

Հունարեն հնագույն աղբյուրներն առասպելախառը տեղեկություններ են հաղորդում կիմերների մասին: Հոմերոսն առաջինն է, որ հիշատակում է նրանց: Ոդիսևսը «մեռյալների թագավորություն» ուղևորվելիս հասնում է օվկիանոսի սահմաններին, որտեղ՝ հավերժական խավարի մեջ, «գտնվում են կիմմերացի մարդկանց քաղաքն ու երկիրը»[12]: «Ոդիսականի» հեղինակը, հավանաբար, գիտեր կիմերների ամայացնող արշավանքների մասին՝ Բոսպորից մինչև Հոնիա[13]: Հոմերոսյան պոեմում պատմամշակութային ծանոթ

[4] Աստվածաշունչ 1922, 883 (Երեմիա, ԾԱ):

[5] Ղափանցյան 1940, 218, Дьяконов 1951, 248, N 83, Ադոնց 1972, 311, Дьяконов 1981, 33-34:

[6] «Եւ զի արդարև զայնու ժամանակաւ էր ազգիս մերոյ թագաւորութիւն, վկայէ և Երեմիա մարգարէ ի բանս իւր, հրաւիրելով ընդդէմ Բաբելոնի ի պատերազմ. Հրաման տուր, ասէ, Այրարատեան թագաւորութեանն և Ասքանազեան գնդին». տե՛ս Խորենացի 1913, I, ԻԲ:

[7] Հետազոտողները երբեմն, հիմնվելով «Ասքանազի թագավորություն» եզրին, վերջինս գործածում են «Սկյութական թագավորություն» ձևով: Փորձ է արվել անգամ այն անվանել «Ադրբեջանա-սկյութական թագավորություն». հմմտ. Алиев 1960, 230: Հատկանշական է, որ այդ «առաջարկը», արվելու պահից սկսած, մոռացվել և անտեսվել է հենց իր՝ հեղինակի կողմից:

[8] Աստվածաշունչ 1922, Թագավորաց, IV, ԺԹ, Եսայի, ԼԷ:

[9] Խորենացի 1913, I, ԻԳ:

[10] Ադոնց 1972, 305:

[11] Երեմյան 1968ա, 96:

[12] Հոմերոս 1988, XI, 13-19:

[13] Страбон 1964, I, 1, 10; I, 2, 9.

իրողությունները վերագրվել են ոչ այնքան քաջածանոթ ժողովրդին[14]: Հոմերոսյան ժամանակաշրջանի հույների պատկերացումների համաձայն, կիմերների հայրենիքը գտնվում էր ինչ-որ տեղ՝ հյուսիսում, բնակելի երկրի սահմանների մոտ[15]:

Եփեսոսցի բանաստեղծ Կալլինոսի (մ.թ.ա. VII դ.) էլեգիաներից մեկում Լիդիայի պերճ մայրաքաղաք Սարդեսի վրա գրոհող կիմերները բնորոշվում են «կատաղի/վայրենաբարո» մակդիրով[16]:

Թե ինչպես են Սև ծովի մոտ ապրող կիմերները, ճնշվելով սկյութներից, լքել իրենց երկիրը, պատմել է Արիստեաս Պրոկոննեսոսցին (մ.թ.ա. VII կամ VI դ.) իր «Արիմասպեականք» պոեմում[17]:

Հունա-հռոմեական պատմիչների հաղորդումները

Ըստ պատմահայր Հերոդոտոսի, որը կրկնում է Արիստեասին, կիմերներն Ասիա են հասել՝ սկյութների կողմից արտամղվելով իրենց բնակավայրերից, իսկ սկյութներն այդ տարածաշրջան են ներխուժել՝ հետապնդելով փախչող կիմերներին: Կիմերները, մշտապես շարժվելով ծովափով (Մեոտիս-Կողքիսյան ճանապարհով - Գ.Թ.), հայտնվել են Փոքր Ասիայում, իսկ կիմերներին հետապնդող սկյութներն ընթացել են «Կովկասն աջ կողմում ունենալով», ներխուժել մարերի բնակության տարածքներ, այնուհետև շարժվել են դեպի Միջերկրայք: Ասիայում սկյութներից խուսափելով՝ կիմերները հաստատվել են մի թերակղզում՝ ապագա Սինոպ քաղաքի տեղում[18]: Ուսումնասիրողներից ոմանք կարծում են, որ Հերոդոտոսը սխալվում է՝ խոսելով սկյութների կողմից կիմերների անմիջական հետապնդման մասին[19]: Այս ավանդազրույցի հիմքում, հավանաբար, ընկած է այն պատմական իրողությունը, որ Առաջավոր Ասիայում կիմերական նվաճումները նախորդել են սկյութական արշավանքներին: Հերոդոտոսը բազմիցս անդրադառնում է նաև մասագետներին, որոնք բնակվում են արևելքում, «Արաքս գետից այն կողմ»[20] և, ուրիշների պատմելով, «սկյութական ազգ են»[21]: Սկյութիան նկարագրելիս Հերոդոտոսն օգտվել է ինչպես գրավոր աղբյուրներից, այնպես էլ տեղացիների պատմածներից ու անձնական դիտարկումներից[22]:

---

[14] Дьяконов 1956, 229.

[15] Ельницкий 1949, 26.

[16] Xydopoulos 2015, 120.

[17] Հերոդոտոս 1988, IV, 12-14: Հմմտ. նաև Иванчик 1989, 42-44, Пьянков 2005, 16:

[18] Հերոդոտոս 1988, I, 15, 103, 104; IV, 1, 11, 12; VII, 20:

[19] Дьяконов 1956, 242, Иванчик 1999, 86.

[20] Անկախ այն հանգամանքից, թե ինչպես կտեղայնացվի Արաքս գետը, այս և մյուս հատվածներից ակնառու է դառնում մասագետների սկյութական ցեղի առնչվածությունն Արաքսին:

[21] Հերոդոտոս 1988, I, 201:

[22] Жебелев 1953, 30.

Հաջորդ պատմիչը, որ հիշատակում է հին Հայաստանում բնակվող «սկյութիններին», Քսենոփոնն է (մ.թ.ա. V-IV դարեր): Քննարկվող հարցի կապակցությամբ Քսենոփոնի վկայությունները ծանրակշիռ են և ուշադրության արժանի, քանի որ որպես նահանջող բանակի զորահրամանատար, ի շարս բազմաթիվ հայկական գավառների, նա անցել է նաև իրար թշնամի երկու ցեղերի բնակեցրած տարածքներով[23], որոնք, հավանաբար, Վանի թագավորության ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհ ներխուժած կիմերական ու սկյութական ցեղախմբերի հետնորդներն էին: Պատմիչն այդ տարածաշրջանում նշում է Հարպասոս գետը և Գյումնիաս քաղաքը: Փորձ է արվել Քսենոփոնի հիշատակած այս քաղաքը նույնացնել «հին Կումայրիին, այժմյան... Գյումրիին»[24]: Եթե այդ համապատասխանեցումը ճիշտ է, ապա հնարավոր է, որ պատմիչի նշած Հարպասոս գետը համընկնի Արփայի հետ, որը չի կարելի բացառել ինչպես հնչյունաբանորեն, այնպես էլ տարածական առումով:

Պոլիբիոսը (մ.թ.ա. III դ. վերջ – II դ.) գրում է սկյութների դեմ Դարեհի արշավանքի, Սկյութոպոլիս քաղաքի, *դայերի* սկյութական ցեղի մասին: Բեռվտացիների համաժողովրդական տոնը խախտողներին նա համեմատում է սկյութների ու գալատների հետ[25]: Պոլիբիոսը, «բարբարոս ժողովուրդներ» ասելով, ակնարկում է նաև սկյութներին:

Պոսիդոնիոսը (մ.թ.ա. II դ. վերջ – I դ. կես) հիշատակում է Գերմանիայից կիմբրների ներխուժումն Իտալիա՝ նրանց բնորոշելով որպես «հազարավոր վայրենիներ»[26]:

Դիոդորոս Սիկիլիացին (մ.թ.ա. I դ.), պատմելով Ասիան ասպատակած կիմերների մասին, նրանց բնորոշում է որպես քաջ և կատաղի/վայրենի մարդիկ, որոնք արդեն իր ժամանակ աշխարհին հայտնի էին *կիմբրներ* ցեղանունով[27]: Նա հիշատակում է նաև Հայկական լեռնաշխարհում բնակվող «սկյութիններին»: Նրա հեղինակած «Պատմական գրադարան»-ում Հարպասոս գետը վկայված է Հարպագոս անվամբ, իսկ Գյումնիաս քաղաքը՝ Գյումնասիա ձևով[28]: Սկյութական ցեղերի շարքում թվարկվում են սակերը, մասագետները, սավրոմատները: Սկյութները սկզբում փոքր թվով բնակվելիս են եղել Արաքս գետի ափին: Որոշ ժամանակ անց հզորանալով՝ նրանք կարողանում են իրենց տիրապետությունը տարածել մինչև Նեղոս գետը[29]: Ըստ մեկ այլ տեղեկության, Ասորեստանի արքա Նինոսը մեծաթիվ զորքով ներխուժել է Արմենիա, ավերել է մի շարք քաղաքներ, իսկ այդ երկրի թագավոր Բար-

[23] Քսենոփոն 1970, IV, VIII, 18-20:

[24] Մանանդյան 1944, 16-17, 20:

[25] Polybius 2010-2011, IV, 43; V, 70, 79; IX, 34.

[26] Posidonius 1972, Book 30.

[27] Diodorus 1967, Book V (181-182).

[28] Դիոդորոս 1985, գիրք 14, 29:

[29] Դիոդորոս 1985, գիրք 2, 43: Ենթադրվում է, որ սկյութներն անցել են Հայկական լեռնաշխարհով մ.թ.ա. 630-625 թթ.:

զանեսն առատ նվերներով ընդառաջ է գնացել Նինոսին և հպատակություն հայտնել[30]: *Բարզանեսը* համարվում է սկյութական անձնանուն[31]:

Հայկական լեռնաշխարհի և հարակից տարածքներ ներխուժած կիմերական ու սկյութական ցեղերի վերաբերյալ տեղեկություններ է հաղորդում նաև հույն աշխարհագիր Ստրաբոնը (մ.թ.ա. I – մ.թ. I դ.): Նա պատմում է դեպի Փոքր Ասիա կիմերների արշավանքների մասին, որոնց ընթացքում նրանք հարձակվել են Պափլագոնիայի և Փռյուգիայի վրա՝ ինչ-որ ժամանակ հասնելով մինչև Լիդիա և Հոնիա[32], և, ինչպես հաղորդում են նախորդ հեղինակները, Սարդեսն առաջին անգամ գրավել են կիմերները[33]: Ստրաբոնը խոսում է Իտալիայի Ավերնո լճի մոտ բնակվող կիմերների մասին[34]: Նա հիշատակում է նաև կիմվրներին (որոնց հույները կիմեր էին անվանում) ու նրանց կողմից սրբազան համարվող զոհաբերությունների կաթսան[35]: Ըստ Ստրաբոնի, հին հույն պատմագիրները հյուսիսային ժողովուրդներին կոչում էին ընդհանրական՝ *սկյութ* անունով, իսկ Կասպից ծովից անդին ապրող ցեղերի մի մասին անվանում էին *սակեր,* մյուսներին՝ մասագետներ[36]: Նա հղում է Թեոփանեսին, որն այցելելով Աղվանք՝ պատմում է, որ *գեղեր*[37] ու *լեգեր* կոչվող սկյութական ցեղերն ապրում են ամազոնուհիների և աղվանների միջև: Մեկ այլ տեղում, Կասպից ծովից արևմուտք ընկած տարածքում բնակվող հայերի և աղվանների հետ, Ստրաբոնը կրկին հիշատակում է գեղերին[38]: Նա գրում է սկյութների, կիմերների և թրերների մասին, *սկյութ* ցեղանվան փոխարեն գործածելով *սակ* իրանական ձևը[39]: Աշխարհագիրը հաղորդում է, որ «սակերը… Հայաստանում տիրացան լավագույն հողերին, որին թողեցին իրենց անունը՝ Սակասենե…»[40]:

Հովսեպոս Փլավիոսի (մ.թ. I դ. – մ.թ. II դ. սկիզբ) տեղեկությունները նույնպես հետաքրքիր են: Նա հիշատակում է Յափեթ/Հաբեթի որդիներ Գոմարին ու Մագոգեսին, որի հետնորդներին հելլենները *սկյութացիներ* են անվանում, ինչպես նաև Գոմարի որդիներ Ասքանաքսեսին և Թյուգրամեսին:

---

[30] Դիոդորոս 1985, գիրք 2, 1:

[31] Դալալյան 2007, 252-253:

[32] Страбон 1964, I, 3, 21; III, 2, 12; XI, 2, 5.

[33] Страбон 1964, XIII, 4, 8; XIV, 1, 40.

[34] Страбон 1964, V, 4, 5.

[35] Страбон 1964, VII, 2, 1; VII, 2, 2.

[36] Страбон 1964, XI, 6, 2; XI, 8, 2.

[37] Ստրաբոնի հիշատակած ցեղերից էին կազմված, հավանաբար, «գեղաց գնդերը», որոնք պարսից զորքի կազմում Ավարայրում կռվում էին հայոց բանակի դեմ: Ենթադրվում է, որ մ.թ. V դարում գեղերը բնակվում էին Գիլանում. հմմտ. Եղիշե 1946, 189, 301:

[38] Страбон 1964, XI, 5, 1; XI, 7, 1, Ստրաբոն 1940, 35:

[39] Ադոնց 1972, 304:

[40] Страбон 1964, XI, 8, 4.

Վերջինին հելլենները փոյուգների նախնին են համարում[41]: Հովսեպոսը խոսում է նաև դայերից ու սակերից կազմված բանակի մասին[42]:

Պլուտարքոսի (մ.թ. I – II դդ.) պատկերացումը կիմերների վերաբերյալ, ըստ երևույթին, քաղված է «Ոդիսական»-ից[43]: Հոմերոսի այն տեսակետը, թե կիմերները ապրում են հավերժական խավարի մեջ, հետագայում համընդունելի է դարձել: Նա անդրադառնում է նաև *կիմբրների* դեմ տարած հաղթանակներին[44]: Պատմիչը խոսում է *գելերի* ու *լեգերի* ցեղերի մասին և հիշատակում սկյութների երկիրը[45]: Մեկ այլ տեղում՝ մակեդոնական ջոկատի ջախջախման կապակցությամբ, նկատի ունենալով սկյութներին, նա գործածում է *բարբարոսներ* արտահայտությունը[46]:

Տակիտոսը (մ.թ. I – II դդ.) հաղորդում է, որ Վոնոնը փորձել է Կիլիկիայից փախչել Հայաստան, որպեսզի, աղվանների ու հենիոխների երկրների միջով անցնելով, հասներ իր ազգական սկյութական թագավորի մոտ[47]:

Դիոն Կասսիոսը (մ.թ. II – III դդ.) պատմում է, որ Միհրդատը ծրագրել էր սկյութների երկրի միջով հասնել Իստրոս և այնտեղից ներխուժել Իտալիա[48]: Սկյութները հիշատակվում են նաև «Հռոմեական պատմության» այլ հատվածներում՝ Հայաստանի ու հարակից տարածաշրջանների իրադարձությունների առնչությամբ[49]:

Պատմական ասպարեզից սկյութների հեռանալուց հետո էլ նրանց մասին հիշողությունները միանգամից չեն մարում: Բյուզանդական պատմիչ Պրոկոպիոս Կեսարացին, մ.թ. VI դարում, խոսելով Իլլիրիայի ու Թրակիայի ամայանալու մասին, դրանք համեմատում է «սկյութական անապատի» հետ: Նա հիշատակում է նաև Սկյութոպոլիս (Բեթ ս/շան) քաղաքը[50]:

Հայ պատմիչների հաղորդումները

Հայ պատմական ավանդությունը հարցին յուրօրինակ մոտեցում է ցուցաբերում: Մեր պատմագիրները կիմերներին ու սկյութներին հաճախ դիտում են որպես ազգակիցներ՝ նրանց նույնացնելով հայերի հետ: Կորյունը, խոսելով Հայաստան աշխարհի և *Ասքանազյան* ազգի աստվածապարգև գրի մասին, ակնհայտորեն նկատի ունի հայոց ազգը[51]:

---

[41] Հովսեպոս 1976, Հրեական հնախոսություն, I, 122-127:

[42] Հովսեպոս 1976, Հրեական հնախոսություն, XVIII, 100, XX, 91:

[43] «...Բայց կիմերներին դեռ ոչ ոք պիղծ չի անվանել, թեև արևը, նրանց կարծիքով, բնավ գոյություն չունի». տե՛ս Պլուտարքոս 1987, Սնահավատության մասին (10):

[44] Պլուտարքոս 1987, Կեսար, VI:

[45] Պլուտարքոս 1987, Պոմպեոս, XXXV, XLI:

[46] Պլուտարքոս 1987, Ալեքսանդր, L, Ստոլյարով 1987, 726:

[47] Tacitus 1962, II, 68.

[48] Դիոն 1976, XXXVII, 11, 1:

[49] Դիոն 1976, LXXV, 3, 1:

[50] Պրոկոպիոս 1987, 95, 125:

[51] Կորիւն 1941, 22:

Խորենացին Նոյի որդուն և վերջինիս ժառանգներին թվարկում է հետևյալ հաջորդականությամբ՝ Հաբեթ, Գամեր/Գոմեր, Թիրաս, Թորգոմ[52], Հայկ[53]: Գ.Ա. Ղափանցյանի կարծիքով, հայոց Պատմահայրը, գրելով Պայապիս Քաղայի մասին (I, ԺԴ), նկատի ունի կիմերական ներխուժումը[54]: Պատմիչի հայոց արքայացանկում հիշատակվում են նաև Արբակ ու Բազուկ անձնանունները (I, ԺԹ): Ուշագրավ է, որ Ֆ. Քյոնիգն Արբակին համարում է կիմերների առաջնորդ[55], իսկ Բազուկ էր կոչվում օվսերի արքան, որի զորքը, ըստ Լեոնտի Մռովելու, ի թիվս այլ ասպատակողների, ներխուժել էր Հայաստան[56]: Խորենացու աշխատության մեջ առկա է հավանաբար հյուսիսում գտնվող երկրներից մեկի՝ *Քիմյուռն* անվանումը[57], որը պարզապես կարող է նշանակել «Կիմերների երկիր»[58]: Պատմահայրը մեկ այլ տեղում (I, ԻԲ) գրում է. «Բայց արդ ես առ օտարաց թագաւորութեամբն կացեալ՝ ընդ նոցայն զմերս ազգի ածից զկարգ թագաւորացն, զի մերոյ աշխարհիս բնիկք պսակաւորք արք այնոքիկ, զորոց զանուանսն ի ներքոյ դրոշմեսցուք»: Թվարկելով հայոց այն թագավորներին, որոնք իրեն առավել սիրելի են իբրև բնիկներ և արյունակիցներ, նա առաջինը հիշատակում է Սկայորդու որդի Պարույրին[59], այլ խոսքով՝ սկյութների առաջնորդ Պարտատուային[60]: Հիշյալ արքայացանկում Սկայորդուն նախորդող Կայապակը[61], ըստ հայտնված մի կարծիքի, կարող է համապատասխանել ասորեստանյան աղբյուրներում հիշատակված Իշպակային կամ ուրարտական սեպագիր արձանագրության Շագայորդուն (Սկայորդուն)[62]: Ըստ երևույթին, Խորենացին հիշատակում է նաև Պարտատուայի որդուն՝ Մադեսին, տարբեր համատեքստերում: Մի դեպքում՝ որպես Հայկյան Արամի հակառակորդ՝ Նյուքար Մադես անունով[63]: Վերջինիս երկրորդ բաղադրիչը նույնանում է Պարտատուայի որդու անվանը, իսկ առաջին բաղադրիչի սկզբնամասը նշանակում է *գեղեցիկ*[64]: Մեկ այլ տեղում (I, ԻԲ) Պատմահայրը հիշատակում է Պարույրի որդուն՝ Հրաչյային, որն այդպես էր կոչվում պայծառ երես և բոցավառ աչքեր ունենալու համար: Այսինքն՝ պատմիչը, հավանաբար, հաղորդում է Պարույրի որդու ոչ թե անունը, այլ՝

[52] Հայոց ազգածագման «թորգոմյան» վարկածի վերաբերյալ տե՛ս Քոսյան 1998, 5-10 և հտն:
[53] Խորենացի 1913, I, Ե, Թ, ԺԲ:
[54] Капанцян 1947, 236-237.
[55] König 1934, 41.
[56] Мровели 1979, 33-34.
[57] Խորենացի 1913, I, Լ:
[58] Иванчик 1996, 157.
[59] Խորենացի 1913, I, ԻԲ:
[60] Ղափանցյան 1944, 84-85:
[61] Խորենացի 1913, I, ԻԹ:
[62] Կարապետյան 1984, 80:
[63] Խորենացի 1913, I, ԺԳ:
[64] Եղիշե 1946, 209, ծան. 140:

մականունը, որի իմաստը, մեկ բառով, նույնպես կլինի *գեղեցիկ*[65]: Դա էլ, իր հերթին, համընկնում է *Նյուքարի* ստուգաբանությանը: Վերջինիս համար ժամանակին մեկ այլ ստուգաբանություն է առաջարկել Ղևոնդ Ալիշանը: Նրա կարծիքով , «Նիւքեր պարսկերէն նշանակէ պաշտօնեայ, բայց և այս անուամբ թագաւոր մի յիշեն Պարսիկք»[66]: *Նյուքար* անվան *կառավարիչ* իմաստը համահունչ է այն ենթադրությանը, որ Մադիոսը դարձել է Նիխորական գավառի կառավարիչ, որի հիմքում ընկած է Նիխոր/Նիւքար անունը[67]:Պատմական Մադես-Մադիոսը ջախջախել է կիմերներին և մոտավորապես մ.թ.ա. 625 թ. սպանվել մարերի ձեռքով[68]: Այսպիսով, հիշյալ արքայացանկում Անուշավանից հետո թվարկված անձինք առնչվում են Հայքի մ.թ.ա. VII-VI դդ. առաջին կեսի պատմական իրադարձություններին և, հավանաբար, մեծ մասամբ ներկայացնում են կիմերական ու սկյութական առաջնորդներին[69]: Վերջապես, անդրադառնալով Արտաշես արքայի թաղման՝ Խորենացու նկարագրությանը[70], Հ. Մարտիրոսյանը կարծիք է հայտնում, որ դա հիշեցնում է այսրկովկասյան թաղման ծեսը և մերձկուբանյան հարուստ դամբանաբլուրները[71]:

Հարկ ենք համարում կրկին անդրադառնալ Սինաքերիբի սպանությանն առնչվող հետագա դեպքերին[72], կապված Խորենացու մեկնաբանության հետ: Ըստ «Հայոց պատմության», Սանասարին մեր երկրի հարավարևմտյան կողմում, Ասորեստանի սահմանների մոտ է բնակեցնում «մեր քաջ նախնի» Սկայորդին[73]: Այս պատմական իրադարձությունները տեղի են ունենում մ.թ.ա. 681 թ. վերջին – 680 թ. սկզբին[74]: Ռուսա II-ին վերագրվող ուրարտական արձանագրություններից մեկը վկայում է Շագայորդու/Սկայորդու առաջնորդությամբ սկյութների զորաշարժը դեպի Մանա[75], իսկ Ասարհադոնի արձանագրությունում խոսվում է Մանայում սկյութական զորքի առկայության մասին[76]:Սկյութների հարձակման թիրախների թվում հիշատակվում է նաև Խուբուշկիան[77]: Ըստ Խորենացու՝ Սկայորդին ոչ միայն հիշյալ դեպքերի

---

[65] Հարցի առնչությամբ տեղին է բերել Գ. Ղափանցյանի կարծիքն ամբողջությամբ. «Հրայան ըստ Խորենացու, «պայծառերես և բոցակնագոյն» և այդ պատճառով էլ կոչվեց «Հրայա»: Արդյոք այս ևս ապացույց չէ՞ սկյութական-սակական ծագման, քանի որ այդ ժողովուրդները ավելի հյուսիսային էին և շեկ պետք է լինեին». հմմտ. Ղափանցյան 1940, 217: Ուշագրավ է, որ շեշտվում է Պարոյրի որդու սկյութական ծագումը:

[66] Ալիշան 1901, 16, ծան. 5:

[67] Marquart 1901, 24, Մարկվարտ 1961, 231, Դալալյան 2013, 284:

[68] Երեմյան 1968բ, 101:

[69] Անշուշտ, չի բացառվում սույն ցուցակում միևնույն պատմական անձի՝ տարբեր անուններով և տարբեր տեղերում հանդես գալու հնարավորությունը:

[70] Խորենացի 1913, II, Կ, ԿԱ:

[71] Мартиросян 1954, 110-111.

[72] Luckenbill 1927, 200-201 (§ 502), Дьяконов 1951, 215 (N 63).

[73] Խորենացի 1913, I, ԻԳ:

[74] Дьяконов 1951, 215.

[75] Дьяконов 1963, 38-39, Арутюнян 2001, 330-331 (N 412).

[76] Иванчик 1996, 92, 216-218 (N 22).

[77] Иванчик 1996, 92, 218-221 (N 22).

ժամանակակիցն է եղել, այլև արդեն որոշ իշխանություն է ունեցել Ուրարտուի սահմանամերձ տարածքների վրա: Հետազոտողները համարել են, որ սկյութներն Առաջավոր Ասիայում ամենավաղը հիշատակված են Ասարհադոնի արձանագրություններում, որոնք թվագրվում են մ.թ.ա. VII դ. 70-ական թթ.[78] կամ 70-ական թթ. կեսով, այսինքն, հիշյալ տարածաշրջանում կիմերների և սկյութների հայտնվելու ժամանակագրական տարբերությունը մոտավորապես 40 տարի է[79]: Պատմահոր կատարած համաժամանակացումն ու տեղայնացումը կարծես թե ավելի են համապատասխանում ուրարտական և ասուրական արձանագրությունների տվյալներին: Պարզվում է, որ այդ քոչվոր ցեղախմբերից մեկը մյուսից մոտ 30 տարի հետո է արշավել Հայկական լեռնաշխարհ և այստեղ է հայտնվել մ.թ.ա. VII դ. 80-ական թթ. երկրորդ կեսին:

Բացի այդ, Խորենացու «Պատմություն»-ում լրացուցիչ տեղեկություն է հաղորդվում արքայասպանների փախստավայրի մասին: Ադրամելեքի ու Սարասարի գտնվելու տարածաշրջանի վերաբերյալ այս վերջին տեղեկությունն առավել ընդհանուր ձևով առկա է Աստվածաշնչում[80]: Ուշագրավ է նաև, որ Խորենացու աշխատության առաջին գլխում Սարասար անվան փոխարեն առկա է *Սանասար* ձևը, սակայն մեկ այլ տեղում հիշատակվում է հարավարևմտյան տարածաշրջանի մեծ բդեշխ և կուսակալ Շարաշանը, որը Սանասարի սերնդից էր[81]: Սա հուշում է, որ Սանասարը սկզբնապես կարող էր ունեցած լինել *Սարասար* (ինչպես Աստվածաշնչում) կամ *Շարասար* «հայեցի» ձևը, որը շատ մոտ է ասուրական *Շարուծուր* անձնանվանը: Հետազոտողները հակված են Սարասարին նույնացնելու ասուրական պատմական դեմքերից մեկին՝ Նաբուշարուծուրին[82]: Այսինքն, «Հայոց պատմության» մեջ տեղ գտած Սանասար ու Շարաշան անձնանունները, հնարավոր է, արձագանքներն են պատմական կարևոր դեմքերից մեկի անվան:

Ագաթանգեղոսն իր «Պատմության» մեջ անդրադառնում է կիմերական և սկյութական ցեղախմբերի կամ նրանց ժառանգորդների հետ կապված մի շարք տեղանունների՝ «դրունս Ալանաց, կողմանս Գամրաց, Մասքթաց կողմս, սահմանս Մասքթաց»[83]:

Եղիշեի վկայությամբ, «գեղաց գնդերը» Ավարայրում կռվում էին հայերի դեմ: Պատմիչը հիշատակում է նաև «Ալանաց դռները» և «մասքութների զորքը»՝ Վարդանանց պատերազմին հաջորդած դեպքերի կապակցությամբ[84]:

---

[78] Мурзин 1990, 27.
[79] Алексеев 1992, 14-15.
[80] Աստուածաշունչ 1922, 458, Թագավորաց, IV, ԺԹ, 36-37, Եսայի, ԼԷ, 37-38:
[81] Խորենացի 1913, II, Ը:
[82] Дьяконов 1951, 214-215 (N 62), Երեմյան 1971ա, 426:
[83] Ագաթանգեղոս 1909, Բ, ՂԴ, ՃԻ, ՃԻԶ:
[84] Եղիշե 1946, 189, 254:

Փավստոս Բուզանդը մասքութներին սահմանակից է համարում Վրաց ու Աղվանից աշխարհներին: Նա հիշատակում է մասքութների Սանեսան թագավորի «բանակի ճամբարը» և Սանեսանին ներկայացնում է իբրև «Հոնաց բազմաթիվ զորքերի իշխան»: Մասքութների արքային ենթակա են համարվում մի շարք վասկատուն ցեղեր, որոնց թվում՝ նաև ալանները: Փավստոսը նկարագրում է, թե ինչպես հեծյալ գնդերի անթիվ բազմությունն անցնում է Կուր գետն ու սփռվում Հայոց աշխարհում: Արտավազդ Մամիկոնյանի որդին՝ Մեծ Հայքի զորավար Վաչեն, նախ ջարդում է մասքութներին Ցլու գլուխ կոչված լեռան վրա, ապա հարձակվում է Վաղարշապատ քաղաքի վրա, որտեղ գտնվում էր Սանեսան թագավորը՝ «բուն գնդի» հետ: Թշնամիները դուրս են մղվում Վաղարշապատից, փախչում են դեպի Օշական և բաց դաշտում սրի քաշվում: Ճակատամարտում սպանվում է մասքութների արքան, որն ազգակից էր Մեծ Հայքի Խոսրով թագավորին: Երբ Սանեսանի գլուխը բերում են Հայոց թագավորին, վերջինս լաց է լինում ու ասում. «Իմ եղբայրն էր, Արշակունի ցեղից»[85]:

Պարթևական ժամանակաշրջանի հսկաների (իմա՝ սկյութների - Գ.Թ.) վերաբերյալ կարևոր վկայություն կա Սեբեոսի «Պատմության» մեջ: Պատմիչը Բագարատ Փառազյանի մասին գրում է. «Զսա արար Արշակ արքայ ասպետ Հայաստան երկրին, որ էր իշխան և հրամանատար, ամենայն թագաւորութեանն հրամանաց գլուխ, և հայր արքայի և եղբայր. որում ետ իշխանութիւն տէրութեանն այնորիկ: Նա կոտորեաց զհսկայսն, որ զաւրաժողով եղեն ի վերայ նորա ի Միջագետս Ասորւոց»[86]:

Ըստ Մովսես Կաղանկատվացու, Ասքանազն ու Թորգոմը (իմա՝ սկյութների և հայերի նախահայրերը - Գ.Թ.) եղբայրներ են[87]: Գրիգոր քահանայապետի մասին պատմիչը գրում է, որ Աստված նրան «հանձնեց Թորգոմյան երկրին, Ասքանազի սերնդին»[88]:

Սկյութիայի, Սարմատիայի, Մասքութների ու Սակե երկրամասերի վերաբերյալ տեղեկություններ կան Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ում: Այդ աշխատության մեջ հիշատակվում են նաև մասքութ ժողովուրդը, մասագետացիները, ալանները և այլք[89]:

Ուշ հիշատակություններ

Հայ պատմագրության մեջ կան նաև ուշ հիշատակություններ սարմատ-

---

[85] Փավստոս 1832, III, Ե-Է:

[86] Սեբեոս 1979, 54:

[87] «Հաբեթի որդիներն են՝ Գամերը, որի անունից առաջացել են գամիրները..., Թիրասը, իսկ սրանից՝ թրակացիները... Իսկ Թիրասի որդիներն են՝ Ասքանազը, որից և առաջացել են սարմատները. Երիփատը, որից՝ սավրոմատները, Թորգոմը, իսկ սրանից էլ՝ հայերը». տե՛ս Կաղանկատվացի, I, Բ:

[88] Կաղանկատվացի 1969, I, ԺԴ:

[89] Շիրակացի 1979, 258-312:

ների, Գամիրքի[90], Սկյութիայի[91], «Գամրաց տան»,«Մազքութաց աշխարհի»[92], Սկյութա լեռան[93] մասին: Դրասխանակերտցին նույնպես կարծում է, որ Ասքանազը և Թորգոմը եղբայրներ են՝ Թիրասի որդիները[94]: Նա ևս հիշատակում է սարմատներին ու սավրոմատներին. «Իսկ որդիք Թիրասայ Ասքանազ, յորմէ Սարմատք և Րիփատ, յորմէ Սօրամատք»: Ըստ որում, պատմիչի կարծիքով, Ասքանազը Թիրասի ավագ որդին է. «զի նախ Ասքանազ իսկ էր յիւր անուն սահմանեալ զմերազնեայսս ըստ երիցութեանն սակի…»[95]:

Թովմա Արծրունին, Խորենացուն հետևելով, պատմում է Տիգրան Հայկազնի մասին, որը Մարաստանի Աժդահակ թագավորի դեմ պատերազմելու համար զորք է հավաքում կապադովկիացի զորավոր և քաջամարտիկ տղամարդկանցից[96]: Պատմիչը Սենեքերիմյանների շարքում հիշատակում է *Գոգյան* անունով իշխանին[97]:

Մեծ Հայքի բդեշխությունները թվարկելիս Ուխտանես եպիսկոպոսը հիշատակում է «և զչորրորդն ի Մասքթաց կողմանէն»[98]: Սամուել Անեցին, հետևելով Խորենացուն, Թորգոմին համարում է Թիրասի որդին ու Գամերի թոռը, իսկ Հայկին՝ Թորգոմի որդին[99]:Վարդան Արևելցին, խոսելով Հայաստանից արևելք ընկած երկրների մասին, հիշատակում է «Սկիւթիա, որ Թուրք անուանին»: Այս հատվածը երկու ձեռագրում հանդիպում է նաև «Սկիւթ որ տուք անուանեն» ձևով[100]: Չի բացառվում, որ իրականությանն ավելի է համապատասխանում վերջին արտահայտությունը, որի մեջ *տուք*ի փոխարեն պետք է կարդալ *տուխք*[101]:

Վրաց պատմիչ Լեոնտի Մռովելիին (XI դ.) վերագրվող «Քարթլիս ցխովրեբա» երկում հիշատակվում է «խազարների» արշավանքը: Ուշագրավն այն է, որ, վրաց ժամանակագրության հեղինակի ընկալմամբ, «խազարների» ներխուժման պատմությունը նախորդում է Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքին[102]: Ուսումնասիրողները գտնում են, որ հիշյալ հատվածում նկարագրվում են մինչհելլենիստական դարաշրջանի իրադարձությունները, և տրվում է Քարթլիի նախապատմությունը: Այսինքն, «խազարների» ներխուժ-

---

[90] Դրասխանակերտցի 1912, 11-12, Գանձակեցի 1982, Ա:

[91] Ուռհայեցի 1973, Մասն երկրորդ:

[92] Վարդան Արևելցի 1982, 17, 23, 37:

[93] Օրբելյան 1986, 154:

[94] Հիշատակելով հաբեթի որդիներին, Դրասխանակերտցին գրում է. «Իսկ վեցերորդ զԹիրաս, յորմէ մերն իսկ Ասքանազ և Թորգոմ…». տե՛ս Դրասխանակերտցի 1912, 11:

[95] Դրասխանակերտցի, 11-12:

[96] Թովմա Արծրունի 1985, Դպրություն առաջին, Ե:

[97] Թովմա Արծրունի 1985, Դպրություն առաջին, Զ:

[98] Ուխտանես 1871, I, ՀԳ:

[99] Սամուել Անեցի 1893, 10:

[100] Վարդան Արեւելցի 1985, 69-70:

[101] Թումանյան 2012, 199:

[102] ქართლის ცხოვრება 1955, 11-16, Мровели 1979, 25-29.

ման պատմության հիմքում, հավանաբար, ընկած են վրաց պատմական ավանդության մեջ պահպանված տեղեկությունները Կովկասի տարածաշրջանով դեպի Առաջավոր Ասիա սկյութական արշավանքների վերաբերյալ[103]: «Քարթլիս ցխովրեբա»-ում ուղղակի հիշատակված է նաև Սկյութիան[104]: Թվում է՝ «հյուսիսային» ցեղերի վերաբերյալ անուղղակի վկայություն կա նաև մեծն Երվանդին առնչվող հատվածում: Սոմխիթի/Հայքի այս թագավորը, գրավելով Ծունդան, այնտեղ բնակեցնում է «գազանաբարո մարդկանց» և քաղաքը կոչում նոր անունով՝ Քաջատուն[105]:

Հաղորդումներ զենքի, սովորույթների ու կենցաղի մասին

Աստվածաշունչը և պատմիչները հաղորդում են սկյութական զորաջոկատների մեծ քանակի, սովորույթների, հագուստի, զենքի, կենցաղային իրերի, թաղման ծեսի վերաբերյալ: Աստվածաշնչում ասվում է. «Եւ կգաս քո տեղերից՝ հիւսիսի ծայրերիցը՝ դու ինքդ և շատ ժողովուրդներ քեզ հետ, ամենքը ձիեր հեծած, մեծ բազմութիւնով և շատ զօրքով», կամ՝ «Ես պիտի զարկեմ քո աղեղը ձախ ձեռքիցդ և նետդ վայր պիտի գցեմ աջ ձեռքիցդ»[106]: Մեկ այլ տեղում՝ աղեղնավորների կապարճը, հավանաբար, մեծության առումով, համեմատվում է բաց գերեզմանի հետ[107]:

Ըստ Հերոդոտոսի, մարերն իրենց նետողական արվեստը սովորել են սկյութական մի ցեղից: Մասագետների զգեստը նման է սկյութականին: Նրանք տիրապետում են և՛ հեծյալ, և՛ հետիոտն կռվի ձևերին, աղեղնավորներ են, տեգավորներ ու տապարակիրներ և գործածում են պղնձե (իմա՝ բրոնզե - Գ.Թ.) զենքեր: Սկյութների զենքերից են նիզակն ու աղեղը, նրանց գոտիներից գավաթ է կախված: Նրանց նախահայր Սկյութեսին՝ Հերակլեսի որդուն, բաժին են հասել իր հոր նետ ու աղեղը, գոտին և գավաթը: Բոլոր սկյութները հեծյալ աղեղնավորներ են, նրանք քաղաքներ չեն կառուցում և ապրում են անասնապահությամբ: Արեսին զոհաբերություն մատուցելու նպատակով՝ սրբազան դեզի վրա յուրաքանչյուր ցեղ ցցում է մի հին երկաթե ակինակ, որը և այդ աստծո կուռքն է: Այս ակինակին զոհաբերում են ընտանի կենդանիներ, ձիեր, ինչպես նաև հարյուր գերիներից մեկին: Մարդուն մորթում են, իսկ կենդանիներին զոհաբերում են անարյուն եղանակով: Թշնա-

---

[103] Мровели 1979, 4, 50-54, Ковалевская 1984, 70.

[104] ქართლის ცხოვრება 1955, 43, Мровели 1979, 33.

[105] Մելիքսեթ-Բեկ 1934, 15: «Զարհուրելի ու գազանակերպ» են բնորոշվել կիմերները. հմմտ. Полиен 2002, VII, 2.1, որոնց kimmer - ինքնանվանումը պահպանվել է վրացերենում gmiri ձևով և նշանակում է «հերոս, հսկա». հմմտ. Ջահուկյան 1987, 495: Միևնույն ժամանակ, բանահյուսության մեջ կիմերների հակառակորդ սկյութները ներկայացվել են որպես «քաջ/խիզախ շներ». հմմտ. Грантовский 1980, 131-132: Ըստ երևույթին, «կտրիճ գայլ/շներ» էին կոչվում նվիրագործման փուլերով անցնող երիտասարդ սկյութ ռազմիկները. հմմտ. Иванчик 1988, 38-44:

[106] Աստվածաշունչ 1922, Եզեկիել, ԼԸ-ԼԹ:

[107] Աստվածաշունչ 1922, Երեմիա, Ե:

միների կառափները գործածում են իբրև գավաթ: Սկյութները դաշինք կնքելիս գավի մեջ լցված գինուն խառնում են մասնակիցների արյունը, այս խառնուրդ հեղուկի մեջ թաթախում են ակինակ, նետասլաքներ, տապար և նիզակ, որից հետո խմում են գավաթի պարունակությունը: Թագավորին թաղում են քառակուսի մեծ փոսում, դիակը դնում են հարդե տապաստի վրա, դիակի երկու կողմից հողի մեջ երկու նիզակ են խրում, վրան քաշում են տախտակ ու ծածկում եղեգնյա խսիրով: Թաղումն ուղեկցվում է մարդկանց, ձիերի և այլ կարգի զոհաբերություններով, թանկարժեք գույքով: Նրանք ձգտում են հնարավոր չափով բարձրացնել դամբանաթումբը: «Իսկ սակերը, որոնք սկյութներ են, գլուխներին կրում են սրածայր բարձր գդակ, հագնում անդրավարտիք ու զինված են իրենց տեղական աղեղներով, դաշույններով, ինչպես նաև՝ սագարիս (կոչված) սակրերով»[108]:

Ստրաբոնի հաղորդումները լրացնում են Հերոդոտոսին: Մասագետները պաշտում են արևի աստծուն ու նրան ձիեր են զոհաբերում: Նրանք հիանալի հեծյալ և հետիոտն ռազմիկներ են, կրում են զրահ ու (ոսկե) գոտի և զինված են նետ-աղեղներով, սրերով, բրոնզե կացիններով: Մասագետների և սկյութների ապրելակերպն ու թաղման ծեսերը նման են իրար[109]:

Հովսեպոս Փլավիոսը գրում է. «Նույնիսկ սկյութացիները, որոնք զվարճանում են մարդկանց սպանելով և քիչ բանով են տարբերվում վայրի գազաններից, պարտք են համարում չհրաժարվել իրենց բարքերից...»[110]:

Պլուտարքոսի կարծիքով, մաքուր գինի խմելը սկյութական սովորություն է[111]:

Ուշագրավ տեղեկություն է պարունակում Խորենացու հաղորդումը Երվանդ արքայի մահվան վերաբերյալ: Հիշելով, որ Երվանդը Արշակունյաց ցեղի խառնուրդ էր, Արտաշեսը հրամայում է նրան թաղել և մահարձան դնել[112]: Եթե հաշվի առնենք, որ պարթև Արշակունիները ծագում էին սկյութական *պառն* կամ *ապառն* ցեղից[113], ապա կարելի է ենթադրել, որ նրանք մեծատոհմիկի գերեզմանին մահարձան կանգնեցնելու սովորություն ունեին:

Եզրակացություններ

Այսպիսով, Աստվածաշնչի ու պատմիչների հաղորդումները լրացնում են Հայկական լեռնաշխարհում և հարևան տարածաշրջաններում կիմերների ու սկյութների ներկայության վերաբերյալ մեր պատկերացումները, որոնք ձևավորվել են հնագիտական պեղումների արդյունքների և սեպագիր սկզբնաղբյուրների տվյալների հիման վրա: Դրանք ընդարձակում են մեր իմացու-

[108] Հերոդոտոս 1986, I, 73, 215; IV, 3, 10, 46, 60-62, 65-67, 70-71; VII, 64:
[109] Страбон 1964, XI, 8, 6-7.
[110] Հովսեպոս 1976, Ընդդեմ Ապիոնի, II, 269:
[111] Պլուտարքոս 1987, Յոթ իմաստունների խնջույքը, 13, Ստոլյարով 1987, 762:
[112] Խորենացի 1913, II, ԽԶ:
[113] Երեմյան 1971բ, 713, ծան. 21:

թյունների շրջանակը Հայկական լեռնաշխարհ ներթափանցած այդ քոչվոր ցեղերի բարքերի, սովորությունների ու կենցաղի մասին: Պատմական ավանդությունը շարունակում է պահպանել կիմերների և սկյութների վերաբերյալ հիշողությունը, որի արձագանքները լսելի են պատմական ասպարեզից նրանց հեռանալուց շատ դարեր հետո:

Գրականություն

Ագաթանգեղոս 1909, Պատմութիւն հայոց, աշխ. Գ. Տեր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, Տփղիս, «Արագատիպ Մ. Մարտիրոսեանցի», 474 էջ:

Ադոնց Ն. 1972, Հայերի ծագումը (անավարտ), Հայաստանի պատմություն (խմբ.՝ Գ. Սարգսյան), Երևան, «Հայաստան», էջ 287-346:

Ալիշան Ղ. 1901, Հայապատում, Բ, Պատմութիւնք հայոց, Վենետիկ, «Ս. Ղազար տպ.», 560 էջ:

Անանիա Շիրակացի 1979, Մատենագրություն, թարգմ., առաջաբանը և ծանոթագր. Ա. Աբրահամյանի և Գ. Պետրոսյանի, Երևան, «Սովետական գրող», 400 էջ:

Աստուածաշունչ 1922, Մատեան Հին և Նոր Կտակարանների, Կոստանդնուպոլիս, «Ա. Յակոբ Պօյաճեան տպ.», 1347 էջ:

Դալալյան Տ. 2007, Օտար պատմագիրներից հիշատակված Հայաստանի ամենավաղ արքան, Պատմա-բանասիրական հանդես, N 1, էջ 249-261:

Դալալյան Տ. 2013, Մարաստանը և Հայաստանը, Հայաստանի հարակից երկրների պատմություն, հ. I (խմբ. Ա. Քոսյան), Երևան, «Զանգակ», էջ 283-288:

Դիոդորոս Սիկիլիացի 1985, Պատմական գրադարան (հատվածներ), թարգմ. բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ս.Մ. Կրկյաշարյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 204 էջ:

Դիոն Կասսիոս 1976, Հռոմեական պատմություն (հատվածներ), թարգմ. բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ս.Մ. Կրկյաշարյանի, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 9. Հին հունական աղբյուրներ Ա (խմբ. Գ.Խ. Սարգսյան), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 113-268:

Եղիշե 1946, Վարդանանց պատմությունը, թարգմանությունը, ներածական ուսումնասիրությունը և ծանոթագրությունները՝ Ե. Տեր-Մինասյանի, Երևան, «Հայպետհրատ», 322 էջ:

Երեմյան Ս.Տ. 1968ա, Կիմերական ու սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ, Պատմա-բանասիրական հանդես, N 2, էջ 89-116:

Երեմյան Ս.Տ. 1968բ, Հայկական առաջին պետական կազմավորումները (VII-VI դդ. մ.թ.ա.), Պատմա-բանասիրական հանդես, N 3, էջ 91-120:

Երեմյան Ս.Տ. 1971ա, Հայ ժողովրդի կազմավորման ավարտը և հայկական առաջին պետական կազմավորումները, Հայ ժողովրդի պատմություն, հ. I (խմբ. Ս.Տ. Երեմյան և այլք), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 423-443:

Երեմյան Ս.Տ. 1971բ, Մեծ Հայքի պայքարը անկախության համար Արտաշեսյան դինաստիայի անկումից հետո, Հայ ժողովրդի պատմություն, հ. I (խմբ. Ս.Տ. Երեմյան և այլք), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 703-733:

Թովմա Արծրունի և Անանուն 1985, Պատմություն Արծրունյաց տան, կազմ., աշխարհաբար թարգմ. և ծանոթագր.՝ Վ. Վարդանյանի, Երևան, ԵՊՀ հրատ., 560 էջ:

Թումանյան Գ. 2012, «Վարդգես մանկան» վիպական պատառիկի նոր մեկնաբանություն, Պատմաբանասիրական հանդես, N 2, էջ 198-209:

Կարագյոզյան Հ. 1984, Ուրարտական գաղափարագիր անձնանուններ, Լրաբեր հասարակական գիտությունների, N 1, էջ 72-82:
Կիրակոս Գանձակեցի 1982, Հայոց պատմություն, թարգմ., առաջաբանը և ծանոթագր. Վ. Առաքելյանի, Երևան, «Սովետական գրող», 352 էջ:
Կորիւն 1941, Վարք Մաշտոցի, թարգմ. Մ. Աբեղյանի, Երևան, «Հայպետհրատ», 126 էջ:
Հերոդոտոս 1986, Պատմություն ինը գրքից (թարգմ. Ս. Կրկյաշարյանի), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 651 էջ:
Հոմերոս 1988, Ոդիսական (հին հուն. թարգմ. Հ. Համբարձումյանը), Երևան, ԵՊՀ հրատ., 416 էջ:
Հովսեպոս Փլավիոս 1976, թարգմ. բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ս.Մ. Կրկյաշարյանի, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 9. Հին հունական աղբյուրներ Ա (խմբ. Գ.Խ. Սարգսյան), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 5-111:
Ղափանցյան Գ. 1940, Ուրարտուի պատմությունը, Երևան, ԵՊՀ հրատ., 238 էջ:
Ղափանցյան Գ. 1944, Արա Գեղեցկի պաշտամունքը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 172 էջ:
Մանանդյան Հ. 1944, Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրոբլեմների մասին, Երևան, «Հայպետհրատ», 72 էջ:
Մատթեոս Ուռհայեցի 1973, Ժամանակագրություն, Երևան, «Հայաստան», 376 էջ:
Մարկվարտ Ի. 1961, Պարսկահայք նահանգը, Պատմա-բանասիրական հանդես, N 2, էջ 212-244:
Մելիքսեթ-Բեկ Լ. 1934, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Երևան, «Մելքոնյան ֆոնդի հրատ.», 268 էջ:
Մովսես Կաղանկատվացի 1969, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմ., առաջաբանը և ծանոթագր. Վ. Առաքելյանի, Երևան, «Հայաստան», 321 էջ:
Մովսէս Խորենացի 1913, Պատմութիւն հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, «Արագատիպ Մ. Մարտիրոսեանցի», 396 էջ:
Յովհաննէս Դրասխանակերտցի 1912, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, «Ն. Աղանեանցի տպ.», 427 էջ:
Պլուտարքոս 1987, Երկեր, ռուս. թարգմ. Հ. Հարյանը, Երևան, «Հայաստան», 796 էջ:
Պրոկոպիոս Կեսարացի 1987, Գաղտնի պատմություն (թարգմ. հին հուն. բնագրից Հ. Բարթիկյանի), Երևան, ԵՊՀ հրատ., 164 էջ:
Ջահուկյան Գ.Բ. 1987, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 748 էջ:
Սամուէլ Անեցի 1893, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, «Ս. Էջմիածնի տպարան», 331 էջ:
Սեբէոս 1979, Պատմութիւն, աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 446 էջ:
Ստեփանոս Օրբելյան 1986, Սյունիքի պատմություն, թարգմ., ներած. և ծանոթագր. Ա.Ա. Աբրահամյանի, Երևան, «Սովետական գրող», 616 էջ:
Ստոլյարով Ա. 1987, Մեկնաբանություններ, Պլուտարքոս, Երկեր, ռուսերենից թարգմանեց Հ. Հարյանը, կազմ. Ս. Ավերինցևա, նախաբանը Ա. Լոսևի, Երևան, «Հայաստան», 1987:
Ստրաբոն 1940, Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Յերևան, ԵՊՀ հրատ., 124 էջ:
Վարդան Արեւելցի 1972, Մեկնութիւն Քերականի, աշխատասիրությամբ Լ. Խաչերյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 180 էջ:
Ուխտանէս եպիսկոպոս 1871, Հատուած առաջին, Պատմութիւն հայոց, Վաղարշապատ, «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ.», 116 էջ:
Փաւստոս Բուզանդ 1832, Պատմութիւն հայոց ի չորս դպրութիւնս, Վենետիկ, «Ս. Ղազար» հրատ., 278 էջ:
Քսենոփոն 1970, Անաբասիս (թարգմ. Ս. Կրկյաշարյանի), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 284 էջ:

Քոսյան Ա. 1998, Տուն Թորգոմայ (առասպել և իրականություն), Երևան, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի հրատ., 79 էջ:

Алексеев А.Ю. 1992, Скифская хроника (Скифы в VII-IV вв. до н.э.: историко-археологический очерк), Санкт-Петербург, «Петербургкомстат», 206 с.

Алиев И. 1960, История Мидии, т. I, Баку, изд. АН АзССР, 491 с.

Арутюнян Н.В. 2001, Корпус урартских клинообразных надписей, Ереван, «Гитутюн», 542 с.

Грантовский Э.А. 1980, Проблемы изучения общественного строя скифов, Вестник древней истории, N 4, с. 128-155.

Дьяконов И.М. 1951, Ассиро-вавилонские источники по истории Урарту, Вестник древней истории, N 3, с. 207-252.

Дьяконов И.М. 1956, История Мидии, Москва-Ленинград, изд. АН СССР, 485 с.

Дьяконов И.М. 1963, Урартские письма и документы, Москва-Ленинград, изд. АН СССР, 144 с.

Дьяконов И.М. 1981, Малая Азия и Армения около 600 г. до н.э. и северные походы вавилонских царей, Вестник древней истории, N 2, с. 34-64.

Ельницкий Л.А. 1949, Киммерийцы и киммерийская культура, Вестник древней истории, N 3, с. 14-26.

Жебелев С.А. 1953, Северное Причерноморье, Москва-Ленинград, изд. АН СССР, 388 с.

Иванчик А.И. 1988, Воины-псы. Мужские союзы и скифские вторжения в Переднюю Азию, Советская этнография, N 5, с. 38-48.

Иванчик А.И. 1989, О датировке поэмы «Аримаспея» Аристея Проконнесского, Вестник древней истории, N 2, с. 29-49.

Иванчик А.И. 1996, Киммерийцы. Древневосточные цивилизации и степные кочевники в VIII-VII вв. до н.э., Москва, «Наука», 324 с.

Иванчик А.И. 1999, Современное состояние киммерийской проблемы. Итоги дискуссии, Вестник древней истории, N 2, с. 77-97.

Капанцян Г. 1947, Хайаса – колыбель армян. Этногенез армян и их начальная история, Ереван, изд. АН АрмССР, 290 с.

Ковалевская В. 1984, Кавказ и аланы. Века и народы, Москва, «Наука», 192 с.

Мартиросян А.А. 1954, Раскопки в Головино, Ереван, изд. АН АрмССР, 116 с.

Мровели Л. 1979, Жизнь картлийских царей. Перевод с древнегруз., предисл. и коммент. Г.В. Цулая, Москва, «Наука», 104 с.

Мурзин В.Ю. 1990, Происхождение скифов: основные этапы формирования скифского этноса, Киев, «Наукова думка», 88 с.

Пиотровский Б.Б. 1959, Ванское царство (Урарту), Москва, «Восточная литература», 284 с.

Полиен 2002, Стратегемы, пер. с греч. (ред. А. Нефедкин), Санкт-Петербург, «Евразия», 608 с.

Пьянков И.В. 2005, Аристей: путешествие к исседонам, Исседон: альманах по древней истории и культуре, 3, с. 15-35.

Страбон 1964, География, в 17 книгах (ред. С. Утченко), Москва, «Наука», 936 с.

Diodorus of Sicily 1967 – The Library of History, With an English Translation by C.H. Oldfather, In Twelve Volumes, III, Books IV (continued) 59-VIII, London; Cambridge, Massachusetts, “William Heinemann LTD”; “Harvard University Press”, 440 p.

König F. 1934, Älteste Geschichte der Meder und Perser, Leipzig, Verl. «J.C. Hinrich», VIII+66 S.

Luckenbill D. 1927, Ancient Records of Assyria and Babylonia, Vol. II, Chicago, Illinois, "The University of Chicago Press", XII+504 p.

Marquart J. 1901, Ērānšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i. Mit historisch-kritischen Kommentar und historischen und topographischen Excursen, Berlin, Verl. "Weidmannsche Buchhandlung", 373 S.

Polybius 2010-2011, The Histories, Vol. II-IV, Books 3-4, 5-8, 9-15, Translated by W.R. Paton, Revised by F.W. Walbank, C. Habicht, Cambridge, Massachusetts, "Harvard University Press", 576, 624, 640 p.

Posidonius 1972, Translation of the Fragments, Vol. III, L. Edelstein, I.G. Kidd, Cambridge, "Cambridge University Press", 432 p.

Tacitus 1962, The Annals, With an English Translation by J. Jackson, in: Tacitus II, T.E. Page et al. (eds.), Cambridge, Massachusetts, "Harvard University Press", London, «William Heinemann LTD», p. 225-643.

Xydopoulos I. 2015, The Cimmerians: their origins, movements and their difficulties, in: G. Tsetskhladze, A. Avram, J. Hargrave (eds.), The Danubian Lands Between the Black, Aegean and Adriatic Seas, Oxford, Pub. "Archaeopress Archaeology", p. 119-123.

ქართლი სცხოვრება 1955, ქართლისცხოვრება, ტ. I, თბილისი, გამ. «სახელმგამი», 463 გვ.

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԵՎ ՊԱՏՄԻՉՆԵՐԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ ԿԻՄԵՐՆԵՐԻ ՈՒ ՍԿՅՈՒԹՆԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գարեգին Թումանյան

Ամփոփում

Կիմերների և սկյութների մասին վկայություններ կան Աստվածաշնչում: Ըստ ժողովուրդների աղյուսակի, Ասքանազն ու Թոգարմա-Թորգոմը Նոյի թոռան և Հաբեթի որդու՝ Գոմերի որդիներն են: Աստված խոստանում է Իսրայելի ժողովրդի դեմ ուղարկել «Գոմերը և նորա բոլոր գունդերը», այսինքն՝ կիմերներին: Բաբելոնի դեմ ուղղված Երեմիայի կոչում «Ասքանազի թագավորություն» անվան տակ հասկացվում են սկյութները:

Հունարեն ինագույն աղբյուրներն առասպելախառը տեղեկություններ են հաղորդում կիմերների մասին: Հոմերոսն առաջինն է, որ հիշատակում է նրանց: Ոդիսևսը «մեռյալների թագավորություն» ուղևորվելիս հասնում է օվկիանոսի սահմաններին, որտեղ, հավերժական խավարի մեջ, ապրում են կիմերները: Կիմերները հիշատակվում են նաև եփեսոսցի բանաստեղծ Կալլինոսի էլեգիաներից մեկում և Արիստեաս Պրոկոննեսոսցու «Արիմասպեականք» պոեմում: Ըստ Հերոդոտոսի, կիմերներն Ասիա են հասել՝ սկյութների կողմից դուրս մղվելով իրենց բնակավայրերից, իսկ սկյութներն այդ տարածաշրջան են ներխուժել՝ հետապնդելով փախչող կիմերներին: Քսենոփոնը, Պոլիբիոսը, Պոսիդոնիոսը, Դիոդորոս Սիկիլիացին նույնպես տեղեկություններ են հաղորդել այս ցեղախմբերի վերաբերյալ: Կիմերները և սկյութները հիշատակվել են Ստրաբոնի, Հովսեպոս Փլավիոսի, Պլուտարքոսի, Տակիտոսի, Դիոն Կասսիոսի աշխատություններում: Պատմական ասպարեզից սկյութների հեռանալուց հետո էլ նրանց մասին հիշողությունները միանգամից չեն մարում:

Հայ պատմագիրները կիմերներին ու սկյութներին հաճախ դիտում են որպես ազգակիցներ՝ նրանց նույնացնելով հայերի հետ: Կորյունը, խոսելով Հայաստան աշխարհի և *Ասքանազյան* ազգի աստվածապարգև գրի մասին, ակնհայտորեն նկատի ունի հայոց ազգը: Խորենացին Նոյի ժառանգներին թվարկում է հետևյալ հաջորդա-

կանությամբ՝ Հաբեթ, Գամեր/Գոմեր, Թիրաս, Թորգոմ, Հայկ: Անդրադառնալով իրեն առավել սիրելի հայոց թագավորներին՝ նա հիշատակում է Սկայորդու որդի Պարույրին, այլ խոսքով՝ սկյութների առաջնորդ Պարտատուային: Սկյութական տարբեր ցեղերի վերաբերյալ տեղեկություններ են հաղորդում Ագաթանգեղոսը, Եղիշեն, Փավստոս Բուզանդը, Սեբեոսը, Մովսես Կաղանկատվացին, Անանիա Շիրակացին: Հայ պատմագրության մեջ սկյութների մասին կան նաև ուշ հիշատակություններ:

Աստվածաշնչի ու պատմիչների հաղորդումները լրացնում են Հայկական լեռնաշխարհում և հարևան տարածաշրջաններում կիմերների ու սկյութների ներկայության վերաբերյալ մեր իմացությունը, ինչպես նաև պատկերացումները նրանց սովորությունների ու կենցաղի վերաբերյալ:

Բանալի բառեր՝ Աստվածաշունչ, Գոմեր, Ասքանազ, կիմերներ, սկյութներ, պատմագիրներ, Հայկական լեռնաշխարհ:

СВЕДЕНИЯ БИБЛИИ И ИСТОРИОГРАФОВ О НАХОЖДЕНИИ КИММЕРИЙЦЕВ И СКИФОВ НА АРМЯНСКОМ НАГОРЬЕ

Гарегин Туманян

Резюме

О киммерийцах и скифах есть свидетельства в Библии. Согласно «Таблице народов», Аскеназ и Фогарма-Торгом являются сыновьями Гомера – внука Ноя и сына Иафета. Бог обещал послать против народа Израиля «Гомера со всеми отрядами его», т.е. киммерийцев. В книге пророка Еремии под словами «царство Аскеназское» подразумеваются скифы.

Древнейшие источники на греческом языке передают полумифические сведения о киммерийцах. Первым о них упоминает Гомер. Одиссей, отправившийся в «царство мертвых», достиг края океана, где в вечном мраке жили киммерийцы. Киммерийцы также упоминаются в одной из элегий поэта Каллина из Эфеса и в поэме «Аримаспея» Аристея Проконнесского.

Согласно Геродоту, киммерийцы, будучи вытесненными со своих территорий скифами, дошли до Азии. Скифы вторглись в этот регион, преследуя киммерийцев. Ксенофонт, Полибий, Посидоний, Диодор Сицилийский также приводят данные об этих племенах. Киммерийцы и скифы упоминаются в трудах Страбона, Иосифа Флавия, Тацита, Диона Кассия.

Армянские историографы часто рассматривают киммерийцев и скифов как соплеменников, отождествляя их с армянами. Так, Корюн говорит «о данном Богом алфавите *Аскеназского* народа» (очевидно, имея в виду армянский народ) и о стране Армении. Хоренаци перечисляет наследников Ноя в следующей последовательности: Иафет, Гамер/Гомер, Тирас, Торгом, Айк. Обращаясь к армянским царям, он упоминает Паруйра – сына Скайорди, т.е. предводителя скифов Партатуа. О разных скифских племенах сообщают сведения Агафангел, Егише, Фавстос

Бузанд, Себеос, Мовсес Каланкатваци, Анания Ширакаци. В армянской историографии есть также поздние упоминания о скифах.

Сведения Библии и историографов восполняют наши знания о киммерийцах и скифах на Армянском нагорье и в сопредельных регионах, а также наши представления об их обычаях и жизненном укладе

Ключевые слова – Библия, Гомер, Аскеназ, киммерийцы, скифы, историографы, Армянское нагорье.

REPORTS OF THE BIBLE AND HISTORIOGRAPHERS ABOUT THE PRESENCE OF CIMMERIANS AND SCYTHIANS IN ARMENIAN HIGHLAND

Garegin Tumanyan

Abstract

There are evidences about Cimmerians and Scythians in the Bible. According to the "Table of Nations", Ashkenaz and Togarmah-Torgom are the sons of Gomer – the grandson of Noah and the son of Japheth. God promises to send against Israelites "Gomer with all its troops", i.e. Cimmerians. In the call of Jeremiah against Babylon, "the kingdom of Ashkenaz" is mentioned, under which Scythians are presumed. Ancient Greek sources report semi-mythical information about Cimmerians. Homer is the first one who mentions them. On the way to the Kingdom of the Dead, Odysseus reaches the River of Ocean, where, in the eternal darkness, live the Cimmerians. Cimmerians are mentioned also in one of the elegies of Callinus – a poet from Ephesus, and in the poem "Arimaspea" by Aristeas of Proconnesus.

According to Herodotus, Cimmerians came to Asia because of being expelled by Scythians from their territories, and Scythians invaded this region pursuing the running Cimmerians. Xenophon, Polybius, Posidonius, and Diodorus Siculus also reported about the abovementioned tribes. Cimmerians and Scythians are mentioned in the works of Strabo, Josephus Flavius, Plutarch, Tacitus, and Dio Cassius. Memories of them are not quickly blown out even after they leave the historical arena. Armenian historiographers often view Cimmerians and Scythians as related to each other, assimilating them with Armenians. Koryun, when talking about the land of Armenia and the God-granted writing of Ashkenaz nation, apparently means Armenian nation. Moses Khorenats'i lists the descendants of Noah in the following order: Yapheth, Gamer/Gomer, T'iras, T'orgom, Hayk. Talking about his favourite Armenian kings, he mentions Paroyr, the son of Skayordi, in other words – Partatua – the leader of Scythians. Information about different Scythian tribes is provided by Agat'angeghos, Eghishe, Pavstos Buzand, Sebeos, Moses Kaghankatvats'i, Anania of Shirak. In Armenian historiography there are also some later reports about Scythians.

The information provided by the Bible and historians add to our knowledge about the presence of Scythians and Cimmerians in the Armenian Highland and the adjacent territories and improve our understanding of their habits and lifestyle.

Key words – The Bible, Gomer, Ashkenaz, Cimmerians, Scythians, historiographers, Armenian Highland.

ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺԸ ԱՐՏԵՐԿԻՐ 2012-2018 ԹԹ. (ԼԻԲԱՆԱՆ, ԹՈՒՐՔԻԱ, ՀՈՐԴԱՆԱՆ, ԱՄՆ, ՇՎԵԴԻԱ, ԱՎՍՏՐԱԼԻԱ)

Քնարիկ Ավագյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4
Էլ. հասցե՝ lira777@yahoo.com
Հոդվածը ներկայացվել է 21.04.2023, գրախոսվել է 24.04.2023, ընդունվել է տպագրության 11.12.2023
ORCID: 0009-0000-5496-4997
DOI: 10.53548/0320-8117-2023.3-61

Ներածություն

ԱՄՆ-ի հովանավորությամբ և ՆԱՏՕ-ի անդամ մյուս երկրների գործակցությամբ 2011 թ. մարտին իսլամիստ ահաբեկիչների ներխուժումը Սիրիա սպառնալիք է ստեղծել տեղի շուրջ 2,2 մլն քրիստոնյաների, ներառյալ 80.000 հայերի համար՝ պատճառ դառնալով երկրից նրանց զանգվածաբար արտագաղթի սկզբնավորմանը[1]: Ավելի քան 22.000 սիրիահայ ներգաղթել է Հայաստան[2]: Այդուհանդերձ, շատերը նախընտրել են ժամանակավոր կամ մշտական կարգավիճակով մեկնել այլ երկրներ (Լիբանան, Թուրքիա, Հորդանան, Միացյալ Արաբական Էմիրություններ, ԱՄՆ, Կանադա[3], Շվեդիա, Ավստրալիա[4] և այլուր): Այդ հարցում նրանց օգնել է ՄԱԿ-ի կազմում գործող Ներգաղթի միջազգային գրասենյակը (ՆՄԳ) [Internatioanl Office of Migration - IOM], որը, ընդհանուր առմամբ, 2011-2020 թթ. հունիս ընկած ժամանակահատվածում կազմակերպել է 100.000 տեղահանված սիրիացիների, այդ թվում՝ սիրիահայերի վերաբնակեցումը աշխարհի 25 երկրներում, ներառյալ՝ Կանադա, Ավստրալիա, եվրոպական պետություններ և այլն[5]: Անդրադառնանք առավել ստվար թվով սիրիահայ ընդունած որոշ երկրներում նրանց վիճակին:

---

[1] Sanamyan Emil. Middle East Crisis and Armenia's Demography 2012, June, https://theanalyticon.com

[2] Սիրիահայերի մասին՝ վիճակագրության լեզվով. Մեր հյուրն է «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ–ի նախագահ Լենա Հալաճյանը 2017, 27 հունվարի, http://nyut.am: Տե՛ս նաև՝ Lieberman Amy. Lessons Learned as Syrian-Armenian Refugees Return to Armenia 2017, July 25, https://www.devex.com

[3] Սիրիահայերի Կանադա մեկնելու մասին մենք անդրադարձել ենք առանձին հոդվածով: Տե՛ս Ավագյան 2022, 63-80:

[4] Արզումանյան Վարդուհի, Ուրախ եմ արձանագրել, որ կանադահայերի մեջ գտնվեցին մարդիկ, ովքեր հաշվեհամարներ բացեցին հայաստանյան բանկերում. Հրանուշ Հակոբյան 2017, 14 փետրվարի, http://noranor.ca: Գալստյան Հրանտ 2015, Սիրիահայեր. վերադարձ, որ չէին նախատեսել, 3 հունիսի, http://hetq.am: Սիրիայի հայերը տեղափոխվում են պատմական հայրենիք. The Economist-ի անդրադարձը 2017, 27 հունիսի, http://armenpress.am

[5] Trovato 2021, 8.

Լիբանան

Ըստ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի [United Nations High Commissioner for Refugees – UNHCR] գրասենյակի տվյալների՝ զգալիորեն փոքր տարածք զբաղեցնող Լիբանանն իր բնակչության (4 մլն) մեկ շնչի հաշվով 2011-2019 թթ. ընթացքում աշխարհում ամենից շատ տեղահանված ընդունող երկիրն էր՝ 2 մլն, որից 1,5 մլն-ը սիրիացի էր[6]:

Սիրիայի հայերի մի մասը ևս ապաստան էր գտել հարևան Լիբանանում՝ հույսով, որ ռազմական գործողությունները դադարելու դեպքում շուտով կարող են վերադառնալ իրենց բնակավայրերը, այդուհանդերձ, զգալի թվով հայեր այդտեղից գաղթել են ԱՄՆ, Կանադա, Շվեդիա և այլ երկրներ, մինչդեռ մյուսները ներգաղթել են Հայաստան:

Հալեպից Բեյրութ հասնելու համար սիրիահայերը հաճախ ստիպված էին երկարացնելու ճանապարհը՝ շրջանցելով վտանգաշատ տարածքներ. անցել են Համա, Հոմս, ապա նորից դեպի հյուսիս՝ Լաթաքիայով դեպի Տրիպոլի, ապա՝ Բեյրութ: Հինգժամյա ճանապարհը հաճախ տևել է մի ամբողջ օր[7]:

2013 թ. հոկտեմբերի տվյալներով՝ Լիբանանում հաստատված սիրիահայերի թիվը 7.000 էր կամ մոտ 800 ընտանիք[8]: Ըստ Բեյրութի «Ազդակ» պարբերականի խմբագիր Շահան Գանդահարյանի՝ Լիբանանում ապաստանած սիրիահայերի թիվը 7.000-8.000 էր[9], իսկ արդեն 2017 թ.՝ 9.000-10.000[10]:

ՀՅԴ Լիբանանի կենտրոնական կոմիտեի անդամ Մելիք Քարագավորյանի վկայությամբ՝ Լիբանանում սիրիահայ փախստականներին աջակցելու գործընթացը բավական համակարգված է իրականացվել. սկզբից ևեթ համայնքային կառույցները, այդ թվում՝ Հայկական կարմիր խաչի ընկերությունը, տրամադրել են առաջին անհրաժեշտության իրեր, լուծել փախստական երեխաների կրթության հարցը՝ նրանց տեղավորելով հայկական դպրոցներում անվճար կրթությամբ: Լիբանանում սիրիահայերը հիմնականում դժվարություններ են ունեցել բնակարանի և աշխատանքի հետ կապված[11]:

Սիրիահայ փախստականներին աջակցող կառույցներից էր նաև Բուրջ Համուդի արվարձանում գտնվող Հովարդ Կարագյոզյան հիշատակի հիմնարկը, որն աշխատել է ՄԱԿ ՓԳՀ-ի հետ[12]: Հայաշատ Բուրջ Համուդի ազգային

[6] Kikano 2021, 422, Trovato 2021, 7.

[7] Halajian, Daron. Toronto Armenian Community Resettles Syrian Refugees 2015, December 25, http://armenianweekly.com

[8] 17-18 Thousand Armenians Left Syria in Two Years 2013, June 28, http://www.lragir.am. Սուրիայէն Հեռացած է 17-18 Հազար Հայ 2013, 1 Յուլիս, http://asbarez.com

[9] Շահան Քանդահարյան. Հայաստան է տեղափոխվել մոտ տաս հազար սիրիահայ, Լիբանան՝ մոտ ութ հազար 2013, 11 հոկտեմբերի, https://news.am

[10] Լիբանանում սիրիահայերի շրջանում Սիրիա վերադառնալու տրամադրություններ են նկատվում 2017, 27 հունվարի, https://armenpress.am

[11] Kukrety 2016, 25. Լիբանանում սիրիահայերի շրջանում Սիրիա վերադառնալու տրամադրություններ են նկատվում 2017, 24 հունվարի, https://armenpress.am

[12] Syrian-Armenian Refugees Face Prospect of Not Returning Home 2013, December 26, http://www.dw.de

կառույցները լրացուցիչ միջոցներ են կենտրոնացրել աջակցելու սիրիահայերին՝ հատկապես առաջնային բժշկական օգնության, դպրոցական կրթության, բնակարանի հասանելիության առումով: Համայնքի ներկայացուցչի խոսքերով՝ իրենք ուրախ են, որ հայերը, Բուրջ Համոդ գալով, նպաստում են համայնքի ակտիվացմանը, ուստի քաղաքական կուսակցություններն առավելագույնն են արել իրենց ձեռքում պահելու թաղամասի հիմնական հայկական հատվածը՝ Արաքս և Մարաշ փողոցները, դեպի Մեսրոպյան դպրոց և կամուրջ տանող ճանապարհները: Բուրջ Համոդում իշխող ՀՅԴ-ն արգելել է անշարժ գույքի սեփականատերերին ունեցվածքը վաճառել ոչ հայերին: Ահա թե ինչու սիրիահայերի գալուստը կուսակցականների համար առիթ էր հայկական համայնքն ուժեղացնելու համար[13]:

Միաժամանակ հարկ է նշել նաև, որ համաձայն ՄԱԿ ՓԳՀ-ի տվյալների, Բեյրութի Բուրջ Համոդ հայաշատ թաղամասում, հայերից բացի, տեղավորված սիրիացի փախստականների կեսից ավելին Սիրիայի քրդեր էին, որոնց մեծ մասը Հալեպից էր, ավելի փոքր մասը՝ Կամիշլիից, Էրբիլից և Դամասկոսից: Մնացածը սուննի արաբներ ու սիրիահայեր էին՝ Հալեպից և Էրբիլից: Օտար հետազոտողների գնահատմամբ, թեպետ Բուրջ Համոդ թաղամասում ապաստանածները փախստականների գլխավորապես աղքատ հատվածն են կազմել, այդուհանդերձ, նրանք ավելի լավ պայմաններում են եղել և ի վիճակի էին վճարել տան վարձը, քան Լիբանանի հյուսիսում կամ Բեքայի տարածքում եղողները[14]: Հետազոտողներն անձնական դիտարկումների հիման վրա վկայել են, որ Բուրջ Համոդի գերազանցապես հայկական բնակչությունը սիրիացիների հետ գործարքներում հիմնականում օրինավոր է վարվել, մինչդեռ այլ շրջաններում տեղի բնակչությունն ու պաշտոնյաները բնակարանի և աշխատանքի տրամադրման հարցերում փախստականների հանդեպ թույլ են տվել չարաշահումներ, օրենքի խախտումներ և կամ ցածր որակավորում պահանջող գործատեղերում լիբանանցու փոխարեն էժան վարձավճարով աշխատանքի են վերցրել սիրիացիների և այլն: Ահա թե ինչու լարված բախումներից, այդ թվում՝ միջկրոնական (քրիստոնյա-մահմեդական, սուննի-շիա), խուսափելու նպատակով շատ փախստականներ նախընտրել են ապրել հեռավոր գյուղերում՝ վրանային կացարաններում, քան թե քաղաքներում[15]:

Սիրիական բանակի և ռուսական ուժերի կողմից 2016 թ. դեկտեմբերի 12-ին Հալեպի ամբողջական ազատագրումից հետո, երկրում ռազմական իրավիճակի համեմատաբար հանդարտմանը զուգընթաց, Լիբանանում ապաստանած սիրիահայերի շրջանում նկատելի էր Սիրիա վերադառնալու տրամադրությունը: Այդ մասին Մ. Քարագավորյանն ասել է. «Այսօր դեռ վաղ

[13] Madoré 2016, 10.
[14] Madoré 2016, 9.
[15] Kikano 2021, 435, 439, 442.

է խոսել Սիրիա տեղափոխվողների թվի մասին, սակայն կարող ենք ասել, որ շատերը մեկնում են Սիրիա՝ տեղում ծանոթանալու իրավիճակին, հասկանալու համար վերադառնալու ինչ հնարավորություններ կան, դիտարկում են իրենց գործը վերականգնելու տարբերակները: Այո, Լիբանանում գտնվող սիրիահայերի շրջանում Հալեպ վերադառնալու տրամադրություններ կան»: Ըստ նրա՝ Հայ դատի գրասենյակը պատրաստակամ է Սիրիայի «Շտապ օգնության» մարմնի հետ համակարգված աջակցություն ցույց տալ վերադառնալու վերջնական որոշում կայացրած սիրիահայ ընտանիքներին[16]:

Թուրքիա

Թուրքիան աշխարհում ամենամեծ թվով սիրիացի փախստական ընդունող երկրներից էր[17]: 2018 թ. նոյեմբերի տվյալներով՝ Թուրքիայում նրանց թիվը հասել է 3.585.738-ի[18]:

Որոշակի թվով Սիրիայի հայեր ապաստան են գտել նաև Թուրքիայում[19]: Սիրիայից, ինչպես նաև ժամանակին Իրաքից Թուրքիա մեկնած հայերի ընդհանուր թիվը 2015 թ. վերջի տվյալներով չի գերազանցել 10.000-ը: Նրանք հիմնականում տեղաբաշխվել են Ստամբուլ, Հաթայ, ինչպես նաև արևմտահայկական Յոզղաթ, Էրզրում, Ուրֆա, Մարտին և այլ քաղաքներում՝ գերազանցապես հետագայում Եվրոպա կամ ԱՄՆ տեղափոխվելու մտադրությամբ: Ստամբուլում հայտնված հայերը, Կ. Պոլսի պատրիարքարանի և համայնքի աջակցությանն արժանանալով, աշխատանքի և հայեցի կրթություն ստանալու հետ կապված խնդիրներ գրեթե չեն ունեցել (թեպետ աշակերտների մի մասը տևական ժամանակ «հյուր-աշակերտ» կարգավիճակում էր, ինչը խոչընդոտում էր համալսարան ընդունվելու համար համապատասխան վկայական ստանալը), մինչդեռ թուրքական այլ քաղաքներում ազգային ու կրոնական պատկանելությունը թաքցնելու խնդիրը մտահոգիչ է եղել[20]:

Ճակատագրի հեգնանքով, հայերը, այժմ արդեն «Իսլամական պետության» ահաբեկիչների հարձակումներից խուսափելով, ապաստանել են Թուրքիայի Շանլըուրֆա նահանգի Սուրուճ գավառի թուրքական կառավարության Աղետի և արտակարգ իրավիճակների կառավարման նախագահության [Afet ve Acil Durum Yönetimi Başkanliği – AFAD, Disaster and Emergency Management Presidency] ճամբարում: Մեկ ընտանիք հաստատվել է Շանլըուրֆայում, մեկը՝

[16] Լիբանանում սիրիահայերի շրջանում Սիրիա վերադառնալու տրամադրություններ են նկատվում 2017, 24 հունվարի, https://armenpress.am

[17] Report by OSCE Special Representative 2017, 8.

[18] Hurtas Sibel. Why Syrian Armenians are avoiding Turkey 2018, November 20, https://www.civilnet.am

[19] Հայաստանի Մէջ Արդէն Փոխուած Է Գործատուներու Վերաբերումը Սուրիահայերու Նկատմամբ. Հրանոյշ Յակոբեան 2015, 9 նոյեմբեր, http://www.ragmamoul.net

[20] Յակոբեան Սոֆիա 2015, Գառնուկը Վստահիլ Գայլերուն Կամ Ինչպէս Կ'ապրին Սուրիացի Փախստականները Թուրքիոյ Մէջ, 22 Դեկտեմբեր, http://ragmamoul.net

Հաթայում և այլուր: Հայաստանի անձնագիր ունեցող երկու ընտանիք 2015 թ. մեկնել է հայրենիք[21]:

Թուրքական «Ենի մեսաժ» ["Yeni mesaj"] ազգայնական թերթի սյունակագիր, վերլուծաբան Յուսուֆ Քարաջան ահազանգել է այն փաստի առիթով, որ Թուրքիան Սիրիայից հազարավոր հայեր է ընդունել, որոնք «եկել են սիրիացիների անվան տակ», մինչդեռ նրանք «1915-ի հայերն են», որոնք Սիրիայում էին հաստատվել: Ապա ավելացրել է. «1915-ին Թուրքիայից ուղարկված հայերի թոռները վերադարձել են որպես սիրիացիներ: ...Իսկ թե ինչքան հայեր են որպես սիրիացի այստեղ [Թուրքիայում] քաղաքացիություն ստացել, աստված գիտի: Սա գաղտնի պայմանագիր է, թե բանավոր պայմանավորվածություն՝ չգիտեմ»[22]: Մինչդեռ, դրան հակառակ, թուրք լրագրող Սերդար Քորուչուն գրել է, որ Հայոց ցեղասպանության հիշողությունը պատճառ է դարձել, որ շատ հայեր խուսափեն Թուրքիայում ապաստանելուց: Ահա թե ինչու, Թուրքիա անցածների զգալի մասը հիմնականում կարճատև ժամանակով է մեկնել՝ այդտեղից այլ երկիր փոխադրվելու նպատակով: Այսպես, Երևանում հաստատված սիրիահայ մի կին Ս. Քորուչուին պատմել է, որ Թուրքիայում թաքցրել է ինչպես իր հայ ազգությունը, նույնպես և Սիրիայի քաղաքացի լինելու հանգամանքը, քանի որ երկուսն էլ լավ չեն ընդունվել այդ երկրում: Իսկ իր ազգային պատկանելության մասին հարցումների դեպքում տարբեր պատասխաններ է տվել՝ լիբանանցի, բուլղարացի և այլն[23]: Նշենք, որ 2019 թ. վերջի տվյալներով, հայկական ընտանիքները հիմնականում արդեն դուրս էին եկել Թուրքիայի հայտարարած անվտանգության գոտուց[24]:

Հորդանան

Վերջին տասնամյակներին Հորդանանը թերևս միակ մերձավորարևելյան երկիրն է, որտեղ քրիստոնյաների թիվն աճել է նախ և առաջ Իրաքից, իսկ հետագայում Սիրիայից՝ շուրջ կես միլիոն փախստականների, ներառյալ մոտավոր հաշվարկներով 5.000 հայի հաշվին: Իսկ արդեն ըստ 2015 թ. վերջի տվյալներ՝ Հորդանանում առկա էր 5.000-6.000 սիրիահայ ընտանիք[25]:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Հորդանանում գործազրկությունը մեծապես աճել է հատկապես սիրիացի փախստականների կենտրո-

---

[21] Disaster and Emergency Management Presidency, https://en.wikipedia.org. IS Kills Kobane Armenian in front of His 14-Year-Old Son. 2015, July 3, http://www.panarmenian.net

[22] Թուրք վերլուծաբան. «1915-ի հայերի թոռները սիրիացիների անվան տակ Թուրքիա են վերադառնում», 2018, 15 նոյեմբերի, https://www.ermenihaber.am

[23] Hurtas Sibel. Why Syrian Armenians are avoiding Turkey. 2018, November 20, https://www.civilnet.am

[24] Սիրիայի հայերը եթե ցանկանան Հայաստան գալ, կձեռնարկվեն անհրաժեշտ բոլոր միջոցները. Արմեն Գրիգորյան 2019, 11 հոկտեմբերի, https://infocom.am

[25] Sanamyan Emil. Middle East Crisis and Armenia's Demography 2012, June, https://theanalyticon.com. Հայաստանի Մէջ Արդէն Փոխուած Է Գործատուներու Վերաբերումը Սուրիահայերու Նկատմամբ. Հրանոյշ Յակոբեան 2015, 9 Նոյեմբեր, http://www.ragmamoul.net

նացման շրջաններում՝ Ամմանում և հյուսիսային նահանգներ Իրբիդում և Մաֆրաքում: Ի դեպ, Մաֆրաքում առկա էր Հորդանանում սիրիացի փախստականների ամենից մեծ ճամբարը: 2014 թ. հիշյալ երեք տարածքում կենտրոնացած էր երկրում առկա 628.000 գաղթականների ¾ մասը: Եթե 2011 թ. գործազրկությունն այդ շրջաններում 14,5% էր, ապա 2014 թ.՝ 22,1%[26]:

Հորդանանը, 2015 թ. հոկտեմբերի տվյալներով, ապաստան է տվել շուրջ 1.400.000 սիրիացի փախստականի, որը երկրի ամբողջ բնակչության 21%-ն էր: Ընդ որում, միայն 9%-ն է տեղավորվել փախստականների համար տրամադրված ճամբարներում, մնացյալը բնակություն է հաստատել գյուղերում[27]:

Այդտեղ գործող միակ հայկական դպրոցը 2018 թ. հուլիսի 21-ին որոշվել է փակել սիրիահայերի տեղաշարժի պատճառով[28]:

ԱՄՆ

Երբ սիրիական պատերազմի ընթացքում հարձակումների թիրախ են սկսել դառնալ նաև հայերն ու հայկական համայնքային հաստատությունները, ամերիկահայ առանձին գործիչներ դիմել են ԱՄՆ-ի համապատասխան կառույցներ՝ երկրի գաղթականական ծրագրերում հայերին հատկացված մասնաբաժնի վերանայման առաջարկով: Վկայակոչելով Հալեպում հայկական Սբ Գևորգ եկեղեցու ռմբահարումը, ինչպես նաև Բեյրութ-Հալեպ երթուղու ավտոբուսից յոթ հայերի առևանգումը՝ Խաղաղության կորպուս/ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ծրագրի տնօրենի երբեմնի օգնական, հանրահայտ իրավաբան Վարդգես Եղիայանը և Փասադենայի նախկին քաղաքապետ Ռիլյամ Պապարյանը 2012 թ. հոկտեմբերի 12-ին դիմել էին ԱՄՆ-ի պետքարտուղար Հիլարի Քլինթոնին և Հայրենիքի անվտանգության բաժանմունքի քարտուղար Ջանեթ Նափոլիտանոյին՝ մտահոգություն արտահայտելով Սիրիայի պաշարված քրիստոնյա քաղաքացիների ճակատագրի վերաբերյալ. «Բախումներն այնտեղ [Սիրիայում] ընդգրկել են երկրի խոշոր շրջանները՝ քրիստոնյաների առանց այն էլ անհուսալի դրությունը դարձնելով անտանելի: Ահա թե ինչու, տեղյակ լինելով օրենսդրությանը, ներառյալ՝ «Ժամանակավոր պաշտպանվածության կարգավիճակը» սիրիահայ ազգայինների վրա տարածելու փաստին, գտնում ենք, որ այն բավարար չէ դիմակայելու վատթարացող մարդասիրական իրադրությանը, որի համար մենք դիմում ենք Միացյալ Նահանգների կառավարություն»: Սիրիայի հայերին «Ազատ վիզա» տրամադրելու մասին հայտարարելուց շատ չանցած՝ նրանց անհաշիվ բարեկամներն ու հարազատները ԱՄՆ-ից և այլ վայրերից իրենց աջակցությունն են հայտնել կառավարու-

[26] Informally Employed Syrian Refugees, Working Under Harsh Conditions, Further Strain Jordanian Labour Market, http://antitrafficking.am

[27] 2015 OSCE Mediterranean Conference. Common Security in the Mediterranean Region – Challenges and Opportunities. Consolidated Summary. Jordan 2015, 20-21 October, p. 11, https://www.osce.org

[28] Only Armenian school in Jordan about to close 2018, July 21, https://www.panorama.am

թյանը սիրիահայերին ԱՄՆ մուտք գործելու դյուրություն ապահովելու համար: Ու. Պապարյանի հավաստմամբ, պիտի շարունակեն «ճնշում գործադրել ԱՄՆ-ի կառավարության վրա՝ անհապաղ միջոցներ ձեռնարկել քրիստոնյաների տառապանքը Սիրիայում թեթևացնելու»: Եվ արդեն 2012 թ. նոյեմբերի 11-ին ԱՄՆ-ի կառավարությունը, արձագանքելով չորս երևելի ամերիկահայ իրավաբանների, ներառյալ՝ վերոհիշյալների դիմումին, վերանայել է նախկինում «Հայրենիքի անվտանգության» ["Homeland Security"] բաժանմունքի ԱՄՆ Քաղաքացիության և ներգաղթի ծառայության (ՄՆՔՆԾ) [US Citizenship and Immigration Services – USCIS] որոշումը սիրիահայերին սոսկ «Ժամանակավոր պաշտպանվածության կարգավիճակ» ["Temporary Protected Status" – TPS] տրամադրելու մասին և արտոնել է նրանց «Ազատ վիզա» ["Visa Waivers"] շնորհել: Որոշման մեջ նշված էր. «[Սիրիայում] բռնի իշխանափոխության և վատթարացող իրավիճակի պայմաններում ՄՆՔՆԾ-ն հայտարարել է, որ օրինական սիրիացի ազգայինները ...ԱՄՆ-ում կարող են դիմել Ժամանակավոր պաշտպանվածության կարգավիճակի»[29]:

Հետագա տարիներին շարունակվել է նաև զարտուղի ճանապարհներով սիրիահայերի տեղափոխումը ԱՄՆ: Այսպես, ԱՄՆ-ում բնակվող ոմն մեկը որոշակի գումարի դիմաց Նահանգներ փոխադրվելու մտադրություն ունեցող սիրիահայ մի քանի ընտանիքի խոստացել էր ԱՄՆ-ի դեսպանատնից նրանց համար ստանալ տեղափոխման և փախստականի ճամփորդական փաստաթղթեր: Այնպես որ, արդեն 2018 թ. հունվարի սկզբին Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը զգուշացրել է սիրիահայ փախստականներին զերծ մնալ ԱՄՆ ներգաղթելու կեղծ սխեմաների մեջ ներքաշվելու փորձերից[30]:

Շվեդիա

Սիրիայի հայերը Շվեդիա մեկնել են հիմնականում Հայաստանից: Այդուհանդերձ, անգամ Շվեդիայում ամեն ինչ հարթ չի եղել նրանց համար, քանի որ տեղի բնակչության շրջանում ի հայտ է եկել անհանդուրժողականություն ծննդավայրը լքած-հեռացածների նկատմամբ: Այսպես, 2018 թ. կեսերին տեղացիների հետ վիճաբանելիս կոտրված ապակիների և դանակի հարվածներից փողոցում արյունաքամ հոգին է ավանդել Դամասկոսից երիտասարդ Հարութ Լափայանը: Մինչդեռ ծնողները միակ որդուն պատերազմից փրկելու համար որպես ապահով տարածք նրան ուղարկել էին Եվրոպա[31]:

---

[29] US Government Responds to Prominent Armenian-American Lawyers Call upon US Government to Issue Visa Waivers for Syrian-Armenians. Center for Armenian Remembrance. Press Release, 2012, November 12, http://www.centerarnews.com

[30] ՀՀ-ում ԱՄՆ դեսպանությունը զգուշացնում է Հայաստանում գտնվող սիրիացի փախստականներին 2018, 4 հունվարի, https://www.aravot.am

[31] Կայծ Մինասեան 2018, «Հայերը Սուրիոյ Մէջ Ապագայ Չունին», Զրուցեց՝ Սագօ Արեան, «Ժամանակ», Ստամպուլ, 4 Օգոստոս, http://213.232.51.219/content

Բացի այդ, պաշտոնական Շվեդիան բավական խիստ վերաբերմունք ուներ սիրիացի փախստականների նկատմամբ: Ըստ սփյուռքահայ քաղաքագետ Կայծ Մինասյանի՝ «պետական մարմիններ վերջին շրջանին խորթ աչքով սկսած են նայիլ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն ունեցող սուրիահայերուն եւ մի քանի առիթներով յայտարարած են, որ այդ փախստականները դուրս դրուելով կրնան Հայաստան ուղարկուիլ»: Որոշ տվյալներով, 2018 թ. Շվեդիայում բնակվող ավելի քան 40 հայ ընտանիք ենթակա էր երկրից արտաքսման: Դրանք հիմնականում ՀՀ անձնագրեր ունեցող Սիրիայի հայ քաղաքացիներն էին[32]: Թեև 2021 թ. Շվեդիան քաղաքական ապաստան է տրամադրել ընդհանուր առմամբ 12.000 մարդու, այդու հանդերձ, երկրի Բանտային և փորձաշրջանի ծառայության [Prison and Probation Service] հաղորդած նախնական տվյալներով, նույն տարում ծառայության տրամադրած տոմսերով ինքնուրույն հեռացել է արտաքսված 1.222 անձ, հանցագործության մեղադրանքով՝ 132 անձ: Միգրացիոն գործակալությունը [Migration Agency] արտաքսել է 214 մարդու, քանի որ չեն ունեցել բնակության իրավունք, ընդ որում, Հայաստան՝ 20 մարդ, որից 16-ը՝ Հայաստանի, 3-ը՝ Սիրիայի և 1-ը՝ անհայտ երկրի քաղաքացիներ էին[33]:

Շվեդիայի հայ համայնքը տարբեր հարցերով (նյութական, կրթական, փաստաթղթերի ձևակերպում) աջակցություն է ցույց տվել նորեկ սիրիահայերին: Մասնավորապես, հայկական միությունները ձեռնամուխ են եղել շաբաթօրյա կամ կիրակնօրյա դպրոցների աշխատանքների կազմակերպման[34]:

Շվեդիա մեկնած սիրիահայերն արդեն մեկ ու կես տարի անց հայկական եկեղեցի են հիմնել այդտեղ, մինչդեռ տեղի հայկական համայնքը տարիներ շարունակ չէր հաջողում այդ ուղղությամբ[35]:

Ավստրալիա

Սիրիայի հայերն Ավստրալիա են մեկնել հիմնականում Բեյրութում գործող միջազգային կազմակերպությունների միջոցով:

2015 թ. Ավստրալիայի կառավարությունը հայտարարել էր, որ, ի հավելումն ամենամյա շուրջ 13.000-14.000 փախստականի[36], երկիրը պատրաստ է ընդունել նաև տարեկան 12.000 սիրիացի փախստականի[37]:

---

[32] Կայծ Մինասեան. «Հայերը Սուրիոյ Մէջ Ապագայ Չունին», Զրուցեց՝ Սագօ Արեան, «Ժամանակ», Ստամպուլ 2018, 4 Օգոստոս, http://213.232.51.219/content

[33] Nuri Kino. How could an 81-year-old woman be deported alone? 2022, January 25, https://globalbar.se

[34] Շվեդիայի հայկական համայնքն ակնկալում է երկրի կառավարության դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում 2016, 4 փետրվարի, https://armenpress.am

[35] «Սուրիահայերը Շուէտի Մէջ Կրցան Եկեղեցի Ունենալ». Հրանոյշ Յակոբեան 2015, 30 հոկտեմբեր, http://www.ragmamoul.net

[36] Glenn - The Census Expert. The Syrian community in Australia 2015, September 10, https://blog.id.com.au

[37] Syrian Australians, https://en.wikipedia.org

Ճիշտ այդ ժամանակ էլ՝ 2015 թ. հունիսի 22-ից, Ավստրալիայի ՀՅԴ «Դրո» կոմիտեն իր մի շարք կառույցներով (Հայ օգնության միություն, Հայ մարմնակրթական ընդհանուր միություն, «Համազգային» միություն, Հայկական երիտասարդաց դաշնակցություն) իրականացրել է մեկշաբաթյա ակցիա (համացանցի միջոցով ռադիոմարաթոն, աջակցության դիմումներ ձեռնարկատերերին, քաղաքացիներին, բարեգործական համերգ Գալստան կոլեջի [Galstaun] Նալբանդյան դահլիճում ավստրալահայ երգիչների և կատարողների մասնակցությամբ և այլն), որի ընթացքում միջոցներ են հավաքվել օգնելու սիրիահայերին՝ հոգալու նրանց օրավուր խնդիրները[38]:

Ավստրալիայի կառավարությունը 2011-2022 թթ. սիրիական ճգնաժամի հաղթահարման համար հատկացրել է շուրջ 525 մլն դոլար[39]: Ընդ որում, այդ օժանդակությունն զգալի չափերի է հասել սիրիացի փախստական ընդունելու կառավարության որոշումից հետո: Արդեն 2016 թ. նրանց աջակցության համար Ավստրալիան հատկացրել է շուրջ 220 մլն դոլար[40], իսկ 2017-2020 թթ.՝ 249 մլն դոլար[41]:

ՀՅԴ Ավստրալիայի ատենապետ Հայկ Կայսերյանը գտնում է, որ թեև 2011 թ. ի վեր Ավստրալիա ժամանած սիրիահայերի թիվն այնքան էլ մեծ չէ, այդուհանդերձ, նրանք «փայլում են» Գալստան կոլեջում թե՛ որպես աշակերտ, թե՛ որպես անձնակազմի անդամ, ինչպես նաև ակտիվորեն ներգրավված են համայնքային կյանքում՝ եկեղեցու, մամուլի, Հայ երիտասարդաց դաշնակցության (ՀԵԴ), Հայ մարմնակրթական ընդհանուր միության (ՀՄԸՄ), Հայ օգնության միության (ՀՕՄ) և այլ կառույցներում[42]:

Ավստրալահայ կազմակերպությունները (ՀՅԴ, ՀՕՄ, ՀՄԸՄ, Համազգային, ՀԵԴ, Հայ ազգային կոմիտե, հայ մամուլ) 2016 թ. սեպտեմբերի 19-26-ը հայտարարել են Սիրիահայերի համար նպաստընկալ շաբաթ [Benefit Week for Syrian-Armenians]: Հանգանակված օգնությունն ուղարկվել է Սիրիայում, մասնավորապես՝ Հալեպում մնացած հայերին ի նպաստ[43]:

Ավստրալիայի հայաշատ քաղաքներից բացի, սիրիահայերը հաստատվել են նաև երկրի հյուսիսարևելյան Քուինզլենդ նահանգի մայրաքաղաք Բրիսբենում, որը մայրցամաքի երրորդ խոշոր քաղաքն է[44]:

---

[38] Ավստրալիայի հայերը միջոցներ կհավաքեն՝ Սիրիայի հայերին օգնելու համար 2015, 14 հունիսի, https://news.am

[39] Syria Humanitarian Response, https://www.dfat.gov.au

[40] Syrian Australians, https://en.wikipedia.org

[41] Syria Humanitarian Response, https://www.dfat.gov.au

[42] Kayserian Haig. Community Appeal: How Armenian-Australians Can Help Our Brothers and Sisters in Syria 2016, September 20, https://old.hayernaysor.am

[43] Kayserian Haig. Community Appeal: How Armenian-Australians Can Help Our Brothers and Sisters in Syria 2016, September 20, https://old.hayernaysor.am

[44] Armenian Cooking with Tania 2020, November 10, https://www.multiculturalaustralia.org.au

Ավստրալիայի 2016 թ. մարդահամարի տվյալներով՝ երկրում առկա էր տարբեր ծագման շուրջ 300 ներկայացուցիչ, որից 19.963-ը Սիրիայից էր: Հայերը կազմել են Սիրիայից ժամանածների 7%-ը, ընդ որում՝ տանը հայերեն խոսողները՝ 6,5% կամ 991 անձ[45]:

Ընդհանուր առմամբ, 2015 թ. հուլիսի 1-ից մինչև 2017 թ. դեկտեմբերի 31-ը Սիրիայից մարդասիրական ճանապարհով Ավստրալիա է մուտք գործել 11.354 մարդ, ընդ որում՝ 790 հայ[46]:

Եզրակացություններ

Ամփոփելով նշենք, որ ՆԱՏՕ-ի երկրները, Սիրիայում սանձազերծելով և իրագործելով կործանարար պատերազմ, միաժամանակ ՄԱԿ-ի կազմում գործող Ներգաղթի միջազգային գրասենյակի և միջազգային այլ կառույցների միջոցով իրագործել են սիրիացիների, մասնավորապես՝ նաև հայերի տեղահանությունն ու ցրումը աշխարհի տարբեր երկրներ: Ցավալիորեն, սփյուռքյան առանձին կառույցներ գործակցել են հիշյալ միջազգային հաստատությունների հետ՝ դրանով իսկ խոչընդոտելով սիրիահայերի լիարժեք ներգաղթը Հայաստան, իսկ առանձին դեպքերում նույնիսկ նպաստելով Հայաստանից նրանց արտագաղթին:

Մինչդեռ ակնկալվում էր, որ գոնե հետխորհրդային անկախ Հայաստանում սփյուռքահայ կառույցները միասնականություն կդրսևորեին, որ տևական պատերազմի հետևանքով ավերվող Սիրիայից մեր հայրենակիցների տեղափոխումն ու բնակեցումն իրականանար ինքնիշխան ՀՀ-ում և ԱՀ (ԼՂՀ)-ում՝ տեղական իշխանությունների սատարող գործունեությանը զուգընթաց, այլ ոչ թե ԱՄՆ-ում, Կանադայում, Շվեդիայում, Ավստրալիայում և այլուր, ինչպես նաև նյութական աջակցություն ցուցաբերվեր ՀՀ կառավարության ջանքերին՝ արտերկրի մեր հայրենակիցներին Հայրենիք տեղափոխելու, տեղավորելու և նրանց զբաղվածությունն ապահովելու ուղղությամբ, այլ ոչ թե օտար կառույցներին՝ հայերին արտերկրում հաստատելու համար:

Տարբեր երկրներում հաստատված սիրիահայ փախստականների մի մասն արագորեն ինտեգրվել է նոր միջավայրին՝ ակտիվ մասնակցություն ունենալով տեղերում հայկական համայնքային կյանքի աշխուժացմանը, նաև դրա կազմակերպմանը: Իսկ մյուս մասը, չընտելանալով նոր պայմաններին և չուզենալով իր երեխաներին կորցնել օտարության արագահոս համայնակուլ ձուլարանում, հեռավոր երկրներից վերադարձել է Հայաստան:

Գրականություն

Ավագյան Ք. 2022, Սիրիահայերի արտագաղթը Կանադա (2013-2016 թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, N 3, էջ 63-80:

[45] Syria-born Community Information Summary 2018, 2.
[46] Collins 2018, 10-11.

Ավստրալիայի հայերը միջոցներ կհավաքեն՝ Սիրիայի հայերին օգնելու համար, 2015, 14 հունիսի, https://news.am (ներբեռնման օրը՝ 7.03.2023):

Արզումանյան Վարդուհի, Ուրախ եմ արձանագրել, որ կանադահայերի մեջ գտնվեցին մարդիկ, ովքեր հաշվեհամարներ բացեցին հայաստանյան բանկերում. Հրանուշ Հակոբյան, 2017, 14 փետրվարի, http://noranor.ca (ներբեռնման օրը՝ 7.03.2023):

Գալստյան Հրանտ, Սիրիահայեր. վերադարձ, որ չէին նախատեսել, 2015, 3 հունիսի, http://hetq.am (ներբեռնման օրը՝ 7.03.2023):

Թուրք վերլուծաբան. «1915-ի հայերի թոռները սիրիացիների անվան տակ Թուրքիա են վերադառնում», 2018, 15 նոյեմբերի, https://www.ermenihaber.am (ներբեռնման օրը՝ 7.03.2023):

Լիբանանում սիրիահայերի շրջանում Սիրիա վերադառնալու տրամադրություններ են նկատվում 2017, 27 հունվարի, https://armenpress.am (ներբեռնման օրը՝ 7.03.2023):

Կայծ Մինասեան. «Հայերը Սուրիոյ Մէջ Ապագայ Չունին», Զրուցեց՝ Սագօ Արեան, «Ժամանակ», Ստամպուլ 2018, 4 Օգոստոս, http://213.232.51.219/content (ներբեռնման օրը՝ 7.03.2023):

Հայաստանի Մէջ Արդէն Փոխուած Է Գործատուներու Վերաբերումը Սուրիահայերու Նկատմամբ. Հրանոյշ Յակոբեան 2015, 9 Նոյեմբեր, http://www.ragmamoul.net (ներբեռնման օրը՝ 7.03.2023):

ՀՀ-ում ԱՄՆ դեսպանությունը զգուշացնում է Հայաստանում գտնվող սիրիացի փախստականներին 2018, 4 հունվարի, https://www.aravot.am (ներբեռնման օրը՝ 7.03.2023):

Յակոբեան Սոֆիա, Գառնուկը Վստահիլ Գայլերուն Կամ Ինչպէս Կ'ապրին Սուրիացի Փախստականները Թուրքիոյ Մէջ 2015, 22 Դեկտեմբեր, http://ragmamoul.net (ներբեռնման օրը՝ 7.03.2023):

Շահան Քանդահարյան. Հայաստան է տեղափոխվել մոտ տաս հազար սիրիահայ, Լիբանան՝ մոտ ութ հազար 2013, 11 հոկտեմբերի, https://news.am (ներբեռնման օրը՝ 7.03.2023):

Շվեդիայի հայկական համայնքն ակնկալում է երկրի կառավարության դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում 2016, 4 փետրվարի, https://armenpress.am (ներբեռնման օրը՝ 7.03.2023):

Սիրիահայերի մասին՝ վիճակագրության լեզվով. Մեր հյուրն է «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ–ի նախագահ Լենա Հալաճյանը 2017, 27 հունվարի, http://nyut.am (ներբեռնման օրը՝ 7.03.2023):

Սիրիայի հայերը եթե ցանկանան Հայաստան գալ, կձեռնարկվեն անհրաժեշտ բոլոր միջոցները. Արմեն Գրիգորյան 2019, 11 հոկտեմբերի, https://infocom.am (ներբեռնման օրը՝ 7.03.2023):

Սիրիայի հայերը տեղափոխվում են պատմական հայրենիք. The Economist-ի անդրադարձը 2017, 27 հունիսի, http://armenpress.am (ներբեռնման օրը՝ 7.03.2023):

«Սուրիահայերը Շուէտի Մէջ Կրցան Եկեղեցի Ունենալ». Հրանոյշ Յակոբեան 2015, 30 Հոկտեմբեր, http://www.ragmamoul.net (ներբեռնման օրը՝ 7.03.2023):

Սուրիայէն Հեռացած Է 17-18 Հազար Հայ 2013, 1 Յուլիս, http://asbarez.com (ներբեռնման օրը՝ 7.03.2023):

Armenian Cooking with Tania 2020, November 10, https://www.multiculturalaustralia.org.au (ներբեռնման օրը՝ 7.03.2023).

Collins Jock, Reid Carol, Groutsis Dimitria, Watson Katherine, Derya Ozkul. Syrian and Iraqi Refugee Settlement in Australia. Working Paper № 1. Sydney 2018, March, 31 p.

Disaster and Emergency Management Presidency, https://en.wikipedia.org (ներբեռնման օրը՝ 7.03.2023).

Glenn - The Census Expert. The Syrian community in Australia 2015, September 10, https://blog.id.com.au (ներբեռնման օրը՝ 7.03.2023).

Halajian Daron. Toronto Armenian Community Resettles Syrian Refugees 2015, December 25, http://armenianweekly.com (ներբեռնման օրը՝ 7.03.2023).

Hurtas Sibel. Why Syrian Armenians are avoiding Turkey 2018, November 20, https://www.civilnet.am (ներբեռնման օրը՝ 7.03.2023).

Informally Employed Syrian Refugees, Working Under Harsh Conditions, Further Strain Jordanian Labour Market, http://antitrafficking.am (ներբեռնման օրը՝ 7.03.2023).

IS Kills Kobane Armenian in front of His 14-Year-Old Son 2015, July 3, http://www.panarmenian.net (ներբեռնման օրը՝ 7.03.2023).

Kayserian Haig. Community Appeal: How Armenian-Australians Can Help Our Brothers and Sisters in Syria 2016, September 20, https://old.hayernaysor.am (ներբեռնման օրը՝ 7.03.2023).

Kikano Faten, Fauveaud Gabriel, Lizarralde Gonzalo. Policies of Exclusion: The Case of Syrian. Refugees in Lebanon. Oxford University Press, Journal of Refugee Studies 2021, Vol. 34, No. 1, 31 p.

Kukrety Nupur. Poverty, Inequality and Social Protection in Lebanon. Beirut: AUB, IFIPPIA, OXFAM 2016, January, 48 p.

Lieberman Amy. Lessons Learned as Syrian-Armenian Refugees Return to Armenia 2017, July 25, https://www.devex.com (ներբեռնման օրը՝ 7.03.2023).

Madoré Marianne. The Peaceful Settlement of Syrian Refugees in the Eastern Suburbs of Beirut: Understanding the Causes of Social Stability. Beirut: Civil Society Knowledge Center, Lebanon Support 2016, 23 p.

Nuri Kino. How could an 81-year-old woman be deported alone? 2022, January 25, https://globalbar.se (ներբեռնման օրը՝ 7.03.2023).

Only Armenian School in Jordan About to Close 2018, July 21, https://www.panorama.am (ներբեռնման օրը՝ 7.03.2023).

Report by OSCE Special Representative and Co-ordinator for Combating Trafficking in Human Beings, Madina Jarbussynova, Following Her Official Visit to Turkey (9-13 May, 2016) 2017, January 19, p. 8.

Sanamyan Emil. Middle East Crisis and Armenia's Demography 2012, June, https://theanalyticon.com (ներբեռնման օրը՝ 7.03.2023).

17-18 Thousand Armenians Left Syria in Two Years 2013, June 28, http://www.lragir.am (ներբեռնման օրը՝ 7.03.2023).

Syria Humanitarian Response, https://www.dfat.gov.au (ներբեռնման օրը՝ 7.03.2023).

Syria-born Community Information Summary. Australian Government. Bureau of Statistics for the Department of Home Affairs. Commonwealth of Australia 2018, 4 p.

Syrian-Armenian Refugees Face Prospect of Not Returning Home 2013, December 26, http://www.dw.de (ներբեռնման օրը՝ 7.03.2023).

Syrian Australians, https://en.wikipedia.org (ներբեռնման օրը՝ 7.03.2023).

Trovato Maria Gabriella, Al-Akl Nayla, Ali Dana. Migration and Development of Displaced Syrians in Lebanon. Advancing Alternative Migration Governance. Deliverable 6.2. Beirut: American University of Beirut 2021, 58 p.

2015 OSCE Mediterranean Conference. Common Security in the Mediterranean Region – Challenges and Opportunities. Consolidated Summary. Jordan 2015, 20-21 October, p. 11.

US Government Responds to Prominent Armenian-American Lawyers Call upon US Government to Issue Visa Waivers for Syrian-Armenians. Center for Armenian Remembrance. Press Release 2012, November 12, http://www.centerarnews.com (ներբեռնման օրը՝ 7.03.2023).

ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺԸ ԱՐՏԵՐԿԻՐ 2012-2018 ԹԹ. (ԼԻԲԱՆԱՆ, ԹՈՒՐՔԻԱ, ՀՈՐԴԱՆԱՆ, ԱՄՆ, ՇՎԵԴԻԱ, ԱՎՍՏՐԱԼԻԱ)

Քնարիկ Ավագյան

Ամփոփում

2011 թ. մարտին ԱՄՆ-ի հովանավորությամբ և ՆԱՏՕ-ի անդամ մյուս երկրների գործակցությամբ իսլամիստ ահաբեկիչների ներխուժումը Սիրիա սպառնալիք է ստեղծել տեղի 2,2 մլն քրիստոնյաների, ներառյալ 80.000 հայերի համար՝ պատճառ դառնալով երկրից նրանց զանգվածաբար արտագաղթի սկզբնավորմանը: Ավելի քան 22.000 սիրիահայ ներգաղթել է Հայաստան: Այդուհանդերձ, շատերը նախընտրել են ժամանակավոր կամ մշտական կարգավիճակով մեկնել այլ երկրներ (Լիբանան, Թուրքիա, Հորդանան, Միացյալ Արաբական Էմիրություններ, ԱՄՆ, Կանադա, Շվեդիա, Ավստրալիա և այլուր): Այդ հարցում նրանց օգնել է ՄԱԿ-ի կազմում գործող Ներգաղթի միջազգային գրասենյակը (ՆՄԳ) [Internatioanl Office of Migration - IOM], որը, ընդհանուր առմամբ, 2011-2020 թթ. հունիս ընկած ժամանակահատվածում կազմակերպել է 100.000 տեղահանված սիրիացիների, այդ թվում՝ սիրիահայերի վերաբնակեցումը աշխարհի 25 երկրներում, ներառյալ՝ Կանադա, Ավստրալիա, եվրոպական պետություններ և այլն:

Բանալի բառեր՝ Սիրիայի պատերազմ, ահաբեկչական ուժեր, տեղաշարժ, Մերձավոր Արևելք, Ամերիկա, Եվրոպա, Ավստրալիա:

МИГРАЦИЯ СИРИЙСКИХ АРМЯН ЗА РУБЕЖ В 2012-2018 ГГ. (ЛИВАН, ТУРЦИЯ, ИОРДАНИЯ, США, ШВЕЦИЯ, АВСТРАЛИЯ)

Кнарик Авакян

Резюме

В марте 2011 г. вторжение исламистских террористов в Сирию, под покровительством США и при содействии других стран НАТО, стало серьезной угрозой для 2,2 млн местных христиан, в том числе 80.000 армян, что привело к их массовой эмиграции. Более 22.000 сирийских армян иммигрировали в Армению. Однако многие предпочли переехать в другие страны (Ливан, Турция, Иордания, Объединенные Арабские Эмираты, США, Канада, Швеция, Австралия и т.д.) на временной и постоянной основе. В этом вопросе им оказало содействие дейст-

вующее в составе ООН Международное бюро иммиграции (МБИ) [International Office of Migration - IOM], с 2011 г. по июнь 2020 г. организовавшее переселение 100.000 перемещенных сирийцев, в том числе сирийских армян, в 25 стран мира, включая Канаду, Австралию, европейские государства и др.

Ключевые слова – война в Сирии, террористические силы, миграция, Ближний Восток, Америка, Европа, Австралия.

THE MIGRATION OF SYRIAN ARMENIANS ABROAD IN 2012-2018 (LEBANON, TURKEY, JORDAN, USA, SWEDEN, AUSTRALIA)

Knarik Avagyan

Abstract

In March 2011, the invasion of Islamic terrorists in Syria, under the patronage of the USA and with the cooperation of other NATO member countries, created a threat for 2.2 million local Christians, including 80,000 Armenians, causing their mass emigration. More than 22,000 Syrian-Armenians immigrated to Armenia. However, many chose to go to other countries (Lebanon, Turkey, Jordan, United Arab Emirates, USA, Canada, Sweden, Australia and elsewhere) on a temporary or permanent basis. In that matter, they receive the support of International Office of Migration (IOM), operating within UN, which in general, starting from 2011 to June 2020, has organized the resettlement of 100,000 displaced Syrians, also Syrian Armenians, in 25 countries of the world, including Canada, Australia, European states, etc.

Key words – War in Syria, terrorist forces, migration, Middle East, America, Europe, Australia.

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 415-442 ԹԹ.

Արգիշտի Վարդանյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4
Էլ. հասցե՝ argishtiv@list.ru
Հոդվածը ներկայացվել է 10.04.2023, գրախոսվել է 24.11.2023, ընդունվել է տպագրության 11.12.2023
ORCID: 0009-0006-5146-0463
DOI: 10.53548/0320-8117-2023.3-75

Ներածություն

IV դ. 80-ական թվականների առաջին կեսին սկսված հռոմեա-պարսկական բանակցություններն ավարտվեցին 387 թ. Տիզբոնի դաշնագրի կնքմամբ, որով իրավաբանորեն ամրագրվեց Մեծ Հայքի թագավորության բաժանումը Հռոմի և Պարսկաստանի միջև[1]: Դրանից կարճ ժամանակ անց՝ 388 թ., Հայաստանի նախ արևմտյան, ապա՝ 428 թ. արևելյան մասերում վերացվեցին Արշակունյաց թագավորությունները, որին Սասանյան տիրակալները ձգտում էին հասնել կառավարման հենց սկզբից: Նշենք, որ բաժանումից հետո թագավորական իշխանությունները, հատկապես Արշակ Գ-ի օրոք, ձևական բնույթ էին կրում: Եթե արևմտյան Հայաստանում Հռոմեական կայսրությունն Արշակ Գ-ի մահից հետո այլևս թագավոր չնշանակեց, ապա արևելահայկական թագավորությունում, որն անհամեմատ ավելի հզոր էր, պարսից արքունիքը դեռևս հանդուրժում էր հայոց թագավորության գոյությունը:

Սպարապետության խնդիրը 415-428 թթ.

Վռամշապուհ արքայի (388-414 թթ.) մահից հետո վերստին գահ բարձրացած Խոսրով Վերջինի կառավարումը տևեց մոտ մեկ տարի[2]: Վերջինիս մահով արևելյան Հայաստանը զրկվեց եռանդուն գահակալից[3]: Նույն թվա-

[1] Տե՛ս Գիւտերբոգ 1914, 16-17: Մեծ Հայքի առաջին բաժանման թվականի վերաբերյալ ուսումնասիրողները հայտնել են տարբեր տեսակետներ, տե՛ս Մանանդյան 1978, 239, ծան. 3, 4: Հայ ժողովրդի պատմություն 1984, 112, ծան. 2:

[2] Տե՛ս Մովսէս Խորենացի 1991, 330:

[3] Իր կառավարման առաջին շրջանում՝ 388 թ., օգտագործելով քաղաքական բարենպաստ իրավիճակը, Խոսրով Արշակունին կարողացավ արևելահայկական թագավորությանը միացնել Հայաստանի արևմտյան հատվածը՝ հարկեր վճարելով թե՛ պարսիկներին, թե՛ հռոմեացիներին, տե՛ս Մովսէս Խորենացի 1991, 319-320, և կարճ ժամանակահատված դառնալ վերամիավորված Մեծ Հայքի թագավոր: Սակայն 408 թ. Թեոդոս Փոքր կայսրը (408-450 թթ.) Վռամշապուհից հետ պահանջեց իր «մասնաբաժինը»: Վերջինս առանց դիմադրության հանձնեց Հայաստանի արևմտյան մասը, և այն վերջնականապես ընկավ բյուզանդական տիրապետության տակ, տե՛ս Մովսէս Խորենացի 1991, 328:

կանին մահացավ նաև սպարապետ[4] Համազասպ Մամիկոնյանը, որը, ըստ Թովմա Արծրունու, զբաղեցնում էր «զմարզպանութիւն և զզօրավարութիւն Հայոց»[5] պաշտոնը: Համազասպ Մամիկոնյանի[6] մահից հետո առանց որևէ դիմադրության պարսից արքունիքը հայոց գահը տվեց պարսից արքայազն Շապուհին (416-420 թթ.): Մովսես Խորենացին, որն անբարյացակամ վերաբերմունք ունի բոլոր Մամիկոնյանների նկատմամբ, անկախ այն հանգամանքից՝ այդ գործիչը հայամետ է, թե օտարամետ, այդ մասով նշում է. «Քանզի մեռեալ Համազասպայ, և ի սգի մեծի եղեալ Սահակայ՝ ոչ ոք ի միաբանութիւն հաւաքեց զգունդս Հայոց: Վասն որոյ դիւրամուտ եղև յաշխարհս Շապուհ»[7]: Պատմահայրն ակամա հաղորդում է, որ եթե կենդանի լիներ Համազասպ Մամիկոնյանը, չէր կարող Արշակունյաց գահն այդքան դյուրին բաժին դառնար պարսից գահի ժառանգորդին, իսկ մյուս նախարարները, ինչպես մեծ մասամբ նման դեպքերում, ոչինչ չձեռնարկեցին՝ համակերպվելով պարսից դրածոյի տիրապետությանը[8]: Համազասպ Մամիկոնյանն ամուսնացած էր Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևի (388-439 թթ.) դստեր՝ Սահականուշի հետ, և, Ղազար Փարպեցու հաղորդմամբ, այդ ամուսնությունից «ծնաւ ի Համազասպայ երիս արու որդիս. զսուրբ Վարդան և զսուրբն Հմայեակ և զերանելին Համազասպեան»[9]:

Նախ, անդրադառնալով Վարդան Մամիկոնյանի գործունեության վաղ շրջանին, նշենք, որ նրան հոր մահից հետո պարսից արքունիքը կամ Շապուհը չնշանակեց հայոց թագավորության սպարապետ, թեպետ այդ գործակալությունը նախորդ՝ IV դ. և V դ. սկզբին, բացի մեկ-երկու կարճատև դեպքերից (Բատ Սահառունու և Սահակ Բագրատունու պարագայում), գլխավորում էին Մամիկոնյանները, և ապագա սպարապետը կարող էր ստանձնել այդ գործակալությունը, քանի որ այդ ժամանակ պահանջված տարիքի էր հասել՝ լինելով 25-27 տարեկան[10]: Ուսումնասիրողների ուշադրությունից վրիպել է այն փաստը, որ Մամիկոնյան երիտասարդ իշխանին սպարապետ չնշանակելը պայմանավորված էր այն հանգամանքով, որ պարսկամետ գործիչները, Շապուհի գահ բարձրանալով, գերակշռություն էին ստացել Հայաստանի ռազմաքաղաքական կյանքում և ավանդաբար հռոմեական կողմնորոշում ունե-

[4] Սպարապետ (պահլավերեն spāhbet), նշանակում է ռազմական վարչակազմի ղեկավար, տե՛ս Хуршудян 2003, 164:

[5] Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն 1985, 116:

[6] Համազասպ Մամիկոնյանի գործունեության մասին տե՛ս Վարդանյան 2021, 25-30:

[7] Մովսէս Խորենացի 1991, 330: Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն 1985, 116:

[8] Տե՛ս Վարդանյան 2021, 30:

[9] Ղազարայ Փարպեցւոյ 1982, 84:

[10] Սկզբնաղբյուրներում հստակ տեղեկություններ չլինելու պատճառով ուսումնասիրողները Վարդան Մամիկոնյանի ծննդյան տարբեր թվականներ են նշում: Հ. Արմենը սպարապետի ծննդյան տարի է նշում 387 թ., տե՛ս Արմէն 2021, 101: Իսկ Մ. Կատվալյանը՝ 388-391 թթ. ընկած ժամանակահատվածը, տե՛ս Կատվալյան 1985, 314:

ցող Մամիկոնյաններին և մասնավորապես կաթողիկոս Սահակ Պարթևի թոռանը կզրկեին նման առանցքային պաշտոն զբաղեցնելուց:

Մ. Օրմանյանը և Հ. Արմենը սպարապետության պաշտոնում որպես Համազասպ Մամիկոնյանի հաջորդ հիշատակում են Գազավոն Կամսարականի որդի Հրահատին, որին իբր թե Շապուհը նշանակեց սպարապետ[11]: Սակայն Մովսես Խորենացին, նկարագրելով վերը նշված դեպքերը և Խոսրով արքայի միջնորդությամբ Հրահատի՝ պարսկական գերությունից ազատ արձակումը, միայն փաստում է. «Շապուհ, ընդ իւր ածելով զՀրահատ և զամենայն վտարանդիսն»[12] մուտք գործեց Հայաստան՝ չհիշատակելով Հրահատին որպես սպարապետ: Եթե վերջինս զբաղեցներ այդ պաշտոնը, ապա Կամսարականների նկատմամբ բարեհաճ, իսկ Մամիկոնյանների մեծ ու փոքր գործերը մոռացության մատնող Պատմահայրը կհիշատակեր Հրահատի սպարապետ լինելը: Վերջինիս կողմից այդ գործակալությունը զբաղեցնելուն չի հավատում նաև Կամսարականների տոհմի պատմությունն ուսումնասիրած Ս. Կոգյանը, նշելով, որ Անհուշ բերդից[13] ազատվելուց հետո Հրահատը մահացել է Սագաստանում՝ նույնիսկ Հայաստան չհասնելով[14]: Հավանաբար Շապուհի քառամյա կառավարման ժամանակահատվածում սպարապետության գործակալությունը մնացել է թափուր, կամ այն ժամանակավորապես զբաղեցրել է պարսկական կողմնորոշում ունեցող որևէ մեկը, որի վերաբերյալ պատմիչները տեղեկություններ չեն հաղորդում: Սակայն առավել հավաստի է առաջին տեսակետը, քանի որ 421-422 թթ. սկսված պարսկա-բյուզանդական հերթական պատերազմին զուգահեռ՝ 420 թ.[15] արևելյան Հայաստանում բռնկվում է հակապարսկական շարժում՝ Ներսես Ճիճրակացու գլխավորությամբ, որին Մ. Խորենացին հիշատակում է որպես զորագլուխ և ոչ ավելին: Նկարագրելով այդ դեպքերը՝ պատմիչը հավելում է, որ «բազում խռովութեամբ մնացեալ աշխարհս մեր յանիշխանութեան ամս երիս, աւերեալ ամայանայր»[16]: Այսինքն՝ եռամյա անիշխանության շրջանում՝ 420-422 թթ., Հայաստանը, ինչպես գիտենք, չի ունեցել ոչ միայն թագավոր, այլև սպարապետ:

Քննությունը ցույց է տալիս, որ Վարդան Մամիկոնյանը սպարապետության պաշտոնում ոչ միայն չի փոխարինել հորը, այլև նրա վերաբերյալ առաջին տեղեկությունը գտնում ենք ոչ թե ռազմական, այլ լուսավորչական գործունեություն ծավալելիս: Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևը հայ գիրն ու

[11] Տե՛ս Օրմանեան 2001, 378, Արմէն 2021, 189:

[12] Մովսէս Խորենացի 1991, 330:

[13] Անհուշ բերդի մասին տե՛ս Տրաինա 2003, 186-202:

[14] Տե՛ս Կոգեան 1926, 94:

[15] Ս. Երեմյանն ապստամբական շարժման սկիզբ է համարում 419 թ., տե՛ս Հայ ժողովրդի պատմություն 1984, 123: Սակայն Մովսես Խորենացու տեղեկություններից գիտենք, որ ապստամբությունը բռնկվել է պարսից արքա Հազկերտ Ա-ի (399-420 թթ.) մահից, ապա Տիզբոնում Հայոց արքա Շապուհի սպանությունից հետո, որը շտապում էր զբաղեցնելու հոր գահը:

[16] Մովսէս Խորենացի 1991, 332:

դպրությունն արևմտահայաստանի շրջաններում տարածելու նպատակով Մեսրոպ Մաշտոցին և Վարդան Մամիկոնյանին 422 թ.[17] որպես պատգամավորներ ուղարկում է Թեոդոս Բ կայսեր մոտ: Վերջինս ոչ միայն ընդառաջում է կաթողիկոսի խնդրանքին, այլև նրա թոռանը նշանակում է «ստրատելատ զՎարդան զորդի որդիացելոյ քոյ»[18]: Այս առումով իրարամերժ տեղեկություն է հաղորդում Արծրունյաց տան պատմիչ Թովմա Արծրունին՝ նշելով. «հաւատացեալ էր Թէոդոսի կայսեր զսպարապետութիւնն Հայոց Համազասպ Մամիկոնէի և որդւոյ իւրում Վարդանայ»[19]: Ստրատելատ[20] (զորավար) Մամիկոնյան իշխանը ճանաչվել է բյուզանդական Հայաստանի սահմաններում, քանի որ կայսրն իրավասու չէր այդպիսի նշանակում կատարելու ամբողջ Հայաստանի մասով: Հ. Աճառյանը հավատ չի ընծայում Մ. Խորենացու հաղորդմանը՝ նշելով, որ պատմիչը դա արել է բարձրացնելու Վարդանի աստիճանը, քանի որ այդ մասին հաղորդում չունի Կորյունը, և այդ պաշտոնը՝ ստրատելատությունը կամ ընդհանուր զորավարությունը, նա ստացել է կաթողիկոսի մահից հետո[21]: Սակայն չենք կարող համաձայնել նշանավոր հայագետի տեսակետին, քանի որ Մամիկոնյանների հանդեպ թշնամական վերաբերմունքով աչքի ընկնող Մովսես Խորենացին, որը Ն. Ադոնցի դիպուկ բնորոշմամբ՝ ժառանգաբար սպարապետության գործակալությունը զբաղեցնող Մամիկոնյաններին հանել է բարձր աթոռներից և նրանց տեղը նստեցրել իր մեկենաս Բագրատունիներին[22], չէր կարող կեղծ տեղեկություն հաղորդել. լինելով նրանց ժամանակակիցը, բառացի հաղորդում է կաթողիկոսի և կայսեր ամբողջական նամակագրությունը:

Հաջորդ դեպքում արդեն Վարդան Մամիկոնյանին տեսնում ենք դիվանագիտական հանձնարարություն կատարելիս, երբ 422 թ. նա վերստին կա-

[17] Հ. Արմենն առանց հաշվի առնելու Մովսես Խորենացու այն հաղորդումը, որ պատվիրակությունը Բյուզանդիա է մեկնել եռամյա անիշխանությունից հետո, նշում է, որ դեսպանությունը Կ.Պոլիս եկավ 417 թ., տե՛ս Արմէն 2021, 193:

[18] Մովսէս Խորենացի 1991, 335:

[19] Թովմա Արծրունի և Անանուն 1985, 122:

[20] Ստրատելատը հունական տիտղոս է, պատվանուն, նշանակում է զորավար, բանակ վարել, տե՛ս Մալխասեանց 1945, 272, Աճառյան 1979, 280: Փավստոս Բուզանդը ստրատելատությունը (զորավորությունը) և սպարապետությունը նույնացնում է: Անդրադառնալով տարբեր իրադարձություններում Մեծ Հայքի սպարապետ Վաչե Մամիկոնյանի գործունեությանը՝ պատմիչը վերջինիս կոչում է թե՛ սպարապետ, թե՛ զորավար և թե՛ երկուսը միասին, տե՛ս Փաւստոսի Բիւզանդացւոյ 1987, 18, 28, 32, 36, 44: Ս. Մալխասյանցը, քննելով սպարապետության և զորավարության խնդիրը, հաշվի առնելով Փավստոս Բուզանդի հաղորդումն այն մասին, որ Վաչե սպարապետի մահից հետո սպարապետությունը տվեցին նրա մանկահասակ որդուն՝ Արտավազդին, իսկ զորավարությունը՝ Արշավիր Կամսարականին և Անդովկ Սյունուն, իրավամբ կարծում է, որ սպարապետությունը Մամիկոնյան տոհմի ժառանգական իշխանությունն էր, իսկ քանի որ Արտավազդը մանկահասակ էր, չէր կարող զորքն առաջնորդել, զորավարությունը հանձնեցին երկու առաջնակարգ նախարարներին, որոնք Մամիկոնյան տան փեսաներն էին, տե՛ս Փաւստոսի Բիւզանդացւոյ 1987, 424, ծան. 37:

[21] Տե՛ս Աճառյան 1968, 211:

[22] Տե՛ս Ադոնց 2005, 18:

թողիկոսի հանձնարարությամբ Սմբատ Բագրատունու հետ մեկնեց պարսից արքունիք[23]: Արյաց արքա Վռամ Ե-ն (420-439 թթ.), փորձելով սիրաշահել հայ նախարարական դասին, ժամանակավոր զիջման գնալով, համաձայնեց հայոց գահը տալ Վռամշապուհի որդի Արտաշեսին (422-428 թթ.): Սմբատ Բագրատունու և Վարդան Մամիկոնյանի առաքելությունը պարսից արքունիքում այն էր, որ նրանք պետք է ուղեկցեին երիտասարդ թագավորին դեպի հայոց գահը: Այստեղ ևս պատմիչը որևէ խոսք չի ասում Մամիկոնյան իշխանին արևելահայկական թագավորությունում սպարապետի պաշտոնում նշանակելու մասին: Ընդհանրապես Արտաշեսի կառավարման ժամանակահատվածում որևէ մեկը չի հիշատակվում որպես հայոց սպարապետ: Համազասպ Մամիկոնյանի մահից հետո պարսից արքունիքը, դասեր քաղած նախորդ տասնամյակների փորձից, ձեռնպահ էր այդ կարևորագույն գործակալությունը առաջին հերթին Մամիկոնյաններին կամ որևէ հայ ազնվականի վստահելուց, քաջ գիտենալով, որ նրանք ի վերջո վարելու են Հայաստանի շահերից բխող հակապարսկական ուղղվածությամբ քաղաքականություն՝ ինչպես միշտ հրապուրված բյուզանդական սին խոստումներով:

Սպարապետության խնդիրը 428-442 թթ.

Արտաշեսի գահակալության ժամանակահատվածում պատմիչները որևէ տեղեկություն չեն հաղորդում Վարդան Մամիկոնյանի գործունեության վերաբերյալ: Նրան չենք տեսնում նաև թագավորության անկման օրերին, երբ անհեռատես նախարարների և պարսից արքունիքի գործարքի հետևանքով 428 թ. Տիզբոնում գահազրկվեցին թե՛ Արշակունյաց վերջին թագավորը, թե՛ կաթողիկոսը: Մովսես Խորենացու հաղորդումից գիտենք, որ երբ պարսից հազարապետ Սուրեն Պահլավն առաջարկեց իր տոհմակից[24] Հայոց կաթողիկոսին միանալ Արտաշեսի դեմ բողոքող նախարարների խմբին, նրան որպես փոխհատուցում առաջարկվեց թոռանը՝ Վարդանին, իբրև թե. «կարգեսցէ ի վերայ Հայոց զուգահաւասար թագաւորին և համապատիւ»[25]: Սակայն կաթողիկոսը մերժում է առաջարկը, և գործարքը չի կայանում: Պարսկաստանի տիրապետության տակ անցած Հայաստանի արևելյան մասում ստեղծվեց մարզպանական վարչակարգ[26], մարզպան նշանակվեց Վեհմիհրշապուհը: Վերջինս պարսկամետ նախարարների հետ, որոնց թագավորին ու կաթողիկոսին ամբաստանելու համար պարսից արքունիքը պատիվների էր

[23] Տե՛ս Մովսէս Խորենացի 1991, 337: Ըստ Թովմա Արծրունու՝ պատվիրակությունը գլխավորում էր Սահակ կաթողիկոսը, տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն 1985, 116:

[24] 226 թ.՝ Սասանյան հեղաշրջումից հետո, պարթև Արշակունիների ազգակիցների մեծ մասը, այդ թվում՝ Սուրենի պահլավները հնազանդվեցին նոր կառավարողներին, տե՛ս Մովսէս Խորենացի 1991, 209: Դրանց թվին էր պատկանում նաև Սահակ կաթողիկոսի նախահայր Անակի տոհմը, տե՛ս Ագաթանգեղայ 1983, 28, 30: Մովսէս Խորենացի 1991, 211: Ղազարայ Փարպեցւոյ 1982, 54:

[25] Մովսէս Խորենացի 1991, 348:

[26] Մարզպանական համակարգի վերաբերյալ տե՛ս Колесников 1981, 49-56, Хуршудян 2003, 95-109:

արժանացրել, վերադարձան Հայաստան[27]: Պարսկական կողմնորոշում ունեցող նախարարների հաղթանակը լիակատար էր: Թովմա Արծրունու հաղորդումից գիտենք, որ Վարդան Մամիկոնյանը, տեսնելով այս ամենը, զրկված լինելով նաև իր պապի՝ Սահակ Պարթևի հովանավորությունից, քանի որ վերջինիս արգելվել էր վերադառնալ Հայաստան՝ Տիզբոնում մնալով որպես պատվավոր աքսորական, հեռացավ. «զկողմամբքն Մոկաց, ի խոխոմս Տաւրոսական լերինն, ի լեսուրս Ջերմաձորոյ, և բնակէ յամրոցին, որ այժմ Ձռայլ վասն անխեղեղ ամրութեանն գեղջկաբանեն»[28]: Մամիկոնյան իշխանը հասկանում էր, որ պարսից իշխանությունների և մարզպանի համար առիթ էր ստեղծվել դատաստան տեսնելու բյուզանդամետ կողմնորոշման գործիչների՝ առաջին հերթին Մամիկոնյանների հետ, քանի որ նրանք էին գլխավորում այդ ուղղությունը, նաև հանդիսանալով Լուսավորչի տան ժառանգորդները, ուստի. «գնաց յամուրսն Մոկաց, և կայր մնայր ի նախախնամութենէ Աստուծոյ այցելել աշխարհիս Հայոց»[29]: Չբավարարվելով թագավորական իշխանության կործանմամբ՝ պարսկամետ իշխանները՝ Շավասպ Արծրունու գլխավորությամբ, ավելի հեռուն գնացին. ոչ միայն ընդունեցին զրադաշտականություն, այլև Արտաշատում հիմնեցին կրակարան՝ ավերելով եկեղեցիները[30]: Սակայն Վարդան Մամիկոնյանը, իր շուրջը հավաքելով համախոհ իշխաններին, 1200 զինվորով հանկարծակի հարձակումով ջախջախում է պարսից հայ կամակատարներին և մոգերին: Սա ոչ այլ ինչ էր, քան ընդվզում պարսից տիրապետության դեմ, որը, սակայն, կենտրոնական իշխանությունների կողմից մնում է անհետևանք, ավելին՝ իրավիճակը կարճ ժամանակ անց փոխվում է: Սասանյան արքունիքը գնաց փոխզիջումների, և Սահակ կաթողիկոսը քառամյա աքսորից հետո՝ 432 թ., վերադարձավ Հայաստան: Սակայն մինչ այդ նա կարողացավ հազարապետ Սուրեն Պահլավի միջոցով վերահաստատել նախարարական Հայաստանի կարևոր որոշիչներից մեկը՝ «Գահնամակը»[31], ինչպես նաև պարսից արքան համաձայնեց. «զթոռն նորա զՎարդան ստրատելատն ի տէրութիւն իւրոյ ազգին Մամիկոնէից»[32]: Պատմիչի հաղորդման մեջ խոսք չկա Մամիկոնյան իշխանին մարզպանական Հայաս-

[27] Տե՛ս Մովսէս Խորենացի 1991, 346-347:

[28] Թովմա Արծրունի և Անանուն 1985, 122:

[29] Թովմա Արծրունի և Անանուն 1985, 122: Ա. Մուշեղյանը հավատ չի ընծայում պատմիչի հաղորդման ժամանակագրությանը, նշելով, որ Վարդանը Մոկքում մեկուսացել է ոչ թե թագավորության կործանումից հետո, այլ 450 թ. Տիզբոնում առերես ուրացության պատճառով՝ մխիթարություն ընդունելու համար, տե՛ս Մուշեղյան 2013, 50:

[30] Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն 1985, 124: Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ 1996, 60, 62, հմմտ. Վարդանյան 2002, 36-37, Հարությունյան 2016, 87:

[31] Տե՛ս Մովսէս Խորենացի 1991, 352: «Գահնամակը» ստեղծվել է Խոսրով Վերջինի կողմից՝ վավերացնելու 388 թ. Հայաստանի վերամիավորումը և 432 թ. Սահակ կաթողիկոսն այն ներկայացրել է պարսից արքունիքի հաստատմանը, տե՛ս Հարությունյան 1976, 72, 74: «Գահնամակի» վերջին քննությունը տե՛ս Յակոբեան 2011, 485-550:

[32] Մովսէս Խորենացի 1991, 352:

տանի սպարապետ նշանակելու մասին, ինչպես կարծում է Մ. Կատվալյանը, նշելով, որ 432 թ. Վարդանը հաստատվել է հայոց զորքերի սպարապետ[33]: Պարսից արքան նրան որևէ պաշտոնի չի նշանակում, այլ միայն վերականգնում է նրա տոհմային իրավունքները[34]: Վարդան Մամիկոնյանը 432 թ. դեռևս հայոց սպարապետ չէր, ուներ միայն ստրատելատի զինվորական աստիճան բյուզանդական Հայաստանի սահմաններում, որը, սակայն, ձևական բնույթ էր կրում, քանի որ թե՛ Հայաստանի քաղաքական ու հոգևոր կենտրոնը, թե՛ Մամիկոնյանների տիրույթների[35] գերակշիռ մասը գտնվում էին արևելյան Հայաստանում, և ստրատելատ կոչումը նա կրում էր որպես պատվանուն՝ չօգտագործելով արևմտյան Հայաստանում: Դրա վառ ապացույցն է այն հանգամանքը, որ Հայաստանի այդ շրջաններում, մասնավորապես ստորին Հայքում, սպարապետ է հիշատակվում Վասակ Մամիկոնյանը. «հաւատարիմ զօրացն Հռոմոց ի սահմանին Պարսից»[36], որն ապագայում դարձավ Վասակ Սյունու համախոհը: Հետագա տարիներին պատմիչների աշխատանքներում Ավարայրի ապագա հերոսի վերաբերյալ տեղեկություններ չկան: Արծրունյաց պատմիչը 440 թ.՝ Մեսրոպ Մաշտոցի մահվան ժամանակ, սպարապետ է հիշատակում «Վահանայ Ամատունոյ, որ էր ի ժամանակին սպարապետ Հայոց»[37]: Սակայն դեպքերի ականատես Կորյունը Վահան Ամատունու վերաբերյալ նշում է. «հազարապետ Հայոց Մեծաց»[38]: Հավանաբար սպարապետ չլինելու պարագայում հազարապետ Վահան Ամատունին ժամանակավորապես կատարել է նաև սպարապետի պարտականությունները, և Թովմա Արծրունին, օգտվելով մեզ անհայտ սկզբնաղբյուրից, արձանագրել է այդ փաստը:

Կարծում ենք, որ Վարդան Մամիկոնյանն այդ պաշտոնը զբաղեցրել է 442 թ., երբ սկսվեց Սասանյան պետության ընդարձակման նոր փուլը: Հազկերտ Բ-ն (439-457 թթ.) Միջին Ասիայում պատերազմ սկսեց քուշանների դեմ՝[39] զորքեր հավաքագրելով քրիստոնյա երկրներից, մասնավորապես մարզպանական Հայաստանից: Այս պատերազմը տևեց Հազկերտ արքայի «չորրորդ ամէ տէրութեանն իւրոյ մինչև յամն մետասաներորդ թագաւորութեանն»[40], այսինքն՝ մինչև 449 թթ.: Պարսկա-քուշանական պատերազմի

[33] Տե՛ս Կատվալյան 1985, 314:

[34] Տե՛ս Դավթյան 2015, 599:

[35] Մամիկոնյանների տիրույթների վերաբերյալ տե՛ս Վարդանյան 2019, 18-33:

[36] Եղիշէ 1989, 188:

[37] Թովմա Արծրունի և Անանուն 1985, 120:

[38] Կորյուն 1941, 92, Եղիշէ 1989, 46:

[39] Քուշանների մեծ մասն ապրում էին Բակտրիայում և սահմանակից նահանգներում, որի կենտրոնն էր Բահլ քաղաքը: Քուշանական պետության սահմանների, պարսկա-քուշանական պատերազմների և հարակից այլ հարցերի մասին տե՛ս Ртвеладзе 2019, 32-87: Բակտրիան ներառում է ժամանակակից Տաջիկստանի մեծ մասը, Ուզբեկստանի հարավային և Աֆղանստանի հյուսիսային շրջանները, տե՛ս История таджикского народа 1963, 27, 355, 377, История народов Узбекистана 1950, 44:

[40] Եղիշէ 1989, 24:

ժամանակ էլ հայկական զորագունդը գլխավորել է սպարապետ Վարդան Մամիկոնյանը, որը մասնակցել է Մարվիռոտի ճակատամարտին[41]: Ղազար Փարպեցու հաղորդմամբ, 452 թ. Տիզբոնի դատավարության մասնակիցները, մասնավորապես պարսկական կողմը, նշում են Վարդան Մամիկոնյանի մասնակցության մասին այդ ճակատամարտին[42]: Քուշանաց ու հոնաց[43] պատերազմի մասնակցության հետևանքով է, որ սպարապետի անունը չի հիշատակվում 444 թ. Բագրևանդ գավառի Շահապիվանի եկեղեցական ժողովում: Այնտեղ ներկայացված են պետական այրեր՝ «Վասակայ Սիւնոյ մարզպանութեանն Հայոց եւ Վահանայ Ամատունոյ հազարապետութեանն, եւ Վրուայ Խոռխոռունւոյ մաղխազութեանն»[44]: Արդեն 450 թ. Տիզբոն կանչված հայ նախարարների շարքում Ղ. Փարպեցին հիշատակում է «ի տոհմէն Մամիկոնէից Վարդան. Հայոց սպարապետ և տէրն Մամիկոնէից»[45]: Փաստենք, որ 450 թ. գարնանը, երբ նախարարները մեկնեցին պարսից դուռը, Վարդանը զբաղեցնում էր այդ գործակալությունը և այն ստացել էր դրանից առաջ:

Եզրակացություններ

Վերը նշված քննությունը ցույց է տալիս, որ Սասանյան արքունիքը երկար ժամանակ՝ 415 թ. Համազասպ Մամիկոնյանի մահից մինչև 440-ական թվականների սկիզբը, Հայաստանի համար այդ կարևորագույն գործակալությունը՝ սպարապետությունը, թողեց թափուր: Սակայն երբ 442 թ. սկսվեց նախ քուշանաց և ապա հոնաց պատերազմը, հայկական հեծելազորի մասնակցությունն անհրաժեշտ էր, և այն պետք է գլխավորեր ռազմական հեղինակություն ունեցող որևէ գործիչ, իսկ այդպիսին Մամիկոնյաններն էին՝ հանձինս Վարդանի, ուստի սպարապետությունը հանձնեցին նրան: Կարելի է փաստել, որ մարզպանական Հայաստանի երկու կարևորագույն պաշտոնները՝ մարզպանությունը և սպարապետությունը, համապատասխանաբար՝ Վասակ Սյունին և Վարդան Մամիկոնյանը, զբաղեցրին միաժամանակ՝ 440 թ. սկզբին, նախ Վասակը՝ 441-ին[46], ապա Վարդանը՝ 442-ին: Սակայն, ինչպես գիտենք, երկու նշանավոր քաղաքական և ռազմական գործիչների ճանապարհները հետագայում բաժանվեցին՝ հայտնվելով տարբեր քաղաքական ճամբարներում:

---

[41] Ս. Երեմյանը Մարվիռոտը նույնացնում է Մերվ քաղաքի հետ՝ տեղադրելով Բահլից արևմուտք, տե՛ս Հայ ժողովրդի պատմություն 1984, 170, ծան. 22:

[42] Տե՛ս Ղազարայ Փարպեցւոյ 1982, 186:

[43] Եղիշեն հոներին հիշատակում է խայլանդուրներ անվամբ, որոնք բնակվում էին Հյուսիսային Կովկասում, տե՛ս Եղիշէ 1989, 24: Եվ հետագայում՝ 450 թ. աշնանը, Վարդան Մամիկոնյանը հակապարսկական դաշինք կնքեց ոչ թե Աթիլլայի ենթակայության տակ գտնվող հոների, այլ խայլանդուր հոների հետ, տե՛ս Манасерян 2011, 73:

[44] Կանոնագիրք Հայոց 1964, 427:

[45] Ղազարայ Փարպեցւոյ 1982, 108:

[46] Տե՛ս Խաչատրյան 2017, 50:

Գրականություն

Ագաթանգեղայ 1983, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, Երևան, ԵՊՀ հրատ., 700 էջ:

Ադոնց Ն. 2005, Քննություն Մովսես Կաղանկատվացու, աշխատասիրել, ծանոթագրել և ներածությունը գրել է Պետրոս Հովհաննիսյանը, Երևան, Մայր աթոռ Էջմիածին, 174 էջ:

Աճառյան Հ. 1968, Հայոց գրերը, Երևան, «Հայաստան» հրատ., 399 էջ:

Աճառյան Հ. 1979, Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Երևան, ԵՊՀ հրատ., 674 էջ:

Արմէն Հ. 2021, Մարզպանը եւ սպարապետը, կազմեց եւ խմբագրեց Յովսէփ Նալպանտեան, Երեւան, «Էդիթ Պրինտ», 338 էջ:

Գիւտերբոգ Կ. 1914, Հռոմէական Հայաստան եւ հռովմէական սատրապութիւնները Դ-Զ դարերուն, գերմաներէնէ թարգմանեց Հ. Մկրտիչ Վ. Նորշուան, Վիեննա, Մխիթարեան տպարան, 94 էջ:

Դավթյան Հ. 2015, Մամիկոնյաններ. առասպել և իրականություն, Երևան, ԴԱԼԼ հրատ., 794 էջ:

Թովմա Արծրունի և Անանուն 1985, Պատմութիւն տանն Արծրունեաց, բնագիրը հրատարակության պատրաստեց, աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Վ. Վարդանյանի, Երևան, ԵՊՀ հրատ., 560 էջ:

Խաչատրյան Հ. 2017, Հայոց մարզպանների կառավարման հարցի շուրջ, Լրաբեր հասարակական գիտությունների, N 1, էջ 48-62:

Կանոնագիրք Հայոց 1964, Ա, աշխատասիրությամբ՝ Վազգեն Հակոբյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 740 էջ:

Կատվալյան Մ. 1985, Վարդան Մամիկոնյան, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 11, Երևան, Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆ կոմբինատ, 718 էջ:

Կոգեան Ս. 1926, Կամսարականները «տեարք Շիրակայ եւ Արշարունեաց» պատմական ուսումնասիրութիւն, Վիեննա, Մխիթարեան տպարան, 179 էջ:

Կորյուն 1941, Վարք Մաշտոցի, բնագիրը ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով ի ձեռն պրոֆ. դ-ր Մանուկ Աբեղյանի, Երևան, տպ. «Հուսաբեր», 126 էջ:

Հարությունյան Բ. 1976, «Գահնամակի» թվագրման հարցի շուրջը, Պատմա-բանասիրական հանդես, N 2, էջ 57-74:

Հարությունյան Բ. 2016, Արծրունյաց իշխանական ընտանիքը հայոց պատմության մեջ, Երևան, «Մեկնարկ», 304 էջ:

Հայ ժողովրդի պատմություն 1984, հ. II, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 691 էջ:

Ղազարայ Փարպեցւոյ 1982, Պատմութիւն Հայոց թուղթ առ Վահան Մամիկոնեան, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, Երևան, ԵՊՀ հրատ., 540 էջ:

Մալխասեանց Ս. 1945, Հայերէն բացատրական բառարան, Երևան, ՀՍՍՌ պետական հրատ., 646 էջ:

Մանանդյան Հ. 1978, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երկեր հ. Բ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 646 էջ:

Մովսէս Խորենացի 1991, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 560 էջ:

Մուշեղյան Ա. 2013, Վարդանանց պատմության հեղինակ Եղիշեն եւ նրա նոր անձնավորության բացահայտումը, Էջմիածին, դեկտեմբեր, էջ 37-54:

Յակոբեան Ա. 2011, «Գահնամակ ազատաց և տանուտէրանց հայոց» եւ «Զաւրանամակ», Բազմավէպ, Վենետիկ, թիւ 3-4, էջ 485-550:

Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ 1996, Պատմութիւն Հայոց, Երևան, ԵՊՀ հրատ., 397 էջ:
Վարդանյան Ա. 2019, Մամիկոնյան նախարարական տան տիրույթները, Հայագիտության հարցեր, N 1, էջ 18-33:
Վարդանյան Ա. 2021, Մամիկոնյանները վերջին Արշակունիների օրոք, Հայագիտության հարցեր, N 2, Երևան, էջ 21-32:
Վարդանյան Վ. 2002, Արծրունիները հայոց պատմության մեջ, Երևան, «Գիտություն», 224 էջ:
Տրաինա Ջ. 2003, Բանտարկության վայր Սասանյան կայսրությունում. Անհուշ բերդ, Պատմա-բանասիրական հանդես, N 1, էջ 186-202:
Փաւստոսի Բիւզանդացւոյ 1987, Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք. Պատկանյանի, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, ԵՊՀ հրատ., 456 էջ:
Օրմանեան Մ. 2001, Ազգապատում, Էջմիածին, տպ. Ս. Էջմիածին, 1780 սյուն:
История народов Узбекистана 1950, т. I, Ташкент, изд. АН УзССР, 448 с.
История таджикского народа 1963, т. I, Москва, изд. Восточной литературы, 595 с.
Колесников А. 1981, О термине «марзбан» в Сасанидском Иране, «Палестинский сборник», вып. 27, Ленинград, с. 49-56.
Манасерян Р. 2011, Европейские гунны и Ближний восток, Ереван, «Лусакн», 80 с.
Ртвеладзе Э. 2019, Кушанское царство: династии, государство, народ, язык, письменность, религии, Ташкент, «Историческая библиотека», 133 с.
Хуршудян Э. 2003, Армения и Сасанидский Иран (историко – культурологическое исследование), Алматы, "Print – S", 474 с.

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 415-442 ԹԹ.

Արգիշտի Վարդանյան

Ամփոփում

Սպարապետ Համազասպ Մամիկոնյանի մահից հետո (415 թ.) տևական ժամանակ թե՛ Արշակունյաց թագավորության վերջին տարիներին, թե՛ մարզպանության սկզբնական շրջանում սպարապետության պաշտոնը մնաց թափուր: Այն չհանձնվեց Վարդան Մամիկոնյանին այն պարզ պատճառով, որ վերջինս ավանդական հռոմեական կողմնորոշում ունեցող Մամիկոնյանների և կաթողիկոս Սահակ Պարթևի հետնորդն էր: 422 թ. Թեոդոս II կայսեր կողմից (408-450 թթ.) Մամիկոնյան իշխանը նշանակվեց արևմտյան Հայաստանի ստրատելատ, իսկ 432 թ. պարսից արքա Վռամ Ե-ն վերականգնում է Վարդան Մամիկոնյանի տոհմային իրավունքները: Եվ միայն 442 թ., երբ սկսվեց պարսկա-քուշանական պատերազմը, հայկական հեծելազորի մասնակցությունն անհրաժեշտ էր, և այն պետք է գլխավորեր ռազմական հեղինակություն ունեցող գործիչ, և այդպիսիք Մամիկոնյաններն էին, ուստի արևելյան Հայաստանի կարևորագույն գործակալությունը՝ սպարապետությունը, 442 թ. հանձնվեց Վարդան Մամիկոնյանին:

Բանալի բառեր՝ Վարդան Մամիկոնյան, Սահակ Պարթև, Մովսես Խորենացի, Թովմա Արծրունի, սպարապետ, ուսումնասիրողներ, պարսից արքունիք:

ДЕЯТЕЛЬНОСТЬ ВАРДАНА МАМИКОНЯНА В 415-442 ГГ.

Аргишти Варданян

Резюме

После смерти спарапета Амазаспа Мамиконяна в 415 г. на протяжении длительного времени – как в последние годы царствования Аршакидов, так и в начальный период марзпанства, должность спарапета оставалась вакантной. Вардан Мамиконян не стал спарапетом по той простой причине, что он придерживался традиционной римской ориентации, как и все Мамиконяны и католикос Саак Партев. В 422 г. князь Мамиконян был назначен императором Феодосием II (408-450 гг.) спарапетом Западной Армении, а в 432 г. персидским царем Врамом V были восстановлены династические права Вардана Мамиконяна. Лишь в 422 г., когда началась персидско-кушанская война, возникла необходимость в армянской коннице, которую должен был возглавить пользующийся авторитетом военный деятель, каковым являлся Мамиконян, посему важнейший институт спарапетства Восточной Армении был передан в 442 г. Вардану Мамиконяну.

Ключевые слова – Вардан Мамиконян, Саак Партев, Мовсес Хоренаци, Товма Арцруни, спарапет, исследователи, персидский двор.

ACTIVITIES OF VARDAN MAMIKONYAN IN 415-442

Argishty Vardanyan

Abstract

After the death of sparapet Hamazasp Mamikonyan in 415 for a long time – both in the last years of the reign of the Arshakids and in the initial period of marzpanutyun, the position of sparapet remained vacant. Vardan Mamikonyan did not become a sparapet for the simple reason that he adhered to the traditional Roman orientation, like all Mamikonyans and Catholicos Sahak Partev. In 422, Prince Mamikonyan was appointed by Emperor Theodosius II (408-450) as the sparapet of Western Armenia, and in 432, the Persian king Vram V restored the dynastic rights of Vardan Mamikonyan. Only in 422, when the Persian-Kushan war began, a need a for the Armenian cavalry rose, which was to be led by an authoritative military figure, which was Mamikonyan, therefore, the most important institution of sparapet in Eastern Armenia was transferred in 442 to Vardan Mamikonyan.

Key words – Vardan Mamikonyan, Sahak Partev, Movses Khorenatsi, Tovma Artsruni, sparapet, researchers, Persian royal court.

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՏՈՒՆԸ, ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ

Մարիամ Հովսեփյան

Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4
Էլ. հասցե՝ mariamhovsepian@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 13.05.2023, գրախոսվել է 16.05.2023, ընդունվել է տպագրության 11.12.2023
ORCID: 0009-0005-9696-4246
DOI: 10.53548/0320-8117-2023.3-86

Ներածություն

Մուդրոսի զինադադարից[1] հետո Հայկական հարցի լուծման համար ստեղծված միջազգային բարենպաստ հանգամանքները մեկ-երկու տարվա ընթացքում փոխվում են ի վնաս հայության նպատակների ու շահերի: Իրադարձությունների հետագա ընթացքը նպաստում է հօգուտ Առաջին աշխարհամարտում պարտված Օսմանյան Թուրքիայի կառավարման համակարգի վերափոխման և վերակազմավորման: Այս համատեքստում կարևոր մի քանի փաստի վրա պետք է ուշադրություն դարձնել.

- Փարիզի խաղաղության կոնֆերանսի երկարատև ընթացքն ու որոշումների կայացման ձգձգումները.
- Սևրի հաշտության պայմանագրի անվավեր մնալը և թեկուզ այդ վիճակով Թուրքիայի մասնատման կամ իրականում բավական փոքր տարածքի վրա դրա պահպանման վտանգի գործոնը.
- պատմության հորձանուտում Մուստաֆա Քեմալի հայտնվելը.
- Միլլի կամ Քեմալական շարժման հաղթարշավը և Ազգային ուխտի հավատամքի հռչակումը.
- Խորհրդային Ռուսաստանի հայտը միջազգային ասպարեզում և մասնավորապես Մուստաֆա Քեմալի հետ բազմակողմանի ու սերտ համագործակցությունը.
- Հայաստանի առաջին հանրապետության անկումը և խորհրդայնացումը.
- Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերը.
- Լոնդոնի և Լոզանի խորհրդաժողովները և Լոզանի պայմանագիրը.
- Թուրքիայի Հանրապետության հռչակումը:

Հայոց ազգային տան առաջարկը Հայկական հարցի համատեքստում

[1] Մուդրոսի զինադադարը կնքվել է 1918 թվականի հոկտեմբերի 30-ին:

Վերլուծական հայացք ձգելով պատմական հիշյալ կարճ ժամանակահատվածում Հայկական հարցին առնչվող բուռն իրադարձությունների ու դեպքերի, հայ-թուրքական, հայ-ռուսական, հայ-եվրոպական փոխհարաբերությունների և շփումների վրա՝ փաստենք, որ, ի տարբերություն դիվանագիտական ոլորտում նորաթուխ հայ բանակցողների անփորձությանն ու անճարակությանը, թուրքական կողմը, հիմնվելով նախորդ դարերի փորձառության վրա, օգտվելով Խորհրդային Ռուսաստանի և Անտանտի երկրների, ինչպես նաև եվրոպական մեծ տերությունների միջև առկա աշխարհաքաղաքական շահերի բախումից, կարողանում է ոչ միայն, ինչպես ժողովրդական առածն է ասում՝ «ջրից չոր դուրս գալ», այլև Լոզանում 1923 թ. հուլիսի 24-ին կնքում է սեփական երկրի համար շահավետ հաշտության պայմանագիր:

Թուրքական իշխանությունները փորձում են մեկընդմիշտ ազատվել Հայկական հարցից: Նրանք դա սկսում են դիտարկել իրենց երկրում ապրող հայկական կրոնական փոքրամասնության ներքին խնդիր, որի լուծման գործին իրավունք չուներ խառնվելու միջազգային հանրությունը: Այս գործընթացների ու փոխված աշխարհաքաղաքական պայմանների հետևանքով «դե ֆակտո» և «դե յուրե» իրավիճակ է փոխվում հայոց պայքարի ակնկալիքների առումով:

Մեծ տերությունները սկզբում հակվում են Արևմտյան Հայաստանի որոշակի փոքր տարածքի վրա կոտորածներից փրկված արևմտահայության համար ազգային օջախ կամ տուն հիմնելու[2] գաղափարին: 1921 թ. փետրվարի 26-ից մարտի 12-ը տեղի ունեցած Լոնդոնի 3-րդ կոնֆերանսում, որտեղ ներկա էին Առաջին աշխարհամարտի մասնակից պետությունները, առաջարկ է արվում վերանայել Սևրի պայմանագրի՝ Հայկական հարցին վերաբերող հոդվածները[3]: Քննարկումներն ավարտվում են Թուրքիայի արևելյան նահանգներում արևմտահայոց օջախ հիմնելու հայտարարությամբ, որի կայացման գործին աջակցելու համար որևէ երկիր պարտավորություն չէր ստանձնում: Թուրքական պատվիրակությունը մերժում է այդ առաջարկը: Այնուհանդերձ, Հայկական տան կամ օջախի ստեղծման հարցը քննարկվում է նաև Լոզանի կոնֆերանսում, որը տեղի է ունենում 1922 թ. նոյեմբերի 20-ից մինչև 1923 թ. հուլիսի 24-ը[4]: Թուրքական կողմը, նկատի ունենալով այն հանգա-

[2] ««Հայկական ազգային օջախի» ստեղծման գաղափարը ծագել է ԱՄՆ հայասերների միջավայրում և դիվանագիտական շրջանառության մեջ դրվել Եվրոպայում», - կարդում ենք ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատարակած «Հայոց պատմություն» բազմահատորյակում (Հայոց պատմություն 2010, 647): «Հայկական ազգային օջախ» դիվանագիտական եզրույթը շրջանառության մեջ է մտել 1921 թվականի փետրվարի 21-ից մարտի 14-ը տեղի ունեցած Լոնդոնի 3-րդ կոնֆերանսում Առաջին աշխարհամարտում դաշնակից տերությունների կողմից, երբ աշխարհաքաղաքական փոփոխված պայմանների պատճառով պետք է վերանայվեին 1920 թվականի օգոստոսի 10-ին կնքված Սևրի հաշտության պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող դրույթները (Հայկական հարց հանրագիտարան 1996, 223):

[3] Հայոց պատմություն 2010, 647:

[4] Հայկական հարց հանրագիտարան 1996, 161:

մանքը, որ փաստորեն Լոնդոնի վերոհիշյալ կոնֆերանսում Սևրի անվավեր մնացած պայմանագիրը Հայկական հարցի առումով մի կողմ էր դրվել, և օդի մեջ առաջարկ էր արվել Հայկական օջախի մասին, այստեղ ևս դրա գոյությունը կտրականապես մերժում է: Սրա հետևանքով հայությունը զրկվում է Սևրի չվավերացված պայմանագրով իր համար սահմանված անկախ պետություն ունենալու հնարավորությունից: Մինչ այդ հիշյալ խնդիրը քննարկվում էր Թուրքիայի ազգային փոքրամասնությունների համատեքստում:

Հայոց ազգային տան հարցի քննարկումներից հետո Լոզանի կոնֆերանսում թուրքական պատվիրակության դիվանագիտական հետևողական և արհեստավարժ աշխատանքի ու գործադրած համառ ջանքերի շնորհիվ առաջիկայում կնքվելիք պայմանագիրը մշակելիս հաշվի չեն առնում Մեծ Բրիտանիայի արտգործնախարար լորդ Ջորջ Նաթանիել Քերզոնի այն առաջարկը, որի համաձայն՝ արևմտահայությունը պետք է ապրեր սեփական տարածքում: ԳԱԱ ՊԻ հրատարակած «Հայոց պատմություն» բազմահատորյակում կարդում ենք հետևյալը. «Քերզոնը մատնացույց էր անում Թուրքիայի ասիական տարածքի որևէ մաս հյուսիսարևելյան նահանգներում կամ Կիլիկիայի ու Սիրիայի հարավարևելյան սահմանագծի վրա»[5]: Անտեսվում է նաև հայերի միասնական պատվիրակության ներկայացրած հուշագիրը, որտեղ ներկայացված էին Հայկական ազգային օջախի երեք տարբերակ: Դրանցից առաջինով նախատեսվում էր այն ստեղծել ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի գծած Հայաստանի տարածքի սահմաններում, երկրորդում առաջարկվում էր ընդարձակել Խորհրդային Հայաստանի տարածքն Արևմտյան Հայաստանի տարածքի որոշ հատվածով և Սև ծով ելք ունենալու հնարավորությամբ, իսկ երրորդ տարբերակով այն պետք է հիմնվեր Կիլիկիայում[6]: Թուրքական պատվիրակությունը մերժում է այն բոլոր առաջարկները, որոնք կարող էին ինչ-որ կերպ վնասել կամ վտանգել իրենց պետության ամբողջականությանը, ինչպես և եթե դրանք հակասում էին Մուստաֆա Քեմալի ու Միլլի շարժման առաջ քաշած և 1920 թ. հունվարի 28-ին Թուրքիայի խորհրդարանում ընդունված ու հաստատված թուրքերի Ազգային ուխտին[7]:

Պետք է նկատի ունենալ, որ բռնությամբ տարբեր ժողովուրդների պատմական տարածքները զավթելով և հիմնելով հսկայածավալ կայսրություն՝ թուրքական իշխանությունները դրանք մինչ օրս համարում են իրենց հայրենի

[5] Հայոց պատմություն 2010, 649:

[6] Հայոց պատմություն 2010, 648:

[7] Մելքոնյան, 68-70: https://artsakhlib.am/wp-content/uploads/2020/09/%D5%8C%D5%B8%D6%82%D5%A2%D5%A5%D5%B6-%D5%84%D5%A5%D5%AC%D6%84%D5%B8%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6-%D4%B9%D5%B8%D6%82%D6%80%D6%84%D5%AB%D5%A1%D5%B5%D5%AB-%D6%84%D6%80%D5%AB%D5%BD%D5%BF%D5%B8%D5%B6%D5%B5%D5%A1-%D6%83%D5%B8%D6%84%D6%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%BD%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%AD%D5%B6%D5%A4%D5%AB%D6%80%D5%A8-%D4%BC%D5%B8%D5%A6%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%A2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D6%81%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%B8%D6%82%D5%B4.pdf

երկիրը: Նրանք ակնկալում են մասնավորապես հայերից, որ երբևիցե չպահանջեն Արևմտյան Հայաստանի գրավյալ տարածքները՝ միտումնավոր մոռանալով դրանց պատկանելությունը հայ ժողովրդին ի սկզբանե, երբ նրանք այդտեղ էին ապրում մարդկության ստեղծման ժամանակներից: Հենց այս մտածողությամբ էին պայմանավորված Լոզանում թուրքական պատվիրակության պնդումները Հայոց ազգային տուն ստեղծելու առաջարկի կապակցությամբ: Պատվիրակության անդամները նշում էին, թե Թուրքիան այնպիսի տարածք չուներ, «որը կարելի լիներ որևէ կերպ անջատել մայր հայրենիքից»[8]: Ասում էին, որ հայերն արդեն ունեն անկախ պետություն՝ Խորհրդային Հայաստանը, որն էլ նրանց համախմբման օջախը պետք է դառնար[9]:

Փաստենք, որ այդ ժամանակահատվածում Թուրքիան կարողանում է իր կամքը թելադրել Հայկական հարցում մեծ տերություններին՝ որոշում կայացնելու խնդրում, որոնք, կրկին ելնելով շահադիտական մոտեցումներից, Լոզանի պայմանագրի մեջ անգամ չեն հիշատակում հայերի ու նրանց իրավունքների մասին[10]: Լոզանի կոնֆերանսից և պայմանագիրը կնքելուց հետո արդեն Թուրքիայի Հանրապետության համապատասխան կառույցները մի քանի տարվա ընթացքում ընդունում են օրենքներ, որոնցով ոչ միայն փորձում են օրինականացնել հայրենի բնակավայրերից տեղահանված արևմտահայությունից խլված նրանց ողջ նյութական հարստության թալանը, այլև անհնար են դարձնում նրանց վերադարձն իրենց ընօրրան հայրենիք:

Թուրքական իշխանությունները կայացնում են ապօրինի որոշումներ՝ փորձելով թաքցնել մարդկության դեմ գործած սեփական հանցագործության չջնջվող հետքերը: 1923 թ. սեպտեմբերին «Հաշվառման մասին» օրենքում կատարված փոփոխության համաձայն՝ արևելյան նահանգներից և Կիլիկիայից արտագաղթած արևմտահայերին արգելվում էր վերադառնալ Թուրքիա[11]: «Թուրքիայի Հանրապետության պատմություն» բուհական դասագրքից տեղեկանում ենք. «1927 թ. մայիսին հրապարակվեց կառավարության օրենքը, համաձայն որի՝ Թուրքիայի քաղաքացիություն չէին ստանում բոլոր նրանք, ովքեր չեն եղել երկրի տարածքում «ազատագրական պայքարի» տարիներին, ինչպես նաև արտասահմանում եղածները՝ 1923-ից (Լոզան) մինչև սույն օրենքի (1927 թ. մայիս) ընդունումը: Այս որոշումները իրավական առումով չեզոքացրին հայերի պահանջները սեփականության նկատմամբ: Հայ փախստա-

[8] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923) 1972, 749:

[9] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923) 1972, 749:

[10] Հայոց պատմություն 2010, 649:

[11] Թուրքիայի Հանրապետության պատմություն 2014, 78:

կանների Կենտրոնական կոմիտեի միջոցով Ազգերի լիգային ուղղված բողոքներն անարդյունք էին, դրանք մերժվում էին Թուրքիայի կողմից»[12]:

Հայոց ազգային տան առաջարկի և Հայկական հարցի վերաբերյալ քննարկումները ժամանակի պոլսահայ պարբերականների էջերում

Դիտարժան էին բարձր վարկանիշ ունեցող երկու օրաթերթերի՝ ՀՅԴ Արևմտյան բյուրոյի «Ազատամարտ» պաշտոնաթերթի իրավահաջորդ, բայց արդեն մամուլի ոչ պաշտոնական ներկայացուցիչ «Ճակատամարտի» և ռամկավարների ոչ պաշտոնական մամուլի օրգան «Ժողովուրդի ձայնը. Ժամանակի» հրապարակումները: Պետք է ասել, որ դրանք գրեթե ամենօրյա կտրվածքով անդրադարձել են վերոհիշյալ խնդիրներին: Ընդ որում, երկու պարբերականն էլ խիստ մտահոգվում էին արևմտահայության հետագա ճակատագրին առնչվող իրադարձությունների ընթացքով: Լոնդոնի, Լոզանի խորհրդաժողովներում Հայկական հարցի վերաբերյալ ծավալված բանավեճերն առաջին էջերում էին տեղ գտնում: Տպագրում էին հայանպաստ ելույթներ, Հայոց ազգային տուն հիմնելու օգտին բարձրաձայնող խորհրդաժողովականների հետ հարցազրույցների թարգմանություններ արտասահմանյան թերթերից: Հրապարակումների մեջ տեղ էին հատկացնում նաև թուրքական պատվիրակությունների և Քեմալական շարժման ակնառու ներկայացուցիչների, Կ. Պոլսի թուրքական պարբերականների տեսակետներն այդ առնչությամբ, որոնք զետեղում էին առանց մեկնաբանությունների:

1921-1923 թթ. «Ճակատամարտը» և «Ժողովուրդի ձայնը. Ժամանակն» իրենց առաջնորդողների ու խմբագրականների համար բավական հաճախ էին թեմա դարձնում ողջ հայությանն անհանգստացնող այդ ճակատագրական խնդիրների լուսաբանումը: Կան նաև բազմաթիվ վերլուծականներ, որոնցում արտահայտված են խմբագրության անդամների սպասումներն ու ակնկալիքները մասնավորապես մեծ տերություններից: Ընդ որում, հարկ է նշել հետևյալը.

- «Ճակատամարտը» ու «Ժողովուրդի ձայնը. Ժամանակը» գրեթե համակարծիք էին հայության հետագա ճակատագրին վերաբերող հարցերում՝ հասկանալով, որ թուրքական իշխանությունների նպատակը արևմտահայության փրկված բեկորներին հայրենի երկրից դուրս մղելն ու առանց անկյուն թողնելն էր.
- ռամկավարների ոչ պաշտոնական մամուլի օրգանը Հայաստանի առաջին հանրապետության և հայոց կարճատև պետականության կորստի պատճառների վերլուծությամբ աչքի ընկնող տարբեր հոդվածներում շարունակ մեղադրում էր ՀՅԴ պետական այրերին՝ մասնավորապես Ալեքսանդրապոլի պայմանագիրը կնքելու և Սիմոն Վրացյանի կողմից Մուստաֆա Քեմա-

[12] Թուրքիայի Հանրապետության պատմություն 2014, 78:

լին օգնության խնդրանքով դիմելու կապակցությամբ, ընդ որում, այդ մեղադրանքները բավական կոշտ էին, և հաճախ լրագրողների կողմից հաշվի չէին առնվում պատմական կոնկրետ և հայության համար խիստ անբարենպաստ հանգամանքները.

- ՀՅԴ ոչ պաշտոնական մամուլի օրգանն իր հերթին մի շարք հոդվածներում փորձում էր արդարացնել Հայաստանի առաջին հանրապետության պետական այրերի դիվանագիտական առումով բավական դատապարտելի քայլերը՝ հատկապես մատնանշելով Ալեքսանդրապոլի պայմանագրի իրավական հիմքերի բացակայությունը.
- երկու պարբերականն էլ Հայկական հարցի անբարեհույս վիճակի պատճառների մեջ կարևոր տեղ էին հատկացնում խորհրդաթուրքական համագործակցությանը, այդ տարիներին կնքված ռուս-թուրքական պայմանագրերին՝ ընթերցողների ուշադրությունը հրավիրելով դրանց հակահայկական բովանդակության և Հայկական հարցը փակուղի մտցնելու վտանգների վրա.
- պոլսահայ վերոհիշյալ պարբերականների հրապարակումների վերլուծությունը մեզ բերում է այն համոզման, որ Հայկական հարցի համար ստեղծված աննպաստ աշխարհաքաղաքական պայմանները նրանց զգուշավոր էին դարձրել, և արդեն 1923 թ. երկրորդ կեսից թերթերում գրեթե չկային Հայոց ազգային տան կամ արևմտահայերի հետագա ճակատագրին առնչվող հոդվածներ, անգամ լուրեր.
- 1923 թ. երկրորդ կեսից առաջ հիշյալ պարբերականների հրապարակումներից պարզ էր նրանց մոտեցումը, այն է՝ իրենց պատմական հայրենիքում ապրելու իրավունք այլևս չունեցող արևմտահայերը, որոնք հիմնականում ստիպված լքում էին երկիրը, հատկապես դիվանագիտական ոլորտում հայտնված հայրենադարձություն դեպի Խորհրդային Հայաստան կամ արտագաղթ տարբեր երկրների հայկական գաղթօջախներ, այս ամենի հետևանքով դատապարտված էին սփռման աշխարհով մեկ.
- արտագաղթած կամ այլ երկրներում ստիպված հանգրվանած հայ տարագիրների համար վտանգներ կային ուծացման առումով: Բացի այդ՝ նշված ժամանակահատվածում Մեծ եղեռնից փրկված արևմտահայերի զգալի մասը Խորհրդային Հայաստանը չէր համարում իր հայրենիքը և Հայաստան ասելով հասկանում էր Արևմտյան Հայաստանը կամ Վոդրո Վիլսոնի գծած սահմաններով ապագա Հայաստանի տարածքը: Նրանք հենց իրենց հայրենի բնակավայրերում էին ցանկանում ոչ միայն ապրել, այլև ունենալ եթե ոչ պետականություն, ապա առնվազն ազգային ու մշակութային ինքնավար կյանք՝ թեկուզ Հայոց օջախի սահմաններում: Այս շրջանում նշված մտահոգություններով էին համակված ստեպ-ստեպ «Ճակատամարտի» և «Ժողովուրդի ձայնը. Ժամանակի» էջերում տպագրվող վերլուծականները:

«Ճակատամարտի» և «Ժողովուրդի ձայնը. ժամանակի» հոդվածներն արտացոլում էին հայության ակնկալիքները Հայոց ազգային տան առաջարկի առնչությամբ

«Ժողովուրդի ձայնը. Ժամանակ» օրաթերթը 1921 թ. մայիսի 1-ի համարում մեջբերումներ էր անում Կ.Պոլսի թուրքական թերթերից, որոնցում թուրք խմբագիրներն ու լրագրողները վերլուծում էին իթթիհատական իշխանափոխությունից հետո հայերի հետ համագործակցության ծրագրերը և հայոց քաղաքական էլիտայի որդեգրած քաղաքականությունը[13]: «Հայերը Արեւելքի է՛ն մաքուր և թուրքերուն ամէնէն մօտ գտնուող մէկ տարր են: Դարերով միասին և բարւոք յարաբերութեամբ ապրող թուրքերը ու հայերը համիտեան ռէժիմին հայ կուսակցութեանց գրգռումներուն հետեւանքով և իթթիհատական շրջանին ալ այդ կուսակցութեանց և իթթիհատի յոռի քաղաքականութեան բերմամբ իրարու հետ գժտեցավ, զիրար զարկին ու կոտորեցան»[14], - գրում էր «Ալեմդարը»: Ապա կոչ էր անում, որ Առաջին աշխարհամարտի ավարտից հետո, երբ Իթթիհատն ու հայկական կուսակցությունները Թուրքիայում այլևս արգելված էին, նախկինում իրար սիրող և հասկացող հայերն ու թուրքերը վերադառնային անցյալում հաստատված բարիդրացիական հարաբերություններին[15]: «Ժողովուրդի ձայնը. Ժամանակը», սակայն, հանդես չէր գալիս որևէ մեկնաբանությամբ և չէր բերում փաստեր, թե իրականում դարեր շարունակ թուրքական իշխանություններն ինչ հայահալած ու հայասպան քաղաքականություն էին իրականացրել: Տպավորությունն այնպիսին էր, որ թերթի խմբագրակազմը համակարծիք էր թուրք լրագրողի տեսակետներին: Այնինչ դա այդպես չէր, և հավանաբար գրաքննության պատճառով էր պարբերականը իրեն չեզոք պահել: Ասվածի վկայությունն է մեկ այլ թղթակցություն, որը Լոնդոնից ուղարկել էր թերթի մասնավոր թղթակից Արշակ Սաֆրաստյանը[16]: Նա իր մեկնաբանություններով թարգմանաբար ներկայացնում էր Լոնդոնի թերթերից մեկին Հայոց ազգային տան թեմայով Ալի Ֆեթհի Օքյար բեյի տված հարցազրույցից հատվածներ: Թուրք դիվանագետի և քաղաքական հայտնի այդ գործչի հետևյալ խոսքերն առավել քան բնորոշում էին նրա պետության որդեգրած ուղղությունը Հայկական հարցում: Նա ասում էր. «Թուրքիոյ մէջ Հայաստան չկայ»[17]: Անգլիացի հոդվածագիրը գրում էր. «Ֆէթհի պէյի պատասխանը ո և է տարակոյս չը թողուց, որ իր կառավարութիւնը անհաշտ պիտի գտնուի հանդէպ ո և է հողային զիջողութեան, նոյն իսկ չափաւոր ձեւով հայկական ինքնավար մի նահանգի՝ թրքական ներկայ սահմաններէն ներս: Ֆէթհի պէյ վճռապէս կարգադրուած կը նկատէ

[13] Ժողովուրդի ձայնը. Ժամանակ 1921, 4083 (Թուրքեր-հայեր):
[14] Ժողովուրդի ձայնը. Ժամանակ 1921, 4083 (Թուրքեր-հայեր):
[15] Ժողովուրդի ձայնը. Ժամանակ 1921, 4083 (Թուրքեր-հայեր):
[16] Ժողովուրդի ձայնը. Ժամանակ 1922, 4465 (Հայ-թրքական հարաբերություններ):
[17] Ժողովուրդի ձայնը. Ժամանակ 1922, 4465 (Հայ-թրքական հարաբերություններ):

Թուրքիոյ և Երեւանի ներկայ սահմանները՝ դաշնագրով կնքուած թէ՛ հայ հանրապետութեան և թէ՛ Մոսկուայի ռուս կառավարութեան հետ և թէ՛ այդ սահմանները տեւական են անդառնալիօրէն»[18]: Ա. Սաֆրաստյանը թղթակցությունն ավարտում էր հռետորական հարցով, այն է՝ թուրք պաշտոնատար անձինք, ի տարբերություն Ֆեթհիի բեյի, բարոյական քաջություն կունենա՞ն հայերի հանդեպ վարելու հաշտարար քաղաքականություն. «Գուցէ դեռ փակված չեն ճանապարհները»[19]: Նա նաև նշում էր. «Անտեսել նախագահ Ուիլսընի գծած հայկական սահմանները և Սէվռի դաշնագիրը և պնդել միմիայն «Ազգային ուխտ»ի վրայ, ո՛չ մի քայլ առաջ չի տանիր մեզ: Մօտ կէս միլիոն տաճկահայեր այժմ ցիրուցան ու թափառական, կ'սպասեն մի առիթի՝ վերադառնալու իրենց հայրենիքը ու վերաշինելու իրենց տներն ու տնտեսութիւնը»[20]:

Խմբագրականներից մեկում «Ժողովուրդի ձայնը. Ժամանակը» իրավացիորեն փաստում էր, որ Առաջին աշխարհամարտում պարտված և իր պատժին սպասող թուրքական պետությունը «խաղաղօրէն ապրող ժողովուրդի մը վրայ ինկավ և խլեց անոր հողերուն մեծ մասը և անլուր ու քստմնելի խժդժութիւններու մատնեց անոր բնակչութիւնը... Թուրքերը տեղահանած և ջարդած են հարիւր հազարաւոր հայեր, կողոպտած են անոնց ամբողջ ունեցածները»[21]: Խմբագրակազմը համոզված պնդում էր, որ Ֆեթհիի բեյն իրավունք չուներ հռչակելու արևմտահայերին «ափ մը հող չտալու վարդապետութիւնը»[22]՝ ուրանալով հայերի հետ կատարված իրողությունները և ասելով. «Հայ ժողովուրդի հարցը վերջնականապէս փակուած է Երեւանի եւ Մոսկուայի հետ կնքուած դաշնագրերով, և ներկայ սահմանները տեւական են եւ անփոփոխելի»[23]:

Թերևս խմբագրության աշխատակիցների այս մոտեցումներում թերությունն այն էր, որ նրանք, դասեր չքաղելով մոտիկ անցյալից, կրկին հույսեր էին կապում մեծ տերությունների հետ, որոնք իբրև թե պաշտպանելու էին արևմտահայության իրավունքները. «Քաղաքակիրթ ազգերու ժողովը որոշած է, որ հատուցում մը ըլլայ այս ժողովուրդի մնացորդին՝ ազատ ու անկախ ապրելու իրաւունքով մը սեփական հայրենիքի մը մէջ... Ի՛նչ յամառութիւնով, որ թուրքեր կ'ուրանան իրողութիւնները և կ'աշխատին խաչել արդարութիւնը, նոյն յամառութիւնով հայ ժողովուրդը պիտի կառչի իրողութիւններուն, իրաւունքին եւ արդարութեան»[24]:

[18] Ժողովուրդի ձայնը. Ժամանակ 1922, 4465 (Հայ-թրքական հարաբերություններ):
[19] Ժողովուրդի ձայնը. Ժամանակ 1922, 4465 (Հայ-թրքական հարաբերություններ):
[20] Ժողովուրդի ձայնը. Ժամանակ 1922, 4465 (Հայ-թրքական հարաբերություններ):
[21] Ժողովուրդի ձայնը. Ժամանակ 1922, 4466 (Ափ մը հող չեն տար):
[22] Ժողովուրդի ձայնը. Ժամանակ 1922, 4466 (Ափ մը հող չեն տար):
[23] Ժողովուրդի ձայնը. Ժամանակ 1922, 4466 (Ափ մը հող չեն տար):
[24] Ժողովուրդի ձայնը. Ժամանակ 1922, 4466 (Ափ մը հող չեն տար):

1923 թ. օգոստոսի 1-ին «Ժողովուրդի ձայնը. Ժամանակը», առանց մեկնաբանության, թարգմանաբար տպագրել էր Լոնդոնի «The Times» օրաթերթում զետեղված մի նամակ՝ «Հայ մը» ստորագրությամբ[25]: Այն միտքն էր արտահայտված, որ «պետութեանց միջամտութիւնը միշտ վնասակար եղած է հայերուն»[26]: Նամակագիրը վստահեցնում էր. «Վերջին 45 տարիներու փորձառութիւնը մեզի ցուցուցած է, որ մեծ պետութեանց կողմէ հայերու ի նպաստ եղած ամէն միջամտութիւն տեղի տուած է շարք մը դժբախտութիւններու»[27]: Նա դաշնակից երկրներին առաջարկում էր հանգիստ թողնել հայերին ու չմիջամտել Հայկական հարցի լուծման գործին[28]: Հնարավոր էր, որ հայության համար այդ խառնակ օրերին «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ» պարբերականը համակարծիք էր այդ նամակում հնչեցված տեսակետներին:

«Ճակատամարտ» օրաթերթին նույնպես մտահոգում էին միջազգային տարբեր խորհրդաժողովներում քննարկվող արևմտահայության հետագա ճակատագրի և այդ համատեքստում Հայոց ազգային տուն հիմնելու գաղափարին կողմ և դեմ տեսակետների բախման վերջնական արդյունքը: Պարբերականը հանգամանորեն անդրադառնում էր Ալեքսանդրապոլի պայմանագրի կնքման հանգամանքներին և իրավական առումով դրա լեգիտիմության հարցին, Առաջին հանրապետության խորհրդայնացման գործընթացին, ծայր առած ու տապալված փետրվարյան ապստամբությանը և դրա պարտության պատճառներին, ռուս-թուրքական համաձայնությանը և կնքած պայմանագրերին, որոնք առնչվում էին Հայկական հարցին: Հատկապես բնորոշ էր Փարիզից ուղարկված «Հայաստան խորհրդաժողովին առջև» մասնավոր թղթակցությունը[29]: Այստեղ ներկայացված էին Լոնդոնի խորհրդաժողովի այն նիստի մանրամասները, որտեղ ելույթ էին ունեցել հայկական պատվիրակության ղեկավարները՝ Պողոս Նուբարն ու Ավետիս Ահարոնյանը: Ըստ այս հրապարակման՝ վերջինները կարծես չէին ուզում ընդունել պատմական նոր իրողությունը, որը նպաստավոր էր թուրքական պետության ապագայի համար: Այսինքն՝ դաշնակիցներն արդեն հաշվի չէին առնում Սևրի պայմանագիրը և հակված էին Թուրքիայի հետ հաշտության նոր պայմանագիր կնքելուն, որտեղ նկատի էին ունենալու հենց նրանց պահանջները Հայկական հարցի առումով: Ու կարևոր չէին մեր պատվիրակների բոլոր իրավացի և արդար փաստարկները հայոց դատի պաշտպանության տեսանկյունից, քանի որ

[25] Ժողովուրդի ձայնը. Ժամանակ 1923, 4753 (Պետութեանց միջամտութիւնը միշտ վնասակար եղած է հայերուն):

[26] Ժողովուրդի ձայնը. Ժամանակ 1923, 4753 (Պետութեանց միջամտութիւնը միշտ վնասակար եղած է հայերուն):

[27] Ժողովուրդի ձայնը. Ժամանակ 1923, 4753 (Պետութեանց միջամտութիւնը միշտ վնասակար եղած է հայերուն):

[28] Ժողովուրդի ձայնը. Ժամանակ 1923, 4753 (Պետութեանց միջամտութիւնը միշտ վնասակար եղած է հայերուն):

[29] Ճակատամարտ 1921, 709 (Հայաստան խորհրդաժողովին առջև):

նրանց առջև դնում էին Խորհրդային Հայաստանի գոյության, թուրքական իշխանությունների հետ խորհրդային կառավարության համագործակցության, հայաթափված Արևմտյան Հայաստանի վերաբերյալ և այլ հակափաստարկներ: Բնորոշ է Ա. Ահարոնյանի ելույթից այս հատվածը. «Անծանոթ են ինձի դաշնակիցներու նոր տեսակէտները, որոնք հետեւանք են նոր հանգամանքներու: Բայց Հայաստանի կառավարության համար այդ նոր հանգամանքները ոչ մէկ ձեւով չեն կրնար խախտել Սէվրի դաշնագրին տրամադրութիւնները՝ յօգուտ մեր երկրին... Մենք չենք կրնար այդ դաշնագրէն հրաժարիլ: Թուփքերը... կ'ըսեն, թէ Կովկասեան Հայաստանը պօլշեւիկ դարձած է, և թէ Թրքահայաստանի մէջ ալ հայ չկայ, հետեւաբար հայ պետութիւնը այլևս չի կրնար գոյութիւն ունենալ՝ առանց Հայաստանի»[30]: Նա վստահեցնում էր, որ անկախ այն հանգամանքից, որ մեծ տերությունները Հայկական հարցը հօգուտ հայերի չեն լուծի, հայ ժողովուրդը «երբեք իր նուիրական հողերէն չպիտի հրաժարի[31]»: Այս խոսքերին Պողոս Նուբարն ավելացնում էր հետևյալը. «Այսքան զոհողութիւններէ ետք հայ ժողովուրդը չի կրնար հրաժարիլ Սէվրի դաշնագրով իրեն տրուած իրաւունքներէն: Եթէ պօլշեւիկները գրաւած են Կովկասեան Հայաստանը, այդ փաստը չի կրնար ոչնչացնել հայ պետութիւն կազմելու մեր իրաւունքները, քանի որ Թրքահայաստանի հողերը կան: Այդ հողերն են, որ կը կազմեն հայ պետութեան հիմունքը, և Հայկական հարցը անոնց կապուած է իր ծագումով»[32]: Այստեղ պետք է նշել, որ իրականում Ա. Ահարոնյանն ու Պ. Նուբարը Լոնդոնի խորհրդաժողովում հասկացնել էին տալիս, որ Հայկական հարցի բովանդակությունը փոխվել էր՝ բարենորոգումների խնդրից վերածվելով իր պատմական տարածքներում միացյալ ու անկախ պետականություն ձեռք բերելու պահանջատիրության, որն ամրագրված էր թեկուզ Սևրի միջազգային պայմանագրով ու ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի գծած Իրավարար վճռի միջազգային իրավունքի փաստաթղթով: Պարզապես այդ խնդրով առ այսօր չեն զբաղվել ո՛չ խորհրդայնացված, ո՛չ էլ անկախացած Հայաստանի Հանրապետության իշխանությունները: Իսկ ժամանակին Լոզանի խորհրդաժողովը, սակայն, հօդս էր բարձրացրել հայության հույսերը՝ իրենց հայրենի հողերում գեթ ազգային օջախ ունենալու հարցում:

«Հայկական հարցը Լոզանի մեջ» ենթավերնագրի ներքո համարյա ամենօրյա կտրվածքով ներկայացվող նյութերը պատկերացում էին տալիս Հայոց ազգային տան առաջարկի շուրջ ծավալվող քննարկումների, տեսակետների բախման և ընդհանուր տրամադրվածության մասին: Դրանք տարբեր երկրներում Մեծ եղեռնից հետո ապաստանած արևմտահայությանը որևէ

[30] Ճակատամարտ 1921, 709 (Հայաստան խորհրդաժողովին առջև):
[31] Ճակատամարտ 1921, 709 (Հայաստան խորհրդաժողովին առջև):
[32] Ճակատամարտ 1921, 709 (Հայաստան խորհրդաժողովին առջև):

դրական բան չէին խոստանում: 1922 թ. դեկտեմբերի 16-ի համարում, օրինակ, «Ճակատամարտն» ընթերցողներին տեղեկացնում էր, որ Լոզանի կոնֆերանսին մասնակցող թուրքական պատվիրակությունը դեմ էր Հայոց ազգային տան ծրագրին՝ ասելով. «Հայերը ապագային կրնան համերաշխօրէն ապրիլ թուրքերուն հետ, անոնք պաշտպանութեան պէտք չունին, և Հայ ազգային տան խնդիրը ընդունելի չէր»[33]: Թուրքական թերթերից մեկից թարգմանաբար տպագրած հոդվածում գրված էր հետևյալը Հայոց ազգային տան հետ կապված վերլուծականում. «Մենք այս երկրին մէջ չենք կրնար յոյներուն և հայերուն հետ ապրիլ... Կամ մենք պէտք է ելլենք, կամ անոնք... Խորհրդաժողովը ի՛նչ կ՚ուզէ թող մտածէ եւ ինչ որոշում կ՚ուզէ թող տայ, մեր բուն նպատակը, մեր որոշումը և մեր ուզածը պէտք է, որ ըլլայ: Ո՛չ մէկ ուժ չի կրնար մեզ ետ դարձնել այդ որոշումէն»[34]: Կրկին թուրքական մամուլից արտատպած նյութում Թուրքիայում ապրելու համար պահանջում էին հրաժարվել առանձնաշնորհումներ ունենալու և հայկական տուն հիմնելու պահանջներից. «Անմտութիւն է կարծել, որ մեր կողմէ գիտակցօրէն հաւանութիւն պիտի յայտնուի այս տեսակ բանի մը համար: Ոչ մէկ թուրք պիտի գտնուի՝ Հայկական տունի մը պահանջը ընդունող... Մեր որոշումը վճռական և մեր հաստատամտութիւնը անյողդողդ է ինչպէս յունական, նոյնպէս և Հայկական տան հարցին մասին... Ասկէ վերջ Թուրքիան թուրքերուն է»[35]:

«Ճակատամարտը» վերլուծում էր իր հոդվածներում և խմբագրականներում Հայոց ազգային տուն հիմնելու խնդրին առնչվող իրադարձությունները, միջազգային խորհրդաժողովներում ծավալվող քննարկումներն ու առաջարկները, ինչպես նաև Հայկական հարցն էր նրա ուշադրության կենտրոնում: Մեծ եղեռնից հետո աշխարհով մեկ ցիրուցան հայությանն իր բնօրրան հայրենիք վերադառնալն արգելող օրենքներից ու որոշումներից քաջատեղյակ օրաթերթը գրում էր. «Մեր փնտռածը գաղութ չէ... Մեր ժողովուրդին ապագայ գոյութիւնը կը պահանջէ ոչ թէ աւելի եւս շեշտել նախկին ցրուած վիճակը, այլ, ընդհակառակը, կեդրոնաձիգ զօրաւոր ուժով մը մէկտեղել հեռաւոր գաղութները... Այս տեսակէտով յարմարագոյն լուծումն է ոչ թէ աչքերը յառել հեռաւոր օվկիանոսներու, այլ բուն իրականութեան՝ Հայաստանի Հանրապետութեան, ինչքան ալ անողոք ըլլան հոն տիրող քաղաքական եւ տնտեսական պայմանները՝ ցեղը բարոյական մահացումի չենթարկելու համար»[36]:

Պարբերականը կարևորում էր ազգային դիմագծի պահպանումը տարբեր երկրներում հայտնված հայերի համար՝ կոչ անելով նրանց միայն իրենց ֆիզիկական ապահովությամբ չբավարարվել, վերջնական բնակություն չհաս-

[33] Ճակատամարտ 1922, 3068 (Հավիտենական փոխանցումը):
[34] Ճակատամարտ 1922, 3068 (Կամ ամեն ինչ, կամ բնավ):
[35] Ճակատամարտ 1922, 3079 (Մեր գլխուն Հայկական հարց մըն ալ կը հանեն):
[36] Ճակատամարտ 1922, 3063 (Մեր փնտրածը գաղութ չէ):

տատել Մայր հայրենիքից անչափ հեռու երկրներում[37]. «Մեր գլխաւոր ճիգը պիտի ըլլայ մարմնով ալ, ոգիով ալ ողջ պահել այս հալածական բազմութիւնները, ուշ-կանուխ զանոնք հայրենիք փոխադրելու համար: Ոտիշ խնդիր, եթէ որոշեր են զանոնք վերածել բոշաներու սերունդի մը: Այն ատեն թող երթան ոչ միայն մինչեւ Պրազիլիա, այլև Հրոյ Երկիր, Իսլանտիա, Կրօէնլանտա կամ Զանզիպար, - ուր որ կարելի է մորթը պահել և հաց ճարել... Ձուլումը անխուսափելի է այդ խառնածին վայրերուն մէջ»[38]:

Եզրակացություններ

Պոլսահայ վերոհիշյալ պարբերականների հրապարակումների վերլուծությունը բերում է այն համոզման, որ Հայոց ազգային տան կամ արևմտահայերի հետագա ճակատագրին առնչվող խնդիրները եղել են իրենց համար առաջնային: «Ճակատամարտի» և «Ժողովուրդի ձայնը. Ժամանակի» էջերում տպագրվող վերլուծականները, հարցազրույցները և թարգմանական նյութերն ասվածի վկայությունն են: Կուսակցական տարբեր պատկանելության այս օրաթերթերը համակարծիք էին Մեծ եղեռնին, արևմտահայերի ունեցվածքի յուրացմանը, հայրենազրկմանը և ապագային առնչվող հարցերում, այդ թվում՝ առնվազն Հայոց ազգային տուն ունենալու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ Խորհրդային Հայաստանի շուրջ համախմբվելու կամ այնտեղ ապրելու տեսակետներում: Վերլուծական հոդվածներում տեսնում ենք, թե ժամանակի պահանջների թելադրանքով ինչպես են փոխվում լրագրողների տեսակետները Հայկական հարցի բովանդակության առումով: Նրանք հանգում են այն եզրակացության, որ հայության հետագա համախմբման և ուծացումից փրկման համար անհրաժեշտ է պաշտպանել պետականություն ունենալու գաղափարն ու վառ պահել բռնազավթված հայրենիքին վերատիրանալու պայքարի ջահը՝ չբավարարվելով Ազգային տուն ունենալու սին խոստումներով: Ավելացնենք, որ հայոց պահանջատիրության և Հայկական հարցի լուծման հիմնական տարբերակներից մեկն այն կարող է լինել, որ հայերն ունենան տնտեսապես հզոր և բարգավաճ պետություն՝ պաշտպանական ամուր համակարգով: Դրան հասնելու առաջին քայլը ազգային մտածողություն և գործելու վճռական կամք ունեցող նվիրյալ անձանց մուտքի ապահովումն է պետական ապարատում, ինչպես նաև համահայկական հավատամքի մշակումն ու աճող սերնդին դրա ուսուցումն են հաջողության հասնելու ճանապարհը: Հավատամք, մարդիկ, ազգային շահի գերակայության քաղաքականության վրա հիմնված պետական ճկուն դիվանագիտություն. այս երեք բաղադրիչների համադրման շնորհիվ թերևս կարելի է հասնել մեր արդարացի պահանջների պարտադրմանը միջազգային հարաբերությունների ասպարե-

[37] Ճակատամարտ 1922, 3076 (Բոշաներու սերունդ):
[38] Ճակատամարտ 1922, 3076 (Բոշաներու սերունդ):

զում: Ամենակարևորը դիվանագիտության ոլորտում ռոմանտիզմից հրաժարվելն է և հետևել այն սկզբունքին, որ դիվանագիտական հարաբերությունների հիմքում արդարությունը չի ընկած, այլ դրանցում առաջնայինը շահերն են: Կարևոր կռվաններ են պատմական աստեղային ժամը բաց չթողնելը և նպաստավոր հանգամանքներից օգտվել կարողանալը:

Գրականություն

Թուրքիայի Հանրապետության պատմություն 2014, Երևան, ԵՊՀ հրատ., 396 էջ:
Ժողովուրդի ձայնը. Ժամանակ 1921, Կ. Պոլիս, N 4083, 1922, NN 4465, 4466, 1923, N 4753:
Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923) 1972, Երևան, «Հայաստան», 809 էջ:
Հայկական հարց հանրագիտարան 1996, Երևան, Հակոբ Մեղապարտ տպագրատուն, 428 էջ:
Հայոց պատմություն 2010, հ. 4, գ. 1, Երևան, «Զանգակ-97», 799 էջ:
Ճակատամարտ 1921, Կ. Պոլիս, N 709, 1922, NN 3063, 3068, 3076, 3079:
Մելքոնյան Ռ., Թուրքիայի քրիստոնյա փոքրամասնությունների խնդիրը Լոզանի բանակցություններում. Հայկական ազգային օջախի ստեղծման շուրջ քննարկումներ, pdf: https://artsakhlib.am/wp-content/uploads/2020/09/%D5%8C%D5%B8%D6%82%D5%A (ներբեռնման օրը՝ 29.03.2023):

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՏՈՒՆԸ, ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ

Մարիամ Հովսեփյան

Ամփոփում

Հայոց ազգային տան առաջարկի և Հայկական հարցի զարգացումների վերաբերյալ քննարկումները բավական ակտիվ էին ժամանակի պոլսահայ պարբերականների էջերում: Դրանք գրեթե ամենօրյա կտրվածքով անդրադարձել են վերոհիշյալ խնդիրներին: Պոլսահայ առաջատար թերթերի հրապարակումների վերլուծությունը մեզ բերում է այն համոզման, որ Հայոց ազգային տան, արևմտահայերի ճակատագրին առնչվող խնդիրները եղել են նրանց համար առաջնային: Հայկական հարցի վերաբերյալ բանավեճերն առաջին էջերում էին տեղ գտնում: Տպագրում էին հայանպաստ ելույթներ, Հայոց ազգային տուն հիմնելու օգտին բարձրաձայնող եվրոպացի դիվանագետների հետ հարցազրույցների թարգմանություններ արտասահմանյան թերթերից: Հրապարակումների մեջ տեղ էին հատկացնում Քեմալական շարժման ակնառու ներկայացուցիչների, Կ. Պոլսի թուրքական պարբերականների տեսակետներին այդ հարցի առնչությամբ: Դրանք զետեղում էին՝ առանց մեկնաբանությունների: Տարբեր կուսակցությունների գաղափարախոս «Ճակատամարտ» և «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ» օրաթերթերը համակարծիք էին ցեղասպանության, արևմտահայերի ունեցվածքի յուրացման, հայրենազրկման, Հայոց ազգային տուն ունենալու,

իսկ դրա անհնարինության դեպքում՝ Խորհրդային Հայաստանի շուրջ համախմբվելու կամ այնտեղ ապրելու վերաբերյալ տեսակետներում:

Բանալի բառեր՝ Հայոց ազգային տուն, Հայկական հարց, «Ճակատամարտ» օրաթերթ, «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ» օրաթերթ, Լոնդոնի III կոնֆերանս, Միլլի շարժում, Լոզանի պայմանագիր:

АРМЯНСКИЙ НАЦИОНАЛЬНЫЙ ДОМ, АРМЯНСКИЙ ВОПРОС И АРМЯНСКАЯ ПЕРИОДИКА КОНСТАНТИНОПОЛЯ

Мариам Овсепян

Резюме

На страницах армянских периодических изданий Константинополя активно велись дискуссии относительно предложений Армянского национального дома и по Армянскому вопросу. Анализ публикаций ведущих армянских газет Константинополя приводит к заключению, что проблемы, связанные с судьбой Армянского национального дома и западных армян, были для них первостепенными. Дебаты по Армянскому вопросу занимали первые полосы. Публиковались интервью с европейскими дипломатами, ратовавшими за создание Армянского национального дома. В публикациях по Армянскому вопросу особое внимание уделялось точке зрения видных кемалистов и турецких журналистов, которые были опубликованы без комментариев. Газеты «Азатамарт» и «Жоговурди дзайн: Жаманак» отражали идеологию разных партий, однако все они были едины в вопросах, связанных с Геноцидом армян.

Ключевые слова – Армянский национальный дом, Армянский вопрос, ежедневная газета «Азатамарт», ежедневная газета «Жоговурди дзайн: Жаманак», III Лондонская конференция, движение Милли, Лозаннский договор.

THE ARMENIAN NATIONAL HOUSE, THE ARMENIAN QUESTION AND THE ARMENIAN PERIODICALS OF CONSTANTINOPLE

Mariam Hovsepyan

Abstract

Discussions on the proposal of the Armenian National House on the Armenian question were quite active in the pages of Constantinople's Armenian periodicals of that time. These problems were touched upon almost on daily basis. The analysis of the publications of the leading Armenian newspapers in Constantinople leads us to the conviction that the problems related to the fate of the Armenian National House and the Western Armenians

were primary for them. The debates on the Armenian question were on the front pages. Pro-Armenian speeches, translations of interviews with european diplomats speaking in favor of establishing an Armenian National House were printed. The views of prominent representatives of the Kemal movement in relation to the issue were given space in the publications. "Chakatamart" and "Jhoghovurdi dzayny: Zhamanak" dailies, which represented ideologues of different parties, were in agreement with the fact of the Armenian Genocide.

Key words – Armenian National House, Armenian question, "Chakatamart" daily newspaper, "Jhoghovurdi dzayny: Zhamanak" daily newspaper, III London conference, Mill movement, Lausanne treaty, Armenian periodicals

ԳՐԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԸ «ՀՈՐԻԶՈՆ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԷՋԵՐՈՒՄ 1909-1910 ԹԹ.

Արմեն Կարապետյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4
Էլ. հասցե՝ armenaraqsyan@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 13.05.2023, գրախոսվել է 04.12.2023, ընդունվել է տպագրության 11.12.2023
ORCID:0009-0003-6026-2790
DOI: 10.53548/0320-8117-2023.3-101

Ներածություն

«Հորիզոն» պարբերականի էջերում հաճախակի և բազմիցս արծարծվող հարցերն ու հարցադրումները վերաբերում են գրական կյանքին և մշակութային ոլորտին:

Թեև հայ ժողովուրդն այդ ժամանակ զուրկ էր պետականությունից և պետական քաղաքականություն իրագործելուց, այնուամենայնիվ, վերոնշյալ ոլորտներին վերաբերող հարցերը թերթի էջերում դիտարկվում և քննվում են ամենայն լրջությամբ և պատասխանատվությամբ, ինչպես վայել կլիներ պետություն և պետականություն ունեցող ժողովրդին: Դա բխում էր նաև այն իրողությունից, որ դարեր շարունակ պետականազուրկ ժողովուրդը կարողացել էր պահպանել ներքին ինքնուրույնությունն ու ազգային դեմքն ու դիմագիծը՝ շնորհիվ հավատի, գրականության ու մշակույթի հարատևության: XX դարասկզբին հայ գրական ու մշակույթին իրականությանը՝ դպրությանը վերաբերող բազմաթիվ հարցեր և բազմապիսի իրողություններ պարբերականի էջերում քննության են առնվում, վերլուծվում և իմաստավորվում նոր մեկնակետից՝ առավել բարձր չափանիշներով ու սկզբունքներով:

Գրողի, մտավորականի դերի և գործառույթների գնահատման հարցի շուրջ

1909 թ. օգոստոսի 14-ին «Անյետաձգելի պահանջ» վերնագրով ծավալուն հրապարակումը հիշեցնում էր, թե մինչև օրս հայ կյանքը չի ստեղծել այնպիսի պայմաններ, որ գրչին և գրականությանը նվիրված մարդիկ կարողանային ամբողջ թափով նետվել ասպարեզ՝ ծառայելու այն բանին, ինչի համար կոչված էին.«Մի Րաֆֆի, մի Շիրվանզադէ, մի Ահարոնեան ստիպված են լինում գրչից դուրս-իրենց պրոֆեսիայից դուրս որևէ կողմնակի աշ-

խատանք վերցնելու, մէջ ընդ մէջ գրիչը՝ ամենից գնահատւած գրիչը վայր դնելով, որպէսզի կարողանան իրենց ֆիզիկական գոյութիւնը պահպանել»[1]:

Համեմատական եզրեր են տարվում ռուսական իրականության հետ, նշվում է, որ Ռուսաստանում էլ գրողների վիճակը փայլուն չէ, սակայն ավելի լավն է և տանելի, քան մեզանում. «Եթէ ռուս գրականութիւնը, որի մէջ մի Չեխովի երկերի իրաւունքը 75 հազարով գնւում է, մի Գորկիյ իր պրոլետարական դրութիւնից հասնում է սեփական կալվածք ունենալուն, մի Անդրէև, Արցըիբաշև ...կարճ ժամանակում աչքի ընկնող հարստութիւն են ձեռք բերում, համարւում է աննպաստ միջավայր հեղինակներին նիւթականապէս ապահովելու տեսակէտից, հապա որքան խղճալի պիտի համարենք մի գրականութիւն, որի երկու-երեք աչքի ընկնող սիւները գրիչը վայր դրած, տեսչական-ուսուցչական ծանր պաշտօնն են ստանձնում»[2]:

«Ինչ է ինտէլիգէնցիան» առաջնորդող հրապարակումով (1909 թ. օգոստոսի 21) անդրադարձ է կատարվում հայ իրականության մեջ մտավորականության դերին և գործառույթներին: Թերթի դիտարկման համաձայն՝ ամեն կրթված, բարձր կրթության ստացած մարդ դեռ մտավորական չէ: «Ինտէլլիգէնցիան... քննադատօրէն մտածող անհատների հաւաքածուն է: Ինտէլլիգէնցիան հասարակութեան գիտակից, բնական ու քննադատ մասն է, որը չէ թողնում կեանքին ճահիճ կտրելու, հոտելու: Նա չէ բաւականանում եղածով. նա հասարակութեան յառաջադիմութեան մղիչ ուժն է, նրան դէպի առաջ, դէպի բարձր հորիզոններ քշող դրդիչն է»[3]:

Սակայն, դժբախտաբար, իսկական մտավորականությունը սակավաթիվ է, որն էլ հասարակության մեջ առաջացնում է բացասական երևույթների սկզբնավորման համար նախապայմաններ:

Մեկ այլ ուղենշային հոդվածում՝ «Ու՞ր է մեր ինքնաճանաչութիւնը», դարձյալ կարևորվում է լուսավոր և ուսյալ անհատների խոշոր դերը հասարակական կյանքի զարգացման գործում: Բայց միայն անհատով չէ պայմանավորված այն. «Անպայման, անհատի և արտաքին օբէկտիվ պայմանների միջև պիտի լինի որոշ չափի զուգադիպութիւն. ամեն մի զօրեղ անհատ, ամեն տեսակ արտաքին հանգամանքներում չի կարող առաջնորդ ու լուսաւորիչ հանդիսանալ»[4]: Այսինքն՝ կարևորվում են այն միջավայրն ու պայմանները, որոնք ծնում են գրական ու հասարակական առաջնորդին: Իսկ հասարակության ինքնաճանաչողությունը չափելու համար կարևոր միջոցներից է հասարակության ցույց տված հարգանքի աստիճանը իր հայտնի գործիչների նկատմամբ: Օրինակ՝ եվրոպական երկրներում «Շիլլէրների, Գէօթէների, Գարիբալդիների, Հիւգոների բազմաթիւ արձանները մեզ պարզ վկայում են, որ

[1] Հորիզոն 1909, N 11:
[2] Հորիզոն 1909, N 11:
[3] Հորիզոն 1909, N 16:
[4] Հորիզոն 1909, N 23:

նրանց հայրենակիցներն ըմբռնում են նրանց գաղափարները, գնահատում են նրանց գործերը»[5]: Իսկ ի՞նչ է կատարվում մեզանում: Ո՞ւր են Աբովյանի, Նալբանդյանի, Րաֆֆու, Արծրունու արձանները: Մի՞թե սա չի վկայում մեր ազգային ողորմելի գիտակցության մասին:

Անցյալի ժառանգության գնահատման և իմաստավորման անհրաժեշտության շուրջ

Պարբերականը բազմաթիվ դիտարկումներով փորձում է հանրային գիտակցության մեջ բորբոքել և արմատավորել հայոց անցյալի գրական և պատմամշակութային ժառանգության ուսումնասիրության և իմաստավորման անհրաժեշտության խնդիրը: Նույնիսկ ոչ հեռու անցյալի պատմությունը անծանոթ էր հայ ուսուցչին, բժշկին, պաշտոնյային ու լրագրողին:

«Երէկը մեզ անծանօթ է» խմբագրականը (1909 թ. սեպտեմբերի 5) նշում է, որ կարծում ենք, թե մեզանով է սկսվում հայ գրականությունը, հայ մտքի պատմությունը, հայ բանաստեղծությունն ու հրապարակախոսությունը: Եվ այդ սոսկալի պակասությունն ու թերատությունը դարձնում է մեր երիտասարդությանը հանդուգն, ինքնահավան և ինքնագով: Այսպես, չգիտենալով, թե «ինչ են ասել Աբովեան, Նալբանդեան, Նազարեան, Պռօշեան, Աղայեան, Շահ-Ազիզ, Արծրունի, Սունդուկեան և այլն և այլն, - մեր երիտասարդ սերունդը գրչի մի հարուածով տապալում, ջախջախում է թէ այդ գործիչներին և թէ նրանց ամբողջ շինարար, եռուն-զեռուն շրջանը»[6]:

Պարբերականը խստորեն քննադատում է նման մոտեցումը. այդպես շարունակելն այլևս անհնար է: Ու այն մտավորականությունը, որն իրեն անվանում է նոր սերունդ, և որը կոչված է հանդիսանալու մտավոր-բարոյական ղեկավար հայ հասարակական կյանքի, պարտավոր է խորությամբ ուսումնասիրել ազգի մոտիկ և հեռու անցյալը:

Թերթը 1909 թ. դեկտեմբերի 6-ին իր նոր խմբագրի՝ անվանի հայագետ ու հրապարակագիր Լեոյի շուրթերով ընդգծում է, որ մեր անսխալ ուղեցույցը՝ նորին մեծություն պատմությունը, «մեզ աւելի ևս հզօր փաստեր պիտի տայ ամեն անգամ, երբ հրապարակում դրւած կը լինեն հայ ժողովրդի ազգային և կուլտուրական ինքնուրոյնութիւն շօշափող հարցեր: Այդ հարցերին մենք կը մօտենանք անցեալի իրականութեան և ներկայի անհրաժեշտութեան ղեկավարութեամբ»[7]:

Պարբերականի էջերում ներկայի խնդիրներն ու հիմնահարցերը միշտ շաղկապվում և աղերսվում էին անցյալի ժառանգության հետ:

«Աւերակների մէջ» խմբագրականը արտահայտում էր հայ հասարակական կյանքում առկա թշվառ վիճակի լիակատար պատկերը. «50-60 տարայ

[5] Հորիզոն 1909, N 23:
[6] Հորիզոն 1909, N 29:
[7] Հորիզոն 1909, N 38:

ընթացքում, մի շարք սերունդների ջանքերով, ձեռք ենք բերել մի փոքրիկ գիտակցութիւն: Եւ ահա այդ գիտակցութիւնը մեզ տանջում է, որովհետեւ օրէցօր պարզ կերպով ցոյց է տալիս մեզ, որ մենք ապրում ենք աւերակների մէջ»[8]: Ինչո՞ւ ավերակների... Որովհետև կիսախարխուլ վիճակում են հայտնվել ազգի մշակութային-լուսավորչական հաստատությունները, կրթական օջախները, թատրոնը և այլն: Եվ միայն գրականությունն է, որ կենդանի ու կենսունակ է պահում ազգի ոգին, նրան պահում ինքնուրույն ու քաղաքակիրթ ազգերի շարքում:

Դպրության ոլորտին առնչվող մտահոգությունները

«Հորիզոնը» հրատարակման առաջին իսկ օրերից ուշադրության առանցքում է պահում հայ դպրությանը վերաբերող մեծ ու փոքր հարցերը: Թերթի էջերից խիստ քննադատություն հնչեց հայ հասարակայնության հասցեին, որը չի մտահոգվում իր դպրոցական կյանքի խնդիրներով. «Ո՛չ մի ապահով, յարատեւ գործ հաւաքական ուժերով, ինքնագիտակցութեան, ամենքի հաւասար մասնակցութեան սկզբունքի վրայ»[9]: Նույնիսկ հայկական մեծ բնակավայրերում, որտեղ հազար տնից ավելի բնակչություն կա, դպրոցական գործը քայքայված և աղետալից վիճակում է: Ահա այդպիսի գյուղերում դպրոցներն ունեն որոշակի ապահով եկամուտներ, և մնում է, որ տեղի հասարակությունը իր չափով օժանդակություն ցույց տա: Սակայն դա չի արվում, քանզի ամեն տեղ և բոլոր հանգամանքների մեջ մարդիկ սովոր են հույսները կապել այլոց (մեծահարուստների) բարեգործության հետ: Հետևյալ հարցապնդումներն են ուղղվում հասարակությանը. «Տեսէք մուրացկանութեան ի՞նչ ձևեր են հնարում Թիֆլիզի ծխական դպրոցները՝ իրենց գոյութիւնը մի կերպ պահպանելու համար»[10]: «Իրական վիճակը» հոդվածում (1909 թ. դեկտեմբերի 12) հայությանը հորդորվում է պահպանել ազգային շունչն ու նկարագիրը. «Ուզո՞ւմ էք ապրել իբրև ազգութիւն. ունեցէք ձեր գրականութիւնը, ձեր դպրոցները, թատրոնը, հասարակական հիմնարկութիւնները, մուզէօնները, գրադարանները, թանգարանները, ուսումնական ընկերութիւնները, մի խօսքով՝ այն ամենը, ինչ ունեն բարեկեցիկ մեծ ազգերը»[11]:

«Ճեմարանը» առաջնորդող հոդվածում քննության են առնվում վերոնշյալ բարձր ուսումնական հաստատությանը վերաբերող կրթական ծրագրերի սկզբունքներն ու չափանիշները: Նշվում է, որ ներկայումս Էջմիածնի ճեմարանում մշակվում է հատուկ լսարանական ծրագիր: Թերթը այն կարծիքն է հայտնում, որ այդ ծրագրի վերջնական մշակումը չամփոփվի լոկ այդ հաստատության պատերի ներսում, այլ այդ կարևոր գործին ակտիվ մասնակից

[8] Հորիզոն 1909, N 39:
[9] Հորիզոն 1909, N 40:
[10] Հորիզոն 1909, N 40:
[11] Հորիզոն 1909, N 42:

լինեն ընդարձակ հասարակական խավեր. «Պէտք է հրապիրել յատուկ ժողովներ ձեռնհաս անձերից, պէտք է տպագրել ծրագրի նախագիծը և ուղարկել ամեն տեղ, ուր կարելի է կարծիքներ իմանալ: Վերջապէս մամուլն էլ պիտի ունենայ իր բաժինը այդ կարևոր հարցի մշակութեան մէջ»[12]: Պարբերականը ճշմարտացի էր գնահատում իրավիճակի լրջությունը, գտնելով, որ հայկական ճեմարանների բարեփոխումն ու բարվոքումը խիստ անհրաժեշտություն են. այն կենսական անհրաժեշտություն ունի ոչ միայն սովորողների, այլև ամբողջ հայության համար: Խորին ցավ և մտահոգություն է արտահայտվում մայրենի լեզվի շուրջ տիրող անհոգի ու անտարբեր վերաբերմունքի առթիվ: Իրողություն է, ըստ թերթի դիտարկման, որ հետզհետև նվազում է այն մարդկանց թիվը, որոնց մասին կարելի է ասել, թե լավ գիտեն մայրենի լեզուն: Եվ ընդհակառակը. հետզհետե ստվարանում են նրանք, որոնք աղճատում, աղտոտում են մայրենին, դարձնում մի խառնուրդ, որ որքան հայկական է, նույնքան և ավելի շատ ռուսական ու գերմանական է:

Եվ մեռնում է լեզուն: Ինչպե՞ս չմեռնի, որտեղի՞ց ստանա կենսունակ հյութեր, որտեղի՞ց «վերցնե իր հարազատ հարստութիւնները: Հայ դպրոցներից... Բայց այդտեղ հասարակ ուղղագրութիւն ձեռք բերելն էլ մեծ առաքինութիւն է համարւում: Բաւական է մի անգամ, երկու անգամ մտնել մի հայ հիմնարկութիւն, օրինակ մի հայ խմբագրութիւն, տեսնել գրութիւններ, և դուք կը տեսնէք, թէ ի՞նչ սոսկալի անգրագիտութիւն է տիրում հայերի մէջ»[13]:

Հայագիտության, հրատարակչական գործի և այլ խնդիրները շուրջ

Տեղին է նաև դիտարկումը, որ հայագիտությունը զարգանում է դրսում, և Հյուբշմանի, Մառի, Մեյեի պես գիտնականներ ուսումնասիրում են մեր լեզուն և գիտական քերականություններ հրատարակում: Բայց այդ ամենը հեռու է մնում մեզանից, անմատչելի նոր սերնդին: Ուրեմն, մենք ոչ միայն շնորհք չունենք ինքներս ուսումնասիրություններ կատարելու, գիտականորեն մշակելու մեր սեփական լեզուն, այլև շնորհք չունենք նույնիսկ մեր մեջ տարածելու այն, ինչ օտարներն արել, պատրաստել են մեզ համար: Անդրադարձ է կատարվում հայագիտության չափազանց կարևոր մի ճյուղի, որպիսին պատմությունն է, մի առարկա, որը «մեզանում դրւած է շատ վատ, այնքան վատ, որ ոչ միայն հետաքրքրութիւն չէ զարթեցնում, այլ ընդհակառակն, ձանձրացնում է, տաղտկութիւն է պատճառում»[14]: Մինչդեռ պատմությունը որպես հանրային գիտակցությունը արտահայտող ուսումնական առարկա և հայագիտության մի կարևոր ուղղություն վիթխարի նշանակություն ունի ազգային համակողմանի դաստիարակության համար:

[12] Հորիզոն 1909, N 51:
[13] Հորիզոն 1909, N 55:
[14] Հորիզոն 1909, N 55:

Նույն այս համարում հրապարակվել էր Հովհաննես Թումանյանի «Մեծ ցավը» ուղենիշային հոդվածը, որով մեծ բանաստեղծը հանրության առջև հանդես է գալիս որպես գիտակ ու խորունկ հրապարակախոս: Ըստ Թումանյանի՝ կա ցավի ավելի մեծ վիճակ, առավել ամոթալի դրություն, երբ մենք մեզ չենք ճանաչում. «Երկիր ունենք-չենք ճանաչում, պատմութիւն ունենք – չենք ճանաչում, գրականութիւն ունենք –չենք ճանաչում, լեզու ունենք-չենք իմանում: ...Չենք հասկանում, թէ էդ չգիտենալով ինչքան բան չգիտենք»[15]: Թումանյանի ապրած օրերում, այո՛, հայ ժողովուրդը, որը դարեդար զրկված էր պետականությունից, զուրկ էր նաև պատմության սեփական դասագրքից. «թէև քիչ ժողովուրդ կունենայ էնքան նիւթ իր պատմութեան համար, ինչքան մենք ունենք: ...Նախնական մշուշի մեջ թաղուած դարերի մասին չեմ ասում, այլ էն ժամանակների և անցքերի, որոնց վրայ ընկնում է... ճշմարիտ պատմութեան լոյսը»[16]:

Մեծ գրողը հոգեկան անկեղծ ցավով է նշում, որ հայությունը չգիտե ինչ օրով, ինչ ճանապարհով ենք այստեղ հասել: Վերջում հայրենասեր գրողը եզրակացնում է, թե «էս դրութեան մէջ գտնուող ժողովուրդը ինչ արժանապատուութեան զգացմունք կարող է ունենալ և ինչ յարգանք հէնց դէպ իրեն: Եւ ինչպէս կարող է մեզ սիրեն և յարգեն օտարները, երբ պարզ տեսնում են, որ մենք որպես առանձին ժողովուրդ չունենք ինքնուրոյն պատկեր և բովանդակութիւն և հանդիսանում ենք միմիայն իր աղաւաղումը»[17]:

Թերթը անդրադարձ էր կատարում նաև գավառական մամուլի գործառույթներին, նշում, որ մի ժամանակ գավառական մամուլի ծնունդը բացառիկ երևույթ էր մեր դժբախտ իրականության մեջ, ապա այժմ «գաւառական թերթերը եթէ ասուպներ են, մեր հորիզոնի վրայ, գոնէ յաճախակի երևացողների տեսակից են»[18]: Գավառական մամուլի ակտիվացումը որակվում է միանշանակորեն դրական երևույթ, քանզի նախորդ հարյուրամյակներում առաջադիմություն որոնող հայ մարդը ստիպված է եղել հաստատվել օտար երկինքների ներքո՝ հեռու հայրենի հողից, և «երեք դար է, ինչ մեր ամբողջ գրական-կրթական գործը հաստատուած է գաղթականութիւնների մէջ»[19]:

Ըստ պարբերականի՝ հայ մտքի վտարանդիության երբեմնի անսահման շրջանն ավելի ու ավելի սեղմվում է, մոտենում հայրենիքի սահմաններին, և հայոց հողի վրա զարթոնք ապրող գավառական մամուլը այն գործոններից է, որով հնարավոր է բարեփոխել դժնի պատմական իրականությունը:

«Ինչի՞ց է քաոսը» հրապարակումով (1910 թ. հունվարի 23) թերթը կրկին քննադատության սուր ծայրն ուղղում է հայ իրականության մեջ դպրոցական

[15] Հորիզոն 1909, N 55:
[16] Հորիզոն 1909, N 55:
[17] Հորիզոն 1909, N 55:
[18] Հորիզոն 1910, N 12:
[19] Հորիզոն 1910, N 16:

համակարգի քաոսային իրավիճակին. «...գիտենք որ դպրոցական գործի ներկայ դրութիւնը ուրիշ տիտղոսով բնորոշել անկարելի է: Երբ գոյութիւն չունի սիստեմ, երբ ծրագիր չկայ, միանմանութիւն չկայ, կարգ ու կանոն չկայ, կանոնատր հսկողութիւն չկայ, ի՞նչ է մնում որ լինի: Պարզ է - քաոս միայն»[20]: Հանդիմանանքի կոշտ խոսքեր են ուղղվում Էջմիածնի հասցեին, որը, ըստ առկա հանգամանքների, պետք է մեր դպրոցական կյանքի համակարգման կենտրոնը հանդիսանար: Դիտարկման համաձայն՝ «Էջմիածինը չափազանց դանդաղաշարժ է, չափազանց քիչ բան է անում մեր դպրոցները քաոսական դրութիւնից հանելու համար: Կասեն աւելին-մենք նոյն իսկ շատ մեծ յոյսեր էլ չունենք թէ նա ապագայում աւելի գործունեայ ու կենսունակ կը հանդիսանայ իր կարևոր դերի մէջ»[21]:

Պարբերականը 1910 թ. փետրվարի 7-ին «Այժմ գործե՛նք» ծավալուն հրապարակումով անդրադառնում է հրատարակչական գործի ոլորտում կատարվող զարգացումներին՝ նշելով, թե մեր գրականության համար կարծես նոր օր է բացվում: Խոսքը վերաբերում է «Հայոց հրատարակչական ընկերության» գործունեության նոր շրջափուլին, որը շարունակելու էր Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերության ավանդույթները, բայց որակապես նոր՝ ավելի թարմ և ժողովրդանվեր չափանիշներով: Թեև վերստին կասկած է արտահայտվում այն բանի շուրջ, թե հայը կարող է «առևտրական լուրջ ձեռնարկութիւնների առարկայ դարձնել գրավաճառութիւնը, դրամագլուխներ յատկացնել հրատարակչական գործին»[22]:

Պարբերականին մշտապես մտահոգում էին հայ ժողովրդի երկու հատվածների՝ արևելահայության ու արևմտահայության հոգևոր, գրական-մշակութային սերտ միասնության հարցերն ու խնդիրները: Այդ հոգևոր անխորտակելի կամրջի հիմքը մայրենի լեզուն է:

Եվ համայն հայության բոլոր հատվածների մերձեցումն ու շաղկապումը խոսքից գործ և երազանքից իրականություն կդառնան մայրենի լեզվի միջոցով, որը թեև բաժանված է տարբեր բարբառների, «տարբեր ձևեր է ներկայացնում, բայց և այնպէս, դեռ ամենքի համար հասկանալի լեզու է, ամեն տեղ իր հիմնական միանման օրենքներով է ապրում և զարգանում»[23]:

Սակայն խիստ մտահոգություն է հայտնվում մայրենի լեզվի ուղղագրական քաոսի շուրջ, նշելով, որ վերոնշյալ քաոսով մեր լեզուն, մեր գրականությունը ինքներս խորթ ու անմատչելի ենք դարձնում ընդհանուր հայության համար: Ավելին, մենք մոռանում ենք, որ «ուղղագրական սանձարձակ արշաւներով միայն սերունդների գործը չենք դժւարացնում, այլև մի աւելի մեծ յանցանք ենք գործում: Մենք մոռանում ենք և՛ այն, որ դրանով սպանում ենք և

[20] Հորիզոն 1910, N 16:
[21] Հորիզոն 1910, N 29:
[22] Հորիզոն 1910, N 29:
[23] Հորիզոն 1910, N 31:

մեր ազգի ընդհանուր շահերը, ոչ միայն անհնարին ենք դարձնում մերձեցումը հայութեան միւս հատւածների հետ, այլ և ոչնչացնում ենք այն դրութիւնը, որ կար մինչև այժմ»[24]:

Համազգային շահերի տեսանկյունից և գիտակցմամբ թերթը հաճախ էր անդրադառնում մշակույթի էական հիմնահարցերին և հատկապես այն ոլորտներին, որոնք հասարակության հոգևոր ու գեղագիտական դաստիարակության գործառույթներն ունեն: «Մի լաւ գործ» խմբագրականում (1910 թ. փետրվարի 18) զուգահեռներ են տարվում ռուսահայ և թուրքահայ (պոլսահայ) բեմերի միջև: Ընդ որում, ընդգծվում է, որ ներկա պահին թատերական կյանքը Կ. Պոլսում շատ ավելի աշխույժ ու կենսունակ է, քան ռուսահայերի շրջանում: Արձանագրվում է այն իրողությունը, որ Կովկասում անուն հանած, տաղանդի և փորձի տեր դերասաններից շատերը հայտնվում են Բոսֆորի ափերին, և սուլթանների մայրաքաղաքում հայ բեմը «այժմ նոյն կենդանութիւնն է ներկայացնում, ինչ ցոյց էր տալիս Թիֆլիզի բեմը սրանից երեսուն տարի առաջ, եօթանասնական թւականների վերջերին»[25]:

Պարբերականի կարևոր հարցադրումները շարունակվում են «Չունենք գլխավորը» վերնագրված ուղենշային հոդվածում, որում կրկին շեշտադրվում են հոգևոր, բարոյական, գաղափարական ու գեղագիտական կրթվածության և դաստիարակվածության կարևորությունն ու անհրաժեշտությունը: Ընդ որում, որպես առանցքային թեզ ընտրվում է հետևյալ հիմնավորումը. «Հասարակութիւնը կարող է բախտաւոր լինել միայն այն ժամանակ, երբ նա բաղկանում է զարգացած անդամներից: Զարգացումը այն չէ, ինչ տալիս է դպրոցը: Զարգացումը ձեռք է բերվում անհատի սեփական աշխատանքով»[26]:

Պարզաբանվում է, որ դեպի զարգացում տանող միջոցներն են բոլոր սույն հաստատությունները, որոնք ուղեկցում են մարդուն մինչև կյանքի ավարտը՝ թատրոն, գրականություն, գեղարվեստ: Բայց այդ ամենի համար հարկավոր է առաջնորդ, մտքի մարզարան: Եվ դա ընթերցանությունն է: Կյանքին լավագույնս պատրաստվում է նա, ով միշտ կարդում է, ով գիտե գրքերի հետ անցկացնել իր կյանքի մի մասը, և դա է իսկական լուսավորության ամենագլխավոր գաղտնիքը: Սակայն դրան հասնելու համար հայկական իրականությունում պետք է լիուլի գործեն դպրոցական, գրադարանային ու հրատարակչական հաստատություններն ու ընկերությունները: Ի դեպ, նոր կազմավորված Կովկասի հրատարակչական ընկերության հանդեպ թերթն ակտիվ վերաբերմունք էր ցուցաբերում նաև հետագայում, գտնելով, որ այն չպետք է դառնա շահադիտական–առևտրական կազմակերպություն:

---

[24] Հորիզոն 1910, N 31:
[25] Հորիզոն 1910, N 38:
[26] Հորիզոն 1910, N 40:

1910 թ. ապրիլի 11-ին թերթը հայտնում էր իր ընթերցողներին, որ գրահրատարակչական մի ընկերություն է ձևավորվում Կ. Պոլսում: Դրվատելով այն՝ նաև նշվում է, որ գրահրատարակչական գործը արևմտահայերի մոտ ավելի վաղ է սկսվել, ավելի ուժգին թափով առաջ գնացել, քան արևելահայերի շրջանում: Ուստի ավելորդ է ասել, թե թուրքահայերը նոր պիտի սովորեն ընկերակցությամբ գրքեր հրատարակելը: Հրատարակչության ոլորտում կարևոր խնդիրներից մեկը համարվում էր այն, որ երկու հատվածներում էլ (արևելահայ և արևմտահայ) ծանոթ չէին միմյանց հրատարակած գրականությանը: «Պէտք է վերջապէս վերացնել այս աւելի քան տարօրինակ, նոյնքան էլ վնասակար դրութիւնը: Պէտք է ստեղծել յարմարութիւններ, որ երկու կողմերի գրական երկերը ազատ ու հեշտ փոխանակւեն»[27]:

«Միջոց չկա» խորագրով խմբագրականը 1910 թ. ապրիլի 13-ին գուժում էր, որ Ներսիսյան դպրոցի հոգաբարձությունը միջոցների բացակայության պատճառով որոշել է փակել հաստատության Հավլաբարի բաժանմունքը (որտեղ սովորում էր 270 աշակերտ): Պարբերականը, դա համարելով չափազանց ծանր ու տմարդի վերաբերմունք, անկեղծորեն խորհուրդ է տալիս, որ մեր մտավորականության այն մասը, որ այսօր վարում է Ներսիսյան դպրոցի գործերը, հեռու մնա նման ծանր հանցագործություն կատարելուց. դպրոց փակել անկարելի է, դպրոցը միայն բաց անել կարելի է: Ուստի Ներսիսյան հաստատության հոգաբարձուները պարտավոր են «նախքան այդ սարսափելի քայլն անելը, փորձել բոլոր միջոցները, գործադրել իրանց ամբողջ եռանդը, որպէս զի աղքատ հայ մանուկը գլխակոր կանգնած չմնա փակ դպրոցի առջև»[28]:

Պարբերականի էջերում միշտ ու մշտապես, անդադար որոնումներ էին և փնտրտուք այն միջոցների ու մեթոդների, որոնցով հնարավոր կլիներ վերացնել կամ մեղմացնել հայ գրական, հասարակական, մտավոր դաշտի անապատը: Եվ անապատում օազիսներ որոնող թերթի հրապարակագիրները հուսադրում, ոգևորում էին ընթերցողներին, որ այդ փոքրիկ օազիսներից ստանան գրական-հասարակական մեծ վերընթաց, նորօրյա ակտիվություն և զարթոնք:

Պարբերականի էջերում դպրոցական-կրթական կյանքի վերաբերյալ թղթակցություններ էին տպագրվում Հայաստանի բոլոր ծայրերից: Այսպես, 1910 թ. ապրիլի 23-ին հրապարակվել է Սյունեցի Լևոնի թղթակցությունը Խանքենդից (Ստեփանակերտ), որով կարևորվում էր Արցախի հայ գյուղացիների մտահոգությունը կրթության կարևորության հանդեպ: Արցախցին այս-

[27] Հորիզոն 1910, N 79:
[28] Հորիզոն 1910, N 80:

պես է կարևորում այն. «հագիս չուխան, գլխիս փափախն անգամ կը ծախեմ, միայն թէ որդիս ինձ պէս խաւար չմնայ»[29]:

«Հորիզոնը» գրական, կրթական և մշակութային մեծ և փոքր հիմնահարցերին անդրադառնալիս ու քննարկելիս միշտ որպես ելակետ ընդունում էր այն գործոնը, թե գրականությունը, դպրությունն ու մշակույթը որքանով են ամրապնդում հայ ժողովրդի էթնիկական, ազգային ու լեզվական ինքնությունը, որքան են նպաստում ազգային նիստուկացի, կերպարի և ոգու հարատևմանը: Ասվածի լավագույն ապացույց են նրա էջերում Հովհաննես Թումանյանի պարբերաբար հրապարակվող հոդվածներն ու ակնարկները:

«Հայ ոգին» հոդվածում (1910 թ. ապրիլի 30) մեծ բանաստեղծը, հայացք նետելով հայոց անցյալ հարյուրամյակների վրա, նշում է, որ ծանր է եղել հայոց ֆիզիկական ու բարոյական մաքառումը և «էսքան փորձութիւն ու տառապանք ունեցած մի ժողովրդի անվայել է անգիտանալ իր կեանքը ու ծփալ, տարուբերել ժամանակի ալէկոծութեան քմահաճույքին անձնատուր»[30]: Ըստ Հովի. Թումանյանի՝ գիտությունը և լուսավորությունն է, որ «մարդկային կեանքի պատմութեան շատ մութ տեղերի հետ միասին լոյս կը ձգի մեր անցկացրած երկար ու դժվար ճամբի վրայ մինչև նրա սկիզբը...»[31]:

Եզրակացություններ

XX դարի սկզբներին արևելահայության առանցքային պարբերականներից մեկի՝ «Հորիզոնի» էջերում մասնագիտական ու բարոյական բարձր պատասխանատվությամբ մանրակրկիտ քննարկումների ու վերլուծության առարկա դարձան գրականությանը, մշակույթին, դպրությանը վերաբերող և աղերսվող մեծ ու փոքր հարցերն ու խնդիրները: Թերթը բարձր պրոֆեսիոնալիզմով անդրադառնում էր վերոնշյալ հիմնահարցերի քննությանը՝ ելնելով ազգային կարևորագույն մտահոգություններից, անհանգստություններից ու տագնապներից:

Գրականություն

Հորիզոն (Թիֆլիս) 1909, N 11:
Հորիզոն 1909, N 16:
Հորիզոն 1909, N 23:
Հորիզոն 1909, N 29:
Հորիզոն 1909, N 38:
Հորիզոն 1909, N 39:
Հորիզոն 1909, N 40:
Հորիզոն 1909, N 42:
Հորիզոն 1909, N 51:

[29] Հորիզոն 1910, N 85:
[30] Հորիզոն 1910, N 91:
[31] Հորիզոն 1910, N 91:

Հորիզոն 1909, N 55:
Հորիզոն 1910, N 12:
Հորիզոն 1910, N 16:
Հորիզոն 1910, N 29:
Հորիզոն 1910, N 31:
Հորիզոն 1910, N 38:
Հորիզոն 1910, N 40:
Հորիզոն 1910, N 79:
Հորիզոն 1910, N 80:
Հորիզոն 1910, N 85:
Հորիզոն 1910, N 91:

ԳՐԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԸ «ՀՈՐԻԶՈՆ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԷՋԵՐՈՒՄ 1909-1910 ԹԹ.

Արմեն Կարապետյան

Ամփոփում

1909 թ. Թիֆլիսում հրապարակվում է «Հորիզոն» պարբերականը, որը շուտով համազգային ու համահայկական բնույթ և բովանդակություն է ստանում: Նրա էջերում մշտապես քննարկվում և արծարծվում էին հայ հանրությանը հուզող գրական, կրթական ու մշակութային բազմաբնույթ հիմնահարցերը: Դրանք դիտարկվում և քննվում են ամենայն լրջությամբ ու պատասխանատվությամբ, ինչպես վայել կլիներ պետություն ունեցող ժողովրդին: Դա հետևանք էր այն իրողության, որ դարեր շարունակ միասնական պետականություն չունեցող ժողովուրդը կարողացել էր պահպանել իր ներքին ինքնուրույնությունն ու ազգային դիմագիծը՝ շնորհիվ մայրենի գրականության, դպրության ու մշակույթի:

Բանալի բառեր՝ «Հորիզոն» պարբերական, գրական մտավորականություն, հայագիտություն, ազգային ինքնություն, ինքնագիտակցություն, մամուլ, կրթություն:

ВОПРОСЫ ЛИТЕРАТУРЫ, ОБРАЗОВАНИЯ И КУЛЬТУРЫ НА СТРАНИЦАХ ЖУРНАЛА «ГОРИЗОНТ» В 1909-1910 ГГ.

Армен Карапетян

Резюме

С 1909 г. издававшийся в Тифлисе журнал «Горизонт» вскоре стал общенациональным рупором наболевших вопросов в сфере литературы, образования и культуры. На его страницах постоянно обсуждались актуальные проблемы, волновавшие армянскую общественность.

Злободневные вопросы армянской действительности рассматривались в публикуемых материалах со всей ответственностью и весьма содержательно, что

свидетельствовало о сохранении национальной идентичности армянского народа и его высоком самосознании благодаря ключевой роли родной литературы, культуры и образования в целом.

Ключевые слова – журнал «Горизонт», литературная интеллигенция, арменоведение, национальная идентичность, самосознание, периодика, образование.

LITERARY, EDUCATIONAL, CULTURAL ISSUES ON THE PAGES OF THE "HORIZON" JOURNAL IN 1909-1910

Armen Karapetyan

Abstract

In 1909, the periodical "Horizon" was published in Tiflis, which soon acquired an all-Armenian character and content. On its pages various cultural issues concerning the Armenian public were discussed. The topical issues of the Armenian reality were considered in the published materials with full responsibility and very meaningfully, which testified to the preservation of the national identity of the Armenian people and their high self-awareness thanks to the key role of their native literature, culture and education in general.

Key words – journal "Horizon", literary intelligentsia, armenology, self avareness, national identity, periodicals, education.

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ռոբերտ Ղևոնդյան

Քաղաքական գիտությունների թեկնածու
«Գլաձոր» համալսարան
ՀՀ, Երևան, Գրիգոր Լուսավորչի փ. 7/1
Էլ. հասցե՝ Robert.gh81@gmail.com
ORCID: 0000-0003-1201-6694

Թամարա Ղազարյան

Էլ. հասցե՝ tamaraghazaryan99@gmail.com
ORCID: 0009-0005-5806-1433

Հոդվածը ներկայացվել է 13.04.2023, գրախոսվել է 14.03.2023 , ընդունվել է տպագրության 11.12.2023
DOI: 10.53548/0320-8117-2023.3-113

Ներածություն

Հետխորհրդային միաբևեռ աշխարհակարգի հետագա վերափոխումը աչքի է ընկնում բարդ և հակասական գործընթացներով: «Արաբական գարնան» և «գունավոր հեղափոխությունների» հայեցակարգային քաղաքական վերաբաշխումները բարդ ընթացք ստացան մի քանի կետերում, որոնք կարելի է բնութագրել որպես «աշխարհաքաղաքական հանգույցներ»: Վերջինների թվում կարելի է նշել Բալկանյան թերակղզին (Կոսովոյի խնդիր), Մերձավոր Արևելքը (Սիրիա, Կազա և Արցախ), Արևելյան Եվրոպան (Ուկրաինա): Աշխարհաքաղաքական այս փոխակերպումների առանձնահատկությունը պայմանավորված է հետևյալ գործընթացներով.

- Միակ և «խնամակալ» գերտերության՝ ԱՄՆ-ի դերի նվազումը և այլ կենտրոնների «բևեռի» վերածվելու հավակնությունները:
- Լոկալ զինված հակամարտությունների թվի աճը, որոնց մասնակիցները և՛ պետական, և՛ ոչ պետական դերակատարներն են:
- Գլոբալացման գործընթացները, որոնք ձևավորում են ժամանակակից պետությունների հաղորդակցական, ֆինանսական, տնտեսական, տեխնոլոգիական փոխկապվածությունը:
- Ժամանակակից աշխարհում անվտանգության վերազգային ինստիտուտների դերի նվազումը:

Թեև բոլոր այս գործընթացները փոխկապակցված են և համակարգային ազդեցություն են գործում արդի գլոբալ, տարածաշրջանային և լոկալ տարածություններում, այնուամենայնիվ, դրանցից ամեն մեկն ունի պատճառահետևանքային տրամաբանական կառուցվածք: Այդ կառուցվածքի ուսումնա-

սիրությունը համակարգային վերլուծության միջոցով հնարավորություն է տալիս բացահայտելու աշխարհաքաղաքական վերափոխումների վեկտորի հավանական այլընտրանքային ուղղությունները և համապատասխան սցենարային մշակումներ կատարելու այս կամ այն իրականությունում հնարավորություններից օգտվելու կամ մարտահրավերներին դիմակայելու համար:

Միաբևեռությունից բազմաբևեռություն

Սառըպատերազմյան դարաշրջանի ավարտը և ԱՄՆ-ի՝ որպես միակ գերտերության գոյությունը նշանավորվեցին միջազգային անվտանգության համակարգում հավաքական արևմուտքի որոշիչ դերակատարմամբ: Պատմական կարճ ժամանակամիջոցում բացվեցին քաղաքական տարածությունները՝ հանգեցնելով տարբեր պետական ու ոչ պետական միավորումների համար քաղաքական ժամանակի աննախադեպ սեղմման: «Վազող արդիականացման» հայեցակարգը բազմաթիվ հասարակությունների համար դարձավ գլխացավանք՝ բազմապատկելով թերի ժողովրդավարությունների և հիբրիդային համակարգերի քանակը ողջ աշխարհում: Զարմանալի չէ, որ քաղաքակրթական, մշակութային, էթնիկ, կրոնական և այլ հիմքերով հակասությունները կտրուկ սրվեցին, հատկապես աշխարհաքաղաքական կարևորություն ունեցող հանգուցային կետերում: Սա իր հերթին բումերանգի էֆեկտով վերափոխեց միաբևեռության տրամաբանությունը:

Վերլուծելով անցած ժամանակաշրջանն ու աշխարհաքաղաքական շարժերը՝ Ֆ. Ֆուկույաման նշում է. «Սառը պատերազմի ընթացքում, մինչև 2000-ականների սկիզբը, ԱՄՆ-ում կար էլիտաների հստակ փոխհամաձայնություն՝ հօգուտ աշխարհաքաղաքական լիդերության պահպանման»[1]: Արդեն 2000-ական թվականների կեսերից, տնտեսական աննախադեպ աճի վրա հիմնվելով, Չինաստանը բարձրաձայն հայտարարեց իր «բևեռային» հավակնությունների մասին: Չինացի հեղինակները բացահայտորեն սկսեցին խոսել կատարված աշխատանքի և աճող ազդեցության մասին. «Չինաստանի կողմից բաց քաղաքականության վարման ընդունումը վերջին 3 տասնամյակների ընթացքում հանգեցրեց միջազգային հարաբերություններում ավելի խոր ինտեգրման և դրանց վրա ահռելի ազդեցության»[2]: Միևնույն ժամանակ Ռուսաստանում թափ առան և սկսեցին զարգանալ ինտեգրացիոն նախագծերը, որոնք իշխանությունների հովանավորությունը վայելող գիտական շրջանակների կողմից վերլուծվում և մեկնաբանվում են որպես «Եվրասիական» բևեռի վերականգնման բաղադրիչներ: Ինքնուրույն աշխարհաքաղաքական կենտրոն լինելու հավակնություններ նկատվեցին նաև հավաքական Եվրոպայի (Եվրամիություն), Հնդկաստանի և այլ կենտրոնների կող-

[1] Fukuyama 2021.
[2] Liqun 2010, 58.

մից: Դեռևս 2008 թ. մայիսին Ֆ. Զաքարիան, նկատելով միաբևեռությունից բազմաբևեռության անցման միտումները, իր «Հետամերիկյան աշխարհը» հիմնարար աշխատությամբ կանխատեսում է «մնացյալ» աշխարհի վերելքը և ԱՄՆ-ի հեգեմոնիայի ավարտը[3]: Հետագա զարգացումները հաստատեցին այս կանխատեսումը: 2010-ականներն աչքի ընկան աշխարհաքաղաքական հակասությունների սրմամբ, որի հետևանքով տեղի է ունենում աշխարհակարգի փլուզում, որն էլ ենթադրում է նոր հավասարակշռության ձևավորում. «...դրանից հետո աշխարհը վերադառնում է ավելի նորմալ՝ բազմաբևեռության վիճակի, որտեղ Չինաստանը, Ռուսաստանը, Հնդկաստանը, Եվրոպան և այլ ուժային կենտրոններ ԱՄՆ-ի համեմատությամբ հզորանում են»[4]:

Աշխարհաքաղաքական հակասությունների պրոքսի դրսևորումները

Համաշխարհային քաղաքական անկայունությունը հանգեցրել է տարածաշրջանային զինված հակամարտությունների աճին, որոնց առանձնահատկությունն այն է, որ դրանցում հիմնական դերակատարները ոչ միայն պետություններն են որպես ինստիտուտներ, որոնք ունեն ռազմական բռնություն կիրառելու իրավունք՝ ելնելով իրենց ազգային շահերից, այլև ոչ պետական դերակատարները, որոնք կարող են ուղղակիորեն չներկայացնել որևէ պետություն: Ռազմական հակամարտություններին մասնակցող նման դերակատարների ի հայտ գալը բնութագրվում է որպես պատերազմի վերափոխման, դասականից ոչ դասական ձևաչափի անցման հետևանք:

Ըստ Մ.Կալդորի՝ նոր պատերազմներում «...աղավաղված է ներքինի և արտաքինի միջև տարբերությունը»[5]: Պատերազմների հիբրիդային բնույթը ծածկում է ահռելի մակերես՝ շփման գծից սկսած մինչև խոր թիկունք և վիրտուալ տարածություններ: Զինված հակամարտություններ վարելու հարցում պետության բացառիկ իրավասությունը վերանում է, իսկ մասնավոր կազմակերպություններն ու ռազմական խմբավորումները ստանում են գործելու հնարավորություն: Պետությունների և նրանց կոալիցիաների հետ աշխարհի աշխարհաքաղաքական վերաբաշխմանը մասնակցող զինված բռնության նոր սուբյեկտներն են կանոնավոր զինված ուժերը, կիսառազմական խմբերը, ինքնապաշտպանական ստորաբաժանումները, օտարերկրյա վարձկանները, միջազգային հանրության հովանու ներքո գտնվող օտարերկրյա զորքերը[6]: Հակամարտության սուբյեկտների նման փոխարինումը հնարավորություն է տալիս խոսելու նոր տեսակի պատերազմների մասին, որոնք հաճախ բնութագրվում են որպես «հիբրիդային», «պոստմոդեռնիստական» կամ

[3] Zakaria 2008.
[4] Fukuyama 2021.
[5] Калдор 2015, 21.
[6] Калдор 2015, 198.

«ցածր հաճախականության» պատերազմներ[7]: Գործողությունների պրոքսի բնույթի մասին է խոսում այն, որ դրանք հիմնականում աշխարհի «ավելի քիչ զարգացած» հատվածներում են բռնկվում[8]: Իսկ առաջատար երկրներում նմանօրինակ իրադարձությունները ձգտում են քողարկել այլ անվանումներով (ինչպես Ռուսաստանի կողմից Ուկրաինա ներխուժումը «հատուկ ռազմական օպերացիա» անվանելու փորձերը):

Հիբրիդային պատերազմները հնարավորություն են տալիս ապահովելու ինչպես ուղղակի, այնպես էլ պրոքսի հակամարտությունների վարման բարձր արդյունավետություն: Գործընթացը դիտարկում է հակառակորդ պետության և հասարակության կյանքի բոլոր ոլորտները, որտեղ հնարավոր է կիրառել ազդեցության գործիքներ: Հիբրիդային պատերազմի հիմնական բաղադրիչներն են.

- սովորական զինված ուժերի կիրառումը.
- միջուկային զենքի կիրառման սպառնալիքը.
- կիբեռտարածությունների օգտագործումը՝ անկայունացման և քայքայման նպատակով.
- տնտեսական լծակների կիրառումը՝ պետությունների և ինստիտուտների քաղաքական համախմբվածությունը քայքայելու նպատակով.
- զանգվածային պրոպագանդան և ապատեղեկատվության տարածումը՝ ռազմավարական հաղորդակցությունների և «հանրային դիվանագիտության» աղավաղման միջոցով[9]:

Հիբրիդային պատերազմի պրոքսի տրամաբանությունում կարելի է ներառել նաև այսպես կոչված «ահաբեկչական» պատերազմը: Այս դեպքում, տարբեր ուժային կենտրոնների կողմից պատվիրակվելով, երբեմն նաև՝ սեփական նախաձեռնությամբ, ահաբեկչական խմբավորումները հիբրիդային գործողություններ են սկսում: Նրանց գործիքակազմում ընդգրկված են հիբրիդային պատերազմի բոլոր բաղադրիչները (տրամադրության տակ միջուկային զենքի բացակայության պայմաններում հաճախ այդ բաղադրիչին փոխարինում է միջուկային օբյեկտներին հարվածելու սպառնալիքը):

Ըստ Բ. Հոֆմանի՝ ահաբեկչության խնդիրն է «...ահաբեկումն ու պարտադրանքը, այսինքն՝ վախի միջոցով մարդկանց վարքագծի վրա ազդեցություն գործելը»[10]: Զանգվածային վախի միջոցով ահաբեկիչները փորձում են լծակներ ձեռք բերել՝ ստիպելու նրանց կայացնել իրենց անհրաժեշտ քաղաքական որոշումները. «Ծայրահեղականացումը և բռնությունը տեղի են ունենում ոչ միայն կրոնական և գաղափարական պատճառներով. բռնի գործո-

[7] Калдор 2015, 8.
[8] Кревельд 2005, 46.
[9] Thiele 2015.
[10] Хоффман 2003.

ղությունների անցման որոշումը կարող է թելադրված լինել գործնական, սոցիալական, քաղաքական և ռազմական նկատառումներով»[11]:

Վերլուծելով ժամանակակից ահաբեկչական պատերազմի առանձնահատկությունները՝ Լ. Շտոֆերն այն սահմանում է որպես «...ոչ քաղաքական դերակատարների պատերազմ, որն իրականացվում է առանց հայտարարության, կանոնների և սահմանափակումների, որը տարվում է ցանկացած միջոցներով (ինչպես զուտ ռազմական, այնպես էլ խաղաղ ճանապարհով): Ահաբեկչական պատերազմի նպատակն է առավելագույնի հասցնել թշնամու խաղաղ բնակչության զոհերի թիվը, նրա բարոյազրկումը, քաղաքացիական բնակչության ոչնչացումը, ենթակառուցվածքները»[12]: Հաճախ նման գործողությունները հիբրիդային պատերազմի այլ բաղադրիչների կիրառման նախապատրաստական աշխատանքներ են, իսկ որոշ դեպքերում հող են նախապատրաստում ընդհուպ ռազմական գործողությունների համար:

Ավելին, ժամանակակից ահաբեկչությունը ոչ միայն քաղաքական հարցերի լուծման միջոց է, այլև շատ եկամտաբեր բիզնես: Դա է վկայում այն փաստը, որ ժամանակակից աշխարհում կա վարձկանների մի ամբողջ շուկա, որոնք պատրաստ են պայքարել վարձի համար և ահաբեկչական գործողություններ կատարել աշխարհի ցանկացած տարածաշրջանում. «Ապակենտրոնացման գաղափարի կիրառումն ահաբեկիչներին, վարձկաններին հնարավորություն է տալիս աշխատելու բարձր տեմպով՝ անհամեմատելի առավելություն ձեռք բերելով կանոնավոր ստորաբաժանումների նկատմամբ: Ահաբեկիչների մարտավարությունը հարձակողական է նույնիսկ պաշտպանողական գործողությունների ժամանակ... Նրանք գործում են տարաշարժային (մանյովրային) պատերազմի սկզբունքներով՝ հիմնական շեշտը դնելով շարժուն (mobile) խմբերի գործունեության վրա: Նման խմբերի հայտնաբերումը և ոչնչացումը բավական բարդ է նույնիսկ նոր գերճշգրիտ ու հեռահար զինատեսակների կիրառման պարագայում»[13]:

Մեզ համար «ահաբեկչական» պատերազմի և հիբրիդային գործողությունների թերևս ամենացայտուն օրինակը Ադրբեջանն է: Տարիներ շարունակ օգտագործելով ներդրված գործակալական ցանցը՝ տեղեկատվական ահաբեկչությունն ու ահաբեկչության սպառնալիքները (օրինակ՝ Մեծամորի ատոմակայանին հարվածելու սպառնալիքը), տնտեսական շրջափակումը, հակահայ քարոզչությունը և այլն, այդ պետությունն ի վերջո ձեռնամուխ եղավ ռազմական գործողություններին: 44-օրյա պատերազմի ընթացքում է՛լ ավելի ընդլայնելով հիբրիդային գործողությունների ճակատը՝ Ադրբեջանը օգտագործեց նաև ահաբեկիչ վարձկանների: Ներկայում այդ պետությունը ան-

[11] Stepanova 2008, 82.
[12] Штофер 2015, 63.
[13] Պետրոսյան 2021, 80-81:

ընդհատ ճնշում գործադրելու և հիբրիդային լայնամասշտաբ գործողությունների միջոցով փորձում է կապիտալացնել պատերազմի արդյունքներն ու նոր հաջողություններ գրանցել:

Տեղեկատվահաղորդակցական միջոցների շարունակական զարգացումն ու քաղաքական տարածությունների ընդարձակումը

Աշխարհաքաղաքական ներկա փոխակերպումների ընթացքն ու հնարավոր ուղղություններն անհնար կլինի նկարագրել առանց տեղեկատվահաղորդակցական միջոցների անընդհատ զարգացման տրամաբանությունը հաշվի առնելու: Առաջատար IT տեխնոլոգիաները մարտահրավեր և միևնույն ժամանակ հնարավորություն են ինչպես պետությունների, այնպես էլ լոկալ, տարածաշրջանային ու գլոբալ քաղաքական դաշտի ավելի սահմանափակ դերակատարների համար: Ավելին. պետական և ոչ պետական կառույցների լայնարձակ համագործակցությունը ժամանակակից միջազգային հարաբերությունների անբաժանելի մասն է դարձել և, այդպիսով, «պետական սահմաններ» հասկացությունը ևս վերափոխվել է. «...ժամանակակից պետությունները սերտորեն կապված են տարածաշրջանային և անդրազգային քաղաքական և տնտեսական խմբավորումների և կորպորացիաների հետ, և ժամանակակից պետությունների սահմանները կորցնում են կոշտ սահմանազատման գծերի կարգավիճակը»[14]: Բազմաթիվ են տնտեսական, սոցիալական, մշակութային, շատ դեպքերում՝ անգամ քաղաքական կառույցները, որոնք գործում են արտասահմանային սկզբունքով՝ ներառելով տարբեր պետություններ կամ պետություններին պատկանող տարածքներ:

Տեղեկատվահաղորդակցական նորագույն հնարավորությունները, շարունակաբար խթանելով պետական ու ոչ պետական միավորումների փոխկապակցվածության աճը, ուղղակի ազդեցություն են գործում նաև գոյություն ունեցող ինստիտուտների վրա: Քաղաքական իշխանության նախկին բնորոշիչները երբեմն սահմանափակվում են: Որպես օրինակ կարելի է նշել տեղեկատվության մոնոպոլիայի պայմաններում պրոպագանդայի կամ ագիտացիոն հնարավորությունների ժամանակակից փոխակերպումը: Տեղեկատվական հասանելիության ներկա մակարդակը զգալիորեն նվազեցրել է նշված գործընթացների արդյունավետությունը: Մյուս կողմից էլ ժամանակին համընթաց վերափոխման հրամայականը ընկալող և արդիականացող հանրույթները (այդ թվում՝ պետական իշխանության ինստիտուտները) տեղեկատվական հոսքերի վրա ազդեցության, տեղեկատվության ձևավորման, փոխանցման և սեփական մոտեցումները հեռարձակելու ավելի մեծ հնարավորություն են ստանում: Նշված գործառույթները լայնորեն կիրառվում են բազմաթիվ ուղղություններով, մասնավորապես. «...Ռուսաստանը, Չինաս-

[14] Гидденс 2002, 436.

տանը... Միացյալ Նահանգները օգտագործում են թվային գործիքներն ու տվյալները տարբեր միջոցներով՝ սեփական քաղաքացիներին հետևելու և վերահսկելու համար, ինչպես նաև փորձելով ազդեցություն գործել մարդկանց վրա և՛ սեփական երկրում, և՛ արտերկրում»[15]: Քաղաքական տարածությունների նմանօրինակ ընդարձակումը չի կարող իր ազդեցությունը չունենալ ընդհանուր աշխարհաքաղաքական ենթատեքստի վրա: Անվտանգային սպառնալիքներն աճում են, իսկ դրանց դիմակայելու հնարավորությունները պահանջում են նոր ռեսուրսներ և գործիքակազմի հընթացս վերափոխումներ:

Զուգահեռաբար՝ քաղաքական տարածությունների ընդարձակումը ձևավորել է անվտանգային սպառնալիքներ, որոնք ձևավորվում ու զարգանում են տնտեսական հիմքով: Ֆինանսատնտեսական ոլորտին տիրապետումը միշտ եղել է պետության՝ որպես միջազգային հարաբերությունների համակարգի սուբյեկտի նշան: Համաշխարհային ֆինանսական ինստիտուտների ի հայտ գալը անմիջականորեն ազդեցություն է գործում ազգային պետության ինքնիշխանության մակարդակի վրա:

Գնահատելով ֆինանսական հատվածի համաշխարհայնացման ռիսկերն ու սպառնալիքները՝ հարկ է ընդգծել այդ գործընթացների հետևանքով ազգային պետությունների բացառիկ իրավասությունների տարածքի վերափոխումը, ինչը «...շատ պետությունների համար զգալի կորուստների է հանգեցնում՝ ձևավորելով այսպես կոչված ասիմետրիկ սպառնալիքներ և առաջացնելով պաշտպանական ռեակցիա»[16]:

Երկրների գլոբալ փոխկախվածության պայմաններում թշնամու վրա ճնշում գործադրելու տնտեսական մեթոդները հաճախ ավելի արդյունավետ են, քան պայքարի զինված մեթոդները: Տնտեսական ճնշումը բերում է ցանկալի արդյունքի ավելի քիչ ծախսատար և կործանարար եղանակներով, քան ռազմական ճնշումը: Հիբրիդային պատերազմների տրամաբանությունում կիրառվում են պայքարի բոլոր հնարավոր միջոցները, այդ թվում՝ տնտեսական: Մասնավորապես՝ պետությունների վրա տնտեսական ճնշման արդյունավետ գործիք է տնտեսական պատժամիջոցների ներդրումը, որոնք ուղղված են երկրի գործունեության տնտեսական, ֆինանսական, արդյունաբերական և այլ ոլորտների ոչնչացմանը: Օրինակ՝ ռուս-ուկրաինական պատերազմի և դրան նախորդած իրադարձությունների պատճառով Ռուսաստանի դեմ տնտեսական պատժամիջոցների ներդրման հետևանքով տնտեսության ճգնաժամային գործընթացները:

[15] Kivinen, Piiroinen 2022, 12.
[16] Мариносян 2008, 6.

Անվտանգային միջազգային համակարգի և վերազգային ինստիտուտների դերի նվազումը

Աշխարհակարգի փոփոխության բնութագրիչ հատկանիշներից է նաև անվտանգության ապահովման համար ստեղծված միջազգային կառույցների դերի անկումը: Հատկանշական է, որ միջազգային կազմակերպությունների գործառութայնությունը չի սահմանափակվում օժանդակությամբ կամ խորհրդատվությամբ. օպերատիվ իրավիճակներում դրանք կառավարման և կարգավորման գործառույթ ունեն[17]: Սակայն արդի բազմաթիվ կոնֆլիկտային և ճգնաժամային իրավիճակներում միջազգային անվտանգային կառույցները պասիվ դիտորդի դերում են: Խոսքն առաջին հերթին վերաբերում է Միավորված ազգերի կազմակերպությանը, որի հիմնական գործառույթը միջազգային խաղաղության և անվտանգության ապահովումն է:

Ժամանակակից աշխարհը թևակոխել է լայնածավալ ճգնաժամի փուլ, որն անմիջականորեն ազդեցություն է գործում միջազգային անվտանգության համակարգի վրա: ՄԱԿ-ի կողմից այս գործընթացը վերահսկողության տակ վերցնելու կամ համակարգելու թույլ փորձերը տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով շարունակաբար ձախողվում են: Եթե 90-ականներին ՄԱԿ-ի որոշումների կայացման գործընթացը բավական արդյունավետ էր, քանի որ «նոր հետսառըպատերազմյան մթնոլորտում գերտերությունները ավելի քիչ էին օգտվում վետոյի իրավունքից»[18], ապա ներկայում իրավիճակը կտրուկ փոխվել է: ՄԱԿ-ի գործողությունների արդյունավետության նվազումն ակնհայտ է. Սիրիայում, Լիբիայում, Արցախում և Ուկրաինայում անգամ ռազմական հանցագործությունների բացահայտ դեպքերը չեն արժանանում ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերի, քանի որ այս կամ այն պետությունը արգելափակում է դրանց ընդունումը: Այս փաստերը խոսում են ՄԱԿ-ի գործառութային խնդիրների սրման և ազդեցության նվազման մասին, որը հայելային էֆեկտով պարբերաբար անդրադառնում է գլոբալ քաղաքական տարածության այս կամ այն հատվածում: Ակնհայտ է, որ ՄԱԿ-ին անհրաժեշտ են լուրջ բարեփոխումներ, որոնք թույլ կտան նրան լիովին կատարել համաշխարհային անվտանգության պաշտպանության իր գործառույթները և ընդունել նորմեր, որոնք կարող են կայունացնել համակարգը միջազգային հարաբերություններում. «...առանց դրա, կազմակերպությունը աստիճանաբար կկորցնի իր դիրքերը և կտեղափոխվի համաշխարհային քաղաքականության լուսանցք, կվերածվի լրացուցիչ չեզոք ուժի, անօգնականորեն նայելով, թե ինչպես են պետությունների խմբերը կամ առանձին երկրներ լուծում վիճելի հարցերն իրենց հայեցողությամբ»[19]:

[17] Abott, Sidal 1998, 12.
[18] Sommerer et all. 2022, 828.
[19] Заемский 2008, 3.

Այնուամենայնիվ, խնդիրը չի պարփակվում միայն ՄԱԿ-ի դերի նվազմամբ: Աշխարհաքաղաքական հակամարտությունում խրթին հարաբերությունները երբեմն դուրս են գալիս դիվանագիտական սահմաններից անգամ միևնույն ռազմաքաղաքական դաշինքում ընդգրկված անդամների դեպքում: Եթե ՆԱՏՕ-ի անդամ Հունաստանը և Թուրքիան ակտիվորեն հակադրվում են միմյանց՝ փաստացի սպառազինության մրցավազքի մեջ մտնելով, ապա ավելի ցածր հեղինակություն ունեցող և հնարավորությունների տիրապետող ՀԱՊԿ-ի անդամներ Ղրղզստանի և Տաջիկստանի միջև զինված բախումները սովորական երևույթ են: Ընդ որում, թե՛ ՆԱՏՕ-ի, թե՛ ՀԱՊԿ-ի ղեկավար շրջանակներում իրավիճակի վրա վճռականորեն ազդելու միջոցներ ոչ միայն չեն ձեռնարկվում, այլև, ըստ էության, այդպիսի միջոցները որպես առաջնահերթություն չեն էլ դիտարկվում:

Կարելի է եզրակացնել, որ անվտանգային միջազգային համակարգը, որը ձևավորվել էր Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, գործառնական առումով այլևս չի համապատասխանում ժամանակակից իրողություններին: Եթե հետսառըպատերազմյան թեժ իրադարձությունները հնարավոր եղավ սառեցնել «միաբևեռ» աշխարհի կառուցապատմանը համապատասխան, ապա «բազմաբևեռության» անցման առաջին իսկ նախանշանները նշանավորվեցին սառեցված հակամարտությունների թեժացմամբ և նորերի ձևավորմամբ: Թեև նոր աշխարհակարգի հարաբերականորեն հավասարակշռված պատկերը դեռևս հեռու է տեսանելի լինելուց, բայց այսօր արդեն կարելի է կանխատեսել, որ ներկա միջազգային անվտանգային համակարգի պայմաններում նոր աշխարհակարգում կայունության ապահովումը շատ քիչ է հավանական: Անհրաժեշտություն է լինելու առանցքային փոփոխություններ իրականացնել և՛ միջազգային կազմակերպությունների կազմի, գործիքակազմի, ազդեցության միջոցների, ընկալումների և գործառույթների շրջանակներում, և՛ ընդհանուր առմամբ միջազգային փոխհարաբերությունների, բազմաբևեռության էության ընկալման ու փոխադարձ հարգանքի ապահովման առումներով:

Եզրակացություններ

Հարկ է նկատել, որ աշխարհաքաղաքական ներկա տեղաշարժերը տեկտոնական բնույթ են կրում: Դրանք փոխում են միջազգային քաղաքականությունում զսպումների և հակակշիռների ողջ տրամաբանությունը: Ասվածից կարող ենք եզրակացնել, որ ինչ հավասարակշռային դրություն էլ ձևավորվի, այն անհամեմատ տարբերվելու է նախկինում գոյություն ունեցող իրավիճակից: Այս իրողությանը զուգահեռ, այնուամենայնիվ, անհրաժեշտ է, հաշվի առնել, որ անվտանգության բազմակողմանի մարտահրավերները ձևավորվում են պարբերաբար՝ նաև անհավասարակշռության տարբեր

փուլերում: Հետևաբար կարևոր է մշակել դրանց հավասարարժեք պատասխանելու մեխանիզմներ:

Հայաստանի Հանրապետության համար ծագող մարտահրավերների գլխավոր թիրախները պետականությունն ու ինքնիշխանությունն են: Այս ուղղություններով անվտանգային ներուժի ավելացումը պահանջում է ոլորտային ռազմավարական պլանավորումների ճկունություն, սցենարային մշակումների բազմազանություն, ինչպես նաև արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացման, փափուկ ուժի տարրերի կիրառման և ֆիզիկական հարթությունում շարունակաբար հզորացման միջոցներով սեփական սուբյեկտայնության ամրապնդում: Այս ուղղություններով անդադար աշխատանքը հնարավորություն կտա այլընտրանքային զարգացումների անորոշություններում ապահովելու պետական անվտանգության առավելագույն հնարավոր մակարդակ:

Գրականություն

Պետրոսյան Մ. 2021, Հակամարտությունների կարգավորում ժամանակակից պատերազմներում և զինված հակամարտություններում ահաբեկչական գործոնի ակտիվացման պատճառներն ու հիմնական միտումները, Հայկական քաղաքագիտական հանդես, N 2, էջ 75-100:

Гидденс Э. 2002, Навстречу глобальному веку, Отечественные записки, N 6, с. 436-456.

Заемский В. 2008, Ключевые вопросы реформы ООН, Мировая экономика и международные отношения, N 7, с. 3-13.

Калдор М. 2015, Новые и старые войны: организованное насилие в глобальную эпоху, Москва, изд. Института Гайдара, 416 с.

Кревельд М. 2005, Трансформация войны, Москва, «Альпина Бизнес Букс», 344 с.

Мариносян Х.Э. 2008, Национальное государство: проблемы и перспективы в условиях глобализации, Философские науки, N 8, с. 5-24.

Хоффман Б., Терроризм – взгляд изнутри https://www.libfox.ru/253490-9-bryus-hoffman-terrorizm-vzglyad-iznutri.html#book (ներբեռնման օրը՝ 14.03.2023).

Штофер Л. 2015, Трансформация войны в условиях глобализации мира: основные формы и их социальные детерминанты, Международный научно-практический и методический журнал «Смальта», с. 59-66.

Abbott W. K., Sidal D. 1998, Why States Act through Formal International Organizations, The Journal of Conflict Resolution, Vol. 42, No. 1, Maryland, p. 3-32.

Fukuyama F., Francis Fukuyama on the End of American Hegemony https://www.economist.com/by-invitation/2021/08/18/francis-fukuyama-on-the-end-of-american-hegemony (ներբեռնման օրը՝ 09.03.2023).

Kivinen O., Piiroinen T. 2022, Epoch-Making Changes in the Cultural Evolution of Communication: Communication Technologies Seen as Organized Hubs of Skillful Human Activities, Journal for the Theory of Social Behavior, Turku, p. 221-237.

Thiele R., The New Colour of War – Hybrid Warfare and Partnerships https://www.files.ethz.ch/isn/194330/383_Thiele.pdf (ներբեռնման օրը՝ 07.03.2023).

Sommerer T., Squatrito T., Tallberg J., Lundgren M. 2022, Decision-Making in International Organizations: Institutional Design and Performance, The Review of International Organizations, N 17, p. 815-845.

Stepanova E. 2008, Terrorism in Assymetrical Conflict: Ideological and Structural Aspects, Sirpi Research Report N 23, Oxford Univercity press, Stockholm, 186 p.

Zakaria F. 2008, The Post-American World, Penguin Group, New York, 292 p.

Zhu Liqun 2010, China's Foreign Policy Debates, Chaillot Papers/European Union, Institute for Security Studies, Paris, September 2010, 75 p.

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ռոբերտ Ղևոնդյան, Թամարա Ղազարյան

Ամփոփում

Արդի աշխարհաքաղաքական գործընթացների այլընտրանքային բազմազանությունը խնդիրներ է առաջացնում ոչ միայն հանգուցալուծումների կանխատեսման հավանականության, այլև ընթացիկ վերափոխումների տրամաբանության ընկալման առումով: Այս համատեքստում տարբեր միավորների համար շարունակաբար ծագող մարտահրավերներին պատասխանելու և հնարավորությունները բաց չթողնելու գերակայությունը հանգում է իրավիճակի վերլուծության միջոցով առանցքային բնորոշիչների դուրսբերման անհրաժեշտության:

Անհավասարակշիռ աշխարհաքաղաքական դրությունը ներկա զարգացումների գլխավոր բնորոշիչն է, որի ազդեցությունը ներթափանցում է տարածաշրջանային ու երկկողմ փոխհարաբերությունների բոլոր մակարդակներ: Ազգային պետություններն այս համատեքստում ստիպված են ձևավորել համարժեք արձագանքի կայուն, բայց նաև ճկուն համակարգեր:

Աշխարհաքաղաքական զարգացումների հնարավոր բազմավեկտորությունը անհրաժեշտություն է առաջացնում ռազմավարական սցենարային պլանավորման և մոդելավորման միջոցով սեփական սուբյեկտայնության շարունակական ավելացման: Ապագայի կառավարման նման գործելաոճը ՀՀ պետականության պահպանման և զարգացման համար այլընտրանք չունի:

Բանալի բառեր՝ աշխարհակարգ, անվտանգություն, մարտահրավեր, քաղաքական տարածություններ, հիբրիդային պատերազմներ, պրոքսի գործընթացներ, ահաբեկիչներ:

МЕХАНИЗМЫ ОБЕСПЕЧЕНИЯ БЕЗОПАСНОСТИ В КОНТЕКСТЕ ГЕОПОЛИТИЧЕСКИХ ИЗМЕНЕНИЙ

Роберт Гевондян, Тамара Казарян

Резюме

Разнообразие альтернатив современных геополитических процессов формирует проблемы, связанные не только с прогнозами разрешений, но и с восприя-

тием логики изменений. В этом смысле важно не упустить возможности и своевременно ответить на вызовы.

Для этого необходимо аналитическим методом вычислить ключевые характеристики явлений.

Главной характеристикой настоящих развитий является несбалансированная геополитическая ситуация, которая оказывает влияние на все уровни региональных и двусторонних отношений. В этой ситуации национальные государства вынуждены формировать устойчивые и вместе с тем гибкие системы адекватного реагирования.

В силу вероятной многовекторности геополитических развитий возникает необходимость стратегического планирования и постоянного укрепления собственной субъектности путем моделирования ситуаций. Подобный способ деятельности для сохранения и развития государственности Армении не имеет альтернатив.

Ключевые слова – мировой порядок, безопасность, вызов, политические пространства, гибридные войны, прокси-процессы, террористы.

SECURITY MECHANISMS IN THE CONTEXT OF GEOPOLITICAL CHANGES

Robert Ghevondyan, Tamara Kazaryan

Abstract

Alternative variety of contemporary geopolitical processes are causing problems not only for probability of resolution, but also for perception of changes. In this context it is important not to miss the opportunity and in due course respond to the challenges. For this aim it is necessary to calculate key characters by analysis.

Main characters of modern developments is unbalanced geopolitical situation in the world, which influences all levels of regional and bilateral relations. National states have to form stable but flexible systems of reaction.

Due to the possibility of multi-vector development of the geopolitical situation, states need strategic planning and permanent ensuring of their subjectivity through modelling the situation. Such manner of practice doesn't have an alternative for maintaining and development of statehood of Armenia.

Key words – global order, security, challenge, political spaces, hybrid wars, proxy processes, terrorists.

ՍՈՒՐՃԸ XIX Դ. ՎԵՐՋԻ ԵՎ XX Դ. ՍԿԶԲԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Տաթևիկ Սարոյան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական
ինստիտուտի հայցորդ
ՀՀ, Երևան, Մաշտոցի պողոտա 53
Էլ. հասցե՝ saroyantatev@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 01.07.2023, գրախոսվել է 01.12.2023, ընդունվել է տպագրության 11.12.2023
ORCID: 0009-0002-2904-9222
DOI: 10.53548/0320-8117-2023.3-125

Ներածություն

Այսօր մեր առօրյան դժվար է պատկերացնել առանց սուրճի. այն դարձել է մարդկության ամենապահանջված ըմպելիքը, որն առիթ և հնարավորություն է ընձեռում, որ մարդիկ հանդիպեն միմյանց, զրուցեն, ժամանակ անցկացնեն:

Չնայած Արևելյան Հայաստանում սուրճի զանգվածային կիրառությունը սկսվեց 1940-50-ական թթ.՝ հայրենադարձների շնորհիվ, սակայն այն արևելահայերին ծանոթ էր դեռևս XIX դարից: Համարվելով քաղաքային մշակույթի բաղադրիչ՝ սուրճը գործածվում էր հիմնականում սրճարաններում՝ տարածում գտնելով Հայաստանի գլխավոր քաղաքներում՝ Ալեքսանդրապոլում և Երևանում: Արևմտյան Հայաստանից ներմուծված մշակույթը ուրույն դրսևորում ունեցավ էնաֆության և մտավորականության միջավայրում:

Սրճարանի մշակույթը ձևավորվել է արևելքում: Դրանք եղել են հավաքատեղի բացառապես տղամարդկանց համար, որոնք այնտեղ ունկնդրել են երաժշտություն, շախմատ խաղացել, մասնակցել քաղաքական քննարկումների: Սրճարանները նաև ստեղծագործողների՝ գրողների, արվեստագետների հանդիպման վայրեր էին դարձել՝ ստանալով «իմաստունների դպրոց» կամ «համալսարան» անվանումը:

Սուրճի կիրառությունն Ալեքսանդրապոլում XIX դ. վերջին և XX դ. սկզբին

Պատմաազգագրական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ XIX դ. կեսերից Ալեքսանդրապոլում լայնորեն տարածված էին թեյը և սուրճը (սև սուրճին զուգահեռ օգտագործում էին նաև բոված, աղացած գարուց պատրաստված ըմպելիք՝ ղայֆա), որոնցով հյուրասիրում էին ընտանեկան տոների ու արարողությունների ժամանակ: Ալեքսանդրապոլում գործել են

սրճարաններ, որոնք քաղաքի մշակույթի կարևոր բաղադրիչներն էին: 1860-ական թթ. քաղաքում կար 26 սրճարան[1]:

1870-ական թթ. սկսած՝ Ալեքսանդրապոլի հռչակավոր սրճարանները՝ ղայֆախանաները, դարձել էին աշուղական երգ ու նվագի յուրատեսակ կենտրոններ (նկ. 1)[2]: Այդ մասին կարդում ենք. «Աշուղական արվեստի հետ շփումը ոչ միայն գեղագիտական, այլև հասարակական-քաղաքական, սոցիալական և կրոնաբարոյագիտական խնդիրներ էր հետապնդում, քանզի աշուղներն էին միայն, որ բաց տեքստով կամ այլաբանորեն կարող էին խոսել ալեքպոլցիներին և ընդհանրապես հայությանը հուզող բազմաթիվ հարցերի մասին»[3]: Իսկ սրճարանները հենց նման ազատ մտքեր ձևավորելու և արտահայտելու ամենահարմար վայրերն էին:

Նշված ժամանակահատվածում աշուղական երգեր լսելու ամենահայտնի հավաքատեղին Շարա Տալյանի նախնիներին պատկանող՝ Տալոյենց սրճարանն էր, որտեղ մշտապես ներկա էին երաժիշտներն ու գուսանները: Այնտեղ առաջին անգամ ելույթ է ունեցել նաև տասնութամյա Ջիվանին[4]: Հայտնի էին նաև Կուզիկենց, Հայկազունիների, Բախալբաշոնց մեծ սրճարանները:

Ալեքսանդրապոլի հանրահայտ սրճարաններից էր նաև «Տիրատուրենց Մարգարի ղայֆախանան, որտեղ հանդիպում էին քաղաքի երևելիները՝ ղարաչուխալի տղեքը և բոլոր այն մարդիկ, որոնց խոսքը քաղաքում արժեք ուներ, օրենսդիր էին: Օրինակ՝ օրենսդիր էին Իզբիտով Արշալույսը, Փլավենց Օնիկը, Սանոյանները, Կարանյանները, Ծաղիկովները, և շատ ու շատ պատվանուններ, որոնք քաղաքի զարդն էին»[5]:

Ալեքսանդրապոլի հասարակական-մշակութային կյանքի մասին հիշատակություններ կան «Ալեքսանդրապոլ. ազգագրական էսքիզներ» աշխատությունում. «Քաղաքի յուրաքանչյուր էսնաֆություն ուներ իր սրճարան-ակումբը: Այստեղ աշխատանքից հետո հավաքվում էին էսնաֆական ավագանին, ծանրաբարո ուստաբաշիներն ու վարպետները մի գավաթ սուրճի կամ ղահվեի շուրջ քննարկելու համար ճյուղային կորպորատիվ հարցեր, քաղաքային համայնքին հուզող խնդիրներ և այլն: Սրճարանում պատվիրատուն գտնում էր կապալառուին, մի խոսքով, քաղաքի ողջ տնտեսական և հասարակական-մշակութային կյանքը արտացոլվում էր այս հաստատություններում: Տարիների ընթացքում յուրաքանչյուր էսնաֆական ակումբ-սրճարանում ձևավորվել էին նաև ավանդական խմբակային հացկերույթի կանոններ և նույնիսկ ճաշացանկ: Այսպիսի ակումբ-սրճարանների մուտքը երիտասարդ խալֆաների

[1] Բազեյան, Աղանյան 2014, 50:
[2] Տե՛ս Հարությունյան 2016, 216:
[3] Բազեյան, Աղանյան 2014, 77:
[4] Տալյան 1973, 7-8:
[5] Արևշատյան https://www.aravot.am/2018/09/30/984319/

և վարպետացուների համար արգելված էր»[6]: Հավանաբար սրճարանների հիմնական հաճախողներն ավելի տարեց են եղել, ունեցել են աշխատանքային վաստակ և անուն:

Սրճարանները նաև հանդիսացել են խնամախոսի հանդիպումների վայր: Երկու կողմերի համաձայնության դեպքում տղայի հայրը, հորեղբայրը, քեռին, երբեմն նաև՝ ուստան (եթե տղան արհեստ էր սովորում) հավաքվում էին սրճարանում, որտեղ հրավիրվում էին նաև աղջկա հարազատները: Այստեղ բոլորի ներկայությամբ տղայի կողմի ներկայացուցիչները օղիով (մեկ-մեկ գավաթ) աչքալուսանք էին խմում, որով խնամիությունը հաստատվում էր, այնուհետև շարունակում էին իրենց կերուխումը[7]:

Աշխարհի շատ երկրների նման Հայաստանում, մասնավորապես Ալեքսանդրապոլում, սրճարանները ծառայել են նաև որպես գաղտնի հանդիպումների վայր, որտեղ հիմնականում հավաքվել են ներքաղաքական խնդիրներ քննարկելու նպատակով: Հիմնականում արծարծվում էին Երկրի ազատագրմանը վերաբերող թեմաներ: Այդ իսկ պատճառով և «աչքից ու ականջից հեռու» լինելու նպատակով ազատագրման գործի նվիրյալները հավաքվում էին «անմեղ» ժամանցի կենտրոններում: XIX դարավերջին նման հանդիպումների համար հիշատակվում է «Տաշտ» սրճարանը[8]:

1920-ական թթ. քաղաքական և զինվորական հարցերին առնչվող քննարկումների առաջին վայրը Երևանում դարձյալ սրճարաններն էին, որտեղ զորաշարժային տեղեկությունները նախքան բանակի շտաբին հասցնելը սկսում էին տարածվել և քննության առարկա դառնալ քաղաքի տարբեր անկյուններում, զբոսայգիներում, սրճարաններում[9]: Վերջինները համարվում էին նաև բամբասանքների ու ասեկոսեների տարածման ամենահարմար տեղը, որտեղ ասում-խոսում էին այլևայլ հարցերի մասին:

Ինչպես նշվեց, քաղաքային կենցաղում բավական տարածված էր սուրճը: Սակայն կանանց նկատմամբ կար սահմանափակում: Եթե տղամարդիկ կարող էին սուրճ խմել նաև սրճարաններում, ապա կանանց մուտքն այնտեղ արգելված էր: Այն ընտանիքներում, որոնք ծանոթ էին սուրճի կիրառությանը, կանայք իրենց սրճախմությունը կազմակերպում էին տանը: Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահվող լուսանկարում պատկերված է մի տեսարան, որտեղ աշուղ Ջիվանու կինը՝ Աշխեն Լևոնյանը, սրճում է գյումրեցի հարսների հետ[10] (նկ. 2):

Ալեքսանդրապոլում 1860-1900-ական թթ. սուրճ կարելի էր գտնել նաև պանդոկներում, կաթնատներում. այդ մասին կարդում ենք «Ժայռ» թերթի

[6] Բազեյան, Աղանյան 2014, 76-77:
[7] Բազեյան, Աղանյան 2014, 76-77:
[8] Հայրապետյան 2017, 172:
[9] Վիրաբյան 2004, 35:
[10] ԳԱԹ, Գարեգին Լևոնյանի ֆոնդ, Մ 442:

1908 թ. գովազդային հայտարարություններում: Քաղաքի կենտրոնում Ռուբեն Ստեփանյանի բացած «Անդոկ» կաթնատան հայտարարությունում նշված է. «Բաց եմ արել քաղաքիս կենտրոնում՝ եղբ. Գրիգորեանների արաղի նախկին պահեստատան տեղում նոր կաթնատուն «Անդոկ», ուր կարելի է մշտապես գտնել թարմ կաթ, թեյ, սուրճ և կակաո...»[11]:

Թերթի մեկ այլ համարում զետեղված է մեկ ուրիշ գովազդ. «Ալէքսանդրեան փողոցում «փոխադարձ վարկի ընկերութեան» դիմաց Թադէոս Պողոսեանցի շինութեան մէջ բացած է եվրոպական ճաշակով կահաւորած կաթնատուն «Արտաշատ»: Որտեղ կարելի է միշտ գտնել թարմ կաթնեղէն, շօկոլաթ, կակաօ, տաճկական և յունական կօֆե և այլն»[12]:

Երևանում սուրճի կիրառությունը. XIX դ. վերջ - XX դ. սկիզբ

Երևանում սուրճի գործածության փաստերն առկա են դեռևս XVIII դ. ի վեր: Գրականագետ, պատմաբան, ազգագրագետ Երվանդ Շահազիզը Երևանի պատմությանը նվիրված աշխատության մեջ նշում է, որ Երևանի բերդում՝ խանի պալատից 500 քայլ հեռավորության վրա, գտնվում էր քաղաքի ամենագեղեցիկ քարավանատունը, որի գլխավոր մուտքն ուներ ութսուն քայլ երկարություն՝ զանազան ապրանքների խանութներով՝ կազմելով մի գեղեցիկ սրահ: Քառանկյունաձև շենքը բաղկացած էր երեք խոշոր և վաթսուն մանր սենյակներից՝ ընդարձակ գոմերով ու մեծ խանութներով: Շենքի դիմացի մի հրապարակը եզերում էին մթերային խանութները, մզկիթը և երկու սրճարան[13]:

Կարծում ենք՝ մինչև ռուս-պարսկական պատերազմը Երևանում սուրճի առկայությունը վկայում է այն մասին, որ կա՛մ արևելահայ վաճառականներն էին ներկրել, կա՛մ պարսիկ խաների կողմից էր ներմուծվել այն, քանզի այդ ժամանակաշրջանում սուրճը բավական հայտնի ըմպելիք էր Պարսկաստանում: Այդ է պատճառը, որ մինչև 1930-40-ականների հայրենադարձությունն Արևելյան Հայաստանում, մասնավորապես՝ Երևանում, սուրճն արդեն որոշ չափով կիրառվել է: Իսկ ավելի ուշ պատմաբան, աշխարհագրագետ Թադևոս Հակոբյանը հիշատակում է, որ դեռևս 1881 թ. Երևանում գործել է 23 սրճարան[14]:

1904 թ. Երևանում՝ Կոլյուբյակինյան պուրակում (այժմ՝ Շահումյան պուրակ), իր ոճով (դեկորատիվ տաղավար, մավրիտանական ոճ) առանձնանում էր սրճարան-տաղավարը (նկ. 3)[15]:

[11] Ժայռ 1908, հունվարի 6, N 9:
[12] Ժայռ 1908, փետրվարի 3, N 16:
[13] Շահազիզ 1930, 120:
[14] Հակոբյան 1963, 133-134:
[15] Երևան քաղաքի պատմության թանգարանի ֆոտո-ֆոնո ֆոնդ, ՄՄ 5534:

Նկ. 1. Գ. Բրուտյան աշուղական սրճարանն Ալեքսանդրապոլում (տե՛ս Հարությունյան 2016)

Նկ. 2. Աշխեն Լևոնյանը գյումրեցի հարսների հետ սրճելիս, 1900-ական թթ., ԳԱԹ

Նկ. 3. Տաղավար Կոլյուբյակինյան պուրակում (այժմ՝ Շահումյան պուրակ)
1904 թ., ԵՔՊԹ

Քաղաքի զբոսայգու (բուլվարի) մեծ տաղավարում կարելի էր պաղպաղակ ուտել և խմել «Լաստո» համեղ լիմոնադը, որը XIX դ. վերջին արտադրվում էր Երևանում՝ Խաչատուր Գիլանյանցի հիմնած գործարանում[16]: Գիլանյանցի արտադրությունն ամենից շատ հայտնի դարձավ նրա ստեղծած սրճային համով լիմոնադի շնորհիվ, որը, 1898 թ. մասնակցելով Պրահայում կայացած միջազգային ցուցահանդեսին, արժանացավ ոսկե մեդալի[17]:

XX դ. սկզբի սրճարանները գործել են հրուշակեղենի խանութներում[18]: Շատ հայտնի էր նաև «Մուշտաիդ» ջրերի, կաթի սուրճի և թեյի «խանութ-սրճարանը»[19]:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին երևանցի տոհմիկ ընտանիքների տղամարդկանց ժամանցի վայր են եղել ակումբները (կլուբներ): Հին Երևանի Մալյարնայա փողոցում (այժմ՝ Տերյան 11) էր գտնվում Աֆրիկյանների ակումբը, որը կառուցվել է XIX դ. վերջին մեծահարուստ Աֆրիկյան եղբայրների կողմից: Ակումբի շենքը քաղաքի նշանավոր մարդկանց և վերնախավի սակավաթիվ հավաքատեղիներից էր: Նրանք սուրճի կամ թեյի սեղանի շուրջ քննարկում էին քաղաքական, հասարակական և այլ խնդիրներ: 1913 թ. շենքը պատկանել է Առաքել Աֆրիկյանին: Քաղաքում գործում էր նաև մեկ այլ քաղաքային ակումբ, որը գտնվում էր Տեր-Ղուկասովի (այժմ՝ Վազգեն Սարգսյան) փողոցում, Բուլվարի հարևանությամբ: Այստեղ էր նաև հանրահայտ «Բունիաթովի կլուբը», իսկ XX դ. սկզբին՝ «Ֆանտազիա» կինոթատրոնը[20]:

1920-30-ական թթ. Երևանի սրճարանները լիովին նմանվում էին փարիզյան սրճարաններին, ուր հաճախում էին հիմնականում մշակույթի ու արվեստի գործիչներ: Այս փոփոխությունը պայմանավորված էր մի քանի հանգամանքներով: Դրան նպաստում էր հայրենադարձությունը, ինչպես նաև Երևանի՝ մայրաքաղաք լինելու պարագան: Կարևոր պատճառ էր նաև տարբեր երկրներում ապրող հայազգի գիտնականների, մշակույթի և հասարակական գործիչների վերադարձը հայրենիք:

Քաղաքային մթնոլորտի ձևավորման վրա մեծ ազդեցություն ունեցավ Փարիզից եկած մտավորականների՝ ֆրանսահայերի, մասնավորապես արվեստագետների ներգաղթը, որոնք լավատեղյակ էին Մոնմարտրի և Մոնպառնասի սրճարանային մշակույթին և երևանյան սրճարանների մշտական այցելուներն էին: Չնայած Երևանում այնքան էլ շատ չէին սրճարանները, բայց այնտեղ կարելի էր տեսնել ականավոր գործիչների, երբեմն նաև նրանց կանանց:

---

[16] Исаакян 1970, 219.

[17] Երևան քաղաքի պատմության թանգարանում պահվող՝ Խաչատուր Գիլանյանցի դստեր՝ Մարգարիտա Գիլանյանցի հուշերից, ձեռ. N 2233-1/փ797:

[18] Исаакян 1970, 219.

[19] Օրբելյան 2018, 106:

[20] Օրբելյան 2018, 110:

Հասարակության մեջ լավ համբավ ունեին «Տուրիստ», «Ինտուրիստ», «Նալբանդ», ավելի ուշ շրջանում՝ Հայպետհրատի շենքի բակում բացված սրճարանները:

Վերոշարադրյալը ի մի բերելով՝ կարող ենք եզրակացնել, որ 1890-ական թթ. Ալեքսանդրապոլի սրճարանների հիմնական այցելուներն արհեստավորներն էին և քաղաքի հեղինակավոր տղամարդիկ, իսկ Երևանում 1920-ական թթ. դրանք դարձել էին մտավորականության՝ գրողների, արվեստագետների, հասարակական-քաղաքական գործիչների հանդիպման վայրերը, «...որոնք մշտապես իրենց ազատ ժամերին ռեստորաններում և կաֆեներում հավաքվում, մի-մի բաժակ սուրճ էին խմում, ասում-խոսում, կատակում և խմբով փողոց դուրս գալիս, զբոսնում»[21]:

Երկու քաղաքներում էլ սրճարանները ազատության շնչով տոգորված ինքնատիպ ինստիտուտներ էին, որտեղ խոսում էին գիտությունից, արվեստից ու գրականությունից, իսկ երիտասարդների համար դրանք ոչ միայն հաճելի ժամանցի, այլև գիտելիքների ձեռքբերման առանձնահատուկ վայրեր էին:

Հատուկ ուշադրության են արժանի 1930-ականն թթ. մտավորականության սրճարանները Երևանում: Ազգաբան Գ. Ստեփանյանը հիշատակում է. «1930-ականներին Վարդանանց փողոցի շենքերից մեկի ներքնահարկում («Խորհրդային Հայաստան» օրաթերթի խմբագրության նկուղային հարկում) բացված երևանյան հռչակավոր «Կաֆե տուրիստ» սրճարանը, որի տերը Երևան ներգաղթած ֆրանսահայ մտավորական Հակոբ Տարոնացին էր, որը դիմել էր հանրապետության ղեկավար Ա. Խանջյանին՝ «հայ մտավորականներուն համար Երեւանին մեջ Փարիզի Մոնմարտրի սրճարաններուն նման սրճարան մը ստեղծելու առաջարկով»[22]: Ըստ Տարոնացու՝ այն պետք է լիներ հանրային շփման վայր, որտեղ կարևոր դերակատարում կունենային մտավորականները: Իրապես, բացվելուց անմիջապես հետո սրճարանի մշտական այցելուները դարձան Եղիշե Չարենցը, Գուրգեն Մահարին, Վահան Թոթովենցը, Զապել Եսայանը, Հրաչյա Աճառյանը, Մանուկ Աբեղյանը, Հակոբ Մանանդյանը, Երվանդ Քոչարը, Արուս Ոսկանյանը, Հասմիկը, Սրբուհի Լիսիցյանը և ուրիշ հանրահայտ դեմքեր:

Ավելին, այնտեղ շուտով ձևավորվում է այցելուներին ներկայացնող սրճարանային բաց համայնք՝ նրանց «պատկանող» սեղաններով, որոնց շուրջը միշտ նստում էին նույն մարդիկ՝ այցելության որոշակի օրով, ժամով և տևողությամբ, ներքին փոխհարաբերությունների չգրված օրենքներով: Ինչպես նշում են ականատեսները, հաճախ էր պատահում, որ «համայնականներից» որևէ մեկի բացակայության դեպքում նրա աթոռը մինչև սրճարանի

[21] Ալազան 2020, 219:
[22] Ստեփանյան 2018, 342:

փակումն այդպես էլ ազատ էին թողնում: Շուտով «Կաֆե տուրիստում» ձևավորվեցին նաև առանձին խմբեր, որոնք հավաքվում էին նույն սեղանի շուրջը: Դրանք կազմավորվում էին տարբեր չափանիշներով. մի դեպքում առաջնային էր միևնույն դպրոցում ուսանած լինելու հանգամանքը, մեկ այլ դեպքում՝ սերումը նույն տարածքից, երրորդում՝ մասնագիտական պատկանելությունը:

Դատելով ականատեսների հուշերից՝ կարող ենք ասել, որ զրույցների հիմնական թեմանները մի քանիսն էին՝ հայերենի պահպանությունը խոսակցականում ռուսերենի ակտիվ ներգրավման պայմաններում, հայրենադարձների ծանր հիշողությունները ցեղասպանության մասին, գաղափարախոսական վեճերը գրականության, արվեստի առանձին խնդիրների վերաբերյալ և այլն. «Սրանց կողքին օդի մեջ մշտապես կախված էին նաև չբարձրաձայնված, փակ թեմանները, որոնք կապված էին 30-ականների սարսափի՝ ստալինյան բռնությունների հետ»[23]:

Քաղաքաբնակների սիրված վայրերից էր «Ինտուրիստ» (այսօր՝ «Երևան») հյուրանոցի սենյակներից մեկում բացված «Բաղդասար աղբար» սրճարանը: Գուրգեն Մահարու վկայությամբ՝ դրամատուրգ-բժիշկ Ստեփան Բաղդասարյանն էր ստանձնել ռեստորանի սենյակներից մեկի ձևավորումն ու հոգսը, և այն գործում էր որպես սրճարան, որն ավելի ուշ տեղափոխվում է հյուրանոցի կցակառույց: 1948 թ. այն քանդվում է, և տեղում հիմնվում է բացօթյա սրճարան, որը նույնպես դառնում է Երևանի մտավորականության հավաքատեղին: Ավետիք Իսահակյանի որդին՝ կինոօպերատոր Վիգեն Իսահակյանը, սրճարանն անվանում էր այն տարիների «անազատ Երևանի» ամենաազատ տարածքը, ուր հավաքվում էին գիտության, մշակույթի երևելիները և խոսում այն թեմաներից, որոնք միայն սրճարանում կարելի էր լսել»[24]:

Եզրակացություններ

Չնայած Արևելյան Հայաստանում սուրճի կիրառության մշակույթը հիմնականում զուգորդում էր հայրենադարձության հետ, սակայն մինչև 1930-40-ական թթ. արևելահայերը ծանոթ էին ըմպելիքին: Կարծում ենք, որ այն Ալեքսանդրապոլ է մուտք գործել հիմնականում Կարսից:

Երևանում սուրճի մշակույթի ձևավորման վրա թերևս զգացվում է պարսկական ազդեցությունը, քանի որ Ղաջարական դինաստիայի շրջանում սուրճի կիրառությունը Պարսկաստանում համեմատաբար շատ էր, և Երևանի խաները մշակույթը կարող էին ներմուծել: Ասվածի մասին են փաստում մինչև ռուս-պարսկական պատերազմը Երևանի բերդում առկա սրճարանները:

XIX և XX դդ. Ալեքսանդրապոլի ու Երևանի սրճարանները բացվեցին նույն տրամաբանությամբ, ինչ աշխարհի ամենահին սրճարանները, այսինքն՝

[23] Ստեփանյան 2018, 342:
[24] Կարապետյան, Հարոյան 2015, 89:

խոշոր քաղաքների ամենաբանուկ հատվածներում՝ հիմնականում շուկաներին և հրապարակներին կից, դրանով իսկ ապահովելով այցելությունները: Էական չէր, որ սրճարանը կարող էր մատուցել հենց սուրճ, կարևորը շինության առկայությունն էր, որը այցելությունների հնարավորություն էր տալիս: Չնայած հասարակական հավաքատեղիներ էին, սակայն այնտեղ իրավունք ունեին հաճախելու հիմնականում տղամարդիկ, այն էլ՝ ոչ բոլորը. դա կախված էր նրանց զբաղեցրած դիրքից, տարիքից և այցելության նպատակներից: Սակայն այս կարծրատիպերն աշխարհում կոտրվեցին՝ սկսած XIX դ. վերջից: Հայաստանում առաջին փոփոխությանը ենթարկվեցին Երևանի սրճարանները: Դա պայմանավորված էր մի շարք հանգամանքներով. Երևանի՝ մայրաքաղաք հռչակվելը, հանրության կենսաձևի ակտիվությունը, զբոսաշրջիկների ինտենսիվ հոսքը, հայրենադարձությունը:

Գրականություն

Ալազան Մ. 2020, Իմ կյանքի ողբերգությունը, հուշեր, Երևան, ՀԱԻ հրատ., 716 էջ:

Արևշատյան Ն. Գյումրու ամենագեղեցիկ փողոցի պատմությունից. ճիշտն ու սխալը որոշվել է ղայֆախանում, https://www.aravot.am/2018/09/30/984319/ (ներբեռնման օրը՝ 20.12.2021):

Բազեյան Կ., Աղանյան Գ. 2014, Ալեքսանդրապոլ. ազգագրական էսքիզներ (պատմաազգագրական ուսումնասիրություն), Շիրակի հնագիտական և պատմաազգագրական ուսումնասիրություններ, N 2, Երևան-Գյումրի, էջ 7-117:

Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Գարեգին Լևոնյանի ֆոնդ, Մ 442:

Կարապետյան Վ., Հարոյան Մ. 2015, Grand Hotel Yerevan, Երևան, «Մեդիապոլիս», 143 էջ:

Հակոբյան Թ. 1963, Երևանի պատմությունը 1879-1917 թթ., հ. 3, Երևան, ԵՊՀ հրատ., 607 էջ:

Հայրապետյան Ա. 2017, Հուշեր Ալեքսանդրապոլի հեղափոխական անցյալից (Արամայիս Ազնավուրյան), Գիտական աշխատություններ հոդվածների պարբերական ժողովածու, XX, Գյումրի, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ հրատ., էջ 170-182:

Հարությունյան Հ. 2016, Ալեքսանդրապոլի աշուղական համքարությունը աշուղ Խայաթի հուշերում, Գիտական աշխատություններ հոդվածների պարբերական ժողովածու, XIX, Գյումրի, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ հրատ., էջ 210-216:

Շահազիզ Ե. 1930, Հին Յերեվանը, Յերեվան, «Մելքոնյան ֆոնդ» հրատ., 262 էջ:

Ստեփանյան Գ. 2018, Սրճարանային միջավայրը Երևանում. արևելյան տարածք արևմըտյան հետագծով, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ 1, Հայ ժողովրդի մշակույթը XVII, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Երևան, ՀԱԻ հրատ., էջ 340-352:

Վիրաբյան Վ. 2004, ՀՀ հետախուզական և հակահետախուզական ծառայությունը 1918-1920 թթ., Բանբեր Հայաստանի արխիվների, N 2, Երևան, էջ 30-35:

Տալյան Շ. 1973, Դեպքեր, դեմքեր, մտքեր, Երևան, «Հայաստան», 254 էջ:

Օրբելյան Գ. 2018, Հին ու նոր Երևանի ժամանցի վայրերը, «Երևան-5» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, Երևան քաղաքի պատմության թանգարան, էջ 102-122:

Ժայռ գրական, հասարակական, քաղաքական թերթ, 1908 հունվարի 6, N 9, Ալեքսանդրապոլ:

Ժայռ գրական, հասարակական, քաղաքական թերթ, 1908 փետրվարի 3, N 16, Ալեքսանդրապոլ:
Երևան քաղաքի պատմության թանգարանի ֆոտո-ֆոնո ֆոնդ, ՄՄ 5534:
Երևան քաղաքի պատմության թանգարանի Խաչատուր Գիլանյանցի դստեր՝ Մարգարիտա Գիլանյանցի հուշերից, ձեռ. N 2233-1/փ797:
Исаакян Э.И. 1970, Пусть в памяти потомства Ереван остается таким, каким был в действительности, Вестник архивов Армении, Ереван, N 2, с. 215-220.

ՍՈՒՐՃԸ XIX Դ. ՎԵՐՋԻ ԵՎ XX Դ. ՍԿԶԲԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Տաթևիկ Սարոյան

Ամփոփում

Սրճարանների երևան գալը նոր մշակույթ ու մոտեցումներ ներմուծեց քաղաքային միջավայր: Դրանք հնարավորություն ընձեռեցին տարածելու ազատության գաղափարներ՝ դառնալով նաև անձի ինքնադրսևորման և կայացման միջոց: Ալեքսանդրապոլի և Երևանի սրճարանները XIX-XX դդ. ծառայել են ոչ միայն որպես հավաքատեղի, այլև եղել են աշուղների ստեղծագործությունները վայելելու կենտրոններ, որտեղ ամեն մի սրճարան ունեցել է իր աշուղը կամ աշուղական խմբերը: Դրանք ազգային կրթության ու դաստիարակության օջախներ էին, ինչպես նաև հեղինակավոր անձանց, գրողների ու դերասանների հավաքատեղի, հասարակական-քաղաքական գործիչների հանդիպման վայրեր:

Բանալի բառեր՝ առօրեականություն, սուրճ, սրճարան, սուրճի մշակույթ, հայրենադարձություն, քաղաք, քաղաքային կյանք:

КОФЕ В КОНЦЕ XIX В. – НАЧАЛЕ XX В. В АРМЯНСКОЙ ГОРОДСКОЙ ПОВСЕДНЕВНОСТИ

Татевик Сароян

Резюме

Культура кофеен изменила облик городской среды. В XIX – XX веках в больших и малых городах Армении (Александрополь, Ереван) они являлись не только местоми встреч. В каждом кафе были свои ашуги или ашугские группы. Кофейни были своеобразными центрами национального образования, воспитания. В числе посетителей были известные писатели, артисты, национальные деятели.

Ключевые слова – повседневность, кофе, кафе, культура кофе, репатриация, город, городская жизнь.

COFFEE AT THE END OF THE XIX AND THE BEGINNING OF THE XX CENTURIES IN ARMENIAN URBAN DAILY LIFE

Tatevik Saroyan

Abstract

The appearance of cafes brought new culture and approaches to the urban environment. They provided an opportunity to spread ideas of freedom, becoming the means for individual expression. In the 19th and 20th centuries, cafes in Yerevan and Alexandropol acted as gathering places as well as spaces for enjoying the performances of the troupes; each cafe had a troupe (ashough) or troupe groups (ashougs' groups) of its own. They became centers of national education, meeting places for writers, actors and authoritative figures. They also became hidden places for political activity.

Key words – Daily life, coffee, cafe, coffee culture, repatriation, city, urban life.

ԼՈԶԱՆԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ «ԱԶԳԱՅԻՆ ՕՋԱԽԻ» ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՊՈԼՍԱՀԱՅ ՄԱՄՈՒԼՈՒՄ («ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ», «ՃԱԿԱՏԱՄԱՐՏ», «ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐ»)

Մանե Կոնինյան

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4
Էլ. հասցե՝ Koninyan.mane@yandex.ru
Հոդվածը ներկայացվել է 15.09.2023, գրախոսվել է 04.12.2023, ընդունվել է տպագրության 11.12.2023
ORCID: 0009-0002-9781-3712
DOI: 10.53548/0320-8117-2023.3-136

Ներածություն

Թուրքիայի ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) և Անտանտի տերությունների՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի միջև 1922 թ. հոկտեմբերի 11-ին կնքված Մուդանիայի զինադադարով ավարտվեց հույն-թուրքական պատերազմը: Քեմալականների տիրապետության տակ էին գտնվում Անտանտի կողմից հույներին խոստացված և՛ Փոքր Ասիայի արևմտյան տարածքները, և՛ Արևելյան Թրակիան, սակայն նեղուցների, փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության, նախկին օսմանյան պարտքերի մարման հարցերը դեռևս չէին գտել իրենց լուծումները: Դրանցով էր նաև պայմանավորված Լոզանի խորհրդաժողովի հրավիրումը, որը պետք է դառնար Մուդանիայի* զինադադարով ձեռք բերված նախնական պայմանավորվածությունների վերջնական հանգուցալուծումը: Այս առումով Կ. Պոլսում լույս տեսնող «Ճակատամարտ» թերթը կարծիք էր հայտնում, որ «Արեւելեան խնդիրը, որ պարբերաբար սեղանի վրա կուգայ, պիտի գտնէ արդար լուծում մը զոր դաշնակիցները կը փափաքին»[1]:

Եվրոպական թերթերը նշում էին, որ դաշնակիցները պետք է գերագույն ճիգեր գործադրեն կարգավորելու ոչ միայն հույն-թուրքական վեճը, այլև վերջնականապես լուծելու նեղուցների հարցը: Թեև այդ երկու խնդիրը տարբեր էին, բայց միմյանց հետ փոխկապակցված էին, և դրանց լուծումն իր ազդեցությունն էր ունենալու թուրքական պետության ապագա տնտեսական և քաղաքական կացության վրա:

Լոզանի խորհրդաժողովին մասնակցելու համար ֆրանսիական, բրիտանական և իտալական կառավարությունները հրավիրում են նաև Խորհրդային Ռուսաստանին, որը պետք է մասնակցեր միայն նեղուցներին

* Թուրքական ծովափնյա քաղաք:
[1] Ճակատամարտ 1922, N 1213:

վերաբերող մասնախմբի քննարկումներին: Դիտորդի կարգավիճակով հրավիրվում է նաև ԱՄՆ-ը, որը չէր կարող մասնակցել բանակցություններին, քանի որ չէր պատերազմել Օսմանյան կայսրության դեմ, սակայն պիտի մասնակցեր այնպիսի կարևոր հարցերի քննարկմանը, ինչպիսիք էին նեղուցների հարցը, փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը, առևտրական ազատությունները և այլն: «Միացեալ Նահանգները իրենց ծանուցագրով ուժգնօրէն կը շեշտեն, թե չպիտի հրաժարին ուրիշ տերութիւններու հետ Թուրքիոյ մէջ իրենց ստացած իրաւունքներեն, մասնաւորապէս պիտի պնդեն քրիստոնեայ փոքրամասնութեանց պաշտպանութեան եւ նեղուցներու ազատութեան վրայ»[2]: «Ճակատամարտ» թերթը նշում էր, որ «այս պատուիրակը կարգ մը իրաւասութիւններ պիտի ունենար եւ պարզ դիտող մը չպիտի ըլլայ»[3]:

Դաշնակից տերությունները հրավեր են ուղարկում նաև թուրքական զույգ կառավարությունների՝ սուլթանական և Անկարայի պատվիրակություններին, քանի որ 1922 թ. նոյեմբերի 1-ի դրությամբ երկրում իրական իշխանություն էր համարվում Թուրքիայի Ազգային մեծ ժողովը[**]: Թուրքական թերթերը գրում էին. «Օսմանեան կայսերական կառավարութիւնը այսուհետեւ ջնջուած է: Թրքական հողի ամբողջ տարածութեան վրա՝ Պոլսոյ, Թրակիոյ, ինչպէս եւ Փոքր Ասիոյ մէջ գոյութիւն ունի միայն Թուրքիոյ Ազգային Մեծ Ժողովի կառավարութիւնը, որ Էնկիւրի կը նստի»[4]:

Անկարայի կառավարությունը Մ. Քեմալի գլխավորությամբ ամեն բան անում էր, որ թուրքական պետության «ազգային շահերը չզոհաբերվեին» փոքրամասնությունների շահերին: ԹԱՄԺ-ը Մ. Քեմալի նախագահությամբ արտակարգ նիստ հրավիրեց, որտեղ քննադատության ենթարկեց սուլթանական կառավարության քայլերը: Ավելին, ընդունելով Լոզանի խորհրդաժողովին մասնակցելու տերությունների առաջարկը՝ Անկարայի կառավարությունը բողոքում էր Պոլսի կառավարությանն ուղղված տերությունների հրավերի դեմ՝ սպառնալով նույնիսկ չմասնակցել ժողովին, եթե այդ հրավերը պահպանվեր[5]: Անկարայի կառավարությունը դաշնակիցներին հղած ծանուցագրում ոչ միայն հայտնում էր, որ թուրքական պետությունը ներկայացնող միակ կառավարությունը ԹԱՄԺ-ն է, այլև պնդում էր. «Ազգային Մեծ Ժողո-

[2] Ճակատամարտ 1922, N 1209:

[3] Ճակատամարտ 1922, N 1208:

[**] Նոյեմբերի 17-ին սուլթան Մեհմեդ VI Վահեդդինը անգլիացիների օգնությամբ լքեց երկիրը: Չնայած դրան, Մուսթաֆա Քեմալը անմիջապես չդիմեց խալիֆայությունը վերացնելու քայլին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լոզանի խորհրդաժողովի ընթացքում թուրքական պատվիրակությունը կարող էր փորձել օգտագործելու Թուրքիայի՝ որպես իսլամական աշխարհի կենտրոն լինելու հանգամանքը՝ Անգլիայի և Ֆրանսիայի վրա ճնշում գործադրելու համար, քանզի նրանց գաղութների բնակչության մեծամասնությունը իսլամադավան էր:

[4] Ճակատամարտ 1922, N 1215:

[5] Ճակատամարտ 1922, N 1209:

վի իրաւասութիւնը չունեցող որևէ մարմին իրաւունք չունի Թուրքիոյ անունով խօսելու խորհրդաժողովին մէջ»[6]:

Լուրջ վիճաբանությունից հետո թուրքական երկու կառավարությունները Անկարայի կառավարության գլխավորությամբ միավորված պատվիրակություն են ուղարկում Լոզան. դրա մեջ ընդգրկված էին արտաքին գործերի նախարար Իսմեթ փաշան, առողջապահության նախարար Ռիզա Նուրի բեյը և նրանց խորհրդականները: Իսմեթ փաշան հայտարարում էր. «Այլեւս անցած են դժբախտութեան վայրկեանները եւ հետեւաբար նպաստաւոր եւ պատուաւոր յաշտութենէ մը յետոյ ազգը երջանկութեան շրջան մը պիտի բոլորէ»[7]: Թուրքական կողմն ամեն բան անելու էր, որպեսզի Լոզանում պահպաներ Ազգային ուխտի սահմանները, որի յուրաքանչյուր թիզ հող, ինչպես իրենք էին նշում, «քանի մը նահատակի արիւնով ոռոգուած է»[8]: Թուրքական «Իլերի» թերթը գրում էր. «Շատ լավ գիտենք, թէ Լօզանի խորհրդաժողովին մէջ ինչ պիտի ընենք, ինչ քաղաքականութեան պիտի հետևինք... Բուանքարէի հետապնդած թրքասէր քաղաքականութիւնը երեւան պիտի գայ Լօզանի մէջ, ու հաշտութեան խարիսխը պիտի ըլլան ֆրանսական ճշմարտասիրութիւնը ու խաղաղասիրութիւնը»[9]: Թերթը հույս էր հայտնում, որ անգլիական և իտալական քաղաքականությունը ևս հանդուրժող կլինի: Դա պատահական չէր, քանի որ ֆրանսիական կողմն ի սկզբանե ցույց էր տվել իր համակրանքը Անկարայի կառավարության հանդեպ: Անգամ ֆրանսիական որոշ թերթեր թուրքերին խորհուրդ էին տալիս, որ անպատեհ որոշումներով չվտանգեն իրենց զինվորական հաղթանակի պտուղները:

«Ազգային օջախի» վերաբերյալ քննարկումները Լոզանի կոնֆերանսի ռազմատարածքային հանձնաժողովի նիստերում

Լոզանի խորհրդաժողովն իր աշխատանքները սկսեց 1922 թ. նոյեմբերի 20-ից և ընդհատումներով ավարտեց 1923 թ. հուլիսի 24-ին՝ Լոզանի պայմանագիրն ստորագրելով: Խորհրդաժողովում կրկին արծարծվեց Հայկական հարցը, որի շուրջ քննարկումները տեղի ունեցան ռազմատարածքային հանձնաժողովի նիստերում (1922 թ. դեկտեմբերի 12-14-ին, 1923 թ. հունվարի 9-ին, հունիսի 4-ին, հուլիսի 17-ին): Պոլսահայ մամուլը բավականին բուռն անդրադարձել է թուրքական թերթերի արձագանքներին՝ կապված փոքրամասնությունների հարցերի, մասնավորապես հայկական «Ազգային օջախի» գաղափարի հետ:

1922 թ. դեկտեմբերի 12-14-ին գումարված ռազմատարածքային հանձնաժողովի նիստերում, որոնք նախագահում էր բրիտանական պատվիրա-

[6] Ճակատամարտ 1922, N 1209:
[7] Ճակատամարտ 1922, N 1215:
[8] Ճակատամարտ 1922, N 1216:
[9] Ճակատամարտ 1922, N 1208:

կության ղեկավար, արտաքին գործերի նախարար լորդ Քերզոնը, բարձրացվեց նաև փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության հարցը՝ մատնանշելով վերջիններիս ահավոր ծանր և արյունալի կացութ-յունը Օսմանյան կայսրությունում: Լոզանի խորհրդաժողովի փոքրամասնության մասնախմբում բուռն վիճաբանություններ տեղի ունեցան հայերի համար նախատեսվող «Ազգային տան» գաղափարի շուրջ: Քերզոնը, հատուկ առանձնացնելով հայերին, հիշատակեց 1878 թ. Բեռլինի կոնֆերանսից մինչև Սևր ընկած միջազգային պայմանագրերով փոքրամասնություններին վերաբերող հոդվածները, որոնք, իրականում մնացել էին անկատար: Նա ենթատեքստով փորձում էր ընդգծել Օսմանյան կայսրության՝ փոքրամասնությունների նկատմամբ որդեգրած խտրական քաղաքականությունը և միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները չկատարելը:

Անդրադառնալով հայերին՝ Քերզոնը նշում է. «Նրանք արժանի են հատուկ ուշադրության՝ աչքի առաջ ունենալով ոչ միայն կյանքի ընթացքում նրանց կրած դաժան տառապանքները, որոնք հարուցել են քաղաքակիրթ աշխարհի համակրանքն ու զարհուրանքը, այլև նկատի ունենալով ապագայի վերաբերյալ նրանց տրված հատուկ հավաստիացումները»[10]: Քերզոնն առաջարկեց հայերի համար կազմավորել «ազգային տուն»՝ համաձայն այն խնդրագրի, որն իրեն են ներկայացրել հայ պատվիրակները: Նշենք, որ Հայաստանի Առաջին հանրապետության և արևմտահայերի Ազգային պատվիրակությունները խորհրդաժողովին էին ներկայացրել «ազգային տան» իրենց ծանուցագիրը, որում խնդրի լուծման երեք միջոց էին առաջարկում.

«1. Գոնէ մասամբ յարգել Միացեալ Նահանգներու նախագահի իրաւարարի վճիռը, որ որոշած է ազատագրուելիք և հայերուն յատկացուելիք հողամասը:

2. Ձեռնարկել Երևանի Հայկական Հանրապետութեան ընդարձակման, Արևելեան նահանգներու կողմէ, ծովի վրայ ելքով մը:

3. Այս տան յատկացնել Կիլիկիոյ այն մասը, որ Սէվրի դաշնագրով Սուրիոյ միացուած էր և Էնկիւրիի դաշնագրով Թուրքերուն ձգուած է»[11]:

Այսինքն, թուրքական պետությունն իր ասիական տարածքների որևէ մասում, հյուսիս-արևելյան նահանգներում կամ Կիլիկիայի ու Սիրիայի հարավ-արևելյան սահմանագծի վրա հայերին պետք է տրամադրեր «Ազգային օջախ», քանի որ, ինչպես հայկական պատվիրակություններն էին պնդում, «Հայկական խնդիրը հիմա ազգային խնդիր մը չէ, այլ մարդասիրական»[12]:

Քերզոնի հարցադրմանը պատասխանեց Իսմեթ փաշան՝ սկսելով անցյալի դեպքերից, երբ հայերը ապրում էին հաշտ ու խաղաղ, և հասցրեց մինչև Առաջին աշխարհամարտի դեպքերը, երբ մեծ տերությունները, օգ-

[10] Армянский вопрос на Лозаннской конференции, извлечения из протоколов 1926, 5.
[11] Ճակատամարտ 1922, N 1252:
[12] Ճակատամարտ 1922, N 1252:

տագործելով Հայկական հարցը, փոքրամասնություններին անընդհատ հրահրում էին կայսրության դեմ՝ միջամտելով երկրի ներքին գործերին: Իր այդ դատողություններից ելնելով՝ թուրքական պատվիրակության ղեկավարը դաշնակից տերություններին առաջարկում էր ուղղորդել փոքրամասնությունների ձգտումները՝ դրանով իսկ չխառնվել երկրի ներքին գործերին, եթե նրանք իսկապես ցանկանում են բարելավել փոքրամասնությունների վիճակը[13]: Ինչ վերաբերում էր Թուրքիայի տարածքում «Ազգային օջախ» տրամադրելու գաղափարին, Իսմեթ փաշան կտրականապես մերժեց այդ առաջարկը՝ նշելով, որ թուրքական պետության տարածքներում փոքրամասնություններն այնքան աննշան են, որ անընդունակ են ստեղծելու անկախ պետություններ: Նա նշում է, որ իրենց երկրում մնալ ցանկացող հայերը կարող են եղբայրաբար ապրել թուրքերի հետ, որոնք նրանց մասին հոգ կտանեն, բայց չեն պատրաստվում պետության որևէ մասի զիջում կատարել, քանի որ դա մասնատման նոր փորձ կլինի: «Թուրքիան ոչ իր արևելյան նահանգներում, ոչ Կիլիկիայում չունի տերիտորիայի ոչ մի պատառ, որի բնակչության մեծ մասը թուրքեր չլինեն, և որը կարելի կլիներ որևէ կերպ անջատել մայր հայրենիքից»[14]: Շեշտելով Խորհրդային Հայաստանի առկայության փաստը, որի հետ իրենք կնքած պայմանագիր ունեն, թուրքական կողմը, իր խոսքով ասած, չէր պատկերացնում «մեկ այլ Հայաստանի գոյությունը»:

Լորդ Քերզոնն առաջ քաշեց այն միտքը, որ անգլիական գաղութներում ևս կան շատ փոքրամասնություններ, բայց ունենալով մաքուր ձեռքեր՝ ինքը չի վախենում Ազգերի լիգայից: Իսմեթ փաշան հակադարձեց, թե Թուրքիայի ձեռքերը ևս մաքուր են, նրանք բռնություն չեն գործադրել և չեն ավերել, երբեք չեն ներխուժել ուրիշների երկիր և նույնպես չեն վախենում Ազգերի լիգայից[15]:

1922 թ. դեկտեմբերի 12-14-ը գումարված ռազմատարածքային հանձնաժողովի նիստերը չտվեցին սպասված արդյունքը: Թուրքական պատվիրակությունը մերժեց փոքրամասնությունների, ինչպես նաև ազգերի, կրոնների և լեզուների խնդիրներին առնչվող՝ դաշնակիցների պատրաստած նախագծերը[16]: Հանձնաժողովը փոքրամասնությունների հարցը հանձնում է հատուկ Ենթահանձնաժողովի քննարկմանը:

Պոլսահայ մամուլի անդրադարձը Լոզանի կոնֆերանսին

«Ճակատամարտ» թերթում արտատպվել է թուրքական «Իգտամ» թերթի Լոզանի թղթակցի հետևյալ գրությունը. «Մեր պատուիրակութիւնը բա-

[13] Армянский вопрос на Лозаннской конференции, извлечения из протоколов 1926, 13.
[14] Армянский вопрос на Лозаннской конференции, извлечения из протоколов 1926, 17-18.
[15] Армянский вопрос на Лозаннской конференции, извлечения из протоколов 1926, 22-23:
[16] Ճակատամարտ 1922, N 1252:

ցարձակապէս կը մերժէ Հայկական Տան պահանջը: Այն յայտնած է, թէ չի կրնար նոյն իսկ խորհրդակցիլ այս խնդրին մասին, որ սկզբունքի հարց մըն է: Բնականաբար մեր պատուիրակները չէին կրնար վիճաբանութեան մտնել, քանի որ անկարելի է մեծ կամ փոքր որևէ հողամաս բաժնել Թուրքիայէն: Յարմար դատած են, որ 600.000 հոգի պարունակելու չափ հողամաս մը տրուի հայերուն՝ կամ Կիլիկիայեն Ճէպէլի Պէրէքեթ սանճագը կամ Երևանի Հանրապետութեան մօտակայ հողամասերը (Կարսի կողմերը) եւ կամ մեր հին հողամասերէն տեղ մը: Հավանական չէ այս տեղերէն որևէ զոհողութիւն ընել, քանի որ այս հողամասերը ամբողջովին թրքաբնակ են և հետեւաբար ազգային սահմաններու մէջ կը գտնուին»[17]: Թուրքական կողմն ամեն կերպ խուսափում էր կրելու որևէ պատասխանատվություն «Ազգային օջախի» գաղափարը կյանքի կոչելու հետ՝ պատճառաբանելով, որ Թուրքիայում չկա որևէ «ազատ» տարածք հայության համար: Նաև նշում, որ Թուրքիա վերադառնալ ցանկացողներն անարգել կարող են բնակվել այդ տարածքներում:

«Վերջին լուր» թերթն անդրադարձել է ենթահանձնաժողովի նիստերի քննարկումների ժամանակ ամերիկյան ներկայացուցիչ Չայլդի ծանուցագրին՝ հայերի համար «Ազգային օջախի» կազմավորման հետ կապված: Ամերիկյան պատվիրակությունը համաձայնվում է Քերզոնի տեսակետի հետ և գտնում, որ հայերին «Ազգային տան» համար պետք է տրամադրվի հողաբաժին. «Ամերիկեան պատուիրակութիւնը ներշնչուելով մարդասիրական սկզբունքներէ Հայկական Օճախի մը ի նպաստ գոյութիւն ունեցող շարժման վայելած համակրութիւնները, կը ներկայացնէ ենթահանձնաժողովի նախագահին ամերիկեան մարդասիրական կազմակերպութեանց թելադրութիւնները՝ ի մասին այս օճախի հաստատման»[18]: Ծանուցագրում ամերիկյան կողմը ստույգ նշել էր այն տարածքը, որտեղ ենթադրվում էր կազմավորել այդ «Ազգային օջախը»՝ Անկարայի պայմանագրով Ֆրանսիայի կողմից Թուրքիային զիջված Սիրիայի հյուսիսային գոտում՝ նշելով. «...պիտի պնդենք, որ Թուրքիա գործնական լուծում մը գտնէ այս խնդրին»[19]: Այնուհետև թերթը գրում էր, որ «արդարութիւնը և իրաւունքը կը պահանջեն, որ Ազգային Տուն մը ապահովուի հայերու համար»[20]: ԱՄՆ-ի պատվիրակությունը փոքրամասնությունների հանձնաժողովին ներկայացրած ծանուցագրին կից ներկայացնում է մի խնդրագիր ևս՝ Ամերիկայի բողոքական եկեղեցիների դաշնակցային խորհրդի ներկայացուցիչների արտոնությամբ: Խնդրագրում հույս էր հայտնվում, որ եթե այդ պահանջը բավարարվի, ապա «օգնութեան գործը աւելի արագ և խնայողական կ'ըլլայ: Հայերը այս

[17] Ճակատամարտ 1922, N 1252:
[18] Վերջին լուր 1923, N 2689:
[19] Ճակատամարտ 1923, N 1264:
[20] Հմմտ. Վերջին լուր 1923, N 2689, հմմտ. նաև Ժողովրդի ձայն 1923, N 1298:

կերպով աւելի աղէկ կրնան պաշտպանուիլ, քան եթէ անոնք ցրուած ըլլան թուրք ժողովուրդին մէջ: Անոնք այս հողամասին մէջ աւելի գոհունակութեամբ կը հաստատուին, մինչդեռ կը վախնան վերադառնալ թուրքերու մէջ իրենց ունեցած հին տեղերը»[21]:

«Ճակատամարտ»-ում մանրամասն խոսվում է «Ազգային օջախի» հետ կապված այնպիսի կարևոր հարցերի մասին, ինչպիսիք էին՝ դրա տեղակայման վայրը, կազմակերպման ծախսերի ֆինանսական աղբյուրները, անվտանգության ապահովումը, ինչպես նաև փախստականների տարաբնույթ խնդիրների լուծումը: Անդրադարձ էր կատարվում նաև որբանոցներում գտնվող երեխաներին Ազգային տուն փոխադրելու հարցերին: Թերթում այն կարծիքն է արտահայտվում, որ «Ազգային օջախի» ստեղծման դեպքում այնտեղ կփոխադրվեին 200-300 հազար հայեր: Սույն նախագիծը նույնիսկ ուղարկվում է ԱՄՆ-ի կոնգրես՝ հետևյալ ձևակերպումով. «Կառաջարկենք, որ նախագահին արտօնութիւն տրուի 20 միլիոն տոլարի փոխառութիւն մը ընելու և Լօզանի խորհրդաժողովը ապահովէ Հայկական Տան կազմութիւնը»[22]:

Չայլդի ծանուցագրի դեմ բողոքում է թուրքական պատվիրակ Ռիզա Նուրի բեյը՝ ընդգծելով, որ ամերիկյան պատվիրակությունն ունի միայն դիտորդի կարգավիճակ, ուստի առաջարկներ ներկայացնելու իրավունք չունի: Չայլդի ելույթին հաջորդում է Խորհրդային Ռուսաստանի արտգործժողկոմ Գ. Չիչերինի խոսքը՝ փոքրամասնությունների խնդիրը տանելով այլ ուղղությամբ: Նա քննադատում է Սևրի պայմանագիրը և ավելացնում, որ Թուրքիայի բաժանումը ձախողվեց՝ շնորհիվ ռուսական հեղափոխության հաղթանակի. «Եղափոխական և խաղաղասէր Ռուսիոյ բարեկամութիւնը թույլ տուաւ Թուրքիոյ, որ իր պարտութենէն ետքը զօրքերը համախմբէ Անատոլուի մէջ և կազմակերպէ ընդդիմութիւնը»[23]:

Հարկ է նշել, որ ամերիկացիների կողմից առաջ քաշված հայկական Ազգային տան գաղափարի ծանուցագրից հետո Անկարայի կառավարությունը կասեցնում է ամերիկացիների հետ տնտեսական տարբեր բնագավառների համագործակցության ծրագրերը. «...այս որոշումը մեծ չափով կը վնասէ ամերիկեան ընկերութիւններու, որոնք կը զբաղուին երկաթէ գործիքներու, կամուրջներու, երկրագործական մեքենաներու և նաւային շինութեանց գործերով: Նոյնպէս վերջ տրուած է Ամերիկայի մէջ... կատարուած բանակցութիւններուն»[24]:

Անդրադառնալով ամերիկյան պատվիրակության առաջարկին՝ «Ճակատամարտ» և «Ժողովրդի ձայն» լրագրերը մեջբերում են թուրքական «Իգտամ»-ի գրառումը. «Առաջարկը ներկայացնողները պահանջում են, որ մեր

[21] Ճակատամարտ 1923, N 1264:
[22] Վերջին լուր 1923, N 2689, հմմտ. նաև Ճակատամարտ 1923, N 1264:
[23] Ապագայ 1923, N 6:
[24] Ճակատամարտ 1923, N 1267:

երկրին կարեւոր մէկ մասը բաժնուի և նոր հայկական կառաւարութիւն մը հիմնուի: Ինչպէ՞ս կարելի էր հաշտեցնել այս պահանջը այս օրուան ազգայնական սկզբունքներուն հետ, քանի որ ուզուած տեղերուն բնակչութիւնը ամբողջովին թուրք է: Յաղթական Թուրքիայէն ինչպէ՞ս կարելի էր պահանջել, որ իր ազգային հողէրէն մաս մը զատէ և ուրիշին տա»[25]: Այնուհետև, քննադատելով ամերիկյան դիտորդի ներկայացրած ծանուցագիրը՝ բողոքում էր, որ վերջինս առանց իր կառավարության պաշտոնական հրահանգի, մի շարք մարդասիրական կազմակերպությունների թելադրանքով, «Ազգային տան» գաղափարը մտցրեց Լոզանի խորհրդաժողով: Այդ կազմակերպություններն աշխարհով մեկ սփռված հայությանը ցանկանում են միավորել և մեկ պետության մեջ ստեղծել մեկ այլ պետություն, բայց «կարեկցութեամբ և գթասրտութեամբ դուրսէն օտար փոքրամասնութիւն մը բերել և տեղացի մեծամասնութիւնը անոր գերի յանձնելը նոր պետութիւն մը ստեղծել չէ: Այսպիսի արհեստական հայրենիքները չեն կարող մարդկութեանց հանգիստը ապահովել, այլ անոնք աշխարհի խաղաղութիւնը վրդովող օճախ մը կը կազմեն»[26]: Հոդվածագիրը դժգոհում է, թե ամերիկյան հասարակությունն ինչու՞ է կարծում, որ Հայկական տան ստեղծման պարագայում աշխարհի չորս կողմերում գտնվող հայությունը պետք է «հոն վազե»: Պոլսի հայությունը վառ օրինակ է: Ինչու նրանք չգնացին Երևան: «Ո՞վ կրնայ ապահովել, որ ազգային Տունը այդ հայերուն համար աւելի քաշողական բոյն պիտի ունենայ»[27]:

«Ճակատամարտում» արտատպված թուրքական «Թերջեմանի» թուրք հոդվածագիրը նշում է. «Մեր պատուրակները, վստահ ըլլալով, որ այս խնդիրներուն մէջ իրենք կը բռնեն խիստ օրինաւոր ընթացք մը, հակառակ Անգլիոյ և Ամերիկայի պնդումներուն, երբեք տեղի չտուին: Այսօր ոչ միայն Տրապիզոնէն մինչեւ Իսկէնտէրուն տարածուող Հայաստանի մը, այլև Սուրիոյ հիւսիսային կողմը կազմուելիք փոքրիկ տունի մը խօսքն իսկ կարելի չէ ընել»[28]: Հոդվածի հեղինակը հայերին մեղադրում է դավաճանության մեջ, քանի որ վերջիններս, երես թեքելով թուրք և իսլամ բարեկամությունից, դիմեցին Լոնդոնի և Վաշինգտոնի բարեկամությանը, ուստի «հայերը պէտք է բաւարարվեն Երևանի Հանրապետութիւնով, զոր թուրքերը շնորհած էին իրենց՝ ընդհանուր պատերազմի ժամանակ»[29]:

«Ճակատամարտ»-ի մեկ այլ համարում արտատպված է ֆրանսիական «Ժուռնալ» թերթի թղթակցի հետ հանդիպման ժամանակ գործավարների խորհրդի նախագահ Ռեուֆ բեյի այն միտքը, որ հայերը կարող են ապրել

[25] Ճակատամարտ 1923, N 1264, հմմտ. նաև Ժողովրդի ձայն 1923, N 1296:
[26] Ճակատամարտ 1923, N 1264:
[27] Ճակատամարտ 1923, N 1264:
[28] Ճակատամարտ 1923, N 1271:
[29] Ճակատամարտ 1923, N 1271:

Թուրքիայում՝ առանց առանձնաշնորհումներ պահանջելու: «Եթէ հայերը պնդեն, որ իրենց հատուկ բոյնի մը տէր ըլլան, ես պատրաստ եմ այդպիսի բոյն մը ցոյց տալ իրենց: Հայկական Տան կազմութեան ի նպաստ հինգ միլիոն ստորագրութիւն հաւաքուած է Ամերիկայի մէջ: Եթէ ամերիկացիք արդարեւ համոզուած են այսպիսի Տունի մը կազմութեան մասին, թող իրենց ընդարձակ երկրին մէջ պատրաստեն այդ տունը և շնորհ ընեն յանձնել հայերուն»[30]: Ապա ավելացնում է. «Մեզի դէմ դաւաճանական արարքի մէջ չգտնուող հայերը կրնան ազատ ապրիլ Թուրքիոյ մէջ: Չենք կրնար ընդունիլ սակայն այն հայերը, որոնք Թուրքիոյ դաւաճանութիւն ըրած են, ինչպէս նաև չենք թույլատրեր, որ մեր երկիրը մտնեն դուրսէն եկող հայերը»[31]:

Թուրքական պատվիրակությունը Լոզանի խորհրդաժողով էր գնացել միայն վերցնելու և օրենքի ուժով ամրագրելու թուրքական Ազգային ուխտի տեսլականը: Դրա վառ ապացույցն էր Ռեուֆ բեյի՝ Թուրքիայի ազգային մեծ ժողովում հնչեցրած հետևյալ միտքը. «Միայն Ազգային ուխտի սահմաններին մէջ պիտի քալենք: Մեր ազգը ոչ թէ ատանկ սպառնալիքներով, այլ իր իրաւունքը ապացուցանելով է, որ հաշտութիւն պիտի կնքէ: Մեր ազգը հաւաքական նպատակի համար ամէն զոհողութեան պատրաստ է»[32]: Իսկ թուրքական պատվիրակության անդամ Ահմեդ Ջևդեթ բեյն ասում էր. «Մենք խորհրդաժողով գացինք ոչ թե տալու, այլ առնելու համար»[33]:

Հունվարի 9-ի խորհրդաժողովի՝ փոքրամասնությունների հարցերով մասնախմբի նիստում դաշնակիցները նորից վերաբացեցին հայերի համար «ազգային տան» ստեղծման հարցը, սակայն դրան դեմ դուրս եկավ Ռիզա Նուրի բեյը՝ հայտարարելով, որ դաշնակիցները գործածում են «Ազգային տան» գաղափարը՝ որպես զենք Թուրքիայի դեմ: Նուրի բեյը դատապարտում է դաշնակիցների վարած քաղաքականությունը՝ իբրև թե հայ ազգի բարօրությունից ելնելով, հայտարարելով, որ իրականում դա հայ ազգի դժբախտության պատճառ է եղել և՝ «Եթէ հայերը Թուրքիոյ վարչութեան տակ զերծ ըլլային արտաքին դրդումներէ, կրնային հանգիստ և անդորր կեանք մը վարել»[34]:

Ռազմատարածքային հանձնաժողովի հետագա նիստերի ընթացքում ևս քննարկվում է Հայկական հարցը: Այդ քննարկումներն իրականում արդեն ձևական բնույթ էին կրում, քանզի թուրքական պատվիրակությունը՝ Իսմեթ փաշայի գլխավորությամբ հայտարարել էր, որ «օջախների» առթիվ այլևս ասելիք չունի: Հայկական հարցը, լռելյայն դուրս մղվելով խորհրդաժողովի քննար-

[30] Վերջին լուր 1923, N 2692:
[31] Ճակատամարտ 1923, N 1267:
[32] Ժողովրդի ձայն 1923, N 1296:
[33] Վերջին լուր 1923, N 2689:
[34] Ժողովրդի ձայն 1923, N 1299, հմմտ. նաև Վերջին լուր 1923, N 2692:

կումներից, ռազմատարածքային հանձնաժողովի հուլիսի 17-ի նիստում վերածվում է «գաղթականության հարցի» ու փոխանցվում Ազգերի լիգային:

«Վերջին լուր» թերթն իր էջերում զետեղել է Լոզանի հաշտության պայմանագրի ստորագրումից հետո Ռիզա Նուրի բեյի հետևյալ հայտարարությունը. «Երջանիկ ենք, որ ստորագրուած դաշնագիրը կ'ապահովէ և կը հաստատէ մեր կատարեալ անկախութիւնը: Ասիկա մեր առաջին և հիմնական պայմանն էր: Մերինէն տարբեր քաղաքական իտէալ մը սնուցանող Հայերուն համար նախընտրելի է, որ չվերադառնան մեր երկիրը, յանուն խաղաղութեան և յանուն իրենց շահերուն. մեզի անոնցմէ բաժնողը, ընդհանուր կերպով կարծուածին պէս, կրօնական հանգամանք մը չէ, այլ լոկ քաղաքական է և հետևաբար անլուծելի է»[35]:

Եզրակացություններ

Լոզանի խորհրդաժողովը, որն իր աշխատանքները սկսեց 1922 թ. նոյեմբերի 20-ից և ընդհատումներով ավարտեց 1923 թ. հուլիսի 24-ին՝ Լոզանի պայմանագրի ստորագրմամբ, քննության առավ նախկին օսմանյան պարտքերի մարման, նեղուցների, փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության հարցերը: Անդրադարձ կատարվեց նաև Հայկական հարցին, որի շուրջ քննարկումները տեղի ունեցան ռազմատարածքային հանձնաժողովի նիստերում (1922 թ. դեկտեմբերի 12-14-ին, 1923 թ. հունվարի 9-ին, հունիսի 4-ին, հուլիսի 17-ին):

Պոլսահայ մամուլը, փաստորեն զրկված լինելով Լոզանի կոնֆերանսում հայկական «Ազգային տուն» ստեղծելու մասին քննարկումներին ինքնուրույն հետևելու հնարավորությունից, ստիպված եղավ արտատպել թուրքական և եվրոպական որոշ թերթերում հրապարակված հոդվածները՝ այդպիսով առաջին հերթին պոլսահայությանը տեղեկացնելով համաժողովի ընթացքի ու քննարկումների մասին: Թեև «Ժողովրդի ձայն», «Ճակատամարտ» և «Վերջին լուր» պարբերականներում տպագրված հոդվածները միջնորդավորված տեղեկություններ էին հաղորդում, այդուհանդերձ, դրանք կարևոր սկզբնաղբյուրի նշանակություն ունեն, քանզի այդ նյութերը պատկերացում են տալիս Լոզանի կոնֆերանսում թուրքական պատվիրակության, մեծ տերությունների դիրքորոշումների և տրամադրությունների մասին, որոնք վճռորոշ ազդեցություն ունեցան համաժողովի արդյունքների և մասնավորապես հայկական «Ազգային օջախի» հարցը խորհրդաժողովի օրակարգից և Լոզանի պայմանագրի վերջնական տեքստից դուրս թողնելու գործում: Թուրքական պատվիրակությունը, որ Լոզանի կոնֆերանսին մասնակցում էր հաղթողի կարգավիճակով, ամեն ինչ արեց, որ «Ազգային օջախի» գաղափարը դուրս մղվի միջազգային դիվանագիտական քննարկումներից:

[35] Վերջին լուր 1923, N 2858:

Գրականություն

Ազգային տան լուծման երեք ձեւեր, Ճակատամարտ, Կ. Պոլիս, 1922, N 1252:
Ազգային տան կազմութեան հաւանական տեղերը, Ճակատամարտ, Կ. Պոլիս, 1922, N 1252:
Ամերիկա եւ Լօզանի խորհրդաժողովը, Ճակատամարտ, Կ. Պոլիս, 1922, N 1208:
Ամերիկա 20 միլիոն տօլար փոխ կուտայ Հայկական Օճախի մը հաստատման պարագային, Վերջին լուր, Կ. Պոլիս, 1923, N 2689:
Ամերիկեան միջամտութիւնը ի նպաստ Ազգային Տան կազմութեան, Ճակատամարտ, Կ. Պոլիս, 1923, N 1264:
Ամերիկացւոց մատուցած յիշատակագիրներուն ամբողջական պատճէնները Հայկական Տան մասին, Վերջին լուր, Կ. Պոլիս, 1923, N 2689:
Ամերիկեան պատուիրակը կ'առաջարկէ Հայ ազգային տունը հաստատել Սուրիոյ հիւսիսակողմը, Ժողովրդի ձայն, Կ. Պոլիս, 1923, N 1298:
Ամերիկայի առաջարկը Հայոց ազգային տան մասին, Ապագայ, Փարիզ, 1923, N 6:
Ամերիկայի ընթացքը փոխել տալու համար, Ճակատամարտ, 1923, N 1267:
Էնկիւրիի նոր պահանջները. դաշնակիցներէն մերժողական պատասխան, Ճակատամարտ, Կ. Պոլիս, 1922, N 1215:
Էնկիւրի կը բողոքէ Պոլսոյ կառավարութեան մասնակցութեան դէմ, Ճակատամարտ, Կ. Պոլիս, 1922, N 1209:
Էնկիւրի չի ճանչնար Բ. Դրան պատուիրակութիւնը, Ճակատամարտ, Կ. Պոլիս, 1922, N 1209:
Ըսմեթ փաշայի այցելութիւնները, Ճակատամարտ, Կ. Պոլիս, 1922, N 1215:
Ըսմեթ փաշա մեկնեցաւ, Ճակատամարտ, 1922, Կ. Պոլիս, N 1216:
Ի՞նչ կ'ըսեն թուրք թերթերը. ամերիկացիները եւ հայերը, Ճակատամարտ, Կ. Պոլիս, 1923, N 1267:
Ի՞նչ կ'ըսեն թուրք թերթերը. Հայկական տունը, Ճակատամարտ, Կ. Պոլիս, 1923, N 1271:
Լօզանի խորհրդաժողովը եւ Թուրքիա, Ճակատամարտ, Կ. Պոլիս, 1922, N 1213:
Հայկական տունը, Ժողովրդի ձայն, Կ. Պոլիս, 1923, N 1296:
Միացեալ Նահանգներու պահանջները եւ Լօզանի խորհրդաժողովը, Ճակատամարտ, Կ. Պոլիս, 1922, N 1209:
Միջադէպ մը Լօզանի մէջ Ազգային Տան առթիւ, Վերջին լուր, Կ. Պոլիս, 1923, N 2692:
Չորս հաւանականութիւններ Ազգային տան մասին, Ճակատամարտ, 1922, N 1252:
Տեղական ինքնօրինութիւն Հայ ազգային տան համար. Րիզա Նուր Պէյի յարուցած միջադէպը, Ժողովրդի ձայն, 1923, N 1299:
Րէուֆ պէյի յայտարարութիւնները հաշտութեան ժողովին եւ Հայկական տունի մասին, Ժողովրդի ձայն, Կ. Պոլիս,1923, N 1296:
Րէուֆ պէյի յայտարարութիւնները հայոց մասին, Վերջին լուր, Կ. Պոլիս, N 2692:
Րիզա Նուր պէյ կըսէ թէ հայոց շահն իսկ կը պահանջէ չվերադառնալ Թուրքիա, Վերջին լուր, Կ. Պոլիս, 1923, N 2858:
Армянский вопрос на Лозаннской конференции, извлечения из протоколов 1926, пер. М.Т., Тифлис, «Заккнига», 36 с.

ԼՈԶԱՆԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ «ԱԶԳԱՅԻՆ ՕՋԱԽԻ» ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՊՈԼՍԱՀԱՅ ՄԱՄՈՒԼՈՒՄ («ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ», «ՃԱԿԱՏԱՄԱՐՏ», «ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐ»)

Մանե Կոնինյան

Ամփոփում

Պոլսահայ մամուլը, փաստորեն, զրկված լինելով Լոզանի կոնֆերանսում հայկական «Ազգային տուն» ստեղծելու մասին քննարկումներին ինքնուրույն հետևելու հնարավորությունից, ստիպված եղավ արտատպել թուրքական և եվրոպական որոշ թերթերի հոդվածները՝ այդպիսով պոլսահայությանը առաջինը տեղեկացնելով համաժողովի ընթացքի ու քննարկումների մասին:

Թեև պոլսահայ «Ժողովրդի ձայն», «Ճակատամարտ» և «Վերջին լուր» լրագրերում հրապարակված հոդվածները միջնորդավորված տեղեկություններ էին հաղորդում, բայց և այնպես կարևոր սկզբնաղբյուրի նշանակություն ունեն, քանզի այդ նյութերը պատկերացում են տալիս Լոզանի կոնֆերանսում թուրքական պատվիրակության դիրքորոշումների և տրամադրվածության մասին, որոնք վճռորոշ ազդեցություն ունեցան համաժողովի արդյունքների և մասնավորապես հայկական «Ազգային օջախի» հարցը խորհրդաժողովի օրակարգից և Լոզանի պայմանագրի վերջնական տեքստից դուրս թողնելու գործում:

Բանալի բառեր՝ պոլսահայ մամուլ, Լոզանի կոնֆերանս, «Ժողովրդի ձայն», «Ճակատամարտ», «Վերջին լուր», «Ազգային օջախ», Անկարայի կառավարություն:

ОТГОЛОСКИ ДИСКУССИЙ ПО АРМЯНСКОМУ «НАЦИОНАЛЬНОМУ ОЧАГУ» НА ЛОЗАННСКОЙ КОНФЕРЕНЦИИ В КОНСТАНТИНОПОЛЬСКОЙ АРМЯНСКОЙ ПРЕССЕ («ЖОГОВРДИ ДЗАЙН», «ЧАКАТАМАРТ», «ВЕРЧИН ЛУР»)

Мане Конинян

Резюме

Константинопольская армянская пресса, лишенная возможности следить за обсуждениями по созданию армянского «национального очага» на Лозаннской конференции, вынуждена была переиздавать статьи, опубликованные в турецких и европейских газетах.

Хотя статьи, публикуемые в константинопольских армянских газетах («Жоговрди дзайн» («Голос народа»), «Чакатамарт» («Битва») и «Верчин лур» («Последнее известие»), содержат опосредованную информацию, тем не менее, они являются важным источником, поскольку дают представление о позиции и настрое турецкой делегации на Лозаннской конференции, что отразилось на результатах конференции и, в частности, на исключении вопроса армянского «На-

ционального очага» из повестки дня конференции и из окончательного текста Лозаннского договора.

Ключевые слова – константинопольская армянская пресса, Лозаннская конференция, «Жоговрди дзайн», «Чакатамарт», «Верчин лур», «Национальный очаг», правительство Анкары.

REFLECTION OF DISCUSSIONS AROUND THE ARMENIAN "NATIONAL HOME" AT THE LAUSANNE CONFERENCE IN THE CONSTANTINOPLE ARMENIAN PRESS ("ZHOGOVRDI DZAYN", "CHAKATAMART", "VERCHIN LUR")

Mane Koninyan

Abstract

The Istanbul Armenian press, virtually deprived of the opportunity to independently follow the discussions around the creation of an Armenian "National Home" at the Lausanne Conference, was forced to reprint articles published in Turkish and European newspapers, thus primarily informing the Istanbul Armenians about the progress and discussions of the conference.

Although the articles published in the Constantinople Armenian newspapers ("Zhogovrdi dzayn" ("Voice of the People"), "Chakatamart" ("Battle") and "Vercin Lur" ("Last News") are indirect in nature, they are nevertheless important sources, since these materials give an idea of the positions and sentiments of the Turkish delegation at the Lausanne Conference, which had a decisive influence on the results of the conference and, in particular, on the exclusion of the issue of the Armenian "National Home" from the conference agenda and the final text of the Lausanne Treaty.

Key words – The Constantinople Armenian press, Lausanne Conference, "Voice of the People", "Chakatamart" ("Battle"), "Verjin Lur" ("Last News"), "National Home", Government of Ankara.

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՍՏԵՂԻ «ՉԱԼՈՆ» ՊԱՏՄՎԱԾՔԸ ԳՐԱԿԱՆ ՁՈՒԳԱՀԵՌՆԵՐՈՒՄ

Մարգարիտա Խաչատրյան

ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ
Բանասիրական գիտությունների դոկտոր
ՀՀ, Երևան, Գր. Լուսավորչի 15
Էլ. հասցե՝ margarit2011@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 10.05.2023, գրախոսվել է 25.11.2023, ընդունվել է տպագրության 11.12.2023
ORCID: 0009-0002-8878-75-38
DOI: 10.53548/0320-8117-2023.3-149

Շնիկը խնդրում է հորը իրեն սովորեցնել չար ու կծան լինել:
Շունը պատասխանում է, որ կսովորեցնի հավատարիմ ու նվիրված լինել, իսկ մարդիկ նրան կդարձնեն չար ու կծան:
Արևելյան հին զրույց

Ներածություն

Շունը՝ որպես ընկեր ու բարեկամ, մարդուն ուղեկցում է անհիշելի ժամանակներից, ամենադժվար պայմաններում ջանում է օգտակար լինել տիրոջը: Այս բացառիկ խելացի ու զգայուն կենդանին որսում է մարդու տրամադրությունը, հարմարվում նրա ցանկություններին, բայց երբեք չի կորցնում իր ցեղային հպարտությունը: Գյուղի բնապատկերում շունն առանձնահատուկ տեղ ունի՝ որպես պահապան, երեխաների սիրելի խաղընկեր, գյուղացիների կենցաղում մշտական ներկայություն: Գրողը միշտ պետք է զգույշ լինի, որ մարդ-կենդանի հարաբերությունների պատկերման մեջ չանցնի անտեսանելի սահմանը և չափից ավելի «չմարդացնի» կենդանուն: Սա հաջողվել է հայ, ռուս և համաշխարհային գրականության մի քանի նշանավոր դեմքերի, որոնց՝ շանը պատկերող ստեղծագործություններից մի քանիսի շարքում իր առանձնահատուկ տեղն ունի Համաստեղի (Համբարձում Կելենյան, 1895-1966) Չալոն:

Համաստեղի «Գյուղը» ժողովածուն

Համաստեղի առաջին ստեղծագործությունները բանաստեղծություններ և մանրապատումներ էին: Նրա առաջին պատմվածքը՝ «Շեն գյուղի հին օրերեն» խորագրով, լույս է տեսել Բոստոնի «Հայրենիք» օրաթերթի 1921 թ. մար-

տի 19-ի համարում[1]: Այս թերթի 1922 թ. հունիսի 10-ից մինչև օգոստոսի 5-ի համարներում տպագրվել են Համաստեղի ևս չորս պատմվածքներ՝ «Ձոհը Կար ամուն էր», «Աստղկան սայլը», «Նապաստակի մը օրագիրը», «Տափան Մարգար»:

1922 թ. աշնանը Բոստոնում սկսեց հրատարակվել «Հայրենիք» ամսագիրը, որի առաջին համարում տպագրված է հայ գրականության գլուխգործոցներից մեկը՝ Համաստեղի «Չալոն» պատմվածքը:

Հետաքրքիր մի դիտարկում՝ 1962 թ. Բեյրութում լույս տեսավ «Բագին» հանդեսը[2], որը բացվում էր Համաստեղի «Հայու Ոգին» բանաստեղծությամբ՝ հայ քնարական արվեստի մարգարիտներից մեկով: Համաստեղն անմահացավ որպես հայ արձակի բանաստեղծ:

Նշենք, որ «Հայրենիք» ամսագրի 1922 թ. համարներում հրատարակվել են նաև Համաստեղի «Վարդան», «Միջոն», «Երնեկ այն օրերուն» «Փիլիկ աղբար», «Աղավնիները» պատմվածքները, իսկ 1924 թ. Բոստոնում լույս տեսավ «Գիւղը» ժողովածուն:

Համաստեղի գրականությանը ծանոթ ընթերցողի համար թվարկածս պատմվածքներից ամեն մեկը յուրովի գեղեցիկ, հմայիչ պատկեր է, բայց առանձնացրել եմ «Չալոն»: Գրողը հատուկ բծախնդրությամբ է կերտում կենդանիների «կերպարներ» (հիշենք «Նապաստակի մը օրագիրը», «Աղավնիները» պատմվածքները), իսկ Չալոն հայ գրականության ամենասիրված ու ճանաչված «հերոսներից» է:

Համաստեղի կենդանության օրոք խորհրդահայ մամուլում լույս է տեսել միայն «Չալոն» պատմվածքը[3]:

«Ավելի ծեր, քան մեր գյուղին երեցփոխը, սակայն անոր պես ակնոց չէր գործածեր Չալոն»[4], – այսպես է սկսվում պատմվածքը, իսկ քիչ հետո համեմատությունը ծավալվում է, խորանում. «Չալոն իր կյանքեն շատ բաներ ուներ պատմելիք, քան երեցփոխը»[5]: Մսացու այծի մասին զրուցող գյուղացիների կողքին կանգնած շունն էլ կարծիք ունի. «Լավ մսացու է, հը, կգովեր երեցփոխը: Չալոյին կարծիքն ալ այդ էր»[6]:

Գյուղի անտեր ու թափառական շունն է Չալոն: Նա հավատարմորեն ծառայում է գյուղի բոլո՛ր բնակիչներին, բոլո՛ր երեխաների խաղընկերն է: Անմոռանալի է այս պատկերը՝ շունը փորձել է երեխաների հետ եկեղեցի մտնել և շատ է զարմացել, երբ արգելել են: Չալոն ուստա Զաքարի գիշերային

[1] Տե՛ս Համաստեղ 2005, հ. Ա, 70-72: Պատմվածքի մշակված տարբերակը՝ «Հին օրերուն» խորագրով, լույս է տեսել «Գյուղը» ժողովածուում, Բոստոն, 1924:

[2] Բագին 1962, N 1:

[3] Սովետական Հայաստան 1966, N 6:

[4] Համաստեղ 1989, 29:

[5] Համաստեղ 1989, 37:

[6] Համաստեղ 1989, 33:

«զրուցընկերն» է, նրա կատակների, Սուրբիկի անեծքների ունկնդիրը: Չալոն զարմանում է. «Սայլերը որքան ծույլ ու խորունկ կքնանան, չեն արթննար, մինչև որ մարդիկ չգան, չհրմշտկեն, ականջները չանցնեն, եզները չլծեն. այն ատեն միայն կարթննան, ու կսկսին դեպի դաշտ քնաթաթախ, լալկան ճղրտուք մը»[7]:

Ընթերցողն էլ հեղինակի պես սիրում ու հարգում է Չալոյին:

Մսավաճառի դանակի հարվածը ոչ միայն վիրավորում է շան մեջքը, այլև խաթարում է նրա կապը գյուղի ու գյուղացիների հետ. հիմա գյուղացիները նրա թշնամիներն են...

Գիշերով գյուղ մտած Չալոն կյանքի գնով փրկում է Գոթանենց լավագույն եզանը:

Պատմվածքի վերջում ընթերցողը տեսնում է «շատ նիհարցած ու շատ ծեր շան մը դիակը»[8], մտովի շարունակում մարդկանց ու շան համեմատությունը... Կարդում ես ու ակամա կրկնում Համաստեղի «Զրույց շունի մը հետ» պատմվածքի հերոսի խոսքերը. «Մարդիկ ահավոր էն ու զարհուրելի, իմ բարի՛ Անտոնիոս»[9]:

Քաղաքաբնակ շնիկները

Մեզ՝ քաղաքաբնակներիս համար ընտանի կենդանին տարիների ընթացքում վերածվում է յուրատեսակ փափուկ խաղալիքի: Ահա՛ Համաստեղի «Սքիփին» պատմվածքի «հերոսը»:

Շնիկի խաղընկերները դպրոց են գնում, և «Սքիփին այլևս բան չունէր ընելիք»[10], ձանձրանում է. ամեն վայրկյան բախվում է բազմաթիվ «չի կարելի»-ների: Համաստեղը հոգեբանորեն լավ է հիմնավորել Սքիփիի «անկարգությունները», «բնավորությունը», և ընթերցողը, հատկապես պատանի ընթերցողը սիրում է այս շնիկին: Իսկ երբ այս բակում շնիկի կողքին մտովի տեսնում ենք «կաւի ստեղծագործութեան ներշնչում»-ով[11] ցեխից կարկանդակ սարքող փոքրիկ Էնին՝ Համաստեղի համանուն պատմվածքի հերոսուհուն, պատկերն ամբողջանում է:

Ընթերցողը չթաքցրած հեգնանքով է նայում Սքիփիի՝ ամենօրյա խնամքից, հատկապես՝ լողանալուց խուսափելու համար թփերի մեջ թաքնվելու զուր ջանքերին ու խղճում մարդկանց հարկադրանքին ենթակա շնիկին:

Վահան Թոթովենցի (Թոթովյան, 1889-1938) պատմվածքների «Ամերիկա» շարքի «Տիկին Պուլմենի շնիկը» (1929 թ.) պատմվածքը տրագիկոմիկական պատմություն է քաղքենի տիկնոջ ու նրա դժբախտ շնիկի մասին: Իմաս-

[7] Համաստեղ 1989, 31:
[8] Համաստեղ 1989, 42:
[9] Համաստեղ 1989, 350:
[10] Համաստեղ 2005, հ. Գ, 74:
[11] Համաստեղ 2005, հ. Բ, 11:

տուն խոսք կա. մենք նաև սիրելով ենք սպանում: Տիկին Պուլմենը իր հինգ տարեկան զավակից «երկու րոպեում ձանձրանում էր»[12], երեխային թողնում էր դայակի մոտ և ժամերով գրկում, փայփայում էր շնիկին, բայց շնիկը սատկեց: Թոթովենցը չթաքցրած արհամարհանքով է նկարագրում շնիկի թաղման «ծեսը», շնիկի լուսանկարները, տիկին Պուլմենի՝ ի հիշատակ շնիկի նվիրաբերած երկու հազար դոլարի մասին «խոշոր տառերով և առանձին գնահատականով»[13] գրված հոդվածները…

Նման դրվագ կա Համաստեղի «Քրիստոսի երկրորդ գալուստը» դրամատիկական ստեղծագործության մեջ. Քրիստոս անցնում է քաղաքից քաղաք, Սեր ու խաղաղություն է քարոզում, Փրկչին հետևող բազմահազարանոց ժողովուրդն անհանգստացնում է իշխանություններին, իսկ թերթերի առաջին էջերում քաղաքագլխի աղջկա կորած շնիկին գտնելու մասին պատմությունն է՝ «Ամերիկյան դիւցազներգութիւնը»[14], ինչպես բնորոշում է հերոսներից մեկը:

Սա անհոգի ու անհավատ մարդկանց աշխարհի ցավոտ, բայց շատ ծանոթ պատկերն է: Համաստեղի և Թոթովենցի պատկերած այս ձեռնասուն շնիկները մարդկանց խեղված հարաբերությունների զոհն են, յուրատեսակ խաղալիք մարդկանց համար:

Շունը՝ որպես գրական հերոս

Համաստեղը, չկորցնելով չափի զգացումը, Չալոյին օժտում է մտածողությամբ, երախտագիտության, սիրո զգացումներով ու չի անցնում մարդ-կենդանի սահմանը: Շան հավասարակշռված նկարագիրը հմայում է ընթերցողին, որը նրա հետ անցնում է երջանիկ ու ողբերգական դեպքերի միջով, ավելին՝ Չալոյի նվիրվածությամբ ու անձնազոհությամբ չափում և արժևորում է իր արարքները:

Կենդանու նկատմամբ դրսևորած վերաբերմունքով Համաստեղը հստակ տարբերակում է Մարդուն ու մարդակերպ էակին:

Նկատենք, որ մարդ-կենդանի հարաբերության մեջ հաճախ հաղթում է սերը: Մարդը Սիրո օգնությամբ կարող է զսպել կենդանու բնազդները. հիշենք Ջեկ Լոնդոնի (Ջոն Գրիֆֆիտ Չեյնի, 1876-1916) «Սպիտակ Ժանիք» (1906) վիպակը: Գայլային ծագումով շունը «իմաստուն էր», կարող էր փախչել երկու անգամ իրեն դավաճանած տիրոջից, «բայց նրա իմաստությանը միացած էր նաև հավատարմությունը. նա եկավ տուն, և տերը դավաճանեց նրան երրորդ անգամ[15]»: Մարդկանց որպես աստվածներ ընկալող կենդանին «ամենից ավելի մարդկային փաղաքշանքի կարիք ունի…[16]»: Դատավոր

[12] Թոթովենց 1989, 482:
[13] Թոթովենց 1989, 484:
[14] Համաստեղ 2005, հ. Ա, 226:
[15] Լոնդոն 1966, 148:
[16] Լոնդոն 1966, 169:

Ուինդոն Սքոթը Սպիտակ ժանիքի մեջ տեսավ, հարգեց հավատարմությունը ու ձեռք բերեց բացառիկ՝ գայլային ծագումով, բայց սիրո ու նվիրվածության օրենքներով ապրող իսկական ընկերոջ, որը փրկեց նրա ընտանիքը ավազակ Ջիմ Հոլիից: Սքոթների ընտանիքի անդամները Սպիտակ Ժանիքին խնամեցին «ինչպես մարդուն» ու փրկեցին նրա կյանքը: Սպիտակ Ժանիքը «Ատելության թագավորություն»-ում (Ջեկ Լոնդոնն այսպես է վերնագրել վիպակի երրորդ գլուխը - Մ.Խ.), որտեղ ոսկին էր իշխում, դևի էր նմանվել, բայց մարդկանց սիրո ու գուրգուրանքի շնորհիվ դարձավ «մարդակերպ անասուն», «Անգին Գայլ»:

1993 թ. Երևանում լույս է տեսել «Շունը: Բանաստեղծություններ և պատմվածքներ» գրքույկը. հրատարակված են Հովհաննես Թումանյանի (1869-1923) «Շունը», Վախթանգ Անանյանի (1905-1980) «Մեր Չամբարը», Ստեփան Զորյանի (Առաքելյան, 1889-1967) «Չալանկը» պատմվածքները, Հովի. Թումանյանի «Շունն ու կատուն» լեգենդը, Եղիշե Չարենցի (Սողոմոնյան, 1899-1937) «Աշունը դեղնաթաթախ… », «Շան կարոտներ», «Նրբակիրթ Լ.-ին», Գուրգեն Մահարու (Աճեմյան, 1903-1969) «Բալլադ Չալոյի և առաջին սիրո մասին», Սերգեյ Եսենինի (1895-1925) «Կաչալովի շունը», «Շան որդին», «Երգ շան մասին», Վահագն Դավթյանի (1922-1996) «Չեմ հիշում հիմա…», Պարույր Սևակի (Ղազարյան, 1924-1971) «Կայանալիք զբոսանք», Մկրտիչ Սարգսյանի (1924-2002) «Արծաթ վզկապ դրեք…», Համո Սահյանի (Հմայակ Գրիգորյան, 1914-1993) «Շներ», Հովհաննես Շիրազի (Օնիկ Կարապետյան, 1914-1984) «Նորից լսում եմ կարծես…», Հրաչյա Սարուխանի (Հրաչիկ Սարուխանյան, 1947-2016) «Իմ շանը» բանաստեղծությունները:

Ցեղակիցների շարքում այս գրքույկում պատվավոր տեղ ունի Համաստեղի Չալոն: Չալոյին ներկայացնենք մի քանի համեմատություններով:

Հովհաննես Թումանյանի գրական հարուստ աշխարհից այս առումով առանձնացնենք «Շունն ու կատուն» (1886) լեգենդը և «Շունը» (1913) պատմվածքը: Հայտնի է, որ Հովհաննես Թումանյանը որսորդ էր և կենդանասեր: Նա կենդանիներին դիտարկում էր բնական միջավայրում, փորձում հասկանալ նրանց վարքագիծը, փոխհարաբերությունները և որպես արդյունք՝ որսից տուն էր վերադառնում ձեռնունայն, բայց հոգեպես ավելի հարուստ և ուրախ: Գյուղում մեծացած երեխայի կյանքը, կենցաղն անբաժան են ոչ միայն ընտանի, այլ նաև վայրի կենդանիների ներկայությունից, իսկ հեքիաթներին հաճախ փոխարինում են որսի ու նշանավոր որսորդների մասին իրական պատմությունները:

«Շունն ու կատուն» լեգենդում ստախոսության հետևանքով ծագած կռիվը սոսկ շան ու կատվի հակամարտություն չէ. բանաստեղծը կենդանիների ցեղային բնազդների, դարավոր թշնամանքի պատճառների շատ ինքնատիպ, մարդու համար, անկախ տարիքից, հետաքրքիր և ուսուցողական մեկնություն է գտել:

Հովի. Թումանյանի «Շունը» պատմվածքն ունի «Մի երկու խոսք» ենթավերնագիրը, բայց բանաստեղծը շատ հետաքրքիր փաստեր է ներկայացնում մարդու և շան անցած երկար ճանապարհի մասին, նկարագրում է մի քանի բացառիկ դեպքեր: «Շունը շատ ավելի մեծ բան է եղել, քան թե ես էի կարծում էն ժամանակ (երեխա ժամանակ - Մ.Խ.), և դեռ ո՞վ գիտի՝ մեզանից հետո էլ գիտությունն ինչեր է բաց անելու»[17],- գրում է Հ. Թումանյանը: Գրողն ուսումնասիրել է հայ, ռուս և համաշխարհային հեղինակների ստեղծագործություններ, դրանցից քաղվածքներ ու մշակումներ արել շան ծագման, շների տեսակների, բնավորության ու մարդու հետ առնչությունների մասին, գրի է առել շան մասին առածներ ու ասացվածքներ[18]:

Մարդ-շուն հարաբերությունները երբեմն վերածվում են փոխազդեցության, անգամ՝ նկատելի նմանությունների: Հովի. Թումանյանը մի քանի դեպք է նկարագրում տիրոջ վարքագիծը կրկնօրինակող շների մասին՝ մուրացկան տիրոջ մահից հետո ողորմություն հավաքող, խստաբարո կոմսի պես պաշտոնապես չներկայացված հյուրերի ներկայությունը չհանդուրժող, թաթը վնասելուց հետո վիրաբույժ տիրոջ վիրահատական սեղանին կամավոր բարձրացող, երգիչ տիրոջը ձայնակցող շների մասին:

Հրանտ Մաթևոսյանի (1935-2002) «Օգոստոս» ժողովածուում է զետեղված «Շները» պատմվածքը: Գայլերի ահ ու սարսափ Բոբ շունը տիրոջ հետ հայտնվում է քաղաքում՝ մանկավարժական ուսումնարանում, որտեղ նրան մի քանի անգամ կծոտում է վարիչի շնիկը: Բոբի տերերը սաստում են ...իրենց շանը: Տիրոջը հարկադրաբար լքելուց առաջ Բոբը չի ներում քաղաքաբնակ շնիկի անմիտ համարձակությունը և լուծում է իր վրեժը:

Հերոսը՝ Հովիվյան Բաբիկը, փորձում է կենտրոնանալ ուսման, հատկապես՝ հանրահաշվի վրա, բայց մտովի սարերում է՝ Բոբի հետ: Շունը սարերում հսկում է հոտը, հոշոտում է գայլերին, իսկ նրա խաղընկերն ու բարեկամը քաղաքում է...

Պատմվածքում անմոռանալի մի տեսարան կա. ուսուցիչ Հախումյանը պատմում է, որ մորը կորցրել է Վանում: Բաբիկի՝ «-Վանը Թուրքիայո՞ւմ է» հարցին հետևում է բազմախորհուրդ պատասխանը՝ «-Չէ՛, Հովիվյա՛ն, չէ՛, Թուրքիան է Վանում»[19]:

Ռուբեն Զարդարյանի (1874-1915) «Գամբռը (Պատկեր)» պատմվածքի «հսկա, պերճաշուք»[20] շունը հաղթական քայլում է քաղաքի փողոցներով, որտեղ նրան հալածում են քաղաքի շներն ու շնիկները: Գայլի նկատմամբ բնածին ատելությունը դեռ կորյուն ժամանակ շանը սխրանքների է մղել, ու գամփռի գամփռ զավակը գոհունակությամբ է լցրել մոր սիրտը, երբ առաջին

[17] Թումանյան 1994, 135:
[18] Թումանյան 1994, 622-650:
[19] Մաթևոսյան 1967, 142:
[20] Զարդարյան 2014, 179:

անգամ գայլ խեղդելուց հետո տուն է դարձել. շունը սովոր է վտանգի ենթարկվել՝ իրեն վստահված նախիրը պաշտպանելու համար:

Բայց «ծերության սատանան» սարերն է հասնում, գտնում Գամփռին, ու շունը կերպարանափոխվում է. մեջքը և առջևի մեկ ոտքը վնասված են, իսկ անգամ կատվի հետ ոսկորի կտորի համար պայքարող «հեղգ շուներն ու անոնց անօգուտ զաւակները»[21] հաչում ու հալածում են նրան... Գամփռը ծեր է ու անօգնական:

Ռուբեն Զարդարյանը շանը «խորհուրդ է տալիս» խուսափել «ամբոխային դատաստանից», հեռանալ դեպի «դաշտին լայն մենութիւնը». «Սխալ տեղ եկար»[22], - արձանագրում է նա: Գյուղից քաղաք հասած գամփռը չի կորցրել հպարտությունը. «...լավ է անոթի մեռնիլ, քան թե երկու թաթերը երկրցնել, կուրծքը ցեխին մեջ քսել՝ քաղաքի ծակաչք մարդեն կտոր մը հաց խնդրելու...»[23]: Պատմվածքի ասելիքը, խորհուրդը միայն շանը չեն ուղղված: Սա պատկերն է հզոր, ինքնատիպ անհատի ու անդեմ միջակություններից կազմված ամբոխի դիմակայության, որը, դժբախտաբար, ավարտվում է ոչ մարդկայինի հաղթանակով:

Վահե Հայկի (Տինճյան, 1896-1983) «Ռազմիկ շունի մը հետ» պատմվածքի հերոսը՝ Քինգը, «տակավին պատանի էր», երբ «զինվոր դարձավ՝ ծառայելու իր հայրենիքին»[24]: Պատերազմի դաշտում շունը «գազանային մարտնչումներ տեսավ»[25] և վերադարձել է կերպարանափոխված. «Ալ շնագայլ մը դարձեր էր ան»[26]: «Շնիկը կռվել էր, որ աշխարհը խաղաղության և կանոնի մեջ իյնար, իր մարդ և շուն ընկերներեն բյուրավորներ ինկած էին, որ արդարությունը գար, չարն ու խաբեբան կործաներ, նոր ու պայծառ առավոտի մը ծագումը հնարավոր դառնար: Մարդը մարդ ըլլար»[27]: Հիմա նա մարդկանց մեջ միայն թշնամիներ է տեսնում ու կարոտով հիշում այգեպանի երեխաների հետ իր խաղերը այգում:

Վահե Հայկի «Հայը» պատմվածքում կրկին հանդիպում ենք «հաստավիզ, հսկա» և սիրուն գամփռին, որը սառցապատ լեռների «մահահոտ ամայության մեջ մարմին հագած կենդանության քաղցրանուշ ոգի մը»-ն[28] է: Հայ մարդու դաստիարակած ու նրա հետ այս հեռավոր վայրում ապրող շունը պահապան է և մարդկանց օգնականը. անգամ անծանոթներին չի սպառնում: «Կարծես մեր վախին լիովին ծանոթ է»[29], - գրում է Վահե Հայկը:

---

[21] Զարդարյան 2014, 180:
[22] Զարդարյան 2014, 184:
[23] Զարդարյան 2014, 184:
[24] Հայկ 1960, 283:
[25] Հայկ 1960, 287:
[26] Հայկ 1960, 288:
[27] Հայկ 1960, 291:
[28] Հայկ 1960, 207:
[29] Հայկ 1960, 207:

Բենիամին Նուրիկյանի (1894-1988) «Գիւղը, որ կ'ապրէր» շարքի «Գայլին արցունքը» հուզիչ պատմվածում կրկին հանդիպում ենք «ազնուացեղ, բարձրագլուխ» գամփռին, «որ լեռնային այգիներու և պարտէզներու մէջ ուժաւորած՝ իր ցեղին թշնամիին հետ չափուելու փառաւոր պատեհութեան մը առջև ինքզինքը կ'ուտէ հիմա»[30]: Անմոռանալի է պարտված գայլի աչքից կաթող արցունքի պատկերը…

Ավետիք Իսահակյանի (1875-1957) «Համբերանքի չիբուխը» (1928 թ.) պատմվածքի Ալանը մարդկանցից վիրավորված ու «աշխարհաթող եղած» Օհան-ամիի միակ հավատարիմ ընկերն է. «Օհան-ամու անունը թինդ էր հանում Ալանի հոգին»[31]: Ծերունին շեշտում է շան առավելությունները դավաճան ու անհավատարիմ մարդկանց նկատմամբ. «Էս շուն է – հավատարմություն: Մարդու բնույթն իսկի չի կրնա հասկանա շան բնույթը: Մարդը սուտ է, հավատարմությունը մարդու համար անհասկանալի բան է»[32]: Մարդիկ չարությամբ են լցնում կյանքը, այնինչ նրանց կյանքի նպատակը պիտի լինի լավ գործեր անելը: Դառն աշխարհը քաղցրացնելու համար ինչքա՞ն լավ գործեր պիտի կատարվեն:

Անտոն Չեխովի (1860-1904) հանրածանոթ «Կաշտանկան» (1887 թ.) պատմվածքի՝ «դնչով շատ նման աղվեսի»[33] շնիկը կորցնում է տիրոջը և հայտնվում ծաղրածու Ժորժի տանը: Սագի, խոզի և կատվի կողքին շունը կուշտ է, շատ արագ ըմբռնում է նոր տիրոջ հրահանգները, մի պահ տարվում է կրկեսային միջավայրով ու ծաղրածուի՝ անհայտությամբ հմայող աշխարհով, բայց առաջին ելույթի ժամանակ նախկին տերերի հետ հանդիպումից հետո լքում է կրկեսը… Հիմա Կաշտանկան քայլում էր հարբեցող տիրոջ կողքին, լսում նրա շատախոսությունը շան համեմատ մարդու առավելությունների մասին և ուրախ էր, որ իր կյանքում ոչինչ չի փոխվել:

Միխայիլ Բուլգակովի (1891-1940) «Շան սիրտը» (1925 թ.) վիպակն ունի ընդգծված պատմական-հասարակական շերտեր, որոնց միջոցով բացահայտվում են նոր ժամանակների «հերոսների», մարդու սրտով ապրող շարիկովների, շվոնդերների էությունն ու վարքագիծը: Պրոֆեսոր Ֆիլիպ Ֆիլիպիչ Պրեոբրոժենսկին գիտափորձերի միջոցով փորձում է գտնել «մարդկային տեսակի բարելավման»[34] միջոցներ: Նա թափառական Շարիկ շանը վերածում է մարդու, բայց իրականում Պոլիգրաֆ Պոլիգրաֆովիչ Շարիկովը մարդակերպ կենդանի է՝ բռի, երախտամոռ ու հավակնոտ, առաջվա պես ատում է կատուներին: Պրոֆեսորը դեմ է բռնությանը, բայց Շարիկովն ստիպում է մտածել,

[30] Նուրիկյան 1937, 93:
[31] Իսահակյան 1987, 525:
[32] Իսահակյան 1987, 526:
[33] Չեխով 1929, 3:
[34] Բուլգակով 2006, 80:

որ կատարվածը ամենևին էլ «նոր մարդկային միավորի»[35] արարում չէ, այլ սահմանված կարգի կոպիտ խախտում: Ավելին, «գազանին մարդ դարձնելու» ծրագիրը պարզապես անմտություն է, իսկ շարիկովների, շվոնդերների, երիտասարդի տեսքով կանանց իշխանությունը հակամարդկային է:

Վիպակի ավարտը խոսուն է. Շարիկ շունը ննջում է թերթ կարդացող պրոֆեսորի ոտքերի մոտ և մտածում, որ, հակառակ պրոֆեսորի և բժիշկ Բորմենտալի դիմադրության, ինքն ապրում է այս բնակարանում: Պատմությունը քանի՛ անգամ է հաստատել՝ իշխանության պիտի հասնեն իսկապես արժանավորները, որոնք փորձանք չեն դառնա մարդկանց գլխին:

Դեմոկրատիա կոչվող համակարգը գրեթե բացառում է խելացի ու արժանավոր մարդկանց՝ իշխանության հասնելու հնարավորությունները, իսկ իշխանությունը ժառանգաբար փոխանցելու դեպքում այդ մարդկանց հնարավորություններն անհամեմատ շատ են:

Տասնամյակներ առաջ թվում էր՝ Միխայիլ Բուլգակովը նուրբ երգիծանքով պատմում է ընդամենը բոլշևիկյան անմիտ ծրագրերի մասին, պարզվեց՝ նա ավելի հեռուն՝ նաև մեր օրերն է տեսել՝ սեռ ու տարիք կորցրած մարդակերպ էակներով, որոնց բնորոշ է չափ ու սահման չճանաչող եսասիրությունը:

Մարկ Տվենի (Սեմուել Քլեմենս, 1835-1910) «Շան պատմությունը» պատմվածքի հերոսը «բարեսիրտ ու նրբանկատ» մորից սովորել է «բարի լինել», ապրել «ուրիշի լավի համար»[36]: Կատարվածի մասին պատմում է շունը:

Ճանաչված գիտնականի տանը սիրում էին շնիկին ու նրա ձագուկին:

Մի օր էլ մանկասենյակում հրդեհ է բռնկվում, շնիկը փրկում է երեխային, բայց զայրացած տանտերը ծեծում է շանը և կոտրում նրա ոտքը: Օրեր անց գիտնականն ու նրա ընկերները վիճում էին այն հարցի շուրջ, թե կենդանիներն ինչո՞վ են կողմնորոշվում՝ բնազդո՞վ, թե՞ բանականությամբ: Գիտափորձի համար մարդիկ լաբորատորիա են տանում շան ձագուկին: Քիչ անց ծառաները «պարտեզի ամենահեռավոր անկյունում» փոս էին փորում: Մարկ Տվենը ցնցող պատկեր է ստեղծում. շունը համոզված էր՝ իր ձագին տնկելու են, որ նա հողի տակից դուրս գա «սիրո՛ւն, շա՛տ սիրուն»[37]: Օրեր անց շունը հասկացավ կատարված ողբերգությունը:

Աշխարհից հեռանալուց առաջ շունը խղճում է տանտիրուհուն և նրա աղջկան, որը տխրելու է՝ մենակ մնալով:

Նոդար Դումբաձեի (1928-1984) «Շունը» պատմվածքում կենդանի գույներով պատկերված է Հայրենական մեծ պատերազմի օրերի գյուղը՝ դառն աղքատությամբ, մարդկային մեծսիրտ լայնախոհությամբ: Չաղլոն (վրացերեն՝ շուն) հայտնվել է փողոցում, ենթարկվում է հալածանքի, բռնության:

[35] Բուլգակով 2006, 50:
[36] 19-րդ դարի ամերիկյան պատմվածք 1989, 254:
[37] 19-րդ դարի ամերիկյան պատմվածք 1989, 260:

Սպիրիդոն պապը բուժում է շան վնասված ոտքերը, և նա անձնվիրաբար ծառայում է մարդկանց: Բակերում կրակոցներ են հնչում. սպանում են իբր թե կատաղած շներին: Ինչ-որ մեկը կրակում է Չաղլոյի վրա:

Պապը ստիպված ենթարկվում է հարևանների պահանջին և թոռանը հանձնարարում գյուղից հեռու մի վայրում սպանել Չաղլոյին: Գոգիտան չի սպանում շանը և ամիսներ անց իմանում է, որ ճիշտ է վարվել. գյուղի շները կատաղած չէին: Իսկ Չաղլոն չկար:

Մահանում է Սպիրիդոն պապը: Նրա թաղման ժամանակ Գոգիտայի կողքին հայտնվում է անճանաչելիորեն փոխված Չաղլոն: Շունը չի թողնում, որ իր վրա կրակող Բադրիան միանա հուղարկավորներին:

«Հանկարծ մարմինս ջերմացավ, ու ես զանգի մեղմանուշ ղողանջ լսեցի:

Իմ բակում շուն էր հաչում»[38], - այս պատկերով է ավարտվում պատմվածքը:

Գոգիտան աշխարհում մենակ չէ. Չաղլոն նրան պաշտպանելու է չար մարդկանցից:

Պարսկահայ գրող, հրատարակիչ Աղասի Հովհաննիսյանը (1915-2002) Համաստեղի «Չալոն» թարգմանել է պարսկերեն և մի գրքույկով հրատարակել պարսիկ գրող Սադեղ Հեդայաթի (1902 կամ 1903-1951) «Թափառաշրջիկ շունը» պատմվածքի հայերեն թարգմանության հետ:

«Թափառաշրջիկ շունը» պատմվածքի «հերոսը»՝ Փաթը, երբ տեր ուներ, «այնպե՛ս խիզախ էր, քաջ ու կենսուրախ»[39], խաղում էր տիրոջ տղայի հետ: Շունը տիրոջ հետ հաճախ էր զբոսանքի գնում: Մի չարաբաստիկ օր Փաթը, «էգ շան զգլխիչ հոտ»ով հմայված, չի արձագանքում տիրոջ կանչին ու կորցնում է տունդարձի ճամփան: Անտեր, «աղտոտ ու թափառաշրջիկ» շանը հալածում են բոլորը և «այդ հալածանքի մէջ ինչ-որ հոգեկան բաւարարութիւն ու հաճոյք փնտռում»[40]: «Հարամ ու անիծուած» շանը «տանջելը բարեգործութիւն» են համարում, քանի որ շունը յոթ կյանք ունի:

Երկու տարի անց անծանոթ մեկը շոյեց Փաթի գլուխը, կերակրեց, նստեց մեքենան ու հեռացավ: Շունը խելակորույս վազեց մեքենայի հետևից և շնչասպառ ընկավ:

Քիչ անց շան գլխավերևում հայտնվեցին գիշակեր ագռավները…

Արամ Հայկազի (Չեքեմյան, 1900-1986) «Տիոնիկ» (հունական Դամիանոս անվան աղավաղված ձևն է - Մ.Խ.) պատմվածքի հերոսը նահատակվում է շան՝ Ասլանի աչքերի առաջ… «Գարնան, երբ արագ հալող ձյունին պատճառով ջուրերը հորդեցան, Տիոնիկին ու Ասլանին ոսկորները իրար խառնվեցին ու քշեցին տարին իրենց հետ»[41], - այսպես է ավարտվում պատմվածքը:

[38] Դումբաձե 1989, հ. 1, 490:

[39] «Համաստեղ և Սադեղ Հեդայեաթ. Թափառաշրջիկ շունը: Չալոն» 1967, 9:

[40] «Համաստեղ և Սադեղ Հեդայեաթ. Թափառաշրջիկ շունը: Չալոն» 1967, 7:

[41] Հայկազ 2012, 80:

Արամ Հայկազը՝ Շապին Գարահիսարի հերոսամարտի մասնակիցը, հայոց ցեղասպանության ականատեսն ու վկան, զուսպ, բայց թանձր, անմոռանալի պատկերներով է ներկայացնում աշխարհավեր «փոթորիկը», որն անցել է հայ գյուղի վրայով: Ճիշտ այնպես, ինչպես դա անում է Համաստեղը «Երնեկ այն օրերուն», «Զրույց շունի մը հետ» պատմվածքներում: Սուրբ Անտոնիոսի պես բարի, «աղաչավոր ու աղոթավոր», «մյուռանավոր»[42] աչքերով շան հետ զրույցը կորցրած Հայրենիքի հիշատակների մասին է: «Օ՜հ, մարդիկ զարհուրելի են, զարհուրելի են, իմ բարի՜ Անտոնիոս»[43], - կարդում ես ու պատմողի հետ անցնում թուրքի գործած ոճիրի ճամփաներով:

Այսպիսով, ներկայացնելով վերոնշյալ ստեղծագործություններում առկա պատկերները՝ կարող ենք ասել, որ այդ գրական երկերում բացահայտվում են շան նվիրվածությունն ու անձնազոհությունը. հատկանիշներ, առանց որոնց կյանքը դառնում է պայքար սոսկ գոյատևման համար և կորցնում է իմաստը:

Չալոն Համաստեղի գրական դաշտում կորցրած Հայրենիքի խորհրդանիշն է:

Հայ Գյուղը՝ իբրև Բնօրրանի կենդանի հուշ ու ապրող հիշատակ, հավերժացել է Համաստեղի գրականության մեջ, և ընթերցողն այնտեղ անպայման հանդիպում է Չալոյին, առանց որի դժվար է պատկերացնել Համաստեղի Գյուղն ու Հայոց Բնաշխարհը:

Չալոն գրական տիպ է:

Եզրակացություններ

Մարդ-շուն բազմաշերտ հարաբերության ներկայացված դրվագներն օգնում են հասկանալ կատարվածի պատճառահետևանքային կապերը, ու կենդանին դառնում է նաև մարդու ինքնաճանաչողության միջոց: Ներկայացված ստեղծագործություններում շների ճակատագրերը տարբեր են, բայց ընդհանուր է կենդանու նվիրվածությունը մարդուն, հատկապես երեխաներին: Շունը յուրատեսակ դաստիարակ է փոքրերի ու ոչ միայն նրանց համար:

Մայրս սիրում էր կրկնել՝ ամեն շուն տեր պիտի ունենա, բայց ոչ ամեն մարդ՝ շուն:

Գրականություն

Բագին հանդես 1962, Բեյրութ, N 1:

Բուլգակով Միխայիլ 2006, Երեք վիպակ, Երևան, «Գարուն», 211 էջ:

Դումբաձե Նոդար 1989, Ընտիր երկեր երկու հատորով, հ. 1, Երևան, «Սովետական գրող», 581 էջ:

Զարդարյան Ռուբեն 2014, Ընտրանի, Երևան, «Անտարես», 400 էջ:

Թոթովենց Վահան 1989, Երկեր երեք գրքով, գիրք 2, Երևան, «Խորհրդային գրող», 560 էջ:

[42] Համաստեղ 1989, 336:

[43] Համաստեղ 1989, 349:

Թումանյան Հովհաննես 1994, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. 5, Երևան, «Գիտություն», 832 էջ:
Իսահակյան Ավետիք 1987, Երկեր, Երևան, «Սովետական գրող», 894 էջ:
Լոնդոն Ջեկ 1966, Երկերի ժողովածու տասներկու հատորով, հ. 4, Երևան, «Հայաստան», 713 էջ:
Համաստեղ 1989, Հայաստանի լեռներու սրնգահարը, Երևան, «Խորհրդային գրող», 704 էջ:
Համաստեղ 2005, հ. Ա, Մոռացված էջեր, բնագիրը, ներածությունը և ծանոթագրություն ները Մարգարիտա Խաչատրյանի, Երևան, «Տիգրան Մեծ», 320 էջ:
Համաստեղ 2005, հ. Բ, Մոռացված էջեր, բնագիրը, ծանոթագրությունները Մարգարիտա Խաչատրյանի, Երևան, «Տիգրան Մեծ», 320 էջ:
Համաստեղ 2005, հ. Գ, Մոռացված էջեր, բնագիրը, ծանոթագրությունները Մարգարիտա Խաչատրյանի, Երևան, «Տիգրան Մեծ», 320 էջ:
Համաստեղ և Սաղեղ Հեղայեաթ 1967, Թափառաշրջիկ շունը: Չալոն, Թեհրան, «Ալիք», 51 էջ:
Հայկ Վահե 1960, Հայրենի ծխան, Երևան, «Հայպետհրատ», 338 էջ:
Հայկազ Արամ 2012, Ապրող ծառ մը, Երևան, «Հայաստան», 320 էջ:
Հայրենիք օրաթերթ 1921, Բոստոն, 19 մարտի:
Հայրենիք օրաթերթ 1922, Բոստոն, հունիս-օգոստոս ամիսների համարներ:
Հայրենիք ամսագիր 1922, Բոստոն:
Մաթևոսյան Հրանտ 1967, Օգոստոս, Երևան, «Հայաստան», 291 էջ:
Նուրիկյան Բենիամին 1937, Այգեկութք, Բոստոն, «Պայքար», 245 էջ:
Շունը: Բանաստեղծություններ և պատմվածքներ 1993, հրատարակության պատրաստեց Վահագն Սարգսյանը, Երևան, «Գիր գրոց», 89 էջ:
Չեխով Անտոն 1929, Կաշտանկա, Մոսկվա, ԽՍՀՄ ժողովուրդների կենտրոնական հրատ., 47 էջ:
Սովետական Հայաստան ամսագիր 1966, N 6, Երևան:
19-րդ դարի ամերիկյան պատմվածք 1989, Երևան, ԵՊՀ հրատ., 468 էջ:

ՀԱՄԱՍՏԵՂԻ «ՉԱԼՈՆ» ՊԱՏՄՎԱԾՔԸ ԳՐԱԿԱՆ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐՈՒՄ

Մարգարիտա Խաչատրյան

Ամփոփում

Բոստոնում հրատարակված «Հայրենիք» ամսագրի առաջին համարում տպագրված է հայ գրականության գլուխգործոցներից մեկը՝ Համաստեղի (Համբարձում Կելենյան, 1895-1966) «Չալոն» պատմվածքը:

Չալոն գրական տիպ է:

Գյուղի անտեր ու թափառական շունը՝ Չալոն, շուրջը տեղի ունեցող դեպքերի ու երևույթների մասին իր սեփական «կարծիքն» ունի: Նա հավատարմորեն ծառայում է բոլո՛ր մարդկանց՝ առանց խտրականության, գյուղի բոլո՛ր երեխաների խաղընկերն է:

Հեղինակի սերը կենդանու նկատմամբ փոխանցվում է ընթերցողին:

Մարդկանց հավատարիմ ու նվիրված Չալոն կյանքի գնով փրկում է Գոթանենց լավագույն եզանը:

Համաստեղը կերտել է նաև քաղաքաբնակ շնիկի կերպար «Սքիփիին» պատմվածքում: Ընթերցողը չթաքցրած հեգնանքով է նայում Սքիփիի՝ ամենօրյա խնամքից,

հատկապես լողանալուց խուսափելու զուր ջանքերին ու յուրովի խղճում մարդկանց հարկադրանքին ենթակա շնիկին:

Համաստեղը, չկորցնելով չափի զգացումը, շանն օժտում է մտածողությամբ, երախտագիտության, սիրո զգացումներով՝ չանցնելով մարդ-կենդանի սահմանը: Չալոյի հավասարակշռված նկարագիրը հմայում է ընթերցողին, որը շան հետ անցնում է նրա կյանքի երջանիկ ու ողբերգական դեպքերի միջով, ավելին՝ կատարվածի նկատմամբ Չալոյի ցուցաբերած բացառիկ մարդկային վերաբերմունքով չափում և արժևորում է իրեն, իր արաքները: Հեղինակը ցույց է տալիս, որ կենդանու նկատմամբ դրսևորած վերաբերմունքով էլ հստակ տարբերվում են ՄԱՐԴ-ը և մարդակերպ էակները:

Համաստեղի «Չալոն» պատմվածքի գրական զուգահեռներն առկա են Հովհաննես Թումանյանի, Ռուբեն Զարդարյանի, Անտոն Չեխովի, Մարկ Տվենի, Արամ Հայկազի և այլոց ստեղծագործություններում:

Բանալի բառեր՝ Հայրենիք օրաթերթ, Հայրենիք ամսագիր, «Գյուղը» պատմվածքների ժողովածու, շան անձնազոհությունը և նվիրվածությունը մարդկանց, գրական տիպ, քաղաքաբնակ շնիկ, կենդանու նկատմամբ դրսևորած վերաբերմունք:

РАССКАЗ АМАСТЕГА «ЧАЛО» В ЛИТЕРАТУРНЫХ ПАРАЛЛЕЛЯХ

Маргарита Хачатрян

Резюме

Осенью 1922 года в Бостоне стал издаваться журнал «Айреник» («Родина»), в первом номере которого был опубликован один из шедевров армянской литературы – рассказ Амастега «Чало – (Амбарцум Келенян, 1895-1966).

Чало – литературный тип. Это деревенский бродячий пес, у которого есть свое «мнение» об окружающем мире. Он верно служит всем – как взрослым, так и детям.

Амастег наделил собаку мышлением, чувством благодарности и любви. Уравновешенный характер Чало очаровывает читателя, который оценивает себя и свои действия сквозь призму отношения к животным.

Литературные параллели рассказа «Чало» имеются в произведениях Ованеса Туманяна, Рубена Зардаряна, Антона Чехова, Марка Твена, Арама Айказа и других.

Ключевые слова – ежедневная газета «Айреник», журнал «Айреник», сборник рассказов «Деревня», собачья преданность, литературный тип, городская собака, отношение к животному.

THE STORY "CHALO" IN LITERARY PARALLELS

Margarita Khachatryan

Abstract

In autumn of 1922, the magazine "Hayrenik" began to be published in Boston, in the first issue of which one of the masterpieces of Armenian literature, the story "Chalo" by Hamastegh (Hambardzum Kelenyan, 1895-1966), was published.

Chalo is a literary character.

Chalo, a homeless and stray dog of the village, is a living creature with its own "opinion" about the events and phenomena surrounding him. It faithfully serves all people indiscriminately, and is the playmate of the all children in the village.

The reader loves and respects Chalo, as the author does.

Chalo saves the best bull of Gotans family at the cost of his life.

He also created an image of a city dog in the story "Skippy". The reader looks with undisguised irony at Skippy's futile attempts to avoid daily care, especially bathing, and in his own way pities the dog subject to human coercion...

Hamastegh, without losing a sense of proportion, endows the dog with thinking, feelings of gratitude, love and does not overstep the bounds of human-animal. Chalo's balanced character captivates the reader who goes through the happy and tragic events of the dog's life, moreover, the reader measures and evaluates himself/herself and his/her actions with the exceptional human attitude displayed by Chalo: HUMAN and human-like beings are clearly distinguished in relation to the animal.

It is no secret that love wins in the relationship between man and animal.

In the article, Hamasteg's story "Chalo" is presented in parallel analysis with the works of Hovhannes Tumanyan, Ruben Zardaryan, Anton Chekhov, Mark Twain, Aram Haykaz and others.

Key words – "Hayrenik" daily newspaper and magazine, collection of short stories "The Village", self-sacrifice and devotion of the dog to people, a literary character, a city dog, attitude towards the animal.

ՆՈՐԱՀԱՅՏ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ «ՔՅՈՌՕՂԼԻ» ԷՊՈՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սամվել Ռամազյան

Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ sramaz@mail.com
Հոդվածը ներկայացվել է 02.03.2023, գրախոսվել է 05.12.2023, ընդունվել է տպագրության 11.12.2023
ORCID: 0009-0007-1782-4777
DOI: 10.53548/0320-8117-2023.3-163

Ներածություն

«Քյոռօղլի» էպոսը XVII դ. ստեղծագործություն լինելով՝ լայն ընդունելության է արժանացել հայկական շրջանակներում, ինչի շնորհիվ XIX դ. վերջից մեզ են հասել գրական մշակումներ[1], աշուղական փոխադրություններ[2], հայկական տարբերակներ ու պատումներ: Հայտնի են Վանի, Մոկաց, Բաշղալայի, ինչպես նաև Արևելյան Հայաստանում (Արտաշատ, Վայք, Կոտայք, Վաղարշապատ) ծագումով պարսկահայ ասացողներից Խոյի, Ուրմիայի, Սալմաստի բարբառներով XX դ. սկզբին գրառված տասնյակ տարբերակներ և պատումներ: Դրանցից մի ամբողջական տարբերակ 1912 թ. իր ծննդավայր Արտաշատի Ազատավան (Ղըռ-Բզովանդ) գյուղում 52-53 տարեկան հողագործ Գևորգ Թարոյան-Ավագյանից Ուրմիայի բարբառով գրի է առել բանահավաք Գեղամ Թարվերդյանը (1884-1959 թթ.). այն հրատարակվել է 1941 թ., ազգագրագետ և պատմաբան Խաչիկ Սամուելյանի (1873-1940 թթ.) ծավալուն առաջաբանով («Քյոռ-Օղլի, ժողովրդական վիպասանություն»)[3]:

Գրառված լինելով Ուրմիայի բարբառով (հօգուտ Խոյի բարբառով շեղումների)՝ այն իրական ժողովրդական ստեղծագործության նմուշ է՝ անկրկնելի բարբառային լեզվով, որն իր հերթին ստեղծում է յուրահատուկ ազգային միջավայր: Անկախ մյուս ազգային, հատկապես էպոսի արևմտյան խմբի տարբերակների[4] հետ ակնառու բովանդակային ընդհանրություններից՝ այս

---

[1] Հայտնի են Ռ. Պատկանյանի «Քյոռօղլու» («Քյոռօղլու վիպասանություն») անավարտ պոեմը (1859 թ.), Ղ. Աղայանի «Արկածներ Քյորօղլու կյանքից» շարքը (1887-1893 թթ.), ավելի ուշ շրջանից՝ Սարմենի «Քյոռօղլի» պոեմը, Ա. Գրաշիի և Ս. Ավչյանի թատերգությունները:

[2] 1897-1910 թթ. ընթացքում աշուղ Ջամալին և աշուղ Խայաթը Թիֆլիսում և Ալեքսանդրապոլում հրատարակել են 2-ական «փոխադրություն»: Ավելի վաղ՝ 1865-1875 թթ. ընթացքում Կ. Պոլսում հրատարակվել են 5 «Քյոռօղլու հեքիաթներ», ինչպես նաև 2 «Քյոռօղլու հեքիաթ»՝ 1933-1935 թթ. Հալեպում և Բեյրութում, բոլորն էլ՝ հայատառ թուրքերենով:

[3] Քյոռ-Օղլի 1941, 5-23:

[4] Էպոսի արևմտյան խմբում ընդգրկված են ատրպատականյան, թուրքական, ադրբեջանական, հայկական, վրացական, դաղստանյան, քրդական և այլ տարբերակները, արևելյան խումբն առավելապես ընդգրկում է Կենտրոնական Ասիայում տարածված տարբերակները:

տարբերակն իր հիմնական բաղադրիչներով իրավամբ կարելի է համարել հայ բանահյուսության եզակի ստեղծագործություն[5]:

Հատկանշական է, որ «Քյոռ-Օղլի, ժողովրդական վիպասանությունը» եղել է ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի (ԱրմՖԱՆ) առաջին հրատարակություններից: Առկա տվյալներով, դեռևս 1936 թ.-ից ԱրմՖԱՆ-ի պատմության, հնագիտության և ազգագրության սեկտորը տպագրության է պատրաստել էպոսի առնվազն 20 տարբերակ[6]: Այլ տվյալներով, 1939 թ. դրությամբ գյուղերից գրառված են եղել էպոսի 30-ից ավելի տարբերակներ, որոնք ևս փոխանցվել են հրատարակության[7]: Փաստորեն, մոտ 5 տարի շարունակ ձգձգվել է հայկական պատումների հրատարակությունը և, ի վերջո, դրանցից ընդամենը մեկը տպագրվել է 1941 թ. (համաձայն համապատասխան նշումների, ստորագրվել է տպագրության 1942 թ. հունվարին)[8]:

Ներկա ուսումնասիրության նպատակը չէ այն պայմանները ներկայացնելը, որոնք ստեղծվել էին հիմնականում Ադրբեջանական ԽՍՀ-ի որոշ շրջանակների հարուցած տարատեսակ խոչընդոտների հետևանքով և կենտրոնից առաջադրված «մեկ ազգ՝ մեկ էպոս» քաղաքականության շրջանակում սեփական մենաշնորհի ամրապնդման և որևէ այլ խորհրդային հանրապետությունում համանման ստեղծագործության հրատարակության կանխարգելման առումով[9]: Առավել հետաքրքրական է, թե Հայաստանում 1930-ական թթ. ի՞նչ աշխատանքներ են իրականացվել տվյալ էպոսի հայկական տարբերակների ու պատումների գիտաքննական ուսումնասիրության ուղղությամբ:

---

[5] Հիմք ընդունելով հենց միայն Ուրմիայի չափածո տարբերակը՝ Կարլ Ռայխլն ընդգծում է հայկական տեքստերի՝ իբր բացառապես բանաստեղծական բնույթը (Райхл 2008, 322): Վերջերս արտերկրի թյուրքագիտական հրատարակություններով շրջանառվում է էպոսի հայկական տարբերակի մասին նշումը, թե այն նվազ ճշգրիտ է պատմական և աշխարհագրական մանրամասների առումով, սակայն բավական հարուստ է բովանդակությամբ, ինչի առումով մատնանշվում է Ն. Չեդվիքի և Վ. Ժիրմունսկու ուսումնասիրությունը (Chadwick, Zhirmunsky 2010, 302): Բնականաբար, արտերկրի լսարանին առավելագույնը կարող է հասանելի լինել միայն Ուրմիայի տարբերակը կամ դրա շուրջ տարատեսակ մեկնաբանությունները, ընդսմին, սույն վիճելի դրույթը շրջանառվում է գրեթե բոլոր հանրամատչելի աղբյուրներով:

[6] Ղարիբջանյան 1985, 9: Միևնույն տեղեկատվությունը կրկնվել է ավելի ուշ. *«Տպագրության պատրաստվեցին Անդրկովկասի ժողովուրդների մեջ տարածված «Քյոռօղլի» էպոսի քսան տարբերակները»* (Ղարիբջանյան 2013, 28):

[7] Ստեփանյան 2000, 196-197: Էպոսի անվանի հետազոտող, ակադեմիկոս Բ. Կարիևը, վկայակոչելով հայ բանագետների հաղորդումները, նշել է նաև հայկական բարբառներով «Քյոռօղլու» մի քանի տասնյակ երգերի տարբերակների առկայության մասին, որոնցից *«գրառվել է մոտ 40-ը»* (Карьиев 1968, 64): Այնինչ հստակ է, որ տվյալ դեպքում խոսքը տարբեր բարբառներով գրառված էպոսի տարբերակների մասին կարող է լինել, ոչ թե երգերի:

[8] Քյոռ-Օղլի 1941, 236:

[9] Հարցին անդրադարձել ենք առանձին հոդվածով՝ Ռամազյան Ս., Հովսեփ Օրբելու դերը «Քյոռօղլի» էպոսի հայկական տարբերակի հրատարակության հարցում (տպագրության ընթացքում է):

Հակոբ Հարությունյանի «Նախնական դիտողությունները»

Հայաստանի ազգային արխիվում սույն թեմայով վերջերս իրականացված աշխատանքների շնորհիվ Խ. Սամուելյանի թղթապանակում հայտնաբերվել է անտիպ փաստաթուղթ՝ *«Նախնական դիտողություններ Գ. Թարվերդյանի գրի առած «Քյոռօղլի» աշուղական վեպի 23 վարիանտների մասին»*[10], որը մատիտագիր ձեռագիր է՝ 21 էջից: Փաստաթուղթը թվագրված է 1937 թ. հունվարի 27-ով, հեղինակը վստահաբար Խ. Սամուելյանը չէ, տիտղոսաթերթին առկա է *«Հակ. Հարութ.»* կրճատ նշումը: Վերոհիշյալը հիմք ընդունելով՝ կարելի է արձանագրել, որ փաստաթղթի հեղինակը գրականագետ Հակոբ Հարությունյանն է, որը 1935-1937 թթ. եղել է ԱրմՖԱՆ-ի Արվեստի բաժնի վարիչ և, փաստորեն, շարադրել է սեփական դիտողություններն ԱրմՖԱՆ ներկայացված նյութերի առնչությամբ:

Հակոբ Պողոսի Հարությունյանը (Արթենյան) ծնվել է 1888 թ. դեկտեմբերի 11/23-ին[11], Արևմտյան Հայաստանում, Էրզրումի նահանգի Ալաշկերտի գավառակի Խաստուր (Հացտուն) գյուղում[12]: 1901-1910 թթ. ուսանել է Սբ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, աշակերտել Կոմիտաս վարդապետին[13]: Կարճ ժամանակ՝ 1910-1912 թթ., դասավանդել է Թավրիզի հայոց դպրոցում: 1912-1919 թթ. մասնագիտացել և կրթություն է ստացել եվրոպական՝ Բեռլինի, Լայպցիգի և Ցյուրիխի համալսարաններում: 1919 թ. արժանացել է փիլիսոփայական գիտությունների դոկտորի կոչման: ԽՍՀՄ-ի օրոք՝ 1927-1940 թթ., դասավանդել է ԵՊՀ-ում, դրան զուգընթաց 1928-1932 թթ.՝ Հայկական պետական մանկավարժական ինստիտուտում: Բռնադատվել է 1941 թ., չպարզված հանգամանքներում մահացել 1943 թ. (արդարացվել է հետմահու)[14]:

Հ. Հարությունյանից մեզ են հասել մի քանի ուսումնասիրություններ՝ «Կանտի իմացաբանութիւնը» (1910-1911 թթ.)[15], «Զարգացման գաղափարի

[10] ՀԱԱ, ֆ. 740, ց. 1, գ. 102, էջ 59-75: Ընդ որում, փաստաթուղթը ժամանակին սխալ է վերնագրվել, ինչից հետևում է, թե խոսքն էպոսի *«23-րդ տարբերակի»* մասին է:

[11] Որոշ հրատարակություններում ծննդյան թիվ է նշվում 1889-ը, իսկ ազգանունը՝ Հարթենյան կամ Արտենյան (Հարությունյան 1958, 3):

[12] Խաստուրում են գրառվել «Սասնա ծռերի» պատումներից, իսկ բանահավաք Ս. Հայկունին 1880-ական թթ. Հ. Հարությունյանի հորից գրառել է «Անհավատարիմ կնոջ ամոթանքը» հեքիաթը (Էմինեան ազգագրական ժողովածու 1902, 126-131, ՀԺՀ-9, 124-129):

[13] 1958 թ. հետմահու հրատարակված «Մանյակ» հայ ժողովրդական երգերի ժողովածուն հեղինակը նվիրել է իր *«սիրելի ուսուցիչ և հոգեհայր Կոմիտասի տուրբ հիշատակին»*, նշել, որ դրանց մի մասը Կոմիտասի հանձնարարությամբ գրառել է դեռևս ճեմարանում ուսումնառության տարիներին գյուղեր կատարած շրջագայությունների ընթացքում (Հարությունյան 1958, 5):

[14] Որոշ տեղեկությունների համաձայն, *«Պետական համալսարանում ուսանողներին քննելիս նրանցից մեկի պատասխանը՝ «Այդ ժամանակ գերմանացիները փախան», վրդովում է Գերմանիայում սովորած ու գերմանացուն մոտիկից ճանաչող արվեստագետին, և նա ասում է. «Տղա՛, նման պարագաներում գերմանացին չի փախչում, նա ինքնասպան է լինում»* (Ղուկասյան 1999, 18): Դրա հետևանքով Հ. Հարությունյանը ձերբակալվում է: 1943 թ. կնքում է իր մահկանացուն:

[15] Տպագրվել է «Արարատ» ամսագրի 1910-1911 թթ. համարներում (Յարութիւնեան 1910-1911):

վերլուծությունը» (1919 թ., *գերմաներեն)*, «Մկրտիչ Պէշիկթաշլեան» (1912 թ.)[16], «Լեզվի մասին» (1934), «Մանյակ: Ժողովածու հայ ժողովրդական երգերի» (1958 թ.), ինչպես նաև որոշ թարգմանություններ գերմաներենից՝ Հեգելի «Դասախոսություններ էսթետիկայի մասին» գիրքը (1939 թ.), Գյոթեի բանաստեղծությունների ընտրանին (1946 թ.), և ռուսերենից (Վ. Բրյուսովի բանաստեղծությունները ևն): Մասնակցել է երաժշտության, լեզվի և գրականության ձեռնարկներ ու դասագրքեր կազմելու աշխատանքների:

Ընդհանրապես, Հ. Հարությունյանը հայտնի էր ոչ միայն որպես գրականագետ և թարգմանիչ, այլև երաժշտագետ, լեզվաբան, փիլիսոփա և մանկավարժ՝ լինելով իր ժամանակի բազմակողմանի զարգացած և լուսավորյալ առաջնակարգ մտավորականներից[17]: Ըստ այդմ, վերջինիս հեղինակած գրությունն առանձնակի արժևորվում է «Քյոռօղլի» էպոսի հայկական տարբերակների ու պատումների ուսումնասիրության տեսակետից:

Փաստաթղթում առկա են որոշ թեթև նշումներ, որոնք, ըստ ամենայնի, թողել է Խ. Սամուելյանը, որն էլ 1941 թ. հրատարակության իր առաջաբանում օգտագործել է ամբողջական հատվածներ սույն գրությունից: Ավելին, ՀԱԱ միևնույն գործում պահվող՝ Խ. Սամուելյանի ձեռագիր առաջաբանի[18] և հրատարակված տեքստերի համեմատությունը ցույց է տալիս, որ Հ. Հարությունյանից ձեռագիր օրինակում ավելի շատ մեջբերումներ են արվել, որոնք հետագայում խմբագրվել են և հանվել տեքստից:

Բնականաբար, երկու մասնագետներն էլ, ըստ էության, լինելով գերմանական գիտական դպրոցի ներկայացուցիչներ՝ դրսևորել են միևնույն մոտեցումները գրառված բանահյուսական նյութերի նկատմամբ և ընդհանրապես թեմայի առնչությամբ: Նրանց համագործակցությունը բավական արգասաբեր կարող էր լինել էպոսի հայկական նյութի ուսումնասիրության և առավել ամբողջական հրատարակման գործում, սակայն 1941 թ. Հ. Հարությունյանն արդեն բռնադատված էր, և անգամ նրա անվան հիշատակությունը կամ գրությունների օգտագործումը խնդրահարույց պետք է լիներ:

Փաստաթղթից ակնհայտ է, որ մինչև 1937 թ. հունվարը ԱրմՖԱՆ են ներկայացվել տարբեր տարիներին (ըստ ամենայնի, 1912 թ.-ից սկսած) Գ. Թարվերդյանի գրառած նյութերը: Ընդ որում, հարկ է նշել, որ «Քյոռօղլու» պատումներ ավելի վաղ գրառել են նաև անվանի բանահավաքներ Հարութ-

---

[16] Տպագրվել է «Արարատ» ամսագրի 1912 թ. համարներում (Յարութիւնեան 1912):

[17] Հայտնի է Ա. Իսահակյանի տված բնութագիրը. *«Փիլիսոփայությունը գիտությունների մուզիկն է»*՝ *ըստ Պլատոնի: «Մուզիկն էլ արվեստների փիլիսոփայությունն է»*՝ *ըստ Հակոբի»* (Սահակյան 1985, 3): Որոշակիորեն հայտնի է նաև Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տաղաչափության» առնչությամբ Հ. Հարությունյանի գրախոսականը, որում բարձր գնահատականի հետ միաժամանակ մի շարք դիտողություններ են նշվել ուսումնասիրության մեթոդաբանական սկզբունքների մասին, ինչին Աբեղյանը հակադարձել է առավել ընդարձակ պատասխանով (Աբեղյան 1971, 453-500):

[18] ՀԱԱ, ֆ. 740, ց. 1, գ. 102, 1-39:

յուն Ավչյանը և Սենեքերիմ Տեր-Հակոբյանը[19], որոնք առավել հայտնի են իրենց գրառած «Սասնա ծռերի» պատումներով:

Բանահյուսություն գաղափարախոսական դրույթներով

Հենց սկզբից աչքի է զարնում արհեստավարժ մասնագետի քննադատական մոտեցումը Թարվերդյանի իրականացրած ոչ-մասնագիտական բանահյուսական գրառումների առնչությամբ: Հարությունյանի դիտողություններից պարզվում է, որ նյութերի հետ հաճախ չի ներկայացվել խիստ անհրաժեշտ և պարտադիր գիտական ապարատը՝ գրառման ժամանակահատվածը, տեղավայրը, ասացողը ևն: Ամենայն սրտացավությամբ քանիցս նշվում է *«գրառման տեխնիկայի ոչ-գիտական»* բնույթի մասին: Ավելին, Հարությունյանը բացահայտ մատնանշում է ակնհայտորեն վաղօրոք գրառված նյութերում ավելի ուշ ներմուծված օտարամուտ տարրերի մասին, ինչը պետք է որ վերաբերեր ժամանակի ոգուն համապատասխան իրականացված բնորոշ գործողություններին: Բնականաբար, ստեղծագործության առաջխաղացման նպատակով գրառված նյութերին պետք է հաղորդվեր «դասակարգային պայքար» արտացոլող կեղծ բնույթ, նմանապես պետք է ներմուծվեին «ժողովուրդների բարեկամության» քարոզչական դրույթի տարրեր:

Նման արատավոր երևույթը համընդհանուր բնույթ էր կրում, միով բանիվ, ոչ միայն Հայկական ԽՍՀ-ում և ոչ միայն «Քյոռօղլի» էպոսի պարագային:

Մեր ուսումնասիրությունների արդյունքներով, օրինակ, Ադրբեջանական ԽՍՀ-ում հրատարակված «Քյոռօղլու» առաջին իսկ տարբերակներից ամբողջությամբ զեղչված է հայ վաճառականի (Բեզիրգան/Բեզիրգեն) հետ կապված դրվագը[20], ինչն արձանագրված է դեռևս Ա. Խոճկոյի ատրպատականյան առաջին ամբողջական գրառման մեջ[21], թուրքական և այլ տարբերակներում: Հայ վաճառականի հետ Քյոռօղլու դիմակայության դրվագն անգամ հանրահայտ է նվազ ուսումնասիրված գագաուզյան տարբերակում[22]: Բնորոշ դրվագի բացակայությունը ժամանակին կասկածելի է թվացել նաև թուրք անվանի հետազոտող Փ.Ն. Բորաթավին[23]: Եվ միայն համեմատաբար վերջերս Ադրբեջանում հրատարակված որոշ նյութերից ակնհայտ է դառնում, որ 1930-ական թթ. տվյալ դրվագը պարունակող պատումներ, այնուամենայնիվ, գրառվել են[24], սակայն համահավաք բնագրերում տեղ չեն գտել և, ընդհանրապես, չեն հրատարակվել՝ միանշանակ գաղափարախոսական

[19] Բոլոր գրառումներն էլ անտիպ են, Ս. Տեր-Հակոբյանի գրառումը հայատառ թուրքերեն է: Վերջինս հայտնի է նաև «Ռուստամ Զալ» վեպի տարբերակի գրառմամբ (Սասնա ծռեր 1999, 31-33):

[20] Ռամազյան 2018, 214-215:

[21] Chodzko 1842, 210-211.

[22] Bayat 2009, 143.

[23] Boratav 2016, 73.

[24] Короглу 2000, 443-446, 482.

նկատառումներով: Անգամ Բուլղարիայում 1957 թ. միակ հրատարակված թուրքական տարբերակից հայ վաճառականի դրվագը ևս զեղչվել է՝ վստահաբար միևնույն նկատառումներով[25]:

Հայկական ԽՍՀ-ում ևս նման դրսևորումներ պետք է լինեին: Օրինակ, «Սասնա ծռերի» հրատարակիչները Խանդութ Խաթունին գեղեցկուհի նաժիշտ բերելու համար Սասունցի Դավթին «ուղարկում» են ոչ այլուր, քան Ադրբեջան (Հադրբեջան): 1939 թ. համահավաք բնագրում վերոհիշյալն արդեն ընդգրկված էր[26] և հանրահայտ ողջ ԽՍՀՄ-ում՝ որպես ժողովուրդների «դարավոր բարեկամության» արձագանք: Ռուսերեն թարգմանությունն, ընդհանրապես, հեռացել էր բնագրից և դարձել չհանգավորված ազատ շարադրանք.

И в Гюрджистане он побывал.

И в Азербайджане он побывал...[27]

Ընկեր փահլևանների համար 40 գեղեցկուհիներ բերվում են Վրաստանից (*«Գյուրջիստան»* կամ *«Գյուրջու քաղաք»*)[28], ինչն առկա է նաև թուրքական (ադրբեջանական) տարբերակների Քյոռօղլու պարագային, իր ծոռ-«դալիներին» ամուսնացնելու զրույցում: Սակայն Մշո դաշտի ասացողը որևէ կերպ չէր կարող իրազեկ լինել ընդամենը 1918 թ.-ից Հարավային Կովկասում՝ պատմական Աղվանքի և Շիրվանի տարածքում կազմավորված «Ադրբեջան» պետությունից: Առնվազն մինչև 1918-1920 թթ. գրառված տարբերակներում որևէ նման հավանականություն պետք է բացառվեր: Անգամ տեղաբնակ (ոչ տեղաբնիկ) հանրույթի ինքնանվանումն «ադրբեջանցի» կամ «ազարի» չէր, այլ «թյուրք» կամ «մուսուլման», ինչը որ գործածական էր հայկական շրջանակներում ևս, իսկ ռուսների և վրացիների կողմից գործածվում էր «թաթարը» (ռուսների դեպքում՝ «կովկասյան թաթար», Ղրիմի և Կազանի տեղաբնակներից տարբերելու համար):

Իհարկե, ճիշտ չէ ընդհանրապես բացառել «Հադրբեջանը», քանի որ այն հիշատակվում է նաև XIX դ. վերջին գրառված պատումներում, սակայն բոլոր դեպքերում որևէ հիշատակություն ենթակա է համապատասխան բացատրության: Օրինակ, Մոկացի Հովանից Գարեգին Հովսեփյանի ավելի վաղ գրառած տարբերակում Դավիթն ինքը Սասուն է բերում Հադրբեջանի թագավորի աղջկան, կնության տալիս Փոքր Միերին, որը դառնում է Հադրբեջանի թագավոր[29]: Հատկանշական է, որ տվյալ պատումում իր քառասուն զինակիցներին Փոքր Միերն ամուսնացնում է Կուպ դևից ազատած քառասուն թագավորի աղջիկների հետ, սակայն երբ իրեն էլ ցանկանում են

[25] Köroğlu 1957, 57-58.

[26] Սասունցի Դավիթ 1939, 326, հմմտ. Սասունցի Դավիթ 1981, 280:

[27] Давид Сасунский 1939, 333.

[28] Սասունցի Դավիթ 1939, 325-326: Այլ պատումներում նաժիշտ բերելու համար Դավիթը միայնակ մեկնում է Գյուրջստան և այնտեղ մնում 7 տարի (Սասունցի Դավիթ 1977, 184):

[29] Սասնա ծռեր 1936, 130-137, հմմտ. Սասնա ծռեր 1936, 220-224:

ամուսնացնել, հանկարծ հիշում է Վրաստանի կնոջը. *«Իս չիմ ուզը, մէ կնիկ ունիմ՝ գեո՛յ Գուրջիստան (ինկաւ միտ կնիկ. էսաց՝ վա՛յ, ես էլ կնկան տէր իմ)»*[30]: Սա արդեն ամբողջությամբ հակասության մեջ է մտնում միևնույն պատումում շարունակ կրկնված «Հադրբեջանի» հետ, և, ըստ ամենայնի, ուղղակի սպրդել է իրականացված խմբագրության ժամանակ: Վերոհիշյալը թույլ է տալիս ենթադրել, որ երկրանվան նախնական ձևը տվյալ պատումում Գուրջիստան-Վրաստանն է, ինչը տրամաբանական է նաև պատմական առումով, եթե նկատի առնենք հայազգի Բագրատունիների թագավորելը Վրաստանում և հայ-վրացական միջդինաստիական ամուսնությունները: Ցավոք, բանասացի մասին որևէ տեղեկատվություն բանահավաքը չի թողել, ինչի հիման վրա կարելի էր որոշ բացատրություն տալ տարբեր անվանական հիշատակությունների առկայությանը:

Մեկ այլ մոկացի բանասացից՝ Մոկացի Վարդանից, Սարգիս Հայկունու ավելի ուշ գրառած և 1901 թ. հրատարակած տարբերակում Սասնա Դավթի ընտրյալ Խանդութը Թավրիզից է *(«Թաւրիզու խողից»)*[31], իսկ Փոքր Միհրի համար հարսնացու բերվում է Գյուրջըստանից *(«Կիւրճըստան»)*[32], ինչպես մյուս պատումներում: Որևէ պատմական աստառ փնտրելն այս դեպքում միանգամայն անիմաստ է, քանի որ «Թավրիզը» նորաբանություն-նորամուծություն է, հակառակ դեպքում պետք է նշվեր հայկական հարազատ ձևով՝ Դավրեժ, ինչը գործածական էր տակավին XVII-XIX դդ.: Այս դեպքում բացատրությունը գտնում ենք բանասացի մասին Հայկունու թողած ծանուցման մեջ, ինչի համաձայն, Մոկացի Վարդանն ապրել է Արճեշում, Աբաղայի Նազարավա գյուղում և 3-4 տարի ևս՝ պատմական Արտազ գավառի Ղըրխբուլաղ (Սբ. Թադևոս առաքյալի վանքին մերձակա) գյուղում, իմա՝ իրանական Ատրպատականում (Թավրիզ կենտրոնով), *«որով իւր բարբառն խառնուրդ մը կը կազմէ»*[33]: Բնականաբար, բարբառը փոխելով՝ կարող էին փոփոխվել նաև ավանդական տեղանունները, տեղայնացվել ու հարմարեցվել նոր միջավայրին, ինչը դիտարկվում է բազմաթիվ այլ պատումների պարագային ևս:

Հակառակ դրան՝ Թավրիզին կապակցված «Հադրբեջանը» կամ համապատասխան թրքահունչ «Ազերբայջանը» Մոկացի Վարդանը չի հիշատակում, ինչը սովորական է վերը նշված մյուս մոկացի ասացողի դեպքում: Գ. Հովսեփյանի գրառած տարբերակով, Խանդութը Իրանից է, հիշատակվում է *«Իրանայ քեաղաքը»*, իսկ նրա հայրենիքը «Խոյայ» քաղաքն է[34], և ոչ Թավրիզը: Այս դեպքում բնական է ենթադրել, որ Մոկացի Հովանը ևս արտագնա աշխատանքի բերումով կամ որևէ այլ հանգամանքով կարող էր

[30] Սասմայ ծռեր 1892, 146, հմմտ. Սասնա ծռեր 1936, 236, Սասնա ծռեր 1977, 501:
[31] Էմինեան Ազգագրական ժողովածու 1901, 38-42, հմմտ. Սասնա ծռեր 1936, 360-366:
[32] Էմինեան Ազգագրական ժողովածու 1901, 44-45, հմմտ. Սասնա ծռեր 1936, 369-370:
[33] Էմինեան Ազգագրական ժողովածու 1901, 19:
[34] Սասմայ ծռեր 1892, 121, հմմտ. Սասնա ծռեր 1936, 208:

հայտնվել Մոկքից դուրս աշխարհագրական միջավայրում, ըստ այդմ, ներմուծել «Հադրբեջան» տեղանունն էպոսի իր տարբերակում: Դրա արտահայտությունն է նաև Հադրբեջանի հետ «Ռուսըստանի» հիշատակությունը[35]:

Ամեն դեպքում Հադրբեջան-Ադրբեջանի հիշատակությունները պատումներում երբեք էլ չեն կազմել այն պատկառելի և վճռական նշանակություն ունեցող քանակը, որի առկայությամբ տվյալ երկրանունը կարելի էր և պետք էր ընդգրկել էպոսի համահավաք տեքստում[36]: Մանավանդ, եթե հաշվի առնվեին վերը նշված իրողությունները և Առան-Շիրվանի տարածքում նոր կազմավորմամբ 1918-1920 թթ. հետո առաջացած տարածաշրջանային աշխարհագրական և ազգագրական շփոթը: Սակայն կար «հասարակական» և գաղափարախոսական պահանջ, և այն ամբողջությամբ բավարարվել է՝ բանահյուսությունը ծառայեցնելով իշխող գաղափարախոսությանը:

Հետագայում Մ. Աբեղյանը փորձել է Ատրպատական-Հադրբեջանի համար որևէ բացատրություն տալ՝ միանգամայն գիտակցելով դրա նույնացման անթույլատրելիությունն Ադրբեջանական ԽՍՀ տարածքի հետ[37]: Սակայն տվյալ դեպքում հետևելով «պատմական դպրոցի» մոտեցումներին՝ Աբեղյանը Հադրբեջանը փորձել է կապակցել XII-XIII դդ. Ատրպատականի աթաբեկությանը և ենթադրել, թե Սասունը (Սասնա իշխանությունը) հարաբերություններ է ունեցել, իբր, նման հարևանի հետ[38]: Վերոհիշյալը կրկնվել է այլ հրատարակություններում ևս, իսկ *«Հադրբեջանա քաղաքն»* ուղղակի նույնացվել է Թավրիզի հետ[39], թեև նշված աթաբեկության կենտրոնը Նախիջևանն էր: Իրականում պատմական կարճ ժամանակահատվածում (1136-1225 թթ.), այն էլ Սասնա (Թոռնիկյան) իշխանության հետ հարաբերություններ չեն արձանագրվել, և նշված ենթադրությունը հիմնովին բացառվում է[40]:

Ինչևէ, 1939 թ. համահավաք բնագրում «Ադրբեջան» երկրանվան ներթափանցումն այլևս կատարված փաստ էր, և արդեն կարևոր չէր՝ Մ. Աբեղյանն Ատրպատակա՞նը նկատի ուներ, թե՞ մեկ այլ տարածք: Բոլոր դեպքերում էլ այն տեղավորվում էր համաթուրանական հստակ գունավորմամբ

---

[35] Սասմայ ծռեր 1892, 130, հմմտ. Սասնա ծռեր 1936, 220:

[36] 1993 թ. համահավաք բնագրի երկրորդ տարբերակում մնացել է միայն Գյուրջիստանը, Հադրբեջանն ամբողջությամբ զեղչված է (Սասունցի Դավիթ 1993, 327-328):

[37] Էպոսի 1939 թ. հրատարակության տեղանունների ցանկում (Վայրերի անուններ) Գյուրջիստանի բացատրությունը հավուր պատշաճի տրվում է (Վրաստան), սակայն Ադրբեջանը որևէ ձևով, ընդհանրապես չի ընդգրկվել, թեև հստակ հիշատակված է (Սասունցի Դավիթ 1939, 381)՝ թերևս առանց այդ էլ պարզ հասկացվելով:

[38] Սասնա ծռեր 1936, ԻԱ-21, հմմտ. Սասնա ծռեր 1999, 9:

[39] Սասնա ծռեր 1951, 821:

[40] Ատրպատականի աթաբեկության հիմնադիրն էր ծագումով ղփչաղ Շամսադդին Ելտկուզը կամ Իլդեգիզը (մահ. 1175 թ.), թյուրք-սելջուկյան տվյալ կազմավորումը գոյություն է ունեցել 1136-1225 թթ., նվաճել է Նախիջևանը, Սյունիքը, պատերազմել Անիի և Վրաց թագավորության դեմ, դադարել է գոյություն ունենալ 1225 թ., Ջալալեդդին Խորեզմշահի նվաճումներից հետո: Ընդսմին, մեր օրերում նշված թյուրքական կազմավորումը Ադրբեջանում կամայականորեն հռչակվել է «ադրբեջանական աթաբեկություն»:

ԽՍՀՄ արտաքին քաղաքականության զինանոց առժամանակ ներդրված «Հարավային Ադրբեջանի» և «Հյուսիսային Ադրբեջանի» գաղափարախոսական դրույթի շրջանակում[41]:

Այնուամենայնիվ, որոշ պատումների վրա հիմնվելով՝ Հ. Հարությունյանի նշած մեթոդով այսօր էլ կարելի է «վերականգնել» իրական (նախնական) երկրանունը, որը կարող է լինել, օրինակ, այլ պատումներում նմանապես վկայված Հնդստան-Հնդկաստանը: Որոշ պատումներում Դավթի ընտրյալ Խանդութը Հնդու Յամանար թագավորի դուստրն է[42], իսկ Խանդութի համար նաժիշտ (ծառա) բերելու համար Դավիթը Հնդստան է հասնում նաև ավելի ուշ գրառված պատումներում[43]: Ավելի վաղ գրառված պատումներում ավագ հերոսներից Սանասարը կնության է առնում Չինմաչինա թագավորի դստերը (Քառսուն-Ճուղ-ծամ կամ անանուն), մարտնչում գեղեցկուհուց կախարդված փահլևանների դեմ Չինմաչինու (Չընմաչընի) քաղաքում[44]: Պատումներից մեկում Դավիթն անգամ ջրաղացքարերը բերում է «Հնտու յամանից»[45], իմա՝ Հնդկաստանից, որը Չինումաչինի հետ տարաշխարհիկ իրերի (ինչպես նաև երևույթների) համար ամենաավանդական պատկերացումն էր կազմում, ըստ Ս. Հարությունյանի բնորոշման[46]: Մանավանդ որ հեքիաթներում դրանք վայրեր են, որտեղ ամեն ինչ արտասովոր է և աննման, մի խոսքով՝ չնաշխարհիկ[47], այդ թվում՝ գեղեցկուհի կանայք[48]: Իսկ Դավթի հետ

[41] Տվյալ գաղափարախոսական դրույթի գործնական դրսևորումն էր Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին Իրանի տարածքից ԽՍՀՄ զորքերի դուրսբերումից հետո 1945-1946 թթ. գոյություն ունեցած «Ադրբեջանի ժողովրդավարական հանրապետություն» անվամբ և Թավրիզ կենտրոնով խամաճիկային կազմավորումը:

[42] Ջոջանց տուն կամ Սասմայ ծռեր 1910, 122, հմմտ. Սասնա ծռեր 1936, 865-866: Տարբեր պատումներում հիշատակվում են նաև Հընդա երկրի ամիրան և Հընդա Մելիքը:

[43] Սասունցի Դավիթ 1977, 310-311:

[44] Սասնա ծռեր 1936, 320-322, 485-489, 539-543, 849-852: Որոշ պատումներում Չինիմաչինա թագավորը նշվում է Դավթի դեմ արշավանքի պատրաստվող Բապը Ֆրենկի դաշնակիցների թվում (Սասնա ծռեր 1936, 462), կամ հենց Չինաստանա թագավորն է արշավում Խանդութին տիրանալու նպատակով (Սասնա ծռեր 1936, 643):

[45] Սասնա ծռեր 1999, 225:

[46] Սասնա ծռեր 1999, 78: Այլ պատումներում Դավիթն իր որդու համար հարս է բերում Գյուրջիստանի թագավորի դստերը, որին, սակայն, սեփական որդուն կնության տալ էր ցանկանում Չընմաչնա կամ Չընա թագավորը, և այդ հողի վրա էլ բախում է տեղի ունենում (Սասնա ծռեր 1936, 370-372): Հետաքրքիր վարքականոն է ցուցաբերում Չինաստանի թագավորը, որը տեղի է տալիս Դավթի պայմանին՝ ընտանիքը (Միերը և հարսնացուն) հասցնել տուն, վերադառնալ և կռվի բռնվել, սակայն, ինչպես Չմշկիկ Սուլթանի դեպքում, Դավիթը մոռանում է ուխտը և միայն յոթ տարի հետո հիշում ու մեկնում պայմանավորված մարտադաշտ՝ այն էլ համապատասխան հիշեցմամբ նամակ ստանալով այդ ողջ ժամանակահատվածում մարտադաշտում սպասող Չընա թագավորից (Սասնա ծռեր 1936, 357): Սա, հիրավի, Սասնա տան հակառակորդներին ոչ բնորոշ և օտար ասպետական է, ինչը խիստ տարբեր է ավանդական հակառակորդ Մըսրա Մելիքի ու նրա գործակիցների նենգ և ուխտադրուժ կեցվածքից:

[47] Որոշ մեկնությամբ՝ «Չին աշխարհից» (Աճառյան 1977, 630):

[48] Մոկացի Հովանից գրառված պատումում գեղեցկուհիները Հադրբեջանից են. *«Աղէկ աղջիկ որ կ'ուզէք, կեացէք Հադրբեջան»* (Սասմայ ծռեր 1892, 130, հմմտ. Սասնա ծռեր 1936, 219): Սա իր հեր-

կապվում էին ոչ պատմական և անիրական վայրեր ևս, որոնք պատմականի հետ կարող են նույնանալ *«միևական այն մյուս իրականության մեջ, որը դուրս է որոշակի իրականությունից»*[49]:

Արձանագրված է նաև երկրանվան «Հուրըստան» կամ «Հուրիստան» տարբերակը, որը վստահաբար առնչվում է *«հուրի փերի»* հրեղեն էակների երկրին[50]: Ավագ հերոսներից Սանասարն ինքը *«Հուրի-փարի»* Դեղձուն-Ծամին բերում է Քաջանց երկրից (կամ Պղնձե քաղաքից), որը *«հմայքի էրկիր»* է[51]: Այլ հարց, որ ցանկության դեպքում Ադրբեջան-Ատրպատականը կարելի է ստուգաբանել որպես «կրակների երկիր» և արհեստականորեն նույնացնել Հուրըստանի հետ՝ հիմք ընդունելով «հուր» բաղադրիչը, սակայն գիտական հրատարակություններում, անշուշտ, նման պրակտիկան անթույլատրելի է: Կասկածից դուրս է, որ Գ. Թարվերդյանի կողմից նման կարգի միջամտություններ (հավելումներ) են արվել գրառված նյութերում, ինչը Հ. Հարությունյանը հստակ մատնանշում է: Թարվերդյանն ինքն իրապես բանահավաքչական հսկայական և բեղուն գործունեություն է ծավալել (իհարկե, Հարությունյանի նշած որոշ մասնագիտական վերապահումներով), սակայն ԽՍՀՄ-ի օրոք մեծամասնության հետ տուրք է տվել առաջադրված գաղափարախոսական դրույթներին: Պատեհ-անպատեհ առիթներով Թարվերդյանն իր նյութերում փնովում էր «դաշնակցական մաուզերիստներին», նրանց մեղադրում իր որոշ աշուղական գրառումների կորստյան համար, ճգնում ցուցադրել ընդգծված հակադաշնակցական կեցվածք: Բռնի կոլեկտիվացման և «մեծ ահաբեկչության» («մեծ զտում») տարիներին նույն ինքն աշուղ Վերդին գովերգում էր ԽՍՀՄ-ի քաղաքականությունը, «Լենին փաշին»[52], այնուհետև՝ «Ստալինի անունը» բանաստեղծության մեջ (իր ներկայացմամբ՝ «մուխամմազ») Քյոռօղլուն կապակցում «պողպատե առաջնորդին»[53]: «Սասնա ծռերի» գրառման[54], իսկ ավելի ճիշտ՝ «գրական մշակման» անհաջող փորձին զուգահեռ Վերդին ստեղծագործում էր նաև հայատառ ադրբեջաներենով՝ ըստ երևույթին, փորձելով ընդօրինակել ավելի վաղ գործած թրքալեզու հայ աշուղներին:

Մեր վերջին ուսումնասիրությունների արդյունքներով, ԽՍՀՄ-ի օրոք մեկ այլ բանահավաք ավելի հեռուն է գնացել՝ նպատակ ունենալով «Քյոռօղլու»

թին հակասության մեջ է մտնում մնացյալ բանահյուսական նյութերի հետ, որոնցում հիմնականում գովերգվում է Չինումաչինի և Հնդստանի աղջիկների գեղեցկությունը:

[49] Սասնա ծռեր 1999, 81:

[50] Սասնա ծռեր 1979, 336, Սասնա ծռեր 1999, 411: Հուրստան-Հուրիստանը հայտնի է նաև ավելի ուշ գրառված պատումներից (Սասունցի Դավիթ 1977, 240-242):

[51] Սասունցի Դավիթ 1939, 77, 100:

[52] Լենինը հայ ֆոլկլորում 1936, 123-161:

[53] ՀԱԱ, ֆ. 1336, ց. 7, գ. 591, 74: Վերդին հայտնի է նաև Ստալինին գովերգող աշուղական խաղերով (Հայ աշուղներ 1937, 473-482, Ստալինը հայ աշուղների երգերում 1939, 41-67):

[54] ՀԱԱ, ֆ. 1336, ց. 7, գ. 1012, 2-47:

պատումների գրառված որոշ հայերեն երգերը վերածել թուրքերենի *(«...բայց ես ուզեցա ամբողջովին հայերեն գրված երգերը փոխարինել թուրքերենի, ծանրաբեռնված էի կոլխոզային աշխատանքով»)*[55]: Այսինքն՝ Հ. Հարությունյանը միանգամայն իրավունք ուներ շեշտելու իրեն ներկայացված թուրքերեն (ադրբեջաներեն) երգերի հայերեն թարգմանության պահանջը: Ի վերջո, ինչպես ինքն է դիպուկ արտահայտվել, «*կարևորը ոչ թե այս կամ այն հավաքողն է, այլ վեպն ինքը*»[56]:

Հայոց ազգագրական նյութն էպոսի հայկական տարբերակներում

Միով բանիվ, չնայած ներկայացված հիմնականում «աշուղավիպական» բնույթի տարբերակներին՝ Հ. Հարությունյանը կարողացել է դրանց մեջ տեսնել այն հարազատ հայկական ազգագրական նյութը, որը գերիշխել է, մանավանդ Արևմտյան Հայաստանում գրառված պատումներում: Այդ տեսակետից Հարությունյանն առանձնացրել է Վանի և Մոկաց բարբառներով գրառված տարբերակները, մատնանշել դրանց հարազատությունը «Սասնա ծռերին»: Ակնհայտ է, որ Խ. Սամուելյանի վերաբերմունքը նույնական է եղել, ինչն արձանագրվել է 1941 թ. հրատարակության առաջաբանում առավել մանրամասն հիշատակությամբ. *«Այդ կողմից ուշագրավ է Վանի բարբառով վարիանտը: Այստեղ թե՛ գործող անձերը և թե՛ գործողության վայրերը հայկական են: Քյոռ-Օղլու հայրը ոչ թե Հաջի Ալին է, ինչպես մյուս վարիանտներում, այլ հայ է՝ Հարութ անունով, Վասպուրականի Հայոց Ձորի Անկշտան գյուղից: Որդին կոչվում է Առշամ, փոխանակ Ռուշանի... Քյոռ-Օղլու կռիվները տեղի են ունենում այն պատմական դաշտավայրում, որ ժողովրդական ավանդությունները կապում են Հայկ ու Բել դյուցազների պատերազմի հետ... Բայց բնորոշն այն է, որ ամբողջ վիպասանությունը հագեցած է զուտ հայկական ֆոլկլորով ու կենցաղային սովորույթների նկարագրություններով: Բավական է միայն նշել հարսանիքի մանրամասն նկարագիրը յուրահատուկ ծեսերով ու ժողովրդական հարսանեկան երգերով, որոնք իրենց ազգագրական բովանդակությամբ հիմնականում պատկերացնում են Վասպուրականի հայ ժողովրդական կենցաղը: Քյոռ-Օղլու Ղռաթ ձին էլ իր ամբողջ պատմությամբ կապվում է Վասպուրականի Նազիկ և Խաչլու լճակների*[57] *հրեղեն ձիերի մասին ժողովրդական առասպելաբանության հետ... Երբեմն այն տպավորությունն է ստացվում, որ այս վիպասանությունը... այնքան է կերպարանափոխվել հայկական միջավայրում, որ կարծես, ոչ թե մի առանձին վարիանտ է հանդիսանում, այլ հայ ժողովրդական բանահյուսության*

[55] ՀԱԱ, ֆ. 1336, ց. 7, գ. 1011, թ. 141 շրջ.:

[56] ՀԱԱ, ֆ. 740, ց. 1, գ. 102, 74:

[57] Վանա Նազիկ (Նազուկ) և Խաչլու (Խաչլի) լճերի առնչությամբ ավանդազրույցներ արձանագրել են Գ. Սրվանձտյանցը, Ա. Տևկանցը, Բենսեն (Ս. Մովսիսյան):

տեսագծերով վերակառուցված մի նոր հերոսական վիպասանություն, որ հիշեցնում է «Սասնա ծռերը»[58]:

Խ. Սամուելյանն ընդունել է նաև Հ. Հարությունյանի մյուս դիտողությունը՝ գրառված տեքստերը լրացնել բարբառներին բնորոշ հնչյունային պայմանանիշներով, ինչն ակներև է Ուրմիայի բարբառով հրատարակության մեջ: Նմանապես Ա. Ղարիբյանի կողմից առանձնակի անդրադարձ է զետեղվել տվյալ բարբառի մասին *(«Դիտողություններ վարիանտիս լեզվի մասին»)*[59]:

Գրառված նյութերից Հարությունյանն առանձնացնում է նաև Քյոռօղլու որդի Հասան բեկի մասին գրառված պատումը, որն արժեքավոր է գնահատում մինչև Դերբենդ էպոսի տարածվածության շառավղի դրսևորման առումով: Հասան-բեկի և Դերբենդի մասին զրույցը բավական տարածված է, հատկապես թուրքական, քրդական և ադրբեջանական տարբերակներով, միևնույն բովանդակությամբ հայտնի է առավել ուշ Արցախում գրառված «Քյոռօղլուն սլվենը» հայկական պատումը[60]: Դրանցում դրսևորվում է համաշխարհային վիպական գրականության այնպիսի մի սյուժե, ինչպիսին է հերոսի մենամարտը չճանաչված որդու հետ, որ ճանաչվում է մինչ ծնունդը փոխանցված ոսկե օղականձև զարդից կամ ապարանջանից (Արցախի դեպքում՝ «սլվենից»): Ըստ ամենայնի, իրանական առասպելաբանության ազդեցությամբ տվյալ սյուժեն առկա է նշված տարբերակներում, որոնցում Քյոռօղլին մենամարտում է Հասան-բեկի հետ, ընդ որում, տարբեր աշուղների մոտ վերջաբանը տարբեր է. Քյոռօղլին վաղօրոք նվիրած ապարանջանից (բազպան) ճանաչում է որդուն և նրա հետ վերադառնում իր Չամլիբել ամրոցը կամ սպանություն գործելուց հետո տվյալ նշանով ճանաչում է սեփական որդուն, ինչպես «Շահնամեում» Ռուստամ Զալը:

Միևնույն սյուժեն դիտարկվում է նաև «Սասնա ծռեր» էպոսում Դավթի և Փոքր Մհերի մենամարտի առնչությամբ, ընդ որում, ոսկե բազբանդից հայր և որդի միմյանց ճանաչում են, միայն թե վերջում Դավիթն անիծում է որդուն՝ անժառանգ մնալու: Ի տարբերություն «Քյոռօղլու» տարբերակների՝ «Սասնա ծռերի» պատումներում Մհերը հանդես է գալիս որպես Դավթի օրինավոր որդի, թեև նրան էլ են անվանարկում որպես պոռնկորդի, ինչից դրդված դիմում է հոր որոնմանը: Միայն Չմշկիկ Սուլթանից ծնված դստեր հետ մենամարտի (կամ նրանից դարանակալ սպանվելու) դրվագում է դրսևորվում կռիվն ապօրինի ժառանգի հետ[61]:

---

[58] Քյոռ-Օղլի 1941, 18-19: Հատկանշական է, որ միևնույն տարածաշրջանից և մասնավորապես Անկշտան գյուղից են սերում նաև «Սասնա ծռերի» ասացողները, ինչը ոչ ամբողջությամբ, սակայն որոշակիորեն կարող է բացատրել երկու էպոսների որոշ պատումների միջև առկա ակնհայտ զուգահեռները:

[59] Քյոռ-Օղլի 1941, 219-220:

[60] ՀԺՀ-7, 187-188:

[61] Աբեղյան 1966, 423-424:

Հարությունյանն, անշուշտ, չէր կարող իրազեկ լինել ավելի ուշ հրատարակված տվյալ նյութերից, սակայն մասնագիտական խորաթափանցությամբ իրեն ներկայացված պատումն իրավամբ բնութագրել է որպես «Քյոռօղլի» էպոսի ճյուղերից մեկը:

Ընդհանրապես, Հ. Հարությունյանը մասնագիտորեն տալիս է յուրաքանչյուր տարբերակի հակիրճ բնութագիրն ու գնահատականը, առանց որևէ վարանման, սակայն զուսպ և հավասարակշռված բացահայտում է առկա թերությունները և արհեստական միջամտությունները: Արհեստավարժ մասնագետի եզրակացությունը հստակ է՝ չբավականանալ միայն Գ. Թարվերդյանի գրառած նյութով, այլ համախմբել բոլոր պատումները, իրականացնել բանահավաքչական աշխատանք շրջաններում և այնուհետև կազմել *«հայերեն պատումների լիակատար հավաքածուն»*: Այն, ինչ որ հնարավոր էր իրականացնել տվյալ ժամանակահատվածում, մանավանդ որ «Սասնա ծռերի» հրատարակությունից հետո Հայաստանում ձևավորված գիտական ներուժի և փորձառության, ինչպես նաև արդեն իսկ գրառված նյութերի առկայության պայմաններում «Քյոռօղլու» հայկական համահավաք բնագրի կազմումն ու հրատարակությունը որևէ բարդություն չէին կարող ներկայացնել:

Դատելով առկա հատվածական տվյալներից՝ Խ. Սամուելյանը փորձել է հետևել Հ. Հարությունյանի նշած դիտողություններին ու առաջարկություններին, ինչի շնորհիվ, ըստ ամենայնի, հրատարակության է պատրաստվել «Քյոռօղլու» հայկական համահավաք բնագիրը, այդ թվում՝ նաև այլ բանահավաքների գրառած պատումների հաշվառմամբ: Ամեն դեպքում 1941 թ. հրատարակության մեջ ընդգրկվել է միայն Ուրմիայի տարբերակը: Այնուհանդերձ, Սամուելյանի առաջաբանում դրսևորվում է մի էական անհամապատասխանություն՝ նշվում է *«ներկա հրատարակությամբ»* լույս տեսնող և զանազան բարբառներով (Խոյի, Սալմաստի, Բաշղալայի, Դարալագյազի, Վանի, Մոկաց, Կոտայքի, Վաղարշապատի ևն) գրառված տարբերակների մասին[62], թեև իրականում խոսքն ընդամենը մեկ ասացողից Ուրմիայի բարբառով գրառված տարբերակի մասին պետք է լիներ: Առավել պարզություն մտցվում է հրատարակության վերջում խմբագիր Ա. Ղարիբյանի դիտողություններով[63]. ակնհայտ է դառնում, որ առաջաբանը վաղօրոք գրված է եղել մեկ այլ ծավալուն հրատարակության համար, ինչը, փաստորեն, վերջում չեղարկվել է: Ըստ այդմ, մի քանի տասնյակ զանազան բարբառներով գրառված տարբերակները մինչ օրս անտիպ են և պահվում են ՀՀ տարբեր արխիվներում:

Հ. Հարությունյանի «Նախնական դիտողությունները» մասնագիտական առումով շարունակում են այժմեական լինել և արժեքավոր տեղեկատվություն են պարունակում տվյալ ժամանակահատվածում իրականացված գիտա-

[62] Քյոռ-Օղլի 1941, 22:
[63] Քյոռ-Օղլի 1941, 219-220:

կան և մերձգիտական գործունեության մասին: Դրանք գրված են տվյալ ժամանակահատվածի ուղղագրական կանոններով, հրատարակվում են առանց լեզվաոճական փոփոխությունների: Կատարել ենք հիմնականում ուղղագրական և որոշ կետադրական շտկումներ: Ձեռագիրը պարզ, ընթեռնելի է, տեքստը գրված է բացառիկ մաքուր հայերենով և ակնառու գիտական ոճով:

Եզրակացություններ

Այսպիսով, ակնհայտ է, որ 1930-ական թթ. Հայկական ԽՍՀ-ում իրականացվել են «Քյոռօղլի» էպոսի հայկական պատումների հայտնաբերման, գրառման և ուսումնասիրության աշխատանքներ, որոնք ակադեմիական մակարդակով են փորձաքննության ենթարկվել:

Մինչև 1941 թ. գրառված են եղել առնվազն Ուրմիայի, Խոյի, Սալմաստի, Բաշղալայի, Վանի, Մոկաց, Էրզրումի, Վաղարշապատի, Կոտայքի, Դարալագյազի բարբառներով տարատեսակ պատումներ, որոնց առնվազն մի մասը պատրաստվել է հրատարակության:

Առկա գնահատականներով, առնվազն Վանի և Մոկաց բարբառներով պատումները ներկայացնում են ամենաընդգծված հայ ազգագրական նյութերը, որոնցում ընդգրկված են հայոց վիպական-բանահյուսական տարրեր:

Նախնական դիտողություններ Գ. Թարվերդյանի գրի առած «Քյոռօղլի» աշուղական վեպի 23 վարիանտների մասին[64]

1. Նյութերի ընտրությունը

Հավաքագրելիս նյութերի **ընտրության** որևէ սկզբունք նկատի չի առնված. **անխտիր** գրի է առնված այն ամենը, ինչ կապված է Քյոռօղլու, որպես գործող անձի, անվան հետ: Այդ պատճառով էլ բարբառագիտական, գեղարվեստական, սոցիալ-պատմական, բանասիրական կամ այլ տեսակետից արժեքավոր նյութերի կողքին կան և ոչ մի տեսակետից արժեք չունեցող նյութեր: Արժեքավոր ամբողջական պատումների մեջ իսկ կան թերություններ, որոնք կամ վերջին պատմողի **անհատական** մեղքով են բացատրվում, կամ գրառման պրոցեսի անկատարությունից են առաջ եկել: Այս պատճառով էլ անհրաժեշտ է նյութերի ընտրության գծով **խմբագրություն** կատարել: Խմբագիրը ոչ միայն որևէ տեսակետից արժեք չունեցող նյութերը տպագրությունից պետք է դուրս հանի, այլև արժեքավորների էլ անարժեք մասերը հանի, ամբողջությունը մշակի, շտկի: Խմբագրական այս մշակումները ոչ մի դեպքում չպիտի լինեն օտարամուտ միջամտություն, ոճավորում (ստիլիզացիա)՝ դրսից, հարմարեցում նորին, խմբագրի **անհատական** ճա-

[64] Տեքստում առկա բոլոր ընդգծումները հեղինակինն են:

շակին: Ընդհակառակն, խմբագրությունը պետք է և՛ վերջին պատմողի, և՛ գրի առնողի, և՛ իր՝ խմբագրի անհատական, ուրեմն և պատահական և ոչ բնորոշ հավելում-հապավումներից վերանա, որքան էլ այդ դժվար լինի, և **վերականգնի նախնականը**, իր ժամանակի համար բնորոշը, գերանհատական-առարկայականը, տիպականը: Այս նպատակին հետամտող խմբագրական աշխատանքի մեթոդական հիմնական ուղին **իմմունենտ** մշակումն է, որին իբրև օժանդակ միջոց պիտի ծառայի **բաղդատական** մեթոդը: Իմմունենտ մեթոդը երկը վերցնում է որպես օրգանական միություն և մասերը դիտում է այդ միության ամբողջականության մեջ: Եվ եթե որոշ անհարիրություն նկատվի մասերի մեջ, ապա կարելի է այն վերացնել՝ ամբողջության ներքին հետևողականությունը նկատի առնելով: Այսպիսով հնարավոր կլինի վերականգնել «նախնականը»: Եթե մի վարիանտը կամ մի պատումը հնարավորություն չի տալիս լիովին վերականգնել այդ «նախնականը», այդ դեպքում օգնության պիտի կանչել մյուս վարիանտներն ու պատումները. և որքան շատ ու բազմազան լինեն այդ վարիանտներն ու պատումները, որքան խոր և հետազնին՝ դրանց համեմատությունը, այնքան ավելի հավաստի կլինի տվյալ պատումի նախնականությունը: Իհարկե, իմմունենտ վերլուծական և բաղդատական **մեթոդական** աշխատանքը միշտ պետք է հիմնված լինի **մեթոդոլոգիական** այն նախադրյալի վրա, թե երկը արտացոլանքն է տվյալ ժամանակաշրջանի սոցիալական կյանքի, ուրիշ խոսքով՝ իմմունենտ-բաղդատական վերլուծությունը պիտի կատարվի սոցիալ-պատմական ֆոնի վրա:

Եթե այս տեսակետից նայենք գործին՝ տպելու արժանի չեն №№ 1, 3, 5, 17, 18, 19, 20, 22 վարիանտները:

№ 1-ը ինտելիգենտացրած, մոդեռնացված և տափակացրած մի վարիանտ է, թեև դեպքերով և դրվագներով հարուստ և բավականաչափ ծավալուն. յուրաքանչյուր «ճյուղից»[65] մի թուլացրած և գունատ արձագանք կա այստեղ: Եթե շատ նյութ մատակարարելու նկատառումով տպվի էլ, անհրաժեշտ է խոր խմբագրական վերամշակման ենթարկել և՛ շարադրական, և՛ այլ կողմերից:

№ 3-ը շատ նման է 2-ին, 4-ին և 6-ին. եթե վերջիններս տպագրվելու են, ապա ավելորդ է առաջինը տպագրել:

№ 5-ը կարելի էր տպագրել, եթե երգերը № № 6 և 7-ի կրկնությունը չեն:

№№ 17, 18, 19 և 20-ը մի-մի միջադեպի նկարագրություն են, միջադեպերն էլ անիմաստ են և աղավաղված. հավանորեն պատմողը նախնական վեպից միայն մի բեկորն է լսել, այն էլ ընդհանուր կապակցությունից դուրս, ուրեմն և արժեքազրկված:

Ցած արժեքի է նաև № 22 վարիանտը, որի մեջ «Քյոռօղլի» վեպից միայն անուններն են մնացել. անցքերը նոր են: Հավանորեն այլ վեպ է՝ Քյոռօղլու

[65] «Ճյուղ» կոչվում են իրարից անկախ այն **տարբեր բովանդակության** վեպերը, որոնց գլխավոր հերոսը Քյոռօղլին է (ծնթ. հեղինակի):

անվան շուրջը «թքով կպցրած»: Արժեքավոր է միայն եռատուն երգը և Նիգյարին փախցնելու միակ միջադեպը: Եթե ինչ-ինչ նկատառումներով տպագրության էլ հանձնվի, անհրաժեշտ է մեծ կրճատումներ անել:

Մյուս վարիանտներն այս կամ այն կողմից արժեքավոր են, ուստի և արժանի են հրատարակության: *Սակայն, ինչպես ասացինք, անհրաժեշտ է խմբագրության ենթարկել*[66]: Այսպես, օրինակ, 23-րդ վարիանտը շատ արժեքավոր է, տոգորված է ժողովրդի հոգին արտացոլող խոր դեմոկրատիզմով, հարուստ է կյանքի դիտողություններով և փիլիսոփայական խորհրդածությամբ, ամբողջական է, իր մանրամասների մեջ մշակված և համաչափ: Սա ամենամեծածավալ վարիանտն է (30 տետր՝ պլյուս մեկ տետր ծանոթագրություններ)[67]:

№ 21 վարիանտն էլ շատ արժեքավոր մի դրվագ է (թե ինչպես է Քյոռօղլին «դալի» ճարում և իր կողմը գրավում): Թե՛ բանասիրական և թե՛ գեղարվեստական լավ դոկումենտ է:

№ 16 վարիանտն արժեքավոր է, մանավանդ, իր երգերով, որ անհրաժեշտ է թարգմանել:

№ 15-ի արժեքը հայերենի թարգմանված երգերն են և մի էպիզոդի գեղարվեստական նկարապատումը:

№ 14-ը հարուստ է էպիզոդներով և հայերեն երգերով:

№ 13-ը մի ընդարձակ էպիզոդի գեղարվեստական նկարապատումն է՝ հայերեն թարգմանված երգերով:

№ 12-ը (Վանի բարբառով) շատ արժեքավոր վարիանտ է՝ հագեցված բուն ֆոլկլորային նյութերով (հարսանեկան ծեսը՝ երգերով և նկարագրություններով): Ավելի շուտ՝ հերոսավիպական բնույթ ունի à la «Սասմա ծռեր», քան աշուղավիպական: Երևի, ինագույն վարիանտներից մեկը լինի, ուստի և պատմականորեն էլ ավելի արժեքավոր:

№ 11 վարիանտը (Մոկաց բարբառ) նույն արժեքներն ունի, ինչ Վանի վարիանտը. այստեղ հովվերգական գունավորումն ավելի ուժեղ է:

№ 10 վարիանտի արժեքն այն է, որ այստեղ արտացոլված է քրդական կյանքը. այլև այն, որ Քյոռօղլին ոչ միայն հայկական ժողովրդական հերոս է, ինչպես ամենից պարզ և ցայտուն արտահայտված է Հարավային Հայաստանից եկած վարիանտներում, ոչ միայն թուրքական-պարսկական ժողովրդական հերոս է, ինչպես պատկերված է նախկին և այժմյան պարսկահայքի[68] (Ղամարլու[69], Կոտայք, Ատրպատական ևլն) վարիանտներում,

[66] Մատիտով ջնջված է հեղինակի կողմից: Նպատակահարմար ենք գտել այն վերականգնել:

[67] Ըստ ամենայնի, խոսքն Ուրմիայի բարբառով գրառված տարբերակի մասին է, որն էլ հրատարակվել է 1941 թ.:

[68] Նկատի է առնված ոչ թե Մեծ Հայքի համանուն պատմական նահանգը, այլ իրանահայերի (պարսկահայերի) բնակության ընդհանուր արեալը:

[69] Ներկայիս Արտաշատը:

այլև քրդական[70]. այսինքն՝ այն, որ Քյոռօղլին մերձավորարևելյան միջազգային-դեմոկրատական հերոս է:

№ 9-ը նույնպես շատ լավ վարիանտ է. ունի շատ արժեքավոր երեք երգ (թարգմանված):

№ 8-ը մի քանի էպիզոդների գեղարվեստական նկարագրությունն է:

№ 7-ը ոչ թե վարիանտ է, այլ մի նոր ճյուղ. այդ իսկ պատճառով էլ ներկայացնում է մի նոր գանձ Քյոռօղլու վեպի համար:

Արժեքավոր և երգերով հարուստ է նաև № 6 վարիանտը:

№ 4-ը հավանորեն Քյոռօղլու վեպի ենթադրյալ 7 ճյուղերից մեկը լինի: Այստեղ գլխավոր հերոսը Քյոռօղլու տղա Հասան Բեկն է: Արժեքավոր է նաև այն պատճառով, որ «Քյոռօղլու» վեպի տարածման շառավիղը հասցնում է մինչև Դերբենտ:

№ 2-ը տարբերվում է կառուցվածքով իրեն նման մյուս վարիանտներից այն արժեքավոր առանձնահատկությամբ, որ հագեցված է «ռեալիստական» մանրամասներով և հարուստ է հայերեն թարգմանված երգերով:

Որքան էլ, սակայն, բոլոր այս վարիանտներն այս կամ այն կողմից արժեքավոր լինեն, այնուամենայնիվ, նրանք չեն կարող առանց այլևայլության հրատարակվել. անհրաժեշտ է մեր շեշտած իմաստով, նախքան տպագրության հանձնելը՝ թեկուզ որպես «հում» նյութ հետաքննին խմբագրության բովով անցկացնել:

2. **Գրառումը**

Ընտրության անխտրականության հետ սերտ կապված է նաև նյութերի գրառումը: Եթե նյութերի ընտրության ուղեցույց թելը հիմնականում սոցիալ-պատմական և գեղարվեստական միասնական արժեքը պիտի լիներ, ապա գրառման պրոցեսի գլխավոր ուղեցույց թելը բանասիրական և բարբառագիտական կողմը պիտի լիներ: Եվ որովհետև հավաքագրողը նկատի չի առել, թե ինչ գիտական նպատակներ պիտի հետապնդի գրառման պրոցեսը, ուստի գործը պրիմիտիվ-տնայնագործական սահմաններից դուրս չի գալիս:

Նախ, բոլոր բարբառների (Վանի, Մոկաց, Կոտայքի, Խոյի, Սալմաստի, Դարալագյազի, Էրզրումի ևն) հնչյուններն արտահայտված են 36 տառանիշով, մինչդեռ հենց a priori կարելի էր ասել, որ հնչյունները 36-ից ավելի են: Սրա հետևանքով բոլոր բարբառների բոլոր այն հնչյունները, որոնք չեն համապատասխանում մեր այբուբենի գրական արտասանությանը, հատուկ պայմանանիշներով չեն արտահայտված. ուրեմն բարբառագիտական արժեք ունեցող հնչյունների բավական զգալի թիվ մնացել է գրառումից դուրս: Մի

[70] ԽՍՀՄ-ի օրոք Հայաստանի տարածքում տարբեր ասացողներից իրականացվել է էպոսի քրդական պատումների գրառումը, որոնք ամփոփվել և հրատարակվել են 1953 թ.՝ լինելով թեմայով քրդալեզու միակ հրատարակությունը ԽՍՀՄ-ում: Ընդհանուր առմամբ, հրատարակվել է 18 պատում՝ գրառված տեղացի և Արևմտյան Հայաստանից վերաբնակված քուրդ, եզդի և հայ ասացողներից («Քյոռօղլի» էպոսի քրդական պատումները 1953):

երկու տեղ միայն ա-ն երկու կետով (ա) գործ է ածվել ա-ի և ը-ի միջին հնչյունը նշելու համար, սակայն այդ էլ հետևողականորեն չի կիրառված և պատահական բնույթ է կրում:

Այսպիսով, գրառման հնչյունանշական կողմը շատ թերի է, և խմբագրությանը դեռ շատ բան է մնում այդ ուղղությամբ անելու: Խմբագրությունը գրառված նյութը գիտական նյութ դարձնելու համար պիտի աշխատի նշանագրերով արտահայտել յուրաքանչյուր բարբառի հնչյունաբանական կողմը: Դեռ ավելին. շատ արժեքավոր կլիներ հրատարակությունը, եթե, գոնե գլխավոր վարիանտների համար, կազմվեր հնչյունաբանական ներածություն:

Ավելի բարվոք դրության մեջ է բառերի և դարձվածքների գրառումը. չնչին բացառությամբ բոլոր պատումների մեջ բառերի և դարձվածքների տեսակետից իշխում է այս կամ այն զուտ բարբառը: Սակայն ամենազուտ բարբառով գրառված պատումների մեջ անգամ հանդիպում ենք բառերի և արտահայտությունների, որ տվյալ բարբառի համար օտարամուտ են: Եվ որովհետև այդ օտարամուտ բառերն ու արտահայտությունները գրական աղբյուրից են եկել, ուստի հավանական է, որ դրանք գրառուի մտածումները լինեն:

Խմբագրությունը պետք է մաքրի պատումներն այդ օտարամուտ տարրերից և վերականգնի բուն բարբառային արտահայտություններն ու դարձվածքները: Բացի այդ, հրատարակությունն ավելի մեծ չափով իր նաև բարբառագիտական նպատակին կծառայեր, եթե խմբագրությունը տար գեթ գլխավոր պատումներից յուրաքանչյուրի համար բարբառագիտական ներածություն ու բառարան:

Օտարամուտ բառերն ու դարձվածքները հաճախ մատնում են օտարամուտ մտքերի և խորհրդածությունների առկայությունը: Խմբագրությունը իմմունենտ և բաղդատական մեթոդների օժանդակությամբ և ճիշտ մեթոդոլոգիական դիրքավորմամբ պետք է զտի բոլոր տեսակի նորամուծությունները և վերականգնի նախնականը, իր դարի համար բնորոշը:

Գրառման տեխնիկայի ոչ-գիտական լինելու հետևանք է նաև այն, որ հաճախ չի հիշատակված.

ա) ե՞րբ է գրի առնված այս կամ այն վարիանտը,

բ) ո՞ր շրջանում (գավառում, նահանգում ևլն) է պատմվում այն,

գ) ումի՞ց է սովորել վերջին պատմողը, ե՞րբ, ո՞րտեղ,

դ) պատմողը պրոֆեսիոնա՞լ պատմող է, ունի՞ սեփական ստեղծագործություններ, կարո՞ղ է իրենից հավելումներ կամ հապավումներ արած լինել, թե՞ ավանդականի հաղորդիչն է լոկ, ևլն:

Խմբագրությունը պետք է աշխատի այս թերություններն էլ վերացնել:

Եզրակացություն և առաջարկներ

«Քյոռօղլի» աշուղական վեպը հրատարակության արժանի է, որովհետև.

ա) Քյոռօղլին հերոս է մեր և մեր հարևան շատ ազգերի (թուրք, պարսիկ, քյուրդ ևլն) դեմոկրատական խավերի: Այս տեսակետից վեպը բովանդակությամբ մերձարևելյան-միջազգային է: Եթե մեզ հաջողվի տալ այդ դեմոկրատական-միջազգային բովանդակությունը նաև հայկական ազգային ձևով, այն էլ որքան կարելի է բազմազան վարիանտներով, ապա դա միայն բանասիրական գործ չէ, որ կատարած կլինենք. դա կլինի մի թանկարժեք ներդրանք մեր և մեր հարևան եղբայրակից ժողովուրդների ընդհանուր կուլտուրայի գանձարանի համար:

բ) Վեպն ունի ոչ միայն արդիական սոցիալ-քաղաքական, այլ նաև սոցիալ-պատմական արժեք, որովհետև տալիս է ֆեոդալական դարաշրջանի սոցիալական կյանքն ու կենցաղը՝ բեկված դեմոկրատական խավերի ստեղծագործ գիտակցության մեջ:

գ) Որոշ վարիանտներ ունեն նաև բանասիրական-բարբառագիտական արժեք, ինչ չափով որ նրանց մեջ պահպանված է այս կամ այն շրջանի լեզվական հարստությունից:

դ) Մի քանի վարիանտներն էլ ունեն ազգագրական-կենցաղագրական արժեք, ինչ չափով որ նրանց մեջ արտահայտություն են գտել այս կամ այն շրջանի կյանքն ու սովորությունները:

ե) Վերջապես, վեպն իր բազմաթիվ վարիանտներով ունի գեղարվեստական մեծ արժեք՝ իր գեղեցիկ բանաստեղծություններով, խոր հուզականությամբ, հետաքրքրական ինտրիգներով, փիլիսոփայական խորհրդածություններով, խորամուխ դիտողություններով, դիպուկ արտահայտվելու վարպետությամբ, կոմպոզիցիոն ամբողջականությամբ ևլն: Ոչ միայն իր թեմատիկայի, այլև իր մշակման և կատարման տեսակետից մեր բանաստեղծները շատ բան կարող են ստանալ «Քյոռօղլուց»[71]:

Ահա վեպի գլխավոր առավելությունները:

Այս առավելությունները, սակայն, պարտավորեցնում են մեզ: Պարտավորեցնում են մեզ.

Նախ, հրատարակելիս չբավականանալ միայն Գ. Թարվերդյանի հավաքածուով: Որովհետև կարևորը ոչ թե այս կամ այն հավաքողն է, այլ վեպն ինքը, ուստի պետք է տալ «Քյոռօղլու» հայերեն պատումների **լիակատար հավաքածուն**: Այդ հավաքածուի մեջ պիտի մտնեն ոչ միայն մինչև հիմա տպագրվածները[72] և Գ. Թարվերդյանի հավաքածները, այլ նաև **նորերը**, որոնց

[71] Միակ հրատարակված Ուրմիայի տարբերակը հիմք ընդունելով՝ բանաստեղծ Սարմենը (Ա. Սարգսյան) 1947 թ. ժողովածուի մեջ հրատարակել է «Քյոռօղլի» անվամբ պոեմ (Սարմեն 1947), իսկ 1974 թ.՝ արդեն համանուն ամբողջական տարբերակը (Սարմեն 1974):

[72] Ըստ ամենայնի, նկատի են առնվել 1897-1910 թթ. ընթացքում տպագրված 4 աշուղական փոխադրությունները: Չի բացառվում, որ նկատի առնված լինեն նաև Ղ. Աղայանի գրական մշակումները: Այլ տպագրված նյութեր մինչև 1937 թ. հայտնի չեն:

ձեռք բերման համար պետք է ամեն միջոցի ձեռնարկել (էքսպեդիցիա, հայտարարություն թերթում՝ ուրիշ հավաքողներն առաջարկեն իրենց նյութերը ևն):

Երկրորդ, բոլոր նյութերը պիտի անպայման խմբագրվեն վերևում մեր նշած իմաստով (նյութերի ընտրություն, վերականգնումն այն հինգ առավելությունների, որոնք վերջին պատմողի կամ գրառուի կողմից աղճատված կարող են լինել ևն):

Երրորդ, անհրաժեշտ է տալ գեթ յուրաքանչյուր գլխավոր վարիանտի բարբառագիտական ներածությունը (հնչյունաբանություն և ձևաբանություն) և բառարանը:

Չորրորդ, ծանոթագրություններն ավելացնել և եղածներն էլ վերանայել:

Հինգերորդ, մի ընդհանուր ընդարձակ ներածության մեջ տալ վեպի գեթ գլխավոր վարիանտների բաղդատական վերլուծությունը, սոցիալ-պատմական և գեղարվեստական երկյակ միության տեսանկյունից:

Վեցերորդ, թուրքերեն երգերը նաև (ընդամենը մի քանի տասնյակ) թարգմանել հայերենի (եթե կարելի է՝ պահպանելով պատումի բարբառը):

Յոթերորդ, ցանկալի է, որ գլխավոր եղանակները ձայնագրվեին և իբրև հավելված հետը հրատարակվեին:

Ութերորդ, տալ առաջաբան (համառոտ տեղեկություններ գործի պրոցեսի, աղբյուրների, աշխատակիցների, տեխնիկական-գիտական կազմի մասին ևն):

Վեպն արժանի է այս լուրջ և ջերմ խնամքին:

(ստորագրություն)
27.1.37 Երևան

Գրականություն

Աբեղյան Մ. 1966, Երկեր, հ. Ա, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 572 էջ:
Աբեղյան Մ. 1971, Երկեր, հ. Ե, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 512 էջ:
Աճառյան Հ. 1977, Հայերեն արմատական բառարան, ԵՊՀ հրատ., Երևան, հ. Գ (Հ-Չ), 635 էջ:
Էմինեան Ազգագրական ժողովածու 1901, հ. Բ, հաւաքեց Ս. Հայկունի, տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, Մոսկուա-Վաղարշապատ, ժ + 447 էջ:
Էմինեան Ազգագրական ժողովածու 1902, հ. Դ, հաւաքեց Ս. Հայկունի, տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, Մոսկուա-Վաղարշապատ, VIII + 462 էջ:
Լենինը հայ ֆոլկլորում 1936, խմբագրություն և ներածություն Կ. Մելիք-Օհանջանյանի, աշխատակցությամբ Գ. Թարվերդյանի և Ա. Ղանալանյանի, Երևան, «Պետհրատ», 174 էջ:
Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 740, ց. 1, գ. 102:
ՀԱԱ, ֆ. 1336, ց. 7, գ. 591:
ՀԱԱ, ֆ. 1336, ց. 7, գ. 1011:
ՀԱԱ, ֆ. 1336, ց. 7, գ. 1012:
Հայ աշուղներ: Անտիպ երգերի ժողովածու 1937, հավաքեց և կազմեց Գ. Թարվերդյանը, առաջաբան և մասնագիտական խմբագրություն Գ. Լևոնյանի, Երևան, ԵՊՀ հրատ., 560 էջ:
Հայ ժողովրդական հեքիաթներ (ՀԺՀ) 1979, հ. 7, Արցախ և Սյունիք, հատորը տպագրության են պատրաստել Ա. Նազինյանը և Մ. Առաքելյանը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 768 էջ:
ՀԺՀ, հ. 9, Ալաշկերտ, Մանազկերտ, Բաղեշ, Ախալքալաք, հատորը պատրաստեց և առաջաբանը գրեց Մ. Մկրտչյանը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1968, 649 էջ:

Հարությունյան Հ. 1958, Մանյակ: Ժողովածու հայ ժողովրդական երգերի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ, «Հայպետհրատ», 104 էջ:
Ղարիբջանյան Ս. 2013, Ակադեմիական գիտության ակունքներում, Գիտության աշխարհում, N 2-3, էջ 24-28:
Ղարիբջանյան Ս. 1985, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի պատմությունից (1935-1936 թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, N10, էջ 3-10:
Ղուկասյան Վ. 1999, Հակոբ Հարությունյան, Երևան, «Վան Արյան», 72 էջ:
Յարութիւնեան Յ. 1910, Կանտի իմացաբանութիւնը, «Արարատ», ԽԳ տարի, թիւ 4, յուլիս, էջ 660-664 - ԽԵ տարի, թիւ 6, յունիս, 2011, էջ 503-513:
Յարութիւնեան Յ. {Յ.Յ.} 1912, Սկրտիչ Պէշիկթաշլեան: Պատմական-քննադատական տեսութիւն: Արարատ» ԽՋ տարի, թիւ Ա, յունուար, էջ 49-53, թիւ Թ, սեպտեմբեր, էջ 847-857:
Ջոջանց տուն կամ Սասմայ ծռեր վէպի երեք փոփոխակ 1910, խմբագրեց և հրատարակեց Ս. Կանայեանց, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 128 էջ:
Ռամազյան Ս. 2018, Վաճառականի կերպարը «Քյոռօղլի» էպոսում և դրա պատմականության հիմքերը, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2 (653), էջ 205-219:
Սահակյան Ս. 1985, Հակոբ Հարությունյան: Դիմանկար-վավերագրություն, Երևան, «Սովետական գրող», 198 էջ:
Սասմայ ծռեր: Սասունցի Դաւիթ ժողովրդական վէպի երկու նոր վարիանտներ (Աբարանի և Մոկաց բարբառներով) 1892, գրի առաւ Գարեգին Սարկաւագ, Թիֆլիս, տպարան Մ. Շարածէի, 151 էջ:
Սասնա ծռեր, ժողովրդական վեպ 1936, հ. Ա, խմբագրեց պրոֆ. դր. Մ. Աբեղյան, աշխատակցությամբ՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, «Պետհրատ», 1128 էջ:
Սասնա ծռեր 1951, ժողովրդական վեպ, հ. Բ, մասն 2-րդ, խմբագրեց ակադ. Մ. Աբեղյան, աշխատակցությամբ՝ պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, «Հայպետհրատ», 1006 էջ:
Սասնա ծռեր 1977, ժողովրդական վեպ, աշխատությամբ՝ Ս. Հարությունյանի, Երևան, «Սովետական գրող», 698 էջ:
Սասնա ծռեր 1979, հ. Գ, պատումների գրառումները և բնագրի պատրաստումը Ս. Հարությունյանի և Ա. Սահակյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 584 էջ:
Սասնա ծռեր 1999, հ. Դ, Նոր պատումների գրառումը և բնագրի պատրաստումը Ս. Հարությունյանի և Ա. Սահակյանի, Երևան, «Գիտություն», 582 էջ:
Սասունցի Դավիթ: Հայկական ժողովրդական էպոս 1939, կազմ.՝ Մ. Աբեղյան, Գ. Աբով, Ա. Ղանալանյան, խմբ.՝ Ի. Օրբելի, Երևան, «Պետհրատ», 385 էջ:
Սասունցի Դավիթ: Նոր պատումներ 1977, հավաքեցին և հրատարակության պատրաստեցին Գ. և Վ. Գրիգորյանները, Երևան, «Սովետական գրող», 267 էջ:
Սասունցի Դավիթ: Հայ ժողովրդական հերոսավեպ 1981, առաջաբանը, բառարանը, ծանոթագրությունները՝ Ս. Հարությունյանի, Երևան, «Լույս», 359 էջ:
Սասունցի Դավիթ (համահավաք բնագիր) 1993, հյուսեց և խմբագրեց Գ. Գրիգորյանը, աշխատակցությամբ Ա. Շահսուվարյանի և Ա. Բուդաղյանի, պատ. խմբագիր՝ Ա.Մ. Նազինյան, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 416 էջ:
Սարմեն 1947, Սրտի ձայնով, Երևան, «Սովետական գրող», 126 էջ:
Սարմեն 1974, Քյոռօղլի (պոեմ), Երևան, «Հայաստան», 95 էջ:
Ստալինը հայ աշուղների երգերում 1939, Երևան, «Հայպետհրատ», 147 էջ:
Ստեփանյան Հ. 2000, Ա. Տիգրանյանի «Քյորօղլի» անավարտ օպերան, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գիտական աշխատություններ, N 3, էջ 195-198:

Քյոռ-Օղլի 1941, ժողովրդական վիպասանություն, հավաքեց և գրի առավ Գ. Թարվերդյան, առաջաբանը՝ Խ. Սամուելյանի, Երևան, «ԱրմՖԱՆ», 236 էջ:
«Քյոռօղլի» էպոսի քրդական պատումները 1953, գրառումը, թարգմ. և ներածությունը՝ Հ. Ջնդիի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 239 էջ:
Давид Сасунский 1939, Армянский народный эпос, ред.՝ И.А. Орбели, Москва-Ленинград, изд. Академии наук СССР, 384 с.
Каррыев Б.А. 1968, Эпические сказания о Кёр-оглы у тюркоязычных народов, Москва, «Наука», 260 с.
Короглу 2000, Баку, изд. АН Азербайджана «Сада», 500 с.
Райхл К. 2008, Тюркский эпос: традиции, формы, поэтическая структура, Восточная литература, РАН, Москва, 383 с.
Chadwick N., Zhirmunsky V. 2010, Oral Epics of Central Asia. New York, Reissue Edition, Cambridge University Press, 376 p.
Chodzko A. 1842, Specimens of the Popular Poetry of Persia, as Found in the Adventures and Improvisations of Kurroglou, the Bandit-Minstrel of Northern Persia, and in the Songs of the People Inhabiting the Stories of the Caspian Sea. London, X + 592 p.
Bayat F. 2009, Türk Destancilik Tarihi Bağlaminda Köroğlu Destani: Türk Dünyasinin Köroğlu Fenomenolojisi, Ötüken Neşriyat Yayinevi, İstanbul, 204 s.
Boratav P.N. 2016, Köroğlu Destani. Bütün Eserleri - 6, Ankara, BilgeSu, 358 s.
Köroğlu (Halk Hikâyesi) 1957, Hazirlayan ve Redakte Eden Riza Mollof. "Narodna Prasveta", Sofya, 112 s.

ՆՈՐԱՀԱՅՏ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ «ՔՅՈՌՕՂԼԻ» ԷՊՈՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սամվել Ռամազյան

Ամփոփում

«Քյոռօղլի» էպոսի հայկական տարբերակների ու պատումների գրառումն սկսվել է դեռևս XX դ. սկզբին, և 1930-ական թթ. փորձեր են արվել հայկական համահավաք բնագիրը կազմելու ուղղությամբ: Մինչև 1941 թ. գրառված են եղել տասնյակ պատումներ արևմտահայ և արևելահայ բարբառներով:

Նորահայտ արխիվային փաստաթղթի համաձայն, գրառված բանահյուսական նյութն ակադեմիական մակարդակով գիտաքննական ուսումնասիրության է ենթարկվել, մասնավորապես ի հայտ են եկել ժամանակի գաղափարախոսական ազդեցությամբ առաջացած և այլ թերություններ, որոնց շտկման ուղղությամբ իր դիտողություններն է նշել ժամանակի գիտական և մշակութային գործիչ Հակոբ Հարությունյանը:

Ընդսմին, քննարկված նյութերը և նորահայտ փաստաթուղթը արժեքավոր տեղեկատվություն են պարունակում նաև ազգագրական-բանահյուսական տեսակետից:

Բանալի բառեր՝ Հ. Հարությունյան, Գ. Թարվերդյան, Խ. Սամուելյան, «Քյոռօղլի» էպոս, Ուրմիայի տարբերակ, «Սասնա ծռեր», Ատրպատական:

НОВОВЫЯВЛЕННЫЙ ДОКУМЕНТ ПО ИЗУЧЕНИЮ АРМЯНСКИХ ВЕРСИЙ ЭПОСА «КЕРОГЛЫ»

Самвел Рамазян

Резюме

Армянские версии и сказания эпоса «Кёроглы» были записаны еще в начале XX в. В 1930-х гг. была предпринята попытка создания армянского сводного текста. До 1941 г. десятки рассказов были записаны на западноармянских и восточноармянских диалектах.

Согласно недавно обнаруженному архивному документу, письменный фольклорный материал был подвергнут научному изучению на академическом уровне, в частности, были выявлены связанные с идеологическим влиянием времени ряд недостатков, по устранению которых высказал критические замечания видный ученый Акоп Арутюнян. Известный деятель науки и культуры того времени Акоп Арутюнян сделал свои замечания с целью их исправления.

В целом обсуждаемые материалы и недавно выявленный документ содержат ценную информацию также с этнографо-фольклорной точки зрения.

Ключевые слова – А. Арутюнян, Г. Тарвердян, Х. Самуэлян, эпос «Кероглы», Урмийская версия, «Сасна црер» («Сасунские удальцы»), Атропатена (Азербайджан).

NEWLY DISCOVERED DOCUMENT ON THE STUDY OF THE ARMENIAN VERSIONS OF THE EPIC "KOROGLU"

Samvel Ramazyan

Abstract

The recording of the Armenian versions and stories of the "Koroglu" epic was started at the beginning of the 20th century and in 1930's attempts were made to create an Armenian assembled version. Until 1941 dozens of stories were written in Western Armenian and Eastern Armenian dialects.

According to a recently discovered archival document, recorded folklore materials were subjected to scientific study at the academic level, in particular, some defects caused by ideological influence of time were identified. A prominent figure in science and culture of that time, Hakob Harutyunyan, made his remarks in order to correct these problems.

At the same time, the discussed materials and the newly discovered document contain valuable information from the ethnographic and folklore point of view.

Key words – H. Harutyunyan, G. Tarverdyan, Kh. Samuelyan, "Koroglu" Epic, Urmia (Urmiye) Version, "Sasna Tsrer" ("Daredevils of Sassoun"), Atropatene (Azerbaijan).

«ԿՈՒԼՏՈՒՐ-ԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՆՈՄԻԱՆ» ԵՎ ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ «ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ»

Մարինե Սարգսյան

Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորչի 15
Էլ. հասցե՝ m.sargsyan.msy@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 10.05.2023, գրախոսվել է 11.05.2023, ընդունվել է տպագրության 11.12.2023
ORCID: 0009-0004-6081-2841
DOI: 10.53548/0320-8117-2023.3-186

Ներածություն

Տերյանագիտությունը մինչև վերջերս ժամանակ առ ժամանակ արծարծել է «Հոգևոր Հայաստան» և «կուլտուր-ազգային ավտոնոմիա»[1] հասկացությունների էությունն ու առնչակցությունը: Երբեմն առհասարակ մերժվել է ընդհանրությունը, երբեմն ընդունվել:

Երկու հասկացություններն ու դրանք ներկայացնող հայեցակարգերը վերաբերում են հայության ազգային հիմնախնդիրները լուծելու ուղիներին և XX դարասկզբին հայ հասարակական-քաղաքական մտքի քննարկումների, սուր բանավեճերի առարկա են եղել: Եվ քանի որ միանշանակ չեն ընկալվել ու գնահատվել առանձին-առանձին, օրինաչափորեն տարակարծությունների են հանգեցրել նաև դրանց համեմատություններն ու համադրումները: Մանավանդ որ երկրորդ դեպքում հիմնականում անտեսվել են «ի՞նչ է նշանակում «կուլտուր-ազգային ավտոնոմիա» կոչվածն ինքնին» և «ո՞րն է «Հոգևոր Հայաստան» հասկացության հետ համեմատության էությունը» առանցքային հարցերը:

Չանցառվել է այն իրողությունը, որ առաջարկվող հայեցակարգերը զուտ հասարակական-քաղաքական տեսական մտքի ոլորտում շրջանառվող *գաղափարներ* չեն, այլ հարազատ ժողովրդի ճակատագիրը շատ *որոշակի* պատմական, օբյեկտիվորեն գերբարդ իրականության, ներքին ու արտաքին բազում մարտահրավերների պայմաններում տնօրինելու-վճռելու *որոշումների* հիմնավորումների տարբերակներ:

Լինելով իրական քաղաքականության գործոններ՝ դրանք աղճատվել են քաղաքական քարոզչությամբ պիտակավորվելու և կամ գաղափարախոսական կաղապարներին համապատասխանեցվելու հետևանքով: Այդպիսով խաթարվել է նաև տվյալ ժամանակաշրջանի պատմական ամբողջ համա-

[1] Ժամանակի տեսաբան-գաղափարաբաններն օգտագործել են այս հասկացության եզրույթի նաև այլ համարժեք տարբերակներ, ինչպես՝ *ազգային կոլկտուրական ավտոնոմիա, ազգային-մշակութային ինքնավարություն, ազգային-մշակութային ինքնօրինություն*:

տեքստը, որն օրգանապես կապված է ներկային: Եվ այդ ներկայում ևս «Հոգևոր Հայաստանը» շարունակում է գործոն լինել և շրջանառվել հայ հասարակական-քաղաքական խոսույթում, մեծապես դարձյալ միակողմանի, բնագրից չբխող ընկալումներով: Ուստի արդիական են այն բազմակողմանիորեն ուսումնասիրելն ու ճշմարիտ էությունը ներկայացնելը:

Սույն հոդվածի նպատակն է վերոնշյալ հարցերի քննությամբ բացահայտել երկու հայեցակարգերի իրական առնչությունները և էական տարբերությունները, մասնավորապես, որ կուլտուր-ազգային ավտոնոմիան իրավաքաղաքական հայեցակարգ է՝ ըստ էության կարճաժամկետ կամ ժամանակավոր, իսկ «Հոգևոր Հայաստանը»՝ պատմափիլիսոփայական հայեցակարգը՝ երկարաժամկետ կամ անժամկետ ազգային-քաղաքական ռազմավարություն[2]:

Աշխատանքում կիրառվել են համեմատական, զուգադրական, վերլուծական մեթոդները:

Տերյանագիտությունը «Հոգևոր Հայաստան»-«կուլտուր-ազգային ավտոնոմիա» առնչությունների մասին

«Հոգևոր Հայաստանի» և «կուլտուր-ազգային ավտոնոմիայի» առնչություններին անդրադարձներում հստակ չեն ո՛չ նշված զուգահեռների, ո՛չ զուգահեռների ժխտման հիմքերը: Այսպես՝ ըստ պատմաբան Սամվել Ալիխանյանի՝ «Հոգևոր Հայաստան» հոդվածում արտահայտվել է Տերյանի մի «*մոլորություն*», այն է՝ *սխալ միտք*, «...թե Հայաստանի հարցը, հայ ազգի հարցը՝ հոգևոր հարց է, այսինքն *զուտ* կուլտուրայի հարց է» (ընդգծ.՝ Մ.Ս.): Եվ Տերյանին վերագրվող այդ միտքը համարելով հակասություն «մինչ այդ, ազգային հարցի վերաբերյալ իր առաջադրած մի շարք ճիշտ, առողջ դրույթներին»՝ եզրակացնում է. «Այսպիսով Տերյանը մի պահ տուրք է տվել կուլտուր-ազգային ավտոնոմիայի բուրժուական գաղափարին...»[3]:

Գրականագետ Վաչե Պարտիզունին ընդունում է Ալիխանյանի այս տեսակետը, բայց և միաժամանակ փորձում է մեղմացնել ըստ էության քաղաքական «մեղադրանքը»՝ մերժելով «Հոգևոր Հայաստան» հոդվածը «իբրև ծրագիր» դիտելը և կամ ներկայացնելը, թե նրա հեղինակը «չի գիտակցել, «որ առանց քաղաքականապես, տնտեսապես ազատ «Նյութական» Հայաստանի չի կարող լինել նաև «Հոգևոր Հայաստան»»[4]:

Մի քանի տարի անց Պարտիզունին մերժում է նաև այն, ինչ ընդունելի էր համարել՝ այս անգամ էլ պնդելով, որ սխալ է Տերյանի «մոտ բունդականության կամ կուլտուր-ազգային ավտոնոմիային տված տուրք տեսնելը»: Իբրև

[2] Սույն բնորոշումների հիմքը Վ. Տերյանի «Հոգևոր Հայաստանի» հանգամանալի քննությունն է (Սարգսյան 2004, 77-98, Սարգսյան 2001, 1-86):

[3] Ալիխանյան 1956, 29:

[4] Տերյան 1961, 479-480:

փաստարկ նշվում է նրա դեմոկրատ լինելը և կռվելը Հայաստանի ապագայի «բուրժուական պատկերացումների դեմ», որոնց շարքին է դասվում կուլտուր-ազգային ավտոնոմիան: Ավելին՝ համաձայն վկայակոչված սովետական առաջնորդի անվիճարկելի սահմանման՝ այն բնորոշվում է «ազգային հարցի բուրժուա-նացիոնալիստական ծրագիր», «որի նպատակն էր կյանքում անցկացնել «ամենանուրբ և ամենաբացարձակ, մինչև վերջ հասցված նացիոնալիզմ (Լենին)»[5]:

Սերգեյ Սարինյանը հարցին հպանցիկ անդրադարձով հնարավոր է համարում ինչ-ինչ առնչություններ. «Ինչպիսի ակունքներ էլ ունենա «հոգևոր հայրենիքի» տերյանական մտապատկերը, ուր միանգամայն հավանական էր նաև «կուլտուր-ազգային ավտոնոմիայի» տեսակետը, այնուամենայնիվ իր բնույթով այն չափազանց հարմար էր ձևած հայ իրականության համար»[6]: Գրականագետը «կուլտուր-ազգային ավտոնոմիան» ակնհայտորեն չի դիտարկում իբրև ազգայնական տեսակետ, իսկ «Հոգետեր Հայաստանի տերյանական տեսությունը», իր կարծիքով, «...ըստ գաղափարական դրվածքի, ուղղված էր ազգայնական կուսակցությունների՝ Հայ հեղափոխական դաշնակցության եւ ռամկավար-ազատականների ազգային գաղափարաբանության դեմ, որի նպատակը հանգում է «նյութական Հայաստանի», այսինքն հայոց անկախ պետականության իդեալին»[7]:

Սուրեն Աղաբաբյանն ընդհանրապես մերժում է որևէ կապ քննության առարկա երկու հասկացությունների միջև և հիմնավորապես սխալ է համարում Վ. Տերյանի «հավատամքի» համադրումը «կուլտուր-ազգային ավտոնոմիային», որը բնորոշում է որպես «ազգային մեկուսացվածության դոկտրինա»: Հիմնավորումն այն է, որ «Վ. Տերյանը ոչ միայն չէր բաժանում «ինքնավարության» դրույթը, այլև ազգային կուլտուրայի ապագան պատկերացնում էր ազատագրված Հայաստանի տերիտորիայի վրա»[8]:

«Հոգևոր Հայաստանի» և «կուլտուր-ազգային ավտոնոմիայի» առնչությունների հարցի վերաբերյալ տերյանագետների տեսակետներն ու դիտարկումները թույլ են տալիս արձանագրել դրանցում առկա տարակարծությունները լոկ, բայց ոչ դրանց հիմքերը, քանի որ «կուլտուր-ազգային ավտո-

[5] Պարտիզունի 1968, 276-277:

[6] Սարինյան 1979, 455:

[7] Սարինյան 1998, 83: Մեր անհամաձայնությունն այն պնդմանը, թե «Հոգևոր Հայաստանը» վկայում է, որ Տերյանը դեմ էր հայոց անկախ պետականությանը, հանգամանորեն ներկայացվել է վերևում հիշատակված ուսումնասիրություններում: Բայց կա ևս մեկ հարց. չէ՞ որ ՀՅԴ-ի և ՌԱԿ-ի ձևակերպած նպատակը ազգային անկախ պետականությունը չէր, այն իդեալ էր միայն անորոշ ապագայի համար: Իսկ ի՞նչ դիրքորոշում են ունեցել նրանք կուլտուր-ազգային ավտոնոմիայի վերաբերյալ. ըստ դրա անհաշտ հակառակորդ Ստ. Շահումյանի՝ կողմնակից են եղել (Շահումյան 1976, 373), ժամանակակից ուսումնասիրողի պարզաբանմամբ էլ, «<...> ՀՅԴ տեսաբաններ Գ. Խաժակը, Մ. Վարանդյանը և այլք <...> ազգային-մշակութային ավտոնոմիան դիտել են որպես դեպի ազգային-տերիտորիալ ինքնօրինություն և ֆեդերատիվ պետության տանող հանգրվան» (Զաքարյան 2022, 5):

[8] Աղաբաբյան 1986, 125-126:

նոմիան» ինքնին մնում է ըստ էության անորոշ՝ որոշակի միայն մերժելիությամբ: Հետևաբար հստակ չէ նաև առանցքային «ո՞րն է «Հոգևոր Հայաստան» հասկացության հետ համեմատության էությունը» հարցի պատասխանը:

«Կուլտուր-ազգային ավտոնոմիան» և XX դարասկզբի հայ քաղաքական միտքը

Փորձենք նախ պարզել՝ ինչ է «կուլտուր-ազգային ավտոնոմիան» ընդհանրապես և մասնավորապես, հայ հասարակական-քաղաքական մտքի ընկալմամբ ու մեկնաբանությամբ, ապա նաև՝ դրա վերաբերյալ հայ քաղաքական կուսակցությունների դիրքորոշումները XX դարասկզբին:

«Կուլտուր-ազգային ավտոնոմիան», որի հայերեն առավել ճշգրիտ համարժեքը «ազգային-մշակութային ինքնավարությունն» է, բազմազգ կամ էթնիկ առումով ժողովրդագրական բարդ կառուցվածք ունեցող պետություններում ազգային հարցը լուծելու իրավաքաղաքական միջոց է, մեկ պետության շրջանակում ազգային փոքրամասնությունների, միջէթնիկական, ազգամիջյան հարաբերությունների կառավարման վարչաիրավական սկզբունք և գործիք:

Ազգային-մշակութային ինքնավարության սկզբունքը քաղաքական գաղափարաբանության քննարկումների առարկա է դարձել XIX դարի վերջից, երբ ավստրո-մարքսիստները, մասնավորապես Օտտո Բաուերը և Կառլ Ռեններն այն առաջարկել են որպես ավստրոհունգարական բազմազգ կայսրությունում ազգային հարցը լուծելու և հպատակ ազգերի իրավունքների օրինական երաշխիքներ ապահովելու իրավական միջոց:

Կ. Ռեննների ազգային-մշակութային ինքնավարության սկզբունքը հիմնված է պետության ու ազգի՝ հեղինակի սահմանման և ազգային պետության ժամանակակից կառուցվածքում «տարածքային սկզբունքի» իր քննադատության վրա[9]:

«Պետություն և ազգ» (Staat und Nation, 1899) աշխատության մեջ սոցիալ-դեմոկրատ Ռեննները գրում է. «Պետությունը հասարակության տարածքային իշխանություն է, մարդկանց փաստացի միավորում»[10]՝ մատնացույց անելով ժամանակակից պետության և նրանում ամփոփված հասարակության ոչ նույնականությունը, դրանց ձևավորման ու գոյության սկզբունքների առանցքային տարբերությունը: Առաջինի պարագայում ամրագրվում է տարածքային սկզբունքը, երկրորդում՝ անհատականությանը[11]: Դրա հետևանք են փաստորեն հասարակությունը կազմող առանձին ազգերի կամ էթնիկ խմբերի և պետության, ինչպես նաև ազգամիջյան կամ միջէթնիկական հակասությունները, ավելի ընդհանուր՝ ազգային հարցը: Այն լուծելու համար առաջարկվում է ազգերը դիտարկել ոչ թե որպես տարածքային, այլ «մշակութային և

[9] Barbieri 2013, 8.
[10] Barbieri 2013, 8.
[11] Barbieri 2013, 8.

կրոնական համայնքներ, որոնց մեջ մարդիկ մտնում են անհատապես, ազատ ընտրությամբ[12], և դրանց օժտել իրենց ազգային-մշակութային հարցերը տնօրինելու որոշակի ինքնուրույնության, ասել է՝ ինքնավարության իրավունքով: Դա ենթադրում էր ազգ-համայնքներին տալ «իրավաբանական անձի» կարգավիճակ, ճանաչել որպես իրավունքների ու պարտականությունների սուբյեկտներ՝ նպատակ ունենալով ամբողջապես օրինականացնել, այսինքն՝ իրավական առումով կարգավորել դրանց և պետության միջև հարաբերությունները[13]:

Այսպիսով, ազգային-մշակութային ինքնավարությունները պետք է դառնային գործիք ոչ տիտղոսակիր ազգային խմբերի համար՝ զարգացնելու իրենց ազգային մշակույթը, լեզուն[14], ավանդույթները, ապահովելու իրավունքների արդյունավետ պաշտպանությունն ու գոյատևման երաշխիքը՝ առանց պետության նկատմամբ «քաղաքական վերահսկողության փորձի»[15] և բավարարվելով ներկայացուցչությամբ՝ «ազգային խմբի ֆունկցիոնալ ինտեգրման միջոցով պետական ապարատ»[16]:

Ընդսմին, ազգերին նույն իրավունքներով օժտելը և նրանց համարժեք քաղաքական ներկայացվածության հնարավորություն ընձեռելը ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական մակարդակում բոլոր կուսակցություններին թույլ կտար ունենալ «պետության վրա ազդեցության նվազագույն մակարդակ»[17]: Եվ կուսակցություններն այլևս չէին լինի ազգային, այլ միայն քաղաքական:

Անհատականության սկզբունքի ճիշտ կիրարկումը պետք է առաջացներ նոր ու ավելի մեծ քաղաքական և վարչական պատասխանատվություն ազգերի համար: Բայց ամեն դեպքում կենտրոնական իշխանությունը պահպանելու էր գերակայությունը. Ռեննները նրան վերապահում էր երեք «բացառիկ

---

[12] Ավստրո-մարքսիստական հայեցակարգի համաձայն՝ անհատի պատկանելությունը որոշակի ազգային-մշակութային միավորին որոշվում է դրա անդամ դառնալու ցանկության մասին մարդու անձնական հայտարարությամբ, որ վավերացվում է գրանցման կամ մարդահամարի միջոցով: Այսպես են ստեղծվում ազգային-մշակութային ինքնավարությունների ինստիտուցիոնալացման հիմքերը:

[13] Lagi 2015, 120.

[14] Լեզվի հարցն ազգային-մշակութային ինքնավարության համատեքստում դիտարկվում է որպես ազգային հարցի առանցքային բաղադրիչ: Ընդգծվում է, որ իրավունքների հավասարությունը, բոլոր ազգերի պետական կյանքին որպես «իրավաբանական անձինք» մասնակցությունը, պետության և ազգերի միջև լիազորությունների յայն ու հստակ բաժանումը խաղաղ ճանապարհով կյուծեն նույնիսկ «լեզվական դարավոր հարցը» (Lagi 2015, 122): Ազգի նկատմամբ այլ ազգի քաղաքական ճնշումների («Fremdherrschaft») ավարտը կհանգեցնի լեզվական ճնշումների ավարտին: Իսկ ազգերի միջև հարաբերությունների «ժողովրդավարացումը», որ ենթադրում է նաև կրթական ոլորտում շատ լայն ինքնավարության ճանաչում, յուրաքանչյուր ազգի կտրվեն «համալսարաններ ստեղծելու», իր դպրոցները զարգացնելու և բարենորոգելու, սեփական «լեզուն մշակելու» իշխանությունն ու «ռեսուրսները» (Lagi 2015, 122-123):

[15] Barbieri 2013, 10.

[16] Barbieri 2013, 8.

[17] Lagi 2015, 121-122.

լիազորություններ»՝ «տարածքային ինքնիշխանություն», «ֆինանսներ» և «անձանց տնօրինելու իրավունք»[18]:

Միով բանիվ՝ Ռենների ներկայացրած ազգային-մշակութային ինքնավարության մոդելը պետության կառավարման երկաստիճան համակարգ է, որը զգալի ոչ տարածքային ինքնավարություն է փոխանցում ազգային համայնքներին՝ պահպանելով բազմազգ պետության միասնական կառուցվածքն ու վարչարարությունը:

Ազգային-մշակութային ինքնավարության սկզբունքը XX դարասկզբին ներմուծվում է նաև Ռուսական կայսրություն: Ազգային փոքրամասնությունների վերաբերյալ քաղաքական քննարկումներում այն առաջին անգամ հիշատակել է Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության (ՌՍԴԲԿ) մաս կազմող հրեական ԲՈՒՆԴ-ը (Լիտվայի, Լեհաստանի և Ռուսաստանի համընդհանուր հրեական բանվորական միություն) կուսակցության 4-րդ համագումարում (1901 թ.)՝ քաղաքական առճակատում առթելով հեղափոխական շարժման մեջ: Բանն այն է, որ ՌՍԴԲԿ բոլշևիկյան թևը՝ Լենինի գլխավորությամբ, ազգային-մշակութային ինքնավարությունը համարում էր օպորտունիստական ագգայնական տեսություն:

Ազգային-մշակութային ինքնավարությունը բուռն քննարկումների առարկա դարձավ նաև Ռուսական կայսրության քաղաքական ասպարեզում գործող և հայոց ազգային հարցի լուծումներ փնտրող հայ հասարակական-քաղաքական մտքի ու հայ քաղաքական կազմակերպությունների գաղափարաբանությունների տիրույթներում:

Ըստ հայ իրականության մեջ ազգային-կուլտուրական ավտոնոմիայի անվերապահ քննադատ Ստ. Շահումյանի՝ այն, բացի հայ բոլշևիկներից, ընդունելի էր ժամանակի հայ հասարակական-քաղաքական մտքի բոլոր հոսանքների համար. «Մեզանում չկա մի կուսակցություն՝ կղերական թե՛ բուրժուական, «խավարամիտ» թե՛ «ազատամիտ», որ կողմնակից չլինի ազգային-կուլտուրական ավտոնոմիային: Թե՛ «տերտերական «Հովիտը», թե՛ հայ վաճառականների օրգան «Մշակը» և թե՛ հայ մանրբուրժուական ու քաղքենիական ինտելիգենցիայի բերան «Հորիզոնը» - բոլորն էլ հայոց ազգի փրկությունը տեսնում են այդ ավտոնոմիայի մեջ»[19]:

Տարակարծության հիմքն աշխարհայացքային էր. Շահումյանի ու իր գաղափարակիցների պատկերացումներով առաջնայինը հասարակության ու մարդկության դասակարգային կառուցվածքն է, անձի պատկանելությունը որևէ դասակարգի՝ ի հակադրություն քննադատվող այն ընկալման, որ հասարակությունն ու մարդկությունը կազմված են ազգային խմբերից: Հետևաբար «*մարդկության տնտեսական զարգացման և առաջադիմության շահերն*» ու

[18] Lagi 2015, 122.
[19] Շահումյան 1976, 373:

դրանց ներքին, անբաժանելի կապով կապված «բանվոր *դասակարգի միջազգային ազատագրական շահերը*»[20] իրենց միակ ընդհանուր և պարտադիր սկզբունքը համարող մարքսիստների տեսանկյունից «ամեն ազգություն պետք է պետություն լինի, կամ թե՝ ամեն ազգություն «ազգովին» պիտի վճռե իր ազգային գործերը»[21], «միշտ, իբրև ամբողջություն (կամ «ազգովին», - ինչպես ասում է Դ.Ա.-ն)[22] պետք է տնօրինե իր հասարակական կյանքը»[23] սկզբունքն անընդունելի է համարվում և որակվում է նացիոնալիզմ, «վնասակար ու հետադիմական պահանջ»[24]: Եվ դա այն պատճառով, որ նացիոնալիզմ է անվանվում հիմնարար «ազգ» հասկացության սահմանումը «<...> թե ազգությունը մի անհատականություն է, որը հարկավոր է միշտ և ամեն կերպ, ինչ գնով էլ լինի, պահպանել և զարգացնել, որ ազգությունը հասարակական-քաղաքական կենակցության *բնական ու հավիտենական* ձևն է <...>»[25]:

«Հոգևոր Հայաստան» և «կուլտուր-ազգային ավտոնոմիա»

Արդ, ուրեմն՝ ո՞րն է բուրժուական նացիոնալիզմ, հրեական «բունդականության տուրք» նկատվող «կուլտուր-ազգային ավտոնոմիայի» հետ «Հոգևոր Հայաստանի» համեմատության էությունը: Համեմատության կամ համադրության հիմքը, անկասկած, նախևառաջ «ազգ» հասկացության վերոբերյալ սահմանման շուրջ համախոհությունն է, ապա՝ երկուսում էլ «ազգ» հասկացության մեջ «մշակույթ» բաղադրիչի առանձնակի կարևորումը:

Եվ քանի որ «կուլտուր-ազգային ավտոնոմիայի» հիմնական գաղափարախոսը և ջատագովը հայ իրականության մեջ համարվել և համարվում է Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը (ՍԴԲՀԿ)[26], ուստի անդրադառնանք վերջինիս գաղափարաբանությանը:

Մինչ այդ, սակայն, նշենք, որ վերոնշյալ համադրության համար կարող են նաև «հիմք» ծառայած լինել Տերյանի քաղաքական կենսագրության և մասնավորապես այդ կազմակերպության անդամ, ուրեմն և գաղափարակիր եղած լինելու չբարձրաձայնված փաստը[27]: Կազմակերպությունը հիմնադրվել

---

[20] Շահումյան 1914, 9:

[21] Շահումյան 1914, 9:

[22] Դ.Ա.-ն Դավիթ Անանունն է, որի «Ազգային հարցը և դեմոկրատինան» հոդվածի (Նոր հոսանք, 1913, N 1, 142-154, N 2, 358-372) պատասխանն է Շահումյանի (*Այաքս* կեղծանունով) «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին» գրքույկը (Թիֆլիս, 1914):

[23] Շահումյան 1914, 6:

[24] Շահումյան 1914, 3:

[25] Շահումյան 1914, 6:

[26] Շրջանառվում է կազմակերպության անվանման մեկ այլ տարբերակ ևս՝ Հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպություն (ՀՍԴԲԿ):

[27] Տերյանը Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության անդամ է եղել 1907 թ.-ից: Այդ փաստը հաստատել և նրա «սպեցիֆիկյան» ընդհանուր բնութագիրը տվել է ՍԴԲՀԿ առանցքային դեմքերից Դ. Անանունը, «Վահան Տէրեանը 1907 թուականին անյայտ ուանող էր Բագւում: Մօսկւայից Ալ. Մեասնիկեանի (Ալ. Մարտունի) հրաւէրով եկել էր այդ բանւորաշատ քաղաքը և ստանձնել

է[28] 1903 թ. հոկտեմբերին Բաքվում[29]: Ի սկզբանե ՍԴԲՀԿ-ին ուղեկցում էին *սպեցիֆիկներ* ու *սպեցիֆիկյան* գաղափարախոսություն հոլովումները:

Ի տարբերություն Հայ հեղափոխական դաշնակցության, որի գաղափարախոսները կողմնակից էին ազգային ինքնավարության երկու ձևերին էլ՝ և՛ տարածքայինին, և՛ մշակութայինին, սպեցիֆիկները պաշտպանում էին ազգային-մշակութային ինքնավարության գաղափարը: Նրանք հայության համար ազգային հարցի լուծման տարբերակներից[30] իրատեսական էին համարում միայն դա: Ազգային հարցը կազմակերպության ծրագրում կարևորներից էր: Որպես այդպիսին՝ այն դարձավ ազգերի ինքնորոշման ծրագրային պահանջով հանդես եկող բոլշևիկ-լենինյանների հետ գաղափարական սուր բախման պատճառ: Թեև սպեցիֆիկներն ազգային-մշակութային ինքնավարության գաղափարն ըստ էության պաշտպանել են 1917 թ., բայց կուսակցության առանձին ներկայացուցիչներ ազգային-մշակութային ինքնավարության կողմնակից են եղել, տեսությանն անդրադարձել են ավելի վաղ: Դա մասնավորապես վերաբերում է հիմնական գաղափարախոսներ Բ. Իշխանյանին և Դ. Անանունին:

Կուսակցության հիմնադիրներից եվրոպական հիմնավոր կրթություն ունեցող, հայ մտավորականության լայն շրջաններում մեծ հեղինակություն վայելող Բախշի Իշխանյանը հեղինակ է բազմաթիվ, այդ թվում՝ ազգային

մարքսիստ պրոպագանդիստի պաշտօն: Այդ ժամանակ նա Սոց. Դեմ. Բան. Հայ Կազմակերպութեան անդամ էր, ուժեղ չէր մարքսիզմի մէջ <...> կուսակցական եռանդ քիչ էր դրսևորում. <..,> Քնարը ազատագրեց Տէրեանին: Ազատագրեց մարքսիզմից և նեղ կուսակցականութիւնից: (Անանուն 1920, 521): Ստույգ հայտնի չէ, սակայն, որքան ժամանակ է անդամակցել՝ «մինչև, ըստ երևույթին 1915 թվականը <..>.» (Էմին-Տերյան 2014, 70), հնարավոր է նաև մինչև 1914 թ., այսինքն՝ «Հոգևոր Հայաստանից» առաջ: Վ. Տերյանի անունը հիշատակվել է ՍԴԲՀԿ-ի՝ ՀՅԴ-ից անջատված հիմնադիրների շարքում (Հակոբյան Ա. 1997, 35): Մինչդեռ, ըստ անձնական նամակների (Ս. Օտարյանին հասցեագրված 1905 թ. նոյեմբերի 9-ի, 1906 թ. հունվարի 2-ի, հունվարի 9-ի (կրճատված հատված), 1907 թ. մայիսի 27-ի), նա 1905 թ. վերջից մինչև 1906 թ. ավարտը Հայ հեղափոխական դաշնակցության անդամ էր (Տերյան 1975, 198-201, 225-226 և ԳԱՌ, ՎՏՖ, N 313): Հարկ է այդուհանդերձ նկատել, որ էական գիտական ճշգրտումների է դեռևս կարոտ ոչ միայն Տերյանի սպեցիֆիկյան գործունեությունը, այլև նրա կուսակցական ու քաղաքական կենսագրությունն ընդհանրապես:

[28] Կազմակերպության հիմնադրման, քաղաքական ուղղության, ազդեցության, կազմավորման մասին նշվում է, որ հիմնադրել է հիմնականում ՀՅԴ-ից, բայց և ՍԴՀԿ-ից հեռացած երիտասարդների, ռուսահայ մտավորականների մի խումբ (Հակոբյան 2009, 96, Հակոբյան 1997, 35-36), և որ «<...> սոցիալ-դեմոկրատական, մարքսիստական ուղղության բանվորական ոչ այնքան ազդեցիկ կազմակերպություն էր: Իրենց փոքրաթվության պատճառով սրանք նույնիսկ չհամարձակվեցին իրենց անվանել կուսակցություն», և «...կազմակերպության հիմնադիրները գտնում էին, որ ՍԴԲՀԿ պետք է կազմավորվի ազգային սկզբունքով և ՌՍԴԲԿ հետ կապվի ֆեդերատիվ (դաշնային) հիմունքներով» (Հակոբյան 1997, 36, 38):

[29] Կազմակերպության օրգան «Ձայն» շաբաթաթերթն արձանագրում է, որ 1903 թ. հոկտեմբերին հրատարակված մանիֆեստի «...էական միտքն այս էր. «Կազմակերպել ու դաստիարակել հայ պրոլետարիատը և ղեկավարել նրա կռիվը՝ այս է Ս.-Դ.Բ. Հայ. Կազմ. գործը» (Ձայն 1906, N 4, հոկտեմբերի 22, 55-56):

[30] Մյուս տարբերակներն էին՝ անկախություն, ֆեդերացիա (դաշնություն) և ազգային-տերիտորիալ ավտոնոմիա:

հարցի վերաբերյալ «Տաճկահայ խնդիրը եւ միջազգային դիպլոմատիան» (1906), «Թիւրքիայի ապագան (Քննական էտիւդ)» (1907), «Ազգային պրօգրէսը եւ դասակարգային շահերը» (1908) աշխատությունների: Ընդհանուր նպատակ է ազդարարվում քաղաքական բարեփոխումների միջոցով հպատակ բնիկ ազգերի մշակութային, տնտեսական և քաղաքական իրավունքների պաշտպանությունը գաղութային ճնշումից ու շահագործումից. «<...> Պրոլետարիատի կուսակցությունը – սոցիալ դեմոկրատիան ձգտում է *ազգային-քաղաքական ռեֆորմներով* ընդարձակել հպատակ ազգերի, մանր ժողովուրդների *քաղաքացիական իրավունքները*, տալ նրանց ազգային-կուլտուրական զարգացման ազատ, ինքնուրույն պայմաններ, պահանջել պետություններից, որ սրանք եվրոպական իրավակարգի շրջանակի մեջ առնեն գաղութային ճնշված բնիկների կյանքը, վերացնեն գաղութային վարչությունների քստմնելի բռնությունները և առևտրական գեշեֆտների անորակելի, վաշխառուական շահագործությունը ընդդեմ գաղութային բնիկ ժողովուրդների»[31]:

Իսկ գերագույն պարտականություն հռչակվում է հայրենիքի պաշտպանությունն ու անկախությունը՝ անհրաժեշտության դեպքում անգամ դասակարգային թշնամու՝ ազգային բուրժուազիայի հետ միավորվելով. «Եթե կա մի արտաքին բիրտ ու բարբարոս ուժ, որ սպառնում է հիմնահատակ անելու մի երկրի դարավոր կուլտուրան և քաղաքացիական կարգերը, խոչընդոտելու և ոչնչացնելու դասակարգային կռիվը, սոցիալիստական աշխատանքի բոլոր ուղիներն ու արդյունքները, ապա կասկածից դուրս է միանգամայն, որ կազմակերպված ու գիտակից պրոլետարիատը ունի դեմոկրատական և սոցիալիստական գերագույն պարտականություն պաշտպանելու իր հայրենիքի անկախությունը: Բուրժուազիան դեռ էլ ավելի է շահագրգռված դրա մեջ <....> Դա վտանգի այն ահավոր մոմենտն է, երբ այսպես ասած՝ հայրենիքի բոլոր «զավակները», ամբողջ ազգը in corpore շահագրգռված են իրենց հայրենիքի պաշտպանությամբ և անկախ դրությամբ»[32]:

Եվ վերջապես, Իշխանյանի քաղաքագիտական իրատեսական ճշգրիտ վերլուծությամբ առավել որոշակի երևակվող թերևս բուն նպատակը Ռուսաստանի գաղութային ներքին քաղաքականությունից արևելահայության և կայսերապաշտական արտաքին քաղաքականությունից արևմտահայության պաշտպանությունն է. «Ռուսաստանը չունի բացարձակապես ոչ մի շահ ու ինտերես – եթե չասենք վնաս ունի–տեսնել ինքնավար Հայաստան Փոքր Ասիայում, կամ գեթ բարվոք վիճակ ունեցող հայություն նույն միջավայրում: Չէ՞ որ միջազգային դիվանագիտության գրավականներով երաշխավորված *ինքնավար Հայաստանը* կդառնա ամենամեծ արգելառիթ խոչընդոտը՝ ընդմիշտ մի անանցանելի պատնեշ փորելու Ռուսաստանի գաղութային քաղաքակա-

[31] Իշխանյան 1908, 270:
[32] Իշխանյան 1908, 241-242:

նության տենդենցների առաջ մերձավոր արևելքում: Չէ՞ որ ազատ ու բարեկեցիկ Տաճկա-Հայաստանը կդառնա որոշ *գաղթավայր-ապաստան,* արդյունաբերական շահագործությունից և տնտեսական ուժեղացման մի *գրավիչ աղբյուր* այն հայության (կովկասահայերի) տիրապետող տարրերի համար, որին՝ մյուս ռուսահպատակ ազգերի հետ միասին, ձգտում է ճզմել ու կազմալուծել *ռուսացման համասլավոնականության* ներքին քաղաքականությունը»[33]:

Այսպիսով, կուսակցության հիմնադրումը համընկնում է Ռուսական առաջին՝ 1905-ի հեղափոխությանը, որն էապես ծայր է առել 1903-ի հայկական եկեղեցիների ունեցվածքի բռնագրավման իրողությամբ, այն է՝ անձամբ ռուսաց ցարի առանձնակի հրամանագրով: Ըստ այդմ՝ այդ ժամանակից ընդունված կարգով հայության «կուլտուր-ազգային ավտոնոմիա» պահանջն ու գաղափարախոսությունը պետք է որ համարվեին նացիոնալիզմ, իսկ ցարական բռնատիրական շովինիզմի վերաբերյալ անկարելի է խոսք լիներ:

Հեղափոխության պարտությանը հաջորդած մղձավանջային հետադիմության պայմաններում, բնականաբար, գաղափարախոսությունը պահանջի հետ ապրում է հարկադիր նահանջ[34]: Եվ վերստին հրապարակ է նետվում 1913-ին, երբ պատերազմի նախապատրաստվող Ռուսիան կրկին «*խոստումնալի*» հաշվի է նստում հայության հետ: Գաղափարախոսությունը վերակոչվում-բորբոքվում է համալրողների նոր անձնակազմով, որոնցից էր Դավիթ Անանունը (Տեր-Դանիելյան)՝ օժտված քաղաքագետ-հրապարակախոսի վարակիչ ձիրքով, տրամաբանական խոսքի կրքոտ ազդեցությամբ: Եվ ահա «Նոր հոսանք» ամսագրի 1913-ի առաջին և երկրորդ համարներում տպագրվում է նրա «Ազգային հարցը և դեմոկրատիան» հոդվածը՝ վերը շարադրված հարցերից առաջինի պատասխանով, որը փորձենք համեմատել նույն միջոցին «Մշակում» հրապարակված Տերյանի «Հոգևոր Հայաստան» հոդվածի հիմնական հարցադրումների, քննական մեկնությունների ու եզրակացությունների հետ, որոնք «Հոգևոր Հայաստան» պատմափիլիսոփայական հայեցակարգի և ազգային ռազմավարության առանցքն են:

Դ. Անանունը հիմնավորում է, որ հայության ազգային շահը պահանջում է հանդես գալ ազգային-մշակութային ինքնավարության կարգախոսով[35] և

---

[33] Իշխանյան 1906, 45-46:

[34] Մյուս ընդդիմադիր կուսակցությունների ու կազմակերպությունների նման, «սպեցիֆիկները» ևս ընդհատակ են անցնում: Դաժան գրաքննության պայմաններում հիմնում են «Նոր կյանք» երկշաբաթաթերթը, որը կարճ կյանք է ունենում (1911-1912 թթ.), լույս է տեսնում միայն մի քանի համար: (Հակոբյան 1997, 45): «<...> 1911 թ. վերջերին ՍԴՀԲԿ-ն քայքայվում է: Նրա անդամների մի մասը հարում է բոլշևիկներին ու մենշևիկներին, բայց պահպանվում է մի կորիզ, որի շուրջը, անկախ իրենց կուսակցական պատկանելությունից, համախմբվում և 1911-1914 թթ. ակտիվ գիտամշակութային գործունեություն են ծավալում ՍԴՀԲԿ-ի նախկին անդամները: Այդ ժամանակահատվածում նրանք հանդես են գալիս միայն որպես հայ սոցիալ-դեմոկրատների, հրապարակախոսների, մտավորականների խումբ» (Հակոբյան 2017, 105):

[35] Նոր հոսանք 1913, N 2, 358-372:

մերժել ինքնորոշման իրավունքի պահանջը, ավելի ճիշտ՝ այդ իրավունքի իրացման որոշակի տարբերակը՝ անջատումը Ռուսաստանից[36]: Նշենք, որ «հայ» և «հայություն» բառերն Անանունի հոդվածում վերաբերում են Ռուսաստանի հայերին, ըստ այդմ էլ ազգային ավտոնոմիան նույնպես, և... քաղենք. «Առանց վարանման մենք կարող ենք ասել, - գրում է հրապարակախոսը, - որ հայության և ոչ մի հատվածը Ռուսաստանում չի մտածում անկախության մասին»[37]: Եվ դա ոչ թե այն պատճառով, որ չեն ցանկանում, այլ որովհետև չեն կարող՝ նախևառաջ տարածքային ցրվածության և ժողովրդագրական իրենց համար անբարենպաստ իրավիճակի պատճառով: Նույն պատճառով անկարելի է համարվում հայկական դաշնային միավորը. «Հայերի համար ազգային հարցի այսպիսի լուծումը հղի է նորանոր անակնկալներով: Վերջապես, հայերին չի հաջողվում համախմբել գոնե ազգի խոշոր մեծամասնությունը: Անդրկովկասում հայերի քանակը հասնում է 1.089 հազարի: Դուրս գալով այդ թվից ավտոնոմիայի 600 հազարը[38] կունենանք 489 հազար կամ հայերի 45%: Հայերի համար ազգային հարցի վերը բերած լուծումը խիստ անկատար է, քանի որ նրանց 45% չի մասնակցում մեծամասնության գործերին»[39]: Եվ թվարկում է Ռուսական կայսրության այն հայահոծ տարածքները, որոնց ներառումը «հայկական աշխարհամասում», իր կարծիքով, պետք է ի սկզբանե բացառել՝ «1. Բագուի նահանգ, 2. Բաթումի շրջան, 3. Դաղստանի, 4. Նախու և Արեշ գավ. (Գանձ. նաև), 5. Զաքաթալայի շրջանի, 6. Քութայիսի նահանգի, Թիֆլիսի, Գորիի, Դուշեթի, Սղնախի, Թելավի, Թիոնեթի գավառների, 9. Չերնոմորյան նահանգի»[40]:

Ողբերգորեն նշանակալի խոսուն պատկեր: Պատկերը ավելի քան մեկ դար (1803-1913 թթ.) ձգվող ընթացքով հայոց հողի վրա Ռուսաստանի մղած պատերազմների հետևանքով տեղահանությամբ և կապիտալի «նախնական» կուտակմամբ անասելի չափեր ընդունած հայության ցրվածության Ռուսական

---

[36] «Մտքի տկարությունը ազգային հարցի լուծման խնդրում» հոդվածում (1915 թ. «Մշակը» հրապարակավ մերժել էր տպագրել այն (Ի դեպ, այդ առիթով խմբագրության «Բագու, Դ. Անանունին» հայտարարությանը նախորդում է «Պետրոգրադ, Վ.S.-ին»-ը, որով մերժվում է Վահան Տերյանի «Ինքնակոչ փրկիչներ» հոդվածի «հետագա մասերի» լույսընծայումը (Մշակ 1915, N 232, հոկտեմբերի 2), անիրագործելի ու երկրի առարկայական պայմաններին անհամապատասխան որակելով. կանխատեսում-նախազգուշացնում է. «Պատկերացրէք ձեզ մի այնպիսի օր, երբ Անդրկովկասի ազգերից մէկն ու մէկը՝ հայ, վրացի կամ թուրք, կամենում է՝ հակառակ միւս ազգերին՝ ինքնորոշվել, այսինքն՝ անջատուել և սեփական պետական մարմին ստեղծել: Մի՞թէ սա հնարաւոր է կամ մի՞թէ նման որևէ ձգտում դժոխքի չի վերածի մեր ծայրագաւառը» (Գործ 1917, N 3, Բ մաս, 15): «Տվյալ փուլում Հայաստանի քաղաքական անկախությունը ձեռնտու չէին համարում և նրա տեսակետը պաշտպանում էին գաղափարակից Բ. Իշխանյանը և ուրիշներ» (Համրարյան 1990, 463-464):

[37] Նոր հոսանք 1913, N 2, 358:

[38] Սա Երևանի նահանգի երեք գավառների (Էջմիածնի, Ալեքսանդրապոլի և Նոր-Բայազետի), Թիֆլիսի՝ երկու (Ախալքալաքի և Բորչալուի), Կարսի շրջանից-Կարսի ու Կաղզվանի գավառների ու Գանձակի նահանգի երկու գավառների (Շուշու և Զանգեզուրի) հայության՝ հեղինակի բերած թիվն է:

[39] Նոր հոսանք 1913, N 2, 361:

[40] Նոր հոսանք 1913, N 2, 364:

իմպերիայի անծայրածիր տարածքում: Տրամաբանական օբյեկտիվ եզրակացությունը՝ Կովկասի հարավում մղած պատերազմներով, երևի թե, հենց այդ նպատակն էլ հետապնդում էր կայսերապետությունը: Նաև «բունդականության» տուրք դիտելու միտումի օրինականությունը, քանի որ ցրվածությունը մերձենում էր հրեա ժողովրդի ճակատագրին... ժամանակի Ռուսաստանում միանգամայն հավաստի վիճակագրական պաշտոնական տվյալներով՝ հայ եկեղեցու և համայնքների տվյալների կրկնակի հավաստումով:

Այդ իրավիճակում ազգային հավաքականության ապահովման մտահոգությամբ ձևավորված մի կուսակցություն էլ Հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունն էր՝ «սպեցիֆիկ» «Ազգային կուլտուրական ավտոնոմիա» ծրագրով ու գաղափարախոսությամբ: Եվ ինչպես հետևում է Անանունի ծավալուն հոդվածից, կոչված էր միասնականության նշանաբանով *լուծելու միայն Ռուսաստանում* սփռված հայության կուլտուրական խնդիրները: Այն էլ որոշակի զգուշությամբ, քանի որ առաջին իսկ հարցադրումը սա է. «...Իսկ ի՞նչ է մարդկային ցեղի կուլտուրան: Մի հարաճուն և աննկուն պայքար բնության կույր ուժերի դեմ, մի կռիվ՝ ցեղային ու դասակարգային, կռիվ մարդկանց միջև, մի կռիվ, որ խարսխվում է արտադրողական ուժերի ստեղծած փոխհարաբերությունների պատվանդանի վրա»[41]:

Բայց շարունակենք ծանոթանալ ազգային ինքնավարության Դ. Անանունի ասածով՝ «ինքնօրինությանը»՝ փոքր-ինչ հանգամանալի մանրամասներով: Հարկ է նշել, որ այն գրեթե կրկնում է Ռեննների՝ վերևում ներկայացված մոդելը: Ըստ Անանունի ևս՝ այդ «ազգային միությունը» պետք է լինի արտատարածքային և անձնային-անհատական կամավոր անդամակցության սկզբունքով ստեղծված «ազգային հավաքական մարմին»[42]՝ ճանաչված պետության կողմից՝ որպես «պետական գործառնություն կատարող կազմակերպություն»: Պետությունն այդ մարմնին պիտի վերապահի իր այն գործառույթները, որոնք վերաբերում են ազգային-մշակութային «համարված բոլոր գործերին» և պետք է իրականացնի դրա գործունեության բովանդակության վերահսկողությունը: Ազգային միությունը պետք է ունենա տեղական և կենտրոնական հաստատություններ, որոնց կազմակերպման ու ղեկավարման իրավասությունը կհանձնվի տվյալ ազգի անդամներին: Իսկ գործունեության բովանդակության մեջ Անանունը ներառում է այն բոլոր կրթական ու մշակութային հաստատությունների զարգացումը, որոնք կապված են «ինքնուրույն լեզվի անարգել գործածման և իրավահավասարության հետ»[43] և նպաստելու

[41] Նոր հոսանք 1913, N 1, 143:

[42] Անանունն ազգային-մշակութային ինքնավարության հայկական դարավոր մոդելն է նաև հիմք ընդունում՝ որպես ազգային հավաքական մարմնի նախատիպ նշելով հայոց եկեղեցին. «<...> գերազանցապես նման կլինի եկեղեցու կազմակերպությանը: <...> սակայն իր շուրջը կմիացնե ոչ թե կրոնական, այլ ազգային պահանջների համար» (Նոր հոսանք 1913, N 2, 366):

[43] Նոր հոսանք 1913, N 2, 366-367:

են նրա՝ իր ընկալմամբ ազգային մշակույթի գլխավոր բաղադրիչի զարգացմանը: «<...> Լեզվի, որովհետև մենք նրա մեջ ենք տեսնում ուրույն ազգային կուլտուրան»[44], «<...> Լեզվի հարցը մահու և կյանքի խնդիր է», «Ուրեմն հայերենի գոյության հարցը՝ դառնում է քաղաքական պահանջ»[45]- այս և մշակույթին վերաբերող այլ գաղափար-հանգանակներով ակնհայտ են Տերյանի և Անանունի համակարծությունը լեզուն, մշակույթը ազգային գոյության հիմնարար գործոններ ճանաչելու հարցում և դրա հետ կապված մտահոգությունների ընդհանրությունները: Եվ այդուհանդերձ հիշենք կարևորը. «կուլտուր-ազգային ավտոնոմիան» վերաբերում է Ռուսական կայսրության սահմաններում հպատակ հայության հոգևոր և ֆիզիկական գոյության ապահովմանը[46], ասել է՝ բացառապես *ռուսահայության* խնդրին: Եվ ոչ թե հայության ազգային հարցի, այլ դրա միայն մի բաղադրիչի իրավաքաղաքական լուծման տարբերակ է: Մինչդեռ «Հոգևոր Հայաստանի» քննության ու մտահոգության նյութը միայն և միայն *համայն հայությունն* է: Էական մի հանգամանք ևս՝ «կուլտուր-ազգային ավտոնոմիան» պետական կառուցվածքի, կառավարման ձևի, իրավական կարգի մասին հայեցակարգի վրա կառուցված ծրագիր է, ռուսահայության համար ոչ ազգային պետական (կամ կենտրոնական) և ազգային (կամ համայնքային) կառույցների, ինչպես նաև մի կողմից իր և տիտղոսակիր, մյուս կողմից՝ իբրև հպատակ ու փոքրաթիվ ազգերի երկկողմ-բազմակողմ հարաբերությունները հնարավորինս քաղաքակիրթ, շարունակ իրար դեմ հրահրվող ազգերի գոյակցությունն անարյուն ու խաղաղ դարձնելու ծրագիր: Եվ պահանջի հասցեատերը պետությունն է:

Այնինչ «Հոգևոր Հայաստանը» Հայաստանի նյութական-հոգևոր ամբողջության պատմափիլիսոփայական հայեցակարգի վրա հիմնված ազգային ռազմավարություն է և դիմում ու պահանջ հայ մտավորականությանը: Եվ կարևորում է ազգային ինքնակազմակերպումն ու ինքնակառավարումը ըստ էության բացառապես ազգային ներուժով՝ անկախ արտաքին հանգամանքներից, այդ թվում՝ պետության ձևից ու կառավարման համակարգից, անկախ պետության կամ կենտրոնական իշխանության մասնակցությունից:

Իսկ «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի» գոյությունը, հետևաբար ազգային-մշակութային զարգացումն ուղղակիորեն կախված են պետու-

[44] Նոր հոսանք 1913, N 2, 366-367:

[45] Նոր հոսանք 1913, N 1, 154:

[46] Գրելով «...անխախտ կմնա այն դրությունը, որ տվյալ ազգի կուլտուրական գործերը տարվում են նույն այդ ազգի ներկայացուցիչների միջոցով, որ կուլտուրական խնդիրների մեջ ազգերը սահմանագծվում են (отмежевываются) իրարից և թուլացնում են բախման կետերը»՝ Անանունն անկասկած նկատի ունի հատկապես ազգամիջյան արյունալի բախումները՝ աչքի առաջ ունենալով Ռուսական առաջին հեղափոխության տարիների 1905-1907 թթ. հազարավոր կյանքեր խլած հայ-թաթարական ընդհարումները:

թյունից, քանի որ ազգային հաստատությունների համար անհրաժեշտ միջոցների աղբյուր նախանշվում է պետական բյուջեն[47]:

Եվ մի վերջին մեջբերում՝ ամբողջացնելու համար «ազգային կուլտուրական ավտոնոմիան»՝ ըստ ռուսահայ իրականության մեջ գաղափարի ամենաեռանդուն ջատագովի և նրա զինակիցների ընկալումների. «<...> Մեզ թվում է, որ ուտոպիստական ոչինչ չկա ազգային-կուլտուրական ավտոնոմիա գաղափարի մեջ, յուրաքանչյուր ազգությունների պետության մեջ նա ազգային հարցի լուծման լավագույն միջոցն է: Մասնավորապես Անդրկովկասի համար նա միակ համադարմանն է, որ կարող է հաշտեցնել ազգերին, թուլացնել ազգային կռիվը: Մեզ մոտ տերիտորիալ ավտոնոմիայի ուղղությամբ արած ամեն մի քայլ պիտի առաջացնե անցանկալի բարդություններ, այնինչ կուլտուրական ավտոնոմիայի գաղափարը կարող է դառնալ ազգերի համագործակցության համար քաղաքական սոսինձ»[48]:

Բայց ինչու՞ է այդ տարրական պահանջը, այլ ազգերի հետ հաշտ ու խաղաղ համակեցության ձգտումը դիտվել-դիտվում նացիոնալիզմ...

Եզրակացություններ

«Կուլտուր-ազգային ավտոնոմիա» և «Հոգևոր Հայաստան» հայեցակարգերը XX դարի առաջին երկու տասնամյակներին հայ հասարակական-քաղաքական քննարկումների տիրույթ բերելն ուներ ըստ էության նույն նպատակը՝ հայության առջև ծառացած մարտահրավերներին դիմակայելու և ազգային հիմնախնդիրները լուծելու միջոց առաջարկելը: Նաև զուգամիտում են համադրվող հայեցակարգերի անկյունաքարային «ազգ» հասկացության սահմանումները՝ մշակույթ և լեզու բաղադրիչներն առանձնակի կարևորող:

Այդուհանդերձ, «կուլտուր-ազգային ավտոնոմիան» և «Հոգևոր Հայաստանն» էապես տարբեր են բնույթով ու նպատակով: Առաջինն իրավաքաղաքական միջոց է, առնչվում է հայության միայն մեկ հատվածին, ըստ էության կարճաժամկետ և մեծապես կախված արտաքին գործոնից: Իսկ «Հոգևոր Հայաստանը» Հայաստան-հայության՝ որպես մեկ ամբողջության վերաբերյալ պատմափիլիսոփայական հայեցակարգի վրա հիմնված երկարաժամկետ կամ անժամկետ ազգային-քաղաքական ռազմավարություն է՝ անկախ արտաքին գործոններից և բացառապես սեփական պատասխանատուներով:

Գրականություն

Ալիխանյան Ս. 1956, Վահան Տերյանի պետական գործունեությունը: Քաղաքագիտական վերլուծություն, Երևան, «Հայպետհրատ», 192 էջ:

Աղաբաբյան Ս. 1986, Դասականներ և ժամանակակիցներ, Երևան, «Սովետական գրող», 476 էջ:

[47] Նոր հոսանք 1913, N 2, 367:

[48] Նոր հոսանք 1913, N 2, 367-268:

Անանուն Դ. 1913, Ազգային հարցը և դեմոկրատինան, Նոր հոսանք, գրական, գիտական, հասարակական և քաղաքական ամսագիր, Թիֆլիս, N 1, 142-154, N 2 էջ 358-372:
Անանուն Դ. 1917, Մտքի տկարությունը ազգային հարցի լուծման խնդրում, Գործ, գրական, գիտական, հասարակական և քաղաքական ամսագիր, Բաքու, N 3, Բ մաս, էջ 14-30:
Անանուն Դ. 1920, Հանդիպումներ Վ. Տէրեանի հետ, Հայաստանի կօօպերացիա երկշաբաթաթերթ, Երևան, N 13, հուլիսի 15, էջ 521-525:
Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Վ. Տերյանի ֆ. (ՎՏՖ), N 313:
Զաքարյան Ս. 2022, Ազգային-մշակութային ինքնօրինության տեսությունը XX դարասկզբի հայ սոցիալ-փիլիսոփայական մտքում, Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, հոգեբանություն, N 2, էջ 3-17:
Էմին-Տերյան Գ. 2014, Վահան Տերյան. Անտիպ և անհայտ էջեր, Երևան, «Տիգրան Մեծ», 740 էջ:
Իշխանյան Բ. 1908, Ազգային պրօգրէսը եւ դասակարգային շահերը, Թիֆլիս, Էպոխա, 312 էջ:
Իշխանյան Բ. 1906, Տաճկահայ խնդիրը եւ միջազգային դիպլօմատիան, Թիֆլիս, Հերմէս, 140 էջ:
Իշխանյան Բ. 1907, Թիւրքիայի ապագան (Քննական էտիւդ), Թիֆլիզ, Էպօխա, 66 էջ:
Հակոբյան Ա. 1997, «Սպեցիֆիկներ» (1903-191S թթ.) (գաղափարախոսություն, ծրագիր, գործունեություն), Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, Երևան, էջ 34-47:
Հակոբյան Վ. 2009, Փաստաթղթեր Հայաստանի Սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության գործունեության մասին (1920 թ.), Բանբեր Հայաստանի արխիվների, N 2, էջ 96-108:
Հակոբյան Վ. 2017, Ալեքսանդր Մյասնիկյանի հասարակական-քաղաքական գործունեության մինչբոլշևիկյան փուլը, Պատմություն և մշակույթ: Հայագիտական հանդես, էջ 96-107:
Համրարյան Ա. 1990, Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին. XIX դարի վերջ - XX դարի սկիզբ, Երևան, «Հայաստան», 480 էջ:
Մշակ 1915, օրաթերթ, Թիֆլիս, N 232:
Նարո 1906, Երեք տարի (Սոց.-Դեմ. Բան. Հայ. կազմ. եռամեակին) Ձայն, քաղաքական, հասարակական և տնտեսական շաբաթաթերթ, Թիֆլիս, N 4, էջ 55-56:
Շահումյան Ստ. 1914, Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին, Թիֆլիս, https://www.marxists.org/hayeren/archive/shahumyaN/works/1914/arachaban.pdf (ներբեռնման օրը՝ 10.05.2023):
Շահումյան Ստ. 1976, Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Երևան, «Հայաստան», 482 էջ:
Պարտիզունի Վ. 1968, Վահան Տերյան, Երևան, «Հայաստան», 688 էջ:
Սարգսյան Մ. 2001, Վահան Տերյանի «Հոգևոր Հայաստան» պատմափիլիսոփայական հայեցակարգը և «Երկիր Նաիրի» բանաստեղծական շարքը, թեկն. ատենախոսություն, 184 էջ:
Սարգսյան Մ. 2004, Վահան Տերյանի «Հոգևոր Հայաստան» պատմափիլիսոփայական հայեցակարգը, Պատմա-բանասիրական հանդես, N 3, Երևան, էջ 77-98:
Սարինյան Ս. 1998 Հայ գաղափարաբանություն: Պատմաքննական տեսություն, Երևան, «Զանգակ-97», 318 էջ:
Սարինյան Ս. 1979, Վահան Տերյան, Հայ նոր գրականության պատմություն, հ. հինգերորդ. Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1013 էջ:
Տերյան Վ. 1961, Երկերի ժողովածու երեք հատորով, կազմեց և ծանոթագրեց Վ. Պարտիզունի, հ. 2, Երևան, «Հայպետհրատ», 492 էջ:

Տերյան Վ. 1975, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 3, Երևան, «Սովետական գրող», 416 էջ:
Barbieri S. 2013, National-Cultural Autonomies as a Tool for Diversity Management: A Historical Overview, Социальные явления, N 1(2), c. 6-21.
Lagi S. 2011, Karl Renner: «Staat und Nation» (1899). Res Publica. Revista de Historia de las Ideas Políticas, N 25, p. 109-124.

«ԿՈՒԼՏՈՒՐ-ԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՆՈՄԻԱՆ» ԵՎ ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ «ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ»

Մարինե Սարգսյան

Ամփոփում

«Կուլտուր-ազգային ավտոնոմիան» բազմազգ կամ էթնիկ առումով ժողովրդագրական բարդ կառուցվածք ունեցող պետություններում ազգային հարցը լուծելու իրավաքաղաքական միջոց է: Այն մեկ պետության շրջանակում կենտրոնական իշխանության ու ազգային փոքրամասնությունների, ինչպես նաև ազգամիջյան, միջէթնիկական հարաբերությունների կառավարման վարչահիրավական սկզբունք է և գործիք:

XX դարասկզբին հայ քաղաքական կուսակցություն-կազմակերպությունների մեծ մասն այն համարել է տվյալ պատմական պահին հայության ազգային հիմնախնդիրները լուծելու, ազգային միության կազմակերպահիրավական հնարավոր ձևերից իրատեսականն ու շահեկանը: Դրա համար պայքարողների առաջամարտիկը ՍԴԲՀԿ-ն էր, որի գլխավոր գաղափարախոսները Բ. Իշխանյանը և Դ. Անանունն էին: Նրանց հայեցակարգի նպատակը Ռուսական կայսրության հպատակ հայության ազգային հարցը կարճաժամկետ լուծելն էր պետության միջոցով:

Վ. Տերյանի «Հոգևոր Հայաստանը» նույն ժամանակահատվածում հայ հասարակական-քաղաքական մտքին ներկայացված պատմափիլիսոփայական հայեցակարգ է և դրա վրա հիմնված ազգային-քաղաքական ռազմավարություն, որի երկարաժամկետ կամ անժամկետ նպատակը Հայաստան-հայության՝ որպես մեկ ամբողջության բացառապես ներքին ներուժով ինքնակազմակերպված միությունն է:

Բանալի բառեր՝ ազգային հարց, «կուլտուր-ազգային ավտոնոմիա», «սպեցիֆիկներ», պատմափիլիսոփայական հայեցակարգ, ազգային ռազմավարություն, Դավիթ Անանուն, Բախշի Իշխանյան:

«ДУХОВНАЯ АРМЕНИЯ» ВААНА ТЕРЯНА И «КУЛЬТУРНО-НАЦИОНАЛЬНАЯ АВТОНОМИЯ»

Марине Саргсян

Резюме

«Культурно-национальная автономия» является юридическим и политическим средством решения национального вопроса в многонациональных государствах или в государствах со сложной демографической структурой в плане

этничности. Она представляет собой административно-правовой принцип и инструмент управления отношениями центральной власти и национальных меньшинств, а также межнациональными и межэтническими отношениями в рамках одного государства.

В начале XX века большинство армянских политических партий-организаций считали её наиболее реальной и выгодной из возможных организационно-правовых форм для решения национальных проблем армян и их объединения на данном историческом отрезке. Авангардом боровшихся за нее была СДРАО, главными идеологами которой были Б. Ишханян и Д. Ананун. Целью их концепции было краткосрочное решение национального вопроса армянских подданных Российской империи посредством государства.

«Духовная Армения» В. Теряна – историко-философская концепция и основанная на ней национальная политическая долгосрочная или бессрочная стратегия, целью которой является создание самоорганизованного союза Армения-армяне.

Ключевые слова – национальный вопрос, «национально-культурная автономия», «специфики», историко-философская концепция, национальная стратегия, Давид Ананун, Бахши Ишханян.

"CULTURAL-NATIONAL AUTONOMY" AND VAHAN TERYAN'S "SPIRITUAL ARMENIA"

Marine Sargsyan

Abstract

"Cultural-national autonomy" is a legal and political means of solving the national question in multinational states or in states with a complex demographic structure in terms of ethnicity. It is an administrative-legal principle and a tool for managing relations between the central government and national minorities, as well as inter-national and inter-ethnic relations within the framework of one state.

At the beginning of the 20th century, the majority of Armenian political parties-organizations considered it the most realistic and beneficial of the possible organizational and legal forms for solving the national problems of Armenia and the association of the Armenians at this historical moment. The vanguard of those who fought for it was SDALO, the main ideologues of which were B. Ishkhanyan and D. Ananun. The purpose of their concept was a short-term solution to the national issue of Armenian subjects of the Russian Empire through the state.

V. Teryan's "Spiritual Armenia" is a historical and philosophical concept presented to the Armenian social and political thought of the same period and based on it a long-term or termless national political strategy, the goal of which is was the creation of a self-organizing union of Armenia-Armenians exclusively by the internal potential.

Key words – national question, "national-cultural autonomy", "specifics", historical and philosophical concept, national strategy, David Ananun, Bakhshi Ishkhanyan.

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ Վ. ՊԻԿՈՒԼԻ «ՖԱՎՈՐԻՏ» ՎԵՊԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լիլիթ Ծատուրյան

ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ
ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 1
Էլ. հասցե՝ tsaturyan-1997lilit@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 20.12.2022, գրախոսվել է 22.12.2022, ընդունվել է տպագրության 11.12.2023
ORCID: 0009-0003-1457-1293
DOI: 10.53548/0320-8117-2023.3-203

Ներածություն

Որևէ լեզվի քերականական օրինաչափությունները ուսումնասիրելու տեսանկյունից թարգմանչական փոխարինումները քննելու անհրաժեշտություն կա: Շարահյուսական մի շարք կառույցների սխալ, անհարկի կիրառությունը հաճախ լեզու է ներթափանցում թարգմանությունների միջոցով: Լեզվական նորմը պահպանելու և համարժեք թարգմանություն ստանալու համար թարգմանիչը պետք է իմանա սեփական լեզվի քերականական կանոնները: Սակայն թարգմանության գործընթացում քերականական զուգադրությունների դժվարությունն այն է, որ դրանք արժեք չեն ունենա, եթե հաշվի չառնվի քերականական ձևի կախվածությունը նրա բառային բեռնվածությունից: Խոսելով շարահյուսական փոխարինումների մասին՝ պիտի նշենք, որ սրանք շատ դեպքերում կապված են բառային, ձևաբանական մակարդակներում կատարված փոխակերպումներին, այդ իսկ պատճառով որևէ մակարդակում փոխակերպումը կարող է հանգեցնել փոխակերպման նաև մյուս մակարդակում: Ըստ Յա. Ռեցկերի՝ «քերականական փոխակերպում» տերմինը պետք է պայմանականորեն հասկանալ: Բերելով անգլերեն-ռուսերեն թարգմանությունների օրինակը՝ նա նշում է, որ անգլերեն նախադասությունը ինքնին նույնն է մնում, և թարգմանչի մտքում որոշակի գործողություն է տեղի ունենում՝ վերափոխելու այդ կառույցը, որում անգլերեն բառերն արդեն փոխարինվել են ռուսերենով: Ըստ էության տեղի է ունենում բառացի թարգմանության վերափոխում, որն անխուսափելի քայլ է սկսնակ թարգմանչի աշխատանքում: Միայն փորձը կարող է հուշել, թե ինչպես արագ անցնել անգլերեն նախադասությունների՝ ռուսաց լեզվի համար բնական կառույցներին[1]: Որոշ դեպքերում թարգմանիչը կարող է թարգմանել բնագրի լեզվի նախադասությունը՝ պահպանելով նրա շարահյուսական կառուցվածքը և կիրառելով թարգմանության լեզվի քերականական ձևերը: Թարգմանության այդ ձևը տարբեր անվանումներ ունի՝ շարահյուսական կիրառություն, բառացի

[1] Рецкер 1982, 60-61.

թարգմանություն կամ զրոյական փոխակերպում[2]: Շարահյուսական փոխակերպումների պատճառները կարող են լինել ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական: Տարբեր համակարգեր ունեցող լեզուների միջև քերականական համապատասխանությունը դեպքերի գերակշիռ մասի դեպքում կարող է լինել միայն գործառութային՝ կախված մի շարք փոփոխական գործոններից: Բայց նույնիսկ երբ բոլոր գործոնները հաշվի առնելով՝ թարգմանության մեջ գտնում ենք ամենահամապատասխան կառույցը, ծագում է ոչ պակաս կարևոր մի հարց բառերի, ավելի ճիշտ նախադասության անդամների շարադասության համապատասխան ընտրության վերաբերյալ[3]: Այսպես՝ լեզվական պատճառներով պայմանավորված՝ թարգմանության լեզվում կարող է փոխվել բառերի շարադասությունը, քանի որ հայերենին, օրինակ, հատուկ է հատկացուցիչ-հատկացյալ շարադասությունը (*նկարչի դիմանկարը*), իսկ ռուսերենին՝ հակառակը (*портрет художника*):

Շարահյուսական փոխակերպումների մի ստվար մասը թարգմանության մեջ նախադասության տեսակների փոխարինումն է: Լ. Բարխուդարովը բարդ նախադասության կառուցվածքում առանձնացնում է շարահյուսական փոխակերպումների հետևյալ տեսակները՝ 1) պարզ նախադասության փոխարինում բարդով, 2) բարդ նախադասության փոխարինում պարզով, 3) գլխավոր նախադասության փոխարինում երկրորդականով և հակառակը, 4) համադասական նախադասության փոխարինում ստորադասականով և հակառակը, 5) շաղկապով կապակցված նախադասությունների փոխարինում շարահարությամբ կապված նախադասություններով և հակառակը[4]: Այդ փոխարինումները պայմանավորված են տարբեր գործոններով: Օրինակ՝ հայերենին հիմնականում հատուկ չեն կրավորական կառույցով այն նախադասությունները, որոնք ձևավորվում են անձ ցույց տվող բառ+*կողմից* կապ կառույցով (հիմնականում հանդիպում են վարչական ոճում), և դրանք սովորաբար թարգմանվում են ներգործականով: Իսկ ռուսերենում ածական-դերբայի կարճ ձևով կրավորական կառույցներն են հիմնականում բնորոշ վարչական ոճին[5]: Շարահյուսական փոխարինումների տեսակներն ու դրանց առանձնահատկությունները քննենք Վ. Պիկուլի «Ֆավորիտ» վեպի հայերեն թարգմանության մեջ՝ Վ. Վարդանյանի թարգմանությամբ:

Կրավորական կառույց⇄ներգործական կառույց

Ռուսերենի կրավորական կառույցները հայերենում փոխարինվում են ներգործականով հիմնականում այն դեպքում, երբ բնագրի նախադասության մեջ կա быть բայ+կրավորական սեռի ածական-դերբայ կազմություն կամ

[2] Подгайская 2019, 15.
[3] Рецкер 1974, 76.
[4] Бархударов 1975, 203.
[5] Комиссаров 1990, 73.

պարզապես կրավորական սեռի ածական-դերբայ: Այսպիսի օրինակներում Վ. Վարդանյանը դիմել է ձևական ենթական տրամաբանականով փոխարինելուն, որի հետևանքով փոխվել է նախադասության կառուցվածքը.

*….путешественницы прибыли в Митаву, столицу Курляндского герцогства, **владелец которого, герцог Бирон, был заточен Елизаветою в Ярославле**[6]. - ….ճանապարհորդուհիները ժամանեցին Միտավա, Կուռլանդական դքսության մայրաքաղաքը, **որի տիրոջը՝ դուքս Բիրոնին, Ելիզավետան բանտարկել էր Յարոսլավլում**[7]:* (Բոլոր օրինակներում պահպանված են թարգմանության կետադրությունը և ուղղագրությունը)

*….был секретно вывезен малолетний император Иоанн Антонович, **сверженный Елизаветой Петровной**. (հ. 1, էջ 42) - ….գաղտնի կերպով դուրս էր բերվել մանկահասակ կայսր Յոհան Անտոնովիչը, **որին գահազրկել էր Ելիզավետա Պետրովնան**: (հ. 1, էջ 43)*

Эта мошенница отлично сотворена богом[8]. - Աստված սքանչելի է արարել այդ խաբեբային[9]:

Вы любимы этой сволочью! (հ. 2, էջ 30) - Այս խառնիճաղանջ ամբոխը սիրում է ձեզ: (հ. 2, էջ 38)

***У него было взято**: 139 червонных монет разной чеканки, 480 рублей серебром, турецкая монета…. (հ. 2, էջ 22) - **Նրանից խլեցին** տարբեր հատումների 139 կարմիր ոսկի, 480 ռուբլի արծաթ, թուրքական դրամ…. (հ. 2, էջ 29)*

Իհարկե, սա չի նշանակում, որ կրավորական բոլոր նախադասությունները պետք է անխտիր ներգործականով թարգմանել: Կրավորական կառույցը հայերենում ունի գործածության մի քանի հիմնական դեպքեր, օրինակ՝ երբ հայտնի չէ կամ կարևոր չէ՝ ով է գործողություն կատարողը, երբ չեզոք վերաբերմունքի դրսևորման անհրաժեշտություն կա, կամ երբ կարևորվում է գործողության գաղափարը *(Քաղաքը թալանվել է և ավերվել դեռևս 9-րդ դարում)*: Այսպիսի օրինակների հանդիպում ենք նաև վեպի թարգմանության մեջ, երբ տրամաբանական շեշտը հիմնականում ոչ թե գործողությունը կատարողի՝ ենթակայի վրա է, այլ խնդրի: Դա առավել ակնհայտ դարձնելու նպատակով թարգմանիչը նախադասության կառուցվածքը փոխել է կրավորականի՝ ուղիղ խնդիրը դարձնելով ձևական ենթակա.

*Казаки вывели отряд на Узени - таинственные реки без конца и начала, теряющиеся в травах и камышах, столь высоких, **что в них не заметишь и всадника**. (հ. 2, էջ 22) - Կազակները ջոկատը դուրս բերեցին Ուզենի ուղղությամբ. անսկիզբ ու անվերջ խորհրդավոր գետեր, որոնք կորչում են*

[6] Пикуль 1984, т. 1, 41 (այսուհետ բնագրի էջերը կնշվեն օրինակների կողքին՝ փակագծերում՝ հատորից հետո):

[7] Պիկուլ 1989, հ. 1, 42:

[8] Пикуль 1984, т. 2, 25.

[9] Պիկուլ 1989, հ. 2, 32:

*այնքան բարձր խոտերի ու եղեգների մեջ, **որ ձիավորն անգամ չի նկատվի նրանցում**: (h. 2, էջ 28)*

Однажды из кабинета царицы слышали его голос. (h. 2, էջ 40) - Մի անգամ թագուհու աշխատասենյակից լսվեց նրա ձայնը: (h. 2, էջ 52)

Այս հարցի վերաբերյալ Գ. Ջահուկյանը նշում է, որ *վ* մասնիկի հակադարձ գործողություն արտահայտելը ցայտուն կերպով հանդես է գալիս գործողի մատնանշման դեպքում: Երբ գործողը չի նշվում, կրավորական-ոչ կրավորական (ներգործական) սեռային հակադրության փոխարեն հանդես է գալիս անանցողական-անցողական տիպարային հակադրությունը, ինչպես՝ *գլորեցի-գլորվեցի* (1. Մեկի կողմից գլորվեցի, 2. Ինքս ինձ գլորվեցի)[10]:

Շարահյուսական փոխակերպումների լեզվական պատճառներից են նաև լեզուներին բնորոշ նախադասության տարբեր տեսակները: Մյուս կողմից նախադասություններում հասկացությունների միջև հարաբերություններ են հաստատվում: Ըստ այդ կապի հաստատման կամ ժխտման՝ նախադասությունները լինում են դրական և ժխտական[11]:

Դրական նախադասություն⇄ժխտական նախադասություն

Նախադասության դրական⇄ժխտական կառույցների փոխարինումը մեծ մասամբ հանգեցնում է հականշային թարգմանության: Թարգմանական գրականության մեջ այսպես է կոչվում բառաքերականական փոխարինումը, որի էությունը դրական կառույցի փոխակերպումն է ժխտականով կամ հակառակը: Այն ուղեկցվում է բնագրի լեզվի նախադասության որևէ բառի՝ թարգմանության լեզվում հականշի փոխարինումով[12]: Սա ևս փաստում է, որ շատ դեպքերում բառային, ձևաբանական և շարահյուսական մակարդակներում կատարված փոխարինումները կապված են իրար:

*Ныне на дворе нашем век уже осьмнадцатый, век просвещенный, **и дети за грехи родительские неповинны должны быть**. (h. 1, էջ 50) - Հիմա աշխարհում արդեն տասնութերորդ դարն է, լուսավորյալ դարը, **և չպետք է ծնողների մեղքերի համար երեխաները մեղավոր լինեն**: (h. 1, էջ 53)*

*Так уж испокон веку завелось, чтобы мы, шляхетство украинское, **сидели розно от чинов москальских**. (h. 1, էջ 334) - Դարեր ի վեր էդպես է եղել, որ մենք՝ ուկրաինական շլյախտայականներս, **մոսկալյան աստիճանավորների հետ մեկտեղ չենք նստել**: (h. 1, էջ 436)*

*....Мне ещё очень долго **будет не хватать** вашего приятного общества. (h. 2, էջ 13) - ....Ես դեռ շատ երկար ձեր հաճելի ընկերակցության **կարիքը կզգամ**: (h. 2, էջ 16)*

[10] Ջահուկյան 1974, 271:
[11] Ասատրյան 1987, 127:
[12] Бархударов 1975, 214-215.

Будь вы даже частным лицом, вы и тогда ***доставили бы немало хлопот*** *дипломатам Европы - как женщина! (հ. 2, էջ 13) - Եթե դուք նույնիսկ մասնավոր անձնավորություն էլ լինեիք, ապա այդ դեպքում էլ դուք Եվրոպայի դիվանագետներին* ***քիչ հոգս չէիք պատճառի*** *որպես ... կին: (հ. 2, էջ 16)*

Այս փոխարինումների պատճառը հիմնականում լեզուների առանձնահատկություններն են: Դրանք բառացի թարգմանելու և երբեմն հականիշով չփոխարինելու դեպքում միտքը հայերեն չի լինի կամ դժվար ընկալելի կլինի, ինչպես՝ *Ինձ դեռ շատ երկար ձեր հաճելի ընկերակցությունը* ***չի բավականացնի****, Եվրոպայի դիվանագետներին* ***ոչ քիչ հոգս կպատճառեիք***: Նույն կերպ անգլերեն-ռուսերեն թարգմանություններում ժխտական-դրական կառույցների փոխարինումը հիմնականում կիրառվում է այն դեպքում, երբ բնագրի լեզվում ժխտական մասնիկը գործածված է բառի հետ, որը ունի նաև ժխտական նախածանց: Ռուսերենում ժխտական *не* մասնիկը և ժխտական նախածանցը ձևով համընկնում են, իսկ դրանք միաժամանակ կիրառելը անհնչեղ է դարձնում[13]:

Եթե վերը բերված օրինակներում հականշային թարգմանությունը պայմանավորված էր դրական⇄ժխտական ստորոգյալների փոխարինումներով, ապա վեպում հանդիպում ենք նաև բառային մակարդակում հականշային փոխարինումների, ինչպես՝

-Простите, дорогие друзья, я так устал сегодня, что дремота сморила меня... Скажите, я ***недолго*** *спал? (հ. 2, էջ 34) - Ներեցեք, թանկագին բարեկամներ, այսօր ես այնքան եմ հոգնել, որ քունս տարավ ու չդիմացա... Ասացեք,* ***շա՞տ*** *եմ քնել: (հ. 2, էջ 44)*

Вы здесь ***недавно****, маркиз, каковы впечатления? (հ. 2, էջ 47) - Մարկիզ, դուք այստեղ* ***նոր*** *եք, ինչպիսի՞ն են ձեր տպավորությունները: (հ. 2, էջ 62)*

Միակազմ նախադասություն ⇄ երկկազմ նախադասություն

Ռուսերենում գոյություն ունի միակազմ նախադասության մի տեսակ, որ կոչվում է անդեմ (безличные предложения): Սրանցում բացակայում է ակտիվ սուբյեկտը, թեև գործողություն կատարող կա նախադասության մեջ, պարզապես ստորոգյալի ձևը թույլ չի տալիս՝ ենթական դրվի ուղղական հոլովով, և գործողությունը ներկայացվում է այն կատարողից անկախ: Անդեմ նախադասության քերականական տիպերը բավական տարատեսակ են[14]: Հատկապես տարածված են այն նախադասությունները, որոնցում ստորոգումն արտահայտվում է հնարավորություն, անհրաժեշտություն (*надо, можно, нельзя, нужно* և այլն), զգացմունքային (*смешно, стыдно, страшно, грустно* և այլն) և ֆիզիկական (*больно, плохо, жарко* և այլն) վիճակներ ցույց տվող ստորոգելիական մակբայներով, անդեմ բայերով (*знобит, тошнит, (не) сидится*

[13] Комиссаров 2002, 165.
[14] Валгина 2003, 163.

և այլն), օրինակ՝ *Нам надо поговорить, Мне душно, Здесь холодно, Тебе не сидится на месте*[15]: Այս տիպի նախադասության թեք հոլովով ենթական հայերեն թարգմանվում է ուղղական հոլովով, քանի որ հայերենին բնորոշ չէ թեք հոլովով ենթական, ինչպես՝ *Нам надо поговорить - Մենք պետք է խոսենք (ոչ թե՝ Մեզ պետք է խոսել)*: Այս դեպքում ռուս-հայերեն թարգմանություններում ունենում ենք միակազմ-երկկազմ նախադասության փոխարինումներ: Իսկ *стыдно, холодно, душно, жарко* և այլ ֆիզիկական ու զգացմունքային վիճակներ արտահայտող որոշ ստորոգելիներ հայերենում ձևավորում են միակազմ նախադասություն, ինչպես՝ *Տաք է, Յուրտ է, Ամոթ է* և այլն: Այդպիսի օրինակները բազմաթիվ են նաև վեպի հայերեն թարգմանության մեջ.

***Стоило Екатерине появиться** в Москве, как перед нею стал часто мелькать видный мужчина из дворян рода Вышинских. (h. 1, էջ 317) - **Հենց որ Եկատերինան հայտնվեց** Մոսկվայում՝ նրա առջև սկսեց հաճախակի երևալ մի երևելի տղամարդ՝ Վիշինսկիների տոհմի ազնվականներից: (h. 1, էջ 413)*

*Следовательно, **нам не придётся краснеть**, если мы последуем её примеру. (h. 1, էջ 366) - Հետևաբար, **մենք կարմրելու հարկ չենք ունենա**, եթե հետևենք նրա օրինակին: (h. 1, էջ 479)*

*....А она ведь женщина, **и ей очень стыдно**. (h. 2, էջ 42) - ....Բայց չէ որ ինքը կին է **և շատ է ամաչում**: (h. 2, էջ 54)*

*....А **у Степана Ивановича Шешковского иные заботы**, более вразумительные. (h. 2, էջ 17) - ....Իսկ **Ստեպան Իվանովիչ Շեշկովսկին այլ հոգսեր ունի**, ավելի խելամիտ: (h. 2, էջ 22)*

*....**Мне** на Москве-матушке **веселиться неспособно**...(h. 2, էջ 23) - **Ես** մայր Մոսկվայում **զվարճանալ չեմ կարող**: (h. 2, էջ 30)*

*Ну и пущай князь Пётр, **не все одноглазому лакомиться**.... (h. 2, էջ 49) - Է, թող հիմա էլ իշխան Պյոտրը լինի, **հո բոլորը միականին չի ճաշակելու**... (h. 2, էջ 64)*

Հայերենում և ռուսերենում միակազմ անենթակա նախադասություններ կան, մինչդեռ, օրինակ, անգլերենում այսպիսի շարահյուսական կառույց չկա, այսինքն՝ ձևական անենթակա նախադասություններ չկան: Ուստի անգլերենում գործողության անորոշ կատարողի համար դրվում է *they* դերանունը[16]: Ռուսերենում քիչ չեն հանդիպում նաև միակազմ անվանական և բայական անդեմ նախադասություններ (номинативные и инфинитивные предложения): Սրանք հայերենում կարող են թարգմանվել երկկազմ նախադասություններով.

Тебе, русский, добавить сливок или хватит? (h. 2, էջ 46) - Ռուս, կաթիդ վրա սերուցք ավելացնե՞մ, թե հերիք է... (h. 2, էջ 60)

[15] Арзуманян, Исраелян, Мелик-Оганджанян, Тер-Аракелян, Хачатурян, Шахбазян 2003, 151-153.
[16] Гарбовский 2007, 499.

Из Америки слухи военные…. (հ. 2, էջ 50) - Ռազմական լուրեր են սփռվել Ամերիկայից: (հ. 2, էջ 65)

Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություն⇄բարդ ստորադասական նախադասություն

Լ. Բարխուդարովը բարդ նախադասությունը պարզով փոխարինելու յուրահատուկ տեսակ է համարում նախադասության մասնատումը (членение предложения), որը մեկ բարդ նախադասության տրոհումն է երկու կամ ավելի պարզ նախադասությունների: Բերելով անգլերենում մամուլի լեզվին բնորոշ օրինակներ՝ նա նշում է, որ, ի տարբերություն ռուսերենի, անգլերենին բնորոշ են բազմաբաղադրիչ ստորադասներով կամ դերբայական դարձվածներով նախադասությունները[17]: Հայերենում սովորաբար միևնույն նախադասության մեջ մեկից ավելի դերբայական դարձվածների առկայության դեպքում դրանք փոխարինվում են ստորադաս բաղադրիչներով, թեև քիչ չեն մեկ դերբայական դարձվածով նախադասության՝ ստորադաս նախադասությամբ փոխարինվելու դեպքերը.

*Никита Иванович Панин, **молча присутствовавший при этой беседе**, потом строго выговорил императрице, что так разговаривать с послом великой державы всё-таки нельзя. (հ. 2, էջ 13) - Նիկիտա Իվանովիչ Պանինը, **որ լուռ ներկա էր այդ զրույցին**, հետո խստությամբ ասաց կայսրուհուն, որ մեծ տերության դեսպանի հետ այդպես խոսել, այնուամենայնիվ, չի կարելի: (հ. 2, էջ 17)*

*Так победою Суворова при Козлудже Россия отвоевала почётный мир, **названный по деревне - Кучук-Кайнарджийским**! (հ. 2, էջ 16) - Այսպես, Կոզլուջայի մոտ Սուվորովի փառած հաղթանակով Ռուսաստանը պատվավոր հաշտություն նվաճեց, **որը գյուղի անունով կոչվեց Քուչուկ Կայնարջիի հաշտություն**: (հ. 2, էջ 21)*

*Плачущий, он затих на полу - маленький, слабый, ничтожный человечек, **желающий верить в любовь и благородство**. (հ. 2, էջ 29) - Լաց լինելով, հատակին չոքած, նա սսկվեց՝ այդ փոքր, թույլ, չնչին մարդուկը, **որն ուզում է հավատալ սիրուն ու ազնվությանը**: (հ. 2, էջ 38)*

*Интуицией солдата Румянцев ощущал **близость битвы**… (հ. 1, էջ 335) - Զինվորի հոտառությամբ Ռումյանցևն արդեն զգում էր, **որ կռիվը մոտենում է**… (հ. 1, էջ 438)*

Ինչպես երևում է օրինակներից, ստորադաս նախադասությամբ են փոխարինվում որոշիչ, երբեմն՝ ուղիղ խնդիր դերբայական դարձվածները: Կա նաև հակառակ երևույթը, երբ բնագրի համադասական նախադասության

[17] Бархударов 1975, 206.

բաղադրիչներից մեկը թարգմանվել է որոշիչ դերբայական դարձվածով, որը բազմաբաղադրիչ նախադասությանը հաղորդել է հակիրճություն.

Ночью кто-то сорвал портрет Екатерины с триумфальной арки, утром полиция подобрала его из грязи, ***он был разорван и растоптан****. (h. 1, էջ 176)-Գիշերը ինչ-որ մեկը հաղթակամարի վրայից պոկել էր Եկատերինայի դիմանկարը. առավոտյան ոստիկանությունը այն գտել էր ցեխի մեջ՝* ***պատռտված ու ոտքերի տակ տրորված****: (h. 1, էջ 223)*

Սրա հակառակ պատկերն է նպատակի, ժամանակի պարագա ստորադաս բաղադրիչ ունեցող նախադասությունների դեպքում, որոնք փոխարինվել են դերբայական դարձվածներով պարզ նախադասությունների, ինչպես՝

....И не нахожу слов, ***чтобы воспеть вашу неземную красоту****. (h. 1, էջ 181)- ....Եվ խոսք չեմ գտնում* ***երգելու ձեր վերերկրային գեղեցկությունը****: (h. 1, էջ 229)*

Вам, милорд,- обозлился Потёмкин,- не хватит Голконды в Индии, ***чтобы за кровь русских солдат расплатиться****! (h. 2, էջ 50) - Միլորդ,- գազազեց Պոտյոմկինը, - Հնդկաստանում գտնվող Հոլկոնդան անգամ ձեզ չի բավականացնի* ***ռուս զինվորների արյան դիմաց վճարելու համար****: (h. 2, էջ 66)*

Чтобы укрепить свою кавалерию*, Мария-Терезия как раз в это время хотела закупить лошадей в России. (h. 2, էջ 34) -* ***Իր հեծելազորն ամրապնդելու համար*** *Մարիա Թերեզան հենց այդ ժամանակ ուզում էր ձիեր գնել Ռուսաստանից: (h. 2, էջ 45)*

Едва подсохли подмосковные дороги*, Екатерина с Потёмкиным удалились в село Коломенское, ища покоя и уединения. (h. 2, էջ 39) -* ***Մերձմոսկովյան ճանապարհները չորանալուն պես*** *Եկատերինան ու Պոտյոմկինը, անդորր ու առանձնություն փնտրելով, մեկնեցին Կոլոմենսկոյե գյուղը: (h. 2, էջ 51)*

Հետաքրքիր է, որ ռուս լեզվաբանները, անգլերենի որոշիչ ստորադաս նախադասությունների օրինակը բերելով, նշում են, որ դրանք հաճախ թարգմանվում են առանձին նախադասություններով[18]: Փաստորեն այն դեպքերում, երբ որոշիչ դերբայական դարձվածով թարգմանել հնարավոր չէ, ռուսերենը ստորադասական նախադասության փոխարեն նախընտրում է առանձին պարզ նախադասություններով թարգմանությունը: Մինչդեռ բնագրային տեքստերում գերակշռում են որոշիչ դերբայական դարձվածով կառույցները:

Հավելենք, որ շարահյուսական մակարդակում պարզ (դերբայական դարձվածով) նախադասություն⇄բարդ ստորադասական նախադասություն փոխարինումները հանգեցնում են նաև փոխարինումների ձևաբանական մակարդակում՝ դերբայ⇄դիմավոր բայ, բայանուն գոյական⇄դիմավոր բայ փոխարինումների տեսքով:

[18] Левицкая, Фитерман 1963, 61.

Նախադասությունների միավորում ⇄ մասնատում

Թարգմանության մեջ կարող են գործածվել բնօրինակի կառուցվածքին նման կառույցներ, որը կարող է ուղեկցվել շարահյուսական կառույցների միջև կապի տեսակի փոփոխությամբ: Այստեղ հնարավոր են պարզ, բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասությունների փոխարինումներ: Նախադասությունների տեսակների միջև տարբերությունն ունի հաղորդակցական որոշակի նշանակություն: Օրինակ՝ իմաստային տարբերությունները այնպիսի նախադասություններում, ինչպիսիք են «Անձրև եկավ. մենք գնացինք տուն», «Անձրև եկավ, և մենք գնացինք տուն», «Մենք գնացինք տուն, որովհետև անձրև եկավ», պայմանավորված են երկու իրադարձությունների միջև պատճառահետևանքային կապի ոչ միատեսակ բնույթով, դրանց անկախության, արտահայտչականության աստիճանով և այլն: Տարբեր լեզուներում նույն տեսակի նախադասությունների իմաստային և ոճական գործառույթները կարող են չհամընկնել, որի հետևանքով թարգմանության մեջ համարժեքություն կհաստատվի տարբեր տեսակի, բայց նույն ներքին կառուցվածքը ունեցող նախադասությունների միջև: Այլ կերպ ասած, թարգմանության մեջ կնկատվեն անկախ նախադասությունների տեսակի և քանակի փոփոխություններ[19]: Թարգմանության ընթացքում նախադասությունների և նույնիսկ երկու պարբերությունների համադրումը միանգամայն հնարավոր է, նույնիսկ՝ բնական, երբ դրանցում զարգանում է նույն միտքը:

Он уже сделался похож на китайского мандарина, от глаз одни щелочки остались…*(h. 2, էջ 17) - Նա արդեն մանդարինի նման է դարձել: Աչքերից միայն նեղ ճեղքեր են մնացել: (h. 2, էջ 22)*

Այս օրինակում բարդ համադասական նախադասությունը փոխարինվել է երկու առանձին պարզ նախադասություններով, որոնց անկախությունը խիստ զգալի է, մինչդեռ բնագրում երկրորդ նախադասությունը ցույց է տալիս հետևանք: Որոշ դեպքերում նախադասությունների մասնատումը բխում է թարգմանության լեզվի քերականական օրինաչափություններից և իմաստային առանձնահատկություններից, որը միանշանակ արդարացված է.

Где были ваши глаза, не заметившие её острого подбородка, вроде вязального крючка, как можно целовать её рот, который не шире куриной гузки? (h. 1, էջ 181)-Որտե՞ղ էին ձեր աչքերը, որ չեք նկատել գործելու կեռիկի նման նրա սուր կզակը: Ինչպե՞ս կարելի է համբուրել նրա բերանը, որը հավի փտիկի չափ է: (h. 1, էջ 230)

Բարդ համադասական նախադասության բաղադրիչների անկախությունը բերված օրինակում այնքան զգալի է, որ դրանք անկախ նախադասություններով թարգմանելը չի խաթարել բնագրի արտահայտության նրբիմաստները:

[19] Комиссаров 1990, 76.

Եզրակացություններ

Ամփոփելով նախադասության տեսակների փոխարինումները Վ. Պիկուլի «Ֆավորիտ» վեպի հայերեն թարգմանության մեջ՝ նշենք, որ դրանք առավել շատ են հանդիպում պարզ⇄բարդ նախադասություններում: Առհասարակ նախադասության տեսակների փոխարինումները պայմանավորված են ինչպես հայերենի և ռուսերենի լեզվական օրինաչափություններով, այնպես էլ որոշ դեպքերում թարգմանչի նախընտրություններով, բնագրի նրբիմաստները արտահայտելու անհրաժեշտությամբ, երբեմն նաև թարգմանության այլ տարբերակների բացակայությամբ: Առավել հետաքրքիր է պատկերը միակազմ նախադասությունների դեպքում. հայերենին հատուկ լինելով այդ տեսակի նախադասությունների կիրառությունը, որոնք մեծ մասամբ կազմությամբ և արտահայտման ձևով համընկնում են ռուսերենի միակազմ նախադասություններին, թարգմանիչը նախապատվությունը տալիս է երկկազմ նախադասություններին:

Գրականություն

Ասատրյան Մ. 1987, Ժամանակակից հայոց լեզու. շարահյուսություն, Երևան, ԵՊՀ հրատ., 368 էջ:

Պիկուլ Վ. 1989, Ֆավորիտ, թարգմ.՝ Վարդանյան Վ.Բ., հ. 1, Երևան, «Հայաստան», 776 էջ:

Պիկուլ Վ. 1989, Ֆավորիտ, թարգմ.՝ Վարդանյան Վ.Բ., հ. 2, Երևան, «Հայաստան», 742 էջ:

Ջահուկյան Գ. 1974, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 586 էջ:

Арзуманян Э.Р., Исраелян Л.Х., Мелик-Оганджанян И.М., Тер-Аракелян Р.А., Хачатурян Н.А., Шахбазян Р.М. 2003, Русский язык: учебник для факультетов с армянским языком обучения, Ереван, изд. Ереванского университета, 487 с.

Бархударов Л.С. 1975, Язык и перевод: вопросы общей и частной теории перевода, Москва, «Международные отношения», 240 с.

Валгина Н.С. 2003, Современный русский язык. Синтаксис, Москва, «Высшая школа», 416 с.

Гарбовский Н.К. 2007, Теория перевода: учебник, Москва, изд. Московского университета, 544 с.

Комиссаров В.Н. 2002, Современное переводоведение: учебное пособие, Москва, «ЭТС», 424 с.

Комиссаров В.Н. 1990, Теория перевода (Лингвистические аспекты), Москва, «Высшая школа», 253 с.

Левицкая Т.Р., Фитерман А.М. 1963, Теория и практика перевода с английского языка на русский, Москва, изд. литературы на иностранных языках, 125 с.

Пикуль В.С. 1984, Фаворит, т. 1, Ленинград, «Лениздат», 583 с.

Пикуль В.С. 1984, Фаворит, т. 2, Ленинград, «Лениздат», 550 с.

Подгайская И.М. 2019, Лексические и грамматические проблемы перевода: учебное пособие, Донецк, «Донецкий национальный университет», 149 с.

Рецкер Я.И. 1982, Пособие по переводу с английского языка на русский язык, изд. 3-е, Москва, «Просвещение», 159 с.

Рецкер Я.И. 1974, Теория перевода и переводческая практика, Москва, «Международные отношения», 215 с.

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ Վ. ՊԻԿՈՒԼԻ «ՖԱՎՈՐԻՏ» ՎԵՊԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լիլիթ Ծատուրյան

Ամփոփում

Շարահյուսական փոխակերպումների պատճառները կարող են լինել ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական: Տարբեր համակարգեր ունեցող լեզուների միջև քերականական համապատասխանությունը դեպքերի գերակշիռ մասի դեպքում կարող է լինել միայն գործառութային՝ կախված մի շարք գործոններից: Շարահյուսական փոխակերպումների մի ստվար մասը թարգմանության մեջ նախադասության տեսակների փոխարինումն է, որոնցից են պարզ նախադասության փոխարինում բարդով և հակառակը, գլխավոր նախադասության փոխարինում երկրորդականով և հակառակը, համադասական նախադասության փոխարինում ստորադասականով և հակառակը, շաղկապով կապակցված նախադասությունների փոխարինում շարահարությամբ կապված նախադասություններով և հակառակը:

Վ. Պիկուլի «Ֆավորիտ» վեպի հայերեն թարգմանության մեջ (թարգմանիչ՝ Վ. Վարդանյան) առավել շատ են հանդիպում պարզ⇄բարդ նախադասությունների փոխարինումները: Առհասարակ նախադասության տեսակների փոխարինումները պայմանավորված են ինչպես հայերենի և ռուսերենի լեզվական օրինաչափություններով, այնպես էլ թարգմանչի նախընտրություններով, բնագրի նրբիմաստները արտահայտելու անհրաժեշտությամբ, երբեմն թարգմանության այլ տարբերակների բացակայությամբ:

Բանալի բառեր՝ շարահյուսական փոխակերպում, նախադասություն, լեզվական օրինաչափություն, փոխարինում, բնագիր, հականշային թարգմանություն, համարժեքություն:

СИНТАКСИЧЕСКИЕ ТРАНСФОРМАЦИИ В АРМЯНСКОМ ПЕРЕВОДЕ РОМАНА В. ПИКУЛЯ «ФАВОРИТ»

Лилит Цатурян

Резюме

Причины синтаксических трансформаций могут быть как лингвистическими, так и экстралингвистическими. Грамматическое соответствие между языками с разными системами может в подавляющем большинстве случаев быть только функциональным, что зависит от ряда факторов. Ключевой частью синтаксических трансформаций является замена типов предложения в переводе: замена простого предложения сложным и наоборот, главного предложения подчинённым и наоборот, сложносочинённого предложения сложноподчинённым, предложений, связанных союзом, бессоюзными предложениями и наоборот.

В армянском переводе романа В. Пикуля «Фаворит» (перевод В. Вартаняна) наиболее распространены замены простых⇄сложных предложений. В целом замена типов предложений определяется как лингвистическими особенностями армянского и русского языков, так и предпочтениями переводчика, необходимостью передать тонкости подлинника, а иногда и отсутствием других вариантов перевода.

Ключевые слова – синтаксическая трансформация, предложение, лингвистическая закономерность, замена, подлинник, антонимический перевод, эквивалентность.

SYNTAXIC TRANSFORMATIONS IN ARMENIAN TRANSLATION OF V. PIKUL'S NOVEL "THE FAVORITE"

Lilit Tsaturyan

Abstract

The reasons of syntactic transformations can be both linguistic and extra-linguistic. The grammatical correspondence between languages with different systems can be only functional in most cases, which depend on a number of factors. A key part of syntactic transformations is the substitution of sentence types in the translation, such as: substitution of a simple sentence with a compound one and vice versa, substitution of an independent clause with a dependent one and vice versa, substitution of a compound sentence with a complex one, substitution of sentences connected by subordinating conjunctions with non-conjunctive sentences and vice versa.

In the Armenian translation of V. Pikul's novel "Favorite" (translator V. Vardanyan) substitutions of simple⇄compound sentences are common. In general, the substitution of sentence types is determined both by the linguistic features of the Armenian and Russian languages, and by the preferences of the translator, the need to express the subtleties of the original, and sometimes the absence of other translation options.

Key words – syntactic transformation, sentence, linguistic regularity, substitution, original, antonymic translation, equivalence.

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԽՈՍՔԻ ԿԱՊԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ Հ. ԷԴՈՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Ամալյա Բարսեղյան

Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
ՀՀ, Երևան, Գրիգոր Լուսավորչի 15
Էլ. հասցե՝ amalyabarseghyan42@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 22.04.2023, գրախոսվել է 28.04.2023, ընդունվել է տպագրության 11.12.2023
ORCID: 0009-0006-4941-4724
DOI: 10.53548/0320-8117-2023.3-215

Ներածություն

Շարահյուսագիտության մեջ տարբերակում են կապակցության տեսակ, կապակցության բնույթ, կապակցության եղանակ և կապակցության միջոցներ: Խոսքի մեջ նախադասությունների կապակցման միջոցներն ըստ բնույթի բաժանվում են երկու խմբի՝ բառական/շաղկապներ, շաղկապական բառեր և այլ խոսքի մասերի պատկանող բառեր, «որոնք խոսքի մեջ կատարած շարահյուսական դերի հետ միասին հաճախ որոշակի հարաբերության մեջ են մտնում մեծ մասամբ նախորդ, երբեմն էլ հաջորդ նախադասության (կամ նախադասությունների) հետ և դրանով իսկ հանդես բերում իրենց կապակցական դերը և քերականական (շարահարություն, շարադասություն»)[1]:

Այս նկատառումով դիտարկենք կապակցման միջոցները «Ընտրանի»[2] գրքում: Գրքում զետեղված ժողովածուներն ունեն վերնագրեր, որոնք փոխադարձ կապի մեջ են բուն տեքստերի հետ՝ արտահայտելով բանաստեղծի հիմնական մտահղացումները, գաղափարները: Բանաստեղծությունները ներկայացնում են բանաստեղծի ու ընթերցողի, տեքստի ու բովանդակության բոլոր կապերի ամբողջությունը:

Բանաստեղծությունների մեծամասնությունն ունի վերնագիր, որ փոխադարձ կապի մեջ է բուն տեքստի հետ: Այստեղ անվերնագիր բանաստեղծությունները տրոհված են բացատ՝ աստղանիշ (xxx) կապերով, բանաստեղծություններ էլ կան, որոնց մասերը տրոհված են արաբական թվանշաններով (1, 2, 3 և այլն): Բանաստեղծության հատվածների անդամների իմաստային փոխհարաբերությունը մոտավորապես այնպիսին է, ինչպիսին բարդ նախադասության մեջ մտնող պարզ նախադասություններինը: Ինչպես նախա-

[1] Աբրահամյան 2004, 239:

[2] Վերցրել ենք «Ընտրանի» գիրքը, որտեղ զետեղված են նրա հրատարակած տասը ժողովածուների (Անդրադարձումներ (1964-1976), Պատկեր և կեսօր (1976-1980), Երկրային ժամանակ (1980-1983), Այժմ և միշտ (1983-1986), Քայլեր և ստվերներ (1987-1995), Հետգրություն (1996-2000), Երեք օր առանց ժամանակի (2002-2005), Փողոցի բաժանվող մասում (2005-2006), Կանգ առ, ես այստեղ եմ (2001-2012), Հենման կետ (2014-2015)) լավագույն ստեղծագործությունները:

դասությունների, այնպես էլ առանձին հատվածների միջև կապեր ստեղծում են բառերը, բառակապակցությունները, նախադասությունները, այնպես էլ ցուցաբառերը՝ որպես ներհամահենքային /ներկոնտեքստային/ նշանակման գործառությամբ, և կրկնությունը, որի ժամանակ փոխարինում չի կատարվում:

ա. *Շաղկապներ և շաղկապական բառեր:* Գ. Ջահուկյանը գրում է, որ «բուն տեքստային շաղկապների թիվը մեծ չէ՝ այնուհետև, այնուամենայնիվ, ընդհակառակը, այսպիսով, արդ, այսուհանդերձ, վերջապես, վերջիվերջո, ընդսմին և այլն»: Կապակցական գործառույթ ունեն նաև ավանդական քերականական կապի միջոցները, որոնք առանձին նախադասությունների կապի միջոցներ են:

Օրինակ՝ «*Եվ* անձրև էր գալիս (1): *Եվ* ոչ ոք չկար (2): / *Եվ* մենք նստեցինք թաց քարի վրա/ և արտասվեցինք (3): ....*Եվ* երեկո էր» (4) (էջ 401): Այստեղ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ նախադասությունները կապակցվում են *և* միավորիչ շաղկապով՝ արտահայտելով միավորական հարաբերություն, միաժամանակ կապակցվում են կրկնության եղանակով (և):

Բերենք այլ օրինակներ. «քո ստվերն ահա ճոճվում է/իմ դեմքին (1): Գնում եմ քո ծանոթ ստվերի ուղղությամբ (2): *Բայց այստեղ/չկաս դու* (3): *Բայց /այստեղ չկաս/դու (4): /Չկաս* (5) (էջ 408): 1-ին և 2-րդ նախադասությունները կապակցվում են շարահարությամբ՝ առանց շաղկապի: 3-րդ և 4-րդ նախադասությունները կապակցվում են *բայց* ներհակական շաղկապով՝ հակասման հարաբերությամբ և կրկնության եղանակով (այստեղ չկաս դու): 5-րդ նախադասությունը կապակցվում է 4-րդ նախադասության հետ դարձյալ կրկնության եղանակով (չկաս): «Նա իր *երգը* չափից դուրս մոտեցրեց կյանքին, /և *երգը* մոխրացավ նրա կրակից: (1): *Որպեսզի* իր *երգը* աշխարհում ապրեր, /նրանց միջև նա ինքը դարձավ առասպել» (2) (էջ 354): Այստեղ 2-րդ նախադասությունը *որպեսզի* նպատակային շաղկապով է կապակցվում 1-ին նախադասության հետ՝ նպատակային հարաբերությամբ, և *երգը* գոյականի կրկնությամբ՝ կրկնության եղանակով: «Մի գետ հոսում է երկուսի/միջև, ինչպես հոսում է մի հսկա դատարկություն, /որ ոչ մի մակույկ չի կարող անցնել մի ափից մյուսը (1): *Ուրեմն* ՝ ամեն խոսք նավարկություն է».... (2) Այստեղ *ուրեմն*՝ մեկնական շաղկապական բառով երկրորդ նախադասությունը կապակցվում է առաջին նախադասության հետ՝ արտահայտելով մեկնական հարաբերություն:

բ. Միջանկյալ բառեր, բառակապակցություններ, նախադասություններ: Հայտնի է՝ սրանք քերականորեն չեն կապվում այն նախադասության հետ, որի կազմում են,սակայն վերաբերականների նման արտահայտում են վերաբերմունք /հաստատում, ժխտում, երկբայում, բացատրություն, իմաստային հավելում/նախորդ նախադասության կամ նախադասությունների ասվածի նկատմամբ՝ կատարելով կապակցական դեր:

Վերոհիշյալ կապակցական դերով ուշագրավ են Հ. Էդոյանի «Ընտրանի» գրքի մի շարք բանաստեղծություններ: Այսպես՝ «Բանաստեղծները անցյալն են գուշակում, ապագան/փակ է նույնիսկ նրանց համար (1): Եվ ես չգիտեմ որտեղի՞ց եմ գալիս՝ անցյալի՞ց, ապագայի՞ց, գուցե/ոչ մի տեղից - (որտե՞ղ է Ոչ մի տեղը) - և ու՞մ պիտի տամ/ ձեռքիս ճյուղը կանաչ-» (2) (էջ 722): 2-րդ նախադասությունը միջանկյալ նախադասության (որտե՞ղ է Ոչ մի տեղը) միջոցով կապակցվում է 1-ին նախադասության հետ՝ արտահայտելով երկբայական վերաբերմունք 1-ին նախադասությունում ասվածի նկատմամբ: Նախորդող նախադասությունների ասվածի նկատմամբ իմաստային հավելում են արտահայտում միջանկյալ *համարյա մի շշուկ* բառակապակցությունը, լռություն, լռություն բառերը, *պատի վրա հանկարծ ժամացույցը մեռավ* նախադասությունը՝ կատարելով կապակցական դեր հետևյալ բանաստեղծությունում.

«Դիմացի պատի վրա- /գիշերվա ժամը մեկ/ (հանգչող ձայն): /Գիշերվա ժամը երկու /(համարյա շշուկ):/ Գիշերվա ժամը երեք (լռություն, լռություն): /Գիշերվա ժամը չորս/ (պատի վրա հանկարծ ժամացույցը մեռավ)» (էջ 531): Այս նախադասությունները կապակցված են նաև շարահարությամբ՝ առանց շաղկապի:

գ. *Կրկնությունը որպես բանաստեղծական խոսքի կապակցման եղանակ:* Բանաստեղծական խոսքի կապակցումն իրականացնելու կարևոր եղանակ է կրկնությունը: Բանաստեղծություններում կրկնվում են ոչ միայն բառերը, բառակապակցությունները, նախադասությունները, հատվածները, այլև բայի քերականական ժամանակաձևերը: Անվերնագիր բանաստեղծությունները տրոհված են բացատ՝ աստղանիշ (xxx) կրկնվող կապերով: Բանաստեղծություններ էլ կան, որոնց մասերը տրոհված են արաբական թվանշան (1, 2, 3 և այլն) կրկնվող կապերով: Օրինակ՝ «Անձրևն ահա կաթկթում է մայթերին, /անձրևն ահա կաթկթում է մայթերին, /որպես անդարձ կորած երազ, որպես հուշ, /անձրևն ահա կաթկթում է մայթերին (1): /Ես նայում եմ լուռ, ինքնամփոփ շենքերին, / կանգնած աղոտ լույսերի մեջ փողոցի/ ես նայում եմ լուռ, ինքնամփոփ շենքերին» (2):

Բանաստեղծության առաջին տունը նույնությամբ կրկնվում է վերջում (3-րդ տուն), իսկ 2-րդ տան 1-ին, 2-րդ, 4-րդ տողերն են կրկնվում (էջ 9):

Բանաստեղծությունում քերականական տարբեր իրողություններ առանձին-առանձին կարող են հանդես գալ կրկնությամբ: Այսպես՝ բայի ներկա քերականական ժամանակաձևերի կրկնությունը, ինչպես նաև *իմ* դերանվան կրկնությունը հետևյալ օրինակում առաջ է բերել խոսքի յուրահատուկ տպավորություն: Օր.՝ «*Իմ* գնացքը *կանգ է առնում* կայարանում: /*Իմ* նավը դանդաղ *մոտենում է* քո նավահանգստին: *Իմ* ցերեկն *ավարտվում է* քո գիշերվա մեջ: *Իմ* խոսքերը *սահում են* թեք զառիթափից/քո պարզված ձեռքերում» (էջ 146): Նախադասությունները կապակցված են նաև շարահարությամբ:

Ինչպես տեսանք, բանաստեղծություններում կրկնություն կապակցման եղանակը դրսևորվում է բառերով, բառակապակցություններով, նախադասություններով, տողերով, հատվածներով: Դա պայմանավորված է բանաստեղծական տեքստի ներքին ինֆորմատիվ ամբողջականությամբ:

դ. *Մեջբերվող ուրիշի ուղղակի խոսք:* Մեջբերվող ուրիշի ուղղակի խոսք ներմուծելով՝ փոխվում են հաղորդման կողմերը, կարող են փոխվել տվյալ հատվածի համար բնորոշ կապակցության միջոցներն ու եղանակները և հատվածի մեջ ներդրվել ուրիշ հաղորդմանը հատուկ միջոցներն ու եղանակները: Ինչպես հեղինակային ընդմիջարկումները, ուրիշ հեղինակներից կատարված մեջբերումները, օրինակները, հերոսների մտքերը, ուրիշների հաղորդումների վերարտադրությունը:

Գեղարվեստական խոսքին առավելապես հատուկ է մեջբերվող ուղղակի խոսքը սկսել նոր տողից՝ անջատման գիծ գործածելով: Մինչդեռ Հ. Էդոյանը իր բանաստեղծություններում անջատման գծի փոխարեն չակերտներ («») է օգտագործում: Բերենք հետևյալ օրինակը. «Ես կուզեմ, որ իմ հոգին/մտնի քո մարմնի մեջ, ձուլվի նրա մեջ, /այնտեղ անհետանա»/«Իսկ քո մարմի՞նը...»: /«Տար նրան քեզ հետ, նա ինձ այլևս/պետք չէ, սիրելիս» (էջ 733):

Հարցուպատասխանական այս ամբողջ բանաստեղծությունը երկխոսություն-մեջբերվող խոսքի տեքստային միավորների փոխհաջորդման լավագույն օրինակ է:

ե. *Կապակցական դեր են կատարում գոյականը, ածականը, թվականը, դերանունը, մակբայը, բայը, վերջինիս հատկապես դերբայական ձևերը:* Կապակցական դեր կատարող գոյականով հաճախ մասնավորվում է նախապես ասվածը՝ ընդհանուր հասկացությունը, կամ կատարվում է հակառակ երևույթը: Օրինակ՝ «Նայում եմ հեռացող *իրերին,* որոնցով լցված եմ ես (1): Բայց առավոտյան ես նորից կգտնեմ/*ցանկապատը, տանիքները, գերեզմանները, հայացքը, օդը,* (2)» (էջ 47):

Այստեղ *իրերը* ընդհանուր բնորոշումով արտահայտվում է այն, ինչ որ մասնավոր ձևերով նկարագրված է հաջորդ նախադասության մեջ: Բացի <u>իրերը</u> գոյականով կապակցումից, կապակցում է կատարվում *բայց* ներհակական շաղկապով, որով 2-րդ նախադասությունը կապակցվում է նախորդ նախադասության հետ՝ արտահայտելով հակասման հարաբերություն: Մեկ այլ օրինակ՝ «Հագիդ մի *խալաթ* և *հողաթափեր,*/ նստում ես մի հին բազկաթոռի մեջ: (1) /Մի *հեռուստացույց* (2): Մի *նկար՝ պատին* (3): Մի կյանք՝ ինչպես մի կորած ժամացույց (4): Կապակցման դեր կատարող *կյանք* ընդհանուր բնորոշումով գոյականը արտահայտում է այն, ինչ որ մասնավոր ձևերով նկարագրված է 1-ին, 2-րդ, 3-րդ նախադասություններում: 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ նախադասությունները կապակցվում են նաև շարահարությամբ:

Գոյականը կարող է կապակցվել նաև կրկնության եղանակով: Այսպես՝ «*Նիզակը* մինչև հիմա/ Նրա կողն է խոցում (1): Նայեք՝ այդ *նիզակը* /ո՞ւմ ձեռ-

քին է հիմա (2) (էջ 617): Այստեղ կապակցումը կատարվում նաև շարահարությամբ՝առանց շաղկապի:

Ածականը կապակցական դեր կատարելիս հաճախ հանդես է գալիս գոյականի հետ՝ բնութագրելով նախորդ նախադասության կամ նախադասությունների մեջ նկարագրված առարկան, երևույթը և այլն: Օրինակ՝ «Բայց *գիշերն* առջևում է (1): *Երկար* մի *գիշեր,* որ դեռ պետք է ապրել» (2): Այստեղ 2-րդ նախադասությունը կապակցվում է 1-ին նախադասության հետ կրկնության եղանակով (գիշեր), ինչպես նաև ածականի և գոյականի կապակցությամբ՝ բնութագրելով *գիշեր* գոյականին: Մեկ այլ օրինակ՝ «…*իմ ձայնն եմ* (1): Իմ *ձայնը ցածր է շատ* (2): /Ինձ մի պատասխանեք» (3): 2-րդ նախադասությունը կապակցվում է 1-ին նախադասության հետ *ցածր է շատ* (հատկանիշի չափ ցույց տվող բառով) բառերով՝ բնութագրելով *իմ ձայնը* շարահյուսական կապակցությունը նկարագրական եղանակով՝ արտահայտելով հատկանիշի տարբեր չափեր: Միաժամանակ կապակցում է կատարվում կրկնության եղանակով (իմ ձայնը): 3-րդ նախադասությունը կապակցվում է 2-րդ նախադասության հետ շարահարությամբ՝ առանց շաղկապի:

«Դերանունը, - նկատում է Ջահուկյանը, - որպես կապակցող բառ երկու գործառույթ ունի: Առաջինը ըստ էության իրադրական, երկրորդը՝ կոնտեքստային–իրադրական: Առաջին դեպքում նրանց նշանակությունը համապատասխանում է անմիջական ակտին, երկրորդ դեպքում հանդիսանում է նշանների նշան՝ ցույց տալով հարևան միավորի նշանակությունը, նույնպես կապված իրականության հետ միջնորդավորված ուրիշ լեզվական միավորի միջոցով»[3]: Օրինակ՝ «*Զգացմունքները* մեռնում են լռությունից (1): *Նրանք* մեռնում են նաև խոսքերից» (2): (էջ 303) 2-րդ նախադասության *նրանք* դերանունը կապակցվում է 1-ին նախադասության *զգացմունքները* գոյականի հետ՝ փոխարինման գործառույթով:

Կամ ՝ «*Ես* վերադառնում եմ, գտնում մի ավերակ, (1) *../Դու* վերադառնում ես գտնում ես ինձ-(2) *../Մենք* վերադառնում, գտնում մի աշխարհ (3) (էջ 307): Ընդհանրացման հարաբերությամբ է կապակցվում բանաստեղծության 3-րդ տունը (մենք), 1-ին (ես) և 2-րդ (դու) տների հետ՝ կատարելով կապակցական դեր:

Թվականով կապված նախադասությունները սովորաբար միմյանց նկատմամբ միավորական հարաբերության մեջ են, իսկ թվարկմանը նախորդող նախադասության նկատմամբ՝ մասնավորման կամ ընդհանրացման: Օրինակ՝ «…լսում եմ հոնդյունը Համաստեղության /և ճոնչյունը բացվող ու փակվող */յոթ դարպասների* (1): /*Առաջին դարպասը,* ուր մտնում եմ ես, /մի երեխա է.…(2): *Եվ հետո*- /հառաչելով անքնությունից, /Լուսինն է հայտնվում..» (3) (էջ 429):

[3] Джаукян 1999, 203.

Բերված օրինակում բանաստեղծության երեք տները կապակցվում են *յոթ դարպասներ, առաջին դարպաս և հետո (և* շաղկապով և թվարկման իմաստ ունեցող *հետո* բառով) թվարկման իմաստ ունեցող բառակապակցություններով՝ արտահայտելով մասնավորման հարաբերություն:

Կամ՝ «...Ձեռքիս մի կողմում *մի/անվերջություն,* և մյուս կողմում՝ *մի անվերջություն* (1): */Երկու անվերջություն* (2) (էջ 402): Բանաստեղծության բերված հատվածում 2-րդ նախադասության *երկու անվերջություն* բառակապակցությունը կապակցվում է 1-ին նախադասության հետ (մի անվերջություն)՝ արտահայտելով ընդհանրացման հարաբերություն, միաժամանակ 1-ին և 2-րդ նախադասությունները կապակցված են շարահարությամբ:

Մակբայները ևս հանդես են գալիս կապակցական դերով: Իրենց տարբեր իմաստներով (ժամանակ, տեղ, չափ, ձև և այլն) կապ են ստեղծում տվյալ և նախորդ նախադասությունների միջև: Օրինակ՝ «...բնապատկեր, որ լողում է հիշողության / էկրանի վրայով (1): *Նորից* բառը հեռանում է իր նշանածողից (2): *Նորից* ես այստեղ եմ,....» (3) (էջ 471): 2-րդ նախադասությունը կապակցվում է 1-ին նախադասության հետ *նորից* չափի մակբայով, 3-րդ նախադասությունը կապակցվում է նախորդ նախադասությունների հետ՝ դարձյալ *նորից* չափի մակբայով: Կապակցում է կատարվում կրկնության եղանակով *նորից* մակբայով: Մեկ այլ օրինակ՝ «Ճանապարհի վրա *դեռ* կան ուխտավորներ (1): /*Դեռ* կա նպատակ (2): /*Դեռևս* մի դուռ կա, որ կարող ես բախել» (3): Նախադասությունները կապակցվում են (*դեռ, դեռևս* մակբայներով) կրկնության եղանակով՝ արտահայտելով ժամանակային հարաբերություն:

Բայի դիմավոր ձևերը կապակցող դերով քիչ են գործածվում:Հանդիպում ենք գործողության ընդհանուրի հակադրությանը մասնավոր երևույթով արտահայտելուն և հակառակը, որով կապ է ստեղծվում համապատասխան նախադասությունների միջև:

Օրինակ՝ «Մեկը *ելնում է* (1): Մյուսը *իջնում,/ անցնում* ավազոտ իր ճանապարհով» (2) (էջ 344): Գործողության մասնավորման երևույթով (իջնում, անցնում) է կապակցվում 2-րդ նախադասությունը 1-ին նախադասության *ելնում* բայի հետ՝ կապ ստեղծելով երկու նախադասությունների միջև: Այս նախադասությունները կապակցվում են նաև շարահարությամբ:

Կապակցական դեր են կատարում դերբայական ձևերը, հատկապես հարակատար, ենթակայական, անորոշ դերբայները: Օրինակ՝ «...քո ամեն հարցի մեջ դու *մահանում ես* (1): *Մեռածին* նա չի փնտրում» (2): Այստեղ *մեռածին* հարակատար դերբայը՝ գոյականաբար գործածությամբ, կապակցում է 1-ին նախադասության հետ: Կապակցում է կատարվում նաև շարահարությամբ:

գ. *Շարահարություն:* Շարահարության դեպքում բացակայում են նախադասությունների կապակցման բառական միջոցները: Այն կատարվում է քերականական միջոցներով: Ս. Աբրահամյանը գրում է. «Շարահարությունը կապակցման քերականական միջոց է, որի դեպքում չկան կապակցող շաղ-

կապներ, շաղկապական բառեր, այլ նախադասությունները պարզապես գործածվում են կողք կողքի և իրար հետ կապվում են իմաստով, շարադասությամբ»[4]:

Օրինակ՝ «Արդեն մթնում է (1): /Հրավառության վերջին կայծերը հանգչում են օդում (2): Տոնն ավարտվում է» (3): (էջ 251) Բերենք շարահարության մեկ այլ օրինակ՝ «Ջուրը ծովինն է, գույնն է երկնքինը (1): /Հանգիստը ջրի մեջ է, շարժումը՝ երկնքի (2): /Խոստումը երկնքինն է, զայրույթը՝ ծովինը» (3):

Հ. Էդոյանի պոեզիայում մի շարք բանաստեղծություններ կետադրություն չունեն, կամ բանաստեղծության վերջում է վերջակետ («Երկու կղզիներ», «Ո՞ւր էր», «Ոսկեզօծ մեղուներ», «Միասին ես ու դու», «Արտո Սաֆարյանին», «Ճանապարհորդ», «Նորից բլուրներ» և այլն): Առանց դադարների (կետադրական նշանների) արտասանական, ինչական հատկանիշները առավել միասնական են դրսևորվում, որը հետևանքն է տեքստի ներքին զարգացման առանձնահատկության:

Եզրակացություններ

1. Բանաստեղծական խոսքը կապակցված ամբողջություն է, որն իրականանում է որոշակի միջոցներով ու եղանակներով՝ պայմանավորված նյութի և մտահղացման ամբողջությամբ:

2. Բանաստեղծական խոսքի կառուցվածքի լեզվական առանձնահատկությունների քննությունը ցույց է տալիս, որ խոսք կազմող ինքնուրույն նախադասությունների կապերն ավելի սերտ են, քան առանձին հատվածների կապերը, սրանց կապերն էլ ավելի սերտ են, քան առանձին գլուխների կապերը:

3. Խոսքի նման կապակցումների սերտության աստիճանի նվազումը պայմանավորված է նախադասությունների առավել ինքնուրույնությամբ:

4. Բանաստեղծություններում կրկնությունը՝ որպես կապակցման եղանակ, դրսևորվում է բառերով, բառակապակցություններով, նախադասություններով, տողերով, հատվածներով: Դա պայմանավորված է բանաստեղծական տեքստի ներքին ինֆորմատիվ ամբողջականությամբ:

5. Առանց դադարների (կետադրական նշանների) արտասանական, ինչական հատկանիշները առավել միասնական են դրսևորվում, որը հետևանքն է տեքստի ներքին զարգացման առանձնահատկության:

Գրականություն

Աբեղյան Մ. 1974, Երկեր, հ. Զ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 848 էջ:

Աբրահամյան Ս., Պառնասյան Ն. և ուրիշ. 1976, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 857 էջ:

[4] Աբրահամյան 2004, 251:

Աբրահամյան Ս. 2004, Հայոց լեզու. շարահյուսություն, բուհական ձեռնարկ, Երևան, «Լույս», 287 էջ:
Ջահուկյան Գ. 1974, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 565 էջ:
Պետրոսյան Հ., Գալստյան և ուրիշ. 1975, Լեզվաբանական բառարան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 316 էջ:
Էդոյան Հ. 2016, Ընտրանի, Երևան, «Հայագիտակ», 800 էջ:
Джаукян Г. 1999, Универсальная теория языка, Москва, изд. не указано, 320 с.

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԽՈՍՔԻ ԿԱՊԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ Հ. ԷԴՈՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Ամալյա Բարսեղյան

Ամփոփում

Բանաստեղծական խոսքը կապակցված ամբողջություն է, որը իրականանում է որոշակի միջոցներով ու եղանակներով՝ պայմանավորված նյութի և մտահղացման ամբողջությամբ: Բանաստեղծական խոսքի կառուցվածքի լեզվական առանձնահատկությունների քննությունը ցույց է տալիս, թե ինչ է օգտագործվում լեզվական միավորների կապակցության համար: Պարզվում է, որ առանձին նախադասությունների կապերն ավելի սերտ են, քան առանձին հատվածների կապերը, սրանց կապերն էլ ավելի սերտ են, քան առանձին գլուխների կապերը: Բանաստեղծական խոսքի նման կապակցումների տարբերությունները պայմանավորված են նախադասությունների առավել ինքնուրույնությամբ:

Բանաստեղծություններում կրկնությունը՝ որպես կապակցմամ եղանակ, դրսևորվում է բառերով, բառակապակցություններով, նախադասություններով, տողերով, հատվածներով: Դա պայմանավորված է բանաստեղծական տեքստի ներքին ինֆորմատիվ ամբողջականությամբ:

Բանալի բառեր՝ բանաստեղծական խոսք, կապակցման բառական միջոցներ, քերականական միջոցներ, շարահարություն, կրկնություն, տող, մաս:

СРЕДСТВА СВЯЗИ ПОЭТИЧЕСКОЙ РЕЧИ В ПОЭЗИИ Г. ЭДОЯНА

Амалия Барсегян

Резюме

Поэтическая речь представляет собой связное целое, реализуемое определенными средствами и способами, полностью обусловленное материальной идеей. Исследуя лингвистические особенности строения последнего, мы заметили, что связи предложений, составляющих частей ближе, чем связи отдельных глав. Это обусловлено большей независимостью предложений.

Повторения в поэзии как способ сочетания выражаются словами, словосочетаниями, строками и фрагментами, что связано с целостностью внутреннего содержания поэтического текста.

Ключевые слова – поэтическая речь, средства словесных сочетаний, средства грамматических сочетаний, синтаксис, повторение, строка, фрагмент.

MANIFESTATIONS OF POETIC SPEECH CONNECTION MEANS IN H. EDOYAN'S POETRY

Amalia Barseghyan

Abstract

Poetic speech is a coherent whole, realized by certain means and methods, completely conditioned by a material idea. Exploring the linguistic features of the structure of the latter, we noticed that the connections of sentences, constituent parts, are closer than the connections of individual chapters. This is due to the greater independence of the proposals.

Repetition in poetry, as a way of combination, is manifested by words, phrases, lines and parts. This is due to the integrity of the inner content of the poetic text.

Key words – poetic speech, means of word combinations, means of grammatical combinations, syntax, line, fragment.

ԽՐԱՏՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՄԻ ՇԱՐՔ ԵՐԿԵՐՈՒՄ

Նելլի Պետրոսյան

ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի հայցորդ
ՀՀ, Երևան, Աբովյան 52
Էլ. հասցե՝ n.l.petrosyan@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 20.09.2023, գրախոսվել է 28.11.2023, ընդունվել է տպագրության 11.12.2023
ORCID: 0000-0001-5543-0962
DOI: 10.53548/0320-8117-2023.3-224

Ներածություն

Հայ մատենագրության սկզբնավորումը տեղի ունեցավ V դարի առաջին կեսին: Այն անմիջականորեն պայմանավորված էր հայ գրերի և հայկական դպրոցների ստեղծմամբ, ինչպես նաև կոչված էր ամրապնդելու Հայ եկեղեցու և քրիստոնեության դիրքերը մեր երկրում:

Գրերի գյուտից և դպրոցների բացումից հետո գլխավորապես ուշադրություն է դարձվում գրագիտության տարածմանը Հայաստանի բոլոր շրջաններում[1]: Այս գործը կազմակերպվում է վաղօրոք կշռադատված ծրագրով, որի էությունը թելադրվում էր ժամանակի հասարակական-քաղաքական կյանքի առավել կարևոր հանգամանքներով: Այս առումով խիստ ուշագրավ է, որ կրթական գործի հեռատես և շրջահայաց կազմակերպիչները՝ Ս. Սահակն ու Ս. Մաշտոցը, ինչպես հետևում է Կորյունի մի վկայությունից, ուսուցիչներ պատրաստելու, հոգևոր դասին լուսավորելուն զուգընթաց, հենց սկզբից ուշադրության կենտրոնում են պահել արքունիքի մարդկանց, երկրի ավագանու և կանոնավոր զորքի կրթության, լուսավորության և բարոյախրատական դաստիարակության խնդիրը, ըստ երևույթին քաջ գիտակցելով այն կարևոր դերը, որ առաջիկա ազատագրական պայքարում վերապահված էր հասարակության հենց այդ խմբերին:

Դյուրին չէր կրթամշակութային գործի ղեկավարների առջև ծառացած խնդիրը: Անհրաժեշտ էր, ինչպես գրում է Կորյունը, միանգամից երեք գործ անել՝ **թարգմանել**, **գրել** և **ուսուցանել**, որոնց իրականացմանը մեծ եռանդով ձեռնամուխ են լինում Ս. Սահակն ու Ս. Մաշտոցը՝ իրենց աշակերտների հետ միասին. «Որոց կանոն եւ օրինակ զիւրեանց անձանց արգասիս եդեալ, եւ պատուիրեալ կալ ի նմին կանոն»[2]:

Հայ մատենագրության սկզբնավորումը հիմնականում կապում ենք Ս. Սահակ Պարթևի և Ս. Մեսրոպ Մաշտոցի և նրանց աշակերտների գործունեության հետ, երբ, թարգմանական գրականությանը զուգընթաց, զարկ

[1] Աբեղյան 1968, 136:
[2] Կորյուն 1980, 61:

տրվեց նաև հայ ինքնուրույն գրականության առաջացմանը: Կարող ենք ասել՝ V դարի հայ գրականությունը զարգացավ երկու ուղղությամբ՝ սկզբում թարգմանական, ապա՝ ազգային: Ընդամենը մի քանի տասնամյակի տարբերությամբ հրապարակ իջան հայ ինքնուրույն մատենագրության առաջին նշանավոր հուշարձանները, մասնավորապես պատմագրության դասական ստեղծագործությունները, Կորյունի և Ագաթանգեղոսի, Եղիշեի և Խորենացու, Փավստոսի և Փարպեցու պատմական երկերը, ինչպես նաև Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» փիլիսոփայական-աստվածաբանական երկը, որոնց միջոցով ազդարարվեց հայ ազգային և եկեղեցական մատենագրության ծնունդը: Սա հայ մատենագրության սկզբնավորման և ձևավորման գործընթացի մի կարևոր առանձնահատկությունն է, քանի որ այս երկերն ունեն նաև գրական-գեղարվեստական արժանիքներ և նպաստել են հայ գեղարվեստական արձակի սկզբնավորմանը, իսկ ժանրային բնույթով ամփոփում են բարոյակրթական, խրատական դաստիարակչական հիմնադրույթներ:

Հայ գրականության սկզբնավորման գործում էական դեր ունեն նաև տեղական գրական ավանդները, հայ բանավոր և գրավոր բանահյուսությունը:

Հայագիտության մեջ բանասերներից շատերն են անդրադարձել նախամաշտոցյան հայ գրերի գոյության փաստին, կարծիքներ են հնչել օտար տառերով (հունարեն կամ ասորերեն), բայց հայոց լեզվով գրավոր գրականություն ունենալու մասին: Դժբախտաբար այդ կարծիքներն ապացուցող որևէ գրավոր հատված մեզ չի հասել[3]:

Ի մի բերելով վերը շարադրվածը՝ հարկավոր է արձանագրել, որ մինչև V դարի հայ մատենագրության սկզբնավորումը արդեն IV դարի սկզբներին Գրիգոր Լուսավորիչն ստեղծել էր կրոնական բնույթ ունեցող երկեր, որոնց շարքում առանձնանում է մեր եկեղեցական մատենագրության գանձերից մեկը՝ «Հաճախապատում ճառքը»:

Խրատների դերն ու նշանակությունը Գրիգոր Լուսավորչի երկերում

Անկյունադարձային էր Ս. Գրիգոր Լուսավորչի դերը հայ ժողովրդի քրիստոնեացման գործում: Նրա անձն ու պատմական վաստակը անգնահատելի են հայ եկեղեցու պատմության մեջ: Սակայն իր անունով ավանդված գրական ժառանգությունը պետք է համարել հայ եկեղեցական մատենագրության առաջին կարևոր երկերը: Երկեր, որոնք հիմնականում հայտնի են գիտական ուսումնասիրությամբ հետաքրքրված մասնագետներին:

Այդուհանդերձ, հակառակ այն իրողության, որ դեռ չունեինք հայոց գրեր, հայ եկեղեցական ավանդությունը Ս. Գրիգոր Լուսավորչի անունով մեզ է ավանդել մի քանի արժեքավոր երկեր, որոնց շարքում իր բացառիկ նշանա-

[3] Հայրապետյան 1963, 11:

կությամբ առանձնանում է «Հաճախապատում ճառք» ժողովածուն[4]: Այն հայ մատենագրության ինագույն և ամենակարևոր հուշարձաններից մեկն է:

Ճառախոսական երկերն ու քարոզներն իրենց բուռն զարգացումն են ապրում հատկապես I-IV դարերում, երբ հրամայական անհրաժեշտություն կար (հիմնականում ոչ գրաճանաչ ժողովրդին) բացատրելու Ս. գիրքը և քրիստոնեական հայտնության բոլոր կողմերը: Այս նպատակով թարգմանված՝ ընդհանրական եկեղեցու հայրերի ու վարդապետների ճառերը կարևոր խթան են դառնում, որ հայ իրականության մեջ դրանց հետևողությամբ գրվեն համաբնույթ ճառեր (ինչպիսիք են Գրիգոր Լուսավորչի անվամբ հայտնի «Հաճախապատումը», հետագայում՝ Հովհան Մանդակունու, Գրիգոր Տաթևացու և այլոց ճառերը)[5]:

«Հաճախապատում ճառքը» բազմապիսի ճառերի ժողովածու է: Այն ընդգրկում է տարբեր ծավալի և բովանդակության ԻԳ (23) ճառեր՝ նվիրված քրիստոնեական վարդապետության, բարոյականության և կենցաղավարության առանձին հարցերի[6]:

Ճառերի դասավորության մեջ չկա որևէ օրինաչափություն կամ տրամաբանություն: Ուղղակի հեղինակը ձգտում է խրատել և ուսուցանել: Ճառերի մեծ մասը ԺԷ (17) բարոյախրատական բնույթի «հոգևոր խրատներն» են, որտեղ հեղինակը խոսում է քրիստոնեական առաքինությունների և բարոյականության մասին. հավատքի հաստատություն, պահոց ամրություն, սեր, հեզություն, ապաշխարանք, գթություն, զղջում, աղքատասիրություն և բարեգործություն: Զգուշացնում է անառակություններից, տարբեր երկրային գայթակղություններից, չարագործություններից և այլնից[7]: Իսկ մնացած ճառերը ներառում են Ամենասուրբ Երրորդության, արարչագործության, մարդու ստեղծման, ազատ կամքի, բարու և չարի հարցերը:

Թեև ճառերի նյութը կրոնաբարոյական է, սակայն ճառերն ընդհանուր առմամբ ունեն խրատական, դաստիարակչական և ուսուցողական բնույթ ու նկարագիր, և, լինելով տարբեր ծավալի ու բովանդակության, դրանցում հնարավոր է առանձնացնել քրիստոնեական վարդապետությանը, բարոյականությանը և կենցաղավարությանը վերաբերող առանձին հարցեր նույնպես:

Հեղինակն իր խոսքն ազդու և տպավորիչ դարձնելու համար դիմել է ճարտասանական բազմաթիվ հնարքների: Այդ շարքում կարևոր տեղ են զբաղեցնում ոճական կրկնությունները, երբ յուրաքանչյուր տող կամ պարբերություն սկսվում է միևնույն բառով կամ արտահայտությամբ:

Հռետորական արվեստի բնորոշ հնարներից է նաև հակադրությունների գործածությունը, որը նույնպես հաճախակի է հանդիպում ճառերում:

---

[4] Սրբոյ Հօրն Մերոյ երանելւոյն Գրիգորի Լուսաւորչի Հաճախապատում ճառք լուսաւորք 1894, 5:
[5] Տեառն Յովաննու Մանդակունւոյ Հայոց հայրապետի ճառք 1860, 219:
[6] Սրբոյ Հօրն մերոյ Գրիգոր Լուսավորչի «Յաճախապատում ճառք և աղոթք» 1838, 4:
[7] Սրբոյ Հօրն մերոյ երանելւոյն Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք 1894, 96:

Մեծ տեղ են զբաղեցնում նաև համեմատությունները, որոնց նյութը հեղինակը վերցնում է Ս. Գրքից, առօրյա կյանքի երևույթներից:

Ճառերը գրված են պարզ, մատչելի լեզվով, դրանք կարծես բանավոր քարոզների ու խրատների գրառում լինեն՝ հասցեագրված ոչ միայն հայ եկեղեցու վարդապետներին և հոգևորականներին, այլև հասարակ ժողովրդին: Այս առումով հասկանալի է դառնում, որ հեղինակի խոսքը, անկասկած, ուղղված է եղել նորադարձ քրիստոնյաներին:

Հայ մատենագրության մեջ Ս. Գրիգորի անունով մեզ հասած նրա մյուս երկերը[8] ևս էական ազդեցություն են թողել հայ քրիստոնեական մտքի հետագա զարգացման վրա: Թեպետ այդ երկերի հեղինակային պատկանելությունը բանասիրության մեջ ևս կասկածի տակ է առնվել, բայց միայն Լուսավորչի անունը կրելը ցույց է տալիս այդ երկերի վայելած հեղինակությունը: Ս. Գրիգոր Լուսավորչի անունով հայտնի են երկու հիմնական երկեր՝ «Հաճախապատում ճառքը» և «Ս. Գրիգորի վարդապետությունը», ինչպես նաև այլ բնագրեր, որոնք հիմնականում էլի առանձնանում են իրենց ճառախոսական բնույթով:

Գրերի գյուտից և Աստվածաշնչի հայերեն թարգմանությունից հետո մեր թարգմանիչ վարդապետները մեծ ուշադրություն են դարձնում նաև ճառերի թարգմանության վրա:

Բացի հույն և ասորի եկեղեցական հայրերի գրվածքների ու ճառերի թարգմանություններից ճառ են գրում նաև մեր եկեղեցու հայրապետներն ու վարդապետները:

Սակայն, ըստ մեր վաղ շրջանի պատմիչների և մատենագիրների վկայության, Գրիգոր Լուսավորիչը ոչ միայն հայ հոգիների Լուսավորիչն է՝ «զմերոյ լուսավորութեանցն լուսավոր վերակացուն», ինչպես նրան բնութագրել է Խորենացին, այլև «մերոյ լուսավորութեան նախաշաւիղ և նահապետը», այսինքն՝ հիմնադիրը մեր եկեղեցական մատենագրության[9]:

Արդարև, մատենագրական հնագույն վկայությամբ՝ Լուսավորչին ընծայված երկերն իրենց բովանդակությամբ հիմք և աղբյուր են հանդիսացել մեր հետագա դարերի մատենագիրների և աստվածաբանների համար իրենց մատենագրական երկասիրությունները շարադրելիս[10]:

Եզրակացություններ

Անգնահատելի է Լուսավորչի անվանակիր երկերի նշանակությունը, բայց ավելի կարևոր է այն, որ նա վերստին կյանքի կոչեց ժողովրդին իր առաքելական քարոզչությամբ, վարդապետությամբ, իսկ մատենագրական

[8] Մատենագիր Հայոց 2003, 7:
[9] Մովսես Խորենացի 1913, 247:
[10] Պետրոսյան 2015, 194-203:

երկերով զարկ տվեց հարյուրավոր սերունդների կրթության գործին՝ մշտապես խրատելով քրիստոնեական առաքինի կյանք:

Ամբողջացնելով կարող ենք եզրակացնել, որ Լուսավորչի երկերում միաժամանակ են արտացոլված ու արժևորված բարոյական արժեքներն ու խրատները, քանի որ նա երկուսն էլ առաջնային էր համարում: Այդ նպատակով է, որ իր խոսքն ավելի հասու դարձնելու համար գերապատվությունը տվել է խոսքի դյուրամատչելի արվեստին, թեպետ բնական է համարել նաև խոսքի ոճային բազմազանությունը: Այս առումով բացառիկ է նրա ստեղծագործությունների դերը, որի ազդեցությամբ խոսքի դյուրըմբռնելի արվեստը բացեց իր հաստատուն հունը նաև հետագա դարերի համար:

Գրիգոր Լուսավորիչը մեր եկեղեցական մատենագրության առաջին երախտաշատ հեղինակն է, իսկ նրա մատենագրական վաստակն իր ուրույն ու արժեքավոր տեղն է գրավում հայ մշակույթի գանձարանում:

Գրականություն

Աբեղյան Մ. 1968, Երկեր, հ. Գ, Երևան, ՀՍՍՀ գիտ. ակադեմ., 694 էջ:

Կորյուն 1941, Վարք Մաշտոցի, Երևան, «Հայպետհրատ», 126 էջ:

Հայրապետյան 1963, Պատմութիւն հայ մատենագրութեան նախաքրիստոնէական շրջանից մինչև Ժ դար, Ա մաս, տպ. «Մոդերն», 160 էջ:

Մատենագիր Հայոց 2003, հ. Ա (ե դար), Անթիլիաս, 1288 էջ:

Մովսես Խորենացի 1913, Պատմություն հայոց, Տփղիս, Ս. Էջմիածին, 396 էջ:

Սրբոյ Հօրն Մերոյ երանելւոյն Գրիգորի Լուսաւորչի Հաճախապատում ճառք լուսաւորք 1894, առաջաբ., համեմատութ. և ծանոթութ. Ա. Տէր-Միքելեյանի, Էջմիածին, տպ. Մայր աթոռ Ս. Էջմիածնի, 354 էջ:

Սրբոյ Հօրն մերոյ Գրիգոր Լուսավորչի «Յաճախապատում ճառք և աղոթք» 1838, Վենետիկ, Ս. Ղազար, 222 էջ:

Տեառն Յովաննու Մանդակունւոյ Հայոց հայրապետի ճառք 1860, Բ տպագր. Վենետիկ, Ս. Ղազար, 219 էջ:

Պետրոսյան Ն. 2015, Գրիգոր Լուսավորչին ընծայված մանր երկերը, Իմաստություն, Երևան, էջ 194-203:

ԽՐԱՏՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՄԻ ՇԱՐՔ ԵՐԿԵՐՈՒՄ

Նելլի Պետրոսյան

Ամփոփում

Ս. Գրիգոր Լուսավորչի անունով մեզ հասած երկերում արտացոլված խրատների դերն ու նշանակությունը էական ազդեցություն է թողել հայ ժողովրդի քրիստոնեական կրթության և դաստիարակության զարգացման վրա:

Հայ եկեղեցական մատենագրության մեջ երկերը տարբերվում են իրենց բովանդակային առանձնահատկություններով և այդ առումով բացառիկ կարևորություն

ունեն: Մինչ V-րդ դարը, հայ մատենագրության և գրերի ստեղծումից առաջ արդեն հայտնի էին խրատական, բարոյակրթական ճառեր ու քարոզներ բովանդակող երկեր:

Բանալի բառեր՝ «Հաճախապատում ճառք», Գրիգոր Լուսավորիչ, բարոյա-խրատական, մանր երկեր, քրիստոնեություն, կրթություն, դաստիարակություն:

РОЛЬ И ЗНАЧЕНИЕ ПОУЧЕНИЙ В РЯДЕ ПРОИЗВЕДЕНИЙ ГРИГОРИЯ ПРОСВЕТИТЕЛЯ

Нелли Петросян

Резюме

Роль и значение поучений, отраженных в произведениях, известных нам под именем Св. Григория Просветителя, оказали значительное влияние на развитие христианского образования и воспитания армянского народа.

В содержательном плане армянская церковная литература имеет исключительную значимость. В V веке, до создания армянской богословской литературы и письменности, уже были известны сочинения, содержащие поучительные, нравственно-воспитательные речи и проповеди.

Ключевые слова – «Многовещательные речи», Григорий Просветитель, нравственно-воспитательный, маленькие сочинения, христианство, образование, воспитание.

THE ROLE AND SIGNIFICANCE OF TEACHINGS IN GREGORY THE ILLUMINATOR'S WORKS

Nelli Petrosyan

Abstract

The role and significance of teachings reflected in works known to us by the name of St. Gregory the Illuminator, had a significant impact on the development of Christian education and the upbringing of the Armenian people.

In Armenian Church bibliography, works differ in their content and in this sense have exceptional significance.

In the 5th century, before the creation of the Armenian literature and writing, works containing instructive, moral and educational speeches and sermons were already known.

Key words – "Faithful Speech", Gregory the Illuminator, moral-educational short works, Christianity, education, upbringing.

СПЕКТАКЛЬ ЖАКА АКОПЯНА ПО ПЬЕСЕ «ЗОВ ЖУРАВЛЯ» НА КАНАДСКОЙ СЦЕНЕ

Анаит Бекарян

Кандидат филологических наук
Институт искусств НАН РА
РА, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
Эл. адрес: abekaryan@mail.ru
Статья представлена 15.04.2023, рецензирована 14.09.2023, принята к публикации 11.12.2023
ORCID: 0000-0001-7980-4180
DOI: 10.53548/0320-8117-2023.3-230

> В дар тому древнему, но всегда молодому, многострадальному народу, одной из клеток сердца которого я являюсь, одним из ударов этого сердца, одной его искрой являюсь по воле Божьей[1].

Вступление

В 1946-1949 гг. часть рассеянных по всему миру армян репатриировала в Армению[2]. Претворение в жизнь этой мечты армян Диаспоры, по словам Жака Акопяна, стало для него «источником вдохновения» в создании пьесы «Зов журавля»[3].

Творческое становление Жака Акопяна

Известный поэт армянской Диаспоры Жак Акопян родился в 1917 г. в Иерусалиме. Еще в детские годы он с семьей переехал в Египет, где учился в гимназиях Галустян и Перперян и во французском лицее. В 1942 г. Ж. Акопян окончил Каирский университет, получив квалификацию химика-фармацевта. В 1968 г. переехал в США, где обосновался в городе Пасадена (штат Калифорния).

---

[1] Յակոբեան 1986, 2:

[2] После второй мировой войны по решению правительства СССР от 21-го ноября 1945 г. было дано разрешение на массовую репатриацию армян Диаспоры.

[3] Յակոբեան 1986, 5:

В 1938 г. им был издан первый поэтический сборник «Тайный путь», удостоенный положительного отзыва В. Текеяна. В дальнейшем вышли в свет «Медовый месяц» (1943), «Смерть человека» (1947, посвящается памяти В. Текеяна), «Возрождение» (1949), «Златолавровый» (1957), «Рожденный Масисом» (1963), «Факелы» (1964), «Нить бисера» (1983) и другие сборники. Ж. Акопян является автором патриотических пьес, проникнутых ностальгией по родине. Пьеса «Зов журавля», написанная им в 1954 году, впервые была издана в 1956 г., в Бейруте, в журнале «Акос» («Борозда»)[4] союза выпускников гимназии «Ншан Паланчян». Сюжет пьесы «Зов журавля» был почерпнут им из западноармянской жизни.

Жорж Саргисян как постановщик пьесы «Зов журавля»

В основу композиции пьесы были заложены патриотические чувства и переживания[5]. Пьеса впервые была поставлена в Бейруте, в 1977 году, при участии театральной труппы «Гаспар Ипекян» в театре «Акоп (Яков) Тер-Мелконян». Постановка была осуществлена заслуженным театральным деятелем, талантливым актером и режиссером Ж. Саргисяном[6]. С первого дня спектакль был принят зрителем с огромным воодушевлением. За несколько месяцев его успели посмотреть более 20.000 чел. Даже в условиях нестабильной политической ситуации, царившей в стране, спектакль был представлен в Бейруте 41 раз. В дальнейшем он был показан в Алеппо (7 раз) и дважды – в Дамаске.

Отметим, что пьеса «Зов журавля» в постановке Паргева Пелтекяна в 1979 году была представлена Общенациональной театральной труппой

---

[4] Տե՛ս Ակօս 1956, մարտ, թիւ 3 (80), 1-17, ապրիլ, թիւ 4 (81), 6-17, մայիս թիւ 5 (82), 13-26, հուլիս, թիւ 7 (84), 21-33, օգոստոս, թիւ 8 (85), 45-55, սեպտեմբեր, թիւ 9 (86), 9-26, հոկտեմբեր, թիւ 10 (87), 23-37, նոյեմբեր, թիւ 11 (88), 18-28:

[5] Գեղարդ, N 54, 1981, 20:

[6] Жорж Саргисян (1915-1982), актер, режиссер и переводчик. Учился в Алеппо, в Национальной гимназии Киликян и в бейрутской гимназии Св. Ншан. В 1941 г. стал актером-основателем театральной труппы Общенационального культурного союза «Гаспар Ипекян», а в 1952-1980 гг. был ее руководителем. Принимал активное участие в театральной жизни ливанской армянской Диаспоры. С театральной труппой «Гаспар Ипекян» гастролировал в Иране, Сирии, Ираке, Египте, на Кипре, в США, Канаде, Аргентине и Бразилии. Является постановщиком свыше 40 пьес, в их числе пьесы Мушега Ишхана «Как трудно умереть», Шанта – «Княгиня павшей крепости», «Древние боги», «Император», Генрика Ибсена – «Враг народа», Николая Гоголя – «Ревизор», Роже Фердинанда – «Примак», Раффи – «Золотой петушок», Ширванзаде – «Хаос» и др. В своих постановках он играл волевых персонажей – Игумена («Древние боги»), Никифора («Император»), Доктора Штокмана («Враг народа»), Городничего («Ревизор»), Симона Шотара («Примак»), Петроса ага Масисяна («Золотой петушок») и др. Им было переведено 17 пьес. В 1984 г. в Буэнос-Айресе в память о Жорже Саргисяне была создана театральная труппа Общенационального культурного союза, названная «Жорж Саргисян».

также в Лос-Анджелесе, в дни чествования театральной труппы в связи с ее 50-летием. А в 1980 г. пьеса была поставлена Жоржем Саргисяном в Буэнос-Айресе и Монтевидео, где она была удостоена высокой оценки как армянской, так и иностранной зрительской аудитории, что нашло отражение в армянской и иностранной периодике. Воодушевленный этим успехом, канадский Общенациональный культурный союз обратился к Жоржу Саргисяну с предложением о создании театральных трупп в Монреале и Торонто для представления этой пьесы.

«Спустя несколько месяцев, – читаем в публикации на страницах еженедельной газеты «Оризон» (Горизонт), – в Монреале оказался известный режиссер и руководитель бейрутской Общенациональной театральной труппы «Гаспар Ипекян» – господин Жорж Саргисян, который с монреальской труппой «Петрос Адамян» в ближайшее время (сентябрь-октябрь) собирается осуществить постановку пьесы Жака Акопяна «Зов журавля», а также Роже Фердинанда («Три сына и дочь»)[7].

И 12 сентября 1981 г. монреальским филиалом театральной труппы «Петрос Адамян» Общенационального культурного союза в театре «Жан д'Бребеф» ("Jean de Brebeuf") руководителем ливанской театральной труппы «Гаспар Ипекян» – Ж. Саргисяном была поставлена пьеса Ж. Акопяна «Зов журавля». Состоялись еще два премьерных спектакля 12 и 19 сентября, на которых присутствовал специально приглашенный из Калифорнии автор[8]. 22 и 23 ноября того же года пьеса была представлена в Торонто.

Таким образом, в 1981 г. в Монреале состоялись четыре постановки, а в Торонто – две. Примечательно, что на протяжении нескольких месяцев число спектаклей по этой пьесе Ж. Акопяна достигло 64, что стало беспрецедентным фактом в летописи театральной жизни армянской Диаспоры. По свидетельствам периодической печати это стало возможным «не только благодаря художественной значимости, самобытности и непреходящей актуальности темы данного драматургического произведения, но и благодаря исключительным личностным качествам и режиссерскому дарованию Жоржа Саргисяна[9].

Помимо этого, залогом успеха пьесы была актуальность сюжета, почерпнутого из жизни армянской Диаспоры и отражающего ее борьбу за

[7] Հորիզոն, Մոնրեալ, 10 օգոստոսի 1981, 3:

[8] Труппой «Петрос Адамян» под руководством Жоржа Саргисяна был поставлен спектакль «Зов журавля», Հորիզոն, Մոնրեալ, 21.IX.1981, 1:

[9] Յակոբեան 1986, 8:

сохранение идентичности. «Пьеса являлась олицетворением борьбы индивидуума, проникнутого неизменной ностальгией по родине, за сохранение национальной самости. Для реализации этой заветной мечты армяне Диаспоры прислушивались то к зову сердца, то к голосу разума... однако, услышав журавлиный зов, символизирующий родину, они забывают обо всех разногласиях и объединяются вокруг этой главной идеи»[10]. Драма интересна зрителям тем, что отражает внутреннюю борьбу героев и столкновение их идей в лице центральных персонажей – Геворга Арцруни и Маргара Акопяна, являющих собой образ армян-изгнанников с их раздумьями, образом жизни, ментальностью и психологией. Вкратце коллизия пьесы заключается в том, что еще в молодые годы Маргар Акопян издал свой поэтический сборник. Однако армянское общество никоим образом не откликнулось на это важное для него событие. Разочарованный Маргар бросил вызов обществу и принял решение перечеркнуть свое прошлое, поменяв национальную принадлежность и язык. Он сжег свои произведения, написанные на армянском языке, поменял имя, стал Марком Джексоном и дал своим детям иностранное образование. Его антиподом в пьесе выступает Геворг Арцруни, борющийся за сохранение идентичности и против ассимиляции. Он приобщает своих детей к армянской культуре, истории, прилагает усилия, дабы открыть вечернюю армянскую школу.

Между тем позиционирующий себя американцем старший сын Маргара Акопяна – Стив (Степан), ставший поэтом и даже лауретом премии за англоязычный сборник стихов, является объектом гордости для Маргара. Однако национальные корни Стива глубоко проросли в его сознание, и в нем не смолкает зов крови. Однажды, прогуливаясь по берегу моря, ему показалось, что его зовет материнский голос. Но внутренний голос прошептал ему, что это журавлиний зов:

Журавлей крылатая стая,
Откуда летит она,
Как бездонная наша мечта,
Как несметные наши желанья,
Откуда летит она?*

[10] Գեղարդ, N 54, 1981, 20:

* Перевод Гаянэ Арутюнян. Впоследствии Ж. Акопян включил этот стих в книгу «Зов журавля», изданную в 1986 г. в Лос-Анджелесе.

И как-то, находясь во власти душевных переживаний и чувств, вызванных сочинением Комитаса «Крунк», всколыхнувшим его внутренний мир, он, проходя мимо дома Арцруни, решил зайти к ним. Это решение стало для него судьбоносным, поскольку в доме Арцруни он встретил девушку своих грез – черноглазую смуглянку Азатуи, в беседе с которой, в числе разных тем, он почему-то заговорил о журавле как символе тоски армянского народе по родине. Оказалось, в их взглядах на мир было много общего, и их связывали тонкие душевные нити, в корне изменившие его жизнь.

Переживший глубокую жизненную драму, Стив отказался от получения премии за англоязычный сборник. Обратившись к отцу со словами «В моих жилах течет твоя кровь, зачем ты скрыл от меня мое армянское происхождение?»[11], он принял решение покинуть Австралию вместе с Азатуи. Мать Стива была против отъезда сына, но отец не посмел возразить.

Пережившие геноцид 1915 г. армяне, нашедшие пристанище в разных уголках мира, старались, говоря словами армянского писателя Диаспоры Акопа Карапенца (1925-1994), «бороться за то, чтобы сохранить армянскую письменность и литературу, чтобы армянская идентичность продолжалась в них и в их детях»[12], ибо «пристанище – не есть якорь, не есть дом, оно – не есть родина»[13]. А посему, «если даже каждому армянину будет дано 40 документов относительно американского (либо иного – А.Б.) гражданства, он скажет, что он армянин»... Находясь в Америке, они живут не в ней... создав себе некий панцирь, некое укрытие как пристанище... Эта беспрецедентная самоизоляция является источником их страданий и экзистенции ...их цель – возвращение»[14].

Необходимо отметить, что есть темы и материалы, которые, независимо от формы их подачи и содержания, созвучны сердцу народа (тем более – народа-изгнанника) и неопровержимо воспринимаются народом. К таковым, к примеру, относятся пьесы, в которых затрагивается тема войны Варданянц. К подобным спектаклям относится и «Зов журавля». И не случайно он был неоднократно представлен в разных общинах Диаспоры. При этом не менее важно, как они преподносятся обществу.

---

[11] Հորիզոն, Մոնրեալ, 1981, 28 սեպտեմբերի, 4 (*“Կռունկը կը կանչէ” թափերախաղի անդրանիկ ներկայացումը Մոնթրէալի մէջ* (սեփական թեթակցութիւն) խորագրով, տե՛ս Հայրենիք, Բոստոն, 1981, 3 հոկտեմբերի, 7):

[12] Կարապենց 1995, 193:

[13] Կարապենց 1995, 182:

[14] Կարապենց 1995, 192:

Возвращаясь к премьере «Зова журавля» в Монреале, отметим, что любимым образом как автора, так и зрителей был Геворг Арцруни, в силу его типичности для общества армянской Диаспоры, по присущей ему идеологической приверженности, доброте, честности помыслов, быть может, некой одержимости, по чертам характера и ментальности. Хотя иначе и не могло быть, поскольку, как отмечает театральный критик, «во всепоглощающих условиях Диаспоры, поглощающей все общины, армянин вынужден был оставаться таким, дабы сохранять свою идентичность». И эта идентичность не может быть ничем иным, «как культом религии Григория Просветителя, культом Маштоца, Хоренаци, Звартноца, Нарекаци, Комитаса, Арарата и Арагаца»[15].

Образ Геворка Арцруни, почитающего все эти святыни, талантливо воплотил декламатор Вардгес Купелян. В сравнительно небольшой роли выступила актриса Анаит Гуюмджян[16], сыгравшая роль супруги Арцруни – доброй и простодушной провинциалки и в равной степени прямолинейной, с несколько грубоватыми манерами сердобольной и руководствующейся материнским инстинктом армянской женщины. А образ дочери Геворка Арцруни был воплощен начинающей актрисой Ани Тертерян, правдиво и успешно представившей патриотичную и благовоспитанную молодую девушку.

Постановщик спектакля Жорж Саргисян с опытом «заслуженного актера сыграл ассимилировавшегося на чужбине Маргара Акопяна (Марка Джексона)[17]». Марк был непримиримым интровертом, замкнувшимся в мире своих раздумий и чувств, предавший огню лелеемые им на протяжении долгих лет собственные произведения. В итоге он нашел пристанище только в своих мыслях. Он не воспротивился отъезду сына, приняв этот факт с неким, казалось бы, равнодушием. И возможно поэтому общество не увидело в его поступке внутренней боли переживающего драму отца. Жорж Саргисян представил страданья убитого горем отца несколько за-

[15] Հորիզոն, Մոնրեալ, 1981, 28 սեպտեմբերի, 4:

[16] Анаит Гуюмджян, актриса, родилась в 1938 г. в Константинополе, в семье представителей искусства. С детства играла разные роли в спектаклях, поставленных в тех или иных гимназиях. Впервые сыграла на сцене в пятнадцатилетнем возрасте, в пьесе «Акселерат» в постановке Ашота Мадатяна. В октябре 1967 г. она переехала в Канаду. Играла в спектаклях, подготовленных монреальским союзом константинопольских армян: «Высокочтимые попрошайки», «Лицемер», «Мадемуазель Шокола», «Акселерат», в оперном спектакле «Ануш», в постановках труппы «Петрос Адамян» Армянского общенационального культурного союза – «Княгиня павшей крепости», «Шотар и семья», «Мир перевернулся», «Зов журавля», а также в комедии «Дядюшка Багдасар» в постановке Мгера Мкртчяна. Принимала участие в гастролях в Торонто, Бостоне, Нью-Джерси и Филадельфии.

[17] Հորիզոն, Մոնրեալ, 1981, 28 սեպտեմբերի, 4:

вуалированно: «просто дрожал его подбородок, и губы постепенно обретали форму расширяющегося книзу полумесяца... стоическая гордость потерпевшего поражение человека и отца»[18], – писал театральный критик.

Гури Хакимян весьма удачно сыграла роль Мирейм Джексон. Роль была маленькой, но сложной, поскольку была невербальной, однако палитрой мимики и жестов актрисе удалось создать убедительный образ.

Довольно-таки сложный, исполненный внутреннего драматизма образ Стива Джексона был воплощен впервые выходившим на сцену молодым актером Размиком Хакимяном, обладавшим прекрасной дикцией. Образ мятущегося в поиске своих корней и национальной идентичности Стива был характерен для представителей Диаспоры и, как отмечал театральный критик, «мы, армяне зарубежья, довольно-таки долго играли [его] на странной сцене, называемой Диаспора»[19].

В остальных ролях выступили Арут Чакмакчян (сыгравший роль Ваганика – внука Арцруни), Раффи Сиуфи (роль младшего сына Акопяна – Роберта) Алиф Тишоян (роль Мельвы – родственницы Стива), Ани Гралян (миссис Хортл), Акоп Гараян, Геворк Миноян, Каро Гралян и Овик Нубарян, внесшие свою лепту в создание спектакля и вдохнувшие в него жизнь.

Рецензент в то же время подчеркивал имевшие место недостатки, которые отнюдь не умаляли художественную ценность спектакля и его роль в сохранении связей с родной культурой, корнями, что поддерживало национальную самость и словно являлось спасательным кругом для представителей армянской Диаспоры в сложных условиях чужбины. Одним из недостатков, по мнению рецензента, был ритм спектакля, заданный режиссером-постановщиком Жоржем Саргисяном, который мешал восприятию глубины нравственной доминанты ряда сцен, к примеру, ключевого монолога главного героя – Стива Джексона[20].

Музыкальное оформление спектакля, составлявшее душу спектакля, также не достигло поставленной цели как по чистоте звучания, так и по несоответствию и несозвучности ряду мизансцен.

Ключевую роль играло включение постановщиком в музыкальную канву спектакля песни «Крунк». В первом действии пьесы, во время напряженного спора героев, вдруг раздаются звуки знакомого всем произ-

[18] Հորիզոն, Մոնրեալ, 1981, 28 սեպտեմբերի, 4-5:
[19] Գեղարդ, N 54, 1981, 20:
[20] Հորիզոն, Մոնրեալ, 1981, 28 սեպտեմբերի, 5:

ведения Комитаса «Крунк», неожиданно прерывающего спор, который заканчивается примирением. И создается впечатление, что автор тем самым обращается к зрителям с важным посылом – увидеть армян консолидированными и связанными друг с другом братскими узами, подчеркивая, что «стремления армян едины – сохранить национальную идентичность»[21].

Эта сцена несет в себе такой эмоциональный заряд, что кажется завершающей, словно все уже сказано зрителю. Однако спектакль продолжается, и зрителю предстоит посмотреть еще четыре действия. Следовательно, было бы желательно, чтобы автор «с этим посылом обратился бы к зрителям не в первом действии, а в заключительном, что было бы интереснее и больше бы впечатлило зрительскую аудиторию».

Невзирая на отмеченные погрешности в режиссуре, спектакль «Зов журавля», подготовленный силами театральной труппы «Петрос Адамян», по данным периодики, пользовался небывалым успехом и получил «высокую оценку армянских и зарубежных любителей театрального искусства; присутствовавшая в зале публика тепло приветствовала Жоржа Саргисяна как постановщика и актера»[22].

После состоявшихся в Монреале четырех спектаклей труппа «Петрос Адамян» отправилась в Бостон и приняла участие в 6-ом торжественном форуме, организованном Общенациональным региональным управлением Восточной Америки и Канады, в день закрытия которого, 11 октября 1981 г., «труппа «Петрос Адамян» под руководством Жоржа Саргисяна уже в пятый раз представила на суд зрителей спектакль «Зов журавля», заразив публику любовью к дарящему очарованье театральному искусству»[23].

Заключение

В последний раз спектакль труппой «Петрос Адамян», в числе других театральных трупп, был показан осенью 1981 года, на поликультурном фестивале в Торонто. В этом театральном фестивале (Multicultural Theatre Festival) приняли участие труппы 42-х общин Канады. Наряду с венгерским, финским, литовским, чешским, сербским, испанским и другими языками со сцены звучал и язык Месропа Маштоца – армянский». Результаты десятинедельного конкурса были объявлены 17 января 1982 г. Комиссия, в состав которой были включены драматурги и профессора теат-

[21] Հորիզոն, Մոնրեալ, 1981, 28 սեպտեմբերի, 5:
[22] Գեղարդ, N 54, 1981, 20:
[23] *Մշակութային լուրեր*, Բագին, 1982, N 2, 80:

рального факультета университета Торонто, приз за лучший спектакль вручила труппе «Петрос Адамян», а приз за лучшую постановку – Жоржу Саргисяну, наградив его золотой медалью и сертификатом.

Литература

Ակօս 1956, մարտ, N 3 (80), էջ 1-17, ապրիլ, N 4 (81), էջ 6-17, մայիս N 5 (82), էջ 13-26, հուլիս, N 7 (84), էջ 21-33, օգոստոս, N 8 (85), էջ 45-55, սեպտեմբեր, N 9 (86), էջ 9-26, հոկտեմբեր, N 10 (87), էջ 23-37, նոյեմբեր, N 11 (88), էջ 18-28:

Ժորժ Սարգիսեան կը բեմադրէ 1981, Հորիզոն, Մոնրեալ, 10 օգոստոսի, էջ 3:

Կարապետց Հ. 1995, Նոր աշխարհի հին սերմնացանները, տե՛ս Երկեր, գիրք առաջին, Երևան, «Նաիրի», 504 էջ:

Մշակութային լուրեր 1982, Բագին, N 2, էջ 80:

Մոմճեան Պ.Թ. 1981, «Կռունկը կը կանչէ» թատերախաղի անդրանիկ ներկայացումը, Հորիզոն, Մոնրեալ, 28 սեպտեմբերի, էջ 4, 5:

Յակոբեան Ժ. 1986, Կռունկը կը կանչէ, Սփիւռքահայ թատերավէպ հինգ հանգրուանով, Լոս Անճելըս, էջ 2, 5, 8:

Յակոբեան Ժ.Ս. 1970, Հայատրոփ, Հայավէպ, «Սփիւռք» հրատ., 481 էջ:

Պասմաճեան Գ. 1981, Պետրոս Ադամեան թատերախումբի ներկայացումները, Գեղարդ, N 54, էջ 20:

«Պետրոս Ադամեան» թատերախումբը Ժորժ Սարգիսեանի ղեկավարութեամբ բեմադրեց «Կռունկը կը կանչէ» 1981, Հորիզոն, Մոնրեալ, 21 սեպտեմբերի, էջ 1:

ԺԱԿ ՀԱԿՈԲՅԱՆԻ «*ԿՌՈՒՆԿԸ ԿԸ ԿԱՆՉԷ*» ԹԱՏԵՐԱԽԱՂԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԿԱՆԱԴԱԿԱՆ ԲԵՄՈՒՄ

Անահիտ Բեքարյան

Ամփոփում

Սփյուռքահայ բանաստեղծ Ժ. Հակոբյանի «*Կռունկը կը կանչէ*» թատերգությունը՝ գրված հայրենաբաղձության, կարոտի շարժառիթով, արտացոլում է սփյուռքահայության ազգապահպանման մաքառումները և կառուցված է հայրենասիրական ապրումների ու զգացումների վրա:

Չնայած իր պարզունակությանը՝ այդ թատերախաղը բազմիցս ներկայացվել է Սփյուռքի տարբեր գաղթօջախներում և արժանացել սփյուռքահայության ջերմ ու խանդավառ ընդունելությանը, քանի որ խոսում է ժողովրդի (առավել ևս՝ տարագիր ժողովրդի) սրտից: Մոնրեալի «Պետրոս Ադամյան» թատերախումբը լիբանանահայ դերասան, բեմադրիչ և թարգմանիչ Ժորժ Սարգիսյանի ղեկավարությամբ 1981-ին վեց անգամ այն ներկայացրել է Կանադայում: Նույն թվականին Տորոնտոյի բազմա-

մշակութային փառատոնի մրցույթի ժամանակ, որին մասնակցել են Կանադայի 42 համայնքների թատերախմբեր, լավագույն թատերախմբի մրցանակը շնորհվել է «Պետրոս Ադամյան» թատերախմբին *«Կռունկը կը կանչէ»* ներկայացման համար, իսկ լավագույն բեմադրիչի մրցանակը՝ Ժորժ Սարգիսյանին: Նրանք պարգևատրվել են ոսկե մեդալով և համապատասխան վկայագրով:

Բանալի բառեր՝ սփյուռքահայ, Ժակ Հակոբյան, «Կռունկը կը կանչէ», «Պետրոս Ադամյան» թատերախումբ, Ժորժ Սարգիսյան, Տորոնտոյի բազմամշակութային փառատոն, ազգապահպանում:

СПЕКТАКЛЬ ЖАКА АКОПЯНА ПО ПЬЕСЕ «ЗОВ ЖУРАВЛЯ» НА КАНАДСКОЙ СЦЕНЕ

Анаит Бекарян

Резюме

Пьеса *«Зов журавля»* армянского поэта Диаспоры Ж. Акопяна отражает борьбу армян Диаспоры за сохранение национальной идентичности в условиях чужбины.

Труппой «Петрос Адамян» Монреаля под руководством ливанского армянского актера, постановщика и переводчика Жоржа Саргисяна в 1981 году этот спектакль был успешно представлен в Канаде шесть раз. В том же году на поликультурном фестивале в Торонто труппа «Петрос Адамян» была признана лучшей среди трупп 42-х общин Канады благодаря спектаклю *«Зов журавля» в* постановке Жоржа Саргисяна, удостоенного приза за лучшую постановку с вручением золотой медали и сертификата.

Ключевые слова – зарубежные армяне, Жак Акопян, «Зов журавля», труппа «Петрос Адамян», Жорж Саргисян, поликультурный фестиваль в Торонто, сохранение национальной идентичности.

JACQUE HAKOBYAN'S *WHEN THE CRANE CALLS* PERFORMANCES ON CANADIAN STAGE

Anahit Bekaryan

Abstract

Armenian Diaspora writer Jacque Hakobyan's *When the Crane Calls* play addresses the issues of homesickness, nostalgia and reflects the fight of the people in Armenian Diaspora for the retention of national identity.

Despite its primitive plot, the play has been performed on many occasions in various communities of Diaspora and received the warm and enthusiastic welcome of the Arme-

nian Diaspora, as it is reminiscent of the ordeals experienced by Armenian emigrants. "Petros Adamyan" Theatre Company in Montreal staged the play in Canada six times in 1981, under the supervision of George Sargissyan, a Lebanese actor, director and translator of Armenian descent. In the same year, "Petros Adamyan" Company received "Best Theatre Company" award for the performance *When the Crane Calls* and George Sargissyan was awarded Best Director at Multicultural Theatre Festival in Toronto hosting more than 42 community theatrical companies. The theatre company "Petros Adamyan" and George Sargissyan received a golden medal and certificates.

Key words – Diaspora Armenians, Jacque Hakobyan, "When the crane calls", "Petros Adamyan" Theatre Company, George Sargissyan, Toronto Multicultural Theatre Festival, play, retaining one's ethnic identity.

ՀԱՅՈՑ ԱՐՔԱ ԶԵՆՈՆ-ԱՐՏԱՇԵՍԻ ԻՆՎԵՍՏԻՏՈՒՐԱՅԻ ՏԵՍԱՐԱՆՈՎ ՀՈՒՇԱԴՐԱՄՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Արթուր Մելիքյան

Պատմական գիտությունների թեկնածու
Վանաձորի պետական համալսարան
ՀՀ, Վանաձոր, Տիգրան Մեծի 36
Էլ. հասցե՝ arthurmelikyan@rambler.ru
Հոդվածը ներկայացվել է 21.04.2023, գրախոսվել է 27.11.2023, ընդունվել է տպագրության 11.12.2023
ORCID: 0009-0002-9922-2887
DOI: 10.53548/0320-8117-2023.3-241

Ներածություն

Հռոմեական կերպարվեստում վեհապետի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից կախյալ (կլիենտ) արքայի ինվեստիտուրայի մոտիվն առաջին անգամ դրսևորվել է Մ.Է. Լեպիդուսի՝ Ք.ա. 58 թ. թողարկած արծաթե դինարի դարձերեսին[1]: Սակայն, այս դրամի հորինվածքը, չնայած իր գեղարվեստական և կատարողական արժանիքներին, հռոմեական դրամահատության մեջ գեղարվեստական ընդօրինակման առարկա չի դարձել իր պատկերապատումի հնարածո բովանդակության[2], Մ. Լեպիդուսի անփառունակ գործունեության ու վախճանի մասին հիշողության կամ էլ մեկ այլ պատճառով: Այնպես որ, վաղ պրինցիպատի դարաշրջանում հռոմեական պաշտոնական կերպարվեստն արքայական ինվեստիտուրայի պատկերագրական տիպերի ստեղծումը սկսել է «մաքուր էջից»: Այդ ուղղությամբ առաջին քայլը կատարվել է 18 թ.՝ Տիբերիուս կայսեր (14-37 թթ.) որդեգիր Գերմանիկուսի կողմից պոնտական արքայազն Զենոնին (Զենոն-Արտաշես՝ 18-34 թթ.) Մեծ Հայքի արքա թագադրելու առթիվ թողարկված արծաթե երկդրախմաների և դրախմաների դարձերեսներին[3]:

Խնդրո առարկա հուշադրամները հայտնի են տակավին 1836 թ.: Սակայն մինչ օրս դրանք համակողմանի քննության չեն արժանացել՝ իրենց փոքր քանակի և տարբեր երկրների թանգարաններում ու մասնավոր հավաքածուներում ցրվածության պատճառով: Իսկ առանձին նմուշների քննության հիման վրա արված հետևություններն ամբողջությամբ չեն արտացոլում

[1] Kropp 2013a, 387, Sear 2000, N 373.
[2] Kropp 2013b, 31.
[3] Burnett, Amandry, et al. 1992, N 3629, 3630.

ո՛չ նրանց պատկերագրության շարժընթացը, ո՛չ էլ ներկայացված պատմական իրադարձության իրավաքաղաքական բովանդակությունը:

Զենոնի ինվեստիտուրայի առթիվ թողարկված հուշադրամները ստեղծվել են միօրինակ սխեմայով: Սակայն դրանց երեսի և դարձերեսի հորինվածքներում կան ակնառու տարբերություններ, որոնք վերաբերում են հռոմեական կեսարի դիմապատկերին, դարձերեսի պատկերների աստիճանակարգությանը, ինվեստիտուրայի ձևին, շնորհվող արքայական պատվանշաններին և այլն: Սույն հետազոտության մեջ քննության կառնվեն հիշյալ դրամների հայտնի օրինակների միջև առկա հորինվածքային և պատկերագրական ընդհանրություններն ու տարբերությունները, դրանց վրա արևելյան և հունահելլենիստական ավանդույթների հնարավոր ազդեցությունները և, իհարկե, դրանց թողարկման տեղի, ժամանակի ու նշանակության հարցերը:

Մեծ Հայքի արքա Զենոն-Արտաշեսի ինվեստիտուրայի տեսարանով հռոմեական դրամները

Զենոնի թագադրության տեսարանով հռոմեական հուշադրամները հազվադեպ են. դրամագիտական գրականության մեջ խոսքը 6 երկդրախմաների (այսուհետև՝ «G-Z dd») և 2 դրախմաների (այսուհետև՝ «G-Z d») մասին է: «G-Z dd»-ների մեկական օրինակ պահվում է Բեռլինի դրամական կաբինետում (այսուհետև՝ «G-Z dd B») (գույքահամար՝ 18200231) (**նկ. 1ա, բ**), Լոնդոնում՝ Բրիտանական թանգարանում (այսուհետև՝ «G-Z dd L») (**նկ. 2ա, բ**) և Փարիզում՝ Ֆրանսիայի ազգային գրադարանում (այսուհետև՝ «G-Z dd P») (գույքահամար M6221) (**նկ. 3ա, բ**): «G-Z dd»-ների երկու օրինակ գտնվում են մասնավոր հավաքածուներում և պարբերաբար հայտնվում են դրամական աճուրդներում[4] (այսուհետև՝ «G-Z dd Lanz» (**նկ. 4ա, բ**) և «G-Z dd Kü» (**նկ. 5ա, բ**): Իր հերթին, Հ. Դրեսսելը հաղորդում է երկդրախմայի մի վնասված օրինակի մասին[5], որը, սակայն, չի հրապարակվել:

«G-Z d»-ներից մինչ օրս հայտնի են երկուսը: Առաջինը, որից, ինչպես երևում է, 1839 թ. և 1872 թ. իրենց գծանկարներն են կատարել Հ. Բորրելն ու Պ. Գարդները[6], պահվում է Ֆրանսիայի ազգային գրադարանում (գույքահամար՝ M2193) (**նկ. 6ա, բ**): Երկրորդը, որը հայտնի է 1836 թվականից, հավանորեն գտնվում է Ռուսաստանում[7], բայց չի հրապարակվել: Հորինվածքային առումով «G-Z d»-ները և «G-Z dd»-ները նման են այն աստիճան, որ «Roman Provincial Coinage»-ի I հատորի հրատարակիչները նույնիսկ միակ

[4] Lanz 1999, Lot 178. Künker 2009, Lot 8623.
[5] Dressel 1898, 228, n. 2, tafel VI, N 5.
[6] Borrell 1840, Pl 1.1, Gardner 1872, Pl. 1.4.
[7] Burnett, Amandry, et all. 1992, N 3630.

1ա

1բ

2ա

2բ

3ա

3բ

4ա

4բ

5ա

5բ

6ա

6բ

7ա

7բ

8ա

8բ

9ա

9բ

10ա

10բ

Նկ. 1. ա, բ. Հենոն-Արտաշեսի ինվեստիտուրայի տեսարանով երկդրախմայի բեռլինյան նմուշը «G-Z dd B» - http://numismatics.org/ocre/id/ric.1%282%29.gai.59 (ներբեռնման օրը՝ 19.07.2022): **Նկ. 2. ա, բ.** Հենոն-Արտաշեսի ինվեստիտուրայի տեսարանով երկդրախմայի լոնդոնյան նմուշը «G-Z dd L» - https://numismatica-classica.la mon eta.it/moneta/R-DDRCC/1_(ներբեռնման օրը՝ 19.07.2022): **Նկ. 3. ա, բ.** Հենոն-Արտաշեսի ինվեստիտուրայի տեսարանով երկդրախմայի փարիզյան նմուշը «G-Z dd P», - Leu Numismatik AG Auktion 61 (17-18. Mai 1995 Zürich) Lot 233. https://rpc.ashmus.ox.ac.uk/coins/1/3629 (ներբեռնման օրը՝ 2.08.2022): **Նկ. 4. ա, բ.** Հենոն-Արտաշեսի ինվեստիտուրայի տեսարանով երկդրախմայի «G-Z dd Lanz» նմուշը - Numismatik Lanz München, Auction 94 (22.11. 1999), Lot 178 https://www.acsearch.info/search.html?term=&company=86&auction=38 (ներբեռնման օրը՝ 2.08.2022): **Նկ 5. ա, բ.** Հենոն-Արտաշեսի ինվեստիտուրայի տեսարանով երկդրախմայի «G-Z dd Kü» նմուշը-Künker Auction 153 (14 Mart, 2009), Lot 8623/https://issuu.com/kuenkercoins/docs/a153 (ներբեռնման օրը՝ 28.08.2022): **Նկ. 6. ա, բ.** Հենոն-Արտաշեսի ինվեստիտուրայի տեսարանով դրախմայի փարիզյան նմուշը-https://rpc.ashmus.ox.ac.uk/c oins/1/3630 (ներբեռնման օրը՝ 3.08.2022): **Նկ. 7. ա, բ.** Կալիգուլայի դրամը՝ Դիմետալկես III-ի ինվեստիտուրայի տեսարանով (Burnett, Amandry, et all., The Roman Provincial Cooinage, Vol. I, 1992, no. 1722. Nomos AG obolos 24 (21 August 2022)/ https://www.numisbids.com/n.php?p=lot&sid=5923&lot=61 (ներբեռնման օրը՝ 28.08.2022): **Նկ. 8. ա, բ.** Անտոնինուս Պիուսի դրամը՝ Սոհեմոսի ինվեստիտուրայի տեսարանով. (Clasic Numismatic Group Auction 84, An Internet & Mail Bid Sale (May 5, 2010), Lot 1035 /https://issuu.com/cngcoins /docs/cng_mbs_84 (ներբեռնման օրը՝ 20.08.2022)): **Նկ. 9. ա, բ.** Անտոնինուս Պիուսի դրամը՝ քվադների արքայի ինվեստիտուրայի տեսարանով / https://www.britishmuseum.org/collection/object/C_R-13460 (ներբեռնման օրը՝ 20.08.2022): **Նկ. 10. ա, բ.** Կապադովկիայի արքա Արիարաթես VI-ի դրախման. (Canepa M., Rival Images of Iranian Kingship and Persian Identity in Post-Achaemenid Western Asia, p. 214, Fig. 10):

տարբերությունը համարում են դրամի արժեքը (քաշը)[8]: «G-Z dd»-ների քաշը տատանվում է 7.47-7.66 գ., իսկ տրամագիծը՝ 21-30 մմ միջև: «G-Z d»-ները կշռում են 3.11-3.14 գ., իսկ տրամագիծը՝ 22 մմ է: «G-Z dd»-ների մեջ արծաթի բաղադրությունը կազմում է 86%, որը նույնական է Տիբերիուսի կառավարման վերջերին և Կալիգուլայի (37-41 թթ.) ու Կլավդիուսի (41-51 թթ.) օրոք հատված դրախմաների բաղադրությանը[9]:

Դրամների երեսին կետավոր երիզափակ շրջանակի մեջ պատկերված է Գերմանիկուսի՝ աջ դարձած դիմապատկերը, որի առջևից և հետևից «GERMANICVS CAESAR. TI. AVG. F. COS. II» = «Գերմանիկուս Կեսար, Օգոստոս Տիբերիուսի որդի, երկրորդ անգամ կոնսուլ (18 թ.-Ա.Մ.)» լեգենդն է ներկայացված, իսկ դարձերեսին՝ նրա կողմից 18 թ. Պոնտոսի հանգուցյալ արքա Լուցիուս Անտոնիուս Պոլեմոնի (Ք. ա. 37-8 թթ.) որդուն՝ Զենոնին, Մեծ Հայքի թագավոր կարգելու տեսարանը: Երկու պատկերներն էլ ճակատային և կանգնած դիրքով են, իսկ նրանց կողքին՝ վերից վար գրությամբ ARTAXIAS և GERMANICVS անուններն են: Ողջ հորինվածքն առնված է կետավոր երիզափակ շրջանակի մեջ:

«G-Z dd»-ների հորինվածքները շատ նման են, ինչի հիման վրա էլ «Roman Imperial Coinage I», «Roman Provincial Coinage I» և այլ հեղինակավոր կատալոգներում դրանք դասակարգվել են միևնույն համարի տակ: Սակայն ակնհայտ է, որ դրանք նույնական չեն: «G-Z dd»-ների երեսների համեմատական քննությունը նմանությունների հետ վեր է հանում նաև դրանց միջև առկա դիմապատկերային և դետալային (մազերի և դեմքի հարդարանք, քթի, ականջի ձև և այլն) տարբերություններ: Խնդրո առարկա դրամների վրա Գերմանիկուսի դիմապատկերներն ստեղծված են օգոստոսյան դասականության ավանդույթներով և հատկանշվում են ձևերի ընդհանրացմամբ: Հստակ արտահայտված են Գերմանիկուսի դիմագծերը՝ լայն գանգը, սապատավոր քիթը, սուր ծնոտը, երկար, մկանուտ վիզը: Գերմանիկուսի նմանությունն իր հոգեհայր Տիբերիուսին պայմանավորված է վաղ կայսրության պաշտոնական դիմապատկերի ավանդույթով: Չնայած որ Գերմանիկուսը Զենոնի թագադրությունն իրականացրել էր հասուն տարիքում (ծնվել է Ք. ա. 15 թ. մայիսի 24-ին), «G-Z d»-ի երեսին նա պատկերվել է պատանեկան հասակում՝ մի փոքր մտազբաղ դեմքով (**նկ. 6ա**): Գերմանիկուսը մտասույզ ու հոգնած տեսք ունի նաև «G-Z dd L»-ի և «G-Z dd P»-ի երեսին, մինչդեռ «G-Z dd B»-ի, «G-Z dd Lanz»-ի և «G-Z dd Kü»-ի երեսին նա ներկայացված է որպես ինքնավստահ, խրոխտ, առնական և նպատակասլաց երիտասարդ: Սրանցից «G-Z dd B»-ի և

[8] Burnett, Amandry, et all. 1992, 554. Մեկ դրախման համարժեք է մեկ հռոմեական դինարին, իսկ մեկ երկդրախման ու դրան համարժեք միավորները՝ երկու դինարի կամ կվինարիուսի (Burnett, Amandry, et all. 1992, 29, Butcher, Ponting 2014, 680):

[9] Burnett, Amandry et all. 1992, 554.

«G-Z dd Lanz»-ի դիմապատկերները նույնական են, իսկ «G-Z dd Kü»-ի դիմապատկերը մյուս երկուսից տարբերվում է մազերի և դեմքի հարդարանքի, քթի, ականջի ձևի և այլ աննշան դետալներով: Դրանց համեմատական քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դրանց փորագրիչները, մի կողմից, բավարարել են տվյալ անձին իդեալականացված ներկայացնելու հելլենիստական դիմարվեստի կանոնական սկզբունքը, մյուս կողմից, որոշակի տուրք են մատուցել նրա ինքնատիպ ու անհատական գծերին: Ակներև է նաև, որ «G-Z dd B»-ի և «G-Z dd Lanz»-ի երեսի համար գործածվել է Գերմանիկուսի պատկերով մեկ առանձին դրոշմոց (**նկ. 1ա, 4ա**), մեկ այլ դրոշմոցով են ստեղծվել «G-Z dd L»-ի ու «G-Z dd P»-ի երեսները (**նկ. 2ա, 3ա**), իսկ «G-Z dd Kü»-ի երեսը (**նկ. 5ա**)՝ մի երրորդ դրոշմոցով, որի հեղինակը փորձել է հնարավորինս ընդօրինակել «G-Z dd B»-ի և «G-Z dd Lanz»-ի երեսի դիմապատկերը:

Տարբերություններն ավելի էական են երկդրախմաների դարձերեսների հորինվածքներում: Այսպես, «G-Z dd B»-ի վրա պատկերներն ավելի բարձրահասակ են ու նրբակազմ, քան մյուս չորսի վրա, իսկ Գերմանիկուսն էլ ներկայացվել է Զենոնից նկատելիորեն բարձրահասակ (**նկ. 1բ**): «G-Z dd B»-ի, «G-Z dd L», «G-Z dd P»-ի և «G-Z dd Lanz»-ի վրա պատկերները ճամբարային կարճ տունիկայով են և մկանուտ զրահով (cuirasses) (**նկ. 1բ, 2բ, 3բ, 4բ**): Իսկ «G-Z dd Kü»-ի վրա դրանք զրահի փոխարեն ներկայացված են գոտիավոր կարճ տունիկաներով (**նկ. 5բ**): «G-Z dd P»-ի և «G-Z dd Lanz»-ի վրա տունիկաների գոտիների ծոպերը կախված են պատկերների աջ կողմից, «G-Z dd L»-ի վրա՝ Զենոնի աջ և ձախ կողմերից, բայց բացակայում են Գերմանիկուսի պատկերի վրա: «G-Z dd Kü»-ի վրա գոտու ծոպն առկա է միայն Զենոնի ձախ կողմին, իսկ «G-Z dd B»-ի վրա պատկերագրական այդ տարրն ընդհանրապես բացակայում է: Որոշակի տարբերություններ են առկա նաև միևնույն տիպի ներսում: Այսպես, «G-Z dd B»-ի, «G-Z dd P»-ի, «G-Z dd Lanz»-ի և «G-Z dd Kü»-ի դարձերեսներին Զենոնի մարմնի ծանրությունը հենված է աջ ոտի վրա, իսկ ձախն ազատ է, մինչդեռ «G-Z dd L»-ի վրա այն տեղափոխված է ձախ ոտքին: Հատկապես նշանակալից են Զենոնի գլխի հարդարանքի տարբերությունները. «G-Z dd B»-ի վրա խույրը **(θιάρα)** նման է սուրանկյուն եռանկյունու, «G-Z dd L»-ի, «G-Z dd P»-ի և «G-Z dd Lanz»-ի վրա՝ ուղղանկյուն եռանկյունու, իսկ «G-Z dd Kü»-ի վրա այն նման է շրջած կճուճի: Վերոնշյալից բխող եզրահանգումը կարող է լինել մեկը. Զենոնի թագադրության տեսարանով մեզ հայտնի հինգ երկդրախմաների դարձերեսների համար գործածվել են չորս տարբեր դրոշմոցներ:

«G-Z d»-ի հորինվածքն արտաքուստ նման է «G-Z dd»-ների հորինվածքին: Սակայն կան նաև ականառու տարբերություններ դրախմաների թե՛ երեսներին, թե՛ դարձերեսներին. Մասնավորապես «G-Z d»-ի երեսին Գերմանիկուսի պատանեկան պատկերն է, իսկ դարձերեսին՝ Գերմանիկուսն ու

Զենոնը ներկայացված են կարճ ճամբարային տունիկաներով, այլ է Զենոնի գլխի հարդարանքը, և տարբեր սխեմայով է ներկայացված Գերմանիկուսի թագադիր գործողությունը (**նկ. 7բ**):

Վերոնշյալ դիտարկումները հիմք են տալիս կարծելու, որ «G-Z dd»-ների և «G-Z d»-ի հորինվածքային ընդհանրությունները պայմանավորվել են սոսկ դրանց թողարկման առիթի նույնությամբ, թերևս նրանց միջև գոյացած ինքնատիպ ծագումնաբանական կապով: Ինչ վերաբերում է առկա տարբերություններին, ապա այդպիսիք չափազանց շատ ու արմատական են՝ դրամահատների անփութության արդյունքը համարվելու համար: Մեր համոզմամբ, դրանք ավելի շատ խոսում են այն մասին, որ «G-Z dd»-ների և «G-Z d»-ի թողարկումները կատարվել են տարբեր դրամահատական ավանդույթների շրջանակներում, ունեցել են տարբեր հասցեատերեր ու քարոզչական նշանակություն:

Պատկերների աստիճանակարգության սկզբունքը

«G-Z» դրամների ստեղծման ժամանակ ինվեստիտուրայի ժանրը բազում դարերի վաղեմություն և պատկերագրական հարուստ ավանդույթներ ուներ: Թե՛ Արևելքում, թե՛ հունահելլենիստական աշխարհում դրա կարևորագույն նպատակն է եղել թագադրության գործողությունը պարզեցված ներկայացնելը՝ այն նկատառումով, որ դիտողը միանգամից զանազանի դրա մասնակիցների կարգավիճակներն ու ճիշտ հասկանա այդ տեսարանի իմաստը: Դրան են ծառայել տվյալ ժանրի շրջանակում ստեղծված պատկերագրական կանոնները, որոնք անխախտորեն կիրառվում են՝ անկախ ստեղծագործության ձևից (ժայռաքանդակ, որմնանկար, դրամ և այլն): Արևելյան կերպարվեստում այսպիսի առաջին կանոնն իշխանություն շնորհողին հորինվածքի ձախ, իսկ իշխանություն ստացողին՝ աջ կողմում տեղ հատկացնելն է: Երկրորդը՝ չափի և կարևորության համեմատականության «ոսկե կանոնն» է[10]:

Առաջին կանոնը հավասարապես կիրառված է «G-Z d»-ի ու «G-Z dd»-ների հորինվածքներում: Սակայն պատկերների աստիճանակարգության արևելյան սկզբունքը պահպանված է միայն «G-Z d»-ի վրա. Գերմանիկուսի գերապատվությունը Զենոնի նկատմամբ, դիրքայինից զատ, արտահայտվել է նաև չափական սկզբունքով, և նա ներկայացվել է Զենոնից նկատելիորեն բարձրահասակ: Հակառակ սպասվածին՝ «G-Z dd»-ների վրա թագադրողի և թագադրվողի կարգավիճակների տարբերակման արևելյան «ոսկե կանոնն» անտեսված է: Գերմանիկուսն ու Զենոնը պատկերված են միօրինակ զինվորական հանդերձանքով՝ կարճ տունիկայով և «մկանուտ» զրահով (cuirasses), որը հետսելևկյան ժամանակաշրջանում Լևանտի և Փոքր Ասիայի հելլենիստական տիրակալների համար դարձել էր արքայականության յուրօրինակ

[10] Porada 1965, 203.

ատրիբուտ[11], իսկ պրինցիպատի սկզբներին ներմուծվել էր նաև կայսերական պաշտոնական կերպարվեստ: Ա. Կեֆելյանը պատկերների չափերի ու հանդերձանքի միօրինակությունը բացատրում է Զենոնի հռոմեական քաղաքացիությամբ և տվյալ դրամի՝ Կապադովկիական Կեսարիայում, այլ ոչ թե Հռոմում թողարկված լինելու հանգամանքով[12]: Սակայն կարծում ենք, որ տվյալ պատկերագրական իրողությունն ավելի ճիշտ կլինի բացատրել հելլենիստական կերպարվեստի ազդեցությամբ: Համենայն դեպս, բազմապատկեր հորինվածքներում պատկերների կարգավիճակները հարդարանքի ու խորհրդանշանների, երբեմն էլ՝ կից գրությունների միջոցով տարբերելը վերջինիս հատկանշական կողմերից մեկն էր: Այս տեսանկյունից խնդրո առարկա հորինվածքում պատկերների ինքնությունը լուսաբանող լեգենդներն ու Գերմանիկուսի ձախ ձեռքի նիզակն իրենց նշանակության լիարժեք բացատրությունն են գտնում: Իսկ ինվեստիտուրայի պատկերագրության արևելյան ավանդույթը «G-Z dd»-ների դարձերեսների հորինվածքներում արտահայտվել է սոսկ այնքանով, որ Գերմանիկուսին տեղ է հատկացվել հորինվածքի ձախ, իսկ Զենոնին՝ աջ կողմում:

Այսպիսով, «G-Z dd»-ների և «G-Z d»-ների հորինվածքներում պատկերների չափական, դիրքային ու հարդարանքի հարաբերությունների քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ «G-Z d»-ի հորինվածքը ստեղծվել է արևելյան պատկերագրության ազդեցությամբ՝ պահպանելով նրա աստիճանակարգության և կիրառականության սկզբունքները: Մինչդեռ «G-Z dd»-ների փորագրիչները փորձել են մեկ տեսարանի մեջ համադրել ինվեստիտուրայի պատկերագրության արևելյան և հելլենիստական սկզբունքները, սակայն դա կատարել են անհաշվենկատ, որի պատճառով էլ հորինվածքը դարձել է դժվար ընթեռնելի և նույնիսկ անհասկանալի: Ինչպես երևում է՝ խնդիրը հասկացվել է բավական վաղ, քանի որ Կալիգուլայի կողմից Թրակիայի արքա Ռոմետալկես III-ի ինվեստիտուրայի տեսարանով դրամի[13] վրա պատկերների չափական տարբերակման խնդիրն ամբողջապես շտկված է (**նկ. 7բ**): Այդուհանդերձ, այդ մոտիվով I-II դդ. ստեղծված հռոմեական դրամների վրա թագադրողի և թագադրվողի աստիճանակարգման չափական (**նկ. 8բ**) և դետերմինատիվ (**նկ. 9բ**) սկզբունքների անկանոն դրսևորումներից[14] հետևում է, որ հռոմեական կերպարվեստը տվյալ ժանրում այդպես էլ միասնական կանոն չի ստեղծել, և դրանց ընտրությունը թողնված է եղել դրամահատարաններին[15]:

[11] Olbrycht 2016, 625.

[12] Kéfélian 2021, 107-108.

[13] Burnett, Amandry, et all. 1992, N 1722.

[14] Հմմտ. Մուշեղյան 1983, 99-100, Mattingly, Sydenham 1986, N 512, 619, 669, 1370, 1374, Sear 2002, N 3191, Վարդանյան 2004, 243-245, Abramzon 2002, 240, Fig. 1. Amandry, Burnett et all. 2017, N 1726:

[15] Հմմտ. Մուշեղյան 1983, 99-100, Sear 2002, 43:

Զենոնի Ինվեստիտուրայի պատկերագրությունը

Ինվեստիտուրայի պատկերագրության առանցքային կանոններից մեկը գահի հավակնորդին իշխանության նշան (անխ, օղակ, ապարոշ և այլն) շնորհելու գործողությունը հորինվածքի կենտրոնում ներկայացնելն է: Աստվածային ինվեստիտուրայի թեմայով ստեղծված հորինվածքներում իշխանությամբ օժտվող անձինք ակտիվ են և սովորաբար ներկայացվում են թեկնածուի արժանավորությունն ընդգծող հաղթողի կամ երկրպագողի հատկանշական կեցվածքով: Բայց քանի որ կախյալ արքաների իշխանությունը բխում էր բացառապես վեհապետի բարեհաճությունից, բնական է, որ արքայական ինվեստիտուրայի հորինվածքներում թեկնածուի հերոսականությունը կամ բարեպաշտությունն արտահայտող պատկերագրական տարրերն իրենց տեղը զիջում են նրա խոնարհությունն ու հավատարմությունը ցուցող տարրերին: Ընդ որում, երկու դեպքում էլ մշտապես արձանագրվում է գերակա կողմի իշխանության նշան «տալու» պահը, իսկ թեկնածուի «ստանալը» հասկացվում է կամ ինքնըստինքյան, կամ էլ՝ ձեռքի համապատասխան շարժից: Այս ձևով լրացուցիչ կերպով ընդգծվում էին հորինվածքում գործողության ուղղությունը, կողմերի դերակատարությունն ու կարգավիճակը: Ռյոմետալկես III-ի ինվեստիտուրայի տեսարանում նշված կանոնն ամբողջությամբ յուրացված է (**նկ. 7բ**): Մինչդեռ ակնհայտ է, որ «G-Z dd»-ների և «G-Z d»-ների հորինվածքներում այն դեռևս գտնվում է գեղարվեստական յուրացման փուլում: Մասնավորապես, դրա մասին են վկայում երկու պարականոն իրողություններ. ա) ինվեստիտուրայի գործողությունը հորինվածքի կենտրոնից տեղափոխված է Զենոնի պատկերի գլխամաս, բ) իշխանության խորհրդանշան շնորհելու գործողությունը ներկայացված է նկատելի բազմազանությամբ:

Վերոնշյալ պատկերագրական իրողություններից առաջինը դրսևորվել էր դեռևս Մ. Լեպիդուաի՝ վերը հիշատակված դինարի դարձերեսին: Սակայն, մեր համոզմամբ՝ «G-Z»-ի դրամների վրա նրա առկայությունը պայմանավորված է ոչ թե հռոմեական նախօրինակի, այլ տվյալ ժամանակահատվածի պարթևական դրամահատության մեջ տարածված պատկերատիպերի ազդեցությամբ[16]: Ավելի խնդրահարույց է իշխանությամբ օժտելու գործողության տարբերությունների հարցը: Ինվեստիտուրայի պատկերագրության հնամենի կարգի համաձայն, պետք է արձանագրվեր արքայականության պատվանշանի կամ դրա խորհրդանշանի շնորհման պահը: Մինչդեռ «G-Z d»-ների և «G-Z dd»-ների դարձերեսներին այն պատկերված է իրարից խիստ զանազան կերպով:

«G-Z d»-ի դարձերեսին Զենոնի արքայականությունն առարկայացված է խույրով, որն արդեն «դրված» է Զենոնի գլխին: Ընդ որում, «G-Z d»-ի՝ Հ. Բո-

[16] Հմմտ. Sellwood 1980, 42. 2-3, 47. 36, 49. 1-3, 52. 16-39, 53. 5, 53. 9-10, 53. 20, 54. 7, 59. 9:

րելի ու Պ. Գարդների հեղինակած գծանկարներում Գերմանիկուսն ու Զենոնը ներկայացվել են իրենց աջ ձեռքերը խույրին հպած: Սակայն դրախմայի զննությունից ակներև է, որ խույրին ցուցամատով հպվում է միայն Գերմանիկուսը, իսկ Զենոնն աջ ձեռքը վեր է բարձրացրել՝ ի նշան մեծարանքի **(adoratio/προσκύνησίς)** կամ հավատարմության ուխտի **(dextrarum iunctio)**: Զենոնի աջ ձեռքի այդ շարժումը, որն առկա է նաև «G-Z dd P»-ի, «G-Z dd Lanz»-ի ու «G-Z dd Kü»-ի դարձերեսներին, կանոնական է դարձել արևելյան կախյալ արքաների ինվեստիտուրայի առթիվ հետագայում թողարկված հռոմեական հուշադրամների վրա:

«G-Z d»-ի դարձերեսին Զենոնի խույրին ցուցամատով դիպչելու Գերմանիկուսի գործողությունը ձևի առումով աննախադեպ է ինվեստիտուրայի պատկերագրության պատմության մեջ, քանի որ «տալու» կամ «տալ-ստանալու» տպավորություն չի ստեղծում: Այդ պատճառով որոշ ուսումնասիրողներ ներկայացված տեսարանի մեկնաբանությունից դուրս են թողել թագադրության գործողությունը[17]: Տեսականորեն պատկերագրական առկա վիճակը կարելի էր բացատրել դրամագործ փորագրիչի ցածր որակավորմամբ: Սակայն, մեր համոզմամբ, խնդրո առարկա պատկերագրական երկընտրանքն առաջացել է այն պատճառով, որ փորագրիչը, մի կողմից, Զենոնի՝ խույրով թագադրվելու ակտը խորհրդանշական ձևով ներկայացնելու փոխարեն փորձել է այն վերարտադրել նույնությամբ, մյուս կողմից՝ հավատարիմ է մնացել ինվեստիտուրայի պատկերագրության մեջ խույրի պասսիվ գործածության ավանդույթին: Անշուշտ, խույրն արքայական իշխանության հնագույն և ինվեստիտուրայի արարողություններում իրապես գործածվող խորհրդանշաններից է, որի տարբեր ձևերը հայտնի են Ք.ա. III-II հազարամյակների միջագետքյան, խեթական, էգեյան, այսրկովկասյան հուշարձաններից[18]: Ընդունված կարծիքի համաձայն՝ խույրը «խորհրդանշում էր աստվածների աշխարհի հետ արքայի ունեցած միջնորդական, այսինքն՝ սրբազան, կրոնական ֆունկցիաները»[19] և շեշտում էր «արքայի իշխանության օրինականությունը ներհանրութային միջավայրում՝ ըստ սովորութային իրավունքի»[20]: Սակայն Հին աշխարհի գեղարվեստական ավանդույթներին խորթ էին խույրի շնորհման տեսարանները: Հին Արևելքի շատ տիրակալներ (Նարամ Սին, Անուբանինի, Զիմրի-լիմ, Դարեհ I և այլք) իրենց ինվեստիտուրային քանդակներում պատկերվել են դիցերից իշխանության խորհրդանշան ստանալիս, բայց արդեն խույրով պսակված[21]: Պատկերագրական այս ավան-

[17] Հմմտ. Մուշեղյան 1983, 96:
[18] Դևեջյան 1986, 75-77:
[19] Մանասերյան 1997, 113:
[20] Ստեփանյան 2012, 47:
[21] Postgate, Roaf 1997, 151-153, Figs. 5, 8. Bradshaw and Head 2012, 4, Fig. I.

դույթը շարունակվել է հելլենիստական դարաշրջանում Մեծ Հայքի[22], Ծոփքի[23], Կապադովկիայի[24] դրամահատության մեջ անուղղակի, իսկ պարթևական դրամահատության մեջ՝ նաև ուղղակի ինվեստիտուրայի տեսարաններով հորինվածքներում[25]: Նշվածից կարելի է եզրակացնել, որ «G-Z d»-ի փորագրիչը հավատարիմ է մնացել հինարևելյան ավանդույթին և ներկայացրել է ոչ թե խույրի շնորհման տեսարանը, այլ խույրը՝ արդեն շնորհված: Սակայն նա լավ է պատկերացրել, որ խույրով պսակված Զենոնին ու նիզակը ձախ ձեռքում բռնած Գերմանիկուսին կողք կողքի, բայց միմյանց անհաղորդ ներկայացնելու դեպքում կշեղվի Զենոնի ինվեստիտուրան պատկերագրելու իր նպատակից: Ուստի տվյալ թեմայի շրջանակում մնալու համար փորագրիչը «G-Z d»-ի հորինվածք է ներմուծել արևելյան գեղարվեստական մտածողության մեջ խիստ ընտանի ձեռնադրությամբ ինվեստիտուրայի պատկերագրական սխեման[26] և Գերմանիկուսի աջ ձեռքը հպելով Զենոնի խույրին՝ ապահովել է հորինվածքում ինվեստիտուրայի գաղափարի գերակայությունը: Դա, մի կողմից, փաստում է, որ «G-Z d»-ի փորագրիչը քաջածանոթ է եղել արևելյան գեղարվեստական ավանդույթներին, մյուս կողմից՝ վկայում է այն մասին, որ նա ազատ է եղել վաղ կայսրության դարաշրջանի հռոմեական կերպարվեստին հատուկ գեղարվեստական սխեմատիզմից: Միևնույն հորինվածքում «առարկայաբար» և «ձեռնադրությամբ» իրականացվող ինվեստիտուրաների պատկերագրական մոտիվների համադրությամբ նա ստեղծել է հիրավի եզակի տեսարան, որը, չնայած «G-Z d»-ների ենթադրվող փոքր քանակությանը, էական ազդեցություն է թողել հռոմեական պաշտոնական կերպարվեստում արքայական ինվեստիտուրայի ժանրի կայացման գործում: I-II դդ. այդ թեմայով ստեղծված հռոմեական դրամների վրա իշխանությամբ օժտելու պատկերագրական ձևերի համադրություններ այլևս չկան: Բայց դրանց սխեմատիկ բազմազանությունից հետևում է, որ հռոմեական կերպարվեստում իշխանությամբ օժտելու ձևի ընտրությունը ևս թողնված է եղել դրամահատարաններին[27]: Այս պարագայում Մ. Տրայանուսի[28], Անտոնինուս Պիուսի[29] և Լուկիուս Վերուսի[30], այսպես կոչված, «Rex datus» տիպի դրամների վրա «ձեռնադրության» արևելյան սխեմայի նախապատվության փաստը կա-

[22] Leu Numismatic 2022, Lots 1407, 1424, 1426, Nercessian 2006, Pl. 1-95.

[23] Leu Numismatic 2022, Lots 1395-1396.

[24] Canepa 2017, 214, Fig. 10, Bertolami 2022, Lots 218, 228.

[25] Sellwood 1980, 24.45, 26.33, 27.28, 28.12, 28.14-15, 28.21, 33.13-14, 35.16-17, 36.20, 41.22, 42.2-3, 47.36, 49.1-3, 50.1-13, 50.16-17, 52.1-9, 52.16-39, 53.5, 53.9-10, 53.20, 54.7, 55.1-6, 56. 1-14, 57.1-17, 58.1-13, 59.9-10 60.2, 60. 4.

[26] Kramer 1963, 318, Емельянов 2003, 64. Mathiesen 1992, 125-128. Մելիքյան 2016, 72-78:

[27] Համմտ. Sear 2002, 43, Մուշեղյան 1983, 99-100:

[28] Mattingly, Sydenham 1986, N 669, Sear 2002, N 3191.

[29] Mattingly, Sydenham 1930, N 619, Sear 2002, 43.

[30] Mattingly, Sydenham 1930, N 512.

րող ենք համարել հռոմեական պաշտոնական կերպարվեստում «G-Z d»-ների հորինվածքի ազդեցության պարզորոշ վկայություն:

«G-Z dd»-ների դարձերեսների ինվեստիտուրայի սխեման էապես տարբերվում է «G-Z d»-ների սխեմայից: Այստեղ արքայական պատվանշաններից մեկը՝ խույրը, արդեն «տրված» է Զենոնին, և Գերմանիկուան աջ ձեռքով պոնտական արքայազնի գլխին է մեկնել չհանգուցված ապարոշ (διάδημα): Հայտնի է, որ հելլենիստական դարաշրջանի սուվերեն արքայական իշխանության այս պատվանշանը Հռոմի քաղաքական ազդեցության ծիրում էապես փոխել է իր խորհրդանշական իմաստը: I դ. սկզբներից հռոմեահպատակ արքաներն իրենց դրամահատության մեջ ինքնաներկայացվել են ապարոշով[31], իսկ նրանց իշխանության աղբյուր կայսրերը՝ դափնեպսակով: Ուստի, որոշ վերապահությամբ կարելի է համաձայնել Ա. Կեֆելյանի այն կարծիքին, որ «G-Z dd»-ների դարձերեսի հորինվածքում Գերմանիկուաի կողմից Զենոնի խույրին ապարոշ կապելու գործողությունը նպատակ է ունեցել ցույց տալ, որ խույրով պսակված Զենոնը, այնուամենայնիվ, հռոմեահպատակ կախյալ արքա է[32]:

Ուշագրավ է «G-Z dd»-ների դարձերեսներին ապարոշ շնորհելու պատկերագրական ձևը:

I դ. միջերկրածովյան ավազանի դրամահատական կենտրոններում շատ տարածված էին աջ ձեռքով ապարոշ կամ պսակ մեկնած դիցերի պատկերատիպերը: Հետևաբար, «G-Z dd»-ների դարձերեսներին ապարոշի շնորհման տեսարան ստեղծելու համար փորագրիչը կարող էր ընդամենը նշված պատկերագրական ձևանմուշի մեջ դիցական պատկերը փոխարինել Գերմանիկուաի պատկերով: Սակայն նա գնացել է ինքնատիպ ուղով. տուրք տալով գրական լեզվում գործածվող «ապարոշ կապել» արտահայտությանը՝ նա փորձել է պատկերագրորեն վերարտադրել խույրի շուրջ ապարոշ կապելու գործողությունը: Սակայն բնական է, որ Զենոնի ու Գերմանիկուաի ճակատային դիրքով կողք կողքի ներկայացման պարագայում նրա այդ փորձը չի հաջողվել: Արքայական ինվեստիտուրայի պատկերագրական կանոնը պահանջում է, որ իշխանություն ստացող կողմը ներկայացվի պասսիվ՝ իր վեհապետի շնորհին սպասելիս: Մինչդեռ «G-Z dd B»-ի վրա Զենոնը բռնել է Գերմանիկուաի՝ անիրապաշտական ձևով խույրի հետևից իրեն մեկնած ապարոշի երկար, պարանանման երիզի ծայրից և կարծես պատրաստվում է օգնել կեսարին այն խույրի շուրջը բոլորելու և հանգուցելու գործում: Նույնպիսի տեսարան է «G-Z dd L»-ի դարձերեսին, որտեղ, սակայն, ապարոշը կենտրոնական մասում մի փոքր լայնացած է՝ հավանաբար դիտորդին հուշելու համար, թե ինչ է պատկերված: Ինքնին հասկանալի է, որ ապարոշի նշված

[31] Tacitus 1937, XV, 29. 3, 5, Suetonius 1914, III, 9.1, հմմտ. Kropp 2013b, 23.
[32] Kéfélian 2021, 107-108.

ձևն ու այն շնորհելու այդպիսի սխեման հիմնովին խաթարել է իշխանության խորհրդանշան «տալ-ստանալու» հարաբերության տեսողական արդյունքը: Ինչպես երևում է, այս խնդիրը հասկացվել է բավական վաղ, քանի որ ինվեստիտուրայի պատկերագրական անհարթությունն ամբողջապես շտկված է «G-Z dd P»-ի, «G-Z dd Lanz»-ի ու «G-Z dd Kü»-ի վրա, որոնց դարձերեսներին Գերմանիկուսը Զենոնին է մեկնել ոչ թե ապարոշի երիզ, այլ հանգուցված ապարոշ, որի պատկերագրական զուգահեռները լավ հայտնի են հռոմեական և պարթևական դրամներից: Իսկ Զենոնն էլ ներկայացվել է ոչ թե ապարոշից բռնած, այլ աջ ձեռքն արմունկից վեր է բարձրացրել՝ ի նշան ողջույնի, մեծարանքի կամ հավատարմության ուխտի:

Զենոն-Արտաշեսի ինվեստիտուրայի տեսարանով դրամների թողարկման վայրն ու ժամանակը

«G-Z dd»-ները և «G-Z d»-ները թվագրված չեն: Դրանց վրա բացակայում են նաև դրամահատարանների մենանշանները: Այդ հանգամանքը դժվարացնում է դրամների թողարկման ժամանակն ու վայրը որոշելը: Գերմանիկուսի տիտղոսի մեջ ժամանակագրական տարր պարունակող «երկրորդ անգամ կոնսուլ» արտահայտությունը վերաբերում է հռոմեական կեսարի պաշտոնական կարգավիճակին և անուղղակիորեն՝ դրամների վրա ներկայացված իրադարձությանը: Մինչդեռ, հարց է, թե որքանով է այն վերաբերում դրամների թողարկմանը: Այդ և նմանատիպ խնդիրների պատճառով մինչ օրս տարակարծություններ կան «G-Z dd»-ների և «G-Z d»-ների թողարկման ժամանակի, վայրի ու թողարկողի վերաբերյալ[33]: Արդի դրամագետները վերջերս հաճախակի են մեջբերում Դ. Ուկերի կարծիքն առ այն, որ հռոմեական երկդրախմաներ թողարկվել են միայն Կլավդիոսի դրամական ռեֆորմից հետո, հետևաբար «G-Z dd»-ները չեն կարող նախընթաց ժամանակին վերաբերել[34]: Սակայն այդ փաստարկն այնքան էլ համոզիչ չէ: Ճիշտ է, «G-Z dd»-ների պատկերագրությունը բխում է կայսերական քարոզչության տրամաբանությունից, ինչը, սակայն, բավարար չէ դրանք կայսերական դրամահատությանը վերագրելու համար: Պետք չէ անտեսել, որ I դ. առաջին տասնամյակներին հռոմեական շատ նորաստեղծ նահանգներում շարունակվել է արծաթե ու բրոնզե երկդրախմաների թողարկումը[35], որոնց մի մասի վերաբերելը Օգոստոսի և Տիբերիոսի ժամանակներին որևէ կասկած չի հարուցում[36]: «G-Z d»-ների ու «G-Z dd»-ների ժամանակագրության ու թողարկ-

[33] Borrell 1840, 4-6, Dressel 1898, 228-229, Walker 1976, 44, Nercessian 2006, 169, Kropp 2013a, 383, Kovacs 2014, 19, Olbrycht 2016, 626, Kéfélian 2021, 107-108, Barrett 2019, 330.

[34] Walker 1976, 44.

[35] Burnett, Amandry et all. 1992, 6, 28.

[36] Burnett, Amandry et all. 1992, N 455, 1774, 2748-2787.

ման վայրի խնդիրներին իրատեսական լուծում տալու համար հարկ է պատշաճ ուշադրություն դարձնել դրանց նշանակությանն ու պատկերագրությանը: Պետք է կարևորել այն փաստը, որ «G-Z dd»-ներն ու «G-Z d»-ները հուշադրամներ են և թողարկվել են փոքր քանակությամբ: Մ. Աբրամզոնի կարծիքով, այսօրինակ դրամները նախատեսված են եղել ինվեստիտուրայի ծեսի ժամանակ հանդիսատեսների մեջ «շաղ տալու» համար[37]: Սակայն «G-Z dd»-ների ու «G-Z d»-ների դիմապատկերների ու հորինվածքների և, հատկապես, ինվեստիտուրայի գործողության ակնհայտ տարբերությունները պարզորոշ վկայում են այն մասին, որ դրանք միաժամանակ չեն թողարկվել և նույն նշանակությունը չեն ունեցել: Այս պարագայում հարց է ծագում, թե խնդրո առարկա երկու դրամական միավորներից որ մեկն է «G-Z» դրամների առաջին թողարկումը: Այս երկընտրանքի լուծման իրական բանալին թաքնված է Զենոնի թագադրության վերաբերյալ Տակիտուսի հաղորդման բառակազմում. «**Germanicus in urbe Artaxata, adprobantibus nobilibus, circumfusa multitudine, insigne regium capiti eius imposuit, ceteri venerantes regem Artaxiam consalutavere»**[38] - «Գերմանիկուսը Արտաքսատա քաղաքում մեծամեծերի հավանությամբ և շուրջը հավաքված բազմության ներկայությամբ նրա (Զենոնի - Ա.Մ.) գլխին դրեց արքայական պատվանշանը»: Հեղինակը հաղորդում է ինվեստիտուրան ոչ թե մի քանի, այլ մեկ արքայական պատվանշանով «**insigne regium**» իրականացնելու մասին: «Տարեգրություններում» ապարոշով ինվեստիտուրաների վերաբերյալ նա օգտագործում է **evincire** (կապել, հանգուցել) բայը[39], ուստի վերոնշյալ հատվածում նրա գործածած «**ponere»** (դնել) բայից հասկացվում է, որ խոսքը խույրի մասին է, ինչպես որ ներկայացված է «G-Z d»-ի վրա: Զենոն-Արտաշեսի թողարկած բրոնզե դրամների վրայի հայկական խույրի պատկերները դրա վերաբերյալ այլևս կասկած չեն թողնում[40]:

Մեր կարծիքով, «G-Z d»-ն իսկապես ունեցել է «արարողակարգային» նշանակություն, իսկ դրա թողարկումը, ժամանակի և տարածության առումով ներդաշնակելով Զենոնի թագադրությանը, իրականացվել է Արտաշատի դրամահատարանում[41]: Թերևս, դրանով կարելի է բացատրել «G-Z d»-ի վրա Մ. Լեպիդուսի՝ վերը հիշատակված դինարի պատկերագրական ազդեցության իսպառ բացակայությունը:

---

[37] Abramzon 2002, 241. Համապետական նշանակության արարողությունների (նոր արքայի գահակալություն, ամուսնություն) ժամանակ դրամ «շաղ տալն» ունեցել է արգասավորության խորհուրդ: Այս տեսանկյունից Արտաշեսի և Սաթենիկի պսակադրության ժամանակ «ոսկի տեղալու» մասին Մ. Խորենացու հաղորդումը պետք է համարել ոչ թե գեղարվեստական զեղում, այլ իրական ծեսի փոխաբերություն:

[38] Tacitus 1896, II, 56.

[39] Tacitus 1937, VI, 42, Tacitus 1952, XV, 2, հմմտ. Paterculus 1961, II, 122. 1.

[40] Kovacs 2014, 20, Leu 2022, Lot 1436-1438.

[41] Բասմաջեան 1936, 56, Պտուկեան 1971, 25-39, Մուշեղյան 1983, 96-97:

Տակիտուսի՝ Զենոնի խույրով թագադրվելու մասին հաղորդման հետ «G-Z d»-ի դարձերեսի պատկերագրության ներդաշնակությունից երևում է, որ դրամի պատվիրատուն ու փորագրիչը հասկացել են, որ դրամի հորինվածքում թագադրության իրական գործողության ցանկացած այլափոխում կամ դրա մեջ որևէ օտարոտի խորհրդանշանի ներմուծում կարող է հակասություն առաջացնել ծեսի մասնակիցների կենդանի և դրամների թողած տեսողական տպավորությունների միջև: Ուստի, նրանք հոգ են տարել, որ այդ ինքնատիպ հուշանկարն արտացոլի թագադրության ծեսի իրական տեսարանը:

«G-Z dd»-ները ոչ թե «արարողակարգային», այլ տեղեկատվական նշանակություն են ունեցել և կոչված են եղել հռոմեական հասարակությանը տեղեկացնելու Գերմանիկուսի արևելյան առաքելության մեջ առանցքային տեղ զբաղեցրած «հայկական խնդրի»[42] բարեհաջող լուծման մասին: Ուստի, բնական է, որ «G-Z dd»-ների դարձերեսներին Գերմանիկուսի ինվեստիտուրայի ձևն ու խորհուրդը փոխվել և համապատասխանեցվել են կախյալ արքաների թագադրության վերաբերյալ հռոմեական «ապարոշ կապելու» (diadema evincire) կարծրատիպին: Սակայն «G-Z dd»-ների՝ մեզ հասած հինգ օրինակների միջև առկա պատկերագրական և կատարողական տարբերությունները վկայում են, որ դրանց թողարկումը ոչ թե միանվագ, այլ հաջորդական բնույթ է կրել:

Դատելով «G-Z dd»-ների դարձերեսներին ինվեստիտուրայի գործողության պատկերագրական շարժընթացից՝ առաջինը հատվել է «G-Z dd B» ենթատիպը, որին հաջորդել է «G-Z dd L»-ն: Համոզվելու համար բավական է համեմատել, մի կողմից, «G-Z dd B»-ի և «G-Z dd L»-ի, մյուս կողմից՝ Կալիգուլայի՝ վերը հիշատակված դրամի դարձերեսի ապարոշի ձևերն ու այն շնորհելու եղանակները (հմմտ. նկ. 1բ, 2բ 7բ): «G-Z dd B»-ի դարձերեսին ապարոշը նման է երկար պարանի, իսկ «G-Z dd L»-ի վրա այն համեմատաբար կարճ և միջնամասում նկատելիորեն լայնացող երիզ է: Երկու դեպքում էլ դրանք հանգուցված չեն, իսկ դրանց շնորհման գործողությունն էլ ծայրահեղ անիրական է: Թեև Կալիգուլայի հիշյալ դրամի վրա ևս ապարոշը հանգուցված չէ, բայց այն իր ճակատային մասից սահուն ձևով նեղացող և բարակ ծոպերով վերջացող տեսք ունի, որը հնարավոր չէ, ապարոշից բացի, մեկ ուրիշ պատվանշանի նմանեցնել: Կալիգուլայի դրամի վրա ապարոշի շնորհման սխեման նույնպես համապատասխանեցված է ինվեստիտուրայի պատկերագրական կանոնին: Ընդ որում, չնայած դրամական փոքր (30.5 մմ) մակերեսին, փորագրիչն այստեղ հոգ է տարել, որ կայսեր և Թրակիայի արքայի աջ ձեռքերի շարժումները ճշտորեն արտահայտեն մեկի՝ տալու, մյուսի՝ ստանալու գործողությունները: Մեր համոզմամբ, Կալիգուլայի հիշյալ

[42] Tacitus 1896, II, 55.

դրամի համեմատ «G-Z dd B»-ի և «G-Z dd L»-ի հորինվածքներում առկա ոճական և կատարողական անհարթությունները պետք է պայմանավորել ոչ այնքան դրանց փորագրիչների ցածր որակավորմամբ, որքան արքայական ինվեստիտուրայի ժանրի յուրացման գործում նրանց կրած դժվարություններով: Այլ խոսքով՝ «G-Z dd B»-ի և «G-Z dd L»-ի վերոնշյալ պատկերագրական թերություններն ինքնին վկայում են, որ դրանց թողարկումները նախորդել են Կալիգուլայի նշված դրամի երևան գալուն: Ըստ այդմ, կարծում ենք, որ «G-Z dd B»-ն թողարկել է Գերմանիկուսը՝ 18-19 թթ., իսկ «G-Z dd L»-ն՝ մասնակի փոփոխություններով, հատվել է նրա հիշատակի առթիվ Տիբերիուսի կազմակերպած միջոցառումների շրջանակում կամ էլ դրանցից դուրս:

«G-Z dd B»-ի և «G-Z dd L»-ի դարձերեսների երկու՝ արտաքուստ աննշան իրողություններն անվիճելի են դարձնում այն հանգամանքը, որ դրանք թողարկվել են Կապադովկիական Կեսարիայում: Նախ՝ ուշադրություն է գրավում այն փաստը, որ «G-Z dd B»-ի դարձերեսին Գերմանիկուան ու Զենոնը, երկու ծայրից բռնած, պահում են ապարոշը ոչ թե խույրի առջևից, ինչից կարելի կլիներ պատկերացնել, որ այն պետք է հանգուցվի ծոծրակին, այլ՝ հետևից: Դրանից հետևում է, որ դիտորդն ապարոշ կապելու գործողությունը մտովի ավարտելու համար նախ այն պետք է բոլորի խույրի շուրջը և ապա հանգուցի դրա դիմային մասում: Երկրորդ՝ պետք է կարևորել այն փաստը, որ «G-Z dd B»-ի և «G-Z dd L»-ի ապարոշի երիզը խույրի հետ խաչվում է վերջինիս միջին մասում: Դրանից էլ կարելի է եզրակացնել, որ դիտորդի երևակայության մեջ ապարոշը հանգուցվելուց հետո պետք է տեղ գտնի խույրի միջնամասում: Վերոնշյալ զույգ դիտարկումներն ինքնին հուշում են, որ «G-Z dd B»-ի և «G-Z dd L»-ի փորագրիչը խույրի ու ապարոշի համակցության հարցում առաջնորդվել է ոչ թե հայկական դրամների օրինակով, որոնց վրա ապարոշը բոլորվում է խույրի ստորին մասում և հանգուցվում ծոծրակին, այլ աչքի առաջ է ունեցել բացառապես Կապադովկիայի արքա Արիարաթես VI-ի (Ք.ա. 130-116 թթ.) արծաթե դրախմաների (նկ. 10բ)[43] և օբոլոսների[44] օրինակը, որտեղ ապարոշը բոլորված է խույրի միջնամասում և հանգուցված դրա դիմային հատվածում:

«G-Z dd B»-ի և «G-Z dd L»-ի կեսարիական ծագման բացահայտումը հիմք է տալիս կարծելու, որ տեղական դրամահատարանի հելլենիստական ավանդույթների ազդեցությամբ են կատարվել նաև դրանց դիմապատկերի, ինվեստիտուրայի գործողության, պատկերների հանդերձանքի ու չափական հարաբերության և, իհարկե, Զենոնի խույրի ձևափոխությունները: Գերմանիկուաի մահվանից հետո նրա «G-Z dd B»-ն վերաթողարկվել է առնվազն չորս անգամ: Ցավոք, դրանց հաջորդական կարգը որոշելու համար միակ

[43] Canepa 2017, 214, Fig. 10, Bertolami 2022, Lot 218.
[44] Bertolami 2022, Lots 226-229.

միջոցը մնում է դրանց դարձերեսների պատկերագրության շարժընթացը: Ըստ այդմ, ավել կամ պակաս վստահությամբ կարող ենք ասել, որ «G-Z dd L»-ն եղել է երկրորդ թողարկումը, որը, ամենայն հավանականությամբ, կատարվել է Գերմանիկուսի մահվանից անմիջապես հետո: Ելնելով «G-Z dd P»-ի և «G-Z dd Lanz»-ի դարձերեսների նույնությունից, կարող ենք ենթադրել, որ դրանք հատվել են Կալիգուլայի օրոք: Նկատի ունենալով այն փաստը, որ «G-Z dd Kü»-ի դարձերեսին Զենոնի խույրը ձևով խիստ տարբերվում է մյուսներից՝ կարող ենք եզրակացնել, որ այդ ենթատիպը թողարկվել է ամենավերջում՝ հավանաբար Կլավդիուսի օրոք: Իրողությունն այն է, որ նշված վերաթողարկումների ժամանակ ընդօրինակվել է «G-Z dd B»-ի հորինվածքի սխեման, բայց փոփոխվել են երեսի դիմապատկերը («G-Z dd L», «G-Z dd P»), դարձերեսին՝ պատկերների կանգնելու դիրքը («G-Z dd L»), Զենոնի խույրի ձևը («G-Z dd L», «G-Z dd P», «G-Z dd Lanz», «G-Z dd Kü»), հանդերձանքը («G-Z dd Kü»): Բայց ամենակարևոր փոփոխությունը, որով էապես հեշտացել է դրամի դարձերեսի հորինվածքի ընկալումը, եղել է ապարոշի երկար, պարանանման երիզը երկուատեք բռնելու տեսարանը հանգուցված ապարոշ շնորհելու պատկերով փոխարինելը:

Եզրակացություններ

Հռոմեական պաշտոնական կերպարվեստում կախյալ արքայի ինվեստիտուրան առաջին անգամ քարոզչության նյութ է դարձել պոնտական արքայազն Զենոնին 18 թ. Մեծ Հայքի արքա թագադրելու առթիվ թողարկված արծաթե դրախմաների ու երկդրախմաների վրա: Դրանք թողարկվել են տարբեր դրամահատարաններում, որոնց փորագրիչները գործել են իրարից տարբեր մշակութային ավանդույթների ծիրում: Դրախմաները թողարկվել են Արտաշատում՝ ինվեստիտուրայի արարողության ժամանակ հանդիսատեսների մեջ շաղ տալու նպատակով: Դիտորդի մոտ թագադրության ծեսի կենդանի և դրամի թողած տեսողական տպավորությունների միջև հակասություն թույլ չտալու նպատակով փորագրիչը յուրօրինակ ձևով համադրել է առարկայաբար և ձեռնադրությամբ իրականացվող ինվեստիտուրաների առանձին տարրերը՝ պահպանելով հորինվածքում պատկերների տեղաբաշխման և դրանց կարգավիճակները զանազանելու արևելյան կանոնները:

Երկդրախմաների թողարկումը ոչ թե միանվագ, այլ հաջորդական բնույթ է կրել: Առաջինը 18 թ. կամ 19 թ. թողարկվել է բեռլինյան ենթատիպը անձամբ Գերմանիկուսի կողմից Կեսարիայում: Դրա փորագրիչը ընդհանուր առմամբ ընդօրինակել է դրախմայի հորինվածքը, բայց նաև ազատորեն խմբագրել է այն՝ մի կողմից, հելլենիստական պատկերագրության ավանդույթների, մյուս կողմից, հռոմեական դիմարվեստի ու քաղաքական մշակույթի կարծրատիպերի համապատասխանությամբ: Մասնավորապես, նա

երկդրախմայի դարձերեսի ձեռնադրության գործողությունը փոխարինել է ապարոշի շնորհման տեսարանով: Բայց դա կատարել է անհաշվենակատո-րեն, որի հետևանքով հորինվածքը դարձել է դժվար ընկալելի: Գերմանիկոսի մահվանից հետո նրա երկդրախմայի վերաթողարկումների ժամանակ այդ խնդիրը լուծվել է, սակայն որոշ չափով ձևափոխվել են նաև դրախմաների երեսների ու դարձերեսների հորինվածքները:

Գրականություն

Բասմաջեան Կ. 1936, Հայկական դրամագիտութիւն եւ Հայաստանի վերաբերյալ դրամ-ներ, Վենետիկ, «Սբ Ղազարի տպ.», 226 էջ:

Դևեջյան Ս. 1986, Թագակիր իշխանավորի պատկերը Լոռի Բերդի բրոնզեդարյան բնա-կավայրից, Լրաբեր հասարակական գիտությունների, N 8 (524), Երևան, էջ 75-81:

Մանասերյան Ռ. 1997, Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, Երևան, «Արեգ», 215 էջ:

Մելիքյան Ա. 2016, Սալմաստի ժայռաքանդակը, Երևան, «Էդիթ Պրինտ», 220 էջ:

Մուշեղյան Խ. 1983, Դրամական շրջանառությունը Հայաստանում (մ.թ.ա. V դ. – մ.թ. XIV դ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 335 էջ, նկ. 43 թերթ:

Պտուկեան Զ. 1971, Հայաստանի վերաբերյալ հռոմեական դրամներ և մեդալիոններ, Վիեննա, Մխիթարեան Միաբանութիւն, 68 էջ:

Ստեփանյան Ա. 2012, Պատմության կերպափոխությունները Մեծ Հայքում, Գիրք Ա, Երևան, «Սարգիս Խաչենց-Փրինթինֆո», 385 էջ:

Վարդանյան Ռ. 2004, Լուկիոս Վերոսի օրոք Հայաստանում թողարկված պղնձե դրամներ, Պատմա-բանասիրական հանդես, N 2, Երևան, էջ 234-253:

Емельянов В. 2003, Ритуал в Древней Месопотамии, СПб., «Петербургское востоковеде-ние», «Азбука Классика», 320 с.

Abramzon M. 2002, The "Coronation" Coin of the Tracian King Rhoemetalces III, TALANTA. Proceedings of the Dutch Archaeological and Historical Society, Vol. XXXII-XXXIII (2000-2001), Amsterdam, p. 111-119.

Amandry M. Burnett A., et al. 2017, Roman Provincial Coinage, Supplement 4 (Volumes I-III, VII$_1$ and IX), Vol. I, http://rpc.ashmus.ox.ac.uk/supp/rpc-supp-4.pdf (ներբեռնման օրը՝ 12.08.2022), 125 p.

Barrett A. 2019, Caligula: The Abose of Power, 2nd Ed., London and New York, «Routledge», 408 p.

Bertolami Fine Arts ACR Auctions, Auction 109 (4 May 2022), https://www.coinarchives.com/a/results.php?results=100&search=Ariarathes+VI (ներբեռնման օրը՝ 11.08.2022).

Borrell H. 1840, Coin of Artaxias, King of Armenia, The Numismatic Chronicle, Vol. II, June, 1839-April, London, p. 4-6.

Bradshaw J. and Head R. 2012, The Investiture Panel at Mari and Rituals of Divine Kingship in the Ancient Near East, Studies in the Bible and Antiquity 4, Provo, p. 1-42.

Burnett A., Amandry M., et all. 1992, The Roman Provincial Cooinage, Volume I, From the death of Caesar to the death of Vitellius (44 BG-AD 69) Part I: Introduction and Cata-logue, London, «British Museum Press», Paris, «Bibliothèque Nationale», 702 p.

Butcher K., Ponting M. 2014, The Metallurgy of Roman Silver Coinage: From the Reform of Nero to the Reform of Trajan, Cambridge, «Cambridge University Press», 841 p.

Canepa M. 2017, Rival Images of Iranian Kingship and Persian Identity in Post-Achaemenid Western Asia, Persianism in Antiquity, Edited by Strootman R., Versluys M.J., Stuttgart, «Franz Steiner Verlag», p. 201-222.

Dressel H. 1898, Fortsetzung des Erwerbunges berichts, Zeitschrift für Numismatic, Band XXI, Herausgeben von H. Dannenberg, H. Dressel, J. Menadier, Berlin, «Weidmannsche Buchhandlung», S. 210-249.

Gardner P. 1872, On an unpublished Coin of Artavasdes II of Armenia, The Numismatic Chronicle and The Journal of the Numismatic Society XII, London, p. 9-15.

Kéfélian A. 2021, Armenia and Armenians in Roman Numismatics, Electrum, Vol. 28, Kraków, p. 105-134.

Kovacs F. 2014, Artaxias III and a Numismatic Enigma, Armenian Numismatic Journal, Ser. II, Vol. 10 (40), Published by Armenian Numismatic Soociety, p. 19-25.

Kramer S. 1963, The Sumerians: Their History, Culture, and Character, Chicago & London, The University of Chicago Press, 355 p.

Kropp A. 2013a, Crowning the Emperor: an Unorthodox Image of Claudius, Agrippa I and Herod of Chalkis, Syria 90, Beirut, p. 377-389.

Kropp A. 2013b, Kings without Diadems - How the Laurel Wreath Becoame the Insignia of Nabatean Kings, Archäologischer Anzeiger, N 2, Tübingen, p. 21-41.

Künker F. 2009, Münzen aus der Welt der Antike, Auction 153, (14 März) Osnabrüg, https://issuu.com/kuenkercoins/docs/a153 (ներբեռնման օրը՝ 03.08.22).

Lanz Numismatik München, Auction 94 (22.11.1999), https://www.acsearch.info/search.html?term=&company=86&auction=38 (ներբեռնման օրը՝ 11.08.2022).

Leu Numismatik AG-Web Auction 20 (16-18 Jul 2022), https://www.numisbids.com/n.php?p=sale&sid=5828 (ներբեռնման օրը՝ 20.08.2022).

Mathiesen H. 1992, Sculpture in the Parthian Empire, A Study in Chronology, II, Aarhus, «Aarhus University Press», 231 p.

Mattingly H. Sydenham E. 1986, The Roman Imperial Coinage, Vol. II, Vespasian to Hadrian, with an Introduction and 16 Plates, London, «Spink», 568 p.

Mattingly H. Sydenham E. 1930, The Roman Imperial Coinage, Vol. III, Antoninus Pius to Commodus, AD 138-192, London, «Spink and Son», 514 p. + XIV Pl.

Nercessian Y. 2006, Silver Coinage of the Artaxiad Dynasty of Armenia, Armenian Numismatic Society, Special Publicatin N 11, Los Angeles, 212 p. +96 Pl.

Olbrycht M. 2016, Germanicus, Artabanos II of Parthia, and Zeno Artaxias in Armenia, Klio 98 (2), Berlin, p. 605-633.

Paterculus V. 1961, Compendium of Roman History, Translated by F.W. Shipley, London, «William Heinemann LTD», Cambridge, MA, «Harvard University Press», 432 p.

Porada E. 1965, The Art of Ancient Iran: Pre-Islamic Culture, New York, «Crown Publishers», p. 203.

Postgate N. Roaf M. 1997, The Shaikhan Relief, Al-Rāfidān, Vol. XVIII, Tokio, p. 143-156.

Sear D. 2000, Roman Coins and their Values, Vol. I, London, «Spink & Son Ltd», 532 p.

Sear D. 2002, Roman Coins and their Values, Vol. II, London, «Spink & Son Ltd», 696 p.

Sellwood D. 1980, An Introduction to the Coinage of Parthia, 2nd Ed., London, «Spink», 322 p.

Suetonius 1914, Lives of the Cesars, with an English Translation by J. C. Rolfe, in Two volumes, Vol. I, London, New York, «Harvard University Press», 497 p.

Tacitus 1896, The Annals of Tacitus with Introduction and Notes by H. Furneux, Vol. I, Books I-VI, Second Edition, London, «Oxford University Press», 691 p.

Tacitus 1937, The Annals, with an English Translation by J. Jackson, In Four Volumes, Vol. II, Cambridge, Massachusetts, London, «Harvard University Press», 432 p.

Tacitus 1952, The Annals, with an English Translation by John Jackson, Vol. IV, London, Cambridge, Massachusetts, «Harvard University Press», 432 p.

Walker D. 1976, The Metrology of the Roman Silver Coinage, Part I, from Augustus to Domitian, Oxford, Published by British Archaeological Reports, 159 p.

ՀԱՅՈՑ ԱՐՔԱ ԶԵՆՈՆ-ԱՐՏԱՇԵՍԻ ԻՆՎԵՍՏԻՏՈՒՐԱՅԻ ՏԵՍԱՐԱՆՈՎ ՀՈՒՇԱԴՐԱՄՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Արթուր Մելիքյան

Ամփոփում

18 թ. Գերմանիկուս կեսարի կողմից պոնտական արքայազն Զենոնին (Արտաշես III) Մեծ Հայքի արքա թագադրելու առթիվ թողարկված հռոմեական դրախմաներն ու երկդրախմաները հատվել են տարբեր դրամահատարաններում և ունեցել տարբեր նշանակություններ: Դրախմաները հատվել են Արտաշատում՝ թագադրության ծեսի մասնակիցների մեջ շաղ տալու համար: Այդ իսկ պատճառով դրանց փորագրիչը ձգտել է իրապաշտորեն վերարտադրել նշված արարողության տեսարանը: Գործելով արևելյան կերպարվեստի պատկերագրական ավանդույթների ծիրում և պահպանելով դրա կանոնական սկզբունքները՝ փորագրիչը կարողացել է մեկ հորինվածքի մեջ համադրել առարկայական և ձեռնադրությամբ ինվեստիտուրայի առանձին տարրերը:

Երկդրախմաները թողարկվել են հաջորդաբար: Դրանցից առաջինը 18/19 թ. անձամբ Գերմանիկուսի կողմից Կեսարիայում հատվել է բեռլինյան («G-Z dd B») ենթատիպը: Դրա հորինվածքը համապատասխանեցվել է հելլենիստական պատկերագրության ավանդույթներին, հռոմեական դիմարվեստի սկզբունքներին ու կախյալ արքաների թագադրության պրակտիկային: Այդ ամենի շնորհիվ երկդրախմաների դարձերեսին պատկերները դարձել են համաչափ, իսկ ձեռնադրությամբ ինվեստիտուրայի ակտն էլ փոխարինվել է ապարոշի շնորհման գործողությամբ: «G-Z dd B»-ի հետագա վերաթողարկումների ժամանակ կատարված մասնակի փոփոխությունները պայմանավորել են երկդրախմաների առկա օրինակների միջև եղած տարբերությունները:

Բանալի բառեր՝ Գերմանիկուս, դրախմա, երկդրախմա, ինվեստիտուրա, հորինվածք, խոյր, ապարոշ:

ИКОНОГРАФИЧЕСКАЯ СИСТЕМА МЕМОРИАЛЬНЫХ МОНЕТ СО СЦЕНОЙ ИНВЕСТИТУРЫ АРМЯНСКОГО ЦАРЯ ЗЕНОНА-АРТАШЕСА

Артур Меликян

Резюме

Римские драхмы и дидрахмы, отчеканенные по случаю коронации Цезарем Германиком понтийского царевича Зенона (Арташеса III) на трон Великой Армении в 18 году, изготовлялись в разных монетных дворах и имели разное значение. Драхмы чеканились в Арташате, чтобы рассыпать их среди участников об-

ряда инвеституры. По этой причине гравировщики пытались реалистично воссоздать картину указанного обряда. Действуя в рамках иконографических традиций восточного изобразительного искусства и сохраняя его канонические принципы, гравировщики смогли в одной композиции сопоставить отдельные элементы двух видов инвеституры: предметной инвеституры и инвеституры через рукоположение.

Дидрахмы изготовлялись последовательно. Первый из них, берлинский подтип, («G-Z dd B») был лично отчеканен Германиком в Кесарии в 18/19 г. Его композиция была приведена в соответствие с эллинистическими иконографическими традициями, принципами римской портретной живописи и практикой инвеституры царей-клиентов. В результате этого изображения на реверсе дидрахм представлены пропорционально, а акт рукоположения в обряде инвеституры был заменен вручением диадемы. В дальнейшем, подтип «G-Z dd B» подвергся частичным изменениям: именно этим обусловлена разница между существующими образцами дидрахм.

Ключевые слова – Германик, драхма, дидрахма, инвеститура, композиция, тиара, диадема.

THE ICONOGRAPHICAL SYSTEM OF MEMORIAL COINS WITH ARMENIAN KING ZENON-ARTAXIAS' INVESTITURE SCENE

Artur Melikyan

Abstract

The drachms and didrachms with Pontic prince Zeno's (Artaxias III) investiture scene as king of Great Armenia, were minted in different mints and had different meanings. The drachms were minted in Artashat in 18 AD for dispersing among the participants of the crowning ceremony. That is why their engraver aimed to reproduce the mentioned ceremony scene realistically. Acting in the circle of iconographical traditions of Eastern Art and keeping its canonical principles, the engraver could combine in one invention the separate elements of two diferent schemes of investiture (investiture objectively and with ordaining).

Didrachms were issued in turn. The first of them, the Berlin subtype "G-Z dd B", was minted in Caesarea personally by Germanicus in 18-19 AD. The compositia of this didrachm was conformed to the traditions of Hellenistic iconography, to the principles of Roman portrait art and to the practice of the crowning of client kings. Approprietely, the images on the reverse of didrachms were made proportionate and the act of investiture with ordaining was replaced with the act of awarding a diadem. During later reissue of "G-Z dd B" partly changes were made which conditioned the differences between the present examples of didrachms.

Key words – Germanicus, drachm, didrachm, investitura, compositia, tiara, diadema.

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՃԱՐԻ ՏԻՐԱՄՈՐ ՈՒՇԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՌԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՃԱՆԿԱՐԸ

Սյուզաննա Գրիգորյան

Արվեստագիտության թեկնածու
Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան
ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 13
Էլ. հասցե՝ grigoryansyuzanna20@aspu.am
ORCID: 0000-0001-5587-8003

Վարդիթեր Գամաղելյան

Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան
ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 13
Էլ. հասցե՝ varditer.gamaghelyan@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 16.03.2023, գրախոսվել է 20.03.2023, ընդունվել է տպագրության 11.12.2023
ORCID: 0000-0001-8213-6515
DOI: 10.53548/0320-8117-2023.3-261

Ներածություն

Հայ իրականության մեջ խճանկարը, որպես արվեստի տեսակ, լայն կիրառություն չի ունեցել, և համապատասխանաբար գրեթե գոյություն չունեն խճանկարչությանը վերաբերող վերլուծական նյութեր:

Սույն հոդվածը նվիրված է հենց այդօրինակ արվեստին: Ընդ որում, խճանկարը, հավաքված լինելով Երուսաղեմի Սբ Հարության տաճարի որմին և արծարծելով կրոնական թեմա, կատարված է XX դ. կեսերին: Ստեղծագործության «բախումն» ու հետաքրքրությունը ծնվում են հենց այս հանգամանքից:

Խճանկարչության խնդիրների մասին

Հայտնի է, որ գեղարվեստական մշակույթում, մասնավորապես տարածական-տեսողական արվեստներից ճարտարապետությանն են շնորհված բոլոր արվեստների համակարգման և համադրության կարողությունն ու հատկանիշը: Արվեստների այլ տեսակները կոչված են հարստացնելու և ամբողջացնելու համադրման հնարավորությունները: Այդպիսին էին առաջին հերթին միջնադարյան արվեստների հիերարքիկ՝ ենթակայական սկզբունքն ու համակարգը: Քանդակի, որմնանկարի և այլ լրացնող արվեստների շարքին էր դասվում նաև խճանկարը: Վերջինս մեծ տարածում է ունեցել անտիկ շրջանում, միջնադարյան եվրոպական և բյուզանդական արվեստում, սակայն մեզանում խճանկարի պրակտիկան այնքան էլ հարուստ չէ: Հնարավոր է՝ հենց այս պատճառով է, որ խճանկարչության մասին մինչ այժմ գոյություն չունեն ամբողջական աշխատություններ: Գրականագետ, արվեստաբան

Գարեգին Լևոնյանը (1872-1947 թթ.), նույնիսկ կասկած հայտնելով հայկական խճանկարչության գոյության մասին, գրել է. «Հախճապակյա (խճանկարների) պատկերների մասին ոչ միայն ոչինչ չի գրված առհասարակ, այլև հայոց մեջ արվեստի այս ճյուղը գրեթե համարվում է չեղյալ»[1]:

Այդուհանդերձ, Հայաստանում, ի հակասումն նրա պնդման, պեղումներից հայտնաբերված խճանկարները, ինչպես նաև գրավոր աղբյուրները ցույց են տալիս, որ կերպարվեստի այդ տեսակը զարգացած էր հայ իրականության մեջ դեռևս հեթանոսական ժամանակներից: Ըստ էության, արվեստի նշված տեսակը ժառանգվել է ուրարտական փուլից. դրա վկայությունն են ուրարտական արվեստի բարձրարժեք նմուշները[2]:

Այսպիսով՝ հայկական խճանկարչության ակունքները բխում են ուրարտական մշակույթից և զարգացում են ստանում հետագա դարերում: Մասնավորապես հայտնի են Գառնիի, Արտաշատի, Դվինի, Զվարթնոցի խճանկարները, որոնց զարգացումը ապահովում է ժամանակային կապը հելլենիզմից մինչև միջնադարյան շրջան: Հայկական խճանկարչության մասին պատկերացումները լիարժեք չեն լինի առանց սփյուռքի հայկական եկեղեցիները զարդարող այդ արվեստի նմուշների ուսումնասիրության:

Հարկ է նշել, որ հնության և կատարման վարպետության առումով առանձնանում են Երուսաղեմի՝ VI-VII դարերով թվագրվող հայկական խճանկարները[3]:

Խճանկարները թեմատիկ առումով բազմաբովանդակ են, շատ հաճախ խորհրդանշական բնույթի: Բացի բուսական, կենդանական, ինչպես նաև առասպելական կերպարներ պատկերող խճանկարներից, արվեստի այդ նմուշներում, մասնավորապես եկեղեցիներում, հանդիպում ենք նաև կրոնական բովանդակությամբ աշխատանքների:

Քրիստոնեական խճանկարչական արվեստը և պատկերագրությունը օգտագործվում են որպես քրիստոնեության քարոզչության պատկերավոր միջոց: Ինչպես գրում է Վիկտոր Լազարևը (1897-1976 թթ.), «...բյուզանդական հողի վրա արվեստը դառնում է կրոնական ներգործության զենք, որը կոչված էր հավատացյալին իրական աշխարհից տեղափոխելու մի այլ աշխարհ»[4]:

Ֆրանսիացի միջնադարագետ Անդրեյ Գրաբարը (1896-1990 թթ.) նկատում է, որ քրիստոնեական կառույցներում ընդունված է պատկերի ընկալման երկու տեսակ՝ պարզ ուսուցողական բնույթի, երբ պատկերը փոխարինում է

[1] Լեւոնեան 1921, 24:

[2] Պատմահայր Մովսես Խորենացին (V դար), տալով Տուշպայի նկարագրությունը, նշում է. «Քաղաքի մեջ շինում է նաև բազմաթիվ ընտիր ապարանքներ, կրկնահարկ և եռահարկ, զարդարված տեսակ-տեսակ գույնզգույն քարերով, և ամեն մեկում պատուհաններ ըստ հարմարության», տե՛ս Խորենացի 1997, 95:

[3] Գրիգորյան 2019, 252:

[4] Лазарев 1986, 13.

գրավոր խոսքին, և խորհրդաբանական[5]: Այս առումով, քրիստոնեական արվեստում, իրականի ու պատկերավորի համատեղման եզրերում, մշակվեց սուրբ կերպարների պատկերագրման մի ամբողջ համակարգ:

«Խաչելություն» խճանկարը Երուսաղեմի Սուրբ Հարության տաճարում

Վաղ միջնադարից սկսած՝ հայ արվեստում կրոնական թեմաները պատկերավորելու համար ընտրվել են առավելապես որմնանկարչությունը, քանդակագործությունը, մանրանկարչությունը, իսկ ավելի ուշ՝ հաստոցային գեղանկարչությունը: Նշվածների շարքում խճանկարչությունը, որը թեպետ և պահպանության առումով երկարակյացների թվին է դասվում, սակավ է կիրառվել հայ իրականության մեջ, ամենայն հավանականությամբ, նյութի թանկարժեքության և հավաքման տեխնիկայի բարդության պատճառով:

Այդուհանդերձ, կրոնական թեմաներով առավել արժեքավոր խճանկարներ կարելի է տեսնել Երուսաղեմում՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հատականկարը (Սբ Հարության տաճար), Երկրորդ Գողգոթա խորանի խճանկարը (Սբ Հարության տաճար):

Նշվածներից հետաքրքրական է նոր ժամանակներում ստեղծված «Խաչելություն» խորագրով խճանկարը՝ Սուրբ Հարության տաճարում: Նշված աշխատանքը, ստեղծված XX դ. երկրորդ կեսին, մեր ուսումնասիրության առարկան է (նկ. 4):

Մինչ վերջինիս անդրադառնալը, նշենք որ կրոնական թեմաների վերարտադրման նպատակով խճանկարչական արվեստին են դիմել XIX դ. վերջին և XX դ. սկզբին ստեղծագործող ականավոր հայ նկարիչներ Վարդգես Սուրենյանցը (1860-1921 թթ.)[6] և Եղիշե Թադևոսյանը[7]:

Տիրամոր ուշագնացության մատուռի որմին դրոշմված «Խաչելություն»[8] խճանկարը, ըստ վրայի արձանագրության՝ «ՌՆԺԶ», թվագրվում է 1967-ով, և հավանական պատվիրատուն կամ հեղինակն է Հայկի Գավուճյանը[9], որի անունը վավերագրվում է ստորին հատվածում՝ «ՀԱՅԿԻ ԳԱՎՈՒՃԵԱՆ»:

---

[5] Grabar 1946, 334.

[6] Վարդգես Սուրենյանցի խճանկարի համար ստեղծված էսքիզները պահվում են ՀԱՊ-ում: Դրանց մասին տե՛ս Միքայելյան 2003, 160, նկ., Барской 1995:

[7] Եղիշե Թադևոսյանը, բացի իր և Պոլենովի դիմանկար խճանկարներից (1907), կերտել է նաև Փրկչի խճանկար դիմապատկերը (1908), տե՛ս Վարդանյան 2010, 70:

[8] «Խաչելության» տեսարանը ամենատարածված թեմաներից է: Հնագույն պատկերները պահպանվել են պաղեստինյան սրվակների վրա, Կապադովկիայի որմնանկարներում, Հռոմում, Հայաստանի IV–V դդ. եկեղեցիների պատերին: Ուշագրավ են Աղթամարի Սբ Խաչ եկեղեցու որմնանկարի համապատասխան հատվածը (921), «Վեհափառի Ավետարանի» խաչելության դրվագը պատկերող մանրանկարը:

[9] Հավանական հեղինակի կամ պատվիրատուի մասին տեղեկություն գտնելու մեր բոլոր փնտրտուքները ապարդյուն անցան:

Չնայած այն բանին, որ աշխատանքը իրականացվել է XX դ. կեսերին, այդուհանդերձ, այն պահպանել է միջնադարյան արվեստի բոլոր կանոնիկ դրույթները, սակայն նորովի է մեկնաբանել մատուցվող սյուժեն:

Համաձայն քրիստոնեական պատկերագրության, այստեղ Հիսուսը պատկերված է խաչին գամված, գլուխը թեքած, աչքերը փակ՝ գլուխը շրջանառված լուսապսակով: Խաչը կանգնեցված է Գողգոթան խորհրդանշող վեմի և Ադամի գանգի վրա. գանգը մահվան՝ սատանայի խորհրդանիշն է, որը պարտվեց Հիսուսի ոտքերի տակ: Ըստ էության, կոմպոզիցիան բարդ կառուցվածք ունի, քանի որ ներառում է «Խաչելություն» և «Բարեխոսություն» («Դեհիսուս») պատկերագրային համակարգերը: Զանց առնելով ընդունված կարգը՝ հեղինակը «Դեհիսուս»-ի բարեխոսությունը մեկտեղել է փրկչական՝ Խաչելության խորհրդաբանության հետ: Ներկայացվող «Խաչելության» մեջ ամեն ինչ կազմակերպված է ըստ սյուժեի. Տիրոջը խաչին գամելու ժամանակ, խաչի ստորոտում ներկա են Տիրամայրը և Հովհաննես ավետարանիչը (Հովհաննես 19:26-27), որին և Տերը պատգամեց մոր հետագա ճակատագրի մասին հոգ տանելը: Բովանդակային և կառուցվածքային ուղղվածությունը միավորում և միաձուլում է մեկ այլ փրկչական՝ «Դեհիսուս» կոմպոզիցիան: Աշխատանքում հեղինակը Հովհաննես Մկրտչի կերպարը կարծես փոխակերպել է Հովհաննես ավետարանիչով: «Բարեխոսության» իկոնոգրաֆիկ լուծման մեջ Քրիստոսի աջ և ձախ կողմերում աղոթական դիրքով կանգնած Տիրամոր և Հովհաննեսի ֆիգուրները (ինչպես և Երուսաղեմի «Խաչելություն» կոմպոզիցիայի պարագայում է), որպես կանոն, գտնվում են հավասար աստիճանի վրա, ունեն գրեթե մարմնի նույն թեքվածքը և մեղեդայնության առումով ի հայտ են բերում և՛ հիերարքիկ, և՛ համատիեզերական հավասարակշռության գաղափարը: Այս տիպաբանության օրինակը մենք տեսնում ենք Կիլիկյան մանրանկարչական դպրոցի ներկայացուցիչ Թորոս Ռոսլինի վրձնած «Բարեխոսություն» մանրանկարչական էջում (նկ. 2): Մալաթիայի Ավետարանի (1268 թ., Մատթեոս N 10675) այս պատկերում երևում է հեղինակի ձգտումը՝ միացնել տարբեր տեսարաններ՝ դրանք համակցելով որպես միասնական իմաստային հորինվածք, որտեղ Դեհիսուսն է՝ միացված Երկրորդ գալստյանը[10]:

Խճանկարում պատկերված խաչի աջ կողմում կանգնած է Տիրամայրը, ձախում՝ Հովհաննես ավետարանիչը: Ավետարանչական թեմաների պատկերման օրինակներում, ամեն մի մանրամասն՝ նույնիսկ երկրորդական, ունի իր խորհրդաբանական իմաստը: Խաչի մոտ թռչող հրեշտակների դերի մասին հանդիպում ենք նաև միջնադարյան ռուս սրբանկարիչ Դիոնիսի (մոտ 1440-1502 թթ.) «Խաչելություն» աշխատանքում, որտեղ հրեշտակներից մեկը

[10] Հակոբյան, Ղազարյան 2019, 104:

թղթերով է պատկերված, որը խորհրդանշում է Եկեղեցին, իսկ մյուսը առանց թղթերի՝ Սինագոգը, որն իր իրավունքները հանձնում է Եկեղեցուն: Այս կարգի մեկնաբանությունը առկա է մինչ Դիոնիսը ստեղծագործած վաղ քրիստոնեական գրողների մոտ: Նրանցից մեկի՝ Կղեմես Ալեքսանդրացու մոտ կարող ենք գտնել հետևյալ համեմատությունը՝ Եկեղեցին նման է բազմազավակ և օրինակելի կնոջ, իսկ Սինագոգը՝ անհավատի[11]: Ավելի ուշ այս պատկերագրությունը հանդիպում է նաև մանրանկարչության և մոնումենտալ արվեստում: Ուշագրավ է նաև այն, թե ինչպես է բնությունը արձագանքում խաչելության եղելությանը. երկինքն ու երկիրը մթագնում են և տագնապում: Անշուշտ, այս պատկերումը վերցված է Ավետարաններից: Ավետարանիչները նշում են խավարման մասին, որը տարածվում է երկրի վրա (Մատթեոս 27:45, Մարկոս 15:33, Ղուկաս 23:44-46): Այս նկարագրության արտահայտումը կերպարվեստի լեզվով, IV դարից սկսած, ընդունված է իրականացնել լուսնի և արևի խորհրդաբանական պատկերներով: Շատ հետազոտողների կարծիքով, արևի և լուսնի պատկերագրական կապը անտիկ դիցաբանական սյուժեների հետ գրեթե աղերս չունի: Թե՛ Ավետարանում և թե՛ սրբապատկերներում բնության տարերքների պատկերումը էսխատոլոգիկ (վախճանաբանական) բնույթ է կրում: Այսինքն՝ ծնվել է երևույթների կրոնական բովանդակությունից: Այդ է պատճառը, որ լուսինը հաճախ կարմիր է պատկերվում, իսկ արեգակը՝ մթագնած: Հովհաննեսի Հայտնության մեջ պարզորոշ է դառնում այդ պատկերման էությունը, որը կապված է վերջին օրերի ցնցումների հետ: Ներկայացված խճապատկերում լուսինը, իր վրա կրելով ցերեկային տագնապալի տրամադրությունները, ակամայից հղում է խաչելության այն դրվագին, երբ պարզ երկինքը պատվում է խավարով, և Աստծո Որդին իր վերջին շունչն է տալիս: Այս վայրկյանից տեղի է ունենում երկնայինի և երկրայինի տարաբաժանումը, որը կրկին կվերադառնա ի շրջանս յուր (նկ. 3):

Երուսաղեմյան այս խճանկարի կոմպոզիցիան հազվադեպ է, բայց եզակի չէ իր լուծմամբ: Նմանօրինակ կառուցվածք կարելի է տեսնել, օրինակ, Կիպրոսում պահվող «Խաչելություն» սրբապատկերում, որտեղ խաչված Քրիստոսի աջ և ձախ կողմերում Մարիամն ու Հովհաննես առաքյալն են: Կարևոր տարբերությունն այն է, որ այստեղ լուսինը շառագունել է, իսկ արևը՝ մթագնել, ինչը խոսում է Հովհաննես ավետարանչի պատմոսյան տեսիլքի մասին: Ակնհայտ է բյուզանդական ազդեցությունը, և ի տարբերություն հայկական խճանկարի պատկերման, կիպրոսյան որմնանկարներում առջևի ներքևի պլանում ծնրադիր պատվիրատուի կերպարն է առկա: Այն կարծես խորհրդանշում է արտաքին և ներքին աշխարհների միջև կապը:

[11] Афонасин 1997, 68.

Հայ արվեստում պատկերագրական նման մոտեցում ենք տեսնում նաև Երուսաղեմում պահվող՝ Սարգիս Պիծակի «Խաչից իջեցնելը և Մարիուն թագուհին» մանրանկարի կոմպոզիցիայում (նկ. 1) (Մարիուն թագուհու Ավետարան, 1346 թ. Երուսաղեմ, N 2568)[12], որում խաչի ձախակողմյան հատվածում ողբացող Տիրամայրն է, իսկ աջակողմյան թևին, ինչպես նշված է՝ Կյուրիկյան տոհմի թագուհի Մարիունը (XIV դար)[13]: Երկու ֆիգուրները՝ աջ և ձախ հարաբերակցությամբ, հավասարակշռում են կոմպոզիցիան, սակայն հողեղեն Մարիուն, Տիրամոր համեմատ, գտնվում է ավելի ցածր դիրքում: Կտիտորական պատկերման այս կարգը մշակված է ողջ քրիստոնեական իկոնոգրաֆիկ համակարգում:

Ամենայն հավանականությամբ, խճապատկերի կոմպոզիցիայի հեղինակը ծանոթ է եղել Սարգիս Պիծակի և Թորոս Ռոսլինի՝ վերը նշված մանրանկարներին: Մտահաղացման առումով, մեր կողմից դիտարկվող խճանկարը, թեպետ և ոչ բառացի, բայց ակներև առնչություններ ունի միջնադարյան արվեստին պատկանող այս աշխատանքների հետ:

Հետազոտվող խճանկարի վրա առկա է նաև. «ԿԻՆ ԴՈՒ ԱՀԱ ՈՐԴԻ ՔՈ ՅՇՏԿ ԲԱՐԻ ԾՆՈՂԱՑՆ» արձանագրությունը: Այս տողերը Ավետարանում առկա՝ Հիսուսի խոսքերն են. «Երբ Յիսուս տեսաւ մօրը և այն աշակերտին, որ մօտ էր կանգնած, որին նա սիրում էր, մօրն ասաց. «Ո՛վ կին, ահա՛ քո որդին» ապա աշակերտին ասաց. «Ահա՛ քո մայրը», և այդ պահից աշակերտը նրան իր մօտ առաւ» (Հովհաննես 19: 26-27): Նկարը և խոսքը, որպես պատկերային ձևի տարրեր, լրացնում են միմյանց, նպաստում գաղափարի ամբողջական արտահայտմանը: Այդ ընթացքում խոսքը (գիրը) ասես վերածվում է պատկերի, երբեմն էլ՝ տեսարաններ «ցույց տվող», մեկնաբանող գեղարվեստական միջոցի:

Այս աշխատանքը կատարված է բյուզանդական խճանկարչական արվեստի կանոնական սկզբունքներով՝ գործի դնելով սմալտայի շարվածքի՝ հավասար և ընդհատվող հաջորդականությունը, պահպանելով ռիթմը՝ խճի խորանարդների գունային ճիշտ հարաբերակցությունները: Տվյալ դեպքում իտալական սմալտայի կիրառումը հայ վարպետների ձեռքում գեղարվեստական բարձր որակ է ստացել:

Պատկերի հուզական արտահայտչականության հիմնական տարրը եղել և մնում է գույնը: Գույնը ընդհանուր հորինվածքի անհրաժեշտ բաղկացուցիչներից մեկն է, որի օգնությամբ ամբողջական տեսք է ստանում կերպարը, և միաժամանակ՝ ողջ պատկերի կառուցվածքը: Աշխատանքի մյուս բաղադրիչների համեմատությամբ, գույնը իր ներգործության ուժով դիտողի մոտ ստեղծում է որոշակի տրամադրություն: «Գույնը և գիծը, - գրում է Անրի Մա-

[12] Աղասյան, Հակոբյան, Հասրաթյան, Ղազարյան 2009, 216-217:
[13] Mutafian 2022, 318.

տիսը, - ուժեր են, որոնց խաղի, հարաբերության ու հավասարակշռության մեջ է թաքնված ստեղծագործելու գաղտնիքը»[14]: Քրիստոնեական պատկերագրական արվեստում գույնի իմաստաբանական նշանակությունը պատկերագրական մոտիվների հետ մեկտեղ, ըստ Նիկողայոս Քոթանջյանի (1928-2013 թթ.), կիրառվել է երկու իմաստով՝ «ասկետիկ-խորհրդանշական» և «գործնական-տեղեկատվական»[15]: Աշխատանքում առկա յուրաքանչյուր գույն, գունային ամեն մի հատված ոչ միայն պետք է հարաբերել հարևանող գույների հետ, այլև՝ «հարմարեցնել» և դիտել ամբողջության մեջ:

Այս աշխատանքում երկնային տիրույթը կապույտով է լուծված, որի շնորհիվ կտրուկ առանձնանում են խաչը և երկու ֆիգուրները: Ներքևի գոտին, գունատոնային և գծային լուծման առումով, չափավորված է, այստեղ հավասարակշռության մեջ են դրված ծավալատոնային պլաստիկան և գծային ոճավորումը: Այն հատվածներում, որտեղ մարմնի պատկերագրումն է, կիրառված է չափավոր պլաստիկ լուծման համակարգը, իսկ այնտեղ, որտեղ հանդերձանքն է և գիրը, ակնառու է ոճավորված գիծը: Զգեստների և Քրիստոսի որովայնի հատվածներում կիրառվում է գալարագծի պայմանական լեզուն: Իսկ ահա հորիզոնական ժապավենաձև գրվածքի տիրույթում գիծը դառնում է հստակ և կայուն:

Հայ արվեստում «Խաչելության» հնագույն նմուշները խաչաքանդակներն են, որոնց բազմաթիվ օրինակներ պահպանվել են IV-V դդ. եկեղեցիների պատերին, իսկ կոմպոզիցիոն տեսարանի ամենից վաղ պատկերը գտնվում է Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցու որմնանկարներից մեկում (921 թ.)[16]:

Եզրակացություններ

Հայտնի է, որ քրիստոնեական արվեստի նյութը, եթե անգամ այն գալիս է կյանքից, անպայման բեկված է լինում Սուրբ Գրքի կիզակետով: Այդ սկզբունքի շրջանակում յուրաքանչյուր ազգային արվեստ, դպրոց, կենտրոն, հենվելով տեղական պատկերացումների, տիրապետող հասկացությունների ու նախասիրությունների վրա, իր առանձնահատկություններն է դրսևորում:

Բոլոր պարագաներում՝ խորքային իմաստավորմամբ, կրոնական բովանդակությամբ աշխատանքները սակրալ մետաֆիզիկական, սրբազան բնույթի են, որքան էլ մարմնեղեն պատկերագրում ունենան: Այդ իսկ պատճառով մատուցվող կերպարները և դրույթները տարածությունից ու ժամանակից դուրս են հաստատում իրենց գոյությունը:

[14] «Les couleurs, les lignes sont des forces, et dans le jeu de ces forces, dans leur équilibre, réside le secret de la création», տե՛ս https://derives.tv/il-faut-regarder-toute-la-vie-avec/

[15] Котанджян 1978, 18.

[16] Մաթևոսյան, Ավետիսյան 1993, 72:

Նկ. 1. «Իջեցում խաչից», Մարիուն թագուհու Ավետարան, 1346 թ., նկարիչ՝ Սարգիս Պիծակ, Երուսաղեմ N 2568 (Հակոբյան, Ղազարյան 2019, 231)

Նկ. 2. «Դեիսուս»(Բարեխոսություն) Մալաթիայի Ավետարան, 1268 թ., նկարիչ՝ Թորոս Ռոսլին, Մատ. N 10675 (Հակոբյան, Ղազարյան 2019, 206)

Նկ. 3. «Խաչելություն», Կեռան թագուհու Ավետարան, 1272 թ., Երուսաղեմ N 2563 (Հակոբյան, Ղազարյան 2019, 204)

Նկ. 4. «Խաչելություն», խճանկար, 1967, Երուսաղեմ, Սբ Հարության տաճար (Mutafian 2022, 348)

Գրականություն

Աղասյան Ա., Հակոբյան Հ., Հասրաթյան Մ., Ղազարյան Վ. 2009, Հայ արվեստի պատմություն, Երևան, «Զանգակ-97», 575 էջ

Գրիգորյան Ս. 2019, Հայ Միջնադարյան խճանկարչության քրիստոնեական ավանդույթը (Երուսաղեմի խճանկարների օրինակով), Երևան, Բանբեր Մատենադարանի, N 27, էջ 251-261:

Լեւոնեան Գ. 1921, Ներածութիւն հայոց գեղարուեստի պատմութեան, Գ, Նկարչութիւն, Երևան, Գեղարուեստ հանդէս, N 7, էջ 22-33:

Հակոբյան Հ., Ղազարյան Վ. 2019, Հայկական մանրանկարչություն, Երևան, «Տիգրան Մեծ», 288 էջ:

Խորենացի Մ. 1997, Հայոց պատմություն (աշխարհաբար թարգմ.՝ Գ. Սարգսյանի), Երևան, «Հայաստան», 552 էջ:

Մաթևոսյան Կ., Ավետիսյան Ք. 1993, Ավետարանական պատկերներ, Երևան, «Մոմիկ», 103 էջ:

Միքայելյան Մ. 2003, Վարդգես Սուրենյանց, Երևան, Անահիտ հրատ., 160 էջ:

Афонасин Е. 1997, Философия Климента Александрийского, Новосибирск, изд. НИИ, 126 с.

Барской Т. 1995, Армянская церковь в Ялте, Симферополь, МЧП «Симеиз», 20 с.

Котанджян Н. 1978, Цвет в раннесредневековой живописи Армении (Анализ памятников VI-VII вв.), Ереван, «Советакан грох», 139 с.

Лазарев В. 1986, История византийской живописи, Москва, «Искусство», 329 с.

Mutafian C. 2022, Jerusalem et les Armeniens, Paris, Les Belles Lettres, 517 p.

Grabar A. 1946, Martyrium. Iconographie, Vol. 2, Paris, College de France, 405 p.

https://derives.tv/il-faut-regarder-toute-la-vie-avec/ (ներբեռնման օրը՝ 29.09.2023).

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՃԱՐԻ ՏԻՐԱՄՈՐ ՈՒՇԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՌԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՃԱՆԿԱՐԸ

Սյուզաննա Գրիգորյան, Վարդիթեր Գամաղելյան

Ամփոփում

Երուսաղեմի Սուրբ Հարության տաճարի Տիրամոր ուշագնացության մատուռի մեծադիր խճանկարի հորինվածքը, ըստ աշխատանքում նշված տվյալների, արվել է 1967 թ. և, համաձայն միջնադարյան կանոնների, ներկայանում է որպես անանուն ստեղծագործություն: Ստորին հատվածում նշված է միայն պատվիրատուի անունը: Նույնիսկ այս հանգամանքը տարակուսելի է թվում, քանզի հնարավոր է, որ պատվիրատուն եղել է հենց ինքը՝ հորինվածքի հեղինակը:

Կոմպոզիցիան ներկայացնում է «Խաչելություն» թեման. արտառոցն այստեղ թեմայի ընթերցումն է, որտեղ կարծես մեկտեղված են միջնադարյան կանոնականությունից եկող ավանդական՝ «Բարեխոսության» և «Ողբի» սյուժեները: Հեղինակները մանրազնին ուսումնասիրել են թե՛ տվյալ մեկնաբանությունը, որը բխում է հավանաբար ժամանակակից՝ XX դ. հոգեբանական խմորումներից, թե՛ կոմպոզիցիայի բովանդակային բոլոր մանրամասները: Այս խճանկարով մեկ անգամ ևս ընդգծվում է հայկական ներկայությունը համաքրիստոնեական Սբ Հարության տաճարում:

Բանալի բառեր՝ Սբ Հարության տաճար, խճանկար, «Խաչելություն», հայ արվեստ, «Բարեխոսություն», Երուսաղեմ, քրիստոնեական արվեստ:

АРМЯНСКАЯ МОЗАИКА В ЧАСОВНЕ БОЖЬЕЙ МАТЕРИ ХРАМА СВЯТОГО ВОСКРЕСЕНИЯ В ИЕРУСАЛИМЕ

Сюзанна Григорян, Вардитер Гамагелян

Резюме

Темой исследования статьи является композиция монументальной мозаики «Распятие», выполненной в середине XX столетия (1967 г.) в иерусалимском храме Воскресения, в частности, в одной из капелл, принадлежащей Армянской апостольской церкви (епархии). Несмотря на не столь отдаленное прошлое, автор композиции не известен (зафиксировано только имя заказчика): здесь очевидно соблюдено правило средневекового канона «анонимности». Интересно то обстоятельство, что в интерпретации мозаики наряду с темой распятия авторы узрели другую молитвенную тему «заступничества» – «Деисус», которая подспудно вписывается в решение композиции и в психологическое её прочтение. Помимо указанного аспекта исследователи сосредоточились на иных нюансах и подробностях, касающихся содержательной и исполнительской сторон произведения.

Ключевые слова – Храм Воскресения, мозаика, «Распятие», армянское искусство, «Деисус», Иерусалим, христианское искусство.

ARMENIAN MOSAIC IN THE CHAPEL OF THE MOTHER OF GOD IN JERUSALEM'S CHURCH OF THE HOLY SEPULCHRE

Syuzanna Grigoryan, Varditer Gamaghelyan

Abstract

In the article the authors elucidate the construction of the bulky mosaics of the Our Lady's Chapel of fainting in Jerusalem's Church of the Holy Sepulchre. It was made, according to the data mentioned in the work, in 1967 and according to medieval rules it is presented as an anonymous work. Only the name of the customer is indicated. Even this circumstance seems puzzling, because it is possible that the customer was himself the author of the construction.

The composition presents the theme "Crucifixion". The interpretation of the theme, in which the traditional plots of an "Intercession" and "Lamentation" are combined with medieval traditions, is unusual. The authors have carefully researched the topis in terms of its interpretation and details of composition. With this mosaic once again, the Armenian presence is emphasized in the pan-Christian Church of the Holy Sepulchre.

Key words – Church of the Holy Sepulchre, mosaic, "Crucifixion", Armenian art, "Intercession", Jerusalem, Christian art.

ԱՐՑԱԽԻ ՄԱՐԴԱԿԵՐՊ ԿՈԹՈՂՆԵՐԻ ԹՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԿԱՐՄԻՐԱՎԱՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Նժդեհ Երանյան
Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ nzhdehyan@gmail.com
ORCID: 0000-0003-2702-1429

Նուշիկ Զարիկյան
Կենսաբանական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ nzarikian@gmail.com
ORCID: 0000-0001-8334-8413

Հասմիկ Սիմոնյան
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ hassimonyan89@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 29.08.2023, գրախոսվել է 21.11.2023, ընդունվել է տպագրության 11.12.2023
ORCID: 0000-0001-7763-339X
DOI: 10.53548/0320-8117-2023.3-271

Ներածություն

2016 թվականին Մարտակերտի շրջանի Նոր Կարմիրավան[1] գյուղի տարածքում տեղի բնակիչներից մեկը պատահաբար հայտնաբերեց շուրջ մեկ տասնյակ մարդակերպ կոթող կամ դրանց որոշ բեկորներ: Վերջիններիս այսպիսի կուտակումը մեկ վայրում, ինչպես նաև շրջակա լանդշաֆտի որոշ արտաքին նշաններ (նկ. 1) հավանական դարձրին կոթողների՝ իրենց կանգնեցման նախնական վայրում գտնվելու հանգամանքը: Այդ հարցը պարզելու նպատակով կատարված հետախուզական աշխատանքներից հետո որոշվեց պեղումներ իրականացնել կոթողների շրջակայքում և դրանցից ոչ հեռու փորված ջրանցքի մոտակայքում:

Պեղումների միջոցով անհրաժեշտ էր՝

[1] Նոր Կարմիրավան գյուղը 2020 թ. նոյեմբերի 9-ից հետո գտնվում է ադրբեջանական բանակի վերահսկողության գոտում: Հոդվածում բոլոր տեղանուններն օգտագործվել են հնագիտական հետազոտություններն իրականացնելու ժամանակ եղած տարբերակով:

1. ուսումնասիրել Նոր Կարմիրավանի կոթողները և հստակեցնել դրանց հնագիտական միջավայրը,

2. պարզել՝ արդյո՞ք Նոր Կարմիրավանում հայտնաբերված կոթողները գտնվում են նախնական (in situ) վիճակում, թե՞ տեղաշարժված են,

3. ճշտել, թե ե՞րբ և ի՞նչ նպատակով են կանգնեցվել Արցախի մարդակերպ կոթողները:

Հետազոտության մեթոդաբանությունը

Պեղումների արդյունքները և հայտնաբերված հնագիտական գտածոները ներկայացնելու, ինչպես նաև կոթողների՝ ընդհանուր տարածաժամանակային միջավայրում քննության համար կիրառվել են հնագիտական պեղումների, ինչպես նաև տիպաբանական-համեմատական և պատմահամեմատական մեթոդաբանությունները:

Արցախի մարդակերպ կոթողները

Քննարկվող կոթողները տափակ, երկարավուն սալեր են, որոնց ծավալային և քանդակային մշակումներով մարդատեսքություն է տրված: Փորագրված երկու հորիզոնական ակոսները սալերը բաժանում են երեք մասի՝ պատկերելով մարմնի երեք մասերը՝ գլուխը, իրանը և ներքնամասը (նկ. 2): Նմանատիպ կոթողները տարածված են եղել Արցախի՝ լեռնաշխարհը և տափաստանը միմյանց ձուլող երկայնական տարածքում՝ ձգվելով մոտավորապես 30-40 կմ (նկ. 3): Դրանք սփռված են հատկապես Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետության հյուսիս-արևելյան շրջաններում՝ Մարտակերտի շրջանում և շրջակայքում, Տիգրանակերտի, ինչպես նաև վերջինից ոչ հեռու գտնվող Գյավուրկալա բնակատեղիի շրջակայքում[2] (նկ. 4): Այս միջավայրից մի քանի կոթող դեռևս խորհրդային տարիներին տեղափոխվել է Արցախի պետական թանգարան և Մարտակերտի պատմաերկրագիտական թանգարանի բակ, իսկ մի մասը գտնվում է բաց դաշտում:

Նոր Կարմիրավանի տեղամասի կոթողները

Նոր Կարմիրավան գյուղը, որը Մարտակերտի շրջանի Խաչենագետի ներքնահովտում է, 2020 թ. նոյեմբերի 9-ին ստորագրված հայտարարությունից հետո գտնվում է Ադրբեջանի ուժերի վերահսկողության տակ: Գյուղի տարածքում առաջին մարդակերպ կոթողները հայտնաբերվել են 2016 թ.: Տեղում նախնական հետախուզական աշխատանքների շնորհիվ վավերացվել են մոտ մեկ տասնյակ մարդակերպ կոթող կամ կոթողի տարբեր բեկորներ: Կոթողների մեծ մասը կուտակված էր մեկ վայրում, 2 կոթող գտնվում էր այս հիմնական կուտակման վայրից 100-150 մ հյուսիս-արևելք, երկու կոթող

[2] Yeranyan 2021, 248-254.

հայտնաբերվել է գյուղի նախկին տներից մեկի բակում, մեկ կոթող՝ ինժեներական աշխատանքների ժամանակ, առանձին բեկորներ կային նաև շրջակայքում: Սրանք դասվում են Արցախի տարածքում հայտնի նմանատիպ մարդակերպ կոթողների շարքին:

Ուսումնասիրության տեսանկյունից կարևոր է, և տեղեկատվական նշանակալի արժեք ունեն կոթողների վրա որոշ դետալների հստակ պատկերումը և դրանց պահպանվածության վիճակը: Խոսքը մասնավորապես կոթողներից մեկի դեմքին քանդակված դետալի մասին է, որը շատ նման էր քթին ամրացված օղի, սակայն հստակ չէր դրա «գործառույթը» (նկ. 5): Նոր Կարմիրավանի կոթողի վրա դրա հստակ պատկերումը գրեթե կասկած չի թողնում այն վարկածի իրավացիության առումով, որ դա քթին ամրացված օղ է: Մյուսը կոթողի թիկունքին պատկերված դաշույնի բռնակի գլխիկի տիպն է: Եթե նախկինում կարելի էր քննարկել այն տեսակետը, թե կոթողների թիկունքի քանդակները չեն ներկայացնում կոնկրետ դաշույնների տիպեր, այլ սխեմատիկ պատկերներ են, ապա այժմ արդեն մահիկաձև վերջավորությամբ դաշույնի բռնակի փաստն արձանագրելուց հետո կարող ենք վստահաբար խոսել կոթողներին կոնկրետ դաշույնների տիպերի պատկերման մասին: Սա հնարավորություն է տալիս տիպաբանել և ժամանակագրել կոթողներին պատկերված դաշույնները, որը, սակայն, առանձին քննության թեմա է:

Արցախի տարածքում նախկինում հայտնաբերված ավելի քան երկու տասնյակ կոթողներից որևէ մեկի դեպքում մեկ վայրում կուտակման նման փաստ չի արձանագրվել: Նման կուտակման վերաբերյալ տեղեկություն առկա էր միայն Բախշուն թափա տեղավայրից հայտնաբերված կոթողների դեպքում, որոնք, չի բացառվում, որ հայտնաբերվելու պահին գտնվել են իրենց կանգնեցման նախնական վայրում, սակայն, ցավոք, համապատասխան մեթոդաբանությամբ չեն վավերացվել և տրակտորով տարածքի հարթեցման աշխատանքների ժամանակ տեղաշարժվել են: Խորհրդային տարիներին դրանք տեղափոխվել են այլ վայր, որտեղից էլ՝ Մարտակերտի պատմաերկրագիտական թանգարանի բակ, որտեղ էլ գտնվում են մինչև այժմ[3]:

Պեղումների վայրը

2016-18 թթ. պեղումներն ընթացել են երկու հիմնական տեղամասերում.

ա. կոթողների հիմնական կուտակման վայրում,

բ. այստեղից մոտ 200 մ հյուսիս-արևմուտք, 2000-ական թվականների առաջին տասնամյակի երկրորդ կեսին կառուցված ջրանցքի մոտ:

[3] Պետրոսյան 1986:

Ջրանցքի տեղամասի պեղումները

Առաջին տարում պեղումներն ընթանում էին զուգահեռաբար երկու տեղամասում: Կոթողների շրջակայքում հետախուզական աշխատանքների ժամանակ ջրանցքի հատակին հայտնաբերվեց միականթ սափորիկ: Այն ամբողջական չէր. ուռուցիկ փորից դեպի վերև՝ շուրթի հատվածը կոտրված էր: Այդ մասից ներքև՝ ուռուցիկ հատվածում, առկա էին երկու փորագիր գոտիներ, որոնք լցված էին ռոմբաձև նախշերով: Իսկ դրանցից ներքև՝ չորս անկյուններում, արված էին դարձյալ փորագիր, կետանախշ եռանկյունաձև և կլոր նախշեր: Այստեղ պեղումներով 1,1մ խորությամբ բացվեց հիմնահողային թաղում: Հնամարդաբանական նյութը ներկայացված էր գանգով և կմախքի տարբեր բեկորներով. հայտնաբերվեցին 18 անոթ, մածուկից, սարդիոնից և բրոնզից պատրաստված ուլունքներ: Հնամարդաբանական նյութն ամբողջական չէր, խախտված էր կմախքի ամբողջականությունը. որոշ ոսկորներ գտնվում էին գանգի տակ, որոշները շաղ էին տրված անոթների կողքերին: Հավանական է, որ կմախքի դիրքը խախտվել է ջրանցքի շինարարական աշխատանքների հետևանքով:

Պեղումներով հայտնաբերված նյութի մեջ մեծ խումբ են կազմում խեցանոթները: Հայտնաբերվել են նաև երկաթից, մածուկից և սարդիոնից պատրաստված ուլունքներ: Խեցանոթների մեջ առկա են միականթ, լայնացող շուրթով սափորիկներ՝ թվով 6 հատ: Գտնվել են նաև չորս հատ միականթ և մեկ անկանթ սափոր, երեք կճուճ և մեկ ձձում:

Պեղված նյութը տիպական է Արցախի և տարածաշրջանի այլ հուշարձաններից հայտնաբերված սևափայլ իրանով նյութերին, որոնց մի մասը կարելի է թվագրել մ.թ.ա. IX-VIII, իսկ որոշները՝ VII-VI դարերով: Նշենք նաև, որ թեպետ պեղումներով վավերացվեց միայն մեկ թաղում, սակայն նախորդ տարիներին Արցախի հնագիտական արշավախմբի կողմից ջրանցքի կառուցման ժամանակ այլ հատվածներից ևս հայտնաբերվել են խեցանոթներ[4]:

Դամբարանի պեղումները

Հիմնական պեղավայրը կոթողների կուտակման շրջակայքն էր: Այստեղ բացվեց կլոր հատակագծով, 11 մ տրամագծով կրոմլեխի զրահը: Վերին հողաշերտի մոտ 50-70 սմ շերտը հեռացնելուց հետո պարզվեց, որ դամբանափոսը գտնվում է կրոմլեխի գրեթե կենտրոնում: Դամբանախուցը հիմնահողային էր, ուղղանկյունաձև, 30 աստիճան արևելք-արևմուտք շեղվածությամբ: Նրա երկարությունը 6,4 մ էր, իսկ լայնությունը՝ 1,6 մ: Տեղանքին համահունչ՝ դամբանախուցը երկայնական առանցքով ուներ որոշակի թեքություն:

[4] Պետրոսյան և այլք 2008, 187-200:

Դամբանախցի հյուսիսարևելյան հատվածում՝ 70 սմ խորության մեջ, գտնվում էր հանգուցյալի գանգը, որը դարձյալ մասնատված վիճակում էր: Ամբողջ շերտը լցված էր տարբեր կենդանիների ոսկորներով, իսկ ստորին՝ 30 սմ շերտում լիքն էին ծովախեցիները: Դամբանախցի արևմտյան հատվածում բացվեց նաև ձիու թաղում՝ ձիասանձի և ձիու հարդարանքի որոշ մասերով:

Պետք է նշել, որ նմանատիպ կառուցվածքի թաղումներն այս տարածաշրջանում հազվադեպ չեն: Մեկական թաղումով հիմնահողային կուրգանները Իվանյանի (Խոջալուի) դամբարանադաշտին էլ են բնորոշ և առանձին խումբ են կազմում[5]: Նմանատիպ դամբարանի պատրաստումը ենթադրում էր հասարակության ուժերի համատեղում: Ուստի միայնակ թաղումի հանգամանքը կարող է բացատրվել այս հասարակության ուժեղ շերտավորումով, նրանում յուրաքանչյուր անհատի դերի խիստ մեծացումով (առաջնորդ, քուրմ, ռազմիկ և այլն):

Գտածոների քննություն

Նոր Կարմիրավանի դամբարանից հայտնաբերված թաղմանն ուղեկցող գույքը կարելի է խմբավորել հետևյալ կերպ՝ ուլունքներ, զենքեր, ձիասանձի և ձիու հարդարանքի մասեր և խեցանոթներ: Ընդ որում, վերջինը մի քանի տեսակի բաժանվող անոթներով ամենամեծ խումբն է կազմում:

Խեցեղեն նյութը հիմնականում ամբողջական էր: Հայտնաբերված անոթները (թվով՝ 41) ունեն ձևային բազմազանություն, բայց բոլորը գրեթե նույն ժամանակին են պատկանում: Խեցեղեն նյութը կարելի է դասակարգել հետևյալ կերպ՝ միականթ և երկականթ սափորներ, միականթ սափորիկներ, կճուճներ, եղջերագավաթներ և մեկական ձմում, թասիկ ու կարաս:

Միականթ սափորիկներն ունեն փոքր նստուկ, նեղ իրան, ուսի հատվածում սկսող վիզ, որը դեպի վերև շեփորաձև լայնանում է: Կանթը շուրթին միացած է դեպի դուրս շրջված գալարով (նկ. 6): Այս սափորիկները հիշեցնում են փոքր նստուկի վրա տեղադրված գավաթներ: Այս տիպը չափազանց բնորոշ է իրանական խեցեղենին[6]: Խեցեղենի այս ձևը իրանական միջավայրում ժառանգվել է ավելի վաղ շրջանից, սակայն վերջնականապես այս տեսքը ստացել է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջում: Դրանք ներկայացված են այդ ժամանակաշրջանի իրանական գրեթե բոլոր համալիրներում՝ Հասանլու V, Գիյան I, Գյոյ-թեփե, Խորվին-Չանդար և այլն[7]:

Սակայն եթե իրանական օրինակներում բռնակի վերին հատվածը իրանին միանում է միջնամասում, ապա հարավկովկասյան օրինակների

[5] Кушнарева 1970, 110.
[6] Погребова 1977, 87, Young 1965, 8-9.
[7] Погребова 1977, 87-88.

դեպքում այն ավելի հաճախ միանում է շուրթի մոտ: Սա ինքին խոսում է անոթների այս տիպի՝ տեղում արտադրվելու մասին[8]: Ա. Իեսսենը Հարավային Կովկասում հայտնաբերված այս միականթ սափորիկները թվագրում է մ.թ.ա. VIII-VII դարերով[9]: Կարծում ենք՝ նույն դարերով են թվագրվում նաև Նոր Կարմիրավանից հայտնաբերված օրինակները:

Անոթների հաջորդ խումբը կազմում են **միականթ սափորները**: Սրանք մեզ են ներկայանում ձևական տարբեր տիպերով: Անոթների այս տիպը Իրանի հուշարձաններում թվագրվում է մ.թ.ա. IX դարով[10]: Հանդիպում է նաև Հայաստանի հուշարձաններում՝ Սարապատ, Վանաձոր, Աստղի-բլուր, Ոսկեհասկ, Իվանյան[11], Մարտակերտ[12], Սխտորաշեն[13] և այլն:

Մեկական օրինակով ներկայացված են **նաև երկկանթ և անկանթ սափորները**: *Երկկանթ սափորի* իրանի ուռուցիկ մասում ամրացված են ուղղահայաց, կտրվածքում կլոր կանթերը: Վզի կենտրոնական և իրանի լայն մասում առկա են փորագիր գոտիներ, վզից իրանի գոտու արանքում փայլեցումով արված են նախշեր: Անոթն ունի նեղ, հարթ իրան:

Հայտնաբերված *անկանթ սափորը* իրանի միջնամասում լայնացող, փոքր նստուկով և ներճկված հատակով, սև անփայլ մակերեսով անոթ է: Վզի վրա կա մի անցք: Իրանի միջնամասում առկա են ուղղահայաց, փայլեցված զարդանախշեր:

Դամբարանից հայտնաբերված խեցանոթների հաջորդ խումբը ներկայացնում են **կճուճները**, որոնք կարելի է դասակարգել երեք խմբի՝ միականթ, երկկանթ և անկանթ:

Բացառությամբ մեկ անկանթ կճուճի, որը հիշեցնում է կճուճների ավելի վաղ տիպը (Հյուսիսային Կովկասում թվագրվում են մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակով[14]: Նմանատիպ կճուճներ հայտնաբերվել են նաև Շիրակավանում, Քեթիում, Անգեղակոթում (մ.թ.ա. VIII-VII դդ.)[15], մյուս խմբի կճուճները, ելնելով դրանց զուգահեռներից՝ կարելի է թվագրել մ.թ.ա. VIII-VI դարերով:

Հետաքրքիր են հայտնաբերված երկու «**եղջերագավաթները»:** Դրանք ավանդական եղջերագավաթի որոշակի տարրեր են կրում, սակայն եթե մեզ հայտնի եղջերագավաթները անպայմանորեն շեփորաձև վզի հետ միանում են կենդանակերպ իրանով, ապա այստեղ միացումը կատարվում

[8] Погребова 1977, 88.
[9] Иессен 1965, 24-30.
[10] Medvedskaya 2014, 210.
[11] Պետրոսյան 1993, 94:
[12] Ասրյան 1973, 295-300:
[13] Кушнарева 1957, 172.
[14] Кушнарева и др. 1994, 215, таб. 58.
[15] Խնկիկյան 1993, 87-89

է արմնկաձև շարունակությամբ և մինչև հատակ լայնանում է, որը նաև նստուկի դեր է կատարում:

Դրանցից առաջինը չափերով համեմատաբար փոքր է, իրանը սև փայլեցված է: Շուրթը շեփորաձև լայնանում է, իսկ նստուկի վրա առկա է մեկ պտկաձև ելուստ, որը հարդարված է ճառագայթաձև, անփայլ նախշերով:

Հաջորդ եղջերագավաթը չափերով ավելի մեծ է, ունի դարչնագույն իրան, շուրթը նախորդի նմանությամբ դարձյալ շեփորաձև լայնանում է, իսկ նստուկի հատվածում առկա են 5 ելուստներ, որոնց վրա հավանաբար նաև կանգնել է: Հատակին իրանը միանում է 3 ներճկված գոտիներով: Նմանատիպ «եղջերագավաթների» արծաթե օրինակները հայտնի են Իրանի որոշ հուշարձաններից և պատկանում են աքեմենյան շրջանին[16]:

Հայտնաբերված ձձումի զուգահեռներն ունեն տարածական և ժամանակային մեծ սփռում: Սրանք հայտնի են մ.թ.ա. 2-1-ին հազարամյակի առաջին քառորդին պատկանող գրեթե բոլոր հուշարձաններից և չունեն առավել կոնկրետ թվագրող հատկանիշներ[17]:

Հայտնաբերված միակ աղյուսագույն **թասը** ներսի կողմից ունի գալարաձև, փորագիր, սեպաձև զարդագոտի: Նստուկին ունի երեք ոտք, իսկ շուրթի մասից կարճ, ուղղահայաց դիրքով, կտրվածքում կլոր, օղակաձև կանթ: Նմանատիպ թասեր Արցախի տարածքի այլ հուշարձաններից ևս հայտնաբերվել են՝ Չայլու, Շուշիի երկաթեդարյան դամբարաններ և այլն[18]: Բոլորը թվագրվում են մ.թ.ա. VII-VI դարերով:

Դամբարանի հյուսիս – արևելյան պատի տակ հայտնաբերվեց նաև մեկ կարաս (բարձրությունը՝ 90 սմ, իրանի տրամագիծը՝ 62 սմ, շուրթի տրամագիծը՝ 21 սմ): Իրանը գնդաձև է, հատակը՝ հարթ, շուրթը՝ դեպի դուրս բացվող: Նմանատիպ կարասներ հայտնաբերվել են Հայաստանի բազմաթիվ հուշարձաններից[19] և թվագրվում են սկսած ուշ բրոնզի դարով:

Թվարկված խեցանոթներից բացի, դամբանախցի տարբեր հատվածներում, այդ թվում և հանգուցյալի գանգի տակ, հանդիպում էին թեկուզ սակավաթիվ, սակայն կոտրտված անոթի բեկորներ: Որոշ ուսումնասիրողների կարծիքով, իրերը կոտրելը և դամբարանում թաղելը նշանակում է դրանք մատնել ծիսական մահվան: Այն, ըստ երևույթին, առնչվում էր աննջեցյալների վերածննդի պատկերացումներին[20]:

[16] Bashash 1997, 19.
[17] Summers, Burney 2012, 272, fig. 35.
[18] Ասրյան 1973, 298:
[19] Թորոսյան և այլք 2002, 55, աղ. XXV:
[20] Թումանյան 2010, 154-155:

Դամբարանի պեղումներից հայտնաբերված մետաղական հավաքածուն բավական սակավ է՝ բրոնզե կախիկներ, բրոնզե սկյութական տիպի նետասլաքներ, մի քանի բրոնզե ուլունք և երկաթե ձիասանձի մաս:

Հայտնաբերված նետասլաքները տիպական են Հարավային Կովկասի նետասլաքներին, որոնք մասնագիտական գրականության մեջ անվանվում են «սկյութական տիպի»[21] և հանդիպում են մ.թ.ա. VIII դարից սկսած: Սակայն պետք է նշել, որ այս տիպի նետասլաքները շարունակել են գործածվել ավելի ուշ շրջանում ևս[22]: Իեսսենը եռաթև նետասլաքների այս տիպը Հարավային Կովկասի դամբարաններում թվագրում է մ.թ.ա. VII-VI դարերով[23]:

Ձիու թաղմանն ուղեկցող նյութերի շարքում դամբարանից հայտնաբերվել է նաև ոսկորից պատրաստված ձիասանձի մի քանի մաս, որը վերջավորության վերին հատվածում ունի ձիու գլխաքանդակ, ստորին հատվածքում՝ ձիու սմբակաձև վերջավորություն, իսկ մեջտեղի հատվածում՝ երեք սնամեջ անցքեր (նկ. 7): Նմանատիպ քանդակները լայնորեն տարածված են մերձսևծովյան շրջանների և Արևելյան Եվրոպայի հուշարձաններում, թվագրվում են մ.թ.ա. VII-VI դդ. և կապվում են սկյութական կենդանական ոճի քանդակների հետ[24]:

Դամբարանի հատակին հայտնաբերվեց գրանիտից պատրաստված, տանձաձև, սնամեջ անցքով գուրզ: Վերջինս, ամենայն հավանականությամբ, պատրաստվել է ավելի վաղ շրջանի երկաթի նախօրինակներից և հանդիպում է XV-XIII դարերով թվագրվող հուշարձաններում[25]:

Նմանատիպ քարե տանձաձև գուրզ հայտնաբերվել է Հին Շիրակավանի միջին բրոնզի դարի շերտից, իսկ սրանց բրոնզե օրինակները հանդիպում են Լճաշենում, Գավառում, Արթիկում և թվագրվում են մ.թ.ա. XIV-VIII դարերով, ինչը վկայում է այսօրինակ զենքերի երկարատև գործածության հանգամանքը[26]:

Հետաքրքիր էր դամբարանի արևելյան անկյունում մածուկից, սարդիոնից և ոսկրից պատրաստված ուլունքների առատության փաստը: Հայտնաբերված շուրջ 5000 տարբեր գույների ուլունքները հավանաբար թաղման ծեսի մաս կազմող ինչ-որ կտորի վրա են եղել:

Դամբարանում մեծ թիվ էին կազմում խխունջի խեցիները (ավելի քան 300 հատ): Դրանցով պատված էր դամբարանի ամբողջ հատակը: Թաղ-

[21] Ներկայումս «սկյութական» կոչված նետասլաքների տիպաբանական զարգացումն ու թվագրությունը բավական մանրակրկիտ են մշակված (մանրամասները տե՛ս Археология СССР, т. X, 37, 40, 49, 92, 292-294, 369, табл. 27, 28, 34, 64):

[22] Dyachenko et al. 2000, 52, Genz 2011, 353.

[23] Иессен 1965, 29-30.

[24] Канторович 2016, 101-108.

[25] Piller 2013, 309, Barbara 2008, 64-66, 308.

[26] Թորոսյան, Խնկիկյան, Պետրոսյան 2002, 17, 43:

ման յուրաքանչյուր ծիսակատարության ժամանակ օգտագործվել են բազմազան առարկաներ՝ սկսած մաքրագործման նպատակով դամբարանում դրված գլաքարերից մինչև պահպանական դեր կատարող հմայիլները[27]: Խեցիներով դամբարանի հատակը ծածկելու երևույթը, ամենայն հավանականությամբ, ծիսական նշանակություն ունի և կապված է տարածքը մաքրագործելու ընկալումների հետ:

Հնակենդանական նյութերի ուսումնասիրությունը

Նոր Կարմիրավանի պեղումներից ձեռք բերված հնակենդանաբանական նյութը ուսումնասիրելու և կենդանիների տեսակները որոշելու համար ուսումնասիրվել են 1319 անատոմիական միավորներ, որոնցից մատչելի և ճանաչելի էին 661-ը, դեֆորմացված կամ մասնատված էին 658-ը:

Դրանք մեծամասնությամբ ընտանի կենդանիներ են՝ 6 մանր եղջերավոր (ոչխար/այծ) *Ovis aries/Capra hircus*, 2 կով *Bos taurus,* 4 ձի *Equus caballus*, իսկ վայրի կենդանիներից՝ 1 եվրոպական այծյամ *Capreolus capreolus*, 1 կատվազգի Felidae, ինչպես նաև գրանցվել է մի վայրի ցուլ *Bos primigenius* (աղ. 1, գծ. 1)[28]:

Մնացորդների ձևափոխությունների ուսումնասիրությունը

Մսագործության հետքեր. ոսկրերի 5%-ի վրա նկատվել են մսագործության հետքեր (cut marks): Կարելի է եզրակացնել, որ կենդանիների զոհաբերությունը չի կատարվել մսի կամ սննդի օգտագործման համար (նկ. 8):

Գիշատիչների հետքեր. Գրանցվել են գիշատիչ թռչազգիների և վայրի կենդանիների ատամների հետքեր որոշ ոսկրերի վրա՝ ի լրումն մարսող հետքերի (HCL գիշատիչ կենդանու ստամոքսից):

Ախտաբանություն. ոսկրային ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել են մի քանի հիվանդությունների ախտանշաններ կրող ոսկրեր: Սա ապացույց է տվյալ դարաշրջանում տարածքի զավթիչների կողմից անասնաբուծության որակի պահպանման մասին: Արձանագրված անոմալ դեպքը ոչխար/այծի մեկ առանձնյակի սրբանային ոսկրի թեքությունը և սակրալ կորությունն են:

Այրված «սև» ոսկորներ. ոսկրային ուսումնասիրության ընթացքում չեն հայտնաբերվել այրված ոսկրային մնացորդներ, ինչը նորից վկայում է սննդի մնացորդների սակավ առկայության մասին: Այս դեպքում եփվող միսը հասունացել է եռացող ջրի մեջ և ոչ թե խորովվել անմիջապես կրակի վրա:

[27] Թումանյան 2010, 147:
[28] Hillson 2009, Prehn et all. 2018.

Կլիմայական հետքեր. տեղամասից դուրս բերված որոշ կաթնասունների ոսկրերը դրսևորում են եղանակային կամ կլիմայական փոփոխության հետքեր:

Մշակված ոսկրեր. հայտնաբերվել են մշակված ոսկրեր՝ ժանիքներից սարքած կախազարդեր, եղջյուրներից՝ ձիու գլխի տեսքով ամրակներ և ուլունքներ:

Կենդանիների մահացության տարիքը

Հիմնվելով Ի. Սիլվըրի՝ կենդանիների տարիքի որոշման մեթոդների վրա՝ հնարավոր էր հասկանալ միայն որոշ անասունների չափահաս կամ մատղաշ լինելը (ատամների ու նախավերջույթների հիման վրա): Կարելի է ասել, որ որոշված տեսակների մեծ մասը հասուն առանձնյակներ են եղել, սակայն զոհաբերվել են նաև մատղաշները, նյութում առկա են եղել 2 մատղաշ ոչխար/այծ[29](աղ. 2):

Հնամարդաբանական նյութի ուսումնասիրությունը

Հնամարդաբանական նյութի մեջ առկա գանգատուփը մասնատված էր և թերի վիճակում: Բացակայող հատվածներն են՝ քունքոսկրերի որոշ հատվածները, դիմային կմախքի ոսկրերը՝ երկու կողմերում, ստորին ծնոտի ձախակողմյան թևը և մարմնի մի հատվածը: Գանգի վերականգնումը հաջողվել է իրականացնել 80%-ի չափով: Ծոծրակոսկրը մահվանից հետո ենթարկվել է ձևափոխության: Կմախքը գրեթե ամբողջական է, բայց երկար ոսկրերը բեկոտվել են մահվանից հետո: Բացակայում են հետևյալ հատվածները՝ ողնաշարի որոշ ողեր, կողոսկրերի մի մասը, ձախ արմունկոսկրի միջնամասը, աջ բազկոսկրի միջնամասը և վերին էպիֆիզը, աջ թիակոսկրը, կոնքոսկրի ձախ հատվածի ոսկորները, ձախ ազդրոսկրը և սրունքի մեծ ոլոքը, աջ սրունքի մեծ ոլոքի վերին էպիֆիզը, ոտնաթաթի և ձեռնաթաթի ոսկորները: Աջ ազդրոսկրից առկա է միայն վերին էպիֆիզը (նկ. 9):

Սեռատարիքային բնորոշումներ

Տարիքի բնորոշումն իրականացվել է կոնքոսկրի ոսկրերի ձևաբանական հատկանիշների հիման վրա՝ ըստ մարդաբանության մեջ ընդունված սանդղակների[30]: Բացի այդ, տարիքի բնորոշումը իրականացվել է գանգի կարի փակման աստիճանի գնահատմամբ (4 բալանոց սանդղակով)[31]: Անհատի տարիքը տեղորոշվել է 30-ից 40 տարեկանի սահմանում:

[29] Don et al. 1969.

[30] Todd 1920, Brooks, Suchey 1990, Meindl, Lovejoy 1989.

[31] Meindl, Lovejoy 1985.

Կմախքի սեռը բնորոշվել է կոնքոսկրերի և գանգի սեռային տարբերակվածության հիման վրա: Համաձայն իրականացված բնորոշումների՝ կմախքը պատկանում է արական սեռի:

Ատամնաախտաբանական իրավիճակը

Անհատի մոտ փաստագրվել է ատամների ծամող մակերեսների չափավոր մաշվածություն, ստորին ծնոտի ձախ առաջին մեծ աղորիքի վրա մեկ խոռոչ (հավանաբար, նոր զարգացող ատամնային կարիես), վերին և ստորին ծնոտների մեծ ու փոքր աղորիքների վրա փաստվել են ատամնաքարերի հետքեր: Ատամնաքարը ենթադրում է սննդակարգ, որը հարուստ է ածխաջրերով, բուսական ծագման կոշտ մանրաթելային մթերքների մեծ քանակությամբ[32]:

Գանգի ոչ չափագրական հատկանիշներ

Անհատի մոտ փաստվել է մետոպիկ կար, որն անցնում է ճակատոսկրի կենտրոնով՝ այն բաժանելով երկու մասերի: Կարը տարածվում է բրեգմայից մինչև նազիոն (նկ. 10): Մետոպիկ կարը (նաև հայտնի է որպես ճակատային, միջճակատային կամ միջին ճակատային կար) ուղղահայաց կար է, որը ճակատային ոսկորը բաժանում է երկու կեսի և առկա է նորածինների մոտ: Մետոպիկ կարը սովորաբար փակվում է մոտ 7 տարեկանում, սակայն հազվադեպ դեպքերում այն կարող է պահպանվել նաև մեծահասակների մոտ և փաստվել որպես չչափագրվող գանգասկոպիական հատկանիշ[33]: Որոշ ուսումնասիրողներ մետոպիզմը 0%-7% հաճախականությամբ կապում են էթնիկ պատկանելության հետ[34]: Հատկանիշը հետազոտող որոշ գիտնականներ փաստում են, որ մետոպիզմը ավելի տարածված է տղամարդկանց, քան կանանց մոտ[35]: Հեղինակների մեկ այլ խումբ նշում է, որ «պահպանված մետոպիկ կարը, հավանաբար, առաջացել է քայլելու ունակությունը կատարելագործելու հետ համատեղ: Մետոպիկ կարը կապված է մարդու հարմարվողականության հետ, որի հետևանքով հնարավոր է ավելի մեծ ուղեղով երեխաներ ծնել, և կապված է երեխայի ծնվելուց հետո արագ աճող ուղեղը գանգասկավառակում տեղավորելու հետ, նույնիսկ կարող է կապված լինել ճակատային բլթերի ընդլայնման հետ»[36]:

Կմախքի ոսկրերի ոչ չափագրական հատկանիշները

Անհատի մոտ փաստվել է աջ բազկոսկրի արմնկային ելունի մեծ փոսի պերֆորացիա/միջանցիկ անցք: Վերջին հետազոտությունները ցույց են տալիս, որ միջանցիկ անցքը արձագանք է գերծալման, այլ ոչ թե արմունկի

[32] Lukacs 1989.
[33] Gardner 2016.
[34] Berry 1967.
[35] Murlimanju et al. 2011.
[36] Falk et al. 2012.

գերճկման: Միջանցիկ անցքը ձևավորվում է հիմնականում բազկոսկրի արմնկային ելունի մեծ փոսի միջնապատի բարակացման հետևանքով այն կետում, որտեղ ծղիկոսկրի արմնկային ելուստը պոտենցիալ կերպով կապ է հաստատում բազկոսկրի մեծ փոսի հետ լիակատար ճկման մեջ[37]:

Նյութափոխանակության խանգարման հետ կապված խեղումներից անհատի մոտ փաստվել է պորոտիկ հիպերոստոզ (ակնակապիճային պորոզ/cribra orbitalia), որը մահվան պահին եղել է ոչ ակտիվ: Զույգ ակնակապիճների վերին ուղեծրերում առկա են պորոտիկ խեղման հետքեր: Ակնակապիճները վնասված են, ուստի պորոզի արտահայտման աստիճանը հնարավոր չէր պատշաճ կերպով գրանցել: Ինչևէ, պորոտիկ հիպերոստոզի առկայությունն ինքնին վկայում է վատ կենսապայմանների, հնարավոր քրոնիկական առողջական խնդիրների և սննդի անբավարարության (հատկապես երկաթի պակասի) մասին[38]:

Կմախքի ոսկորների խեղումներ

Անհատի մոտ փաստվել է միջողային սկավառակի ճողվածք (Schmorl's nodes) կրծքային ողերի մարմինների վրա: Շմորլի հանգույցները ողնաշարի մարմնի վերին և ստորին մակերևույթների իջվածքներ են, որոնք առաջանում են միջողնաշարային սկավառակի ուղղահայաց ճողվածքից, որը կարող է հայտնաբերվել չոր ոսկորի վրա: Շմորլի հանգույցները կարող են վկայել ողնաշարի ծանրաբեռնվածության, ծանրության հաճախակի բարձրացման, մարմինը ուղղահայաց դիրքում երկար պահելու, մեջքի ծանրաբեռնվածության, ողնաշարի կրկնվող թեքումների մասին[39]:

Հավանաբար, սթրեսի հետ կապված վնասվածք է հայտնաբերվել ձախ բազկոսկրի միջային վերկոճի հատվածում: Նետելու շարժման իրականացման պարագայում անհատի հասունացման ավարտին մոտ, երբ միջային վերկոճը դեռ լիովին սպիացած չէ (12-18 տարեկան), ուժեղ ձգումը կարող է հանգեցնել ոսկրի ելուստի պոկվելուն կապանների միացման հատվածում: 15 տարեկանից փոքր անձանց մոտ բազկոսկրի միջային վերկոճը ամբողջական է, դեռ չսպիացած և պոկումը կարող է ընդգրկել վերկոճի ոսկրացման ամբողջ մակերեսը: Ավելի մեծ դեռահասների մոտ դրանք կարող են մասնակիորեն սպիացած լինել՝ հանգեցնելով մեկ կամ մի քանի ոսկրային բեկորների հեռացմանը միջային վերկոճի ապոֆիզից[40]: Երբ նմանատիպ վնասվածք ունեցող անհատը հասնում է մեծ տարիքի, ապաքինված վնասվածքը ստանում է ոսկրային գերաճի կամ բացվածքների ձև՝ կախված նրանից, թե արդյոք հեռացված հատվածը սպիացե՞լ է

[37] Mays 2008.
[38] Walker 2009.
[39] Pálfi, Dutour 1996.
[40] Kijowski, Tuite 2010.

կոնդիլի հետ, թե՞ ոչ[41]: Չոր հնագիտական ոսկորների վրա նման վնասվածքները հիմնականում նկատվում են մեծահասակների բազկոսկրի վրա՝ որպես պատանեկության տարիներին տեղի ունեցած տրավմատիկ իրադարձության արդյունք[42]:

Դատելով կմախքի վրա առկա տրավմատիկ և ախտաբանական խեղումներից, կարող ենք փաստել, որ Նոր Կարմիրավանի դամբարանից հայտնաբերված անհատը կյանքի ընթացքում ենթարկվել է տարատեսակ սթրեսային իրավիճակների, կրել որոշակի ծանրաբեռնվածություն ողնաշարի հատվածում, հաճախակի ծանրություններ է բարձրացրել, պատանեկության շրջանում ստացել բազկոսկրի տրավմա՝ կապված նետման հետ:

Մարդակերպ կոթողների թվագրության խնդիրները

Ինչպես արդեն նշեցինք, Արցախի տափաստաններում հայտնի շուրջ երեք տասնյակ կոթողներից որևէ մեկը նախկինում չէր վավերացվել իր հայտնաբերման ժամանակ սկզբնական կանգնեցման վայրում: Տարբեր պեղումների և հետազոտությունների շնորհիվ մեզ հաջողվել էր վավերացնել այս կոթողների թվագրության ստորին սահմանը միայն[43]:

Տարածաշրջանում հայտնի նմանատիպ այլ կոթողների հետ պատկերագրական զուգահեռ քննությունը, սակայն, մեզ թույլ էր տվել նախկինում թվագրել Արցախի մարդակերպ կոթողները մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկզբով՝ մ.թ.ա. VIII-VI դարերով: Սակայն այս վարկածը հաստատման կամ հերքման անհրաժեշտություն ուներ: Հետևաբար կոթողների իրենց վայրում հայտնաբերելն ու պեղումները լույս սփռեցին այս կարևոր հարցի վրա:

Դամբարանի թվագրման համար կարևոր կռվան էր գտնված հնագիտական նյութը: Առանց ներկայացնելու խեցանոթների ողջ բազմազանությունը՝ ասենք, որ այդ խեցանոթներն իրենց զուգահեռներն ունեն ինչպես Հայաստանի, այնպես էլ Անդրկովկասի և Իրանի հուշարձաններում: Ինչ վերաբերում է կոթողների հնարավոր զուգահեռների թվագրությանը, ապա նշենք, որ բավական լայն է ինչպես նրանց տարածական ընդգրկումը, այնպես և ժամանակային արեալը: Քննության շնորհիվ հստակեցվեց, որ Արցախի քարե մարդակերպ կոթողներին քիչ թե շատ մոտ Հյուսիսային Կովկասից, մերձսևծովյան շրջաններից, Ղրիմից[44], ինչպես նաև Մեշքին Շահրից[45] և Հաքարիից[46] հայտնի կոթողները, ըստ տարբեր հետազոտողների, թվագրվում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերի՝ մ.թ.ա. 3-4-րդ դարերով:

---

[41] Lewis 2017.
[42] Villotte et al 2010.
[43] Yeranyan 2021, 250-251.
[44] Ольховский, Евдокимов 1994, 12-14.
[45] Ingraham et al. 1979, 67-87, Burney 1979, 155-156, Azarnoush 2005, 189-246, Piller 2010, 53-75.
[46] Sevin 2005, 163-166.

տեսակ		
	NISP	MNI
Bos taurus	167	2
Bos t. primigenius	10	1
Capreolus capreolus	13	1
Ovis aries/ Capra hircus	121	6
Equus caballus	326	4
Felidae	2	1



Աղյուսակ 1. Կենդանիների քանակական ու տեսական կազմը Նոր Կարմիրավանում (NISP=որոշված տեսակների քանակ, MNI= առանձնյակների նվազագույն քանակ)

տեսակ	1-2 տ.	2 < տ.
Bos taurus կով	-	2
Bos primigenius ցուլ	-	1
Ovis aries/ Capra hircus ոչխար/այծ	2	4
Equus caballus ձի	-	4

Աղյուսակ 2. Կենդանիների տարիքային կազմը

Հայտնաբերման տեղը	*Մերձսևծ*	*Ղրիմ*	*Հյուսիսային Կովկաս*	*Ընդամենը*
Կուրգանի վրա	8	3	4	15
Թալանված դամբարանի հողաթմբի վրա	17	3	3	23
Կուրգանի թմբի շրջակայքում	5	2	-	7
Կուրգանի շուրջ	7	1	4	12
Շրջանաձև փոսիկում	10	1	-	11
Կուրգանի արտաքին մակերեսին	1	-	-	1
Սրբարանում	1	-	-	1
Հիմնահողային թաղման մոտ	-	-	4	4
Թաղման համալիրի կառույցում	12	-	1	13
Ջոհաբերության կառույցի հետ կապված	-	2	-	2
Վերաօգտագործված (թաղման կառույցում՝ որպես շինանյութ)	1	1	7	9
Անհայտ է	16	5	12	33
Ընդամենը	79	23	35	137

Աղյուսակ 3. Մերձսևծովի, Ղրիմի և Հյուսիսային Կովկասի մարդակերպ կոթողների հայտնաբերման դիրքի վիճակագրությունն ըստ Վ. Օլխովսկու և Գ. Եվդոկիմովի (Ольховский, Евдокимов 1994, 44)

Նկ. 1. Նոր Կարմիրավան գյուղի կոթողների կուտակման հիմնական վայրը նախքան պեղումները



Նկ. 2. Մարդակերպ կոթող, մ.թ.ա. VIII-VI դարեր, Սեյսուլան (Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարան)



Նկ. 3. Արցախի մարդակերպ կոթողների տեղագրության քարտեզը (հեղ.՝ Հ. Դանիելյան)

Նկ. 4. Մարդակերպ կոթող, մ.թ.ա. VIII-VI դարեր, Բախշուն թափա (Մարտակերտի պատմաերկրագիտական թանգարան)

Նկ. 5. Մարդակերպ կոթող, մ.թ.ա. VIII-VI դարեր, Նոր Կարմիրավան



Նկ. 6. Միականթ սափորիկ Նոր Կարմիրավանի. պեղումներից



Նկ. 7. Ձիասանձի ոսկրե զարդարուն բեկոր

Նկ. 8. Ոսկրային մնացորդների վրա մսագործության հետքերի օրինակներ

Նկ. 9. Կմախք N 1-ի անատոմիական լրակազմը

Նկ. 10. Գանգի վրա առկա մետոպիկ կար

Վերադառնալով Նոր Կարմիրավանի դամբարանից գտնված նյութերին և դրանց թվագրությանը՝ կարող ենք նշել, որ վերևում հիշատակված խեցեղենի ձևերն ու զարդերը, որոշ բացառություններով, համապատասխանում են Հարավային Կովկասում երկաթի լայն տարածման շրջանի հուշարձանների խեցեղենին: Նոր Կարմիրավանի խեցանոթները թվագրվում են մ.թ.ա. VIII-VII, VII-VI դարերով, որոշ իրեր իրենց զուգահեռներն ունեն տարածաշրջանից հայտնաբերված ավելի վաղ օրինակներում ևս կամ ձևով ծագում են դրանցից:

Այս նյութերի թվագրությունը թույլ է տալիս մեկ անգամ ևս նշել, որ Նոր Կարմիրավանի դամբարանը, հետևաբար և դրա հետ առնչվող կոթողները կարելի է թվագրել մ.թ.ա. VIII-VI դարերով:

Մարդակերպ կոթողների գործառույթի հարցը

Նոր Կարմիրավանի դամբարանի պեղումները և կոթողների շրջակայքի ավելի ընդգրկուն հետազոտությունը թույլ են տալիս խոսել կոթողների և դամբարանի միջև հնարավոր կապի մասին և ավելի հստակ պատասխանել կոթողների թվագրության և գործառույթի վերաբերյալ հարցերին:

Կոթողների թվագրությունը հստակեցնելուց հետո կարևոր է նաև դրանց գործառույթին վերաբերող խնդիրը, ինչի պատասխանը հնարավորինս ճշտել ենք պեղումների ընթացքում: Հարկ է նշել, որ Արցախի քարե մարդակերպ կոթողների ուսումնասիրությունն անհնար է առանց համեմատական նյութի և զուգահեռների քննության: Այս առումով ներկա քննության տեսական և մեթոդաբանական կարևոր հայեցակետերից մեկն էլ արցախյան կոթողները ինչպես հայաստանյան համաժամանակյա այլ կոթողների հետ համեմատելը, այնպես էլ ընդարձակ առաջավորասիական մշակութային համատեքստ մտցնելն է՝ պահելով ժամանակային սկզբունքը: Մոտավորապես նույն ժամանակաշրջանով թվագրվող նմանատիպ մարդակերպ կոթողները ինչպես Հայաստանից, Իրանից, այնպես և Հյուսիսային Կովկասից և Մերձսևծովից, գալիս են լրացնելու պեղումների տեղեկությունները: Այսպես, օրինակ, Իրանի տարածքում՝ Մեշքին Շահր բնակավայրում հայտնի նմանատիպ մարդակերպ կոթողները, թեպետ շատ մանրամասն չեն հետազոտվել, սակայն ինչպես գտնում են հուշարձանը հետազոտած տարբեր մասնագետներ, ի սկզբանե կանգնեցված են եղել դամբարանային տարբեր կառույցների, ինչպես նաև հիմնահողային թաղումների վրա[47]:

Առավել տեղեկատվական են Հյուսիսային Կովկասի և մերձսևծովյան տարածքում հայտնի կոթողների տվյալները: Այսպես, ըստ Վ. Օլխովսկու, այդտեղ հայտնաբերված կոթողները թեպետ 30%-ի դեպքում եղել են տեղահանված վիճակում, սակայն տեղում կատարված հետազոտությունը

[47] Ingraham et al. 1979, 67-87, Burney 1979, 155-156, Dan, Cesaretti 2020, 350-351.

փաստում է, որ այս կոթողները կանգնեցվել են բացառապես թաղումների վրա[48]: Ընդ որում, դրանց հայտնաբերման դիրքը և կապը թաղումների հետ շատ բազմազան են (աղ. 3):

Չափազանց կարևոր է, որ մոտավորապես նույն պատկերն ենք տեսնում նաև Հայաստանի տարբեր հուշարձաններից հայտնաբերված մարդակերպ կոթողներն ուսումնասիրելիս: Հնագիտական պեղումներով հայտնաբերվել են տարբեր իրավիճակներ, որոնք թույլ են տալիս եզրակացնելու, որ Հայաստանում ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններում դամբանաբլրի գագաթին երբեմն հուշակոթող է կանգնեցվել: Այսպես՝ օրինակ, Քանագեղի N1 դամբանաթմբի գագաթին գտնվել է ներքևի մասում միացված, իսկ վերևում՝ իրարից հեռացող երեք սալերով կառուցված պատվանդան, որն ըստ Գ. Արեշյանի, կարող էր ուղղաձիգ կանգնեցված փայտակերտ կոթողի բուն ծառայել[49]: Մեծամորում գտնված ավելի քան 1,5 մ բարձրությամբ տուֆակերտ մարդակերպ կոթողը հնագետները հակված են մահարձան համարելու[50]: Ենթադրվում է, որ Կարմիր բլուրից, Կարմիր բերդից, Այգեստանից, Շավարշավանից[51], Այգեշատից[52], Լոռի Բերդից[53], Ջուջևանից[54] գտնված կոթողները ևս սկզբնապես դրված են եղել դամբարանների վրա:

Ինչ վերաբերում է Նոր Կարմիրավանի կոթողներին, ապա հաշվի առնելով, որ չնայած այն հանգամանքին, որ կոթողները ընկած-պառկած դիրքում էին և գուցե մի փոքր տեղաշարժվել են ժամանակի ընթացքում, հատկապես եթե նկատի ունենանք, որ խորհրդային տարիներին այդտեղ ոռոգման խողովակներ են անցկացվել, և լանդշաֆտը խեղաթյուրվել է, սակայն դրանք հայտնաբերվել են դամբարանի կրոմլեխի ներսում և, կարելի է գոնե այս փոլում վստահ ասել, որ պատկանել են այս դամբարանին: Դրա հետ ինչ հարաբերակցության մեջ են եղել՝ որ հատվածում են գտնվել և ինչ դիրքով, դժվար է ասել: Արցախի տափաստանների կոթողների՝ դամբարանային համալիրների հետ կապի օգտին է խոսում նաև 1976 թ. վերջինից ոչ շատ հեռու՝ Բախշուն թափա տեղավայրից գտնված կոթողների խմբի հայտնաբերման միջավայրը ևս: Ըստ ականատեսների՝ դրանք եղել են թմբի վրա՝ հողով ծածկված և միայն տրակտորով հարթեցման աշխատանքների արդյունքում են բացվել: Ականատեսները վկայում են, որ, կոթողներից բացի, տեղում բացվել են նաև կմախքներ և տարբեր տիպի

[48] Ольховский, Евдокимов 1994, 41-44.
[49] Տե՛ս Թումանյան 2003, 177:
[50] Խանզադյան և այլք 1973, 138:
[51] Есаян 1980, 30-34, Եսայան 1987, 124-135:
[52] Ավետիսյան, Ավետիսյան 2006, 20, աղ. 6, նկ. 8:
[53] Devejyan 2009, 149.
[54] Երանյան 2012, 73-78:

անոթներ: Այսինքն, չի բացառվում, որ այն ևս դամբարան է եղել, որը վնասվել է այգեգործական աշխատանքների հետևանքով:

Նոր Կարմիրավանի պեղված դամբարանի շրջակայքում մենք իրականացրել ենք նաև ինֆրակարմիր ֆիլտրի միջոցով տարածքի օդալուսանկարում (օպերատոր՝ Ա. Մկրտչյան): Նկարները ցույց տվեցին, իսկ հետախուզական պեղումները հաստատեցին, որ քննարկվող դամբարանից բացի շրջակայքում կան այլ դամբարաններ ևս: Այսինքն, սա մի մեծ դամբարանադաշտ է, որտեղ կատարված թաղումներն արժևորվել են, և տեղում կանգնեցվել են քննարկվող մարդակերպ կոթողները:

Եզրակացություններ

Նոր Կարմիրավանի կոթողների հետազոտությունը երևան է բերում որոշ մանրամասներ, որոնք լրացնում են Արցախի կոթողների վերաբերյալ մեր տեղեկությունները: Ամփոփելով կարելի է նշել, որ՝

- Կոթողները չնայած ընկած և հավանաբար մի փոքր տեղաշարժված վիճակում են, բայց գտնվել են անմիջապես դամբարանի վրա: Անգամ եթե դրանք տեղաշարժվել են, և հետագայում է գոյացել այս կուտակումը, առնվազն դրանց հնագիտական միջավայրը հայտնի է. դրանք կապված են եղել այս տարածքում հայտնաբերված շուրջ մեկ տասնյակ դամբարանների հետ: Սա կարևոր հանգամանք է, որ գալիս է լրացնելու Հարավային Կովկասի մարդակերպ կոթողների վերաբերյալ տեղեկությունները:
- Պեղված նյութերն իրենց զուգահեռներն ունեն ինչպես Արցախի, այնպես էլ տարածաշրջանի՝ 1-ին հազարամյակի առաջին կեսով թվագրվող այլ հնագիտական համալիրներում:
- Ուշագրավ կառուցվածքով և ուղեկցող հարուստ նյութերով դամբարանը, համադրելով նմանօրինակ գտածոների հետ, թվագրվում է մ.թ.ա. VIII-VI դարերով:
- Նոր Կարմիրավանի կոթողների ուսումնասիրությունը հավանական է դարձնում այն տեսակետը, որ դրանք պատրաստվել և կանգնեցվել են տեղում: Դրա օգտին է խոսում երկու հանգամանք: Առաջինը որոշ կոթողների վրա անավարտ դետալների առկայությունն է: Ընդ որում, այս դեպքերը հնարավորություն են տալիս, համադրելով նախկինում հայտնի որոշ տեղեկությունների հետ, վերականգնել ինչպես կոթողների քանդակման ընթացքը և հերթականությունը, այնպես էլ որոշակի պատկերացում կազմել գործիքների մասին, որոնցով քանդակվել են կոթողները: Երկրորդ հանգամանքը՝ կոթողների շրջակայքում առկա են երկայնական համամասնությամբ խոշոր կրաքարի բեկորներ: Հավանական է, որ դրանք այստեղ են տեղափոխվել կոթող պատրաստելու նպատակով: Կոթողների անմիջական շրջակայքում, հետագայում բացված կրոմլեխի զրահի շարում, սկզբնապես

հողի մակերևույթին թափված վիճակում առկա էին կրաքարի որոշ բեկորներ, որոնք առաջացել են ավելի մեծ բեկորներից՝ կոտրելու, առանձնացնելու հետևանքով: Հավանական է, որ դրանք ևս գոյացել են կոթողների՝ տեղում պատրաստման միջոցով:

- Հետազոտության այս փուլում, երբ ընդամենը մեկ դամբարան է պեղվել, դժվար է պատասխանել, թե կոթողները դամբարանի որ մասում և ինչ դիրքով են եղել: Սակայն ընդհանուր դաշտի մշակութայնացվածությունը, այդտեղ դրանց նման կուտակումը և հատկապես տարածաշրջանի զուգահեռ նյութերի քննությունը փաստում են, որ կոթողներն ի սկզբանե կապված են եղել այս դամբարանների հետ:

- Պեղումներով հայտնաբերված հնակենդանաբանական նյութը ցույց է տալիս, որ Նոր Կարմիրավանի տարածքի կենդանական տնտեսությունը հիմնված էր ընտանի կենդանիների վրա՝ ոչխարներ, այծեր, ձիեր և խոշոր եղջերավոր անասուններ, որոնք ծառայում էին որպես մսի, ճարպի և կաշվի հիմնական աղբյուրներ: Բացի այդ, նրանցից ստանում էին երկրորդական արտադրանք՝ կաթ, պանիր և մազ/բուրդ: Նրանք, հավանաբար, շահագործվում էին նաև որպես քաշող ուժ: Սպիտակուցի օժանդակ աղբյուրներ են եղել նաև այլ ընտանի կենդանիներ (ձիեր), հնարավոր է՝ նաև օգտագործել են վայրի սմբակավոր կենդանիների սահմանափակ տեսականի, որոնց որսացել են (եվրոպական այծյամ): Հավանաբար, այս կենդանիները դամբարանում թաղված մարդու հարստությունն են ներկայացնում, որովհետև այրված ոսկորներ չեն արձանագրվել, սակայն որոշ ոսկորների վրա արձանագրվել են մսագործության հետքեր: Դամբարաններից ձեռք բերված նյութերի (որոնք կրում են մսագործական հետքեր) մեծ մասը վերաբերում է առաջնային մսագործությանը: Մի խոսքով, գերեզմանում խառնված կենդանական մասերը ներկայացնում են զոհաբերված կենդանու ամբողջ մարմնի մասերը:

- Սգո կերուխումները, որոնք ներառում են մի կենդանու բաժանումն ու մատուցումը, որի մասերը թաղվել են հանգուցյալի հետ, կամ մի ամբողջական կենդանու թաղումը, որը զոհաբերվել է որպես թաղման ծիսակարգի մաս, անկասկած, կարևոր դեր են ունեցել սոցիալական համախմբվածություն, ինչպես նաև տվյալ խմբին ինքնուրույնություն, բարքերի շարունակականություն ապահովելու համար, ինչու չէ, նաև խորհրդանշել են հարգանք հանգուցյալի, աստվածների ու մասնակիցների նկատմամբ:

Գրականություն

Ասրյան Յու. 1973, Հնագիտական նորույթներ Լեռնային Ղարաբաղում, Պատմա-բանասիրական հանդես, N 2, էջ 295-300:

Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ. 2006, Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. XI–VI դարերում, Երևան, ԵՊՀ հրատ., 395 էջ:

Եսայան Ս. 1987, Հին Հայաստանի մարդակերպ արձանիկները (մ.թ.ա. VII-III հազարամյակ), Պատմա-բանասիրական հանդես, N 1, էջ 124-135:

Երանյան Ն. 2012, Երկու քարե մարդակերպ կոթող Ջուջևանից, Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ, VIII, Երևան, էջ 73-78:

Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ. 2002, Հին Շիրակավան, Երևան, «Գիտություն», 261 էջ:

Թումանյան Գ. 2003, Հայաստանի ուշբրոնզեդարյան դամբարանների կառուցվածքը, Պատմա-բանասիրական հանդես, N 1, էջ 166-185:

Թումանյան Գ. 2010, Նկատառումներ Հայաստանի ուշբրոնզեդարյան թաղումների գույքին առնչվող որոշ հարցերի վերաբերյալ, Պատմա-բանասիրական հանդես, N 3, էջ 147-160:

Խանզադյան Է., Մկրտչյան Կ., Պարսամյան Է. 1973, Մեծամոր, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 259 էջ:

Խնկիկյան Օ. 1993, Դամբարանի պեղումներ Թումանյանի շրջանի Ծաղկաշատ գյուղում, Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, I, Երևան, հրատ. նշված չէ, էջ 86-89:

Պետրոսյան Հ. 1986, Դաշտային հնագիտական օրագիր:

Պետրոսյան Հ., Խաչատրյան Ժ., Փիլիպոսյան Ա., Հակոբյան Հ., Սաֆարյան Վ., Կիրակոսյան Լ. 2008, Արցախի Տիգրանակերտի և շրջակայքի հնագիտական հետազոտության առաջին արդյունքները, ՀՀՄ, XIV, Երևան, «Գիտություն», էջ 187-200:

Պետրոսյան Լ. 1993, Պեղումներ Սարապատում, Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, I, Երևան, հրատ. նշված չէ, էջ 90-96:

Археология СССР 1992, т. 10, Москва, «Наука», 494 с.

Есаян С. 1980, Скульптура Древней Армении, Ереван, изд. АН Армянской ССР, 65 с.

Иессен А. 1965, Из историического прошлого Мильско-Карабахской степи, Труды Азербайджанской археологической экспедиции, т. 2, Материалы и исследования, вып. 125, Москва, с. 24-30.

Канторович А. 2016, Образ лошади в восточноевропейском скифском зверином стиле. Кавказ и степь на рубеже эпохи поздней бронзы и раннего железа (Материалы международной научной конференции, посвященной памяти Марии Николаевны Погребовой, Москва, 25-27 апреля 2016 г.), Москва, с. 89-114.

Куфтин Б. 1941, Археологические раскопки в Триалети, т. 1, Тбилиси, изд. Академии наук Грузинской ССР, 491 с.

Кушнарева К. 1957, Некоторые памятники эпохи поздней бронзы в Нагорном Карабахе, Советская археология, XXVII, с. 135-177.

Кушнарева К. 1970, Ходжалинский могильник, Историко-филологический журнал, Ереван, 3, с. 109-124.

Кушнарева К., Марковин В., Джапаридзе О., Михайлович М. 1994, Эпоха бронзы Кавказа и Средней Азии, Москва, «Наука», 384 с.

Ольховский В., Евдокимов Г. 1994, Скифские изваяния VII-III вв. до н.э., Москва, изд. АН Украины, 184 с.

Погребова М. 1977, Иран и Закавказье в раннем железном веке, Москва, «Наука», 184 с.

Церен Э. 1966, Библейские холмы, Москва, «Правда», 470 с.

Azarnoush M., Helwing B. 2005, Recent Archaeological Research in Iran: Prehistory to Iron Age, AMIT, 37, p. 189-246.

Bashash R. 1997, Four features of the inscriptions on objects of Kalamkare Cave, Shush Complete Collection of Archaeological Materials, Tehran, p. 13-22.

Berry C., Berry R. 1967, Epigenetic variation in the human cranium. Journal of anatomy; 101, p. 361-379.

Brooks S., Suchey J. 1990, Skeletal age determination based on the os pubis: A comparison of the Acsádi-Nemeskéri and Suchey-Brook's methods, Human Evolution 5(3), p. 227-238.

Burney Ch. 1979, Meshkinshahr survey, Iran, Vol. XVII, p. 155-156.

Dan R., Cesaretti A. 2020, The "Mouthless People": Some Remarks on the Shahr Yeri Statue-Stela Complex, Iran, I*ran and the Caucasus,* 24, p. 347-357.

Devejyan S. 2009, Stone stelae in the burial ground of Lori Berd, Aramazd AJNES, 4/2, Yerevan, p. 146-153.

Don R., Brothwell, E. Higgs, S., Grahame C. 1969, Science in archaeology: a survey of progress and research. Chapter 6. The Ageing of Domestic Animals. Thames and Hudson, London, p. 283-302.

Dyachenko A., Skripkin A., Klepikov V., Kubyshkin A., Mabe A. 2000, Excavations of the Aksai Kurgans in the Volga-Don Region, Kurgans, Ritual Sites, and Settlements Eurasian Bronze and Iron Age (Edited by Jeannine Davis-Kimball, Eileen M. Murphy, Ludmila Koryakova and Leonid T. Yablonksy), p. 43-62.

Falk D., Zollikoferc C.P.E, Morimotoc N., DE Leónc M.S.P. 2012, "Metopic suture of Taung (Australopithecus africanus) and its implications for hominin brain evolution". Proceedings of the National Academy of Sciences; 109, p. 8467-8470.

Gardner S. 2016, A Persistent Metopic Suture: A Case Report, Austin Journal of Anatomy, Vol. 3, Issue 1, 1049.

Genz H. 2011, The Iron age in Central Anatolia, The Black Sea, Greece, Anatolia and Europe in the first millennium BC, ed. Gocha Tsetskhladzem, Leuven – Paris – Walpole, p. 331-368.

Hillson S. 2009, Mammal Bones and Teeth: An Introductory Guide to Methods of Identification (UCL Institute of Archaeology Publications (LCP)), University College London institute of Archaeology, p. 64.

Ingraham M., Summers G. 1979, Stelae and settlements in the Meshkin Shahr Plain, Northeastern Azerbaijan, Iran, AMIT, bd. 12, Berlin, p. 67-87.

Kijowski R., Tuite M. 2010, "Pediatric throwing injuries of the elbow". Seminars in Musculoskeletal Radiology 14 (4), p. 419-429.

Lewis M. 2017, Paleopathology of children: identification of pathological conditions in the human skeletal remains of non-adults, London: Academic Press, p. 252-263.

Lukacs J. 1989, Dental Palaeopathology. Methods for reconstructing Dietary Patterns, in: Iscan, M.Y., Kennedy, K.A.R. (eds.), Reconstruction of Life from the Skeleton, Wiley-Liss Publisher, New York, p. 261-286.

Mays S. 2008, Septal apertura of the humerus in a mediaevel human skeletal population. American Journal of Physical Anthropology, 136, p. 432-440.

Medvedskaya I. 2014, Iran: Iron age I (in Persian), Tehran, B.A.R., 130 p.

Meindl R., Lovejoy C. 1985, Ectocranial suture closure: A revised method for the determination of skeletal age at death based on the lateral-anterior sutures, American Journal of Physical Anthropology 68(1), p. 57-66.

Meindl R., Lovejoy C. 1989, Age changes in the pelvis: Implication for paleodemography [in:] "Age markers in the human skeleton", M.Y. Işcan (ed.), Springfield: Charles C. Thomas, p. 137-168.

Murlimanju B., Prabhu L., Pai M., Goveas A., Dhananjaya K., Somesh M. 2011, "Median frontal sutures-incidence, morphology and their surgical, radiological importance", Turkish Neurosurgery, N 21, p. 489-493.

Pálfi G., Dutour O. 1996, Activity-induced skeletal markers in historical anthropological material, International Journal of Anthropology, 11, (1), p. 41-55.

Piller Ch. 2010, Northern Iran in the Iron age II and III: a neighbour of Urartu?, «Aramazd» AJNES, V/2, Yerevan, p. 53-75.

Piller Ch. 2013, The Caucasian connection – Reflections on the transition from the Late Bronze to the Early Iron Age in Northern Iran and its connections to the Southern Caucasus, Schriften deS ZentrumS für Archäologie und KulturgeSchichte deS SchwArZmeerrAumeS, 22, p. 305-317.

Prehn, N., Feneru, F., & Rochester, J. (n.d.) 2018, Beginner's guide to identifying British mammal bones. London: Natural History Museum, 54 p.

Sevin V. 2000, Mystery stelae, Archaeology, N 7/8, p. 46-51.

Sevin V. 2005, Who where the Naked Warriors of Hakkari? AMIT, 37, p. 163-166.

Summers G., Burney Ch. 2012, Late Iron age pottery from Northwestern Iran: the evidence from Yanik tepe, Anatolian Iron Ages, 7, peeters, Leuven, Paris, p. 269-315.

Todd T. 1920, Age changes in the pubic bone. I. The male white pubis, American Journal of Physical Anthropology 3(3), p. 285-334.

Villotte S., Churchill S., Dutour O., Henry-Gambier D. 2010, Subsistence activities and the sexual division of labor in the European Upper Paleolithic and Mesolithic: Evidence from upper limb enthesopathies. Journal of Human Evolution 59 (1), p. 35-43.

Walker P., Bathurst R., Richman R., Gjerdrum T. Andrushko V. 2009, The causes of porotic hyperostosis and cribra orbitalia: a reappraisal of the iron-deficiency-anemia hypothesis, American Journal of Physical Anthropology, 139, (2), p. 109–125.

Yereanyan N. 2021, Main Results of the Study of Anthropomorphic Stelae in Artsakh, Archaeology of Armenia in regional context, Yerevan, p. 248-254.

Young C. 1965, A comparative ceramic chronology for Western Iran. 1500-500 BC, "Iran", Vol. III, p. 8-9.

ԱՐՑԱԽԻ ՄԱՐԴԱԿԵՐՊ ԿՈԹՈՂՆԵՐԻ ԹՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԿԱՐՄԻՐԱՎԱՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Նժդեհ Երանյան, Նուշիկ Զարիկյան, Հասմիկ Սիմոնյան

Ամփոփում

2016-18 թթ. Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Նոր Կարմիրավան գյուղի տարածքում՝ մարդակերպ կոթողների շրջակայքում կատարված պեղումների շնորհիվ հայտնաբերված մարդակերպ կոթողները ուղղանկյունաձև, տափակ, երկայնական սալեր են, որոնք երկու հորիզոնական ակոսների միջոցով բաժանվում են երեք մասի՝ պատկերելով մարմնի երեք մասերը՝ գլուխը, իրանը և ներքնամասը: Արցախում գտնվել են շուրջ երեք տասնյակ նմանատիպ կոթողներ: Առաջին անգամ դրանք հայտնաբերվել են 1960-ական թվականներին, սակայն

նախկինում հայտնի որևէ կոթող չի վավերացվել իր կանգնեցման նախնական վայրում (in situ): Հետևաբար Նոր Կարմիրավանի պեղումները կարևոր են հենց այդ տեսանկյունից, քանի որ առաջին անգամ հնարավորություն է ստեղծվել կոթողները վավերացնել իրենց պատրաստման նախնական վայրում և այդ լույսի ներքո քննել դրանց ժամանակագրության և գործառույթի հարցերը:

Պեղումներն իրականացվել են Արցախի Հանրապետության «Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայության» արշավախմբի կողմից:

Բանալի բառեր՝ Արցախ, Նոր Կարմիրավան, Տիգրանակերտ, Բախշուն թափա, Մեշքին Շահր, մարդակերպ կոթող, կուրգան:

ИССЛЕДОВАНИЕ ДАТИРОВКИ И ФУНКЦИЙ АНТРОПОМОРФНЫХ ИЗВАЯНИЙ АРЦАХА В СВЕТЕ РАСКОПОК НОР КАРМИРАВАНА

Нжде Еранян, Нушик Зарикян, Асмик Симонян

Резюме

Антропоморфные памятники Арцаха представляют собой прямоугольные, плоские продольные плиты, разделенные на три части двумя горизонтальными бороздками, изображающими три части тела: голову, туловище и брюхо. В Арцахе обнаружено около трех десятков подобных памятников. Первые такие памятники в Арцахе были выявлены в 1960-х годах, но ни один из ранее известных памятников не был аутентифицирован на месте, поэтому раскопки Нор Кармиравана были важны прежде всего в том плане, что впервые появилась возможность обоснования нахождения памятников в первоначальном месте их возведения или изготовления и, исходя из этого, рассмотрения вопросов их хронологии и функций.

Раскопки проводились в 2016-2018 годах экспедицией «Государственной службы охраны исторической среды» Республики Арцах.

Ключевые слова – Арцах, Нор Кармираван, Тигранакерт, Бахшун тапа, Мешкин шахр, антропоморфные изваяния, курган.

INVESTIGATION OF THE DATE AND FUNCTIONS OF ARTSAKH'S ANTHROPOMORPHIC STELAE IN THE LIGHT OF THE NOR KARMIRAVAN EXCAVATIONS

Nzhdeh Yeranyan, Noushig Zarikian, Hasmik Simonyan

Abstract

The article presents the main results of the excavations carried out in 2016-2018 in the area of the village of Nor Karmiravan, Martakert region of the Republic of Art-

sakh, in the vicinity of anthropomorphic stelae. The anthropomorphic stelae of Artsakh are rectangular, flat longitudinal slabs, which are divided into three parts by two horizontal grooves, depicting the three parts of the body: the head, the torso and the lower part. About three dozen similar stelae were found in Artsakh. The first similar stelae were discovered in 1960s, but none of the previously known stelae were recorded in situ. Therefore, the excavations of New Karmiravan were important, while for the first time there was an opportunity to record the stelae in the original place of their erection or preparation and, in this sense, to examine the questions of their chronology and function.

The excavations were carried out in 2016-2018 by the expedition of the "State Service for the Protection of the Historical Environment" of the Republic of Artsakh.

Key words – Artsakh, Nor Karmiravan, Tigranakert, Bakhshun tapa, Meshkin Shahr, Antropomorphic stelae, kurgan.

ԾԻՍԱԿԱՆ ԱՆՈԹՆԵՐ ՏԱՎՈՒՇ ԱՄՐՈՑԻՑ

Տիգրան Ալեքսանյան
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ tigranalexanyan@yandex.ru
ORCID: 0000-0001-9971-1651

Հարություն Բադալյան
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ badalyanh@mail.ru
ORCID: 0009-0001-5421-6750

Արտակ Հախվերդյան
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ architecart25@gmail.com
ORCID: 0009-0007-2278-209X
Հոդվածը ներկայացվել է 22.07.2023, գրախոսվել է 24.07.2023, ընդունվել է տպագրության 11.12.2023
DOI: 10.53548/0320-8117-2023.3-297

Ներածություն

Տավուշ ամրոցը Բերդի տարածաշրջանի կարևոր միջնադարյան ամրություններից է: Գտնվում է շրջկենտրոն Բերդ քաղաքի հարավարևելյան մասում՝ ժայռոտ լեռան գագաթին: Շրջանի մյուս ամրոցների շարքում հուշարձանն առանձնանում է իր չափերով և համեմատաբար լավ պահպանվածությամբ:

Ամրոցի վերականգնման, ամրակայման և տարածքի բարեկարգման նպատակով 2020-2022 թթ. հուշարձանի տարածքում կատարվել են հնագիտական պեղումներ (արշ. ղեկավար՝ Տ. Ալեքսանյան, հնագետ՝ Հ. Բադալյան, ճարտարապետ՝ Ա. Հախվերդյան), որոնց շնորհիվ հայտնաբերվել են հնավայրի թվագրությանը, շինարարական փուլերին և մի շարք այլ հարցերին վերաբերող արժեքավոր նյութեր[1]: Այս հոդվածը Տավուշ ամրոցի միջնաբերդից հայտնաբերված վաղ շրջանի գտածոների ուսումնասիրության մասին է, որը կարևոր տվյալներ է հաղորդում հուշարձանի վաղագույն շերտերի հետազոտման համար:

Տավուշ ամրոցի կառուցման թվականը հայտնի չէ: Հուշարձանի ժամանակագրական սահմանները հստակեցնելուն մեծապես օգնում են մատենագրական առատ տվյալները: Ըստ այդմ՝ հուշարձանը թվագրվում է X-XIII դա-

[1] Պեղումների նախնական արդյունքների մասին մանրամասն տե՛ս Ալեքսանյան, Բադալյան, 2021, 113-127:

րերով, հիշատակվում է Աշոտ Երկաթի (914-928) գահակալության տարիներից մինչև մոնղոլական արշավանքները, որոնց հետևանքով այն ավերվել և լքվել է: Այս իրողությունը հաստատվում է նաև հնագիտական ուսումնասիրություններով և հայտնաբերված մեծաքանակ և բազմապիսի գտածոների քննությամբ: Սակայն 2021 թ. պեղումների ընթացքում միջնաբերդի տարբեր հատվածներից և գլխավորապես արևմտյան հատվածում կառուցված դիտակետ-աշտարակից (նկ. 1, 2) հայտնաբերվել են Ք.ա. VII-VI դդ. թվագրվող կենդանակերպ անոթների մասեր, վանակատե գործիքներ, որոնց առկայությունը հիմք է տալիս ենթադրելու, որ ամրոցի տարածքն օգտագործվել է նաև ավելի վաղ շրջանում:

Նկ. 1. Միջնաբերդի ընդհանուր տեսքը հյուսիսից (լուս.՝ Լ. Մկրտչյանի)

Նկ. 2. Միջնաբերդի արևմտյան մասում կառուցված դիտաշտարակը (լուս.՝ Լ. Մկրտչյանի)

Նախկինում դիտաշտարակը վերակառուցվել է: Ներսույթը փակվել է հողե լիցքով, իսկ գագաթը հարթեցվել է, որի հետևանքով այն վերածվել է հոծ կառույցի: Ենթադրելի է, որ լցված հողի հետ խառնվել են նաև հիշյալ գտածոները, քանզի դրանք գտնվել են տարբեր խորություններից, անկանոն ձևով, միջնադարյան խեցեղենի հետ:

Խեցեղեն գտածոները

Հայտնաբերված խեցեղենի բեկորների մեջ առանձնանում են երեք անոթների մասեր, որոնցից պահպանվել են վերին հատվածները: Դրանցից առաջինն ունի արջանման հորինվածք, որից պահպանվել է վերին հատվածն ամբողջությամբ (աղ. 1, նկ. 1): Ունի գորշադարչնագույն, փայլեցրած մակերես, վզիկը կտրվածքում շրջանաձև է, վերին հատվածում՝ օվալաձև, իսկ շուրթը՝ երեքնուկաձև ավարտվող: Շրթին երկու կողմերից հպված են զույգ թռչունների ֆիգուրներ՝ կտուցների և աչքերի պատկերմամբ: Դեպի վեր ուղղված ծորակը հիշեցնում է կենդանու դունչ, որի աչքերը թռչունների պատկերների և ծորակի միջև են: Ներկայացվող անոթի բռնակը ծորակի հակառակ կողմում է՝ կենդանու թաթի ոճավորմամբ, որի հարթ մակերեսին առկա է շրջանաձև յոթ ակոս: Այս ինքնատիպ անոթի իրանը և հատակը չեն պահպանվել: Սակայն, մեր ենթադրությամբ, հայտնաբերված բեկորներից մեկը պատկանում է հիշյալ կավանոթին: Այն նույնպես ունի գորշադարչնագույն, փայլեցրած մակերես, որի վրա առկա է խաղողի ողկույզի նմանվող զարդանախշ (աղ. 2, նկ. 4):

Երկրորդ անոթը չափերով ավելի մեծ է: Ունի սև, փայլեցրած մակերես, կտրվածքում՝ շրջանաձև վզիկ, երեքնուկաձև շուրթ, որի երկու կողմում եղել են (մասամբ պահպանված) կենդանու ականջների նմանվող ելուստներ:

Ելուստներից մեկ վրա առկա է աչքի նմանվող շրջանաձև ռելիեֆ զարդ: Անոթի ծորակը կտրվածքում շրջանաձև է, պահպանվել է ամբողջությամբ: Կտրվածքում շրջանաձև է նաև անոթի բռնակը, որը պահպանվել է մասամբ. սկսվում է անոթի շրթի տակից և ավարտվում իրանի վրա: Անոթի մակերեսին՝ ծորակի և վզի հատվածում, առկա են ուղղահայաց և հորիզոնական վերադիր զարդագոտիներ (աղ. 1, նկ. 2):

Երրորդ անոթը չափերով և տեսքով բավական նման է երկրորդին: Ունի սև փայլեցրած, անզարդ մակերես, խողովակաձև, երկար վիզ և ուղիղ ավարտվող շուրթ: Կտրվածքում շրջանաձև ծորակի հիմնական մասը կոտրված է: Չի պահպանվել նաև բռնակը: Անոթի ծորակի վրա թերի պահպանվել են կենդանու ականջներ հիշեցնող ելուստներ (աղ. 1, նկ. 3):

Վերոնշյալ գտածոներից բացի, նույն հատվածից հայտնաբերվել են նաև համաժամանակյա այլ անոթների բեկորներ: Դրանցից առանձնապես նշելի է գորշ, փայլեցրած մակերեսով սափորի շրթնամասը, որն ունի խողովակաձև,

երկար վիզ, շրթի տակից սկսվող և իրանին ավարտվող կանթ, որի վրա պահպանվել է վեր ցցված ելուստ (աղ. 2, նկ. 1): Բեկորների մեջ առկա են նաև սև փայլեցրած, անզարդ մակերեսներով սափորի և քրեղանի շրթեր, որոնց վրա արվել են կոճականման, շրջանաձև, ռելիեֆ, ալիքաձև և այլ զարդանախշեր: Հետաքրքիր է նաև աղյուսագույն փոքր բեկորը, որը ներկայացնում է անոթի շրթի մի հատվածը և շրթին հպված ելուստը: Վերջինիս երկու կողմում պահպանվել են կենդանու աչքերի նմանվող վերադիր հավելումներ, որից բխում է, որ այն ևս ծիսական անոթի մաս է (աղ. 2, նկ. 2):

Աղ. 1. Կենդանակերպ անոթների մասեր



Աղ. 2. Անոթների բեկորներ

Ներկայացված խեցեղենի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք հեղման ծիսական անոթներ են և թվագրվում են Ք.ա. VII-VI դդ.: Նմանօրինակ անոթներ հայտնի են ինչպես Հայաստանի, այնպես և հարևան երկրների հնավայրերի պեղումներից: Առաջին անոթին ձևով ամենամոտը Սիսիանի Ախլաթյան գյուղի մերձակայքում՝ Դոլայի կոչվող տարածքում, 1952 թ. բացված դամբարանից է: Վերջինից նույնպես պահպանվել է վերին հատվածը, որի ծորակը արջի դունչ է հիշեցնում: Դամբարանի գտածոները թվագրվում են Ք.ա. VII-VI դդ.[2]:

Հայտնաբերված նյութերի հետ զուգահեռներ նկատելի են նաև Խրթանոցից, Երևանից[3], Վերիշենից, Ագարակից[4], Մուսիեյից[5], Մինգեչաուրից[6] և մի շարք այլ հուշարձաններից[7] հայտնաբերված նյութերում: Թեև դրանք ձևով տարբեր են և ոճավորված են այլ կենդանիների տեսքով (ձի, եղջերու, ցուլ, այծ, բադ, կարապ և այլն), այնուամենայնիվ ունեն գործառութային, ձևաբանական և ժամանակագրական ընդհանրություններ: Դրանցից ամբողջական օրինակներն ունեն շեփորաձև վիզ, շրթից սկսվող և իրանին ավարտվող փոքր կանթ, կենդանաձև իրան, ոճավորված ծորակ, իսկ հակառակ կողմում՝ պոչանման ելուստ:

Համաժամանակյա հուշարձանների պեղումներից հայտնի են նաև կենդանակերպ անոթների ոտքերով օրինակներ: Դրանք հայտնաբերվել են Արցախից (Վարանդա), Վրաստանից (Թբիլիսի), Իրանից (Հասանլու, Սիալկա, Խուրվին) և այլ վայրերից[8]:

Նշենք նաև, որ կենդանակերպ անոթների գործածումը շարունակվել է նաև հելլենիստական ժամանակաշրջանում: Արտաշատի, Արենիի և Արմավիրի պեղումների ժամանակ հայտնաբերվել են արջի, ոչխարի ամբողջական անոթներ և բեկորներ, որոնք ևս ծառայել են նույն նպատակին[9]:

Վանակատե գտածոներ

Տավուշ ամրոցից հայտնաբերված վաղ շրջանի նյութերի շարքում կան նաև վանակատե գտածոներ: Դրանք հայտնաբերվել են նույն հատվածից և նույն իրավիճակում, որոնց ուսումնասիրության արդյունքները համակարգված ներկայացնում ենք ստորև[10].

---

[2] Հասրաթյան 1985, 173, աղ. XVII, Կարապետյան 2001, 44:

[3] Мартиросян 1964, 379, таб. XXVIII 8.

[4] Аветисян 2003, 56, Հոբոսյան, Գասպարյան և այլք 2021, նկ. 198:

[5] De Morgan 1889, 155, im. 169.

[6] Казиев 1949, 8, Асланов и др. 1959, 107, таб. XLII 1.

[7] Xnkikyan 2002, tab. LXXXIII, Խնկիկյան 1988, 238-239, աղ. II, Գնունի 2006, 216, նկ. 4, Սիմոնյան և այլք 2007, 19-21, Հարությունյան և այլք 2005, աղ. 65-69, Казиев 1960, таб. XXX:

[8] Погребова 1977, 96.

[9] Тирацян 1988, 122-123. Тер-Мартиросов 1997, 2-6.

[10] Մասնագիտական ուսումնասիրությունն կատարել է ՀԱԻ վաղ հնագիտության բաժնի գիտաշխատող Ա. Պետրոսյանը, որին հայտնում ենք մեր երախտագիտությունը:

	№1	№2	№3	№4
Նյութը	սև վանակատ	սև վանակատ	թափանցիկ վանակատ	թափանցիկ վանակատ
Կատարման տեխնիկան	կոպիտ ջարդիչով, ուղղակի հարվածի միջոցով	կոպիտ ջարդիչով, ուղղակի հարվածի միջոցով	ուղղակի հարվածի միջոցով	ուղղակի հարվածի միջոցով
Առարկաների տիպը	քերթիչ բեկորի վրա	միջուկ	միջուկ բեկորի վրա	փոսիկավոր գործիք շեղբի վրա
Պահպանվածությունը	ամբողջական, առանց պատինայի	ամբողջական	ամբողջական, բնական մակերևույթի առկայություն	հատված
Եզրեր	երկեզր	երկեզր	երկեզր	երկեզր
Չափերը (երկ., լայն., հաստ., մմ)	35,82x32,31x9,71	40.01x55.57x21.38	28.37x39.3x12.33,	30.08x24.55x6.75
Հարվածի հրապարակը	թեք, անհարթ	երկհրապարակ, երկթեք, անհարթ	սուր	թեք, անհարթ
Հարվածի կոնը	առկա է, ուրվագծված	-	-	առկա է, փոքր
Հարվածի կետը	առկա է	-	-	առկա է
Պարուրագծերը	առկա են	-	-	առկա են
Նկարագրություն	կոպիտ ջարդիչով նախնական հումքից առանձնացված բեկորի վրա առկա են նախորդ, անկանոն հանույթների հետքերը	երկթեք հրապարակով, փոքր չափսերի շեղբեր ստանալու համար նախատեսված միջուկ	նախնական հումքից առանձնացված բեկորի վրա պատրաստված միջուկ	ուղղակի հարվածով միջուկից առանձնացված շեղբ, որի աջ կողմը հարդարման միջոցով վերածևավորվել է փոսիկով
Հնարավոր թվագրությունը[11]	բրոնզ-երկաթի դար	բրոնզ-երկաթի դար	բրոնզ-երկաթի դար	բրոնզ-երկաթի դար



[11] Rosen 1997, 165, Պետրոսյան Ա. 2017, 217-237:

Եզրակացություններ

Բերված փաստերը և հարակից մի շարք կռվաններ հիմք են տալիս նշելու, որ Տավուշ ամրոցի տարածքն օգտագործվել է նաև ավելի վաղ շրջանում: Այս վարկածի օգտին է խոսում նաև ամրոցին հարող հնագիտական միջավայրը՝ բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանի մի շարք ամրոցներով և դամբարաններով[12]:

Հին ամրոցները միջնադարում վերակառուցելու կամ դրանց տեղում նորը հիմնելու շինարարական ավանդույթը լայնորեն տարածված էր միջնադարյան Հայաստանի ամրոցաշինության մեջ[13]: Այս գործընթացը գերազանցապես պայմանավորված էր ամրոցների անառիկ և ռազմավարական տեղադիրքով, որոնք տվյալ շրջանի պաշտպանական շղթայի կարևոր բաղադրիչն էին: Օրինակ, Կամսարական իշխանական տունը, իսկ ավելի ուշ՝ նաև Բագրատունիները, Ախուրյանի հովտի մի շարք կիկլոպյան ամրոցների տեղում հիմնեցին կամ վերակառուցեցին Մոսկերտ, Արգինա, Մաղասբերդ և մի շարք այլ ամրություններ՝ վերականգնելով հին պաշտպանական գիծը[14]: Վստահորեն նույն երևույթն է դիտարկվում նաև Տավուշ ամրոցի պարագայում, որն ունի տեղանքի նկատմամբ իշխող դիրք՝ ամբողջությամբ հսկելով Տավուշ գետի վերնահովիտն ու ստորին ավազանը: Շոշափվող խնդրի վերաբերյալ օժանդակ տվյալներ են հաղորդում նաև Բերդի տարածաշրջանին հարևանցող Աղստևի ավազանի միջնադարյան ամրոցների ուսումնասիրությունները: Դրանց պեղումների արդյունքները վկայում են, որ այստեղ ևս միջնադարյան մի շարք ամրոցներ նախապես եղել են կիկլոպյան ամրություններ[15]:

Գրականություն

Ալեքսանյան Տ., Բադալյան Հ. 2021, Տավուշ ամրոցի նախընթաց և ներկա հետազոտությունները, Հայագիտության հարցեր (ԵՊՀ), N 2, էջ 113-127:

Գնունի Ա. 2006, Կերենի «Քրմական» դամբարանի պեղումները, Բանբեր Երևանի համալսարանի, N 3, էջ 215-218:

Եսայան Ս., Ղաֆադարյան Կ. 1965, Շամշադինի մի քանի կիկլոպյան ամրոցների մասին, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, N 11, էջ 80-88:

Խնկիկյան Օ. 1988, Զանգեզուրում հայտնաբերված հնագիտական իրեր, Պատմա-բանասիրական հանդես, N 1, էջ 232-241:

Կարապետյան Ի. 2001, Հայաստանի նյութական մշակույթը VI-IV դդ., Հայաստանի հնագիտական հուշարձանները 19, Երևան, «Գիտություն», 114 էջ:

[12] Եսայան, Ղաֆադարյան 1965, 80-88, Միքայելյան, Եսայան 1968, 289-292: Տե՛ս նաև Բերդ քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը:

[13] Հարությունյան 1992, 186-187:

[14] Քոչարյան, 2022, 86:

[15] Есаян 1992, 8-46.

Հարությունյան Ս., Քալանթարյան Ա., Պետրոսյան Հ., Սարգսյան Գ., Մելքոնյան Հ., Հոբոսյան Ս., Ավետիսյան Պ. 2005, Գինին Հայոց ավանդական մշակույթում, Երևան, հ. Ա, 305 էջ:

Հարությունյան Վ. 1992, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, «Լույս», 632 էջ:

Հասրաթյան Մ. 1985, Հնագիտական հետազոտություններ Սիսիանում, Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երևան, ԳԱ հրատ., 277 էջ:

Հոբոսյան Ս., Գասպարյան Բ., Հարությունյան Հ., Սարատիկյան Ա., Ամիրխանյան Ա. 2021, Խաղողի և գինու Հայոց մշակույթը, Երևան, ՀԱԻ հրատ., 438 էջ:

Հովհաննիսյան Ն., Եսայան Ա., Բոբոխյան Ա., Դալլաքյան Մ., Հոբոսյան Ս., Գասպարյան Բ. 2017, Հայկական խաղող և գինի, Երևան, 440 էջ:

Միքայելյան Գ., Եսայան Ս., 1968, Շամշադինի և Կրասնոսելսկի շրջանների կիկլոպյան ամրոցները, ՊԲՀ, N 3, էջ 289-296:

Պետրոսյան Ա., 2017, Քարի գործիքների ուսումնասիրության մեթոդոլոգիան, ՀԱԻ աշխատություններ, N 2, Երևան, «Գիտություն», էջ 217-237:

Սիմոնյան Հ., Սանամյան Հ., Գնունի Ա. 2007, Արցախի և ազատագրված տարածքների 1990-2005 թթ. հնագիտական հետազոտությունների հիմնական արդյունքները, Երևան, «Հուշարձան», 43 էջ:

Քոչարյան Գ. 2022, Շիրակի պաշտպանական համակարգի ձևավորման գործընթացը, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», N 2, էջ 81-90:

Аветисян П. 2003, Предварительные результаты раскопок памятника Агарак, Археология, этнология, фольклористика Кавказа, Эчмиадзин, «Азарашен», с. 52-57.

Асланов Г., Ваидов Р., Ионе Г. 1959, Древний Мингечаур, Эпоха энеолита и бронзы, Баку, изд. АН Аз. ССР, 191 с.

Казиев С. 1949, Археологические раскопки в Мингечауре, Материальная культура Азербайджана, т. 1, Баку, изд. АН Аз. ССР, 158 с.

Мартиросян А. 1964, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, изд. АН Арм. ССР, 305 с.

Погребова М. 1977, Иран и Закавказье в раннем железном веке, Москва, «Наука», 184 с.

Тер-Мартиросов Ф. 1997, Медвежонок и другие персонажи армянской мифологии, Армянский центр стратегических и национальных исследованний, март, с. 2-6.

Тирацян Г. 1988, Культура Древней Армении VI в. до н.э.-III в. н.э. (по археологическим данным), Ереван, изд. АН Арм. ССР, 1 202 с.

De Morgan J. 1889, Mission scientifique au Caucase, Etudes arqeologiques et historiques 1, Paris, Ernest Lerouux, 308 p.

Rosen S. 1997, Lithics after Stone Age, A Hendbook of Stone Tools from the Levant, Altamira Press, 184 p.

Xnkikyan O. 2002, Syunik During the Bronze and Iron ages, Barrington, "Mayreni" publishing, 258 p.

ԾԻՍԱԿԱՆ ԱՆՈԹՆԵՐ ՏԱՎՈՒՇ ԱՄՐՈՑԻՑ

Տիգրան Ալեքսանյան, Հարություն Բադալյան, Արտակ Հախվերդյան

Ամփոփում

Տավուշ ամրոցը Բերդի տարածաշրջանի միջնադարյան կարևոր ամրություններից է, որի մասին բազմիցս հիշատակում են մատենագիր աղբյուրները: Հուշարձանի վերականգնման և ամրակայման նպատակով 2020-2023 թթ. իրականացվել են հնագիտական պեղումներ, որոնց ընթացքում, ի թիվս բազմաթիվ նորահայտումների, գտնվել են նաև Ք.ա. VII-VI դդ. թվագրվող կենդանակերպ, ծիսական անոթների մասեր: Վերջիններիս քննությունը ցույց է տալիս, որ դրանք հեղման անոթներ են, որոնք հայտնի են ոչ միայն Հայաստանի, այլև հարևան Վրաստանի, Ադրբեջանի և Պարսկաստանի համաժամանակյա հուշարձաններից:

Քննության առարկա անոթների հայտնաբերումը միջնադարյան ամրոցի (X-XIII դդ.) տարածքից հիմք է տալիս նշելու, որ հուշարձանի տարածքն օգտագործվել է նաև Ք.ա. VII-VI դարերում: Միջնադարում հին ամրոցները վերականգնելու կամ նույն վայրում նորը կառուցելու ավանդույթը բավական տարածված էր բերդաշինության մեջ: Եվ խնդրո առարկա գտածոները այդ երևույթը հավաստող նյութական փաստարկներ են:

Բանալի բառեր՝ Տավուշ ամրոց, միջնաբերդ, պեղումներ, միջնադար, գտածոներ, խեցեղեն, շերտագրություն:

РИТУАЛЬНЫЕ СОСУДЫ ИЗ КРЕПОСТИ ТАВУШ

Тигран Алексанян, Арутюн Бадалян, Артак Ахвердян

Резюме

Тавушская крепость является одной из важнейших средневековых укреплений Бердского района, которая неоднократно упоминается в летописных источниках. С целью реставрации и благоустройства памятника в 2020-2023 гг. были проведены археологические раскопки, в ходе которых были обнаружены фрагменты ритуальных сосудов 7-6 вв. до н.э. Исследование данных артефактов показывает, что это ритуальные сосуды, известные как из одновременых археологических памятников Армении, так и соседней Грузии, Азербайджана и Персии.

Находки исследуемых сосудов из средневековой крепости (10-13 вв.) дают основание полагать, что территория крепости Тавуш использовалась и раньше, в 7-6 вв. до н.э. В средневековье в строительстве крепостей была довольно распространена традиция восстановления старых укреплений либо сооружения на том же месте новых. Рассматриваемые находки являются материальным доказательством этого явления.

Ключевые слова – Крепость Тавуш, цитадель, раскопки, средневековье, артефакты, керамика, стратиграфия.

RITUAL VESSELS FROM TAVUSH FORTRESS

Tigran Aleksanyan, Harutyun Badalyan, Artak Hakhverdyan

Abstract

The Tavush fortress is one of the important medieval fortifications of the Berd region, which is often mentioned in written sources. In frameu of restoration works of the site, during 2020-2023 archaeological excavations were carried out, during which, among many new discoveries, fragments of ritual vessels from the 7th-6th centuries BC were found. The study of the artifacts shows that these are ritual vessels, known both from the archaeological sites of Armenia and neighboring countries (Georgia, Azerbaijan and Iran).

Such findings from the medieval fortress (10-13 centuries) allows to state that the territory of the Tavush fortress was used earlier, in the 7-6 centuries BC. During the Middle Ages was quite common to restore old fortifications, or build new ones in the same place. The findings in question are material evidence of this phenomenon.

Key words – Tavush fortress, citadel, excavations, Middle Ages, artifacts, stratigraphy.

CHARACTERISTICS OF THE ARMENIAN NATIONAL COSTUME

Svetlana Poghosyan

PhD in History
National Museum of Armenian Ethnography and History of Liberal Struggle, Armavir, Araks,
Daniel Bek Pirumyan 1
E-mail: sv_ethnomuseum@yahoo.com
ORCID: 0000-0003-1058-5105

Karen Pahlevanyan

PhD in History
National Museum of Armenian Ethnography and History of Liberal StruggleArmavir, Araks,
Daniel Bek Pirumyan 1
E-mail: karen.pahlevanyan71@gmail.com
The article has been delivered on 16.02.2022, reviwed on 15.03.2023, accepted for publication on 11.12.2023
ORCID: 0009-0001-5774-0486
DOI: 10.53548/0320-8117-2023.3-308

Introduction

The national costume is a set of clothing that has the meaning of apparel, form and manner. Its equivalents are the dress, garb, and the form of a clothing or decoration, accepted in a definite time and spatial dimension. The Armenian word zgest (dress) derives from the verb zgenul, used in singular form. It has presented the collective sense of the clothes of commoners, women, kings and queens, and priests. Synonyms for the Armenian word zgest are clothing, dress, garment, and attire. The word handerdz (garment) has been used both in singular and plural with the equal meaning of dress, referring to the set of clothes of kings and rich noblemen as well as the poor and commoners, priests and soldiers, men and women, and wedding and mourning attire[1].

The dress is a national, local and specific clothing with gender and age features, characteristic of a given people, an ethnic community. The Armenian national costume, like the Armenian multidialectal language, is manifold. It resembles a multicolored palette with separate but at the same time proportionate and harmonious colors. There is no "all Armenian" general costume. It is a historically developed system with separate groups that are common in structure. In all groups the costume consists of underwear, outerwear, headdress, decoration, footwear (socks, shoes; for men also foot wrappers, gaiters). The differences are

[1] Հացունի 1923, 6.

in stylization, demonstrated in pattern, main forms, manner of wearing, color combination, and ornamentation styles[2].

According to its type, the Armenian costume is loose and open; the dress has cuts in the front and on sides. According to the style characteristics, the contour is not tight; red, blue, green, violet and yellow dominate in the color spectrum. This found its reflection also in medieval Armenian poetry: "In green and red you are like a pomegranate seed"; "Handsome man in red, dismount your horse, let me tie a belt"; "Who has white bosom, let wear blue undershirt"[3]. In the national cultural system, color is a characteristic feature of both natural and artificial environment. Color preference and solutions, as manifestation of ethnic peculiarity, are a result of definite color mentality. The Armenian dress is characterized by a long skirt, side cuts and necessarily by a belt. Dresses were decorated with edge strings and different types of embroidery. Women wore head scarves, shoulders upward, without covering the face and mouth. With the introduction of Christianity, case-shaped, closed gowns that covered natural forms and proportions of the body became widespread among Armenian national costumes. The system of the Armenian national costume comprises Western Armenian (Vaspurakan, Aghdznik, Turuberan, Bardzr Hayk /Karin, Shirak, Akhalkalak, Akhaltskha/, Trabzon, Pokr Hayk, Cilicia), Eastern Armenian (AyraratTiflis-Parskahayk / Persian Armenia/, Syunik-Artsakh, Gugark, Vayots Dzor) and other sets[4]. The Armenian costumes are an inexhaustible source not only for study and comprehensive cognition of the Armenian culture, ornamentation art and national identity, but in terms of discovering new forms of clothing as well. The Armenian traditional costume is a system of meaningful signs, which manifests the gender and age, family, social, and class-property hierarchy of the dress wearer. On one hand the dress set is individualized and reflects the wearer's aesthetic taste and preference, in accordance with the person's given life stage and psychological state, while on the other hand it is related to folk mentality, perception of beauty in the context of aesthetic criteria, and also to features and uniqueness of interethnic and ethnographic groups. The folk dress is one of the most important elements of the traditional material culture, which may be the best ethnic indicator. The Armenian traditional costume with all its groups, like the Armenian multidialectal language, has undergone a long way of development, being closely linked to Armenian history, culture, unique national temperament, aesthetic preferences and perceptions. Incomparable and rich color and design forms, typical of the Armenian costume, create a complete harmony. Evolving through centuries, this cultural element be-

[2] Պողոսյան 2002, 13-18:
[3] Պողոսյան 2008, 477-482:
[4] Պողոսյան 2002, 18:

came a uniquely shaped form in the 18-19th centuries and stood out by diverse forms and high level of artistic performance. The traditional costume, being multifarious (pattern solutions, color combinations, ornamentation and style features) has structural generalities. The clothing had different functions: applied, aesthetic, social, gender and age, festive and ritual, and territorial, as well as protecting the costume wearer against an evil eye, and also fostering fertility and prosperity. The role of clothing and its social and estimable functions are manifested in the following folk proverbs: "Give dress, take grace; give bread, take color"; "Clothing brings a man step, a woman wit"; "Clothing makes man manlike"; "Clothing is for elegance"; "Man's wealth is evaluated by his clothes"; "I have a reliable son, I shall bring a dressed daughter-in-law"; "Who works hard, gets woolen underwear, who works not hard, gets silk, linen, red, multicolored, blue underwear"; "The dress says, – keep me in a bundle and I shall keep you among people"[5]. The Armenian costume system comprised the folk dresses of Bardzr Hayk, Vaspurakan, Pokr Hayk, Cilicia, Ayrarat (Yerevan-Tiflis-Parskahayk / Persian Armenia/), Syunik-Artsakh and Lori-Gugark, each of which had their versions[6].

Ayrarat costume group

Inhabitants of the Ararat valley and Yerevan city wore a similar dress set: a monochrome, sometimes flowered silk dress. The clothing of women from Yerevan was a variety of the Ayrarat costume group, with everyday and festive sets. This costume group also contains the dress set of Armenians living in Tiflis[7]. The dress was gorgeous, often with ornamented and wavy pleats. The festive dress set was often monochrome. Over the dress a silk belt was wrapped, to the ends of which long embroidered ribbons were attached. Festive garments were worn with silver or gold belts. In winter an unbuttoned overcoat hemmed with fur was worn over the dress. The overcoat was sewn of dark blue, red or green velvet, the borders and sleeves of which were entirely embroidered with gold thread ribbons and hemmed with fox fur. Wrist covering sleeves were typical of this set. The costume of women from Yerevan was featured by long sleeves of the dress, embroidered belt-apron, tied over the dress, and floral patterned bodice. The headdress consisted of finely embroidered, ethereal tulle veil, velvet forehead band (in the center of which a pin was fastened) and a golden strand forehead piece, and in villages also of handkerchiefs, covering the nose and mouth. The costume of women from Yerevan, though not distinguished with lavish ornaments, still was highly decorative in terms of fabrics and tailoring. The costume of women from

[5] Ղանալանյան 1960, 188:

[6] Poghosyan 2001, 178-194.

[7] Պողոսյան 1986, 22-32, Պողոսյան 2006, 172-177, Պողոսյան 2018, 123-142, Погосян 2004, 229-230:

Tiflis was similar to that of Yerevan. This costume was taken to Tiflis by Armenians, which in its turn, had its impact on the local dress set. In due course, the costume acquired specific qualities typical of Tiflis urban culture.

Syunik Artsakh costume group

This costume group was passed from one generation to another for centuries and reached the end of 20th century. Women wore red shirts, green or blue triple skirted outerwear and over it a velvet red fell with fur edges. The sleeves of the garment were decorated with bells, and the belt was made of leather with silver buttons. Ornaments were made of silver, which made the garment more luxurious. The headdress was magnificent: silver spherical strands hang from the temples. In Syunik-Artsakh, the belt was made of silk or cotton fabric, which was double wrapped around the waist and knotted in the front by placing the ends underneath[8]. The Artsakh costume was of peculiar style and was almost devoid of embroidery. Red satin underwear (halav) was worn, a green, blue or red dress and a fell over it. Rich women's fells were with 2cm wide gold thread embroidery with a narrow band. Fox fur and a narrow band of green fabric were sewn on the edges of the red velvet outerwear-fur coat. Sleeves were elbow length. Fur and a green band were sewn on the sleeve ends. In Artsakh, women's ornaments were made of silver, which made the dress more opulent. The headdress consisted of many elements and was luxurious with silver forehead decoration, with strands of silver spherical ornaments on the temples (hollow ornaments). The latter was used among elderly women of Artsakh until the end of 20th century. In Syunik-Artsakh, women wore green, red surface - embroidered slippers, and men, black shoes. The women's dress set of Artsakh is noticeable for its perfect pattern and color harmony. Inhabitants of Syunik and Artsakh wore the same costumes. It was also typical of the Basin of Sevan and the Armenian population of Gandzak and Shamkhor. The combination of red-green, red-blue or violet shades is often viewed in clothing. This choice of colors was not accidental. Firstly, the harmonious combination of red, green and blue are typical of Armenian traditional ornamentation and color art. This is certified by superb pieces of the Armenian artistic textiles (rug weaving, carpet weaving, embroidery and national costume) kept in museums. Besides, it is known that according to the folk color mentality, each color had a definite meaning and ritual significance. Magic power of purification and evil prevention was attributed to the red color; the combination of green and red was viewed as a symbol of life, vitality, and fertility. As is known, among Armenians, while marrying the son, parents often said: "We must tie your green and red". These colors were often praised in folk songs. Over red linen or satin

[8] Պողոսյան 1992, 32-33, Պողոսյան 2006, 129-132, Պողոսյան 2019ա, 29, Պողոսյան 2019բ, 216-225:

underwear and reddish drawers women wore a divided dress: irekpeshkani (three–skirted), khelegh (arkhalugh: short outerwear), and ghaba (the latter is the long outerwear, often encountered as kapa in medieval Armenian poetry). The dress, mentioned above, is the most typical clothing. Due to the cuts on sides, the dress was really three – skirted. The gown sleeves were ornamented with silver pendants. In Shushi outerwear with double sleeves was worn, the sleeve pattern of which resembled the women's dress. Over the outerwear young women mainly wore silver belts, and elderly women, mainly belts made of cloth. Winter clothing was completed by dark red velvet or woolen fur-fell outerwear, which repeated the gown's pattern, with the only difference of having shorter skirts and sleeves. It was trimmed with green silk and fur edging. Women's headdress was complex and elaborate, which differed from that of young girls' and reflected the family and social changes that took place in the woman's life. The headdress had a stiff base and resembled the versions of Ararat and Tavush. A forehead decoration of coin strands was in use, which unlike the forehead coin strand of Bardzr Hayk, was single-rowed. The kerchief and pearly temple pendants, elements of the women's headdress of Bardzr Hayk, here were replaced by silver spherical pendant strands which were fastened to a two-parted triangular ear strap. Instead of splendidly embroidered fabrics of the western provinces of Armenia (as was the triangular, red headscarf with square embroidery on the nape section, the symbol of women), in the Syunik-Artsakh type headdress double-threaded granulated silver cross-shaped hooked ornaments were fastened to the nape section of the headscarf, which, being manifestations of ancient totemic beliefs, protected the wearer from evil forces with the claws of a worshipped bird. Meghri, being included in Syunik-Artsakh historical-ethnographic province, has substantial cultural parallels with the culture of Goghtan province.

The wedding costume

The ritual outfit of the traditional dress of Meghri had the following symbolic role and semantics: in the case of infant betrothal, the silver cross, hung on the newborn girl's chest, played the role of an engagement gift[9]. The boy, engaged on Palm Sunday, stood in front of the girl in church with two candles in his hands and his mother threw a veil on the girl's head as announcement of the engagement. It is noteworthy that in Meghri, people coming to one's home on joyful occasions say "Good morning" even in the evenings, with the aim of warding off harmful influence and unwanted attention of evil spirits. Engagement gifts included a gold ring, necklace, coin strand, etc. The gift, given at the engagement

[9] Պողոսյան 2003, 12-16:

ceremony by the bridegroom and his parents to the bride was called yeresajur (surface water). The engagement gift, a silver or gold coin, was placed in an apple or a pomegranate. The apple and pomegranate were symbols of fecundity and fertility of the future married couple. At the end of the engagement ceremony the girl was brought in with a veil over her head and she kissed the hands of elderly people who gave her coins as a gift. On holidays, gifts were sent to the girl from the boy's home: trays with fruits and sweets with a burning candle in the middle. In the first month of the year (Navasard) a copper tray (lus) with a burning candle in the middle; a jug of wine or a bottle of rakhi (vodka); fruits: apples or pomegranates, and necessarily a veil as a bride symbol, was sent to the girl. Gifts, as a manifestation of close relationship and appeasement, were also sent during the Carnival (Barekendan), on the first day of Lent, and in the middle of the Lent (Mijink). On Easter, dyed eggs, buttered bread, sometimes a lamb with a dyed forehead and a handkerchief or a headscarf tied around its neck were sent to the future bride. At the Feast of Transfiguration of Christ (Vardavar) the boy and the girl went to a sanctuary. In spring the boy's relatives, girls and daughters-in-law, took the future bride to the orchards and fields for a walk. In their turn, the girl's side sent their return gifts: a beaded cork, socks, and handkerchiefs. The last two items were very important among the mutual gifts of the future relatives. Among gifts that were accepted at rituals and feasts, important were elements of clothing as general exchange in the form of material benefits. The exchange of gifts was commerce between the marrying sides. Gifts of clothing and food together with joint feasts were a form of marital interchange. Before the wedding it was accepted to clean and tidy the house. It was customary for the bride to enter the house in the most sacred place ("microcosm") and stand under the starry sky, expecting a harmonious, happy marriage and prosperous future. After cleaning and tidying the dwelling, heavenly bodies were drawn with flour: stars, the sun, the moon on the ceiling and columns. This ritual illustration was made by the Godmother, who also got a gift. Among the gifts intended for men, the following costume parts were essential: socks and gaiters, as well as handkerchiefs. The Godfather was presented with a bottle of rakhi (vodka), a hen, and also outerwear or footwear. The bridegroom and his symbolic equivalent steer were decorated with a ribbon, the latter also with apple strands. On the neck of the bride and groom (king and queen), sometimes also on the hands, entwined red, green, and white woolen threads (narot) were wrapped. Such a red thread was also tied around the baby cot slat, after notching a cross or a letter with a knife. This thread might be identified with the narot, which was also called "green-red". This meant to marry and the phrase "to make words green" meant to surely do what had been said. On the chest and shoulders of the bridegroom, the Godmother fastened a shoulder

strap, made of white, red and green handkerchiefs. The bride and the bridegroom wore red, green, and white threaded embroidered crown and hair clip-forehead band, from which multicolored fringes hang. Hence, they were called king and queen. The boy's outfit was also of ritual significance. Firstly, the wedding outfit was blessed and sent to the girl's home. Also sweets and sugar, placed on the tray; as well as the bride-groom's hat and the Godfather's sword were blessed. The blessing was followed by the shaving ceremony. The young man's head was shaved, imbruing his finger in the wine glass held by the Godfather in his right hand and a burning candle in his left hand. It was a transition dedication ritual, with which the boy stepped into a new, marital age group. The person who brought the wedding outfit was also presented with a gift – a handkerchief or a pair of socks. The girl's side presented a belt or a hat. The Godfather handed the wedding outfit to the woman who was to dress the bride, presenting her with a coin. The bride was dressed in an otakh (room). The belt was tied by the Godfather or the father-in-law, rotating it from right to left three times. The belt was taken from under the feet and tied around the waist, lightly tapping, with the aim of ensuring childbirth. The Godmother tied the crown, an ornamented, multicolored fringed band, over the headscarf. The narot and shoulder strap were taken off before the marriage bed. Changes in the headdress of the bride symbolized the advances that had taken place in her social-family status. The headdress features the magic and protective functions of clothing. Nakhijevan, being in the center of transit trade routes from ancient times, was one of the public and cultural centers of Armenians.

Vaspurakan costume group

Vaspurakan costume group was typical of the population of the Basin of Lake Van and some neighboring provinces: Moks, Shatakh, and Sassun. The red and blue colors were predominant in this costume. Women wore several dresses, each 5-6cm longer than the other. The chest was half open and was covered with an embroidered tucker. The multicolored embroidered apron was of two types: ordinary and overall. Men's outerwear and pants were sewn of specially woven striped woolen fabric. On the ends of the outerwear two embroidered straps were attached which, while working, were tied on the nape. The half-sleeve waist length jacket was made of goat hair. This garment was typical of Armenians from Sassun and Shatakh. Men wore cylindrical caps, and women, fez-shaped hats with many decorations. The necks, chests and arms of women were adorned with several rows of silver necklaces, chest decorations, and bracelets. In many places over their numerous plaits, women wore heavy hair threads that reached the waist and entirely covered the back. In his memoirs, V. Surenyants has especially mentioned

the costume of migrants from Van, noting: "In women's dresses the extraordinary tactfulness of color choice astonished me. In the whole dress set I found no single evidence of tastelessness, even in the risky combination of red and blue, which are incongruous. Moderate shades were chosen in such a way that instead of interfering with each other, they mutually benefited from being next to each other. The combination of colors on separate parts of the clothing of a village woman named Maro amazed me. For her violet outerwear she had chosen a dress of a very tasteful blue color with a yellowish-brown wide belt. When I showed that sketch to my painter friends, they were stunned and could not take their glances off it, thinking that I had embellished the sketch. Even the belt patches of the poorest women were chosen with great taste, which seemed to be a result of their innate elegant coquetry, not from need"[10]. Their costumes were sewn of homemade linen, trimmed with embroidery. Presenting an immigrant Armenian woman, he mentioned the color combination of her red dress, shining from under the jacket and bright yellow headscarf, pointing out that the instinct of color was dictated by the nature, which "lavishly displays magic moods during the whole day". This is an exceptional example of the unique harmony between man, the bearer of culture and nature. The underwear of women from Vaspurakan reached the ankles. The hem was fringed with 15cm - long embroidery. Leg wrappers, sewn of red shila fabric, had wide ends. The woman's costume was sewn of striped woolen fabric, and also of a manusa fabric with almond-shaped patterns. A woolen belt, with colored thread tassels on the ends, was tied over the patterned apron, and fastened to the outerwear. Women wore more than one, and on holidays up to five, outer garments of different colors with side cuts, which were 6 cm longer than the other. The chest cut was covered with an embroidered tucker-heart cloth. Over the outerwear (zbun) they wore a waist length kotjik or kolotik (an outer garment or jacket) with a wide cut on the chest and long sleeves, made of manusa (colored chintz). Instead of kotjik, newlywed brides and rich women wore dalima (an overcoat, sewn of red woolen thick fabric), which was long like a gown with embroidered chest. A woolen belt (waist wrap) was wrapped around the edge of the kotjik, over which was an embroidered apron. The belt of women from Vaspurakan was sewn of a woolen fabric or woven of woolen threads and wrapped around the waist three times. Beside the woolen narrow belt, wrapped over the apron, silver belts in niello were in use. The apron, a symbol of womanhood and fertility, was sewn of a woolen homemade fabric, trimmed with embroidered floral patterns, highly stylized images of birds, and animals. Among colors, red was dominant. The second type of apron covered the upper body in the front, also playing the role of a tucker. It was sewn of floral chintz with a lining. It was a little

[10] Ղազարյան 1998, 21-25:

shorter than the hem of the zbun, so that the dress was seen[11]. Parts of the headdress were the fez,with a tassel, forehead strand, temple pendant-face kerchiefs, hair ribbon, hair clip and different headscarves: stamped, lachak (of white cloth), red triangular, embroidered, etc. The women's costume was embellished with jewelry, and made with taste and mastery. Jewelry, as an inseparable part of the outfit of women from Vaspurakan, was made of precious and semi-precious stones: turquoise, coral, ruby, and emerald as well as red and blue beads. Women wore colored socks and red high heel shoes (sol)[12]. Embroidered pants, sewn of a homemade fabric with geometrical patterns and a warm short outer garment, the aba (outerwear sewn of thick woven woolen cloth), which were characteristic elements of the men's costume from Vaspurakan. Men wore a long sleeve white undershirt, sewn of linen, which was extended to the knees, and very wide pants, over which trousers were not worn, while working on hot summer days. The collar of the men's linen undershirt was embroidered with geometrical patterns; the sleeves were wide with embroidered edges, on which blue beads were drawn to ward off evil forces. The undershirt edging was trimmed with red ribbon, as if enclosing the costume wearer in a protective circle. In Turuberan, geometrical patterns were embroidered with black and red woolen threads around the chest cut and on sleeve ends of the undershirt. The underpants had khonjankap (a strap of woolen colored threads) with tassels. The pants also had this strap. The right and left sides of the pants were embroidered with colored beads and woolen threads. A similar example of such pants may be seen in the Aghtamar Monastery relief of King Gagik Artsruni (10th century). The pants were sewn of a woolen fabric with the similar wide leg pattern sample of the underpants. The men's outer garment was the antari (a long sleeve, loose-fringed garment with a heart-shaped cut on the neck), sewn of manusa fabric, and woven of cotton and silk threads. Ishlik (a long sleeve, waist length undershirt), sewn of the same material, was worn under the antari. Over the ishlik, they wore yelek-yelak (a vest, sewn of manusa). In earlier times, instead of the antari, they wore a short outerwear, kezakhik, which was woven of goat hair. The latter was with elbow length sleeves and a pair of tassels under the armpits. Over the pants and undershirt a belt was wrapped, which was a 2-3m long and colored or white woolen waist cloth. On the head, men wore an embroidered cap (arakhchi), which was woven of woolen threads or sewn of a fabric and decorated. The cap was cylindrical and 5-10cm high. Men also wore semi-conical hats, made of white felt, around which a pushi (a shiny silk headscarf) or stamped headscarf was wrapped. Men's footwear consisted of monochrome or ornamented socks (butj); gaiters (sakh) and trekh/ cha-

[11] Ավագյան 1983, 26-32, 58-59:
[12] Պողոսյան 2013, 243-255:

rukh (leather footwear without heels). Men wore ornamented mittens – socks, woven of colored threads. The charukh was sewn by villagers themselves, whereas the sol (pointed high heel footwear) was sewn in town by shoemakers.

Bardzr Hayk Costume Group

The center of Bardzr Hayk (Upper Armenia) was the city of Karin. Its territory coincided with the territory of the region of Erzerum at the end of the 19th and beginning of the 20th centuries. In 1829-1831, due to the great emigration of the Armenians of Karin, the costume of Karin was widely spread in the regions of Shirak, Akhalkalak and Akhaltskha as well. Variations of the costume of Bardzr Hayk were also popular among the inhabitants of Basen, Vanand and Hamshen. Four types of garments, used in the woman's set of costume, had the same shape[13]. The costume was made of broadcloth, velvet, silk and woolen striped fabrics. Dark red, purple, brown and blue colors were preferable and were emphasized with golden and silver cords and embroideries round the bottom edge of the long dress, sleeves, low neck (garment chest aperture) and waist. Stylized patterns of the tree-of-life were embroidered on garments. Long dresses, the edges of the sleeves, low necks and the edge of the hems were decorated with the embroideries of stylized plant ornaments, performed with golden threads and cords. The main patterns were plant ornaments and bird-patterns, as well as geometrical ornaments. Embroideries were performed in convex flat-stitch with twisted golden thick threads. The woman's ceremonial costume was made of one piece of velvet cloth and had a low neck adorned with gorgeously embroidered krtskal (fine cloth covering the low-cut opening at the chest of the garment). The apron, made of red broadcloth, was adorned with almond-shaped ornaments embroidered in golden threads. Narrow and long silk belts, typical to this costume, were often sewn to the aprons. Parts of head adornments were: Tasseled hat, temple-hangings of pearl, forehead adornment and chikila (lace veil covering the head and rear). The fez hat was also widely used. The luxurious look and gorgeous and stylish embroideries were characteristic to the costume of the region of Bardzr Hayk. An important part of the woman's costume was the apron, which was embroidered in the same way as the costume. An ornamented woven belt was attached to the apron. Dedicatory inscriptions, such as "Wear it in good health" or "To the enjoyment of the wearer" were usually embroidered on the belt, which was the oldest component of the costume and had the function of a charm and protection[14]. It is obvious that the wish of the people and community was to make the wearer invulnerable by making the belt powerful with the help of the good wish, performed in

[13] Պողոսյան 1991, 132-133, Պողոսյան 1993, 122-133, Պողոսյան 1994, 26, Պողոսյան 2019գ, 328-333:
[14] Poghosyan 2007, 252-253.

the form of an inscription. Inscriptions were done on different parts of the costume, especially on a number of components of the woman's costume such as the krtskal, apron, belt etc[15]. This tradition was preserved in the set of the national costume of Bardzr Hayk. The krtskal, which covered the large oval-shaped opening at the chest of the garment, was made of silk or velvet material and had a crescent or triangle-shaped narrow color. It was tied to the nape and waist with the help of the bands attached in the corners. The krtskal, which was tied to the waist together with the apron, was used in two ways: over the garment, or from under it. It was embroidered with golden threads, in convex flat-stitch, and was adorned like the dress and the apron. The use of the krtskal had both practical usages as well as was related with the people's perception of elegance and beauty standards. The breast should not be emphasized and should be covered as much as possible, and the rich embroidery on it, together with the ornament patterns, had protective meaning for the wearer, especially for the bride, to protect from "evil". The cap (gdak), made of red velvet material, was part of the head decoration. Four-five strings of temple-hangings of wavy pearls with gold coins at the ends had 25cm length and 4cm width. An embroidered forehead adornment was attached to the cap and a needlelace Tantana-rose, which was an inseparable and important part of the head decoration. The costume of Khotordjur, among the types of the costume of Bardzr Hayk, was particularly very special. Women wore long and narrow sleeved velvet outerwear bordered with golden-thread embroidery and big silver buttons. The lower two sides of the outerwear were embroidered. The women of Khotordjur wore either a chest-apron or short jacket (salta). The chest-apron was adorned with the pictures of two embracing bird-patterns. The krtskal was decorated with the embroidery of the tree-of-life with the hope of providing fertility. The salta (short jacket) was decorated with golden and silver threads. The apron was red and was tied with a belt. The edges of the apron were bordered with golden-thread embroidery and twisted cords. Head adornments, temple-hangings, forehead adornments and pendants were made of pearls and golden coins. An important part of the costume was the two-piece footwear: yellow-red or yellow-yellow mas-paputch (shoes and overshoes) and colored socks (butch). In 1890 Madame Shantre, a daughter of the motherland of fashion of the new costume, France, seeing the garments of Armenian women, said that nothing was more admirable for her than the costume of the woman of Akhaltskha. The beauty of the fabrics, used for the garments, the simplicity of dresses, and the richness of jewelry of great taste, create a favorable and harmonic unity giving more radiance to the appearance of those distinguished women. And that was

[15] Poghosyan 2007, 253.

true, the costume of the Armenian woman of Karin, from head adornments to footwear, was created of harmonious and elegant elements with unique ways of perceiving beauty. The man's costume of Bardzr Hayk, at the beginning of the 19th century, still preserved its traditional style. The costume consisted of the following parts: long braies and undershirt, and outerwear: yelak (short jacket), belt, trousers, hat and footwear. Men wore a white cotton undershirt and long braies, woolen trousers, yelak (short jacket) and broadcloth outerwear. The legs of the long braies were long and were tied with the help of laces, which were put into the colored ornamented socks. The yelak (short jacket) was worn over the undershirt, the front parts of which were made of broadcloth and the back part of cotton fabric. Sometimes you could come across silk examples as well, which were without sleeves and pockets. The yelak (short jacket) was buttoned with the help of buttons and button loops made of golden or silver wires. The trousers and arkhalugh (man's and woman's short outerwear reaching to the knees) were usually made of fine woolen blue fabric. Men wore simple leather belts. The chukha (long coat) was worn over the yelak and was tied at the waist, while the lower part was let free to the knees. The chukha (long coat) had long widening sleeves. On their heads, men wore hats made of sheep fur and very seldom the fez hat. When on their feet, they wore footwear called trekh (leather pointed footwear with woolen or leather ties). After immigrating to the Caucasus they adopted the style of the costume typical to the man of Eastern Armenia. The set of costumes of Bardzr Hayk are luxurious and beautiful, rich with golden-thread embroidery. Warm clothing and short outerwear, apron and belt, head adornment with magnificent jewelry made of gold, silver and pearls, together with their archaic ideology, all together form a unique wholeness. It is worth mentioning the highly artistic decoration of the ceremonial silk and velvet outerwear bordered with fine needlework of plant-ornament patterns. The sleeves of the ceremonial and wedding costumes ended with handkerchief-like silk tags that gave a special festive look and brilliance to the garment. The low neck was covered with silk krtskal adorned in convex flat stitch embroidery performed with golden-threads. The velvet or broadcloth apron was an inseparable part of the woman's costume in the bottom two corners of which almond-shaped ornaments and other stylized patterns of tree-of-life were embroidered. They wore silk woven belts with dedicating goodwish inscriptions. Silver, gilded and golden belts were widely used as well. Parts of the head decorations, such as: the tassel cap, pearl hangings coming down the temples, and the 'forehead-rose', adorned with fine needlelace flowers, gorgeous silk veil, forehead golden-strand and forehead golden adornment, complete the set of the costume. This type of costume certifies the high taste and delicate aesthetic perceptions of Armenian women. The woman's costume was exquisite and magni-

ficent. The outerwear was made of broadcloth or velvet, and the edges of the low-neck, sleeves and flap were adorned with fine embroideries performed in golden and silver threads. The apron, typical to Bardzr Hayk with its straight and wavy edges, was very interesting and delicate. It was sewn of red, blue or brown velvet or broadcloth. It had a belt to tie the apron round the waist. The krtskal had an important role in a woman's costume, with the help of which the opening in the garment at the chest was covered. They wore silver belts, made by local jewelers, adorned with precious stones. From under djuppa (long Asian coat) they wore the antari (long dress), which was also common in many other regions of Western Armenia. In difference to other regions, in Bardzr Hayk antari was made not only of manus fabric but also of silk. In winter they wore faradja (wide and long coat) made of black or brown woolen fabric of factory production. When going out or to church, they wore a wrapper over their outerwear made of white, woolen fine fabric. Parts of the woman's head decoration were: the tassel fez hat, hangings coming down along the cheeks to the chest, a forehead adornment with two strands of coins, ktuts (adornment made of pearls and gold), and a forehead adornment, needlelace rose and the veil bordered with fine needlelace. When on their feet

Turuberan and Aghdznik Costume Group

The costumes of Armenians living in these regions were very original. Costumes in Sassoon were homemade[16]. The undershirt and otatc-vartik (pantaloons) were elements of woman's underwear of Sassoon and were made of fine and delicate fabric. The outerwear, known by the name of takhin, was made of silk and was embroidered with colored threads. The belt (Khas or khask) was followed by an apron (chadrik) reaching to the shins. Kofi (headwear) was worn on the head and consisted of the fez (cap) and pushi (silk kerchief), wrapped over it, and a band-shaped ribbon that came down the right and left sides of the Kofi (round, cap-shaped woman's head-wear, around which colored kerchiefs were wrapped) to the ear and to the middle of cheek and ended at the neck. The bandik (ribbon) was adorned with coins, silver and golden jewelry. The apron in Sassoon was made of blue woolen fabric embroidered with colored woolen threads and geometrical ornament-patterns. The engaged girls or married women in Sassoon wore woven belts made of colored silk threads. The short outerwear of men living in Sassoon was the aba, which was woven with goat hair. It was short sleeved, and both front sides were bordered with golden threads. A woolen belt with multiple folds was worn round the waist. Trousers were of two kinds: everyday trousers

[16] Ավագյան 1983, 33-34, 60-61:

were made of black wool, and the ceremonial ones were made of striped fabric. Footwear was colored socks and soler (high-heeled pointed footwear). Headwear was the qoloz (round hat made of thick-felt or wool) with pushi (silk kerchief) tied round it. On holidays they wore a colored embroidered hat. The gdak (cylindrical cap) in Aghdznik was made of woolen or cotton fabric with large knits and was adorned with the embroidery of geometrical patterns performed with woolen or silk with red, green, yellow and black threads. The men and women of Sassoon wore the same costume both in summer and winter. The costumes of Shatakh and Moks, to some extent, resemble the costumes of Sassoon. People of Moush made their clothes of shila (red linen) or ghutni (cotton fabric) manufactured in Baghesh (Bitlis). The men of Moush wore an undershirt, long braies, short or long antari (long outerwear), short aba (woven with goat hair), linen belt, woolen trousers, patterned socks (butch) and trekh (leather pointed footwear with woolen or leather ties). Young people wore on their heads an arakhtchi (thin, light hat) and old men wore qoloz (round hat made of thick felt or wool) with a silk pushi (silk kerchief) wrapped round it. Many elements typical to the costumes of Bardzr Hayk and Vaspurakan were displayed in the costume of Cilicia.

Cilicia Costume Group

Armenian women of Cilicia wore woman's head decorations of Vaspurakan without the cylindrical element. Some parts of woman's head decorations of Marash, the golden strand and headscarf, remind us the version of the head decoration of Bardzr Hayk, while the outerwear reminds of the outerwear of the Vaspurakan zebun (woman's outerwear made of manus)[17]. They used the same type of apron with the difference that the latter was not decorated. Elements typical to the costume of Bardzr Hayk dominated the man's costume there, but meanwhile the influence of the Vaspurakan costume was evident too: the short sleeved ceremonial jacket, embroidered trousers etc. The costume of Cilicia that has some similarities with the costume of Caesarea is of special interest. Men in Cilicia wore a shirt with short sleeves, decorated with folds below the shoulders and cut below the belt, and trousers made of dark fabric and short sleeved salta. Armenian women of Cilicia also wore the salta (short jacket). The two parts of it were fastened at the chest with two silver buckles. The chest and the sleeves of the salta were beautifully embroidered. In Cilicia, the apron was rectangular and mainly without any decorations. The belt was made of three meters long linen with tasseled ribbon-ornament. Trousers were made of blue broadcloth and had a belt (khonjan) and pockets.

[17] Ավագյան 1983, 41-42, 64-65:



1. Ayrarat costume group Yerevan, early 20th century*

2. Syunik Artsakh costume group
Stepanakert, 1950-60ss

3. Syunik Artsakh costume group Goris, 1960s

4. Wedding costume of Meghri

5. Vaspurakan costume group

* Հոդվածում ներկայացված բոլոր լուսանկարները (նկ. 1-10) պահպանվում են Հայոց ազգագրության թանգարանի հավաքածուներում:

6. Vaspurakan costume group

7. Turuberan and Aghdznik Costume Group

8. Bardzr Hayk Costume Group

9. Cilicia Costume Group

10. Hamshen and Trapizon Costume Group

The costume of the men of Western Armenia was specific with its short outerwear and embroidered decorations. In a man's costume, the habit of protecting the wearer with the help of the color of the clothes, ornaments, blue beads, tassels and fringes, and ties and loops was more viable. Until the beginning of the 20th century, embroidered clothing was present in the traditional costume of Armenia Minor. The clothes were adorned with geometrical ornaments embroidered with dense running-stitch and slanting flat-stitch. The fabric was ornamented from the reverse side so that they can have the needed pattern on the upright side. Women's garments were made of dark, expensive fabric and were long; the flaps and borders were adorned with golden-thread lace. A special part of the costume was the jacket reaching to the waist, adorned with embroidery of luxurious ornament-patterns, with the sleeves up to the elbows. From under the jacket, women wore a gorgeous shirt, the long sleeves of which were edged with wide embroidery. The image of the tree-of-life was embroidered on the dress and apron. On the dress of a young woman, on both sides of the branched tree-of-life, birds were embroidered. On the dress of a middle aged woman, the pattern of the tree-of-life was simpler and with neat lines. The dress of an old woman was free of ornaments and embroidery, related to the changes in her reproductive functions. In Armenia Minor, women doubly folded the belt, made of woolen or cotton woven fabric, in triangular shape, twisted it and wrapped round their waist, letting the angle edge hang at the back. The other one was a narrow belt adorned with beads, shells, mother-of-pearl and a big silver buckle with several bow-shaped strings hanging from under it. A man's short piece of outerwear was made of fine woolen fabric. It was long sleeved and was buttoned with woven button-loops. The variants made of broadcloth and velvet fabrics were adorned with golden-thread embroidery. One of the examples was decorated with lengthwise curved-lines crossing one another, performed in small running-stitches. Over the shirt they wore a vest, both flaps of which were decorated with plant ornaments. The vest was buttoned with sphere-shaped buttons and loops both made of silk threads. The hems of the trousers were decorated with thick, twisted black silk threads. The warm, short waistcoat was made of long-piled woolen fabric, the sleeves of which reached to the elbows, as it was in the Urartian costume. A tassel hung from each sleeve. On the chest, lengthwise bands were attached, adorned with green and golden woven cords.

Hamshen and Trapizon Costume Group

Costume of Hamshen Linen or satin undershirts and panties were worn by women in Hamshen. Among their outfit, wide panties made of red floral chintz were distinguished, and according to the rule, they should be seen from under

the robe. Women wore short outerwear (ishlik), which had long sleeves and reached to the waist. Under it they wore a yelak (short jacket)[18].

The woman's costume of Trapizon was very original. It consisted of a long silk or velvet outerwear cracked on the sides, a belt, made of fringed checkered silk fabric and embracing the whole waist, and a short jacket. Men wrapped the fez hat with a kerchief. The thin veil was folded and wrapped up round the cap without wholly covering it[19]. The Armenians of Hamshen, who had moved to the shores of the Black Sea earlier, borrowed the local headwear, using a fur hat instead of a fez hat and headstall (headpeice). They made their underwear of homemade linen. Trousers were made of woolen fabric, which, unlike the wide legs of men's trousers of Erzerum and Vaspurakan, had narrow and tight legs. A multi-folded leather belt was tied over the trousers, in the folds of which men kept tobacco, flint and other usable items. A revolver, knife or a dagger in its ornamented case was hung from the belt. A shirt was worn over the undershirt and then a woolen yelak. The kapa was an overcoat made of chukha fabric, the flaps of which came one over the other and 10cm down the waist. As footwear, instead of trekh, they wore chust (shoes covering the foot) or boots[20].

Conclusion

The national costume with its local groups is multifunctional and, being an important cultural element, plays the role of an indicator of social groups, gender and age, and also the spiritual demands of an ethnic community. The national costume is an original sign system that bears definite information about its wearer, disclosed by type, color, pattern, and ornamentation of the set. The national costume, in particular the men's costume set, being comparatively an open system, is rather flexible towards changes in the historical and cultural, social-economic processes of a given community. In the national costume all elements are of symbolic significance. However, the pattern, contour, and measurements are less symbolized, whereas the decoration and color system are directly connected with the spiritual sphere, obviously demonstrating the costume wearer's role and status. In the ritual outfit, symbolism of the clothing is especially evident. The clothing acquired ritual meaning by the required application of some elements; for men's wear such attributes were the belt, chukha (long warm outerwear)[21], hat, shoulder strap and narot (colored woolen threads entwined into a single thick

[18] Кузнецов 1995, 207-208.
[19] Ավագյան 1983, 42-43:
[20] Кузнецов 1995, 207-217.
[21] Погосян 2003, 227-231, Ստեփանյան 2007:

thread), and for women's wear, the belt, apron, crown, some elements of the headdress, and adornments.

In the late 19th and early 20th centuries, especially after the Armenian Genocide, Armenian national costume began to lose its features. However, in some places, for example, in Syunik-Artsakh, some elements of the local costume have been preserved in purity.

The role of the traditional costume has completely changed today. It has gone out of everyday life, lost its former practical significance and has become an ethnosymbolic feature of national culture, playing the role of an ethnic indicator[22].

Literature

Աբեղյան Մ. 1940, Հայկական ժողովրդական երգեր, Յերևան, Արմֆան հրատ., 340 էջ:
Ավագյան Ն. 1983, Հայկական ժողովրդական տարազը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 140 էջ:
Հացունի Վ. 1923, Պատմութիւն հին հայ տարազին, Վենետիկ - Ս. Ղազար, 480 էջ:
Ղազարյան Մ. 1998, Վարդգես Սուրենյանցը և Հայոց ցեղասպանությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 27 էջ:
Ղանալանյան Ա. 1960, Առածանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 188 էջ:
Չոպանյան Ա. 1940, Հայերեններու բուրաստան, Փարիզ, հրատ. նշված չէ, 552 էջ:
Պատրիկ Ա. 1967, Հայկական տարազ, Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 144 էջ:
Պողոսյան Ս. 1987, Այրարատի տարազախումբը, Կուլտուր-լուսավորական աշխատանք հանդես, N 7, էջ 22-32:
Պողոսյան Ս. 1991, Հարսանեկան հագուստը Շիրակի և Ջավախքի պատմաազգագրական շրջաններում, Բանբեր Երևանի համալսարանի, N 3, էջ 132-133:
Պողոսյան Ս. 1992, Արցախի ավանդութային տարազը (19-րդ դ. վերջ - 20-րդ դ.) Արցախ, Հայ ժողովրդական մշակույթի հետազոտման հարցեր, Երևան, էջ 32-33:
Պողոսյան Ս. 1993, Շիրակի և Ջավախքի տղամարդու ավանդական տարազը, Պատմա-բանասիրական հանդես, N 1, 2, էջ 122-133:
Պողոսյան Ս. 1994, Շիրակ-Ջավախքի հայոց ավանդութային տարազը / 19-րդ դ. վերջ-20-րդ դ. սկիզբ/, Պատմ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, 26 էջ:
Պողոսյան Ս. 2002, Հայկական տարազի համալիրները /պատմաազգագրական ակնարկ/ Հ. Փափազյան, Հայկական տարազ, Երևան, «Տիգրան Մեծ», էջ 13-28:
Պողոսյան Ս. 2003, Մեղրիի ավանդական մշակույթը, ազգագրական շտրիխներ, Երևան, «Տիգրան Մեծ», էջ 12-16:
Պողոսյան Ս. 2006, Սյունիք-Արցախի տարազը հայոց ավանդական տարազախմբի համակարգում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անցյալը, ներկան և ապագան, Միջազգային գիտաժողովի զեկ. հիմնադրույթներ, Երևան, էջ 129-132:
Պողոսյան Ս. 2006, Երևանի տարազի հարսանեկան համալիրը, Երևան, Գիտական հոդվածների ժողովածու, Երևանի պատմության թանգարան, էջ 172-177:
Պողոսյան Ս. 2008, Հայկական տարազ, Նայիրի, Տարեգիրք Բ, Թեհրան, «Նայիրի», էջ 477-482:

[22] Poghosyan 2001, 194.

Պողոսյան Ս. 2013, Վասպուրականի զարդահամալիրը, Հայաստանի մայրաքաղաքները. Վան, Մարության Հ. (խմբ.), Երևան, «Գիտություն», 352 էջ:

Պողոսյան Ս.Հ. 2018, Այրարատի տարազախումբը հայոց տարազի համատեքստում, Երևան-5 գիտական հոդվածների ժողովածու, Երևան, Երևանի պատմության թանգարան, էջ 123-142:

Պողոսյան Ս. 2019ա, Սյունիքի տարազի զարդահամալիրը, Սյունիքի պատմամշակութային ժառանգությունը, միջազգային գիտաժողովի հիմնադրույթներ, նվիրված Գլաձորի համալսարանի հիմնադրման 735 ամյակին, Երևան, հրատ. նշված չէ, 110 էջ:

Պողոսյան Ս. 2019բ, Սյունիքի տարազը. ավանդույթներ և արդիականություն, Սյունիք կրթության և մշակույթի օջախ, Գորիսի պետական համալսարանի հիմնադրման 50-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, «Արմավ», 591 էջ:

Պողոսյան Ս. 2019գ, Շիրակ-Ջավախքի կանանց տարազի գեղազարդման առանձնահատկություններ, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հայագիտության արդի հիմնահարցեր, 10-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, Գյումրի, 27-29 սեպտեմբերի 2019, «Գիտություն», էջ 328-333:

Պողոսյան Ս. 2019դ, Օձաձև նախշերը հայոց ավանդական տարազի և զարդարանքի համակարգում», «Վիշապը հայկական մշակույթում» հոդվածների ժողովածու, Երևան, «Տիգրան Մեծ», էջ 335-343:

Պողոսյան Ս. 2022, Արցախի կանանց ավանդական տարազի գեղազարդման առանձնահատկություններ, Արցախի պետական համալսարանի Գիտական տեղեկագիր, էջ 335-352:

Ստեփանյան Ա. 2007, Հայ ժողովրդական տարազի զարդանախշերը/ծիսային, գունային և նշանային համակարգեր, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 22, «Գիտություն», էջ 7-131:

Богатырев П. 1971, Вопросы теории народного искусства, Москва, «Искусство», 511 с.

Кузнецов И. 1995, Одежда народов Понта, Москва, «Наука», 294 с.

Погосян С. 2003, Восточноармянский мужской костюм в общекавказском комплексе традиционной одежды. Археология, этнография и фольклористика Кавказа. Материалы международной конференции, Ереван, 17-18 ноября, Первопрестольный Святой Эчмиадзин, с. 227-231.

Погосян С. 2004, Араратский комплекс женской одежды армян. Международная научная конференция. Археология, этнология, фольклористика Кавказа, Тбилиси, с. 229-230.

Погосян С. 2012, Одежда. В кн.: Армяне. Отв. ред. Л.М. Варданян, Г.Г. Саркисян, А.Е. Тер-Саркисянц; Ин-т этнологии и антропологии им. Н.Н. Миклухо-Маклая РАН; Ин-т археологии и этнографии НАН РА, Москва, «Наука», 651с.

Poghosyan S. 2001, Costume, in: Abrahamyan L., Sweezy N. (ed.), Armenian Folk Arts, Culture, and Identity, Indiana Unuversity Press, p. 312.

Poghosyan S. 2007, Lecriture dans ls tradition poputarire Armenienne, Armenie La magie de Recrit, Marsel, 252-253.

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԶԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Սվետլանա Պողոսյան, Կարեն Փահլևանյան

Ամփոփում

Ազգային տարազը, իր տեղային խմբերով հանդերձ, բազմագործառութային է և որպես մշակութային կարևոր տարր՝ ունի սոցիալական խմբերի, սեռատարիքային և էթնիկ ընդհանրության հոգևոր պահանջմունքների ցուցիչի դեր: Այն յուրատեսակ նշանային համակարգ է՝ կրողի վերաբերյալ որոշակի տեղեկությամբ, որը հաղորդվում և դրսևորվում է կրվող համալիրի, տիպի, գույնի, ձևվածքի, զարդարանքի միջոցով: Հագուստի նշանային գործառույթներում գեղագիտական հատկանիշները միահյուսված են կրոնածիսական ոլորտներին:

Հայկական տարազը, ինչպես նաև հայոց լեզուն, իր բազմաթիվ բարբառներով, հիշեցնում է բազմագույն երանգապնակ՝ իր առանձին, բայց միաժամանակ համամասն ու ներդաշնակ գույներով: Մեկ համահայկական, ընդհանուր տարազ չկա: Այն պատմական զարգացման ուղի անցած համակարգ է՝ առանձին խմբերով, որոնք ընդհանուր են կառուցվածքային առումով: Բոլոր տարազախմբերում այն կազմված է ներքնազգեստից, վերնազգեստից, գլխի հարդարանքից, զարդարանքից, ագանելիքից (գուլպա, ոտնաման, տղամարդկանցը՝ նաև ոտքի փաթաթան, սռնապան): Տարբերությունները ոճավորման մեջ են, իսկ հագուստի ոճը դրսևորվել է ձևվածքային լուծման, հիմնական ձևերի, հագնելու եղանակի, գունային համադրության և գեղազարդման եղանակների մեջ: Ըստ տիպի՝ հայկական տարազը արձակ է, բաց, զգեստն ունի կտրվածքներ առջևից, կողքերից: Հայոց տարազի համակարգը կազմում են արևմտահայկական՝ Վասպուրական, Աղձնիք, Տուրուբերան, Բարձր Հայք, Շիրակ-Ջավախք, Տրապիզոն, Փոքր Հայք, Կիլիկիա և արևելահայկական՝ Այրարատ-Թիֆլիս-Պարսկահայք, Սյունիք-Արցախ, Գուգարք, Վայոց ձոր և այլ համալիրները:

Ավանդական տարազի դերն այսօր լրիվ փոխվել է: Այն դուրս է եկել կենցաղավարումից, կորցրել երբեմնի կիրառական նշանակությունը և դարձել ազգային մշակույթի էթնոսիմվոլիկ հատկանիշ, կատարելով էթնիկ ցուցիչի դեր:

Բանալի բառեր՝ արևմտահայկական, արևելահայկական, տեղական խմբեր, մշակութային երևույթ, նշանային համակարգ, տղամարդու տարազի համալիր, կնոջ տարազ:

ХАРАКТЕРИСТИКА АРМЯНСКОГО НАЦИОНАЛЬНОГО КОСТЮМА

Светлана Погосян, Карен Пахлеванян

Резюме

Национальный костюм, наряду с его местными разновидностями, многофункционален и, как важный культурный элемент, играет роль индикатора духовных потребностей социальных групп, половозрастной и этнической общно-

стей. Национальный костюм – это своего рода знаковая система с определенной информацией о его владельце, которая передается через его тип, цвет, крой и украшение. В знаковых функциях одежды эстетические особенности переплетаются с религиозной и ритуальной сферами.

Армянский национальный костюм, как и мультидиалектный армянский язык, напоминает многоцветную палитру в ее отдельных, но в то же время пропорциональных и гармоничных цветах. Не существует единого общеармянского национального костюма. Это система, прошедшая путь исторического развития с отдельными группами, имеющими общую структуру.

Все группы национального костюма состоят из нижнего белья, верхней одежды, головного убора, украшения, обуви (носки, туфли, у мужчин также онучи, ноговицы). Различия проявляются и в стилизации, а стиль одежды- в крое, в основных формах, в способе ношения, в цветовом сочетании и декорировании.

По своему типу армянский национальный костюм свободный, открытый, с вырезами по бокам и спереди. Система армянского национального костюма включает западноармянский-Васпуракан, Ахдзник, Туруберан, Высокая Армения, Ширак-Джавахк, Трапезунд, Малая Армения, Киликия и восточноармянский - Айрарат-Тифлис-Парскаайк, Сюник-Арцах, Гугарк, Вайоц Дзор и другие комплексы.

Сегодня полностью изменилась роль традиционного костюма. Он вышел из повседневной жизни, утратил свое некогда практическое значение и, став этносимволической чертой национальной культуры, играет роль этнического индикатора.

Ключевые слова – западноармянский, восточноармянский, местные группы, культурное явление, знаковая система, комплекс мужского национального костюма, женский национальный костюм.

CHARACTERISTICS OF THE ARMENIAN NATIONAL COSTUME

Svetlana Poghosyan, Karen Pahlevanyan

Abstract

The national costume with its local groups is multifunctional and, being an important cultural element, plays the role of an indicator of social groups, gender and age, and also the spiritual demands of an ethnic community. The national costume is an original sign system that bears definite information about its wearer, disclosed by type, color, pattern, and ornamentation of the set. The national costume, in particular the men's costume set, being comparatively an open system, is rather flexible towards changes in the historical and cultural, social-economic processes of a given community. In the national costume all elements are of symbolic significance. The Armenian national costume, like the Armenian multidialectal language, is manifold. It resembles a multicolored palette with separate but at the same time proportionate and harmonious colors. There is no "all Armenian" general costume. It is a historically developed system with separate groups that are common in

structure. In all groups the costume consists of underwear, outerwear, headdress, decoration, footwear (socks, shoes; for men also foot wrappers, gaiters). The differences are in stylization, demonstrated in pattern, main forms, manner of wearing, color combination, and ornamentation styles. The Armenian costume system comprised the folk dresses of Bardzr Hayk, Vaspurakan, Pokr Hayk, Cilicia, Ayrarat (Yerevan-Tiflis-Parskahayk/Persian Armenia/), Syunik-Artsakh and Lori-Gugark, each of which had their versions.

In the late 19th and early 20th centuries, especially after the Armenian Genocide, Armenian national costume began to lose its features. However, in some places, for example, in Syunik-Artsakh, some elements of the local costume have been preserved in purity. In the late 19th and early 20th centuries, especially after the Armenian Genocide, Armenian national costume began to lose its features. However, in some places, for example, in Syunik-Artsakh, some elements of the local costume have been preserved in purity.

Key words – Western Armenian, Eastern Armenian, local groups, cultural element, sign system, men's costume set, woman's costume.

ՄԵՂՐԻԻ ՍԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ (ԱՆԱՊԱՍՏԱՆԱՑ) ՎԱՆՔԻ 2016-2020 ԹԹ. ՊԵՂՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

Արման Նալբանդյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայցորդ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ hnagetyan18@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 01.17.2023, գրախոսվել է 28.11.2023, ընդունվել է տպագրության 11.12.2023
ORCID: 0009-0003-4965-2691
DOI: 10.53548/0320-8117-2023.3-331

Ներածություն

Մեղրու Սբ Հովհաննես վանքը, որ հայտնի է նաև Անապաստանաց վանք անունով գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի հյուսիս-արևմտյան բարձրադիր վայրում: Թեև վանքը հիշատակվում է XIII դարից[1], սակայն այժմյան կանգուն եկեղեցին և մյուս կառույցների՝ գավթի, տնտեսական շինությունների մնացորդները պատկանում են ուշ միջնադարին:

2015 թ. «Երկիր և մշակույթ» համազգային բարեգործական կազմակերպությունը (նախագահ՝ Գ. Գևոնյան) հանդես եկավ վանքի հնագիտական ուսումնասիրությունների, սեյսմիկ և երկրաբանական հետազոտությունների, չափագրման, նախագծման և ի վերջո վերականգնման աշխատանքների ծրագրով: Ողջ աշխատանքային գործընթացի և հուշարձանը վերականգնելու ծախսերը ստանձնեցին ամերիկահայ բարերարներ Հայկ և Հիլդա Մանջիկյանները: Պեղումներն իրականացրեց 2016 և 2018-2020 թթ. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը (ղեկ.՝ Ա. Նալբանդյան, հնագետներ՝ Հ. Բադալյան, Տ. Ալեքսանյան)[2]:

Կատարված աշխատանքները

Վերականգնման ծրագրի շրջանակում իրականացված հնագիտական ուսումնասիրությունները և պեղումները Մեղրու Սբ Հովհաննես վանքում տվեցին կարևոր արդյունքներ թե՛ ճարտարապետության և թե՛ հնագիտության տեսանկյունից: Բացվեցին եկեղեցու, գավիթ-նախասրահի, տնտեսական կառույցների ու կացարանների հիմքերը, հայտնաբերվեցին մեծաքանակ գտածոներ, որոնց թվում՝ տապանաքարերի և խաչքարերի բեկորներ[3],

[1] Օրբելեան 1910, 499-500, 521:

[2] Մեղրիի Սբ Հովհաննես վանքի եկեղեցու վերականգնումն ավարտին հասցվեց, և վերաօծման կարգ կատարվեց 2019 թ. (ճարտարապետ՝ Ստեփան Նալբանդյան):

[3] Նալբանդյան 2019, 272-287:

եկեղեցական ծիսական անոթների մասեր, ջնարակված խեցեղեն, զարդանախշ և վարպետաց նշաններով կարասներ, ծխամորճեր, ապակե սրվակներ, ուլունքներ և այլն: Հատկապես ուշագրավ էին ավանդատան գաղտնարանից գտնված ձեռագիր մատյանների ու հնատիպ գրքերի բազմաթիվ պատառիկները[4], իսկ 2020 թ. վանքի տնտեսական կառույցներից մեկի հատակին հայտնաբերվեց այրված Շարակնոց[5]: Գտածոների նման առատությունը խոսում է վանքի երբեմնի փառահեղ անցյալի, ակտիվ գործունեության, ընդարձակ համայնքի և մշակութային զարգացած կյանքի մասին:

Սբ Հովհաննես վանքի պեղումներով հայտնաբերված մետաղական գտածոներն իրենց քանակով զիջում էին միայն խեցեղենին: Մետաղական իրեր (հիմնականում արույր, պղինձ և բրոնզ) գտնվեցին թե՛ եկեղեցու ներսում կատարված աշխատանքների շնորհիվ, թե՛ հարակից տնտեսական կառույցների պեղումներով և թե՛ վանքի ներքին բակի տարածքից: Որոշ դեպքերում դրանք դուրս էին գալիս որոշակի խմբաքանակներով, և կարելի է ենթադրել, որ այդ իրերը միտումնավոր թաքցվել են: Չենք բացառում, որ խորհրդային աստվածամերժության տարիներին, երբ եկեղեցին վերածվել էր պահեստի, եկեղեցական սպասքը պարզապես լցվել է կառույցների պատերի տակ և ծածկվել հողով: Իրերի գերակշիռ մեծամասնությունը խիստ կոռոզացված էր և ձևախեղված, ուստի դրանք թանգարանային տեսքի բերելու համար մեծ ճիգեր պահանջվեցին[6]: Վանքի գրեթե բոլոր մետաղական գտածոները ուշմիջնադարյան շրջանի են, որը ցույց է տալիս, որ վանքը թեև չուներ այն ազդեցիկ դիրքը, ինչ զարգացած միջնադարում էր, այնուամենայնիվ, ուշ միջնադարում (XVII-XVIII դդ.) վանքը մշակութային զարթոնք է ապրել և ակտիվ դերակատարում ունեցել համայնքի, մասնավորապես ապաստան չունեցող հանրության կյանքում, ինչից ելնելով էլ Սբ Հովհաննես վանքը ժողովրդի մեջ սկսել է կոչվել *Անապաստանաց վանք*: Այս ժամանակաշրջանին առնչվող հակիրճ տեղեկություն հաղորդում է XVIII դ. կաթողիկոս Աբրահամ Կրետացին. *«Եւ ապա եկինք ի Մեղրի, որում կայր փոքրիկ վանք մի պատուական և հաճոյական»*[7]: Ավելի ուշ՝ XIX դ., վանքին անդրադարձել է նաև Ղևոնդ Ալիշանը. «*Մի մի եկեղեցիք են թաղիցն՝ Մեծի և Փոքուն, և բարեշէնք, ըստ վկայութեան յետին յիշեալ եւրոպացի ուղեւորին,*

[4] Նալբանդյան, Սիմոնյան 2020, 198-206:

[5] Ամստերդամ, 1664-1665 թթ., տպ. Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի, տպագր. Կարապետ Անդրիանացու և Ոսկան Երեւանցու, 779 էջ, չափս՝ 12x7,2 սմ: Բանավոր տեղեկատվության համար մեր շնորհակալությունն ենք հայտնում Մատենադարանի աշխատակից Լուսինե Թումանյանին:

[6] Պեղումներից հայտնաբերված մետաղական իրերը վերականգնվել են «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի վերականգնման լաբորատորիայի վարիչ Ելենա Աթոյանցի և «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի վերականգնման լաբորատորիայի վարիչ Մանվել Ղալաչյանի կողմից:

[7] Կրետացի 1973, 155, հմմտ. նաև Ջալալյանց 2016, 495:

*այլ ոչ թուին և բարեխնամք. որպէս և ոչ **Մեղրոյ վանքն Ս. Յովհաննէս**, որ կայ յարեւելակողմանն, սակաւուք հեռի ի շինէն. յորում բաց յառաջնորդէն թուի թե չգուցեն միաբանք, այլ պահապանք ոմանք, թէպէտ և կալուածս ոչ սակաւ ունի մենաստանն»*[8]:

Մետաղական գտածոները

Հայտնաբերված տասնյակ մետաղյա առարկաները պատկանում են միջնադարյան հոգևոր և նյութական մշակույթի զանազան բնագավառներին: Դրանց մեջ մեծ թիվ են կազմում ինչպես եկեղեցական-ծիսական բազմապիսի առարկաների մասերը, այնպես էլ կենցաղային, առևտրական, արհեստագործական նշանակության իրերը:

Մետաղական գտածոների գերակշիռ մեծամասնությունը կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ ա) ջահերի մասեր, բ) աշտանակ-մոմակալների մասեր: Չնայած, որ դրանք մեզ են հասել բավականին խաթարված վիճակում, սակայն հնարավորություն են տալիս վերակազմել եկեղեցու լուսավորության միջոցների մոտավոր տեսքը: Ինչպես խեցեղենի պարագայում է, այնպես էլ մետաղական առարկաների մեջ կան ներմուծված օրինակներ: Սակայն պետք է նկատի առնենք, որ վանքի օժանդակ շինությունների պեղումներով գտնված վառարանների մոտ տեղ-տեղ առկա ծծմբաքարի (պիրիտի) կուտակումները օքսիդացման հետևանքով դարչնագույն տեսք են ընդունել և արագ քայքայվում են: Հավանական է, որ դրանք տեղում մշակվել են որպես պղնձի կամ այլ մետաղի հումք, ինչից էլ կարելի է ենթադրել, որ պեղումներից հայտնաբերված մեծ թվով մետաղական առարկաները պատրաստվել են տեղում: Այլ կերպ ասած՝ այս սենյակները գոնե ինչ-որ ժամանակ եղել են մետաղամշակման արհեստանոցներ:

Առարկաների մեծ մասը պատրաստված է կռելու, սակավաթիվ՝ զոդման եղանակով: Դրանք հիմնականում բարակ թիթեղներ են, որոնց մի մասը պատված է դրվագման եղանակով արված բուսական զարդանախշերով:

Ջահերի մասեր - Գտնվեցին մեծ թվով պղնձե բարակ և ձևախեղված, շատ դեպքերում բեկոտված առարկաներ: Լաբորատոր մշակման և վերականգնման աշխատանքներից հետո միայն հնարավոր եղավ որոշակիորեն ստանալ դրանց նախնական տեսքը: Դրանք հիմնականում ջահերի՝ դրվագված զարդերով բաժակաձև մասեր են, որոնք միմյանց հետ կապված են եղել մետաղական օղակներով: Միայն մի դեպքում մի քանի մասերը ամրացված էին միմյանց, որի շնորհիվ հնարավոր է պատկերացում կազմել գտնված բազմաթիվ առարկաների նախնական տեսքի մասին: Այն կորացող, հաստ ձողի վրա ամրացված փոքր թասիկների շարք է, որոնցից մեկի վրա դրվագված են մեծ և փոքր շրջաններ, իսկ ամենավերևում մոմակալն է:

[8] Ղեւոնդ Ալիշան 1893, 303:

Մեղրիի ջահերի տեսքն ավելի հստակ պատկերացնելու համար մեզ կարող է օգնել Անիում հայտնաբերված փոքր ջահերից մեկի նկարագրությունը. *«Փոքր ջահը ավելի պարզ կառուցվածք է ունեցել: Նա բաղկացած է պղնձի հարթ թիթեղից կտրված երկու հավասարաչափ շրջանակներից, որոնք իրար հետ միացված են պղնձի բավական բարակ խողովակով, մեկը՝ վերև, մյուսը՝ ներքև և կազմում են ջահի հիմնական մասը: Այս երկու շրջանակներն էլ զարդարված են դրվագմամբ արված մեծ ու փոքր կետիկներով: Վերևի շրջանակի կենտրոնում ամրացված է օղ՝ ջահը կախելու համար: Վերջին շրջանակին իրենց թաթերով միանում են ութ փոքր շրջանաձև, մեջտեղում լայն անցքով թիթեղներ, որոնց վրա դրվում և ամրացվում էին ապակե թասերը: Ներքևի շրջանակի վրա նույնպես ամրացված են ութ շրջանակներ՝ ավելի երկար թաթերով և ավելի հաստ թիթեղից: Այս 16 շրջանակները ևս զարդարված են դրվագմամբ: Ներքևի 8 շրջանակներին ամրացված են եղել պղնձե լարեր, որոնց կախվող երկու ճյուղերին ամրացվել են պղնձե թիթեղից կտրված և դրվագմամբ զարդարված 16 մահիկներ, որոնք ծառայել են իբրև զարդ: Ուրեմն փոքր ջահը ունեցել է 16 լույսի կետ»*[9]: Ակադեմիկոս Բաբկեն Առաքելյանի բերած այս նկարագրության շատ մանրամասներ լիովին համապատասխանում են Սբ Հովհաննես վանքի պեղումներից հայտնաբերված ջահերի մասերին: Մասնավորապես՝ թիթեղյա շրջանակները, որոնց վրա առկա են դրվագմամբ արված մեծ և փոքր շրջաններ (աղ. 2, 5-5, 9-1), շրջանաձև, մեջտեղում անցքերով թասերը, դրվագված զարդերով մահիկները: Իհարկե, Մեղրիի ջահերը, հավանաբար, ունեցել են ոչ թե 16, այլ ավելի քիչ լույսի օջախներ: Անիի ջահի ապակե կամ հախճապակե թասերի փոխարեն Մեղրիի օրինակում եղել են պղնձե թասեր, որոնց մեջ ամրացվել է մոմակալը: Հատկապես ուշագրավ են մահիկաձև կախազարդերը, որոնք ամբողջությամբ դրվագված են խաղողի ողկույզների և տերևների պատկերներով (աղ. 1): Դրանցից մի քանիսը պահպանվել են ամբողջական տեսքով և ունեն շուրջ 20 սմ երկարություն, իսկ երկու ծայրերին՝ մեկական անցք: Բացի մահիկաձև կախազարդերից, գտնվել են նաև տերևաձև և ծաղկաձև թիթեղներ, որոնք նույնպես դրվագված են և օղի միջոցով կախվել են ջահից (աղ. 1): Ունեն 10 սմ բարձրություն և մի եզրին՝ անցք, որի մեջ պահպանված օղն ակնհայտ է դարձնում դրանց կախազարդ լինելը: Գեղարվեստորեն աչքի ընկնող այս ոսկեգույն կախազարդերը՝ ճոճի և փայլի շնորհիվ բավական տպավորիչ և գեղեցիկ տեսք են հաղորդել եկեղեցու ջահերին:

Աշտանակ-մոմակալների մասեր - Հայտնաբերված աշտանակները մեկ ընդհանուր բնով ծողեր են, որոնք դրվում էին շրջանաձև ջահակալի վրա,

[9] Առաքելյան 1958, 163-164:

իսկ գագաթին պսակվում մոմակալով (աղ. 5), որոնցից շատ կան Հայաստանի զանազան թանգարաններում և թվագրվում են XIX դ. սկզբից մինչև XX դ. սկիզբը: Այս տիպին թերևս ամենամոտ զուգահեռը կարող է համարվել Հայաստանի պատմության թանգարանում պահվող, XIX դ. առաջին կեսին Եվրոպայում արտադրված մոմակալը (բաժնեհաշվառանիշ՝ Ա 11572/339, աղ. 5-2):

Բրոնզե աշտանակ-մոմակալի լավագույն պահպանված նմուշը գտնվեց վանքի հարավ-արևմտյան կողմի տնտեսական կառույցում բացված՝ մի քանի կարասներով մառանի տարածքում, 2.20 սմ խորությունում (աղ. 6): Այն պահպանվել է հիանալի վիճակում, ունի գոգավորված կառուցվածք, 20 սմ բարձրություն և 4.5 սմ տրամագիծ: Ի տարբերություն նախորդ օրինակների, ոչ թե առանձին մասերով հավաքվող աշտանակ է, այլ մեկ ամբողջություն է կազմում: Այն լավ է պահպանված և պատկանում է պատվանդան ունեցող աշտանակների տիպին: Խոշոր պատվանդանների կենտրոնից բարձրանում է խողովակաձև աշտանակը, որի գագաթին էլ դրվել է ճրագը[10]:

Մոմակալներից միակ արծաթե նմուշը առանձնանում է մակերեսին զոդված երեք տերևանախշերով (աղ. 5-3):

Բացի վերոնշյալ հիմնական երկու խմբերից, հայտնաբերվեցին մեծ թվով այլ առարկաներ ևս: Դրանք են՝

Բոժոժներ - Գտնվեցին մի քանի փոքր, գնդաձև բոժոժներ, որոնք կախված են եղել քշոցներից կամ բուրվառներից: Դրանք ունեն կախելու համար նախատեսված օղեր և նեղ բերաններ: Որոշ դեպքերում պահպանվել են դրանց լեզվակները, որոնց շնորհիվ բոժոժները շարունակում են ձայն արձակել (աղ. 4-1, 5-8):

Թիթեղներ - Հայտնաբերված մի շարք թիթեղների նախնական նշանակությունը ճշտելը գրեթե անհնար է: Դրանք հիմնականում ավելի մեծ առարկաների տափակ կամ փողրակաձև դետալներ են (աղ. 4-5, 11): Վերջինները հավանաբար ամրացված են եղել փայտե կոթերին: Ուշագրավ է բրոնզե շեղանկյունաձև թիթեղը՝ նման տափակ գդալի գլխիկի, որի մի երեսը ամբողջությամբ պատված է մի քանի շարք զարդագոտիներով (աղ. 8-1):

Մետաղալարեր - Պեղված մեծ թվով պղնձե տափակ լարերն օգտագործվել են որպես կապիչներ կոտրված կարասների համար (աղ. 4-10): Կարասների շատ բեկորներ ունեն գայլիկոնված անցքեր, որոնցում երբեմն առկա են նման պղնձե կապիչներ: Սրանք միջնադարում խեցանոթների վերականգնման լավագույն արտահայտություններ են: Կոտրված հսկա կարասները, որոնց պատրաստելը բավական բարդ և ծախսատար աշխատանք է եղել ու պահանջել երկար ժամանակ, շատ դեպքերում

[10] Հակոբյան 1981, 24:

Աղյուսակ 1. Ջահերի տերևաձև և մահիկաձև կախազարդեր



Աղյուսակ 2. Ջահերի, աշտանակների, մոմակալների մասեր



Աղյուսակ 3. Մետաղական առարկաների գրչանկարներ (գրչ.՝ Ա. Սահակյանի)

Աղյուսակ 4. Մետաղական առարկաներ. 1. բոժոժներ, 2. գնդասեղներ, 3. թիթեղներ, 4. բաժակի տակդիրի զարդ, 5 և 11. փողրակաձև մանրամասներ, 6. փական, 7. կեռ, 8. անոթի մաս, 9. մոմակալի մաս?, 10. մետաղալար

Աղյուսակ 5. Եկեղեցու գաղտնարանից հայտնաբերված իրեր. 1, 3, 4-5. աշտանակ-մոմակալի մասեր, 2. ամբողջական նմուշը վերցված է ՀՊԹ հավաքածուից՝ համեմատության նպատակով, 6. փական, 7. կեռ, 8. բոժոժ

Աղյուսակ 6. Ամբողջական պահպանված աշտանակ



Աղյուսակ 7. Արաբատառ արձանագրությամբ պնակ

Աղյուսակ 8. 1. Զարդարուն մակերեսով թիթեղ, 2. Կոճակ, 3. Պարսկական պղնձե ֆուլուսներ, 4. Թուրքական արծաթե աքչե, 5. ցարական պոլուշկա (գրչ.՝ Ա. Սահակյանի)



Աղյուսակ 9. Ջահի մասեր
(գրչ.՝ Ա. Սահակյանի)



Աղյուսակ 10. Արձանագիր ծնծղա
(գրչ.՝ Ա. Սահակյանի)

Աղյուսակ 11. Երկաթե իրեր. 1. կախիչ?, 2. պայտ, 3. բանալի, 4. եռոտանի, 5. պայտի գամ, 6. ամրակ, 7. գամեր, 8. սեպ

վերականգնվել են: Կոտրված երկու բեկորների եզրերին փորված անցքերից մետաղական լար անցկացնելով ու ոլորելով՝ բեկորներն ամրացվել են իրար: Այնուհետև իրար կապված երկու կեսերի վրա քսվել է սպիտակ կրանյութ, որը վերջնականապես փակել է երկու բեկորների միջև եղած ճեղքը:

Մետաղադրամներ-Անապաստանաց վանքի պեղումներով գտնվել են իրանական, օսմանյան և ռուսական 9 մետաղադրամներ[11].

1. Պարսկական մետաղադրամները (2 նմուշ, աղ. 8-3) XVIII դ. Շուշիում (Փանահաբադ, Ղարաբաղի խանություն) հատած պղնձե ֆուլուսներ են (AE, կես բիստի): Դիմերեսներին թռչնի (սիրամարգ) պատկեր է, դարձերեսներին նշված է թողարկման վայրը: Շուշիի քաղաքային դրամների առկայությունը Մեղրիում վառ կերպով արտահայտում է այս երկու տարածաշրջանների տնտեսական կապը:

2. Օսմանյան մետաղադրամները (2 նմուշ, աղ. 8-4) շատ բարակ են, ունեն 1,4 սմ տրամագիծ: Դրամների վրա պահպանվել են պատկերի միայն փոքրիկ հատվածներ՝ ինչից ելնելով դժվար է պնդել, թե որ սուլթանի հատածն է, սակայն ակնհայտ է, որ դրանք օսմանյան արծաթե աքչէներ են:

3. Ռուսական մետաղադրամներից առաջինը ցարական ժամանակաշրջանի է (Նիկոլայ I, պոլուշկա, 1851 թ. աղ. 8-5) երկրորդը՝ խորհրդային (1924 թ.):

Պնակ – Եկեղեցուց հյուսիս-արևելք գտնվող տնտեսական կառույցներից մեկում, 2,40 մ խորությունից դուրս է եկել ամբողջապես պահպանված բրոնզե պնակ (տրամ.՝ 19 սմ, աղ. 7): Շրթի հատվածում դաջված է արաբատառ գրություն. «Հանուն գթած, ողորմած ալլահի»: Թեև գրվածքը արաբերեն է, սակայն պնակը իրանական արտադրության առարկա է: Տառերը գրված են ոչ պարզ, նախշաձև տեղավորված են շրջանակի մեջ (միայն մեկ բառն է շրջանակից դուրս): Ամենայն հավանականությամբ, այն նախատեսված է եղել կերակուրի համար, և շրթին առկա գրվածքը սնունդը օրհնելու նշանակություն է ունեցել[12]: Հարկ է նշել, որ պղնձե զանազան ափսեների, մատուցարանների, սկուտեղների և այլ առարկաների (այդ թվում՝ նաև Մեղրիից գտնված) հավաքածուով հարուստ է Սարդարապատի հայոց ազգագրության թանգարանը: Դրանցից շատերի պսակին, մեր օրինակի նման, զարդի մեջ առնված ելնդագիր կամ փորագիր գրություններ են, սակայն հիմնականում՝ հայերեն[13]:

Ծնծղա – Գավթին կից կառուցված սենյակներից մեկում, ավելի քան 1 մ խորությունում հայտնաբերվեց բացառիկ մի առարկա, որն ավելի է ընդգծում Սբ Հովհաննես վանքի կապը այլ սրբատեղիների հետ: Այն սկավա-

[11] Բանավոր տեղեկատվության համար շնորհակալություն ենք հայտնում դրամագետ Արմինե Զոհրաբյանին և Արման Մկրտչյանին:

[12] Թարգմանության և տեղեկատվության համար համար շնորհակալություն ենք հայտնում արաբագետ Տիգրան Միքայելյանին:

[13] Հարությունյան, Բաբաջանյան 2019, 143-146:

ռակաձև, կենտրոնում ուռուցիկ, ամբողջականորեն պահպանված ծնծղա է (տրամ.՝ 25 սմ, աղ. 10): Մակերեսին շրջանաձև փորագրված է դյուրընթեռնելի, հիշատակագրային միատող արձանագրություն. «Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ Է ՊԱՂՏԱՍԱՐԻ ՈՐԴԻ ԳԱՍՊԱՐԻՆ Ի Դ(ՈՒ)ՌՆ ՍԲ ՀԱԿՈԲԱՅ, ԹՎ ՌՃՁԷ (1738)»: Պատկանում է հարթ ծնծղաների տիպի միջին չափսի ենթատիպին, որոնք կոչվում են նաև ցնցղա, երգեհոն, ծնծաղ, ցընծըղներ[14]: Ձևով դրան ամենամոտը Հայաստանի պատմության թանգարանում պահվող՝ 1695 թ. Թոքատի (բաժնեհաշվառանիշ՝ Ա 4254), 1703 թ. Ուրմիայի Սբ Ստեփանոս վանքի (բաժնեհաշվառանիշ՝ Ա 2736) և 1775 թ. Տաթևի վանքի (բաժնեհաշվառանիշ՝ Ա 4255) ծնծղաներն են, որոնք նույնպես արձանագիր են: Երկու արձանագիր ծնծղա կա Սարդարապատի հայոց ազգագրության թանգարանի հավաքածուում: Սրանք իրենց ձևով, չափերով, արձանագրության ոճով հար և նման են մեր օրինակին: Այս ծնծղաները, որոնցից մեկը 1689 թ. (գույքահամար՝ ՀԱՊԹ-1160, ՀՄ-59), մյուսը՝ 1695 (ՀԱՊԹ-1162, ՀՄ-61), իրենց արձանագրությամբ ունեն իմաստային նույն բովանդակությունը, ինչ Մեղրիից հայտնաբերված նմուշն է[15]:

Գասպարի հիշատակին Սբ Հակոբ եկեղեցուն ընծայված այս իրը չափազանց կարևոր է այն առումով, որ այն հիանալի թվագրող նյութ է Մեղրու Սբ Հովհաննես վանքի պեղումներից հայտնաբերված մետաղական առարկաների, ինչպես նաև շերտագրության համար: Այս ժամանակաշրջանի Սբ Հակոբ անունով եկեղեցի Մեղրիի տարածաշրջանում հայտնի է Ալդարա բնակատեղիում: Սակայն ավելի ճիշտ կլինի կապ գտնել այժմյան Իրանի տարածքի հայկական եկեղեցիների հետ, մասնավորապես՝ Խոյի Սբ Հակոբ (Սաիդաբադ, XVIII դ.), Սալմաստի Սբ Հակոբ (Քոհնեշահր, 1671 թ.) և Սպահանի Սբ Հակոբ Մծբնա հայրապետ (Մեծ Մեյդան թաղ, 1607 թ.) եկեղեցիների հետ, որտեղից այլ առարկաների հետ միասին ծնծղան տեղափոխվել է Մեղրի:

Նմանատիպ ծնծղաներ հայտնի են նաև Գնդեվանքից, որոնք հայտնաբերվել են 1981 թ. մաքրման աշխատանքների ժամանակ և կրում են 1679 թ.[16]:

Այլ նշանակության իրեր – Ուշագրավ են 3.5 սմ երկարությամբ գնդասեղը (աղ. 4-2), բրոնզե զանգանման առարկան, որը պահպանվել է կիսով չափ և մակերեսին ունի զարդագոտիներ (աղ. 9-2), իսկ աստառին՝ կապույտ մածուցիկ նյութի հետքեր: Հետաքրքիր է Մեծ Բրիտանիայի զինանշանի պատկերով կոճակը (աղ. 8-2), որը (մի քանի այլ իրերի հետ միասին) վկայում է XIX-XX դդ. եվրոպացի հանքարդյունաբերողների կամ ճանապարհորդների Մեղրի կատարած այցի մասին:

Երկաթե իրեր – Բացի պղնձե, բրոնզե, արծաթե և արույրե իրերից, գտնվել են նաև մեծաքանակ երկաթե առարկաներ, հիմնականում պայտեր,

[14] Պիկիչյան 1992, 215-224:

[15] Հարությունյան, Բաբաջանյան 2019, 147-148:

[16] Հարությունյան, Բաբաջանյան 2019, 148:

գամեր, զանազան կեռիկներ, շղթա, դանականման իր ու օղակաձև բռնակով երկաթե բանալի (աղ. 11): Երկաթե իրերից պետք է առանձնացնել եռոտանին (աղ. 11-4): Միջնադարյան կավագործության մեջ մեծ կիրառություն ունեցող երեք ոտքերով այս հենակները դրվել են ջնարակված պնակների կամ թասերի արանքում, որպեսզի հնոցում տեղադրվելու ժամանակ դեռևս թաց ջնարակները միմյանց չդիպչեն և չլողվեն: Եռոտանի հենակներ են գտնվել Դվինից, Գառնիից, Գանձակից[17]: Անապաստանաց վանքից հայտնաբերված բազմաթիվ ջնարակված պնակների ու թասերի մակերեսներին առկա են նման եռոտանիների հետքեր՝ ջնարակից մաքրված երեք կետերի տեսքով: Սրանց առկայությունը, պեղումներով բացված բովարան-վառարանների, դրանց մոտ գտնված հումքի մնացորդների, բեկորներն իրար կապող պղնձե լարերի հետ միասին, փաստում է, որ հայտնաբերված խեցեղենի զգալի մասը պատրաստվել և վերականգնվել է տեղում:

Եզրակացություններ

Մետաղագործության նման զարգացած և որակյալ արտադրությունը բնորոշ է միջնադարյան քաղաքային համայնքներին, կարծում ենք՝ նաև խոշոր վանքերին: Պետք է նկատի առնենք, որ Անապաստանաց վանքի օժանդակ շինությունների պեղումներով գտնված վառարանների մոտ տեղ-տեղ առկա ծծմբաքարի (պիրիտի) կուտակումները օքսիդացման հետևանքով դարչնագույն տեսք են ընդունել և արագ քայքայվում են: Հավանական է, որ դրանք տեղում մշակվել են պղինձ կամ այլ մետաղ ստանալու նպատակով, ինչից էլ կարելի է ենթադրել, որ պեղումներից հայտնաբերված մեծ թվով մետաղական առարկաները պատրաստվել են տեղում: Այլ կերպ ասած՝ այս կառույցները գոնե ինչ-որ ժամանակ ծառայել են որպես մետաղամշակման արհեստանոցներ:

Սբ Հովհաննես վանքի մետաղյա առարկաները, հատկապես ջահերի և աշտանակների՝ գեղարվեստորեն աչքի ընկնող մանրամասներն՝ իրենց բազմազանությամբ, նրբաճաշակ հարդարատարրերով ու զարդաձևերով մրցունակ են ցանկացած միջնադարյան հուշարձաններից հայտնաբերված նմուշների հետ: Դրանք լրացնում են մեր պատկերացումները միջնադարյան արհեստագործության այս հետաքրքիր ուղղության մասին, որն իր ինքնատիպ դրսևորումներով արտահայտվել է ուշմիջնադարյան Մեղրիում:

Գրականության

Ալիշան Ղ. 1893, Սիսական, Վենետիկ, ի Մխիթարայ վանս, 697 էջ:
Առաքելյան Բ. 1958, Քաղաքները և արհեստները Հայաստանում (IX-XIII դդ.) հ. 1, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 376 էջ:
Կրետացի Ա. 1973, Պատմություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 314 էջ:

[17] Առաքելյան 1958, 217:

Հակոբյան Ն. 1981, Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական մետաղը IX-XIII դդ., Հայաստանի հնագիտական հուշարձանները, հ. 10, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 172 էջ:

Հարությունյան Ա., Բաբաջանյան Ա. 2019, Պղնձե արձանագիր առարկաներ Սարդարապատի հայոց ազգագրության թանգարանից, Սեդրակ Բարխուդարյան - 120. Գիտական հոդվածների ժողովածու (խմբ.՝ Գ. Սարգսյան, Ա. Հարությունյան), Երևան, ՀԱԻ հրատ., էջ 139-151.

Նալբանդյան Ա. 2019, Արձանագիր խաչքարեր Մեղրիի Ս. Հովհաննես (Անապաստանաց) վանքից, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, էջ 272-287:

Նալբանդյան Ա., Սիմոնյան Ա. 2020, Նորահայտ պատառիկներ Մեղրիի Ս. Հովհաննես եկեղեցու պեղումներից, Բանբեր Մատենադարանի, N 29, էջ 198-206:

Պիկիչյան Հ. 1992, Ծնծղա. Նվագարան և մոգական գործիք, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2-3, էջ 14-24:

Ջալալյանց Ս. 2016, Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան, մաս Բ, Երևան, «ԴԱԼԼ», 696 էջ:

Օրբելեան Ստ. 1910, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, Ն. Աղանեանի տպարան, 618 էջ:

ՄԵՂՐԻԻ ՍԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ (ԱՆԱՊԱՍՏԱՆԱՑ) ՎԱՆՔԻ 2016-2020 ԹԹ. ՊԵՂՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

Արման Նալբանդյան

Ամփոփում

Մեղրու Սբ Հովհաննես վանքը, որ հայտնի է նաև Անապաստանաց վանք անունով, գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի քաղաքում:

2015 թ. «Երկիր և մշակույթ» համազգային բարեգործական կազմակերպությունը (նախագահ՝ Գ. Գևոնյան) հանդես եկավ վանքի վերականգնման աշխատանքների ծրագրով, որի շրջանակում պետք է իրականացվեին նաև տարածքի պեղումները: Ողջ աշխատանքային գործընթացի ծախսերը ստանձնեցին ամերիկահայ բարերարներ Հայկ և Հիլդա Մանջիկյանները: Պեղումներն իրականացվեցին 2016 և 2018-2020 թթ.՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբի կողմից (արշ. ղեկ.՝ Ա. Նալբանդյան, հնագետներ՝ Հ. Բադալյան, Տ. Ալեքսանյան):

Հնագիտական ուսումնասիրությունները և պեղումները տվեցին կարևոր արդյունքներ, որոնց ընթացքում հայտնաբերվեցին բազմաթիվ արտեֆակտներ, որոնց թվում նաև մեծ թվով մետաղական իրեր:

Գտնված տասնյակ մետաղյա առարկաները պատկանում են միջնադարյան հոգևոր և նյութական մշակույթի զանազան բնագավառներին: Դրանց մեջ մեծ թիվ են կազմում, ինչպես եկեղեցական-ծիսական բազմապիսի առարկաների մասերը, այնպես էլ կենցաղային, առևտրական, արհեստագործական նշանակության իրերը:

Մետաղական գտածոների գերակշիռ մեծամասնությունը կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ ա) ջահերի մասեր, բ) աշտանակ-մոմակալների մասեր: Չնայած որ մեզ են հասել բավական խաթարված վիճակում, սակայն դրանք հնարավորություն

են տալիս վերակազմել եկեղեցու լուսավորության միջոցների մոտավոր տեսքը: Բացի դրանցից, գտնվել են նաև այլ ուշագրավ իրեր՝ ինչպիսիք են արձանագիր պնակը և ծնծղան, մետաղադրամները, գնդասեղները, բոժոժները և այլն:

Բանալի բառեր՝ Մեղրի, Սբ Հովհաննես վանք, Անապաստանաց վանք, մետաղ, ջահ, աշտանակ, մետաղադրամ:

МЕТАЛЛИЧЕСКИЕ АРТЕФАКТЫ, ВЫЯВЛЕННЫЕ ВО ВРЕМЯ РАСКОПОК В 2016-2020 ГГ. МОНАСТЫРЯ СВ. ОВАНЕСА (АНАПАСТАНАЦ) В МЕГРИ

Арман Налбандян

Резюме

Монастырь Св. Ованеса, известный также как монастырь Анапастанац, находится в городе Мегри Сюникского марза РА.

В 2015 г. общенациональная благотворительная организация «Еркир ев мшакуйт» (Страна и культура) (председатель Г. Гевонян) разработала план восстановления монастыря, в рамках которого должны были быть проведены раскопки местности. Расходы на весь рабочий процесс взяли на себя армяне – меценаты из Америки Айк и Хильда Манджикяны. Раскопки проводились в 2016 и 2018- 2020 гг. экспедицией Института археологии и этнографии НАН РА (руководитель А. Налбандян, археологи А. Бадалян, Т. Алексанян).

В ходе раскопок было обнаружено множество артефактов, в том числе огромное число металлических предметов, относящихся к различным сферам средневековой духовной и материальной культуры, к примеру, фрагменты церковно-обрядовой утвари, а также предметы быта, торговли и ремесленные изделия.

Подавляющее большинство металлических находок можно разделить на две большие группы: а) фрагменты факелов-светильников, б) фрагменты подсвечников. Несмотря на плохую сохранность, они позволяют реконструировать примерный вид средств освещения храма. Помимо этого были найдены и другие предметы, такие как пиала с надписью и кимвал – ударный музыкальный инструмент, монеты, булавки, бубенчики и др.

Ключевые слова – Мегри, монастырь Св. Ованеса, монастырь Анапастанац, металл, факел, светильник, монета.

THE METAL OBJECTS FOUND AT THE EXCAVATIONS OF SAINT HOVHANNES (ANAPASTANAC) MONASTERY OF MEGHRI IN 2016-2020

Arman Nalbandyan

Abstract

St. Hovhannes monastery of Meghri, which is also known as Anapastanac monastery, is located in the town of Meghri of the Syunik province of the RA.

In 2015 the nationwide charity "Land and Culture" (president Keram Kevonian) came forward with the programme of restoration of the church, under the framework of which the excavations of its area were also to be carried out. The entire workflow expenses were covered by the American-Armenian benefactors Haig and Hilda Manjikian. The excavations have been carried out by the archaeological expedition of the Institute of Archaeology and Ethnography NAS RA in 2016 and 2018-2020 (the expedition leader A. Nalbandyan, archaeologists H. Badalyan, T. Aleksanyan).

The archaeological research and excavations gave important results. During the work many artifacts were found, including a large number of metal objects.

Dozens of metal objects belong to the various spheres of medieval spiritual and material culture. Many of them are the parts of ritual objects, as well as household, trade and craft items.

The vast majority of metal finds can be divided into two large groups: a) parts of chandeliers, b) parts of candlesticks. Despite the fact that they have come down to us in rather poor condition, they make it possible to reconstruct the approximate appearance of the lights of the church. In addition, other noteworthy objects were found, such as the inscribed plate and cymbal, coins, pins, "bells", and so on.

Key words – Meghri, St. Hovhannes monastery, Anapastanac monastery, metal, tourch, chandelier, coin.

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ «ԿԱՐՄԻՐ ՄՈԾԱԿ» ԵՐԳԻԾԱԹԵՐԹԻ ՄԱՍԻՆ (1926-1927 ԹԹ.)

Հայ երգիծական մամուլն արևմտահայության Մեծ եղեռնին և 1917 թ. ռուսաստանյան հեղափոխություններին հաջորդող տարիներին զարգացել է երկու հիմնական ուղղություններով սփյուռքահայ երգիծական մամուլ և Խորհրդային Հայաստանի ու Խորհրդային Վրաստանի տարածքում տպագրվող երգիծական պարբերականներ: Խորհրդային Հայաստանում 1920-ական թվականներին հրատարակված երգիծական պարբերականները («Շեշտ» (Երևան, 1923 թ.), «Զուռնա» (Երևան, 1924 թ.), «Կարմիր մոծակ» (Երևան, 1926-1927 թթ.)) կարճ կյանք են ունեցել, քանի որ նման հրատարակությունները չէին խրախուսվում:

Այդ կարճակյաց պարբերականներից «Կարմիր մոծակ» երգիծաթերթի հիմնադիրը Հայաստանի խորհրդայնացմանը հաջորդող շրջանում երգիծական պարբերականներ հրատարակելու բնագավառում գործուն մասնակցություն ցուցաբերած երգիծաբան Էդուարդ Խոճիկն էր (Խոճիկյան) (1900-1961 թթ.): 1924 թ. մարտին Երևանում նրա խմբագրությամբ ընդամենը մեկ համար հրատարակվելուց հետո դադարեցվել էր «Զուռնա» երգիծաթերթի տպագրությունը:

1925 թ. աշնանը Է. Խոճիկը ձեռնամուխ է լինում «Զուռնա»-ի հրատարակության վերսկսմանը: Հայկական մինչխորհրդային երգիծական մամուլը հիշեցնող սույն անվանումը խորհրդային իշխանությունների համար ընդունելի չէր կարող լինել, ուստի Խոճիկը նպատակահարմար համարեց վերցնել տարածված «կարմիր» հավելումը՝ իբրև խորհրդային կառավարության քաղաքականությանը հետևելու թափանցիկ ակնարկ: Արդեն «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթի 1926 թ. հունվարի 13-ի համարում ծանուցվում էր, որ սկսվել է «Կարմիր մոծակ» («Զուռնա») երգիծական երկշաբաթաթերթի բաժանորդագրությունը[1]:

1920-ականներին Խորհրդային Հայաստանում գործող կարգի համաձայն՝ նոր պարբերական հրատարակելու համար նախապես անհրաժեշտ էր ստանալ Հայգլավլիտի թույլտվությունը: Վերջինը, իր հերթին, հարցը համաձայնեցնում էր ՀԿ(բ)Կ կենտկոմի հետ: Անցնելով այս ընթացակարգերով՝ 1926 թ. ապրիլին հրատարակվեց «Կարմիր մոծակ»-ի անդրանիկ համարը (խմբագիրներ՝ Արամայիս Երզնկյան և Էդուարդ Խոճիկ), որի առաջնային խնդիրներից էր հայտարարվում արտասահմանի հակախորհրդային ուժերին (առանձնապես դաշնակցականներին, էսէռներին ու մենշևիկներին) «սուր ծաղրի» ենթարկելը:

Թեև նախատեսվում էր «Կարմիր մոծակ»-ը հրատարակել շաբաթը երկու անգամ, այդուհանդերձ, երգիծաթերթի հինգ համարները տպագրվել են անկանոն պարբերականությամբ: Դրանք, գործող կարգի համաձայն, գրաքննություն են անցել և ստացել Հայգլավլիտի թույլտվության համարները: Թերթի 1926 թվա-

[1] Խորհրդային Հայաստան, Երևան, 13.I.1926, N 9:

կանի չորս համար (համապատասխանաբար՝ 2000, 4000, 2500 և 3000 տպաքանակով) հրատարակվել է Պետհրատի երկրորդ տպարանում, իսկ 1927 թվականի թիվ 1-ը՝ Երևանի «Հերմես» մասնավոր հրատարակչության տպարանում (3000 տպաքանակով): Տարեկան բաժանորդագինը ԽՍՀՄ տարածքում 6 ռուբլի էր, արտասահմանում՝ 6 դոլար, հատավաճառի արժեքը՝ 20 կոպեկ[2]:

Երգիծաթերթի խմբագրության՝ գրաքննությունը շրջանցելու փորձերը, խմբագիր ու հրատարակիչ Է. Խոճիկի ըմբոստ կեցվածքը, նաև պարբերականի էջերում հրատարակվող սուր քննադատական նյութերն ու երգիծապատկերները չէին կարող անհետևանք մնալ. Խորհրդային Հայաստանում հետզհետե թափ հավաքող մամուլի պետական-կուսակցական վերահսկողությունն ու գրաքննությունը չէր պատրաստվում երկար հանդուրժել «Կարմիր մոծակ»-ի «խայթոցները»: Առանձնապես ընդունելի չէր դիտվում թերթի պատասխանատու խմբագրի պաշտոնում Է. Խոճիկի գործունեությունը: Այդ ամենի հետևանքով 1926 թ. հուլիսի կեսերին թերթի երրորդ համարի հրատարակությունից հետո հերթական՝ չորրորդ համարը տպագրվեց միայն տարեվերջին:

Չունենալով պետական աջակցություն (այն մասնավոր հրատարակություն էր)՝ «Կարմիր մոծակ»-ը գտնվում էր նյութական ծանր դրության մեջ. պարբերականի եկամուտը գոյանում էր համարների վաճառքից, գովազդային հայտարարություններից, մասնակիորեն նաև խմբագրության կազմակերպած միջոցառումներից: Թերթի հրատարակության ծախսերը հոգալու նպատակով խմբագրության կողմից «Մամուլ» անվանումով մասնավոր հրատարակչություն բացելու փորձ կատարվեց, որը նախատեսում էր հրատարակել «Կարմիր մոծակ» երգիծաթերթը, վերջինի հավելված «Երգիծաբանական գրադարան»-ը, նաև մանկական պատկերազարդ գրքեր, պիեսներ և գրական-քննադատական աշխատություններ: Այս փորձը հաջողություն չունեցավ:

Խմբագրակազմի տևական ջանքերից հետո 1927 թ. հունվարի կեսերին լույս տեսավ «Կարմիր մոծակ»-ի վերջին համարը: Այն սովորականից ավելի փոքրածավալ էր (7 էջ), հրատարակության էր ստորագրված «խմբագրական կոլեգիայի» կողմից: «Կարմիր մոծակ»-ի և «Երգիծաբանական գրադարան» մատենաշարի բաժանորդները պարբերականի համարի հետ ստացան նաև մատենաշարի առաջին գրքույկը, ուր տեղ էր գտել Հակոբ Պարոնյանի 5 ստեղծագործություն[3]:

Պարբերականի նոր համարն անմիջապես համապատասխան «ուշադրության» արժանացավ Հայգլավլիտի կոլեգիայի և ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղարության կողմից: Վերջինների որոշումները դատավճռի նշանակություն ունեցան «Կարմիր մոծակ»-ի համար. երգիծաթերթի հրատարակությունն ընդհատվեց:

«Կարմիր մոծակ»-ի հրատարակությունը դադարեցվեց այն ժամանակ, երբ այն ճանաչում էր ձեռք բերել, իր շուրջը խմբել ժամանակի տաղանդավոր երգիծաբաններին, իսկ համարները տարածվում էին Խորհրդային Հայաստանում ու

[2] Կարմիր մոծակ, Երևան, 1926, N 1, էջ 2, Խորհրդային Հայաստան, 1.V.1926, N 102:

[3] Պարոնյան Հ. 1927, Պզտիկ քիթ և ֆրանսերեն լեզու, «Կարմիր մոծակ»-ի երգիծաբանական գրադարան N 1, Երևան, 30 էջ:

նրա սահմաններից դուրս: Պարբերականը գործակալներ ուներ ԽՍՀՄ-ի տարբեր քաղաքներում, այն Միության սահմաններում հրատարակվող միակ հայալեզու երգիծաթերթն էր[4]: «Կարմիր մոծակ»-ի հրատարակության ընդհատումից հետո Խորհրդային Հայաստանում ավելի քան քառորդ դար (մինչև 1954 թ. «Ոզնու» հրատարակումը) երգիծական պարբերական չի տպագրվել:

Ստորև հրատարակվող փաստաթղթերը վերաբերում են «Կարմիր մոծակ» երգիծաթերթի հրատարակման պատմությանը՝ հրատարակության թույլտվությանը, համարների տպագրության ընթացքում պետական-կուսակցական մարմինների կողմից հարուցվող խոչընդոտներին, գրաքննական միջամտություններին, պարբերականի հրատարակությունը դադարեցնելու պատճառներին ու հանգամանքներին, ինչպես նաև «Մամուլ» հրատարակչություն հիմնելու անհաջող փորձին:

Հրապարակվող փաստաթղթերն ընտրված են Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) և Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի (ԳԱԹ) ֆոնդերից: Դրանք մենք վերնագրել ու ծանոթագրել ենք: Հրատարակման ժամանակ անհրաժեշտ հավելումները կատարել ենք ուղղանկյուն փակագծերում ([]):

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

N 1

Հայգլավլիտի «միանգամայն գաղտնի» նշագրումով գրությունը ՀԿ(բ)Կ կենտկոմի ագիտացիոն բաժնի վարիչ Ա. Շահսուվարյանին՝ «Կարմիր մոծակ» երգիծաթերթի հրատարակման խնդրով

19 մարտի 1926 թ.
N 152/գ
Երևան

Ընկ. ընկ. Արամայիս Երզնկյանի և Էդուարդ Խոջիկի խմբագրությամբ լույս է տեսնելու առաջիկա շաբաթից երգիծաբանական «Կարմիր մոծակ» անունով երկշաբաթաթերթ: «Կարմիր մոծակ» անունով երկշաբաթաթերթի նպատակն է խարազանել մեր կյանքի բացասական կողմերը, ինչպես նրանց դիմումն է ասում՝ ամրապես կանգնած լինելով խորհրդային պոզիցիայի[5] վրա: Բացի այդ՝ թերթը սուր ծաղրի պիտի ենթարկի հակահեղափոխական արտաքին էմիգրանտական հոսանքները, ինչպիսիք են՝ դաշնակցությունը, էսէռները, մենշևիկները և այլն:

[4] Պարբերականի մասին մանրամասն տե՛ս Սուքիասյան Հ.Կ., Երանոսյան Ն.Ս. 2018, Խորհրդային Հայաստանի երգիծական մամուլը 1920-ական թվականներին, Երևան, «Էդիթ պրինտ», էջ 70-103:

[5] Դիրքորոշման:

Գրառեպգլխվարի[6] ներքին կանոնադրության[7] համաձայն, դիմելով Ձեզ՝ խնդրում ենք քննության առնել վերոհիշյալ երգիծաբանական թերթի հրատարակման թույլտվության հարցը և Ձեր սանկցիան տալ Գրառեպգլխվարին:

Գրառեպգլխվարի նախագահ՝ Ս. Մելիքսեթյան[8]
Քարտուղար՝ Ա. Ապրեսյան[9]

Մակագրություն 1. «Քարտուղարության նիստին (ստորագրություն), 20.III»:
Մակագրություն 2. «Համաձայն եմ: Ա. Շահսուվարյան[10]»:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 265, թ. 30: Բնագիր: Մեքենագիր:

N 2

Երգիծաթերթի փորագրանկարչի տված ստացականը

19 ապրիլի 1926 թ.
Երևան

Ստացա «Կարմիր մոծակ»-ի ֆոների փորագրության (8 կլիշե) [համար] երեսուն ռուբլի (30 ռ.):

Թ. Բեղլուքյան

ԳԱԹ, Էդուարդ Խոճիկի ֆոնդ, գ. 258, թ. 11: Բնագիր: Ձեռագիր:

N 3

Աբաս Ջեյնալովի ստացականը՝ «Կարմիր մոծակ» երգիծաթերթի խմբագրատանը կատարած աշխատանքների համար վարձատրություն ստանալու մասին

25 մայիսի 1926 թ.
Երևան

Ստացա «Կարմիր մոծակ»-ի խմբագրատան սենյակի պատերը և ֆասադը ներկելու համար (25 ռ.) քսան և հինգ ռուբլի (Ապաս Ջեյնալով):

---

[6] ՀՍԽՀ գրականության, հրատարակչության և խաղացանկի վերահսկողության վարչություն (Գրառեպվար, Հայգլավլիտ):

[7] Խոսքը ՀՍԽՀ ժողկոմխորհի 1923 թ. հունիսի 21-ի նիստում հաստատված Հայգլավլիտի կանոնադրության մասին է (տե՛ս Սուքիասյան Հ. 2017, Փաստաթղթեր Խորհրդային Հայաստանի գլավլիտի կազմակերպման մասին, Պատմաբանասիրական հանդես, N 3, էջ 186-189):

[8] Ճանաչված թատերագետ, գրականագետ և հրապարակախոս Սարգիս Մելիքսեթյանը 1925–1927 թթ. եղել է Հայգլավլիտի նախագահը:

[9] Անդրեաս Ապրեսյանը 1926 թ. փետրվար–օգոստոսին Հայգլավլիտի քարտուղարն էր:

[10] Ալեքսանդր Շահսուվարյանը ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղարն ու միաժամանակ նաև Կենտկոմի ագիտացիոն բաժնի վարիչն էր:

Հասցե՝ Նոր ազատության փողոց, N 10:

Абас Зейналов

ԳԱԹ, Էդուարդ Խոճիկի ֆոնդ, գ. 258, թ. 15: Բնագիր: Ձեռագիր:

N 4

«Կարմիր մոծակ» երգիծաթերթի առաջին համարից հոնորար ստացածների ցուցակը

[5 հունիսի 1926 թ.][11]
Երևան

	անուն ազգանուն	րուբլի	կոպեկ	ստորագրություն ստացողի[12]	ամսաթիվ ստ[անալու] օրվա	նկատողություն
1	Էդուարդ Խոճիկ	16 ր.	–	(ստորագրություն)	5.VI	
2	Ճանճունի	9 ր.	–			
3	Անունյան	6 ր.	–			
4	Դեմիրճյան Դ.	20 ր.	–	(ստորագրություն)		
5	Երզնկյան Արամ.	4 ր.	–			
6	Մահարի Գուրգեն	5 ր.	–	(ստորագրություն)		
7	Աճառյան Հ.	6 ր.	–			
8	Վարդ Կամսար	2 ր.	–			
9	Սաքո	3 ր.	–			
10	Սուզիկ	2 ր.	–	ստացա (ստորագրություն)		
11	Արուտչյան Մ.	89 ր.	–	ստացա (ստորագրություն)	5.VI.1926	
12	Ժամկոչյան Հ.	15 ր.	–	ստացա 15 ռ. (ստորագրություն)		
	Ընդամենը	177 ր.	–			

Խմբագիր՝ Էդ. Խոճիկ

ԳԱԹ, Էդուարդ Խոճիկի ֆոնդ, գ. 258, թ. 1: Բնագիր: Ձեռագիր:

[11] Թվագրվում է համաձայն բովանդակության:
[12] Ոչ բոլոր հեղինակներն են ստորագրել:

N 5

Դերենիկ Դեմիրճյանի ստացականը՝ «Կարմիր մոծակ» երգիծաթերթի խմբագրությունից ավանս ստանալու մասին

10 հունիսի 1926 թ.
Երևան

Ստացա «Կարմիր մոծակ»-ի խմբագրությունից տասն և յոթ ռուբլի ավանս՝ ի հաշիվ հոնորարի:

Դ. Դեմիրճյան

ԳԱԹ, Էդուարդ Խոճիկի ֆոնդ, գ. 258, թ. 12: Բնագիր: Ինքնագիր:

N 6

Հայգլավլիտի «միանգամայն գաղտնի» նշագրումով գրությունը ՀԿ(բ)Կ կենտկոմի ագիտացիոն բաժնին՝ «Կարմիր մոծակ»-ի երրորդ համարի տպագրության ժամանակ արձանագրված խախտումների մասին

17 հուլիսի 1926 թ.
N 207/գ
Երևան

Թյուրիմացություններից կանխորեն խուսափելու համար անհրաժեշտ ենք համարում հայտնելու Ձեզ ի գիտություն, որ «Կարմիր մոծակ»-ի նո. 3-ի նկարների մակգիրները տպվել են առանց Գրառեպգլխվարի գիտության, որի համար մեր կողմից պատասխանատվության է հրավիրվում Պետհրատի 2-րդ տպարանի վարիչը և խմբագրությունը (տպարանների վարիչներին վաղօրոք հայտնված է եղել, որ առանց Գրառեպգլխվարի թույլտվության ոչ մի թերթ չտպագրել): Հետո՝ նո. 3-ի առաջին նկարի բովանդակությունը մակագրի հետ միասին չի համապատասխանում նրանց արած (խմբագրության) բանավոր հայտարարությանը, որով իմաստը բոլորովին այլ պիտի լիներ, քան այն, որ տպված է[13]:

Գրառեպգլխվարը խնդրում է վերոգրյալ բացատրությունը նկատի ունենալ:

Գրառեպգլխվարի նախագահ՝ Ս. Մելիքսեթյան
Քարտուղար՝ Ա. Ապրեսյան

Մակագրություն. «Մամուլի բաժին»:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 265, թ. 68: Բնագիր: Մեքենագիր:

[13] Միքայել Արուտչյանի հեղինակած «Դեպի կուրորտները» երգիծանկարում պատկերված է, թե ինչպես են հիվանդ տեսքով մարդիկ առողջարան ճանապարհում առողջներին: Այնուհետև նշված է «Մենք աշխարհքի խորթ զավակն ենք, մեզ փայ չկա կուրորտից» ձևակերպումը, ինչը Հայգլավլիտում դժգոհության պատճառ էր դարձել:

N 7

«Կարմիր մոծակ» երգիծաթերթի տպագրության ծախսերի հաշվարկը

[1926 թ.][14]

Երևան

ԾԱԽՔ

1. Շարվածք, տպագրություն, լիտոգրաֆիա և այլն.

1 համարը

10 երեսի շարվածք, 11, 15 – 66 [ռ.]
Տպագրություն – 36 [ռ.]
Բրոշյուրովկա – 20 [ռ.]
Լիտոգրաֆիա, 3 գույն – 87 [ռ.]
Ցինկոգրաֆիա, 10 կլիշե, 200 դ. – 90 [ռ.]
Ամիսը՝ 2 համար – 299 [ռ.] = 598 ռ.

2. Թուղթ

Թուղթ – 97 [ռ.]
Ամիսը՝ 2 համար – 97 = 194 ռ.

3. Հոնորար, սրբագրություն

Սրբագրություն – 15 [ռ.]
Հոնորար նկարչին – 100 [ռ.]
Նյութերի հոնորար – 75 [ռ.]
Ամիսը՝ 2 համար – 190 [ռ.] = 380 ռ.

4. Շտատ

Պատ. խմբագիր, 15 պ. – 164 [ռ.] – 15 [ռ.]
Գործավար-մատենավար (7-րդ կատ[եգորիա]) – 42 [ռ.] –
Սոցապի – 20 [ռ.] – 60 [ռ.]
Կուլտֆոնդ, տեղկոմ, 2 % – 4 [ռ.] – 10 [ռ.]
[Ընդամենը՝] 230 [ռ.] – 85 [ռ.]

5. Զանազան և տնտ[եսական] ծախքեր

Վառելիք – 20 [ռ.]
Լույսի – 3 [ռ.]
Հեռախոս – 7 [ռ.]
Դռնապան – 2 [ռ.]
Գրենական պիտույքներ – 10 [ռ.]
Եվ զանազան – 5 [ռ.]
[Ընդամենը՝] 47 [ռ.] = 47 ռ.
ԾԱԽՔ – 1.449 ռ., 85 կ.

Տիրաժ՝ 2000, 16 երեսից

[14] Թվագրվում է համաձայն բովանդակության:

Տպարանում փչացած – 150 [ռ.]
Գրաշար և բանվ[որ] – 80 [ռ.]
Ձրի և փոխանակ[ում] – 100 [ռ.]
Չվաճառված 10 տոկոս – 200 [ռ.]
530 օրինակ
Մնում է վաճառելու համար – 1470 –
20 կ[ոպեկ] օրինակը – 294 ռ.
Էքսպեդից[իայի] առաքման և տարածման ծախքեր (35 տոկ[ոս]) – 103 ռ.
1 համարի մաքուր հասցեթ. ամիսը՝ 2 համար – 191 ռ. = 382 [ռ.]

Ամսական մուտք – 382 ռ.
Ամսական ծախք – 1449 ռ., 85 կ.

ԳԱԹ, Էդուարդ Խոճիկի ֆոնդ, գ. 258, թ. 5 շրջ.-6: Թողոն: Մեքենագիր:

N 8

Հայգլավլիտի «գաղտնի» նշագրումով գրությունը ՀԿ(բ)Կ կենտկոմի մամուլի բաժնին՝ «Մամուլ» հրատարակչություն կազմակերպելու մասին ստացված դիմումն ուղարկելու մասին

17 դեկտեմբերի 1926 թ.
N 260
Երևան

Գրառեպգլխվարս ուղարկելով Ձեզ «Կարմիր մոծակ»-ին կից կազմակերպված «Մամուլ» հրատարակչության և գործակալության դիմումը, ուր պարզված են իրենց միջոցներն ու նպատակը, խնդրում ենք հայտնել Ձեր կարծիքը:

Գրառեպգլխվարի նախագահ՝ Ս. Մելիքսեթյան
Քարտուղար՝ Ս. Ամիրյան[15]

ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 265, թ. 124: Բնագիր: Մեքենագիր:

[15] Սարգիս Ամիրյանը Հայգլավլիտի քարտուղարի պաշտոնում 1926 թ. օգոստոսի 15-ին փոխարինել էր վաղաժամ կյանքից հեռացած Ա. Ապրեսյանին: Մինչ այդ Քաղլուսգլխվարչությունում պաշտոնավարել է իբրև մատենավար:

N 8ա

«Մամուլ» հրատարակչության կազմակերպիչների դիմումը Հայգլավլիտին՝ իրենց նպատակների և ծրագրերի մասին

17 դեկտեմբերի 1926 թ.
Երևան

«Կարմիր մոծակ» երգիծաբանական երկշաբաթաթերթի հրատարակության նյութական դրությունն ապահովելու համար հիմնվում է Երևանում «Մամուլ» անունով հրատարակչություն-գործակալություն, որի նպատակն է հրատարակել «Կարմիր մոծակ» երգիծաթերթը, հավելված «Երգիծաբանական գրադարան»-ը, մանկական պատկերազարդ գրքեր, պիեսներ և գրական, քննադատական աշխատություններ:

Իր հրատարակությունների գործում «Մամուլ»-ը նպատակ ունի ամեն կերպ աջակից հանդիսանալ խորհրդային հրատարակչության ծավալմանը՝ մասնակից լինելով և նպաստելով նոր կենցաղի ամրապնդմանն ու սոցիալիզմի կառուցմանը, պրոլետարական գրականության և գեղարվեստի իդեոլոգիայի սկզբունքով:

Որպես նյութական եկամտի աղբյուր՝ «Մամուլ»-ը վերցնելու է ներկայացուցչություն ԽՍՀ Միության սահմաններում գոյություն ունեցող հրատարակչությունների, որը մի կողմից էլ նպաստելու է տարածելու Երևանում ու ընդհանրապես Հայաստանում հիշյալ հրատարակչությունների լույս ընծայած պարբերականներն ու զանազան գրքերը՝ հանձն առնելով կազմել գյուղական, բանվորական և հասարակական գրադարաններ՝ ընդունելով բաժանորդագրություն և կազմակերպելով վաճառք:

«Մամուլ»-ն իր հրատարակությունները տարածելու համար ունենալու է Հայաստանի քաղաքներում, գյուղական վայրերում և ԽՍՀ Միության բոլոր հայաշատ վայրերում գործակալներ, որոնց միջոցով կազմակերպելու է նաև Երևանում լույս տեսնող այլ հրատարակությունների տարածումը:

«Մամուլ»-ը որպես եկամտի աղբյուր վերցնելու է պատվերներ՝ հեղինակների և հիմնարկների հրատարակությունների տեխնիկական հսկողությունն ու սրբագրությունը:

«Մամուլ»-ը 1927 թ. ծրագրել է հրատարակել.

ա) 24 համար «Կարմիր մոծակ» երգիծաթերթ,

բ) 24 անուն «Երգիծաբանական գրադարան»-ի գրքույկ՝ ինքնուրույն և թարգմանական,

գ) 12 անուն մանկական պատկերազարդ գրքեր ինքնուրույն և թարգմանական,

դ) 6 անուն պիեսներ և գրական-քննադատական գրքեր:

«Մամուլ»-ի գործակալական ծրագիրն է 1927 թվին ստանձնել Մոսկվայի հետևյալ հրատարակչությունների ներկայացուցչությունը.

1) Промиздат, 2) Литиздат комиссар. по инделам, 3) Главполитпросвета, 4) Мысль, 5) Техника и медицина, 6) Авиоиздательство, 7) ЦУП (изд. ВСНХ[16]),

[16] Центральное управление печати (ЦУП) при Президиуме Высшего совета народного хозяйства СССР (ВСНХ СССР).

8) Модпик (Драмписателей)[17], 9) Прибой[18], 10) Рабочая Москва, 11) Известия ВЦИК, 12) Правда и беднота և այլն, և կապ հաստատել “Всесоюзное контрагенство печати”-ի հետ՝ Երևանում ստանալու թարմ գրականություն (լույս տեսած օրից 7 օրվա ընթացքում):

Կից ներկայացվում է 1927 թվի մուտքի և ելքի մոտավոր նախահաշիվը:

«Կարմիր մոծակ»-ի խմբագրության անդամ՝ Է. Խոճիկ
«Մամուլ»-ի վարիչ (ստորագրություն)

ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 265, թ. 125 և շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

N 8բ

«Մամուլ» հրատարակչության ակնկալելիք մուտքի և ելքի նախահաշիվը

ՄՈՒՏՔ

1. 2500 օրինակ «Կարմիր մոծակ» և «Երգիծաբանական գրադարան»՝ օ[րինակը] 8 ռ., տար[բերությունը] = 20000 ռ.
2. 12 անուն մանկական գիրք՝ 2500 տիրաժով, 50 կ. հատը = 15000 ռ.
3. 6 անուն պիես և այլ գրքեր՝ 1000 տիրաժ, 50 կ. հատը = 3000 ռ.
4. Պարբերականների գործակալությունից 10 %, ամսական 1000 ռ. շրջանառ[ություն] = 1200 ռ.
5. Գրքերի գործակալությունից 20%, ամսական 1000 ռ. շրջանառ[ություն] = 2400 ռ.
6. Զանազան հանձնառություններից

[Ընդամենը՝] 42800 ռ.

ԵԼՔ

1. 24 համար «Կարմ[իր] մոծ[ակ]», տպագրութ[յուն] և հոնորար – 8400 ռ.
2. 24 անուն «Երգիծ[աբանական] գրադ[արան]», տպագր[ություն] և հոնորար – 3000 ռ.
3. Վաճառքի %% գործակալներին – 5000 ռ.
4. 12 մանկական գրքերի տպագրություն և հոնոր[ար] – 6000 ռ.
5. 6 անուն զանազ[ան] գրքերի տպագր[ություն] և հոնորար – 2400 ռ.
6. Գրքերի վաճառքի %% գրավաճառներին – 6300 ռ.
7. Ռոճիկ պաշտոնեության – 9000 ռ.
8. Բանկային %% – 1000 ռ.
9. Գրասենյակային ծախքեր – 600 ռ.
10. Գրասենյակի նախնական կահավոր[ում] – 500 ռ.
11. Չնախատեսված ծախքեր – 600 ռ.

[Ընդամենը՝] 42800 ռ.:

Ծանոթություն. «Կարմիր մոծակ»-ը ունի 3000 տիրաժ, «Երգիծաբանական գրադ[արանը]»՝ 2000 տիրաժ: Միջին թվով կլինի 2500 տիրաժ:

[17] Московское общество драматических писателей и композиторов.
[18] Рабочее кооперативное издательство "Прибой".

ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 265, թ. 126: Բնագիր: Ձեռագիր:

N 8գ

«Մամուլ» հրատարակչության գործունեության մասին հայտարարություն

Հրատարակչություն և գործակալություն «Մամուլ»
(Երևան, Աբովյան փող. N 22, հեռախոս՝ 150)

1. Լույս է ընծայում «Կարմիր մոծակ» երգիծաբանական երկշաբաթաթերթը և հավելված «Երգիծաբանական գրադարան»-ը:

2. Հրատարակում է մանկական պատկերազարդ գրքեր, պիեսներ և գրական-գեղարվեստական աշխատություններ:

3. Հեղինակների և հիմնարկների պատվերով կատարում է ամեն տեսակի հրատարակություններ:

4. Հանձն է առնում հրատարակությունների տեխնիկական հսկողություն և սրբագրություն:

5. Հանձն է առնում կազմել ամեն արժեքի դպրոցական, գյուղական, բանվորական և հասարակական գրադարաններ:

6. Ընդունում է բաժանորդագրություն ԽՍՀՄ Միության մեջ լույս տեսնող բոլոր պարբերականների, հանդեսների և ժողովածուների:

«Մամուլ»-ը, լինելով Մոսկվայի մի շարք հրատարակչությունների Երևանի ներկայացուցիչը, մատակարարում է նրանց բոլոր հրատարակությունները:

«Մամուլ»-ը Հայաստանի բոլոր քաղաքներում, կենտրոնական գյուղերում և ԽՍՀՄ Միության հայաշատ վայրերում ունի հատուկ գործակալներ:

Ճշտապահություն, ժամանակի խնայողություն

Հեռագրական հասցեն՝ Երևան, «Մամուլ», Эривань, “Мамул”:

ԳԱԹ, Էդուարդ Խոճիկի ֆոնդ, գ. 258, թ. 19: Թողոն: Ձեռագիր:

N 9

Հայգլավլիտի «գաղտնի», «շտապ» նշագրումներով գրությունը ՀԿ(բ)Կ կենտկոմի մամուլի բաժնին՝ «Կարմիր մոծակ» երգիծաթերթի խմբագրակազմում փոփոխություն կատարելու նպատակահարմարության մասին

24 դեկտեմբերի 1926 թ.
N 265
Երևան

Գրառեպգլխվարի կոլեգիան յուր դեկտեմբերի 21-ին կայացած նիստում «Կարմիր մոծակ» երգիծաբանական երկշաբաթաթերթի 1927 թվի վերահրատարակության դիմումը քննության առնելով՝ որոշեց.

Ի նկատի ունենալով, որ «Կարմիր մոծակ» թերթի 1926 թ. հրատարակության ընթացքում խմբագրական աշխատանքը չի կատարվել խորհրդային երգիծական թերթերին պատշաճ կերպով, «Կարմիր մոծակ» թերթի խմբագրությանն առաջարկել խմբագրական կազմը 1927 թ. սկզբից ուժեղացնել (փոխանակ 2-ի, դարձնել 3 հոգի), մանավանդ որ խմբ[ագրական] կոլեգիայի մեջ մտնող ընկ. Արամ[այիս] Երզնկյանը[19] խմբագրական աշխատանքին, ինչպես փորձն է ցույց տվել, յուր աշխատանքի ծանրաբեռնության պատճառով, ակտիվ մասնակցություն ցույց չի տվել:

Խմբագրության վերջին դիմումում նշված պատասխանատու խմբագրի թեկնածությունը համարել աննպատակահարմար (Էդ. Խոջիկի թեկնածությունը[20]):

Այս որոշումները Մամուլի բաժնիդ քննությանը հանձնելով՝ Գրառեպգլխվարս խնդրում է հայտնել Ձեր կարծիքը:

Ձեր սանկցիան ստանալուց հետո որոշումները պիտի կիրառվեն 1927 թվի վերահրատարակության սկզբից (հունվարի 1-ից):

Գրառեպգլխվարի նախագահ՝ Ս. Մելիքսեթյան
Քարտուղար՝ Ս. Ամիրյան

Մակագրություն. «На коллегии (подпись), 24.XII.1926»:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 265, թ. 127: Բնագիր: Մեքենագիր:

N 10

ՀԿ(բ)Կ կենտկոմի մամուլի բաժնի կոլեգիայի[21] որոշումները «Մամուլ» հրատարակչության և «Կարմիր մոծակ» պարբերականի մասին

10 հունվարի 1927 թ.
N 5
Երևան

Слушали: 2. Об издательстве “Мамул” (т. [Л.] Арисян[22]).

Постановили: 2. Запретить. Поручить Отделу печати подготовить и представить на обсуждение коллегии вопрос о частных издательствах в Армении.

Слушали: 3. О журнале “Кармир моцак”.

Постановили: 3. Считать издание юмористического журнала в Армении целесообразным и необходимым.

[19] Ճանաչված սոցիալիստ գործիչ, 1921-1929 թթ. եղել է ՀՍԽՀ հողագործության ժողկոմ:

[20] Երգիծաթերթի հիմնադիր Է. Խոճիկին պատասխանատու խմբագրի պաշտոնում չհաստատելը նույնական էր թերթի հրատարակության կասեցմանը: 1927 թ. առաջին համարի հրատարակությունից հետո թերթի տպագրությունը դադարեցվեց:

[21] ՀԿ(բ)Կ կենտկոմի նախագահության որոշմամբ Ագիտացիոն-պրոպագանդիստական բաժնի մամուլի ենթաբաժինը 1926 թ. հունվարից վերակազմավորվել էր առանձին բաժնի, որն ուներ նաև իր կոլեգիան:

[22] Լևոն Արիսյանը ՀԿ(բ)Կ կենտկոմի մամուլի բաժնի վարիչն էր:

Возобновление издания “Кармир моцак” разрешить, если издатели образуют редакционно-издательскую коллегию в составе товарищей: 1) Ерзнкяна Арамаиса (отв. редактор), 2) Ходжика Эдуарда, 3) Аслибекян Сусик[23], 4) Меликсетяна [Саркиса] и 5) Ахумяна Ашота[24].

Председатель Л. Арисян
Секретарь Петросян

НАА, ф. 1, оп. 7, д. 261, л. 1. Заверенная копия. Машинопись.

N 11

Հայգլավլիտի կոլեգիայի նիստի որոշումը՝ «Կարմիր մոծակ» երգիծաթերթի հրատարակությունը թույլ տալու համար Սարգիս Մելիքսեթյանին նկատողություն հայտարարելու մասին

19 հունվարի 1927 թ.
N 8
Երևան

Լսեցին. 3. «Կարմիր մոծակ» երգիծաբանական ամսաթերթի [1927 թ.] համար առաջինը թույլատրելու մասին (ընկ. Կ. Ղազարյան[25]):

Որոշեցին. 3. ա) Այնքան, որքան որ «Կարմիր մոծակ» երգիծաբանական ամսաթերթի հրատարակման համար համապատասխան կարգադրություն չի եղել, գտնել, որ ընկ. Ս. Մելիքսեթյանը սխալ քաղաքականություն է վարել՝ նո. 1-ը թույլատրելով:

բ) Նաև այն, որ նա Գրառեպգլխվարի կոլեգիայի որոշումները «Կարմիր մոծակ»-ի նկատմամբ խախտել է:

գ) Անել նկատողություն նման սխալ քայլ անելու համար:

դ) Այսուհետև կոլեգիայի նիստերը հրավիրել շաբաթը մեկ անգամ:

Առաջարկել կոլեգիայի բոլոր անդամներին, որպեսզի լուրջ հարցերը անցկացնեն կոլեգիայով:

Նախագահ՝ Ս. Մելիքսեթյան
Քարտուղար՝ Ս. Ամիրյան
Իսկականի հետ ճիշտ է՝ Գրառեպգլխվարի քարտուղար Ս. Ամիրյան

ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 266, թ. 12: Վավերացված պատճեն: Մեքենագիր:

[23] Սուսիկ Ալիբեկյանը Հայկական հրաձգային դիվիզիայի քաղաքական բաժնի «Կարմիր զինվոր» թերթի պատասխանատու խմբագիրն էր:

[24] Աշոտ Հախումյանը Լենինականի նախկին գավքաղլուսվարն էր:

[25] Կարո Ղազարյանը ՀԱԽՀ լուսավորության ժողկոմատի քաղաքական լուսավորության գլխավոր վարչության պետն էր:

N 12

ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղարության որոշումը Մամուլի բաժնի կոլեգիայի նիստի որոշումները հաստատելու և «Կարմիր մոծակ» պարբերականի հրատարակության հետագա ընթացքի մասին

24 հունվարի 1927 թ.
N 31
Երևան

Слушали – 8. Протокол N 5 коллегии отдела печати ЦК (т. [Л.] Арисян).

Постановили – 8. а) Утвердить.

б) Вопрос об издании юмористического журнала «Кармир моцак» оставить открытым.

НАА, ф. 1, оп. 7, д. 33, л. 9. Подлинник. Машинопись.

N 13

Մասնավոր հրատարակչությունների խնդրի քննարկումը ՀԿ(բ)Կ կենտկոմի մամուլի բաժնի կոլեգիայի նիստում

2 февраля 1927 г.
N 6
Ереван

Слушали: 1. О разрешении вопросов частных изданий в ЦК КП(б)А (отношение Главлита N 8 от 10/I 1927 г.).

Постановили: 1. Отклонить.

Председатель [Л.] Арисян
Секретарь Гулканян

НАА, ф. 1, оп. 7, д. 261, л. 2. Отпуск. Машинопись.

ՌՈԶԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ. ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
(ծննդյան 90-ամյակի առթիվ)

Հայ բանագիտության պատմության մեջ իր ուրույն տեղն ունի ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի երկարամյա աշխատակցուհի, բանասիրության դոկտոր Ռոզա Հայրապետի Գրիգորյանը: Նա առաջին հերթին հայտնի է որպես մանկական բանահյուսության հետազոտող, սակայն իր գիտական ուղին սկսել է իբրև գրականագետ, որն ուսումնասիրել է հին հունական գրական արձագանքները հայ գրականության մեջ: Ռ. Գրիգորյանի գիտական գործունեության վրա մեծ ազդեցություն է թողել նաև իր ծննդավայրը, մասնավորաբար՝ նրա բանահավաքչական գործունեությունը սերտորեն կապված է եղել Գեղարքունիքի մարզի հետ:

Կյանքի հիմնական դրվագները

Ռոզա Գրիգորյանը ծնվել է 1931 թ. հունվարի 25-ին Նոր Բայազետ քաղաքում (այժմ՝ Գավառ, ՀՀ Գեղարքունիքի մարզ) Հայրապետ Սիրեկանի Գրիգորյանի ընտանիքում: Մայրը՝ Մարգարիտ Ոսկանի Համբարձումյան-Գրիգորյանը (ծնվ. 1912 թ.), ծնունդով նույն տարածաշրջանի Վարդենիս քաղաքից էր (այն ժամանակ՝ Բասարգեչար), սերում էր Համբարձումյանների նահապետական ընտանիքից: Խելացի ու շնորհքով կին լինելով և աչքի ընկնելով իր արտակարգ բնածին ընդունակություններով՝ Մարգարիտը, սակայն, հոր հիվանդության, ապա՝ մահվան պատճառով չի կարողացել ավարտին հասցնել ուսումը. *«...շատ ուսյալներ նրա մոտ գլխահակ կարող էին կանգնել: Լավ գիտեր իր ազգի պատմությունը և գրականությունը»*[1]: Մարգարիտ Համբարձումյանի հայրը՝ Ոսկանը (Ռ. Գրիգորյանի պապը), հաճախ է վիճել իր եղբոր՝ Համազասպի հետ՝ պնդելով, թե՝ *«Համազա՛սպ, հավատացած եղիր, որ իմ Մարգարիտը քո որդուց՝ Վիկտորից,*

[1] Կենսագրական հատվածի մանրամասները շարադրված են ըստ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում պահվող՝ Ռոզա Գրիգորյանի ինքնակենսագրական ակնարկի (ցուցակ 1, գործ 1, էջ 1-16):

շատ խելացի և ընդունակ էր»[2]: Պատահական չէ, որ Ռ. Գրիգորյանն իր հիմնարար աշխատանքներից առաջինը նվիրել է հենց մոր հիշատակին[3]:

Ռոզա Գրիգորյանի բնորոշմամբ՝ իր հայրը մշտապես աշխատել է «լավ միջավայրում» և ոչինչ չի խնայել ընտանիքի բարեկեցության համար: Մայրը երբեք չի աշխատել և իր ողջ կյանքն ու եռանդը նվիրել է երեխաների կրթությանն ու դաստիարակությանը: Հոր աշխատանքի բերումով ընտանիքը սկզբում բնակվել է Գեղարքունիքի Սևան քաղաքում (այն ժամանակ՝ Ելենովկա), այնուհետև մշտական բնակություն է հաստատել Երևանում:

1937-1947 թթ. Ռ. Գրիգորյանը սովորել է Երևանի Կրուպսկայայի անվան միջնակարգ դպրոցում, որը ժամանակին համարվում էր մայրաքաղաքի լավագույն կրթարաններից մեկը: Շուտով սկսվում է Հայրենական մեծ պատերազմը, և Ռոզայի հայրը՝ Հայրապետը, մեկնում է ռազմաճակատ: Ընտանիքի խնամքի ծանր հոգսն ընկնում է մոր ուսերին, իսկ երբեմն էլ ընտանիքին օգնության ձեռք են մեկնում Գեղարքունիքում ապրող հարազատները:Պատերազմի ժամանակ հայրը ծանր վիրավորվում և տեղափոխվում է Բաքվի հիվանդանոց: Չնայած նյութական ծանր վիճակին՝ մայրը կարողանում է հորը Բաքվից տեղափոխել Երևան:

1947 թ. ավարտելով դպրոցը՝ Ռոզա Գրիգորյանը հաջորդ տարի ընդունվում է Երևանի պետական համալսարանի բանասիրական (այն ժամանակ՝ *ֆիլոլոգիական*) ֆակուլտետի հայկական բաժինը («հայոց լեզու և գրականություն» մասնագիտացմամբ), որն ավարտում է 1953-ին: Այնուհետև (1954-1958 թթ.) ուսանում է ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրայում՝ «Հայ գրականություն» մասնագիտությամբ: Որպես գիտական ուսումնասիրության ոլորտ Ռ. Գրիգորյանին հանձնարարվում է «Հունա-հայկական գրական կապեր» թեման, որը ղեկավարում է նրա հարազատ հորեղբայրը՝ նշանավոր գրականագետ, թարգմանիչ, հունագետ, բ.գ.դ., պրոֆեսոր Համազասպ Ասատուրի Համբարձումյանը (որի որդին աշխարհահռչակ աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանն էր):

1959 թ. Ռ. Գրիգորյանը որպես լաբորանտ աշխատանքի է անցնում ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Հայ հին գրականության բաժնում: Միևնույն ժամանակ, Գրականության ինստիտուտում գործում էր Ժողովրդական բանահյուսության բաժինը, որը մեկ տարի անց՝ 1960-ին, ԳԱ նախագահության որոշմամբ, տեղափոխվում է նորաստեղծ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ (ՀԱԻ), որտեղ և կենտրո-

[2] ՀԱԻ արխիվ, ցուցակ 1, գործ 1, էջ 1-16): Այստեղ խոսքը նշանավոր աստղաֆիզիկոս, հետագայում՝ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի մասին է:

[3] Գրիգորյան 1970 (կազմ.), 5:

նանում են հանրապետությունում իրականացվող բանագիտական աշխատանքները: Հաշվի առնելով, որ բանահյուսությունն ինքնին ժողովրդական է, և ըստ էության չի կարող լինել ոչ-ժողովրդական բանահյուսություն՝ բաժինը վերանվանվում է Հայ բանահյուսության բաժին, թեև 1960-ականների որոշ փաստաթղթերում նշվում է որպես «Հայ ժողովրդական բանահյուսության բաժին» կամ ուղղակի «Ժողովրդական բանահյուսության սեկտոր»: Նույն 1960 թ. մարտի 16-ին Գրականության ինստիտուտից Հնագիտության և ազգագրության ինստիտուտի այդ բաժին են փոխադրվում ավագ գիտաշխատող Գրիգոր Գրիգորյանը, ասպիրանտ Վերժինե Սվազլյանը և լաբորանտ Ռոզա Գրիգորյանը:

Ձախից աջ՝ Գայանե Քոչարյան, Ռոզա Գրիգորյան, Սարգիս Հարությունյան, անհայտ, Բաբկեն Առաքելյան, Վերժինե Սվազլյան, Սվետլանա Վարդանյան, Ռաիսա Խաչատրյան

Փաստորեն, գրեթե ՀԱԻ հիմնադրման օրվանից սկսած՝ մինչև իր կյանքի վերջը Ռոզա Գրիգորյանն աշխատել է այդ ինստիտուտի բանագիտական բաժնում, սկզբում՝ որպես լաբորանտ (1960 թ. մարտի 16-ից նոյեմբերի 16), ապա՝ կրտսեր (1960-1969 թթ.), այնուհետև՝ ավագ (1969-1995 թթ.) և վերջապես առաջատար (1995-2003 թթ.) գիտաշխատող: 1972 թ. հոկտեմբերի 1-ից ինստիտուտում ստեղծվում է երկրորդ բանագիտական ստորաբաժանումը՝ Բանահյուսական սկզբնաղբյուրների վավերագրման բաժինը[4] (նշանավոր բանագետ Սարգիս Բարդուղիմեոսի Հարությունյանի ղեկավարությամբ), ուր և տեղափոխվում են ավագ գիտաշխատողներ Ռոզա Գրիգորյանն ու Վեր-

[4] Որոշ փաստաթղթերում կոչվում է «Բանահյուսության սկզբնաղբյուրների վավերագրման բաժին»:

ժինե Սվազլյանը, ինչպես նաև կրտսեր գիտաշխատողներ Վեներա (Արուսյակ) Սահակյանն ու Սվետլանա Վարդանյանը: 1991-ից այս բաժինը վերանվանվում է Բանահյուսության տեսության և պատմության բաժին և շարունակում է այդպես կոչվել մինչև 2023 թ. (այժմ՝ Բանագիտության բաժին):

Գիտական գործունեության ընդհանուր գծերը

1971-1972 թթ. Ռոզա Գրիգորյանն ակտիվ մասնակցություն է ունեցել Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվի վերլուծական վավերագրման գործին, որով զբաղվում էր ինստիտուտի այդ ժամանակվա միակ բանագիտական՝ Հայ բանահյուսության բաժինը: Այնուհետև 1972-ին Բանահյուսական սկզբնաղբյուրների վավերագրման բաժնի ստեղծումից հետո՝ 1973-1976 թթ. Ռ. Գրիգորյանն ընդգրկվեց հայ ժողովրդական 16.000 երգ-խաղիկների մոտիվային համաբարբառի ու գիտական համահավաք կազմելու կոլեկտիվ աշխատանքի մեջ (ղեկավարներ՝ բ.գ.դ. Ի.Գ. Լևին, բ.գ.դ. Ս.Բ. Հարությունյան), ընդ որում՝ 1974-ից գլխավորեց այդ աշխատանքը: Երգ-խաղիկների մոտիվային համաբարբառի հիման վրա կազմվեց մինչև հինգ տարբերակ ունեցող երգերի համահավաք ժողովածու, որը, ցավոք, տակավին հրատարակված չէ:

Ռոզա Գրիգորյանի գիտահետազոտական գործունեության երկու հիմնական խոշոր ոլորտները, սակայն, համապատասխանում են նրա գիտական աստիճանաշնորհման երկու գլխավոր իրադարձություններին: 1964 թ. փետրվարի 21-ին Ռ. Գրիգորյանը Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի և Լեզվի ինստիտուտի միացյալ խորհրդում պաշտպանում է «Հոմերոսը և հայ գրականությունը» թեմայով թեկնածուական ատենախոսությունը, իսկ 1996 թ. դեկտեմբերի 10-ին Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի 003 մասնագիտական խորհրդում պաշտպանած ատենախոսության համար («Հայ մանկական բանահյուսությունը») 1997-ին Ռ. Գրիգորյանին շնորհվում է բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան:

Բանագետ Ռոզա Գրիգորյանի գիտահետազոտական աշխատանքներն ընթացել են հենց այդ երկու հիմնական ուղղություններով.

1. Հունա-հայկական գրական կապերի ուսումնասիրություն,

2. Բանահյուսական առանձին ժանրերի՝ հատկապես օրորերգերի բնագրերի պատրաստում և հետազոտություն:

Որպես բանահավաք՝ Ռոզա Գրիգորյանը նշանակալից ավանդ ունի նաև ներկայիս Գեղարքունիքի մարզում բանահյուսական նոր նյութերի հայտնաբերման, գրառման և ժողովածու կազմելու գործում:

Ռ. Գրիգորյանը գիտական զեկուցումներով հանդես է եկել համամիութենական և հանրապետական ազգագրական-բանագիտական մի շարք նստաշրջաններում:

Հունա-հայկական գրական կապերի ուսումնասիրությունը

Ռ. Գրիգորյանի գիտական հետաքրքրությունների ոլորտում ի սկզբանե եղել են հունա-հայկական գրական կապերը: Այս հարցերին են նվիրված նրա թեկնածուական ատենախոսությունը[5], ինչպես նաև մամուլում և գիտական պարբերականներում հրատարակված հոդվածները[6]: Նշված ուսումնասիրությունների մեջ քննվում են հայկական և հունական մշակույթների, էթիկայի տարրերը, գրական փոխառնչություններն ու աղերսները, հունական գրականության, մասնավորապես Հոմերոսի դերն ու ազդեցությունը հայ հին, միջնադարյան մատենագրության և պոեզիայի վրա:

Հույն-հայկական գրական կապերի, հայ գրականության մեջ Հոմերոսի վիպերգությունների ազդեցության և այդ վիպերգությունների հայերեն թարգմանությունների վերաբերյալ Ռ. Գրիգորյանը «Պատմա-բանասիրական հանդես» և «Տեղեկագիր» գիտական պարբերականներում հրատարակել է 4 ընդարձակ հոդվածներ[7], որոնք գերմաներեն արտատպվել են Բեռլինի «Biblioteca classica orientalis» ամսագրի համարներում: Վերոնշյալ գերմաներեն հոդվածները մեզ չհաջողվեց գտնել:

Ռ. Գրիգորյանը միանգամայն ճիշտ է նկատել, որ միջնադարյան հայ պոեզիայի մեջ հունական դիցաբանությունն ու գրականությունը իրենց արժանի տեղն ունեն, իսկ Հոմերոսն իր մեծությամբ գիտակցվել և ընդունվել է որպես հեղինակություն: Բերված փաստերի հիման վրա նա փորձել է ցույց տալ, որ հունական մշակույթն ու դիցաբանությունը և հատկապես Հոմերոսը, դեռևս V դարից սկսած, մեծ ազդեցություն են ունեցել Արևելքի, մասնավորապես՝ Հայաստանի V-XVI դդ. մատենագիրների ու մեկնիչների ստեղծագործությունների վրա, որոնք բարձր են գնահատել այդ առաջավոր մշակույթը՝ իրենց երկերում ու մեկնություններում օգտագործելով հունական արվեստի և գրականության տարրեր:

Ռ. Գրիգորյանը նկատում է, որ Հոմերոսի և հունական գրականության հանդեպ մեծ հետաքրքրություն են ունեցել նաև Մխիթարյան միաբանության անդամները, որոնք հաճախ իրենց երկերի նյութը վերցրել են հին հունական աշխարհի պատմությունից ու դիցաբանությունից, Հոմերոսի «Իլիականի» նմանողությամբ գովերգել են հայրենի երկրի անկախության ու ազատության համար պայքարող իրենց հերոսներին: Մխիթարյան միաբանության անդամները համարվում են նաև Հոմերոսի պոեմների առաջին թարգմանիչները: Համեմատություն անցկացնելով թարգմանիչների (Ե. Թովմաճյան, Ա. Բագրատունի, Ա. Ղազիկյան) պոեմների թարգմանությունների միջև և նշելով մի քանի բացթողումներ ու թերություններ՝ Ռ. Գրիգորյանն ընդգծում

[5] Տե՛ս Григорян 1963:

[6] Գրիգորյան, Շտիկյան 1958; Գրիգորյան 1960; 1963ա; 1963բ; 1965; 1997; 1982:

[7] Գրիգորյան, Շտիկյան 1958; Գրիգորյան 1960; 1963ա-բ:

է, որ դրանք, այնուամենայնիվ, լրացնում են միմյանց, տալիս են վիպերգությունների ամբողջական պատկերը և պատվավոր տեղ ունեն հայ թարգմանական գրականության մեջ:

Հոմերագիտության անխոնջ մշակ էր բազմավաստակ գիտնական Համազասպ Ասատուրի Համբարձումյանը, որի կյանքի, գրական, հանրային, գիտամանկավարժական, թարգմանական գործունեությանն է նվիրված Ռ. Գրիգորյանի հրատարակած «Կենսամատենագիտություն» գրքույկը[8]: Երախտաշատ մտավորականի մշակութային ժառանգությունը հանգամանալից ու բազմակողմանիորեն ներկայացնելուց զատ՝ գրքույկում ներկայացված են նաև նրա մասին եղած գրականության, տպագիր և ձեռագիր աշխատությունների այբբենական ցանկերը: Իր հորեղբորը և առաջին գիտական ղեկավարին Ռ. Գրիգորյանն անդրադարձել է նաև գիտական զեկուցմամբ և գրախոսություններով[9]:

1988-ից Ռոզա Գրիգորյանը վերահրատարակության էր պատրաստում Հոմերոսի «Ոդիսականը». դրա վերջնակետին այդպես էլ չհասավ իր կյանքի օրոք:

Մանկական բանահյուսության ուսումնասիրությունը

Ռոզա Գրիգորյանին առաջին հերթին ճանաչում են իբրև մանկական բանահյուսության ուսումնասիրող. այս թեմայով նա հրատարակել է երկու մենագրություն[10] և մի շարք հոդվածներ ու զեկուցման հիմնադրույթներ[11]: Երկարամյա հետևողական ու անձնվեր աշխատանքի շնորհիվ Ռ. Գրիգորյանը ստեղծել է հայ մանկական բանահյուսության գիտական ամբողջական մի ուսմունք, որն արտացոլված է արդեն 1970-ին հրատարակված «Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր» խորագրով արժեքավոր համահավաք ժողովածուի մեջ. այն կարևորագույն ներդրում էր հայ բանագիտության մեջ՝ որպես մանկական բանահյուսությանը նվիրված առաջին ամբողջական աշխատություն: Գիրքը բաղկացած է առաջաբանից (էջ 7-11), ներածությունից (էջ 12-45), տարբերակային բնագրերից (էջ 49-359), աղբյուրների համառոտագրությունների ցանկից (էջ 360-362), ծանոթագրություններից (էջ 365-390), ռուսերեն ու անգլերեն ամփոփումներից (էջ 391-398), երկու բառարաններից՝ բարբառային բառերի և մանկական խոսվածքի (էջ 411-414), նաև տեղանունների ու առարկայական ցանկերից (էջ 417-423), ինչպես և երգերի այբբենական ցանկից (էջ 424-444) ու բովանդակությունից[12]:

[8] Գրիգորյան 1980 (կազմ.):
[9] Գրիգորյան 1965; 1966; 2001:
[10] Գրիգորյան 1970 (կազմ.), Գրիգորյան 2002:
[11] Գրիգորյան 1986բ; 1990; 1993; 1995:
[12] Գրիգորյան 1970 (կազմ.):

Ըստ էության, այստեղ Ռ. Գրիգորյանը ոչ միայն սահմանում է օրորի ժանրը (օրորերգ, օրոր կամ օրորոցային երգ)՝ որպես ժողովրդական ստեղծագործության քնարական երգատեսակ, այլև անդրադառնում է մանկական բանահյուսության մյուս տեսակներին: «Օրորոցային երգ» ասելով՝ նա հասկանում է նաև երգերի առավել լայն խումբ[13], որի մեջ մտնում են ոչ միայն օրորերգերը: Այսպես, ըստ հեղինակի դասակարգման, իր ուսումնասիրած երգերի լայն ներկապնակը, որն ընդգրկվել է ժողովածուի մեջ, ունի հետևյալ տեսքը.

I. Օրորոցային երգեր՝ ա) Օրորոցայիններ, բ) Մանկախաղաց երգեր, գ) Մանկան քայլքի և լոգանքի երգեր, II. Մանկական խաղերգեր՝ ա) Հաշվերգեր և ձեռնախաղի երգեր, բ) «Հարսանիքի, խնամոցիկ» խաղի երգեր, գ) Զանազան խաղերգեր, դ) Խաղավարտի երգեր, III. Մանկական ծիսական և խառն երգեր՝ ա) Հանգավոր ասույթներ, բ) Հեքիաթի նախերգեր և հարասացություններ, գ) Ծաղրերգեր, դ) Բնությանը, երկնային լուսատուներին և կենդանական աշխարհին նվիրված երգեր, ե) Ծիսական երգեր, Հավելված՝ ա) Խառը երգեր, բ) Մանկան ողբի և պարի երգեր[14]:

Աշխատության մեջ ի մի են բերված շուրջ մեկ հարյուրամյակի ընթացքում կուտակված՝ անհատ բանահավաքների, բանահյուսական խմբարշավների արխիվային, ինչպես նաև հեղինակի գրառած մանկական բանահյուսական նյութերի բնագրերն՝ իրենց բազմաթիվ տարբերակներով, որոնք ենթարկվել են բնագրագիտական որոշակի սկզբունքների և համակարգվել ըստ երգերի ձևի ու բնույթի, ժանրային առանձնահատկությունների ու մանկական խաղերգերի տեսակների: Ժողովածուի «Հավելված» հեղինակը ներառել է գրական մշակման ենթարկված, օրորոցային համարված, ինչպես նաև մանկական ողբի ու պարի բազմաթիվ երգեր: Ծանոթագրությունների բաժնում մանրամասնորեն տրվում են տվյալ երգի հետ կապված տեղեկություններ ու բացատրություններ երգերում առկա ազգագրական ու այլ կարգի հարցերի, հրատարակությունների, ասացողի և գրառողի վերաբերյալ:

Այս ժողովածուի հրատարակումից հետո շուրջ երեսնամյա բանահավաքչական աշխատանքի ընթացքում Ռ. Գրիգորյանը կատարում է մանկական բանահյուսության բազմաթիվ արժեքավոր նմուշների նոր գրառումներ, որոնք գիտական շրջանառության մեջ են մտնում մի շարք հրապարակումներով և, ի վերջո, դոկտորական ատենախոսության պաշտպանությամբ[15]: Ատենախոսության համառոտված տարբերակը 6 տարի անց լույս է տեսնում

[13] Սրանք իր վերջին մենագրության մեջ Ռ. Գրիգորյանը կոչում է «մանկատածության երգեր» (Գրիգորյան 2002, 19-21):

[14] Գրիգորյան 1970 (կազմ.), 8:

[15] Տե՛ս Գրիգորյան 1996:

առանձին մենագրության տեսքով[16]: Այստեղ հեղինակը ներկայացնում է հայ մանկական բանահյուսության գրառման պատմությունը, արժևորում նրա պատմամշակութային ընդհանուր նշանակությունը, համակարգված հետազոտության է ենթարկում հայ մանկական բանահյուսության ամբողջական համալիրը՝ ըստ ժանրային, կառուցվածքային ու կիրառական առանձնահատկությունների, և բացահայտում այդ ստեղծագործությունների գաղափարական, դաստիարակչական, հոգեբանական, գեղարվեստական, ազգային և ընդհանուր մշակութաբանական գծերն ու հատկանիշները:

Մենագրության մեջ հստակեցվում են մանկական բանահյուսության տարբեր ժանրերին տրվող եզրույթներն ու դրանց նշանակությունը, որոշարկվում են «մանուկների համար» և «մանուկների կողմից» ստեղծված բանահյուսական ստեղծագործությունների սահմանները: Մանկական բանահյուսության տեսակների եզրաբանությունը բանագետը ներկայացնում է հետևյալ ձևակերպումներով և ենթաբաժանումներով.

1. Մանկատածության երգեր՝ ա) հայօրորներ, բ) մանկախաղաց, գովքի, խայտանքի ու լոգանքի երգեր, 2. Խաղերգեր՝ ա) ձեռնախաղի երգեր, բ) հաշվերգեր, գ) ծաղրերգեր և ձաղկերգեր, 3. Բնությանը և երկնային լուսատուներին նվիրված երգեր, 4. Մանկական ծիսերգեր, 5. Շարաբարդված (շեղջակուտակ) երգեր, 6. Մտավարժական, խոսքավարժական, արագախոսական ասելուկներ՝ ա) հանելուկներ, բ) շուտասելուկներ, գ) բառախաղ-ասելուկներ[17]:

Աշխատանքում հանգամանալից ուսումնասիրվում են մանկական բանահյուսության բովանդակության մեջ արծարծված տարբեր իրողություններն ու խնդիրները, գեղարվեստական ձևերն ու հատկանիշները: Քննության են ենթարկվում նաև մանկական խոսվածքն ու ծածկալեզուն, որոնք, ըստ հեղինակի, մշտապես հարատևող մանկական հաղորդակցության բնագավառներ են, ունեն իրենց կրողներն ու խաղային իրավիճակները և դասվում են մանկական բանահյուսության խաղերգային ու ասույթաբանական ստեղծագործությունների շարքին: Թե՛ մանկական խոսվածքը և թե՛ ծածկալեզուն գնահատվում են իբրև կենդանի հաղորդակցման միջոցներ, որոնք ունեն որոշակի խաղային միջավայր ու հաղորդակցության յուրահատուկ բառակազմ[18]:

Մանկական բանահյուսության ներկա վիճակի խնդրին առնչվող՝ հեղինակի դիտարկումներն ընդգրկում են 1960-1996 թթ. ընկած բանահավաքչության երկարատև մի ժամանակահատված: Հեղինակը նկատում է, որ մանկական բանահյուսության տարբեր տեսակների ճակատագիրը նույնը չէ.

[16] Գրիգորյան 2002:
[17] Գրիգորյան 2002, 28:
[18] Գրիգորյան 2002, 142-146:

այդ ժամանակ արդեն գրեթե ոչ մի տեսակ լիարժեք չի կենցաղավարել, իսկ որոշ ժանրեր և ենթատեսակներ, զրկվելով հանրային հիմքից, գրեթե զրկվել են նաև գործուն կենցաղավարումից[19]:

Ռ. Գրիգորյանն իր մենագրությունը եզրափակում է մանկական բանահյուսության և գրականության փոխառնչություններին նվիրված խնդիրների քննությամբ:

Թեմատիկ մեկ այլ ժողովածու՝ «Մանկապատումը», ընդգրկում է մանկական երգերի ու խաղերի՝ հեղինակի մշակած նմուշներ, որոնք ունեն խրատական, ճանաչողական արժեք և իրենց ոտրախ, գրավիչ բովանդակությամբ նպաստում են երեխաների զարգացմանն ու դաստիարակությանը[20]:

Բանահավաքչական և վիպահավաքչական աշխատանք

Հետազոտական աշխատանքին զուգահեռ՝ Ռ. Գրիգորյանը եռանդուն մասնակցություն է բերել դաշտային բանահավաքչական աշխատանքներին: Այս առումով կարևոր են բանահյուսական արշավախմբերը, ինչպես նաև իր նախաձեռնած տևական և արդյունավետ բանահավաքչական աշխատանքները Հայաստանի տարբեր շրջաններում (Աշտարակ, Թալին, Սևանի ավազան), որտեղ նա գրառել է տարաժանր բանահյուսական ու երաժշտական նյութեր:

Հատկապես մեծ դեր ունի Ռոզա Գրիգորյանը Սևանի ավազանի՝ պատմական Գեղարքունիքի բանահյուսական և ազգագրական նյութերի գրառման գործում: Տարիներ շարունակ զբաղվելով այս տարածաշրջանի հյուսիսային, արևմտյան և հարավային շրջանների (Սևան, Կամո-Գավառ, Մարտունի, Վարդենիս) բանահյուսական նյութերի գրառմամբ՝ Ռ. Գրիգորյանը նպատակ է ունեցել ժամանակի կորստից փրկելու տվյալ տեղավայրի բանավոր ավանդության մեջ տակավին գոյատևող հարուստ ու բազմազան ստեղծագործությունները՝ փորձելով պարզել ազգագրական տարբեր խմբերի բանահյուսական ավանդապահության աստիճանը, գրառված նյութերի բանահյուսական որակը՝ կապված աշխարհագրական որոշակի տեղաշարժերի հետ, ինչպես նաև բանասացների սեռատարիքային հատկանիշներն ու նրանց կապը սոցիալ-պատմական, հոգեբանական որոշ խնդիրների հետ:

Գեղարքունիքում իր կատարած բանահավաքչական աշխատանքին Ռ. Գրիգորյանն անդրադարձել է մի շարք հոդվածներում[21], սակայն գրառված բանահյուսական նյութերի զգալի մասը ամբողջաբար հրատարակվել է «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի 14-րդ պրակում՝

[19] Գրիգորյան 2002, 147-152:

[20] Գրիգորյան 1991:

[21] Григорян 1978; Գրիգորյան 1976; 1982; 1986ա; 1989:

«Գեղարքունիք» խորագրով[22], իսկ մանկական բանահյուսության շատ նմուշներ էլ դրանից ավելի քան 10 տարի առաջ տպագրվել էին «Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր» գիտական համահավաք ժողովածուում[23], որի մասին արդեն վերը խոսեցինք:

Սևանի ավազանի բնակավայրերից հավաքագրված՝ տարբեր ժանրերի բանահյուսական և ազգագրական նյութերը ներկայացնելուն զուգահեռ՝ հեղինակը տեղեկություններ է հաղորդում նաև բնակավայրերի, դրանց բնակչության կազմի, բարբառի, տեղաշարժերի և բանասացների վերաբերյալ[24]:

Ազգաբնակչության այս հատվածի համար բնորոշ է նախնիներից ժառանգած բանահյուսական-բարբառային ավանդույթների պահպանողականությունը և մեծագույն հարգանքն ու ակնածանքը ժողովրդի հոգևոր մշակույթի արժեքների հանդեպ: Հենց այս տեսակետից էլ վերոնշյալ ժողովածուն արժեքավոր է իբրև Գեղարքունիքի բնակիչների բանահյուսական արժեքների արտապատկերում:

Ներկայիս Գեղարքունիքի մարզի ավանդական բանահյուսության առանձնահատկություններն ուսումնասիրելիս Ռ. Գրիգորյանն օգտվել է բանագիտության մեջ կիրառվող քանակական վերլուծության մեթոդից, որը հեղինակին հնարավորություն է ընձեռել բանահյուսական կարևոր իրողությունների (նյութի գրառման և ծագման վայր, տարեթիվ, բանասացի սեռատարիքային խումբ, կատարման եղանակ ևն) քանակական ցուցիչների, միմյանց միջև եղած ներքին հարաբերությունների բացահայտմամբ ցույց տալու նյութի կրող փոփոխությունների պատկերը՝ ժամանակի ու տարածության գործոնների ազդեցության ներքո: Հեղինակը, քանակական վերլուծության եղանակով նյութերի և բանասացների սեռատարիքային փոխհարաբերություններն ու ավանդապահության հետ կապված որոշ օրինաչափություններ լուսաբանելու նպատակով, կատարել է նուրբ վերլուծություններ: Նյութերի գրառման ժամանակաշրջանը, բանասացների սեռատարիքային հատկանիշները լուսաբանող համադրական աղյուսակները, ձայնագրված երգերի նոտագրություններն ավելի են ընդգծում ժողովածուի աղբյուրագիտական և պատմաազգագրական բնույթը:

Մեծաքանակ ժողովրդագիտական նյութ պարունակող այս ժողովածուն քանակային առումով ընդգրկուն է, բազմաժանր ու բազմաբովանդակ: Ներկայացված են էպոսագիտական արժեք ունեցող տարաբնույթ ստեղծագործություններ՝ հայկական («Սասնա ծռեր»), իրանական («Ռուստամ Զալ») և քրդական («Աբուաեթե Բնալալ», «Ալիֆն ու Քլեֆը») ժողովրդական վեպերի տարբերակներ, հեքիաթներ, զրույցներ, առակներ, ավանդազրույցներ, խա-

[22] Գրիգորյան 1983 (կազմ.):
[23] Գրիգորյան 1970:
[24] Գրիգորյան 1983 (կազմ.):

ղիկներ, պարերգեր, վիպական, հայրենասիրական, զինվորական և զանազան այլ երգեր, բանաձևային կառույցներ, ժողովրդական ծեսեր, հավատալիքներ և բժշկություն:

Գեղարքունիքի մարզում իրականացված բանահյուսական նպատակային գիտարշավների ընթացքում (1971-1991 թթ.) Ռ. Գրիգորյանը գրառել է «Սասնա ծռեր» էպոսի յոթ նորահայտ պատումներ, որոնք հրատարակել է առանձին գրքով՝ իր դստեր հետ հեղինակցությամբ: Նշված պատումներն արձանագրվել են Գավառի, Մարտունու և Վարդենիսի շրջաններում՝ Արևմտյան Հայաստանից գաղթած վերաբնակիչների շառավիղներից[25]:

Այս գրառված պատումներում էպոսի չորս ճյուղերն ու դրանց ավանդական հաջորդականությունը լիարժեք պահպանված են՝ բացառությամբ մեկ պատումի, որտեղ բացակայում է Մեծ Մհերի ճյուղը: Յոթ պատումներից երեքը նույն ավանդական վիպական սկիզբն ունեն (Բաղդադի խալիֆի և հայոց Գագիկ թագավորի աղջկա ամուսնության և այդ հենքի վրա ծավալված հետագա բախումներ), մինչդեռ մյուս չորս տարբերակները շեղվում են տարածված սկզբից: Դրանցում պատմվում է տոհմի հիմնադիր երկվորյակ եղբայրների կողմից իրենց կռապաշտ հոր դաշտերը «ղշերից» ազատելու դրվագը: Նման սկիզբ ունեցող պատումների վիպասացները, ինչպես նկատում է Ռ. Գրիգորյանը, սերում են Ալաշկերտից, ինչը հավաստում է տվյալ տարածաշրջանում այդ տարբերակի տարածվածության և նոր հայրենիք տեղափոխվելու մասին: *«Այս պետք է համարել ներկայացվող պատումների հիմնական արժանիքներից մեկը, եթե նկատի ունենանք, որ այն համալրում և նոր երանգ է հաղորդում արդեն հայտնի տիպաբանական խմբին: Այնուհետև նորահայտ պատումները ընդլայնում են նրա տարածման արդեն հայտնի աշխարհագրական սահմանները՝ հարստացնելով նրանց երեք բնակավայրերով՝ Դիադին գյուղաքաղաք, Մանգասար և Ղումլիպուճախ գյուղեր: Վերոհիշյալ երկու առանձնահատկություններով էլ արժևորվում են վեպի ներկայացվող նորահայտ պատումները»*[26]:

Գեղարքունիքի վիպասացների միջավայրում կատարած դիտարկումները Ռ. Գրիգորյանին թույլ են տալիս ասել, որ էպոսի մոռացման ներկա փուլում Գեղարքունիքի տարածաշրջանում տակավին պատմվում է այն, և որ գրառված պատումների վիպասացները սերում են վաղեմի վիպասաց ընտանիքներից, օժտված են լավ հիշողությամբ, վիպելու ձիրքով ու վարպետությամբ և իրենց հաղորդած նյութի հանդեպ ունեն մեծ հավատ: Ազգագրական տարբեր խմբերում վեպի փոխներթափանցումը այս տարածաշրջանում պետք է դիտվի իբրև վիպահաղորդման ու վիպապահպանման

[25] Գրիգորյան, Մելիք-Մուրադյան 2000 (կազմ.), 7-8:
[26] Գրիգորյան, Մելիք-Մուրադյան 2000 (կազմ.), 9:

դրական ազդակ, իբրև վեպը իսպառ մոռացումից փրկելու՝ վիպասացների վերջին ջանքերից մեկը:

Վերոնշյալ ժողովածուների հրատարակություններով Ռ. Գրիգորյանը չավարտեց իր ասելիքն ու հետագա գործունեությունը Գեղարքունիքում: Մինչև կյանքի վերջը նա նվիրվեց իր ծննդավայրի հոգևոր ոչ-նյութական մշակույթի ժառանգության հայտնաբերման, այն կորստյան վտանգից փրկելու և գիտական շրջանառության մեջ դնելու կարևոր ու պատվաբեր գործին:

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի՝ Ռ. Գրիգորյանի արխիվում գտնվող բանահյուսական նյութերի ձեռագիր հավաքածուներում առկա են Սևանի ավազանից (մասնավորապես՝ Վարդենիսի շրջանից) գրառված տարաբնույթ նյութեր՝ հեքիաթներ, հուշապատումներ, երգեր, առած-ասացվածքներ, անեծքներ, օրհնանքներ, հանելուկներ ևն: Հիրավի, դրանց լույսընծայումը կարող է նոր էջ բացել հայ բանավոր մշակույթի ուսումնասիրության բնագավառում: Այս նյութերն իրենց տեղեկատվական, պատմագիտական, բանագիտական և լեզվական արժեքներով կարող են նպաստել հայ բանարվեստի շատ հարցերի պարզաբանմանը:

1977 թ. Ռ. Գրիգորյանը Հայ բանահյուսության բաժնի վարիչ Արտաշես Նազինյանի հետ համատեղ հրատարակում է «Հայ ժողովրդական հեքիաթներ» բազմահատորյակի հերթական՝ 8-րդ ծավալուն հատորը, որը ներկայացնում է պատմական Հայաստանի Գուգարք աշխարհի բնակավայրերի՝ այն ժամանակվա Թումանյանի, Գուգարքի, Ստեփանավանի, մասամբ՝ Սպիտակի ու Նոյեմբերյանի, ինչպես նաև Վրաստանի Հանրապետության Մարնեուլի, Բոլնիսի շրջանների հեքիաթները[27]:

Ռոզա Հայրապետի Գրիգորյանը մահկանացուն կնքեց 2003 թ. օգոստոսի 12-ին, Երևանում: Արժանավոր բանագետ-բանասերի՝ Ռ. Գրիգորյանի հիշատակը վառ կմնա իր բոլոր գործընկերների սրտերում:

ՏՈՐՔ ԴԱԼԱԼՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
ԼՈՒՍԻՆԵ ՂՈՒԵՋՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

Ռոզա Գրիգորյանի գիտական հրապարակումների ցանկը

Գրքեր (նաև կազմած և խմբագրած)

Գրիգորյան Ռ.Հ. 1970 (կազմ.), Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր (առաջաբանով, ծանոթագրություններով, ցանկերով, բառարաններով, երկլեզվյա ամփոփումներով), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 467 էջ:

[27] Նազինյան, Գրիգորյան 1977 (կազմ.):

Նազինյան Ա.Մ., Գրիգորյան Ռ.Հ. 1977 (կազմ.), Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VIII, Գուգարք (Լոռի), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 904 էջ:
Գրիգորյան Ռ.Հ. 1980 (կազմ.), Համազասպ Համբարձումյան (կենսամատենագիտություն), Երևան, ԵՊՀ հրատ., 36 էջ:
Գրիգորյան Ռ.Հ. 1983 (կազմ.), Գեղարքունիք, նյութեր և ուսումնասիրություն (առաջաբանով, ծանոթագրություններով և բառարաններով), Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 14, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 264 էջ:
Գրիգորյան Ռ.Հ. 1991, Մանկապատում [բանաստեղծություններ], Երևան, «Արևիկ», 28 էջ:
Գրիգորյան Ռ.Հ., Մելիք-Մուրադյան Ե.Վ. 2000 (կազմ.), Սասնա ծռեր (7 նորահայտ պատումներ), ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, «Գիտություն», 282 էջ:
Գրիգորյան Ռ.Հ. 2002, Հայ մանկական բանահյուսություն (ժողովրդական օրորոցային և մանկական երգեր), Երևան, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 184 էջ:

Հոդվածներ և հաղորդումներ

Գրիգորյան Ռ.Հ., Շտիկյան Ս.Ա. 1958, Հոմերոսի «Իլիական»-ի հայերեն նոր թարգմանությունը, Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ հասարակական գիտությունների, Երևան, N 1 (հունվար), էջ 97-100:
Գրիգորյան Ռ.Հ. 1960, Հին հունա-հայկական գրական կապերից, Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ հասարակական գիտությունների, Երևան, N 10 (հոկտեմբեր), էջ 65-78:
Գրիգորյան Ռ.Հ. 1963ա, Հոմերոսի «Ոդիսական» վիպերգության հայերեն թարգմանությունների մասին, Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ հասարակական գիտությունների, Երևան, N 1 (հունվար), էջ 89-96:
Գրիգորյան Ռ.Հ. 1963բ, Հունա-հայկական գրական կապերի պատմությունից, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, N 3 (22), էջ 291-297:
Գրիգորյան Ռ.Հ. 1986ա, Ժողովրդական էպոսի Գեղարքունիքի ասացողները, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, N 2 (518), էջ 47-50:
Գրիգորյան Ռ.Հ. 1986բ, Օրորոցային երգ, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 12, Երևան, էջ 602_2:
Գրիգորյան Ռ.Հ. 1989, Հուշապատումը և պատմական երգը Գեղարքունիքում, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, N 6 (558), էջ 49-54:
Գրիգորյան Ռ.Հ. 1993, Հայ մանկական բանահյուսության տեսակներն ու եզրերը, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, N 2 (585), էջ 141-150:
Գրիգորյան Ռ.Հ. 1997, «Ոդիսական» հերոսավեպի և հայկական մի քանի հեքիաթների սյուժեների ընդհանրության մասին, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, N 1 (594), էջ 74-80:

Զեկուցման հիմնադրույթներ

Григорян Р.А. 1971, Некоторые виды армянских народно-бытовых песен, Сессия, посвященная итогам полевых археологических и этнографических исследований 1970. Тезисы докладов, Тбилиси, «Мецниереба», с. 177-178.
Григорян Р.А. 1978, Некоторые особенности фольклора населения приозерных районов Севана, Всесоюзная сессия, посвященная итогам полевых этнографических и ан-

тропологических исследований 1976-1977 гг., апрель 1978 г., Тезисы докладов, Ереван, изд. АН Арм. ССР, с. 190-191.

Գրիգորյան Ռ.Հ. 1976, Սևանի ավազանի հայ ժողովրդական բանահյուսությունը, Թեզիսներ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի 1974-1975 թթ. ազգագրական-բանահյուսական դաշտային աշխատանքներին նվիրված գիտական նստաշրջանի (դեկտեմբերի 23-24), խմբ. Ս.Բ. Հարությունյան, Ա.Մ. Նազինյան, Դ.Ս. Վարդումյան, ՀՍՍՀ ԳԱ ՀԱԻ, Երևան, էջ 12-13:

Գրիգորյան Ռ.Հ. 1982, Հունական հերոսավեպի սյուժեները Գեղարքունիքի բանահյուսության մեջ (Սյուժեների տեղայնացման և փոխակերպման քննության փորձ, ըստ 1978-1981 թթ. գրառված բանահյուսական նյութերի), Գիտական նստաշրջան՝ նվիրված ՍՍՀՄ կազմավորման 60-ամյակին. Զեկուցումների թեզիսներ (1982 թ. մայիսի 19-21), ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, խմբ. Ս.Բ. Հարությունյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 23-24:

Գրիգորյան Ռ.Հ. 1990, Հայ մանկական բանահյուսության բնութագրման հարցի շուրջ, ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական նստաշրջան. հիմնադրույթներ, Երևան, էջ 15-16:

Գրիգորյան Ռ.Հ. 1995, Հմայական հավատալիքների վերապրուկային տարրերը օրորոցայիններում (մանկական բանահյուսության ուսումնասիրման հարցի շուրջ), Հանրապետական գիտական նստաշրջան՝ նվիրված 1990-1994 թթ. ազգագրական և բանագիտական հետազոտությունների արդյունքներին. Զեկուցումների հիմնադրույթներ (խմբ. Ս.Բ. Հարությունյան, Դ.Ս. Վարդումյան), Երևան, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, էջ 16-17:

Գրիգորյան Ռ.Հ. 2001, Հայ մշակույթի բազմավաստակ երախտավորը՝ Համազասպ Համբարձումյան, «Հայ ժողովրդական մշակույթ» XI հանրապետական գիտական նստաշրջան, զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, «Գիտություն», էջ 24-27:

Սեղմագրեր

Григорян Р.А. 1963, Гомер и армянская литература (диссертация, представленная на соискание ученой степени кандидата филологических наук), Институт литературы им. М. Абегяна, Академия наук Армянской ССР, Ереван, 22 с.

Գրիգորյան Ռ.Հ. 1996, Հայ մանկական բանահյուսությունը (մասնագիտություն՝ Ժ.01.09 - բանագիտություն), Բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ (աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ ՀԱԻ Բանահյուսական սկզբնաղբյուրների վավերագրման բաժնում), 36 էջ:

Գրախոսություններ

Գրիգորյան Ռ.Հ. 1965, Խոշոր ավանդ հայ հոմերագիտության մեջ, Սովետական Հայաստան, կիրակի, 18 ապրիլի, N 91 (13436), էջ 4:

Գրիգորյան Ռ.Հ. 1966, Հ.Ա. Համբարձումյան, Մտորումներ Հոմերոսի մասին, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, N 2 (33), էջ 272-274:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ «ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ. ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐ»

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում ս.թ. նոյեմբերի 10-ից 11-ը տեղի ունեցավ Հայկական լեռնաշխարհում վիմագրական մշակույթը լուսաբանող միջազգային գիտաժողով՝ նվիրված ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 80-ամյակին: Ուղիղ ութ տասնամյակ առաջ՝ 1943 թ. նոյեմբերի 10-ին, ՀՍՍՀ կառավարության որոշմամբ ստեղծվում է Հայաստանի գիտությունների ակադեմիան, որի առաջին նախագահ է ընտրվում անվանի արևելագետ, ակադեմիկոս Հովսեփ Օրբելին (1887-1961): Նշանավոր կովկասագետ, ակադեմիկոս Նիկողայոս Մառի աշակերտ Հ. Օրբելին 1906 թվականից, մասնակցելով Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անիի հնագիտական պեղումներին, հիրավի դարձավ միջնադարյան Անիի վիմագրական ժառանգության առաջին վերծանողը (շուրջ 300 միավոր): Արդյունքը «Դիվան հայ վիմագրության» ակադեմիական մատենաշարի առաջին՝ Անի քաղաքի վիմագրերին նվիրված պրակն էր, որը հրատարակվեց Օրբելու մահից տարիներ անց՝ 1966 թ., վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանի խմբագրությամբ և ընդարձակ առաջաբանով:

Թեմատիկ առումով գիտաժողովն աննախադեպ էր: Սա Հայաստանում անցկացված առաջին վիմագրագիտական միջազգային համաժողովն էր, որը բացման խոսքում կարևորեցին նաև ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական ղեկավար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ. Պավել Ավետիսյանը, նույն ինստիտուտի տնօրեն, պ.գ.թ. Արսեն Բոբոխյանը և վիմագրության բաժնի վարիչի պաշտոնակատար, պ.գ.թ. Արսեն Հարությունյանը: Գիտաժողովի մասնակից 25 զեկուցողները ներկայացնում էին ինչպես Հայաստանի տարբեր գիտական հաստատությունները՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության, պատմության, լեզվի, արվեստի, արևելագիտության ինստիտուտները, Մաշտոցյան Մատենադարանը, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը, Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնը, Վ. Բրյուսովի անվան համալսարանը, այնպես էլ արտերկրի նշանավոր գիտակրթական կենտրոնները՝ Մյունստերի և Բեռլինի ազատ համալսարանները (Գերմանիա), Լոզանի դաշնային տեխնոլոգիական ինստիտուտը (Շվեյցարիա), Թբիլիսիի Գ. Ծերեթելիի անվան արևելագիտության ինստիտուտն ու Իլյա պետական համալսարանը (Վրաստան):

Գիտաժողովի յոթ նիստերը թեմատիկ առումով բազմազան էին՝ ժայռապատկերագրությունից մինչև ոչ պաշտոնական վիմագրություն՝ գրաֆիտի, ժամանակագրորեն՝ Ք.ա. VII-V հազարամյակից մինչև մեր օրեր: Առանցքում, անշուշտ, վիմագրական ավանդույթն էր՝ քարի վրա պատկեր ու գիր թողնելու մարդկային մտածողության ու գործելակերպի դրսևորումներից մեկը, որը վաղնջական ժամանակներից տեղեկույթի փոխանցման պարզագույն՝ գծապատկերային ձևերից հասել է գրային համակարգի զարգացման մի քանի

փուլերի՝ սեպագրություն, արամեերեն, հունարեն, լատիներեն և, վերջապես, հայ վիմագրություն:

Ժայռապատկերագրությանը նվիրված առաջին նիստում ընդգրկված չորս զեկուցումները նվիրված էին ժայռապատկերի միջոցով տեղեկույթի փոխանցման ու ընկալման վաղ դրսևորումներին (Կարեն Թոխաթյան, ՊԻ, Աննա Խեչոյան, ՀԱԻ), ինչպես նաև ասորեստանյան ժայռային սեպագրերի էվոլյուցիային (Ալեքսանդր Յոհաննես Էդմոնդս, Մյունստերի համալսարան) ու գաղափարագրային մտածողության գեղարվեստական դրսևորումներին (Գայանե Պողոսյան, արվ. ինս.): **Նախամաշտոցյան գրային համակարգերից** Վանի թագավորության սեպագրությանն էր նվիրված երկրորդ նիստը, որտեղ ներկայացված առաջին զեկուցումն ըստ էության սահմանում էր սեպագրի՝ իբրև ուրարտական կայսրության սահմանագոտի լինելը Բիայնիլի և Էթիունի երկրների միջև (Միքայել Բադալյան, «Էրեբունի» ՊՀԱԹ): Այս համատեքստում շեշտադրվեց գերմանացի նշանավոր արևելագետ-հայագետ Կ.Ֆ. Լեման-Հաուպտի կատարած հետազոտությունները սեպագրագիտության ասպարեզում՝ վեր հանելով գիտնականի եզրահանգումները Վանի թագավորության երկլեզվյան արձանագրությունների վերաբերյալ (Վահե Սարգսյան, «Էրեբունի» ՊՀԱԹ): Թերևս միակ բացառությունն այս նիստին ոչ վիմագիր՝ վրացական արծաթե սպասքի արամեերեն (արամեատառ) արձանագրություններին նվիրված զեկուցումն էր (Հելեն Գիունաշվիլի, Թբիլիսիի ԱԻ, Իլյա պետական համալսարան):

Հայ վիմագրությանը նվիրված նիստերը թեմատիկ առումով ևս բազմազան էին՝ վիմագրական լեզվաբանություն, նորահայտ և այլալեզու վիմագրեր, գրաֆիտի, վիմագրերի թվայնացման խնդիրներ և այլն: Առաջին մասը նվիրված էր հայ հնագիտական ու մատենագրական հուշարձանների համապատկերում վիմագրերի առանցքային նշանակությանը. ներկայացվեցին Եղիպատրուշից հայտնի 855 թվակիր տապանագիրը (Աշոտ Մանուչարյան, ՀԱԻ), Խամշի վանքից հայտնի Աղվանից Ներսես կաթողիկոսի 1251 թ. վիմագիր «կոնդակը» (Հուսիկ Մելքոնյան, ՀԱԻ), Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի վիմագրական ժառանգությունը (Խաչիկ Հարությունյան, ՊՄԺԳՀԿ/ՄՄ), Սոթք գավառի վիմագրերի ուսումնասիրության պատմությունը (Ավետիս Գրիգորյան, ՀԱԻ), ինչպես նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ XVIII դարավերջին իրականացված շինարարության մեկենասների հետ Ղուկաս Ա Կարնեցի Ամենայն Հայոց կաթողիկոսի (1780-1799) նամակագրությունը, որտեղ բացառիկ տեղեկություններ կան նաև վիմագիր կազմելու մանրամասների շուրջ (Արսեն Հարությունյան, ՀԱԻ/ՄՄ):

Ինքնին ուշագրավ էին նաև հայ վիմագրական լեզվաբանությանը նվիրված զեկուցումները՝ նվիրված Բղենո Նորավանքի վիմագրերի լեզվաբանական խնդիրներին (Մաթիաս Ֆրից, Բեռլինի ազատ համալսարան), վիմագրերում ջրանուններին ու ջրային տարածքներին առնչվող եզրույթներին (Տորք Դալալյան, ՀԱԻ/ԼԻ), Հյուսիսային Նախիջևանի և Վայոց ձորի վիմագրերում Ճահուկ-Վայքի միջբարբառի դրսևորումներին (Արտակ Վարդանյան, ԼԻ):

Նորահայտ վիմագրերին նվիրված նիստում ներկայացվեցին վերջին տարիներին հնագիտական պեղումներով և վիմագրագիտական ուսումնասիրություններով փաստագրված վիմագրերը, ի մասնավորի՝ Բարձրաքաշ Ս. Գրիգոր վանքի (Արման Նալբանդյան, ՊՄԺԳՀԿ/ՀԱԻ), Որոտնավանքի (Հայկ Հակոբյան, ՀԱԻ/ՄՄ), Խոզնավարի միջնադարյան հուշարձանների (Սաթենիկ Խուրշուդյան, ՀԱԻ), ինչպես նաև Սարգիս արք. Ջալալյանցի «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» երկհատոր (1842, 1858 թթ.) տեղագրության մեջ առաջին անգամ վկայված վիմագրերը (Սուսաննա Ադամյան, ՀԱԻ):

Այլալեզու վիմագրերին նվիրված նիստում ուշագրավ էին Դաշտադեմի դղյակի պատմության համար առանցքային համարվող հունարեն, արաբերեն ու հայերեն վիմագրերը (Աստղիկ Բաբաջանյան, ՀԱԻ), ինչպես նաև Որոտնավան գյուղի ուշմիջնադարյան արաբատառ տապանագրերը (Տիգրան Միքայելյան, ԱԻ): Գիտաժողովի վերջին նիստն ամփոփվեց XX-XXI դդ. գրաֆիտային արձանագրություններին նվիրված զեկուցումներով (Ամալյա Դիլանյան, ՀԱԻ, Լիլիթ Սիմոնյան, ՀԱԻ, Հայկ Հակոբյան, ՀԱԻ/ՄՄ), ինչպես նաև հայ վիմագիր ժառանգության թվայնացման խնդիրներին ու ձեռքբերումներին առնչվող զեկուցմամբ (Համեստ Թամրազյան, Լոզանի դաշնային տեխնոլոգիական ինստիտուտ, Գայանե Հովհաննիսյան, Բրյուսովի անվան համալսարան):

Գրեթե բոլոր զեկուցումներն ուղեկցվում էին ցուցադրանյութերով, ամփոփվում բուռն քննարկում-հարցադրումներով: Նիստի վերջում ինստիտուտի ազգագրության բաժնի վարիչ, պ.գ.թ. Սուրեն Հոբոսյանը և վիմագրության բաժնի վարիչի պաշտոնակատար, գիտաժողովի աշխատանքները համակարգող, պ.գ.թ. Արսեն Հարությունյանը հանդես եկան ամփոփիչ ելույթներով:

ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

«ՀԱԶԱՐ ՈՒ ՄԻ ԵՐԳ» ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ՆՈՐ ՀԱՏՈՐԸ

Կոմիտասի թանգարան-ինստիտուտը մի շարք բազմաբնույթ հրատարակությունների շարքում 2018 թվականից հանդես է գալիս հայկական ժողովրդական երգերի մատենաշարի ամենամյա թողարկումով:

2022 թ. լույս է տեսել «Հազար ու մի երգ» հայկական ժողովրդական երգերի մատենաշարի հինգերորդ հատորը՝ «Աշխատանքային երգեր» (մաս Ա) խորագրով[1]:

Սույն մատենաշարի նպատակն է ի մի բերել տարբեր ժողովածուներում նախկինում հրատարակված հայ ժողովրդական երգերի ընտիր նմուշները: Պայմանավորված հայկական ավանդական մշակույթում տղամարդկանց և կանանց աշխատանքների գործառական տարբերություններով՝ աշխատանքային երգերը դասակարգվում են առանձին խմբերով՝ կանանց և տղամարդկանց աշխատանքային երգեր: Այս հատորում զետեղվել են տղամարդկանց բնորոշ հայկական ժողովրդական աշխատանքային երգերը: Ինչպես մատենաշարի մյուս հատորները, սա ևս երկլեզու է (հայերեն, անգլերեն), նաև առկա է Հյուբշման-Մեյե-Բենվենիստ (ՀՄԲ) միջազգային գիտական տառադարձումը: Տառադարձման արտասանության ուղեցույցները նույնպես ներկայացված են: Ժողովածուները նախատեսված են Կոմիտասի թանգարան-ինստիտուտի կրթական ծրագրերի, ինչպես նաև հայ ժողովրդական երաժշտությամբ հետաքրքրվողների համար: Թարգմանությունների շնորհիվ ժողովածուները կարող են հասանելի լինել նաև օտարալեզու անձանց:

Այս հատորը բաղկացած է չորս ենթաբաժնից՝ գութաներգեր, սայլերգեր, կալերգեր, գութանին և աշխատանքին նվիրված երգեր: Ինչպես մատենաշարի մյուս բոլոր հատորներում, այստեղ ևս ընդգրկվել է հիսուն երգ: Ներառվել են երգեր Սահակ Ամատունու, Կոմիտաս Վարդապետի, Ստեփան Դեմուրյանի, Սպիրիդոն Մելիքյանի, Միհրան Թումաճանի, Արամ Քոչարյանի, Մարգարիտ Բրուտյանի, Ալինա Փահլևանյանի և այլ բանահավաքների կատարած գրառումներից:

Հատկանշական է, որ ժողովածուն ընդգրկում է երգեր պատմական Հայաստանի մի շարք տարածաշրջաններից՝ Ալաշկերտ-Մոկս, Ապարան, Արցախ, Թալին, Իգդիր, Լոռի, Խլաթ, Կոտայք-Ախտա, Շամշադին, Շիրակ, Ջավախք, Սյունիք, Վասպուրական և այլն:

---

[1] Մատենաշարի առաջին հատորում ընդգրկված են քնարական երգեր, տե՛ս «Հազար ու մի երգ» հայկական ժողովրդական երգերի մատենաշար 2018, հ. Ա, Քնարական երգեր, կազմող, թարգմանիչ և խմբագիր՝ Տաթևիկ Շախկույան, Երևան: Երկրորդ հատորում պարերգեր են, հ. Բ, Պարերգեր 2019, կազմող, թարգմանիչ և խմբագիր՝ Լիլիթ Հարությունյան: Երրորդ և չորրորդ հատորները նվիրված են հարսանեկան երգերին, հ. Գ, Հարսանեկան երգեր (մաս Ա) 2020, Երևան, հ. Դ (մաս Բ), 2021, կազմողներ և խմբագիրներ՝ Լիլիթ Հարությունյան, Աստղիկ Մարտիրոսյան:

Ընտրվել են տղամարդկանց աշխատանքային, ավելի ստույգ՝ հողամշակման հետ կապված երգերը: Դրանք սովորաբար կատարվել են վաղ առավոտյան՝ նախքան արևածագը, և շարունակվել հողագործական աշխատանքի ամբողջ ընթացքում: Մայր բնության հետ լիարժեք հոգեձուլված այս երգերին բնորոշ է նաև գյուղացու «զրույցը» իր տունը պահող և իր համար «ընտանիքի անդամ» հանդիսացող կենդանու հետ:

Ժողովածուի ամենածավալուն բաժինը կազմում են գութաներգերը՝ 30 երգ, որոնք հայտնի են նաև *հորովել* կամ *հոռովել* անվանումով (ստեղծված «հո՛» բացականչության և «առավել» բառի միացումով): Այս երգերի հիմնական թեմատիկան հայրենի բնությունն է, գյուղացու կենցաղի հետ կապված խնդիրները, նրա մտքերը, հույզերը և այլն: Այս բաժնում առանձնակի ուշադրության է արժանի Կոմիտաս վարդապետի գրառած Լոռվա գութաներգը («Հո՛: Օրինյա՛լ է Աստված», էջ 15-27): Այն լավագույնս է արտացոլում հայ գեղջուկի աշխատանքի ընթացքը, նրա խոհերն ու ապրումները, մտքերը, որոնց մասին գյուղացին խոսում է կենդանու հետ: Ուշագրավ են կենդանուն՝ որպես ընտանիքի անդամ վերաբերվելու փաստը, նրան ուղղված փաղաքշական խոսքերը («ախբեր ջան», «ծիրան ջան», «սիրուն ջան» և այլն): Նշելի է գութաներգերին բնորոշ մեծ ձայնածավալը, հանկարծաբանական (իմպրովիզացիոն) բնույթը և ժողովրդական երգի՝ մյուս ենթաժանրերի երգերի հետ համեմատած ավելի բարդ մեղեդիական դարձվածքների առկայությունը:

Սայլերգերի ենթաբաժինը բաղկացած է ութ երգից: Դրանք կոչվել են նաև սայլավարի կամ սայլվորի երգեր և ընդհանուր նմանություն ունեն հորովելների հետ, այդուհանդերձ, առանձնանում են որպես ինքնուրույն երգատեսակ՝ իրենց բնորոշ առավել մեղեդայնությամբ և հանդարտ ռիթմով, որն արտացոլում է եզների դանդաղ, ծանր քայլերը: Սրանցից ավելի տարածված են «Մարալ Գոմեշ» (էջ 89-90), «Դե թոլ արա, գոմեշ ջան» (էջ 91), «Քաշի, ջեյրան, քաշի» (էջ 97-98) և այլ երգեր:

Ժողովածուի երրորդ բաժնում կալերգեր են՝ ներկայացված տասը նմուշով: Կալերգը ցորենը կալսելու երգ է: Աշխատանքի ընթացքում կենդանին, իրեն լծված կամով կալում պտտվելով, ցորենն առանձնացնում է թեփից: Ինչպես սայլերգերը, այնպես էլ սրանք երբեմն անվանվել են հորովելներ, քանի որ իրենց բովանդակությամբ, կառուցվածքով ու մեղեդային բնույթով մոտ են գութաներգերին: Նմանատիպ օրինակներից են «Հոլ արա, եզո» (էջ 107-108), «Կալ, կալե» (էջ 124-126) երգերը:

Գութանին և աշխատանքին նվիրված երգերը ամենասակավաթիվն են: Այս բաժնում ընդգրկված են երկուսը, որոնք ստեղծվել են աշխատանքային գործընթացից դուրս և, ի տարբերություն ժողովրդական երգերի՝ հեղինակ չունենալու պայմանի, ունեն հեղինակ: Այս բաժնում ընդգրկված «Պարի լուսու աստղ էրևաց» (էջ 133-135) և «Ղարաբաղի հորովել» (էջ 136-138) երգերն այնքան հարազատ են հայ ժողովրդական բանահյուսությանը, որ, հեղինակ ունենալով հանդերձ, ընդգրկվել են ժողովրդական երգերի սույն ժողովածուի մեջ:

Երգերում հանդիպող համեմատաբար բարդ և բարբառային բառերի բացատրությունը տրված է հատորում առկա բառարանում:

Դիպուկ է գրքի նկարազարդումը. յուրաքանչյուր բաժին նախորդից առանձնանում է գեղեցիկ պատկերազարդումով, որը զուսպ, բայց շատ արտահայտիչ կերպով ի ցույց է դնում տվյալ խմբի երգերի թեմատիկան:

Հինգերորդ՝ «Աշխատանքային երգեր» (մաս Ա)[2] հատորը հրատարակվել է Երևանում՝ «Գյոթե կենտրոնի» հետ համագործակցությամբ և ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ: Հատորը կազմել և խմբագրել են Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտաշխատողներ Աստղիկ Մարտիրոսյանը (Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա) և Նանե Միսակյանը: Տառադարձումը կատարել է Նանե Միսակյանը, թարգմանությունը Լիլիթ Հարությունյանինն է (Կոմիտասի թանգարան-ինստիտուտ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա): Գիրքը հրատարակվել է Աստղիկ Մուշեղյանի, Գայանե Ամիրաղյանի, Տաթևիկ Շախկուլյանի, Անի Մուշեղյանի, Սոնա Սիմոնյանի, Անդրանիկ Միքայելյանի աշխատակցությամբ: Ժողովածուն ձևավորել է Գոհար Գրիգորյանը, նկարազարդումների հեղինակն է Մերի Անդրեասյանը: Նոտաների համակարգչային շարվածքը կատարել է Ն. Միսակյանը:

Ամփոփելով՝ ներկայացնենք մի քանի առաջարկ, որոնք կարող են խորհելու տեղիք տալ հրատարակիչներին՝ հետագա հատորները կազմելու համար:

Յուրաքանչյուր հատորում, բացի արդեն հրատարակված երգերից, կարելի է ընդգրկել նաև, օրինակ, տասը անտիպ երգ՝ տարբեր արխիվներից ու ձայնապահոցներից՝ այդպիսով ընդլայնելով երգիչների, հետազոտողների, ինչու չէ՝ նաև հայ ժողովրդական երգի սիրահարներին մատչելի երգերի շրջանակը:

Ցանկալի կլիներ առկայության դեպքում նոտաների կողքին ունենալ դրանց ձայնային կատարման համացանցային կամ արխիվային հղումները:

Հուսով ենք, որ աշխատանքային երգերի այս ժողովածուն կնպաստի հայ ժողովրդական երաժշտության հանդեպ հետաքրքրության ընդլայնմանը հայ և օտարազգի երաժշտասերների շրջանակներում: Ուրախալի է, որ հաջորդիվ նախատեսված է հրատարակել «Աշխատանքային երգերի» երկրորդ հատորը, որում ընդգրկված կլինեն կանանց աշխատանքային երգերը:

ԾՈՎԻՆԱՐ ԱՐԾՐՈՒՆԻ

[2] Հազար ու մի երգ հայկական ժողովրդական երգերի մատենաշար, հ. Ե, Աշխատանքային երգեր (մաս Ա), 2022, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հրատ., Երևան:

ЧАСЫ ДЛЯ ДУШИ

АРАРАТ АГАСЯН, Стихотворения. Русская лира (переводы), Ереван, «Гитутюн», 2023, 552 с.

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ, Բանաստեղծություններ: Ռուսական քնար (թարգմանություններ), Երևան, «Գիտություն», 2023, 552 էջ:

Издание сборника заслуженного деятеля искусств РА, члена-корреспондента НАН РА, доктора искусствоведения, профессора Арарата Агасяна «Стихотворения. Русская лира (переводы)» – отрадное событие в культурной жизни республики. Книга представляет как впервые изданное поэтическое творчество А. Агасяна, так и его блестящие переводы из русской поэзии – праздник поэзии для армяноязычного читателя, получившего возможность приобщения к лучшим образцам русской творческой мысли. *Остановись, мгновенье!* – именно так хочется обозначить состояние души и сердца, вызванное прочтением этого лирического сборника, уже одним своим названием вовлекающего читателя в тот неповторимый мир, который называется поэзией – мир потока чувств, живущих в гармонии с мирозданием и вечных, как само мироздание.

Истинная поэзия оставляет эхо переживания и сопереживания, сотканного из радуги мыслей и чувств, нашедших отклик в сердце читателя. И яркое подтверждение сказанному – это поэзия Арарата Агасяна – тонкая, интеллектуальная, ввергающая в пучину бытия человеческой мысли, торжествующей над рутиной жизни, в безответный поиск ее смысла, в лавину раздумий и сомнений.

Каждое стихотворение – это словно эпизоды эмоциональной биографии поэта, исповедь пережитого, прочувствованного и выстраданного в борьбе тени и света жизненных перипетий.

Образный мир поэзии А. Агасяна гармоничен с его мирочувствием и миропониманием. Неистовый поток чувств поэта подернут дымкой камерности как ощущения быстротечности и конечности бытия. Весь лирический цикл проникнут раздумьями о былом и настоящем сквозь призму драматизма, составляющего канву жизни, в которую вплетается мозаика событий повседневности, выстраивающихся в эмоциональный пласт, рождающий поэзию. И поэзия Арарата

Агасяна – это экспрессивный диалог с собой и с миром, вызывающий неповторимую гамму эстетических переживаний, дарующих читателю часы для души – редкие минуты гармонии с миром, природой, с ушедшим и неведомым будущим.

Калейдоскоп созданных им поэтических образов («Как астматик небо дышит, но его никто не слышит»; «Я мечусь в рукавах тупика – потерявшая русло река»; «В пустой квартире гулко стучат часы в ознобе» и т.д.) – рождает отзвук в душе читателя, вызывая желание вновь окунуться в этот метафорический мир поэтических раздумий автора.

Лирика Арарата Агасяна словно готовит читателя к «погружению» в другой пласт его творческой мысли – в переводы из русской поэзии – итог его десятилетней работы, бессонных ночей в поиске безошибочной передачи мыслей и чувств переводимых авторов. Напрашивается сравнение переводческого труда с миссионерской деятельностью – сложной, жертвенной, требующей безвозмездной отдачи и преданности.

Раздел русской лиры представлен переводами произведений 36 авторов.

Хронологический диапазон переведенной им избранной русской лирики весьма широк и охватывает произведения поэтов, творивших в XIX-XXI вв.

Это и представители русской классической литературы, так называемого «золотого века» (В. Жуковский, А. Пушкин, Ф. Тютчев, М. Лермонтов, А. Фет, Н. Некрасов и др.), и поэты начала XX в., ставшего «ренессансом» русской поэзии, ее «серебряным веком» (З. Гиппиус, Н. Гумилев, К. Бальмонт, И. Северянин, А. Ахматова, М. Цветаева, Ал. Блок, В. Брюсов, О. Мандельштам, С. Есенин и др.), поэты советской эпохи (Н. Заболоцкий, Б. Пастернак, С. Кирсанов, А. Тарковский, А. Твардовский, К. Симонов, Е. Евтушенко, Р. Рождественский, А. Вознесенский, Б. Ахмадулина и др.).

Каждый из них – веха в истории русской литературы, их творчество вошло в золотой фонд как русской, так и русской советской поэзии.

Переводчик настолько «проживает» каждую поэтическую строчку, прежде чем передать ее на родном языке, что возникает некое тонкое соавторство – та редкостная гармония сопереживания, которая является главной составляющей в переводческом искусстве, когда переведенное произведение становится уже неотъемлемой частью другой культуры, в которой оно получает «гражданство».

Хочется надеяться, что изданный сборник станет предвестием новых творческих импульсов для автора, которому внятно все: «...и жар холодных чисел / И дар божественных видений», говоря словами великого Ал. Блока.

И благодаря Арарату Агасяну лампада русской лиры будет гореть в сердце каждого, кто откроет эту книгу, исполненную любви к поэзии и русской поэзии, в частности, и желания донести ее до души армянского читателя, погрузить его в благодатный оазис творческой мысли человека.

ГАЯНЭ АРУТЮНЯН
gayanegeorgievna90@gmail.com

АНУШАВАН ЗАКАРЯН, Осип Мандельштам: поэт и Армения, Ереван, авторское изд., 2022, 82 с.

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ, Օսիպ Մանդելշտամ. բանաստեղծը և Հայաստանը, Երևան, հեղ. հրատ., 2022, 82 էջ:



В ряду исследований, посвященных талантливому советскому поэту, переводчику и теоретику искусства Осипу Мандельштаму – человеку с яркой, но трагической судьбой – книга доктора филологических наук, главного редактора «Историко-филологического журнала» НАН РА, старшего научного сотрудника отдела искусства армянской Диаспоры и международных связей Института искусств НАН РА, автора 23 монографий и сборников, более 250 статей и публикаций Анушавана Закаряна занимает особое место, поскольку в ней, впервые на армянском языке, представлены события жизни и судьбы поэта, связанные с Арменией, к которой он питал самые искренние чувства и которая оставила неизгладимый след в душе и сердце поэта. Об этом свидетельствует каждая страница книги А. Закаряна, написанной на основе глубокого изучения творческой биографии Мандельштама (глава «О жизни, деятельности и творческом пути О. Мандельштама»), в которой Армения сыграла важную роль как ключ к миропознанию через культуру другого народа в соотнесении с общечеловеческими духовными ценностями. Свидетельством тому являются тематические главы книги «О. Мандельштам в Армении», «Поэт в Шуши», «Цикл стихов «Армения», эссе «Путешествие в Армению» и его отголоски», отражающие палитру чувств и мыслей поэта, вызванных знакомством с Арменией и ее многовековой культурой, внесшей неоценимый вклад в копилку творческой мысли человечества.

Автор книги, скрупулезно изучивший все вехи творчества великого поэта, весьма бережно относится к каждому факту его «соприкосновения» с Арменией, не упуская ни одной детали и выстраивая целостную картину общения Мандельштама с Арменией и ее народом, в частности, с представителями армянской интеллигенции – ключевыми фигурами армянской истории, культуры и литературы – Ашотом Иоаннисяном, Мартиросом Сарья-

ном, Александром Таманяном, Мамиконом Геворкяном и др. Его связывала дружба также с армянской интеллигенцией Баку и Тифлиса (главы «О. Мандельштам в Тифлисе и Баку», «Тифлисские дни с Егише Чаренцем»).

К «армянскому» периоду творчества О. Мандельштама обращались поэт и переводчик Георгий Кубатьян, известный литературовед Наталья Гончар-Ханджян и литературовед М. Андреева, поэзия Мандельштама издана в переводах члена-корреспондента НАН РА, доктора искусствоведения Арарата Агасяна, а также поэта и переводчика Грачья Бейлеряна.

Однако книга А. Закаряна как итог кропотливых исследований, представляющий по крупицам собранный материал о жизни и творческих исканиях поэта, судьба которого переплелась с Арменией и составила одну из лучших страниц его поэзии, ценна тем, что в историко-литературной мозаике советской эпохи высвечивает связь и взаимовлияние двух культур, обогативших историю отечественной литературы. Каждая глава книги – это этапы жизни и многопластового творчества Осипа Мандельштама, воспевшего Армению всей мощью своего таланта. Почти полгода (с мая по октябрь 1930 г.), проведенные Мандельштамом в Армении, послужили новым импульсом к творчеству. Поэт путешествовал по армянской земле [Ленинакан (Гюмри), Ереван, Севан]. Побывал и на развалинах Звартноца, в Аштараке, Бюракане, поднялся на гору Арагац, несколько незабываемых дней провел в Цахкадзорском доме писателей.

Воодушевленный историей и культурой Армении, О. Мандельштам намеревался изучить древнеармянский язык (грабар) и создать произведение на историческую тему, посвященное знаковой фигуре – армянскому царю Аршаку и персидскому шаху Шапуху. Он посетил и Шуши, в котором сохранились следы жесточайших погромов армянского населения, имевших место в 1920 г., и свои гнетущие впечатления отразил в стихотворении «Фаэтонщик»:

...Так в Нагорном Карабахе,
В хищном городе Шуше
Я изведал эти страхи,
Соприродные душе.

Впечатления от поездки в Армению вылились в пронзительный поэтический монолог – 12 проникновенных стихов об Армении (отметим, что впоследствии он написал еще 5 стихов, связанных с Арменией), и в интересную прозу как эхо общения с этой библейской землей, излучающей неукротимую энергию жизни, невзирая на тяжкие испытания, выпавшие на долю армянского народа, постигшего всю горечь лишений и несправедливости,

но при этом сохранившего волю к жизни и созиданию: «Я выпил в душе за здоровье молодой Армении с ее домами из апельсинового камня, за ее белозубых наркомов, за конский пот и топот очередей и за ее могучий язык, на котором мы не достойны говорить, а должны только чураться в нашей немощи…». И О. Мандельштаму, как представителю русской культуры, Армения – с ее нерастраченной любовью к человеку и верностью вековым традициям, была удивительно созвучна.

Исследование А. Закаряна о Мандельштаме, волею судьбы окунувшегося в армянский мир, в «Страну москательных пожаров /И мертвых гончарных равнин», дает возможность армянскому читателю постичь феномен великого поэта, не оставшегося равнодушным к их родине, ее природе и городам («Ах, Эривань, Эривань не город-орешек каленый, /Улиц твоих большеротых кривые люблю вавилоны») и взглянуть на свою страну сквозь призму очарованного ею поэта.

Остается отметить, что проделанная автором книги работа заслуживает благодарность как сегодняшнего, так и будущего армянского читателя.

ГАЯНЭ АРУТЮНЯН
gayanegeorgievna90@gmail.com

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ
(ծննդյան 70-ամյակի առթիվ)

Լրացավ «Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր, բանասիրական գիտությունների դոկտոր Անուշավան Հազարապետի Զաքարյանի ծննդյան 70-ամյակը: Խմբագրի, հրատարակչի, լրագրողի, մանկավարժի, գիտաշխատողի վաստակած անունն ուղեկցում է նրան աշխատանքային առաջին իսկ քայլերից, որ իր ճանապարհն անցել է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում: Այսօր զբաղեցնելով միջազգային համբավ ունեցող հայագիտական այս հանդեսի գլխավոր խմբագրի շատ աշխատատար պաշտոնը՝ նա միաժամանակ արդյունավետ գործունեություն է ծավալում գիտահետազոտական ասպարեզում. դրա վկայությունը նրա բազմաթիվ մենագրությունները, կազմած ժողովածուներն ու հոդված-հրապարակումներն են:

Ա. Զաքարյանը ծնվել է 1953 թ. դեկտեմբերի 14-ին (ծնունդը պաշտոնապես գրանցվել է 1954 թ. հունվարի 1-ին, բայց քանի որ թվերն իրենց մեջ աստղերի հետ կապված գաղտնի խորհուրդ ունեն, ուստի նշենք ծննդյան բնական տվյալը) Նախիջևանի ԻԽՍՀ Օրդուբադի շրջանի (Գողթան գավառի) Փառակա տոհմիկ հայոց գյուղում, բժշկի ընտանիքում: Մտավորական էր ամբողջ գերդաստանը և հիմնական ուղղվածությամբ՝ բանասիրական, ինչն իր անջինջ կնիքն է դրել Ա. Զաքարյանի մասնագիտական և բուն հայագիտական ուղղվածության վրա:

Վաղ տարիքից ընտանիքի հետ բնակություն է հաստատել Երևանում, որտեղ 1961 թ. ընդունվել, 1971-ին ավարտել է Նադեժդա Կրուպսկայայի (այժմ՝ Նիկոլ Աղբալյանի) անվան 19-րդ միջնակարգ դպրոցը: Այնուհետև ուսումը շարունակել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում: Ինստիտուտը չավարտած՝ գործուղվել է ուսուցչության՝ Հոկտեմբերյանի շրջանի (այժմ՝ Արմավիրի մարզ) Նոր Արտագերս գյուղի միջնակարգ դպրոց: Շատերի պես նա կարող էր մնալ գյուղում, աշխատել մինչև զորակոչային տարիքի լրանալը, սակայն խառնվածքով լինելով դժվարություններից չփախչող՝ որոշեց կատարել զինվորական պարտքը. 1975-1976 թթ. որպես նշանառու հրետանավոր ծառայել է Հեռավոր Արևելքում՝ Խաբարովսկի երկրամասի Օբլուչիե քաղաքի զորամասում:

Ա. Զաքարյանի գործունեության ոլորտը լայն է և ընդգրկուն. խմբագրական-հրատարակչական աշխատանք, պետական ծառայություն, գիտահետազոտական ուսումնասիրություններ: Հարկ է նշել, որ այս բնագավառներում մեր հո-

բելյարի կայացմանը մեծապես նպաստել են նշանավոր պատմաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վարդգես Միքայելյանը և հորաքույրը՝ անվանի գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր Ալմաստ Զաքարյանը:

1977 թ. որպես խմբագիր աշխատանքի է անցել ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչությունում: 1977-1980 թթ. խմբագրել է երկու տասնյակից ավելի գիտական ուսումնասիրություն ու մենագրություն: Խմբագրի գործն այդուհետև դառնում է նրա աշխատանքային հիմնական բնագավառներից մեկը, որը պահանջում է հայերենի անթերի իմացություն, մտքի գիտական կարգապահություն և հեղինակների հետ աշխատելու հմտություն ու համբերություն: Այս ամենը նախապայմաններ էին, որ ակադեմիայի «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի գլխավոր խմբագիր Վ. Միքայելյանը 1980 թ. հունվարին նրան՝ իբրև պատասխանատու քարտուղար աշխատանքի հրավիրեր ամսագրի խմբագրություն: Այստեղ նա աշխատում է շուրջ 13 տարի. սա աշխատանքային փորձառության իսկական դպրոց էր:

1988 թ. Ա. Զաքարյանն ավարտել է ՀԿԿ կենտկոմի մարքսիզմ-լենինիզմի համալսարանի կուսակցական-տնտեսական ակտիվ ֆակուլտետի «Գաղափարախոսական աշխատանք» բաժինը: Այնուհետև դարձել է ԽՄԿԿ անդամ:

1989-1990 թթ. Ա. Զաքարյանը վարել է նաև «Հայաստան» հասարակական-քաղաքական կազմակերպության «Գոյամարտ» շաբաթաթերթի պատասխանատու քարտուղարի պարտականությունը:

1990-ական թվականների սկզբին Ա. Զաքարյանն արդեն իսկ խմբագրական-հրատարակչական գործի հմուտ կազմակերպչի անուն վաստակած, պահանջված մասնագետ էր: Ուստի ամենևին պատահական չէ, որ «Հայկական հանրագիտարան»-ի գլխավոր խմբագիր Կոստանդին Խուդավերդյանը, այնուհետև Մ. Մաշտոցի անվ. Մատենադարանի փոխտնօրեն Բաբկեն Չուգասզյանը նրան քանիցս առաջարկում են աշխատանքային գործունեությունը շարունակել իրենց ղեկավարած հիմնարկներում: Կյանքը, սակայն, այլ հունով տարավ մեր հոբելյարին:

1993 թ. հոկտեմբերին Ա. Զաքարյանն աշխատանքի է հրավիրվել ՀՀ գերագույն խորհրդի աշխատակազմ՝ որպես հրատարակչական բաժնի վարիչ: Կարճ ժամանակամիջոցում նա կարողացավ ըստ ամենայնի կարգավորել Գերագույն խորհրդի՝ տարիներով կուտակված նստաշրջանների նիստերի և ընթացիկ նիստերի սղագրությունները, կազմակերպել Գերագույն խորհրդի՝ հայերեն և ռուսերեն տեղեկագրերը ժամանակին հրատարակելու գործը:

1995 թ. հոկտեմբերից Ա. Զաքարյանը ղեկավարել է նոր ձևավորված Ազգային ժողովի աշխատակազմի կառուցվածքային տարբեր ստորաբաժանումներ. եղել է արձանագրային-հրատարակչական բաժնի վարիչի տեղակալ, թարգմանչական-հրատարակչական ենթաբաժնի վարիչ, գրասենյակի ղեկավար (դրա կազմի մեջ մտնում էին ընդհանուր, կադրերի և նամակների բաժինները), քարտուղարության պետի տեղակալ:

Ա. Զաքարյանի կազմակերպչական ունակությունները և գործունեությունը լավագույնս դրսևորվել են ՀՀ կառավարության աշխատակազմի նորաստեղծ՝

«Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր» ՊՓԲԸ-ի գործադիր տնօրենի պաշտոնում (1998 թ.): Այդուհետև նա կրկին Ազգային ժողովի աշխատակազմում էր. 2000-2019 թթ. եղել է ԱԺ աշխատակազմի, ապա դրա տարբեր ստորաբաժանումների կազմում՝ որպես հրատարակչական բաժնի վարիչ: Նրա անմիջական ղեկավարությամբ են ստեղծվել «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով» (երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ գումարումներ) պատկերազարդ եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) գրքերը. մի հրատարակություն, որն իր նախօրինակը մեզանում չի ունեցել:

Գիտությունների ազգային ակադեմիայի հետ Ա. Զաքարյանի կապերն այս ընթացքում չեն ընդհատվել. 1999 թ. «Պատմաբանասիրական հանդես»-ի գլխավոր խմբագիր Վ. Միքայելյանի առաջարկությամբ նա ստանձնել է հանդեսի պատասխանատու քարտուղարի, 2003-ին՝ նաև գլխավոր խմբագրի տեղակալի պաշտոնը: 2018 թ. Ա. Զաքարյանն ընտրվել է պարբերականի գլխավոր խմբագիր: Այս բոլոր պաշտոններում նա իրեն դրսևորել է լավագույն կողմերով՝ եղել է աշխատանքի հմուտ կազմակերպիչ, հեղինակների հետ վարել է բանիմաց խմբագրական երկխոսություն, տպագրության համար ոչ միայն նյութեր է ընդունել, խմբագրել, այլև պատվիրել է, չի շրջանցել հիշարժան տարեթվերն ու հոբելյանները: Ինչպես Ա. Զաքարյանի, այնպես և խմբագրության ներդաշնակ ու արդյունավետ գործունեության շնորհիվ արդեն իսկ 65-ամյա ամսագիրը միշտ լույս է տեսել ժամանակին և այսօր իր առաջատար անուրանալի տեղն ունի հայրենիքում ու արտերկրում տպագրվող հայագիտական հանդեսների շարքում:

2022 թ. փետրվարից Ա. Զաքարյանն աշխատում է նաև ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնում՝ որպես ավագ գիտաշխատող:

Ծանրաբեռնված լինելով խմբագրական-հրատարակչական, մանկավարժական, պետական գործունեությամբ, դրան զուգահեռ՝ մշտապես նրա ուշադրության կենտրոնում է գիտական աշխատանքը: Այսօր նա 16 մենագրության և 7 ժողովածուի, ավելի քան 250 հոդվածների, հրապարակումների ու գրախոսականների հեղինակ է: Գիտահետազոտական ու վերլուծական անվիճելի կարողությունները, աղբյուրագիտական գիտելիքները, մամուլի և արխիվային նյութերի իմացությունն ապահովել են նրա գիտական հետաքրքրությունների մտահորիզոնը: Այս ամենը նախևառաջ ընդգրկում է հայ-ռուս պատմամշակութային փոխհարաբերությունների լայն շրջանակ, XX դարի առաջին քառորդի հայ իրականության հարցեր, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության՝ առավել քիչ ուսումնասիրված հիմնախնդիրների լուսաբանում:

Հայ-ռուսական պատմամշակութային կապերը, մասնավորապես՝ XX դ. առաջին տասնամյակի մեր հոգևոր կյանքի պատմության՝ Ա. Զաքարյանի կողմից նորովի բացահայտված էջեր են: Այդ աշխատությունները վերաբերում են հայ-ռուս գրական-մշակութային կապերին՝ համապարփակ ընդգրկումով, որի ազդարարը եղավ 1985 թ. նրա պաշտպանած թեկնածուական ատենախոսությունը՝ «Ռուս գրողները Անդրկովկասում և հայ գրական կյանքը», իսկ 2005 թ.՝

«Ռուս գրական գործիչները և հայ իրականությունը (XX դարի 10-ական թվականներ)» թեմայով դոկտորական ատենախոսությունը: Թեկնածուական և դոկտորական ատենախոսությունները գիտնականի ճանապարհի հենակետերն են, որոնք ժամանակի ընթացքում արգասավորվում են բազմաթիվ աշխատություններով: Այստեղ է երևում իսկական գիտնականը, որը բավարարվում է ոչ թե ձեռք բերածով, այլ միշտ առաջ է նայում, որովհետև միտքն աշխատում է: Ա. Զաքարյանի դեպքում հատկանշական է այն իրողությունը, որ մինչև վերջերս նա չի աշխատել ԳԱԱ գիտահետազոտական որևէ հիմնարկում և չի ունեցել գիտական առումով որևէ պարտականություն՝ պլանային թեմա և այլն:

Ա. Զաքարյանի հետազոտություններում միավորված են գրականագետը, պատմաբանը, մշակութաբանը, ժամանակագիրը, հասարակագետը. այստեղ կապերն են ու անդրադարձները, ազդակները և առնչությունները, ուստի նրան ավելի հարմար է տալ *հայագետ* բնորոշումը, որն ավելի ամբողջական է ներկայացնում նրա գիտական կերպարը: Նրա ուսումնասիրության մեթոդը պատմահամեմատականն է, պատմամշակութայինը, որոնք միավորվում են ավելի ընդգրկուն համադրական մեթոդի մեջ: Այդպես է ժամանակակից հումանիտար մտածողության կառուցվածքը, որը հանուն ուսումնասիրվող նյութի լրիվ ընդգրկման ու ամբողջական բացահայտման պատրաստ է բոլոր հնարավորությունների օգտագործման: Համադրական մեթոդը համակողմանի աշխատանքի բնական շարունակությունն է, և այս տեսակետից իրավացի էր Ա. Զաքարյանի դոկտորական ատենախոսության ընդդիմախոս, անվանի գրականագետ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գառնիկ Անանյանը. «Ա. Զաքարյանը չի խուսափում գիտության մարդու համար կարծես ոչ այնքան անհրաժեշտ սև աշխատանքից: Նա սիրում է փնտրել, պրպտել, հայտնաբերել նոր դեմքեր, իրադարձություններ, փաստեր ու փաստաթղթեր: Կարելի է պատկերացնել, թե արխիվային որքան փոշի է կուլ տվել, որքան պարբերականներ թերթել՝ ուսումնասիրության թեման ամբողջացնելու, գրական-հասարակական կյանքի համապատկերը ներկայացնելու համար: Թերևս «մաքուր» գիտնականների քմծիծաղը շարժող այս առավելությունը բնութագրում է հետազոտողին, պատկերացում տալիս նրա նկարագրի և աշխատանքի այլևայլ կողմերի մասին»:

Մտավոր առաջընթացի հիմքը գրապատմական հարուստ ժառանգությունն է՝ արխիվային նորահայտ վավերագրերով, որոնք, շաղախվելով մամուլի երբեմն շատ կցկտուր վկայությունների հետ, ստեղծում-վերականգնում են մի կորած աշխարհի պատկերը: XX դ. առաջին տասնամյակը քաղաքական առումով հայ ժողովրդի համար որքան վտանգված, նույնքան գրական-մշակութային առումով ոսկի ժամանակ էր, երբ ռուս հասարակայնության միջավայրում մեծապես աճում էր հետաքրքրությունը Հայաստանի, նրա պատմության և մշակույթի նկատմամբ: Դա հիմնականում պայմանավորված էր Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովրդի հասարակական-քաղաքական ծանր կացությամբ: Հայտնի է, թե որքան շնորհակալ և արդյունավետ գործ են կատարել ռուս գրական-հասարակական գործիչները Հայաստանն իրենց ժողովրդին

ներկայացնելու և ծանոթացնելու առումով: Սակայն հայ-ռուս գրապատմական առնչությունների բացահայտումը նոր կառուցվածք ու նոր բովանդակություն ստացավ, արդիական հնչեղություն ունեցող նորություններով հարստացավ Ա. Զաքարյանի աշխատություններում: Դրանց մի մասը լույս է տեսել նաև ռուսերեն՝ ի նպաստ սլավոնագիտությանը, որ գիտական մտքի մեծ աշխարհ է:

Ռուս գրական-հասարակական գործիչների շարքում կան հայտնի կամ քիչ հայտնի անուններ. վերջիններս անծանոթ էին ոչ միայն լայն հանրությանը, այլև՝ մասնագետներին: Այս առումով Ա. Զաքարյանի՝ «Ռուս գրողները Անդրկովկասում և հայ գրական կյանքը (1914-1920)» (1984 թ., հայերեն), «Ռուս գրագետները և հայ իրականությունը (XX դարի 10-ական թթ.)» (1994 թ., ռուսերեն), «Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս գրագետների գնահատմամբ» (2003 թ., ռուսերեն) մենագրություններն այդ բացը լրացնելու առաջին քայլերը պետք է համարել: Հենվելով նորահայտ հարուստ, բազմաբնույթ փաստերի վրա՝ նա ներկայացնում է ռուս գրական այն գործիչների՝ հրապարակախոսների, լրագրողների, քիչ հայտնի գրագետների, գրաքննադատների, գրողների, բանաստեղծների (Ս. Պոլյակովա, Յու. Կրյուկովա, Վյաչ. Պոլոնսկի, Ի. Յասինսկի, Ալ. Վոզնեսենսկի, Վ. Նեմիրովիչ-Դանչենկո, Ա. Տիրկովա, Ի. Սևերյանին, Վ. Մայակովսկի, Վ. Կամենսկի, Ա. Կրուչոնիխ, Ի. Զդանևիչ, Կ. Բալմոնտ, Ֆ. Սոլոգուբ, Վ. Բրյուսով, Ս. Գորոդեցկի, Ա. Կուպրին, Ս. Ռաֆալովիչ, Պ. Սիբիրցև, Ռ. Իվնև, Ի. Էրենբուրգ և շատ ուրիշներ) գրական-հասարակական գործունեությունը, որոնք խնդրո առարկա ժամանակաշրջանում եղել կամ ապրել ու ստեղծագործել են Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում: Հանգամանորեն լուսաբանվում են նրանց տարաբնույթ անաչառ վկայությունները, կարեկցական վերաբերմունքը հայ ժողովրդի ողբերգության նկատմամբ, որոնք արտացոլվել են նրանց ստեղծագործություններում, հասարակական գործունեության մեջ, հայ մտավորականության հետ ունեցած կապերում, Հայաստանին ու հայ ժողովրդին ցուցաբերած գործնական օգնությամբ:

Ա. Զաքարյանի հաջորդ մենագրությունը՝ «Ալեքսանդր Կուլեբյակինը և Հայաստանը» (2003 թ., ռուսերեն) վերնագրով, նվիրված է Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ճակատում՝ Արևմտյան Հայաստանում, ռուսական բանակի ծավալած ռազմական գործողություններին առաջին իսկ օրից ակտիվորեն մասնակցած Թերեքի կազակ, գնդապետ, ապա գեներալ-մայոր, Վանի ջոկատի, այնուհետև՝ Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հրամանատար Ալեքսանդր Կուլեբյակինի գործունեությանը: Մենագրության մեջ առաջին անգամ հանգամանորեն ներկայացվում և լուսաբանվում են փառապանծ զորահրամանատարի անցած մարտական ուղին, Կովկասից ռուսական բանակի հեռանալուց հետո նրա գործունեությունը Անդրկովկասում: Ապրելով Թիֆլիսում՝ «պոետ-գեներալն» ակտիվորեն մասնակցել է հասարակական-քաղաքական, գրական-մշակութային կյանքին, մասնավորապես՝ հայ հասարակայնությանը հուզող կարևոր հարցերի ու խնդիրների լուծմանը: Նա բարեկամական, ընկերական հարաբերություններ է ունեցել, աշխատել է հայ մշակույթի, գրականութ-

յան, հասարակական-քաղաքական, զինվորական բազում նշանավոր գործիչների հետ: Անգնահատելի է հատկապես նրա կատարած աշխատանքը «Համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովում»՝ որպես ռազմապատմական բաժնի վարիչ, և «Մայիլյան եղբայրների գիտատնտեսական արշավախմբում»:

XX դ. 10-ական թվականներին ռուս գրական գործիչների շարքում, որոնք իրենց գրական-հասարակական գործունեության մեջ մեծ տեղ են հատկացրել հայ իրականությանը, առանձնահատուկ տեղ ունի ժամանակի հայտնի արձակագիր Բորիս Լազարևսկին, որին էլ նվիրված է Ա. Զաքարյանի «Բորիս Լազարևսկին Հայաստանի և հայ կանանց մասին» վերնագրով մենագրությունը (2004 թ., հայերեն): Ինչպես ցույց է տալիս գրականագետը, 1919–1920 թթ. Ռոստովում, Արմավիրում, Թիֆլիսում, Երևանում, Կ. Պոլսում «Հայ օրիորդները և կանայք» թեմայով նրա կարդացած դասախոսությունների շարքը, Թիֆլիսի «Слово» թերթում տպագրած «Բրոշկա» և «Օտարության մեջ» պատմվածքները մեծ հետաքրքրություն են առաջացրել ոչ միայն հայ հասարակայնության մեջ: Գրքում առաջին անգամ հանգամանորեն լուսաբանվել են Բ. Լազարևսկու հիշյալ շրջանի գործունեությունը, նրա առնչությունը նաև Հովի. Թումանյանի հետ:

Ա. Զաքարյանը XX դարասկզբի հայ մամուլի պատմության քաջատեղյակ հետազոտող է: Հենց դա էլ նպաստել է, որ նա անդրադառնա Ալեքսանդր Շիրվանզադեի՝ 10-ական թվականների հրապարակախոսական ժառանգությանը, որն անծանոթ էր հայ հանրությանը, քանզի տեղ չէր գտել գրողի երկերի ժողովածուներում, և 2006 թ. հրատարակի «Շիրվանզադեի հրապարակախոսական ժառանգությունից (1914-1919 թթ.)» աշխատությունը: Մամուլի էջերում սփռված՝ գրողի այդ հոդվածները հայ ժողովրդի պատմական ծանր ժամանակների ամենօրյա արձագանքներ են, փաստացի վավերագրեր, որոնք արծարծում են ազգային, քաղաքական կյանքի բազմաթիվ ու բազմապիսի և արդիական մեծ հնչեղություն ունեցող հարցեր:

Առաջին աշխարհամարտի ու դրան հաջորդած տարիներին՝ 1916-1921 թթ., Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում ապրել ու գործել է ռուս անվանի բանաստեղծ, գրող, հրապարակախոս, թարգմանիչ և հասարակական գործիչ Սերգեյ Գորոդեցկին, որին էլ նվիրված են Ա. Զաքարյանի՝ «Սերգեյ Գորոդեցկին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում» վերնագրով մենագրությունները (2010 թ., հայերեն և 2015 թ., ռուսերեն): Հեղինակի այս աշխատությունները ստեղծվել են տարիների տևական հետազոտական աշխատանքի շնորհիվ և մինչև ամբողջանալը, առանձին գրքերով ընթերցողին ներկայացվելը գիտական հանրության, մասնագետների, լայն հասարակայնության ուշադրությանն են արժանացել բազմաթիվ հոդվածներով, հաղորդումներով, հրապարակումներով: Ա. Զաքարյանի բնորոշմամբ՝ Ս. Գորոդեցկին այն գործիչներից է, որը գրական-մշակութային, հասարակական-քաղաքական իր հաստատուն քայլերով, Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին, երկրի ներքին ու արտաքին քաղաքականությանն ակնդետ հետևող, հայանպաստ գործունեությամբ հայերիս

համար հարազատ անուն է դարձել: Տարածաշրջանում նրա կատարածի վերհանումն ու լուսաբանումը մեր օրերում էլ գիտական ու քաղաքական խիստ կարևոր և արդիական ինչեղություն ունեն: Այս առումով հիշատակել է դեռևս 1919 թ. մարտի 23-ին «Кавказское слово» թերթում նրա հրապարակած «Ղարաբաղ» վերնագրով ուշագրավ հոդվածը, որտեղ հեղինակը Ղարաբաղը համարել է բնիկ հայկական տարածք ...Նույն թվականի հուլիսի 15-ին էլ Գորոդեցկին Բաթումում հետաքրքիր դասախոսություն է կարդացել Հայկական հարցի մասին:

Թիֆլիսում Ս. Գորոդեցկու գործունեությանն է առնչվում նաև Ա. Զաքարյանի «Սերգեյ Գորոդեցկու «Բանաստեղծների համքարությունը» և «Ակմե» ժողովածուն» վերնագրով գիրքը (2011 թ., ռուսերեն):

2012 թ. Ա. Զաքարյանը մեկ գրքով՝ հայերեն և ռուսերեն, հրատարակել է «Իլյա Էրենբուրգի թիֆլիսյան օրերը», որտեղ փաստական նորահայտ նյութերով ներկայացրել է ռուս նշանավոր գրողի, հրապարակախոսի գրական-հասարակական գործունեությունը Թիֆլիսում 1920 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին, շրջանառության մեջ է դրել ռուս բանաստեղծներին՝ Ալ. Բլոկին, Վ. Բրյուսովին, Կ. Բալմոնտին և Վ. Մայակովսկուն նվիրված դիմանկարների շարքը:

Ա. Զաքարյանի գիտական ուսումնասիրությունների մեջ ուրույն տեղ է գրավում «Արևմտահայ իրականությունը ռուս հրապարակախոս Տ. Օլգենինի գնահատմամբ» մենագրությունը (2014 թ., հայերեն): Այստեղ առաջին անգամ հանգամանորեն ներկայացված են XX դարասկզբի ռուս հայտնի հրապարակախոս, լրագրող Անտուան Բերեզովսկի-Օլգինսկու (կեղծանունը՝ Տ. Օլգենին)՝ 1913 թ. հունվարի վերջից մինչև մայիսի կեսերն Արևմտյան Հայաստանի վեց նահանգներ (Էրզրում, Վան, Բիթլիս, Տիգրանակերտ, Սեբաստիա, Խարբերդ) կատարած ուղևորության մանրամասները, թուրք-քրդական լծի տակ հեծող արևմտահայության տնտեսական, քաղաքական և սոցիալական կացության մասին գրած թղթակցությունները, նաև՝ Թիֆլիսում ու Բաքվում «Անհետացող Հայաստանը» խոսուն վերնագրով կարդացած դասախոսությունները:

Ռուս ականավոր բանաստեղծ, թարգմանիչ, գրականագետ, գրաքննադատ և պատմաբան Վալերի Բրյուսովի վաստակը հայ գրականության, մասնավորապես՝ պոեզիայի ուսումնասիրության ու քարոզչության ուղղությամբ հայ և ռուս գրականագետների աշխատությունները հիմնականում գնահատվել են «Հայաստանի պոեզիան» անթոլոգիան կազմելու, խմբագրելու, հրատարակելու առումով: Դրան զուգընթաց՝ նա նաև լայն գործունեություն է ծավալել հայ գրականությունը, մշակույթը, պատմությունը ռուս և հայ հասարակայնության մեջ տարածելու ուղղությամբ: 1916-1917 թթ. Բաքվում, Թիֆլիսում, Երևանում, Էջմիածնում կարդացած դասախոսությունները՝ «Հայոց բանաստեղծությունը» և «Հայաստանի պատմական շրջանները և հայ բանաստեղծությունը», «Էմիլ Վերհարնը և հերոսական Բելգիան», «Ուսուցիչների ուսուցիչները (մարդկության հնագույն մշակույթների մասին)», Ա.Ս. Պուշկինի հասարակական հայացքների վերաբերյալ, ժամանակագրական իրողությունների, հայ գրական-հասարակական կյանքի հետ շփումների՝ հանգամանքների և նշանակության հիմնահարցերի կտրվածքով հա-

տուկ ուսումնասիրության նյութ չեն եղել: Ահա այդ բացը լրացնելու նպատակն է հետապնդել գրականագետը՝ հրատարակելով «Հայաստանը Վ. Բրյուսովի գրական-հասարակական գործունեության մեջ» մենագրությունը (2016 թ., ռուսերեն):

Ամենայն հայոց բանաստեղծ Հովի. Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված՝ Ա. Զաքարյանը հրատարակել է «Ռուս գրողները և Հովհաննես Թումանյանը» գիրքը (2019 թ., հայերեն), որտեղ ի մի է բերել և հանգամանորեն ներկայացրել Թիֆլիսում ապրած ու գործած ռուս գրողներ Կ. Բալմոնտի, Վ. Բրյուսովի, Ս. Գորոդեցկու, Բ. Լազարևսկու և Ա. Կուլեբյակինի ստեղծագործական առնչությունները, մարդկային պարզ ու անմիջական շփումները հայ բանաստեղծի հետ:

2019 թ. Ա. Զաքարյանը մեկ գրքով՝ հայերեն և ռուսերեն, հրատարակել է «Ռուս կոմպոզիտոր Թոմաս Հարտմանը և Կոմիտասը» վերնագրով աշխատությունը, որտեղ առաջին անգամ ներկայացված է մեծանուն երաժշտագետ և կոմպոզիտոր Կոմիտասի կյանքի ու ստեղծագործության արժևորման գործում ռուս կոմպոզիտորի վաստակը:

Ռուս (ծագումով՝ հրեա) արվեստի տեսաբան, թարգմանիչ Օսիպ Մանդելշտամն առանձնահատուկ տեղ ունի խորհրդային գրականության պատմության անդաստանում: Նրա անունը նաև մեծապես կապված է Հայաստան երկրի ու հայ ժողովրդի հետ: 1930 թ. վեց ամիս Հայաստանում ապրելը, երկրով մեկ ճանապարհորդելը ճակատագրական դարձավ նրա համար, քանզի հետագա կարճատև կյանքը շաղկապված մնաց Հայաստանի, հայ մշակույթի հետ, կապ, որ ռուս բանաստեղծը շատ թանկ էր գնահատում: Օ. Մանդելշտամի կյանքի, գործունեության և ստեղծագործությունների ուսումնասիրության, Հայաստանի հետ առնչություններին վերաբերող հարուստ գրականություն կա ռուսերենով և օտար լեզուներով: Վերջինը, սակայն, հիմնականում վերաբերում է Հայաստանին նվիրված բանաստեղծությունների շարքին և «Ճանապարհորդություն դեպի Հայաստան» արձակ գործին: Չեն մանրամասնվել գրապատմական կարևոր իրողություններ, Հայաստան կատարած այցելության, հայ ժողովրդի կյանքին վերաբերող իրադարձությունների նկատմամբ նրա մոտեցումների խորքային դրդապատճառներն ու նախադրյալները և այլն: Խիստ արդիական հնչեղություն ունեն Շուշի կատարած բանաստեղծի այցելության, ադրբեջանական հրոսակների կողմից 1920 թ. քաղաքի հայ բնակչության կոտորածի ու ականատեսի աչքերով՝ ավերակի վերածված քաղաքի մասին հիշատակությունները և այդ ամենի տպավորությամբ գրած «Կառապանը» բանաստեղծությունը: Ահա այդ բացն է եկել լրացնելու 2022 թ. հայերենով հրատարակված՝ Ա. Զաքարյանի «Օսիպ Մանդելշտամ. բանաստեղծը և Հայաստանը» վերնագրով աշխատանքը:

Վերջերս լույս տեսավ Ա. Զաքարյանի նոր մենագրությունը՝ «Դավիթ Անանուն. կյանքը և գործունեությունը» (2023 թ., հայերեն): Աշխատության մեջ բազմաթիվ ու բազմապիսի փաստական-հուշագրական, ստեղծագործական վկայակոչումներով քննականորեն ներկայացվում են XX դարի առաջին երեսնամյակի հայ իրականության կարկառուն դեմքերից Դ. Անանունի բազմաբեղուն կյանքն ու գործունեությունը:

Մեր հոբելյարի գիտական վաստակի մեջ առանձնակի տեղ են գրավում նրա կազմած ժողովածուները: Դրանք այնպիսի գործեր են, որոնցում տեղ ունեն ոչ միայն բուն ասելիքը, այլև ժամանակաշրջանին վերաբերող, թվում է՝ աննշան փաստերը: Վերջիններս հիշարժան իրողությունների հետ ստեղծում են ժամանակի խիտ ու ամբողջական պատկերը և դառնում գիտություն, մեկ բառով՝ հասարակագիտություն: Այդ շղթայի մեջ իր ուրույն տեղն ունի Ա. Զաքարյանի կազմած՝ առաջաբանով ու ծանոթագրություններով, «Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին («Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածու») (2005 թ., հայերեն և ռուսերեն) գիրքը: Հրապարակված վավերագրերը, որպես սկզբնաղբյուրներ, մեզ համար ունեն ոչ միայն ճանաչողական, այլև պատմական, քաղաքական և, անշուշտ, գործնական-կիրառական կարևոր նշանակություն:

Ա. Զաքարյանի նմանօրինակ հաջորդ աշխատանքը նվիրված է Տիգրան Հովհաննիսյանի 1919 թ. «Հառաջ» թերթում տպագրած և գիտական հանրությանն անծանոթ «Տաճիկ կառավարությունը և իթթիհաթը մարդկության դատարանի առաջ» աշխատության հրատարակությանը (2007 թ.):

Այս շարքին է դասվում նաև հայ ազգային-ազատագրական շարժման լեգենդար հերոս Անդրանիկի գնդի մարտական ուղուն (1918-1919 թթ.) նվիրված, Ա. Զաքարյանի կազմած՝ Պորուչիկ Ալեքսեյ Կոլմակովի «Պատմական հայկական վաշտը» վերնագրով ժողովածուն (2009 թ., ռուսերեն):

ՀՀ ԳԱԱ-ի հիմնադրման 70-ամյակին ընդառաջ Ա. Զաքարյանը հրատարակել է «Էջեր Մանուկ Աբեղյանի պատմահրապարակախոսական ժառանգությունից» ժողովածուն (2013 թ., հայերեն):

Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանի 100-ամյակի առթիվ էլ նա կազմել ու հրատարակել է «Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանը» վերնագրով ժողովածուն (2018 թ., հայերեն):

Ա. Զաքարյանը նաև կազմել, առաջաբանով և ծանոթագրություններով հրատարակել է հայ անվանի գրող, թարգմանիչ, հրապարակախոս, ազգային-հասարակական գործիչ Զապել Եսայանի «Ժողովուրդի մը հոգեվարքը (Աքսորեալ հայերը Միջագետքի մէջ)» վերնագրով նյութը (2020 թ., հայերեն):

Ինքնատիպ էջեր են հայագիտության երախտավորների [Գ. Հովսեփյան, Ստ. Մալխասյանց, Ս. Տեր-Հակոբյան, Ե. Օտյան, Պ. Մակինցյան, Ա. Չոպանյան, Մ. Բաբայան, Կ. Միքայելյան, Լ. Լիսիցյան, Կոմիտաս, Զ. Եսայան, Իրազեկ (Հ. Տեր Հակոբյան), Դ. Անանուն և շատ ուրիշներ] գործունեությանը վերաբերող արխիվային նյութերի՝ նամակագրություն, հուշագրություն, Ա. Զաքարյանի հրապարակումները, որոնք ներածական խոսքի ու գիտական հմտալի ծանոթագրությունների շնորհիվ նոր կողմերով են բացահայտում նրանց կյանքն ու գործունեությունը:

Հարկ է նաև նշել, որ գրականագետը վերոգրյալ աշխատանքներին զուգահեռ խմբագրել, կազմել և հրատարակության է պատրաստել գիտաքաղաքական

արդիական հնչեղություն ու բովանդակություն ունեցող շուրջ երեք տասնյակ աշխատություն և ժողովածու:

Գիտնականը 1989-ից հանրապետության տարբեր բուհերում (Երևանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտ, «Գալիք» և «Գլաձոր» համալսարաններ, Վանաձորի Հովհ. Թումանյանի անվ. մանկավարժական համալսարան) զբաղվել է նաև դասախոսական-մանկավարժական գործունեությամբ, եղել է պետական ավարտական քննական հանձնաժողովների նախագահ, Հանրապետական դպրոցական օլիմպիադաների՝ հայ գրականության գծով գործող հանձնաժողովի անդամ, նախագահ: Բազմիցս հանդես է եկել հանրապետական և միջազգային գիտաժողովներում:

Երկար տարիներ գրականագետ-բանասերը եղել է Ժ. 01. 03 (ռուս գրականություն) և Ժ. 01. 07 (արտասահմանյան գրականություն) մասնագիտություններով գիտական աստիճան շնորհող ՀՀ ԲՈԿ-ի մասնագիտական խորհուրդների անդամ:

Ա. Զաքարյանը 1986 թ. ԽՍՀՄ, ապա Հայաստանի ժուռնալիստների միության անդամ է: Նա ունի ՀՀ պետական ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան: 2021 թ. Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի իսկական անդամ է:

Թեև ծանրաբեռնված պետական ու գիտական աշխատանքներով՝ Ա. Զաքարյանը կանգնած է եղել «Նախիջևան» հայրենակցական միության ստեղծման ակունքներում, եղել է միության փոխնախագահ: Վարել է հասարակական-քաղաքական ակտիվ գործունեություն՝ 1999, 2000, 2003 և 2007 թթ. լինելով Ազգային ժողովի գումարումների պատգամավորության թեկնածու:

Ա. Զաքարյանն առօրյա և կենցաղային հարցերից ու շահերից վեր կանգնած անհատ է: Սկզբունքայնությունը, լայնախոհությունը, պահանջկոտությունը սեփական անձի և շրջապատի նկատմամբ՝ ահա այս հատկանիշներն են մարդքաղաքացու բնութագրիչները: Այս առումով էլ նա արժանի հարգանք ու հեղինակություն է վաստակել գիտական հանրության, հասարակական-քաղաքական շրջանակներում և իր միջավայրում:

Այսօր էլ 70-ամյակը բոլորած հայագետը լի է տարբեր ծրագրերով, որոնց իրականացմամբ ավելի ամբողջական կդառնա XX դարի առաջին քառորդի հայ պատմագրական-մշակութային կյանքի համապատկերը: Նրա վաստակն արժանի է բարձր գնահատության, որովհետև ժամանակակից հայագիտության մեջ նա ստեղծել է իր տեղը, և, երբ գիտական շրջանակներում որևէ առիթով շրջանառվում է նրա անունը, աչքի առաջ են գալիս նրա աշխատությունները, որոնք նրա կյանքի ճանապարհի նշանաձողերն են դեպի հայտնություն:

Այդ ճանապարհի իմաստավորմամբ էլ Անուշավան Զաքարյանին մաղթենք քաջառողջություն և հավատի պես անբեկանելի նվիրում՝ ի փառս մեզ համար գիտություններից առաջնահերթին, որ հայագիտությունն է:

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր
grakanagetgasparyan@mail.ru

ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆՑ
(ծննդյան 60-ամյակի առթիվ)

Ս. Ստեփանյանցը հետխորհրդային տարիներին ծավալեց գիտական և գիտահետազոտական եռանդուն գործունեություն և լայն ճանաչման արժանացավ ՀՀ և ՌԴ գիտական հասարակայնության և մտավորականության շրջանում:

Նա վերականգնեց խորհրդային տարիներին անտեսված Հայ առաքելական եկեղեցու պատմության ուսումնասիրությունը, ինչպես նաև նախաձեռնեց կրոնագիտության և պատմական ռուսագիտության հիմնումը Հայաստանում:

Պատմական գիտությունների դոկտոր Ստեփան Միհրանի Ստեփանյանցը ծնվել է 1963 թ. օգոստոսի 27-ին Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում: Սովորել է Երևանի Լ. Տոլստոյի անվան N 128 միջնակարգ ռուսական դպրոցում: Հետագա ուսումը շարունակել է Երևանի պետական համալսարանի ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետում, որն ավարտել է 1988 թ.: Ակտիվորեն մասնակցելով ծավալված Արցախյան շարժմանը՝ ընտրվել է ԵՊՀ-ի «Ղարաբաղ» կոմիտեի կազմում՝ դառնալով շարժման երիտասարդական թևի ղեկավարներից մեկը:

1988-1997 թթ. աշխատել է նախ՝ որպես սրբագրիչ, այնուհետև՝ որպես խմբագիր Մայր Աթոռ Սբ Էջմիածնի տպարանում, հետագայում՝ ԳԱԱ հրատարակչությունում:

Նշանակալից է Ս. Ստեփանյանցի վաստակը Հայ Առաքելական եկեղեցու պատմության հետազոտության և ուսումնասիրության գործում:

1988 թ. ի վեր նա, հետազոտելով ՀԱԱ նյութերը և վավերագրերը, գիտական հենքի վրա սկսում է ուսումնասիրել Հայ եկեղեցու պատմությունը: 1994 թ. լույս է տեսնում «Հայ Առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք» նրա անդրանիկ մենագրությունը (ռուսերեն տարբերակը հրատարակվել է 2014 թ. Գերմանիայում): Այդ աշխատությամբ վերականգնվեց 1920 թ. Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո դադարած Հայաստանյայց Առաքելական եկեղեցու պատմագրությունը: Գրքում հեղինակը լուսաբանում է ԽՍՀՄ-ի բռնությունները և հալածանքները հայ հոգևոր դասի և Հայ եկեղեցու նկատմամբ, Մայր Աթոռի գործունեությունը Երկրորդ աշխարհամարտի տարիներին և հայապահպան ու հայրենանվեր գործունեությունը պատերազմից անմիջապես հետո:

1996 թ. ավարտելով ԳԱԱ ասպիրանտուրան՝ նա նույն թվականին պաշտպանում է «Հայ եկեղեցին 1920-50-ական թվականներին» թեմայով թեկնածուական ատենախոսությունը՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Ս. Ստեփանյանցը հետագայում շարունակում է Հայ առաքելական եկեղեցու պատմության ուսումնասիրությունները: Հետազոտելով Հայաստանի Ազգային արխիվի, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի և ՀՀ ազգային անվտանգության արխիվի կարճված գործերի ֆոնդերի փաստաթղթերը և վավերագրերը՝ Ս. Ստեփանյանցը հրատարակում է մի շարք աշխատություններ, որոնց թվում՝ «Հայ հոգևորականության մասնակցությունը XX դարի պատերազմներին և հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումներին» (Ե., 1999), «Գիրք տառապելոց (1920-1950-ական թվականների բռնությունների զոհ հայ հոգևորականներ)» (Ե., 2002, փաստ. ժողովածու), «Հայ եկեղեցին Առաջին աշխարհամարտի տարիներին» (Մայր Աթոռ Սբ Էջմիածին, 2003), «Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու գործունեությունը Հայաստանի Առաջին հանրապետության տարիներին» (Մայր Աթոռ Սբ Էջմիածին, 2018): Նա նաև 2001 թ. լույս տեսած և Հայաստանում Քրիստոնեության 1700-ամյակին նվիրված՝ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանի հիմնական հեղինակներից է: Ս. Ստեփանյանցը նաև ավարտել է «Հայ եկեղեցու պատմությունը XII դարից մինչև մեր օրերը» անտիպ դասագիրքը ճեմարանի և աստվածաբանական բաժինների համար: 2023 թ. Ռուս Ուղղափառ եկեղեցու պատրիարք Կիրիլի կողմից խմբագրվող «Ուղղափառ հանրագիտարանի» 47-րդ հատորում հրատարակվեց Ս. Ստեփանյանցի գիտական հոդվածը՝ «Մոսկվա: Հայ Առաքելական եկեղեցի» վերտառությամբ:

Առանձին գնահատանքի է արժանի Ս. Ստեփանյանցի «1930 թ. հակակոլտնտեսային ապստամբական ելույթները Դարալագյազի (Վայոց Ձոր) գավառում և Հայաստանի մյուս շրջաններում)» մենագրությունը, որն ամբողջովին հիմնված է ՀԱԱ արխիվի կարճված գործերի ֆոնդերի նյութերի վրա, որոնք առաջին անգամ դրվեցին գիտական շրջանառության մեջ: Հեղինակը հայ պատմագրության մեջ առաջին անգամ ճշմարտացիորեն լուսաբանում է հայերի հերոսական հակակոլտնտեսային ապստամբական շարժումները՝ մանրամասնորեն ներկայացնելով ապստամբությունների գործընթացը, ղեկավարներին, հաղթանակները և պարտության պատճառները:

1997-2017 թթ. Ս. Ստեփանյանցը գտնվելով ՌԴ-ում՝ Բելգորոդի մարզի Ստարի Օսկոլ քաղաքում, դասավանդել է մի շարք բուհերում՝ Բելգորոդի պետական համալսարանում, Վորոնեժի իրավատնտեսական ինստիտուտում և այլն: Եղել է բուհի պետության և իրավունքի պատմության ու տեսության ամբիոնի վարիչ, Գիտական խորհրդի անդամ, ԲՊՀ-ի պետական և տարածքային կառավարման մասնագիտական ատեստավորման հանձնաժողովի անդամ, ինչպես նաև Բելգորոդի պետհամալսարանի «Tractus aevorum» և «Բյուզանդական ալմանախ» ամսագրերի խմբագրական խորհրդի անդամ:

ՌԴ-ում գտնվելու տարիներին ծավալել է նաև հասարակական, հայրենասիրական և հայապահպան գործունեություն. հիմնադրել է Բելգորոդի մարզի հայկական համայնքը, ղեկավարել և մասնակցել է հայագիտական տարբեր կոնֆերանսների, նախաձեռնել է Հայրենական մեծ պատերազմի տարիներին Բել-

գորոդ և Ստարի Օսկոլ քաղաքները ֆաշիստներից ազատագրող Խորհրդային Միության հերոս, գեներալ-լեյտենանտ Սարգիս Մարտիրոսյանի անունով այդ քաղաքների փողոցներից մեկը կոչելու գործը:

ՌԴ-ում եղած տարիներին ռուսաց լեզվով հրատարակել է մի շարք մենագրություններ, որոնց թվում՝ «Ստարի Օսկոլ քաղաքը և Բելգորոդչինան ազատագրողը» (նվիրված գեներալ Ս. Մարտիրոսյանի գործունեությանը) (Ստարի Օսկոլ, 2005) և «Մարշալներին կոփված հողը» (Բելգորոդչինան Մեծ հայրենական պատերազմում) (Վորոնեժ, 2015) մենագրությունները:

Նախաձեռնել է Ստարի Օսկոլին՝ Զինվորական փառքի քաղաք պատվավոր կոչման շնորհելու գործը՝ գրելով քաղաքի մասին պատմական ակնարկը:

2017 թ. Ս. Ստեփանյանցը եռանդուն մասնակցություն ունեցավ Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի հիմնադրման 300-ամյակի տոնակատարություններին և թեմի կողմից անցկացվող գիտական կոնֆերանսին:

Դեռևս 1995 թ. հայոց պատմագրության մեջ առաջին անգամ Ս. Ստեփանյանցը ուսումնասիրել է Հայաստանում քրիստոնյա ռուսների պատմությունը՝ դրանով իսկ հիմնելով պատմական ռուսագիտությունը Հայաստանում (историческая русистика): Պատմության այդ ուղղությամբ նա գրել է մեկ տասնյակի չափ գիտական և գիտահրապարակախոսական հոդվածներ և ռուսաց լեզվով հրատարակել «Կազակության հայաստանյան պատմությունը» (Ե. 2013) և «Ռուս ուղղափառ եկեղեցու հայաստանյան պատմությունը» (Ե. 2018) արխիվային փաստաթղթերի ժողովածուներ, նաև հրատարակության է պատրաստել «Ռուսների հայաստանյան պատմությունը» հիմնարար ուսումնասիրությունը: Այս աշխատություններով նա փաստորեն զարկ տվեց Հայաստանում ռուսների պատմության ուսումնասիրման գործընթացին:

2013 թ. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում պաշտպանել է «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությունն Առաջին աշխարհամարտի տարիներին (1914-1918 թթ.)» ատենախոսությունը՝ ստանալով պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

2017 թ. Ս. Ստեփանյանցը վերադարձել է Հայաստան և պրոֆեսորի կարգավիճակով դասավանդում է Հայաստանի մի շարք բուհերում, այդ թվում՝ Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցում, Մ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական և Գ. Պլեխանովի անվան ռուսական տնտեսագիտական համալսարանների Երևանի մասնաճյուղերում: Գավառի պետհամալսարանի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահն է: 2019 թ. ավարտելով Ա. Գրիբոյեդովի անվան Մոսկվայի միջազգային իրավունքի և տնտեսագիտության ինստիտուտի իրավաբանական բաժինը՝ նա գիտական հենքի վրա շարունակել է ուսումնասիրել Հայ եկեղեցական իրավունքը՝ «Էջմիածին» ամսագրում հրատարակելով «Հայաստանյայց եկեղեցու Սահմանադրության խնդիրը» և «Հայ եկեղեցու բարեկարգության խնդրի շուրջ» լայնածավալ գիտական հոդվածները:

ՀՀ ժուռնալիստների միության անդամ է: ՀՀ, ՌԴ և արտասահմանյան մամուլում հրատարակվել են նրա տասնյակ հոդվածներն ու գրքերը: «ԿԱՎԿԱԶՊՐՕ»

համակարգչային կայքով մոտ 40-ի հասնող նրա նկարահանված ելույթները զայրույթ են առաջացրել մեր թշնամի հարևան երկրներում:

Նա նաև գիտական հենքի վրա շարունակել է ուսումնասիրել հայերի մասնակցությունը Երկրորդ աշխարհամարտին և 2020 թ. հրատարակել է «Հայերի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմում» ծավալուն մենագրությունը:

Ս. Ստեփանյանցը 150-ից ավելի գիտական, գիտահրապարակախոսական հոդվածների հեղինակ է: Եղել է մի քանի տասնյակ գիտական, հասարակական ժողովների և կոնֆերանսների մասնակից ու կազմակերպիչ, այդ թվում՝ 2022 թ. հոկտեմբերի 28-31-ին Հայաստանում տեղի ունեցած Համաշխարհային հայկական գագաթնաժողովին:

2018 թ. հրատարակվել է նրա «Խաղաղություն ամենեցուն» պատմավեպը:

Արժանացել է «Բաշկորտոստանի կազմավորման 100-ամյակը» պատվավոր մեդալին (2018), ինչպես նաև տարբեր բուհերի և կազմակերպությունների կողմից պատվոգրերի ու խրախուսական նամակների:

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր
eminasyan@ysu.am

Հայերեն նյութերի բաժնի խմբագիրներ՝ **Մելանիա Միքայելյան**
Սեդա Քուփելյան
Ռուսերեն նյութերի բաժնի խմբագիր՝ **Գայանե Հարությունյան**

Редакторы армянского отдела – **Меланья Микаелян**
Седа Купелян
Редактор русского отдела – **Гаянэ Арутюнян**

Editors of Armenian part **Melania Mikaelyan**
Seda Kupelyan
Editor of Russian part **Gayane Harutyunyan**

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ **Արմինե Պետրոսյանի**
Компьютерный дизайн и пагинация – **Армине Петросян**
Computer design and pagination **Armine Petrosyan**

Հրատ. պատվեր N 1282
Ստորագրված է տպագրության 08.12.2023 թ.:
Տպագրական 25 մամուլ: Տպաքանակը՝ 200:
ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:
Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4:
Հեռ.՝ 581902:

Подписано к печати 08.12.2023 г.
25 печ. л. Тираж – 200. Типография НАН РА,
Ереван, пр. Маршала Баграмяна 24.
Адрес редакции: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4.
Тел. 581902

Signed for printing 08.12.2023
25 print. sheets. Printed copies – 200. NAS RA Press,
Yerevan, Marshal Baghramyan av. 24.
Editorial office address: 0019, Yerevan, Marshal Baghramyan av. 24/4.
Tel. 581902

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ http://Iraber.sci.am
Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ Iraber@sci.am
Официальный сайт журнала: http://Iraber.sci.am
Электронная почта журнала: Iraber@sci.am
Official site of the Journal: http://Iraber.sci.am
E.mail of the Journal: Iraber@sci.am